

ՄԵՐԶԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ
ԱՐԵՎԵԼՔԻ
ԵՐԿՐՆԵՐ
ԵՎ
ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ
XXVI

NATIONAL ACCADEMY OF SCIENCES
REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

**THE COUNTRIES AND PEOPLES
OF THE NEAR AND MIDDLE EAST**

XXVI

YEREVAN - 2007

**СТРАНЫ И НАРОДЫ
БЛИЖНЕГО И СРЕДНЕГО ВОСТОКА**

XXVI

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԱ 26

ՄԵՐՉԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ
ԵՐԿՐՆԵՐ ԵՎ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ

XXVI



Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

ՀՏԴ 950
ԳՄԴ 63,3 (5)
Մ 663

Խ Մ Բ Ա Գ Բ Ա Կ Ա Ն Խ Ո Ր Հ ՈՒ Ր Դ

*Սաֆրաստյան Ռ.Ա. (մախազահ),
Բայրությունյան Վ.Ա., Կարամանուկյան Շ.Լ.
Հակոբյան Ա.Հ., Հարությունյան Ն.Վ.,
Հովհաննիսյան Ն.Հ., Չորանյան Պ.Ա. (մախազահի տեղակալ)*

Տեխնիկական համակարգող՝ Ն.Վ. Կարախանյան

**ՄԵԿԵՆԱՍՈՒԹՅԱՄՔ «ՆԱՍ-ԱՍ» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆ ԱՐԱՄ ՇԱՀԻՆՅԱՆԻ**

Մ 663 Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ.-Եր.: Աստղիկ,
2007.- 316 էջ:

«Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» մատենաշարի XXVI հատորը քաղկացած է հիմգ քաժիններից, որոնք ընդգրկում են Մերձավոր և Միջին Արևելքի երկրների հիմ և միջին դարերի պատմության, նոր և նորագույն ժամանակների, ինչպես նաև մշակույթի և քանասիրության հարցեր ու քննարային հրապարակումներ: Ջգալի տեղ է հատկացված տարածաշրջանի ներքաղաքական զարգացումների, միջազգային հարաբերությունների և այլ հիմնախնդիրների լուսաբանությանը:

Նախատեսվում է արևելագետների, միջազգայնագետների, պատմաբանների, քանասիրության ու մշակույթի հարցերով զբաղվողների, ինչպես նաև քարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների համար:

ՍՈՒՇԵՂ ԱՍՏՏՐՅԱՆ

ԱՐԱՐԻՉ ԱՍՏԾՈ ԿԵՐՊԱՐՆ ԱՀԼ-Ե-ՀԱՂՂԵՐԻ
ՀԱՎԱՏԱԽԶՆԵՐՈՒՄ

Ահլ-ե հաղղը հանդիսանում է այսպես կոչված «ծայրահեղ շիական» աղանդներից մեկը, որ ի տարբերություն «չափավոր» (կամ, այլ կերպ ասած՝ ուղղափառ, կամ իմամական) շիաների, Մուհամմադ մարգարեի եղբորորդի Ալիի պաշտամունքը հասցնում է ծայրահեղության, համարելով նրան Աստված, կամ Աստծո մարմնավորում¹: Այս է պատճառը, որ օտարների կողմից (հատկապես՝ նրանց շրջապատող ուղղափառ շիաների) աղանդի ներկայացուցիչները հաճախ կոչվել են Ալի Իլահի՝ Ալիին աստվածացնողներ: Համարվելով շիական աղանդ և պարունակելով զգալի քանակությամբ շիական տարրեր, ահլ-ե հաղղականության տարբերությունները, սակայն, ուղղափառ շիականությունից այնքան զգալի են, որ թույլ են տալիս այն համարել առանձին կրոն:

Ահլ-ե հաղղերը հիմնականում ապրում են արևմտյան Իրանում և Իրաքի հյուսիսային շրջաններում: Իրանում նրանց հիմնական բնակատեղիներն են Քերմանշահը, Քուրդիստանը, Աղբեջանը և Լոռեստանը: Ահլե հաղղերը² հիմնականում խոսում են գուրանիով, որը հյուսիս-արևմտյան իրանական քաղաքների խումբ է:

Ահլ-ե հաղղերը բաժանված են երկու խմբի կամ կաստայի՝ *սայյիդ*-ներ և *հասարակներ*: *Սայյիդ*-ները ներկայացնում են կրոնական վերնախավը և բաժանված են տասներկու *խանդան*-ների «ընտանիքների», որոնցից յուրաքանչյուրը զլխավորում է *փիր*-ը: Հասարակների խավի ներկայացուցիչները մույնպես կարող են հասնել որոշակի հասարակական դիրքի, ծառայելով որպես *քալամ խան*-ներ՝ կրոնական տաղերի՝ *քալամ*-ների ընթերցողներ, ևն³:

Կրոնական ծեսերից կարևորագույնը ահլ-ե հաղղերի կյանքում հանդիսանում է «ժողովը»՝ *ջամ*, որին մասնակցում են տղամարդիկ, և որի նպատակն է Աստծո հետ միաստիկ կապի հաստատումը ճիգածեսի (էքստազի) միջոցով, որին հասնում են *քալամների* ռիթմիկ կրկնության շնորհիվ: Ըստ որոշ արևմտյան ճանապարհորդների թողած նկարագրությունների, ծեսի մասնակիցների ոգևորությունը հասնում է հաճախ այն աստիճանի, որ նրանք քայլում էին վառվող ածուխների վրայով ու դնում դրանք իրենց բերանը, առանց դույզն ինչ վնասվելու⁴: Ահլ-ե հաղղերի կրոնական ծեսերից կարևոր նշանակություն ունի մակ եռօրյա ծոմը, որը պահում են ձմեռ-

վա երկրորդ կեսին⁵:

Դարեր շարունակ գոյատևելով զանազան կրոնների խաչուղում, Աիլ-ե հաղղերի հավատալիքները հանդիսանում են իսլամական և ոչ իսլամական տարրերի խառնուրդ: Բացի շիական հավատալիքներից, սույն կրոնի պատկերացումների համակարգում կարելի է բազում գուգահեռներ գտնել ժամանակին տարածաշրջանում գոյություն ունեցած իրանական ծագում ունեցող կրոններին՝ զրադաշտականությանն ու մանիքեականությանը, ինչպես նաև գնոստիկական աղանդների հավատալիքներին⁶: Թեև աիլ-ե հաղղերը միաստվածական են ու ընդունում են միակ Աստծո, միակ Արարչի գաղափարը, նրանց պատկերացումները Աստծո և աշխարհի հետ նրա ունեցած կապի մասին զգալի կեպով տարբերվում են միաստվածական կրոնների ներկայացրած պատկերից, հանդիսանալով հեռաքրքրական մի խառնուրդ՝ իսլամական և նախաիսլամական հավատալիքների:

Ստորև փորձ է արվում աիլ-ե հաղղական սկզբնաղբյուրների տեղեկությունների հիման վրա վերծանել և վերլուծել այս կրոնի պատկերացումն Աստծո, և նրա ու աշխարհի միջև հարաբերության մասին:

Աիլ-ե հաղղերի կրոնական տեքստերը մեծ մասամբ փոխանցվել են քանավոր ճանապարհով և բաղկացած են հիմնականում կրոնական թեմաներով կարճ տաղերից կամ *քալամ*-ներից: Սակայն կան նաև մեծ քանակությամբ գրավոր հուշարձաններ, որոնց մեծ մասը դեռ հրատարակված չէ: Հրատարակված գործերից կարևորագույններն են, Թագբերե-յե Ալլա-ն⁷ պարսկերենով գրված աիլ-ե հաղղերի առասպելական պատմությունը, որը պարունակում է նաև արարչագործության մասին նրանց առասպելը և Շահնամե-յե Հադիդաթ-ը (Ճշմարտության Շահնամե), թերևս ամենաընդարձակ ստեղծագործությունը՝ գրված այս կրոնի հետևորդների կողմից (պարունակում է 11 116 տուն), որ հանդիսանում է Աիլ-ե հաղղերի առասպելական պատմության ու հիմնական կրոնական ուսմունքների չափածո շարադրումը՝ գրված քսաներորդ դարի սկզբին պարսկերեն լեզվով՝ Հաջ Նեմաթոլլահ Մոջրեմ Մոքրիի կողմից: Նրա որդի Նուր Ալի Շահ Ելահին հեղինակել է հարց ու պատասխանի ձևով գրված մեկ այլ աշխատություն, որն անդրադառնում է Աիլ-ե հաղղերի կրոնի հիմնական աստվածաբանական խնդիրներին⁸: Նրանց կրոնական ուսմունքին մվիրված մեկ այլ աշխատություն է գուրանիով գրված Դաֆթար-ե Խազանա-յե Փիրդիվարին, բաղկացած 221 բանաստեղծական տնից⁹:

Արարիչ Աստծո գաղափարը Աիլ-ե հաղղերի աստվածաբանության մեջ

Փորձենք վերլուծել աիլ-ե հաղղականության մեջ Աստծո գաղափարը: Սրա հիմնական առանձնահատկություններից մեկը, որն էլ հենց այս կրոնն այդ աստիճան հեռացնում է իսլամից, այն է, որ Աստված այստեղ ծայրաստիճան պասիվ դեր է խաղում իր կողմից արարված աշխարհում, անջատված լինելով դրանից, ճիշտ ինչպես հինդուականների Բրահմանը, զրադաշտականների Զուրվանը կամ մանիքեականների Լույսի Հայրը¹⁰: Աստծո արարածները կարող են նրան ընկալել լոկ իր մարմնավորումների (ինկարնացիաների) միջոցով, որոնք էլ հանդիսանում են պաշտամունքի

հիմնական առարկան, մինչդեռ Արարիչ Աստվածը մնում է հեռու, խորհրդավոր մի էակ, որի մասին հաճախ չի էլ հիշվում: Միայն «Ժամանակի սկզբում» էր, մինչև աշխարհի արարումը, որ Աստված գոյություն ուներ որպես բացարձակ էություն, առանց սահմանների, աննկարագրելի ու անըմբռնելի, Աստված, որը, ըստ, Նուր Ալի Շահ Ելահիի, «չունի իրեն հավասար ու իրեն նման... չունի ոչ ընկերակից, ոչ հավասար: Նա անտեսանելի է, չունի մարմին, բաղկացած չէ նյութից... [ու] ոչ ոք նրա գաղտնիքը չգիտի»¹¹: Ահա թե ինչպես է ներկայացնում արարչագործության պատկերը Թազերեն-յե Ալան.

روز اول که جلّ جلاله میخواست که عالم را ایجاد نماید جمیع حوامد
خود مشتاق خود گردانید از حمد خود,
و چون نظر کمال خود را بر جمال خود انداخت حمد و حامد و
محمودیت خود را محمود خود دید, پس خود
بود و خود دید و خود گفت و خود شنید لا جرم شاهد و مشهود اینجا
بشهادت آمد که الله محمود است لکنّ فعّال
که طالب خود است و مطلوب خود, محبّ خود است و محبوب خود که
غیر خودش در نظر نمیآید, و الله
حقّ است¹². "بکلّ شئی محیط" است, پس تمام اشیاء نور

«Առաջին օրը (այսինքն՝ մինչև աշխարհի արարումը), երբ Ամենաբարձրյալը ցանկացավ աշխարհն արարել, իրեն փառաբանողներին լցրեց իրեն փառաբանելու ցանկությամբ, և երբ իր կատարյալ հայացքը դեպի իր իսկ գեղեցկությունն ուղղեց, հասկացավ, որ փառքը, փառաբանողն ու փառաբանումը հենց ինքն է: Եւ ուրեմն ինքն էր ու ինքն էր տեսնում, ինքն էր խոսում ու ինքն էլ լսում: Եւ անշուշտ ճիշտ կլիներ, եթե լիներ մեկ այլ ոք, ով կվկայեր, որ Աստված, ամենի Արարիչը, փառավոր է: Ինքն էր փնտրողն ու փնտրյալը, սիրահարն ու սիրեցյալը, բանգի իրենից բացի ոչինչ չկար»:

Ինչպես երևում է բերված հատվածից, միայն ժամանակի սկզբում է, երբ Աստուծոց «բացի ոչինչ չկար», որ Նա հանդես է գալիս որպես բացարձակ էություն (այսպես կոչված՝ Աբսոլյուտ): Արարումը սկսվելուն պես, Աստված նյութեղենանում է, մարմնավորվելով իրերի, իսկ մարդուն արարելուց հետո՝ անձանց մեջ: Աստված, այսպիսով, դադարում է լինել միաստվածական կրոնների անվերջամալի ու անսահման խորհուրդը, նյութեղեն կերպարանք առնում, և այսպիսով սահմանափակում իրեն դրա մեջ: Առաջին անգամ Աստված նյութեղեն տեսք է առնում մարգարտի ձևով: Ահա թե ինչ է գրում այդ մասին Շահնամեն-յե Հադիդաթ-ի հեղինակը.

بجز حق نبذ خلقتی در وجود که فرد الصمد بود حی و دود
مکانش بثر بود و ذاتش نهان که در بود اندر صدف آئزمان¹³

Որևէ էակ գոյություն չուներ Աստծուց բացի, որը միակն էր, հավիտենականը, կենդանին ու սիրողը, նա մարգարտի մեջ էր, իր էությունը՝ բաքնված, մարգարիտն էլ այն ժամանակ խեցու մեջ էր:

Ըստ Թագբերեյի՝ Աստված արարեց մարգարիտը՝ իր էությունը ի հայտ բերելու համար: «Մի քանի հազար տարի ինքն իր հետ խոսելուց ու ինքն իր հետ շրջելուց հետո, Նա ցանկացավ իրեն ցույց տալ բոլոր արարածներին»¹⁴: Սրան հետևում են արարչագործության վեց փուլեր, որոնց ընթացքում Աստված ինքն իրեն ի հայտ է բերում մարգարտի մեջ՝ մի շարք մարդկանց կերպարանքով: Առաջին փուլի ընթացքում Նա հիմք է դնում անկ-ե հաղղերի հիմնական ծեսերին՝ զոհաբերությանը, կրոնական հավաքին (*թամ*) և ընկույզ կտրելու ծեսին, որը կատարվում է երեխային անուն տալու ժամանակ,¹⁵ ինչպես նաև ստեղծում է «ամասելի գաղտնիքի տախտակը» (*qabāle-ye serr-e magū*): Այսպիսով, Աստված ի հայտ է գալիս մարգարիտում հինգ մարդկանց կերպարի տեսքով և ստեղծում զոհաբերվելիք այծն ու ջուրը: Հինգ անձանցից մեկը բռնում է կենդանուն, մնացածը կտրում են նրա կոկորդը, պատրաստում ու մատուցում հավաքին: Հավաքն էլ իր հերթին բաղկացած էր հազար մարդուց, որոնք ի հայտ էին եկել այդ ժամանակ: Ընկույզը հայտնվում է անձանցից մեկի ճակատի արձակած ճառագայթից: Վերջապես, Արարիչը ի հայտ է բերում Ամասելի Գաղտնիքի տախտակը՝ հազար ու մի կնիքով ծածկված: Սակայն սրանից հետո էլ ամենն անհետանում է և Աստված դարձյալ մնում է մենակ¹⁶: Սրան հետևում են արարման ևս չորս շրջան՝ նման առաջինին: Դրանք իրար են փոխարինում յոթանասուն հազար տարին մեկ, և յուրաքանչյուրի ընթացքում Աստված արարում է մարգարիտ և տեսնում իրեն դրանում տարբեր մարդկանց տեսքով: Այնուհետև ամենն անհետանում է, ու Աստված դարձյալ մնում է մենակ¹⁷:

Այս ամբողջ պատմության մեջ ակնառու է թվերի սիմվոլիզմը: Նշենք միայն, որ հատկապես կարևոր է այստեղ յոթ թիվը (յոթանասուն հազար տարի, յոթ անձ, երրորդ շրջանում Արարիչը բացահայտում է իրեն տասնյոթ, երեսուն յոթ, քառասուն յոթ և յոթանասուններկու անձի տեսքով): Արարման երկրորդ շրջանում կան ակնհայտ շիական տարրեր: Օրինակ՝ այստեղ Աստված հայտնվում է տասներկու, իսկ այնուհետև՝ տասնչորս անձի տեսքով, ինչը հատկապես շիական տասներկու իմամների և տասնչորս Անաղարտների (այն է՝ տասներկու իմամներն ու Մուհամմադ մարգարեն ու իր դուստր Ֆատիման միասին վերցրած) գաղափարի արձագանքն է:

Վեցերորդ շրջանում է, որ Աստված արարում է աշխարհը այնպիսին, ինչպիսին որ այն կա այսօր, և մարդուն: Մարգարտի մեջ դարձյալ ի հայտ գալուց հետո նա ստեղծում է չորս հրեշտակներին՝ Ջաբրաիլին, Մի-

քայլիւն, Իսրաֆիլիւն և Ազրայիլիւն, պատմում է Թագքերեն: Այնուհետև Նա արարում է ջուրը, իսկ եռացող ջրի փրփուրից՝ ամպերն ու երկիրը¹⁸: Շահնամն-յե Հադիդաթը արարչագործությունը ներկայացնում է փոքր-ինչ այլ կերպ, սակայն արարման տրամաբանությունն ու Արարչի հարաբերությունը իր արարածների նկատմամբ մույնն են: Այս փուլում Աստված մարմնանում է Խավանդեգար անունով անձի մեջ¹⁹: Այսպիսով, մինչև աշխարհի արարումը դեռ լիովին արստրակտ ու խորհրդավոր Աստվածն այս փուլում կոնկրետանում է և ձև առնում անձի տեսքով.

نخستین نظر کرد خاوندگار بسوي همان در گهر ببار
يکي برق سوزان از آن در بخت بتايد، جوشيد، از هم گسست
بشد گهر و جوهر ازوي جدا هویدا بشد نور ذات خدا²⁰

«Առաջինը Խավանդեգարը նայեց այդ մարգարտին. այդ մարգարտից մի թեժ կայծ դուրս թռավ, փայլեց, եռաց ու կիսվեց. դրանից անջատվեցին գոհարներ, ու Աստծո էությունը երևան եկավ»:

Մյուս հետևում է երկրի ու երկնքի արարման պատմությունը: Շահնամն-յե Հադիդաթ-ում Արարչի բաժանումն աշխարհից էլ ավելի ակնառու կերպով է ներկայացվում քան Թագքերեն-յե Ավայում, ուր Աստված արարում է հենց ինքը, առանց մարմնավորվելու անձանց մեջ.

از آن [آب] چهار دانه نور بشکل جواهر ناستفته آفرید...²¹

«Այն լույսից Նա արարեց լույսի չորս շող՝ չծակված մարգարտի տեսքով»,

و بعد از آن کف را آرام داد... و از هوای آن آب باد را آفرید...²²

«Այնուհետև նա հանդարտեցրեց փրփուրը, իսկ այդ ջրի գոլորշիներից ստեղծեց քամին...»

Շահնամնում, սակայն, Աստված ստեղծում է աշխարհը Խավանդեգարի՝ իր մարմնավորման, օգնությամբ: Այն ստեղծվում է, երբ վերջինս իր հայացքն ուղղում է մարգարտին:

Աստծո հեռացումն ու անջատումն աշխարհից էլ ավելի են մեծանում, երբ Նա որոշում է ստեղծել Ադամին, քանզի Նա դա անում է ոչ թե ինքնուրույն, այլ իր հրեշտակների միջոցով: Ըստ Թագքերենի ու Շահնամնի, Աստված իր հրեշտակներին հերթով ուղարկում է երկրից հող բերելու, որպեսզի ստեղծի առաջին մարդուն, սակայն այն լալիս է ու մերժում,²³ պատճառաբանելով, որ վախենում է, թե Ադամի ժառանգները չար ու մեղսագործ կդառնան²⁴: Վերջապես, հրեշտակներից մեկին՝ Ազրայիլին հաջողվում է բերել հողը, և Աստված հրամայում է Ջաբրայիլին ստեղծել դրանից Ադամին՝ իր նմանությամբ.

خاك را بحضرت جبرئيل داد و امر نمود برو کالبد آدم را بهمین شیوه
ما طیار کن که در صورت ما باشد

«... Երբ Գիբն ասմ Խդաստ և Լիհա ասմ Մհմդ և Չշմ ասմ Ելի և Իրույ

راست اسم امام حسن است و ابروي چپ
 اسم امام حسين است، و روي اسم فاطمه است، و از آن سبب نور خالق
 در صفت است.²⁵

«Նա տվեց հողը Ջաբրայիլին ու հրամայեց՝ գնա և ստեղծիր Ադամի մարմինը մեր նմանությամբ, այնպես, որ նա մեր տեսքն ունենա... նրա ճակատը Աստծո անունն է, նրա շուրթերը՝ Մուհամմադի անունը, աչքերը՝ Ալիի, աջ հոնքը՝ Իմամ Հասանի անունն է, ձախը՝ Իմամ Հուսեյնի, իսկ նրա դեմքը Ֆա-տիմայի անունն է. այդ պատճառով է, որ նրա մեջ է Աստծո լույսը:»

Այսպիսով, ահլ-ե հաղղերի Արարիչ Աստվածը, որն ամենասկզբում, մինչև արարումը, գոյություն ուներ որպես անձև ու աննյութ էություն, ժամանակի հետ դառնում է ավելի ու ավելի կոկրետ, սահմանափակ, կորցնելով իր բացարձակությունը: Աշխարհի արարումից հետո Նա էլ ավելի է նութեղենանում ու կոնկրետանում, ի հայտ գալով այլևս բացառապես իր մարմնավորումների տեսքով, որոնք թվով յոթն են և որոնք աշխարհում հանդես են գալիս որպես մարդկային գծեր ունեցող անձինք, մինչդեռ Աստված, որպես այդպիսին այլևս աշխարհի անցուդարձին չի մասնակցում, թողնելով դրա կառավարումը այդ յոթ անձանց²⁶:

MUSHEGH ASATRYAN

THE IDEA OF THE CREATOR GOD IN THE AHL-E HAQQ COSMOLOGY

The article deals with the notion of the Creator God in the Ahl-e Haqq cosmology, basing on several important written treatises written by followers of this religion. One of the main characteristics of this idea is that the Creator God, as an absolute transcendental reality exists only in the beginning of time. With time He materializes Himself, becoming more and more concrete. First, He appears in a Pearl. Then he becomes even more concrete, manifesting Himself in the image of Khāvandegār, who, although considered one of His incarnations, is still devoid of any personal features and is rather abstract. After the creation of the world, however, God becomes even more materialized, manifesting Himself in His incarnations, seven in number, and henceforth rules the world through them. These incarnations, though of divine origin, are nevertheless utterly human in their behavior and passions, and have nothing in common with the idea of the transcendental God of the monotheistic religions. Whereas the transcendental God per se, takes no more part in the affairs of this world, withdrawing from it and leaving it to be governed by His manifestations. Thus, here we witness the process of the gradual "concretization" of the Divinity, from the utterly abstract and transcendental, to the more materialized and personal manifestations.

1. Մայրահեղ շիաների մասին ավելի մանրամասն տես՝ Moosa, Extremist Shiites: The Ghulat Sects. H. Halm, "Gholāt", Encyclopaedia Iranica. M. Hodgson, M. Canard, "Ghulāt", Encyclopaedia of Islam 2.
2. Պարսկերեն ահլ-ե հաղղ (ahl-e haqq) բառացիորեն նշանակում է «Եշմարտության մարդիկ», ինչն իր մեջ հավաքական հոգնակիի իմաստ ունի, և ուստի արևմտյան լեզուներով գիտական գրականության մեջ հիմնականում օգտագործվում է առանց հոգնակիակերտ մասնիկների: Հայերենում, սակայն, մնամ օգտագործումը բարեհունչ չէր լինի, ուստի և այն կօգտագործենք հոգնակիակերտ անանգով:
3. Ահլ-ե հաղղերի հասարակական կառուցվածքի լավագույն նկարագրությունը տրված է Ջիբա Սիր-Հոսեյնյի "Inner Truth and Outer History: The Two Worlds of the Ahl-i Haqq of Kurdistan" հոդվածում (էջ 270-71):
4. 1925 թ. Թեհրանում տեղի ունեցած մնամ ծեսի մասին Նիկողայոս Մառը բողել է մանրամասն նկարագրություն, տես՝ Mapp, "Радение секты Люди Истины", տես նաև՝ V. Minorsky, Notes sur la secte des Ahlé Haqq: 112-16 - Stead, "The Ali Ilahi Sect in Persia": 187.
5. Minorsky V., Notes sur la secte des Ahlé Haqq: 98-103.
6. Ահլ-ե հաղղի հավատալիքներում ոչ խալանական տարրերը բավականաչափ ուսումնասիրված չեն: Թեբրև լավագույն աշխատությունը, որ ամբողջառում է այս հարցին՝ Իվանովի գիրքն է, տես՝ Ivanow, The Truth Worshippers of Kurdistan: 33-41. տես նաև Mokri, L'Esotérisme kurde: 17; Mokri, "Le symbole de la perle dans le folklore persan":
7. Ivanow, W (ed.). Tadhkero-ye A'liā (The Truth Worshippers of Kurdistan). Leiden, 1953.
8. Այս գրքի ֆրանսերեն թարգմանությունը հրատարակվել է Մոհամմադ Մոքրիի կողմից՝ L'Esotérisme kurde վերնագրով:
9. Այն թարգմանված է ֆրանսերեն. Le Chasseur de Dieu et le mythe du Roi-Aigle:
10. Արարիչ Աստծո՝ աշխարհից անջատված ու հեռու լինելու գաղափարը անչափ հին է: Այն կարելի է գտնել ոչ միայն նշված իրանական և հնդկական կրոններում, այլև բազմաթիվ բազմաստվածական համակարգերում՝ հատկապես՝ համայնական հասարակարգով ապրող ժողովուրդների մոտ: Միլանեզիական մամա եզրով արևմտյան կրոնագիտության մեջ ընդունված է անվանել համայնական հասարակարգով ապրող ժողովուրդների հավատալիքներում այն խորհրդավոր ուժը, որը որպես այդպիսին այս աշխարհում իրեն չի ցուցաբերում, սակայն հայտնվում է անշունչ իրերի կամ մույնիսկ մարդկանց ձևով, հանդիսանալով աշխարհից անջատված ու հեռու, և որը մնամ է ահլ-ե հաղղերի Աստծո գաղափարին. այս խնդրի շուրջ տես՝ Eliade, "Power and Holiness in the History of Religions", 125.
11. "... sans égal et sans pareil... n'a ni associé ni égal. Il n'est pas visible, n'a pas du corps et n'est pas composé de matière... il suffit de dire que personne ne connaît son secret", L'Esotérisme kurde, 127:
12. Tadhkero-ye A'liā: 2.
13. Shāhnamē-ye Haqīqat, 34. Իրանական քամախյությունում մեջ մարգարտի կերպարի շուրջ տես՝ Mokri, "Le symbole de la perle dans le folklore persan".
14. Tadhkero-ye A'liā, 5.
15. Այս ծեսերի մասին մանրամասն տես՝ Minorsky, V. Notes sur la secte des Ahlé Haqq, 108-112, Chahārdahī, Asrār-e feraq-e Khāksār-Ahl-e 'aqq, 176.
16. Tadhkero-ye A'liā, 6-7.
17. Tadhkero-ye A'liā, 6-8.
18. Tadhkero-ye A'liā, 9-10.
19. Սույն ամումը հավանաբար պարսկերեն խոդավանդեզար «արարիչ» բառի տված ձևն է:
20. Shāhnamē-ye Haqīqat, 56.
21. Tadhkero-ye A'liā, 8.

22. Tadhkere-ye A'lā, 8.
23. Tadhkere-ye A'lā, 15-16.
24. Shāhnāme-ye Haqīqat, 52-54.
25. Tadhkere-ye A'lā, 16.
26. Այս խնդրի շուրջ ավելի մանրամասն տես՝ Mokri, "L'idée de l'incarnation chez les Ahl-e Haqq". Հարցի մասնագիտական քննարկումը տես մեռ. Chahardahi, Nur al-Din, Modarresi. Asrar-e feraq-e Khaksar-Ahl-e Haqq. Tehran, 1369 AH. Eliade, M. "Power and Holiness in the History of Religions". In Myths, Dreams, and Mysteries. Trans. Philip Mairet. New York, 1960: 123-154. Halm, H. "Gholāt". Encyclopaedia Iranica. Hodgson, M. M. Canard, "Ghulāt", Encyclopaedia of Islam 2. Ivanow, W (ed.). Tadhkere-ye A'lā. In The Truth Worshippers of Kurdistan. Leiden, 1953. Marr, N. Y. "Радение секты Люди Истины". In Stat'i i soobsheniya 2 (1939): 248-254. Minorsky, V. Notes sur la secte des Ahl-e Haqq. Paris, 1920-21. Mir-Hosseini, Ziba. "Inner Truth and Outer History: The Two Worlds of the Ahl-i Haqq of Kurdistan". International Journal of Middle East Studies 26 (1994): 267-285. Mokri, Hāj Ne'matollāh Mojrem. Shāhnāme-ye haqīqat. Ed. M. Mokri. Tehran, 1966/1345. Mokri, M. (ed.). Le Chasseur de Dieu et le mythe du Roi-Aigle (Dawra-y Damyārī). Wiesbaden, 1967. Mokri, M. "L'idée de l'incarnation chez les Ahl-e Haqq". Akten des Vierundzwanzigsten Internationalen Orientalisten-Kongresses München. München, Wiesbaden, 1959: 496-98. Mokri, M. "Le symbole de la perle dans le folklore persan". Journal Asiatique 1960/4: 263-82. Moosa, M. Extremist Shiites: The Ghulat Sects. Syracuse, 1988. Stead, F. M. "The Ali Ilahi Sect in Persia". The Muslim World 1932: 184-189. Mokri, M. L'Esotérisme kurde. Paris, 1966.

ԽԵԹԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԶԻՆ ԶԱՐԱԶԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՈՐՈՇ ՀԱՐՅԵՐԻ ՇՈՒՐՋ

Պետության առաջացման առաջին իսկ պահերից նրա զարգացման մեջ ուրվագծվում է որոշակի օրինաչափություն: Ցանկացած պետական միավորի կազմավորում, որքան էլ որ այն յուրօրինակ և առանձնահատուկ պայմանների արդյունք լինի, այդուհանդերձ ենթադրում է զարգացման որոշակի ալգորիթմ. տվյալ պետության աշխարհագրական և քաղաքական պայմաններն արդեն իսկ կանխորոշում են այն արտաքին և ներքին քաղաքական չափորոշիչները, որոնց հետևելը հետագայում անհրաժեշտ է դառնում նրա արդյունավետ կենսագործման համար: Էթնիկ, տարածքային կամ մեկ այլ հատկանիշով միավորված խմբի կամային և նպատակամղված գործողությունները առկա տեղանքային, կլիմայական, տարածաշրջանային պայմանները հաղթահարելու կամ հնարավորինս արդյունավետ օգտագործելու նպատակով, ի վերջո ստեղծում են միայն այդ մոդելին հատուկ պետական, մշակութային կամ քաղաքական համակարգ: Այս համատեքստում աշխարհագրական գործոնը (կլիմայական պայմանները, տեղանքի կամ տարածաշրջանի առանձնահատկությունները և այլն) կարող է ճակատագրական դեր խաղալ, մասնավոր՝ վաղ հասարակություններում, երբ դեռ չի կարելի խոսել գիտական կամ ռազմական՝ երկրի ընդերքից, ռեսուրսներից, կլիմայական և աշխարհագրական պայմաններից վեր կամ դուրս գտնվող պոտենցիալի գերակայության մասին: «Պատմության բեմին հայտնված յուրաքանչյուր մոր էթնոս վերածնունդ է լանդշաֆտը՝ բնության պայմաններին հարմարվելու մոր միջոցների օգնությամբ»¹: Այդ վերածնունդները կարող են պայմանավորված լինել տարաբնույթ հանգամանքներով. պետությունը հուսալի պաշտպանական օղակներով շրջապատելու թելադրանքով, նրա արդյունավետ կենսագործունեության համար ռազմավարական կարևորություն մերկայացնող հումքի՝ մետաղների, հանքանյութի, սննդի աղբյուրների մատչելիությունը կամ ներպետական կայունությունն ապահովելու անհրաժեշտությամբ և այլն: Սակայն միևնույն ժամանակ միանգամայն պատճառաբանված և հաճախ անխուսափելի արտաքին և ներքին քաղաքական այս ձեռնարկներն ունենում են հետադարձ ազդեցություն այդ պետության ներքին կառուցվածքի, կիրառվող քաղաքական մեթոդների և գործելաժողի վրա², ավելին, որոշ դեպքերում դա իր արտահայտությունն է գտնում այդ պետության թե՛ զաղափարախոսության, թե՛ բնակչության արժեքային համակարգի վրա, առաջացնելով մշակված և արդյունավետ գործարկվող մի մոդել, որը բնորոշվում է արտաքին քաղաքական ոլորտում մանրամասն հաշվարկված կառույցի կամային ստեղծմամբ, որի մշտական կիրառումն էլ (իհարկե, հաշվի առնելով տարաբնույթ քաղաքական հանգամանքների պատճառով առաջացած ոչ «պլանավորված» դեպքերը) դառնում է տվյալ պետության արտաքին քա-

դաքսականության հիմքը՝ իր հերթին կամխորոշելով այդ պետության կամ կայսրության հետագա ճակատագիրը:

Ստորև առավել մանրամասն դիտարկենք Փոքր Ասիայի այն հատվածի պատմությունը, որտեղ սկզբանվորվել ու զարգացել է խեթական պետությունը: Իր բնույթով այն պատկանում է հիմարևելյան պետությունների ձևավորման երկրորդ՝ «ոչ ոռոգելի» քաղաքակրթությունների մոդելին, որի հիմքում ընկած է տվյալ աշխարհագրական տարածքի ընձեռած հնարավորությունների առավելագույնս արդյունավետ օգտագործման հանգամանքը, օրինակ, որոշ քնամթերքների (ծիթապտուղ, խաղող) վերամշակումը, քարերի և մետաղների (մանավանդ Փոքր Ասիան հայտնի է պղնձի, երկաթի, թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի և այլ հանքանյութերի առատությամբ) արդյունահանումը, կամ էլ ընդհանրապես կարևոր առևտրական ուղիների խաչմերուկներին գտնվելու գործոնի շահագործումը: Այս վերջինն ամենաէական դերը խաղաց արևմտյան Փոքր Ասիայում խոշոր պետությունների ձևավորման գործընթացի մեջ, որն այս տարածքներում Ք.ա. 3-րդ հազարամյակում բավականին դանդաղ էր ընթանում, քանի դեռ այն չէր ներառվել Միջագետքից ներթափանցող քաղաքական, առևտրական և մշակութային ազդակների մեջ: Ահա այդ ազդակների հետևանքով ձևավորված պետական միավորների առջև ծառացան հարցեր, որոնց լուծման ուղիների, ձևերի, մեթոդների արդյունավետությունն ու հրատապությունը դարձավ նրանց հետագա կենսագործման հիմքը: Խեթական պետական համակարգի հիմնական կամխորոշիչներն էին.

1. աշխարհագրական առանձնահատկությունների հաղթահարումը
2. ռազմավարական հումքի աղբյուրները՝ մետաղներ, հանքանյութեր, հացահատիկ և այլն, տնօրինելու և շահագործելու ամհրաժեշտությունը և, որպես արդյունք՝ խեթական տարածքներով կամ մերձակա շրջաններով անցնող առևտրական ուղիների վերահսկողությունը
3. բազմաէթնիկությունը

• *Աշխարհագրական պայմանները.* Խաթթիի աշխարհագրական պայմանները նրա ռազմական և տնտեսական խնդիրների անկյունքարն էին: Բնական որևէ պատմեշ չունենալով, բացի Հալիս (խեթ. Մարասանտի-յա, այժմ՝ Կոզլլ-Էրմակ)³ թուրքերեն՝ Կարմիր գետ, ջրերի կարմրավուն նստվածքի պատճառով⁴) գետից, որը ծանձաղուտ էր և ոչ դժվարանցանելի, իր ամբողջ տրամագծով Խեթական պետությունը շրջապատված էր հակառակորդներով⁵: Հյուսիսում, մայրաքաղաք Խաթուսասին շատ մոտ տարածված էին կասկական ցեղերը, որոնց տարեկան մեկ անգամ էլ իրականացվող արշավանքը բավարար էր մայրաքաղաքի անվտանգությունն ու մատակարարումը խափանելու համար⁶, նրանցից արևելք ընկնում էր ոչ միշտ լոյալ տրամադրված Հայասա-Ազգիի տարածքը, արևելքն ու հարավ-արևելքը վիճարկելի գոտի էին XVII-XV դդ. Խաթթիի և Միտաննիի, XIV-XIII դդ.՝ Խաթթիի և Ատրենտանի միջև, արևմուտքում՝ մշտական

ապստամբությունների հակված և տարանջատված Արցախ երկրներն էին, որոնց հետագայում ավելացավ Ախխյավայից սպառնացող վտանգը: Որևէ հիմնավոր հուսալի պատենշի բացակայությունը և զարգացման տարբեր մակարդակի վրա գտնվող և ռազմատենչ հարևանների առկայությունը ռազմական ագրեսիայի ենթարկվելու մշտական սպառնալիք էին ստեղծում՝ խեթական քաղաքական պատմությունը վերածելով ոչ այլ ինչի, եթե ոչ «շարունակական պատերազմների շարքի»⁶: Դա իր հերթին պարտավորեցնում էր ունենալ մշտապես պատրաստ, ռազմունակ և մեծաքանակ բանակ՝ այն միանգամից մի քանի ճակատով օգտագործելու համար:

• *Ռազմավարական հումքի աղբյուրները՝ մետաղներ, հանքանյութեր, հացահատիկ*. ինչպես նշեցինք, Փոքր Ասիա թերակղզին ընդհանրապես հարուստ է մետաղներով, փայտով և օգտակար հանածոներով, նրա արևմտյան մասում առավելապես հայտնի են ոսկու հանքերը, հյուսիսարևելքում՝ երկաթի հանքերը, արևելյան շրջաններում՝ պղնձի: Մակայն այս բոլոր հանքավայրերն ըստ էության դուրս էին բուն խեթական տարածքներից՝ Հալիսի ոլորանից, և հիմնականում կենտրոնացած էին փոքրասիական Տավրոսի փեշերին և Վերին Եփրատի ավազանում: Եվ քանի դեռ տվյալ ժամանակաշրջանի համար տիրապետող շարունակում էր մնալ բրոնզը թե՛ որպես զենքի, և թե՛ որպես աշխատանքային գործիքների հիմնական նյութ, պետության համար կենսական նշանակություն ուներ այն կազմող երկու բաղադրիչների ապահովումը՝ պղնձի բավարար քանակն ու անագի (Ջ.ա. II հազարամյակից պղնձա-մկնդեղային ձուլվածքին փոխարինելու է գալիս պղնձա-անագայինը, որն իր տեխնիկական հատկանիշներով շատ ավելի մախընտրելի էր) ներկրումը: Պղնձի առավել հայտնի հանքերը տեղակայված էին (և են) Վերին Եփրատի ավազանում (Էրզանի մադեն), իսկ անագը հասանելի էր միայն որպես ներկրվող ապրանք: III հազարամյակում անագ ներկրվում էր միայն այժմյան Աֆղանստանի և հյուսիսարևելյան Իրանի տարածքներից, (ընդ որում նրա առևտրով ըստ ասորեստանյան աղբյուրների, զբաղվել են նաև Հայկական լեռնաշխարհի բնակիչները⁷), իսկ XIV դարից սկսած փյունիկեցիների միջոցով սկսվեց իսպանական անագի ներկրումը Փոքր Ասիա, ինչն էլ ևս մեկ անգամ շեշտադրեց Արևելյան Միջերկրականի ռազմավարական նշանակությունը Խաթթիի համար: Կարծիք է հայտնվել այժմյան Բոհեմիայից Արցախյի տարածքով անագի ներկրման մասին, ինչպես նաև Անդրկովկասից Վերին Եփրատի ավազանով անագի փոխանակման հնարավոր առևտրային ուղու մասին⁸: Բացի պղնձից և անագից, պատմագիտության մեջ շատ է արծարծվել խեթերի ենթակայության տակ գտնվող երկաթահանքերի և նրանց նշանակության հարցը⁹: Նշենք սակայն, որ երկաթն ավելի շատ օգտագործվում էր խորհրդանշական նշանակություն ունեցող իրեր պատրաստելու համար, և հազիվ թե երկաթն զենքն ունենար այն տարածվածությունն ու նշանակությունը, որն ուներ բրոնզը, ոչ այնքան իր արժեքի, որքան իր տեխնիկական որակների պատճառով. մինչև Ջ.ա. IX դարը օգտագործվող երկաթը դյուրաբեկ էր և իր տեխնիկական որակներով զիջում էր ան-

գամ պղնձին, այս երկաթի առավելությունը նրա մատչելիությունն ու ժամանությունն էր, ինչպես նաև երկաթե իրերը վերանորոգելու ավելի մեծ հնարավորությունը: Իսկ կոփման ենթակա, և հետևաբար առավել քանկարծեք երկաթը Առաջավոր Ասիայում և Եվրոպայում հայտնագործվեց միայն IX դարում¹⁰: Ինչևիցէ, բոլոր դեպքերում բրոնզի արտադրության համար ամենաթեշտ անագը տեղական չէր, և դրա հուսալի պաշարներ ունենալու համար կենսականորեն անհրաժեշտ էր վերահսկել առևտրական այն ուղիները, որոնք ապահովում էին դրա ներկրումը: Ոչ պակաս, եթե ոչ ավելի մեծ գործոն էր այն հսկայական շահույթը, որը գոյանում էր քարավաններից զանձվող հարկերի և տուրքերի շնորհիվ: Առևտրական ճանապարհների այս համակարգում խեթերի համար առավել կենսական նշանակություն ունեւր Բաբելոնից Տիգրիսով վերև և Տավրոսի ու Ջագրոսի լեռնանցքներով դեպի Փոքր Ասիա ձգվող մայրուղին. Նինվեից մի ճանապարհը Ջերբել-Սին-ջար լեռնաշղթայով ձգվում էր դեպի Խաբուր գետի ակունքները: մյուսը՝ Խաբուր և Բալիխ գետերով դեպի Վերին Եփրատ, այնուհետև բերվում էր Սիրիա և Փոքր Ասիա, ըստ որում XVI-XIV դդ. այս ճանապարհն անցնում էր Միտաննիի բուն տարածքով: Այս նույն ճանապարհը վերինեփրատյան հովիտը կտրելով դուրս էր գալիս Տիգրիսի ակունքների մոտ և շարունակվում մինչև Անդրկովկաս, իսկ դեպի Սիրիա տանող հատվածը անցնում էր Օրոնտես գետի հովտով: Վերջինս ըստ էության հյուսիսից հարավ ձգվող ճանապարհի ամենակարևոր մասն էր կազմում. այստեղից կարելի էր հասնել Ուգարիտ, որը ժամանակի ընթացքում մեծ կարևորություն ձեռք բերեց՝ որպես Եգիպտոսից ներկրվող հացահատիկի տարանցիկ կետ¹¹, Տյուրոս, Բիբլոս, Վերին Հորդանան և Պաղեստին: Այս համատեքստում պարզորեն ուրվագծվում է խեթական արտաքին ձեռնարկների հիմնական երկու ուղղությունները՝ դեպի Վերին Եփրատի ավազան և դեպի Հյուսիսային Սիրիա:

Լոկ Խաթթիի տարածքը – պատմական Կապադովկիան, որն այժմ պատված է աղի նստվածքներով, ժամանակին երկրագործության հնագույն օջախներից մեկն էր, և բնակչության հիմնական զանգվածը զբաղված էր երկրագործությամբ ու անասնապահությամբ, Ու հազարամյակի կեսերից՝ նաև ձիաբուծությամբ, տարածված էր խաղողագործությունն ու ձիաթենու մշակումը: Ընդհանուր առմամբ, ռազմավարական միակ ապրանքը, որը խեթերը ստիպված էին հայթայթել ոչ Փոքր Ասիայում, դա անագն էր, եթե չհաշվենք Բաբելոնից, Ասորեստանից, Աֆղանստանից, Եգիպտոսից ներկրվող քանկարծեք քարերն ու պերճանքի առարկաները (յապիս-յագուրիտ, գործվածքներ և այլն):


• *Քազմաէքնիկությունը.* Փոքր Ասիան աչքի էր ընկնում քազմաէքնիկությամբ: Բնիկ խաթերին փոխարինելու եկան հնդեվրոպացի խեթերը, լուվիացիները և պալայցիները, որոնց միացան խուտիները՝ հարավ-արևելքից և սեմական տարրը՝ Հյուսիսային Սիրիայում: Պետք է նշել, որ մեծան խառնածին կազմ ունենալով հանդերձ, Խաթթիում, ինչպես և ընդհանրապես Առաջավոր Ասիայում, էթնիկ հողի վրա կոնֆլիկտներ չէին առաջանում,

նախ՝ մերօրյա «Էթնոս» գաղափարի բացակայության պատճառով, այնուհետև՝ տարածքային ինտեգրացիոն գործողություններով պայմանավորված համահարթեցման շնորհիվ. երբ միևնույն համայնքում ապրող տարբեր էթնիկ խմբերի ներկայացուցիչներն ըստ էության կարող են միմյանց հետ ավելի սերտ կապեր ունենալ, քան էթնիկ խեթը՝ խեթի հետ: Մամավանդ խեթական պետության մայրամուտին շատ դժվար է հստակ առանձնացնել խեթական տերության էթնիկ շերտերը: Վերաբերմունքի տարբերություն կարող էր նկատվել քաղաքակրթական ցածր մակարդակ ունեցող ցեղերի նկատմամբ, *civitas-barbaria* հակադրության մոդելի համապատասխան, մամավանդ որ փոքրասիական քաղաքական-մշակութային աշխարհը, թե՛ պետականության զարգացման փուլերի համատեքստում, թե՛ էթնոմշակութային առումով երբևէ միատարր չի եղել¹²: Իսկ ընդհանուր առմամբ, խեթական քաղաքակրթությանը բնորոշ է տարբեր էթնիկ և քաղաքակրթական շերտեր իր մեջ հաջողությամբ ինտեգրելու և վերամշակելու մեծ ունակություն՝ թե՛ լեզվի, մշակույթի և կրոնի (որտեղ կարելի է առանձնացնել առնվազն երեք շերտ՝ խաթական, հնդեվրոպական և խոտիական), թե՛ ռազմարվեստի և բանակի, թե՛ կիրառվող քաղաքական մեթոդների և այլնի մեջ:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ խեթական տերությունն իր սկզբնավորումից ևեթ ստիպված էր գոյատևել որպես մշտապես ռազմական վիճակում գտնվող պետություն, և մման պայմաններում անկախությունը պահպանելուն կարող էր օգնել միայն հանգամանալից և մանրամասն մշակված քաղաքական կոնցեպցիան, որի առանցքը կազմված լիներ երեք փոխլրացնող սկզբունքներից.

1. մշտական ռազմական պատրաստ վիճակ՝ հակահարված տալու կամ պատասխան ագրեսիա, նաև էքսպանսիա իրականացնելու համար
2. ներպետական կայունություն
3. դիվանագիտական բարդ համակարգ

Վերոհիշյալ երեք սկզբունքներից առավել բարդը մշտական ռազմական վիճակն է: Նման իրողությանը պետությունը կարող է դիմանալ միայն **քաղաքար մարդկային և տնտեսական ռեսուրսների առկայության պարագայում**. պատերազմ վարելը մեր թվարկությունից առաջ էլ ծախսատար և թանկ "հաճույք" էր: Պետական զանձապետարանի ծախսերի հիմնական մասն ըստ էության, կլանելու էր բանակը: Զնայած խեթական բանակի կազմի մասին համալիր տվյալների բացակայությանը, մասնագետները ենթադրում են, որ պատմական մման ճակատագիր ունեցող պետությունը պետք է որ ունենար մշտապես պատերազմի պատրաստ զորամիավորումներ, որոնք ցանկացած պահի կարող էին ռազմական գործողություններ սկսել¹³: Այդ մշտական բանակում զգալի տեղ էր հատկացված մարտականքերին՝ իրավիճակին արագ արձագանքելու կարողության շնորհիվ: Նրա հիմնական խնդիրները սահմաններն հսկելն ու ծագած ապստամբությունները ճնշելն էր¹⁴: Հնարավոր է, որ այս մշտական զորա-



միավորման կազմում ծառայեին նաև կախյալ պետությունների ջոկատները¹⁵: Լիովին պարզ չէ նաև, թե ինչպես է անցկացվել ընդհանուր բանակի հավաքագրումը (խոսքը մշտական բանակի մասին է, այլ ոչ աշխարհագրի): Ըստ ուսումնասիրողների, զինվորական պարիսպը ազատ համայնականների համապետական լուցցի¹⁶ մի ձև էր, շինարարական աշխատանքների (ճանապարհներ, ամրություններ, պարիսպներ) մասնակցելուն գուզընթաց¹⁷: Սակայն հողագործներին մշտապես աշխատանքից չկարելու համար յուրաքանչյուր համայնք առանձնացնում էր իր անդամներից մեկին (բառացի՝ *человек палицы*), սովորաբար արհեստավորի (ըստ երևույթին նրա բացակայությունը ամենաքիչ վնասը կարող էր պատճառել հողագործական աշխատանքների տարեկան ցիկլին), որն անցնում էր զինվորական ծառայության՝ համայնքի լուցցի փոխարեն, նրա հողակտորն էլ նրա բացակայության ժամանակ փոխանցվում էր մեկ ուրիշի՝ այն մշակելու համար: Համայնական այս «զինապարտներից» բացի, բանակը կարող էր ժամանակ առ ժամանակ համարվել *խապիրությունով*¹⁸ *hapiris*՝ համայնքից այս կամ այն պատճառով վտարված, բայց իրավապես ազատ հպատակներով, ինչպես նաև այն գերելարվածներով կամ օտարականներով, ովքեր անցել էին զինվորական ծառայության՝ *amuwalas* և *lulahhis*¹⁹: Այնուհանդերձ, զինապարտների, *խապիրությունների* ու նախկին գերիների թիվը քիչ հավանական է, որ բավականացներ երբեմն մի քանի ճակատով պայքարող խեթական բանակի պահանջներին, և ըստ ամենայնի, վարձկանների թիվը նույնպես պետք է զգալի լիներ¹⁹: Խեթական օրենքները պահպանել են վարձկաններին վերաբերող երկու հոդված.

«§54. Նախկինում Մանդա (ցեղի) ռազմիկները, Սալա (ցեղի) ռազմիկները, Տամալկիա, Խատրա, Յալպա, Տախիմիա, Խեմուվա քաղաքների նեռածիգները, հյուսներն, ախոռապաններն ու նրանց կարուխալա (ռազմիկների մի կատեգորիա) մարդիկ պարիսպներ և տույժեր չէին կրում:

«§55. Երբ Խաթթի քաղաքի որդիները՝ սախխանի մարդիկ՝ եկան ու խնդրեցին արքայի հորը, նրանք ասում էին նրան. «Մեզ համար ոչ որ չի վճարում, և մեզ մերժում են, ասելով՝ դուք միակն եք, ովքեր սախխան են կրում»: Եվ արքան տուլիա եկավ և ասաց. «Դուք էլ... այդպիսին եղեք:»²⁰

Այս քաղաքները կամ շրջանները, որոնցից Մանդան²¹ և Սալան²² ուսումնասիրողները տեղադրում են Հայկական լեռնաշխարհի արևմտյան մասերում, Խեմուվան՝ Փոքր Հայքում կամ Իսուվայից արևմուտք, հարավ-արևմուտք²³, իսկ Խատրան՝ միանշանակ Իսուվայի տարածքում (հետագայում այն հանդիսացել է Իսուվայի կարևոր կրոնական կենտրոններից մեկը²⁴), Խեթական տերությանը սահմանակից օտար ցեղեր էին, որոնք ամփջականորեն չէին ենթարկվում խեթերին, բայց գտնվում էին նրա քաղաքական ազդեցության ոլորտում²⁵: Հատկանշականն այն է, որ Հալիսից արևելք մինչև Արածանիի միջին հոսանքն ընկած շրջանների բնակիչներն, ինչպես նաև ռազմական ոլորտի համար օգտակար որոշ մասնագիտություն ունեցողները ազատված էին որևէ պարիսպից — հնարավոր է այն պատճառով, որ նրանց զինվորական ծառայությունն իրականացվում էր ա-

գատ վարձկանության սկզբունքներով: Իսկ նույն տարածաշրջանում գտնվող մայրաքաղաք Խաթթուսասի բնակիչները մշտապես ենթարկվում էին զինվորական պարհակության, որը նրանց *սախխամն* էր համարվում: Նշելով արտոնյալ գոտու այլ բնակիչների ծաղրանքները, նրանք խնդրում են իրենց նույնպես վճարել զինվորական ծառայության համար: Իսկ արդեն Նոր թագավորության շրջանում վարձկանների մեջ, ըստ որոշ կարծիքների, մեծ պետք է լիներ նաև լուսիացիները թիվը²⁶:

Այս մշտական բանակը ամեն տարի ենթարկվում էր ռազմահավաքի վաղ զարնանը: Նախապես քրմերը գուշակություններ էին անցկացնում, և դրական պատասխանի դեպքում բանակը արքայի անմիջական ղեկավարությամբ մինչև վաղ աշուն մասնակցում էր տարբեր բնույթի տեղական նշանակության արշավանքների²⁷:

Ռազմական մեծ գործողությունների ժամանակ ընդհանուր զորակոչ էր հայտարարվում, մասնակցում էին նաև կախյալ պետությունների և փոխարքայությունների զորաջոկատները²⁸, որոնք պայմանագրային պարտավորություններ էին ստանձնել խեթերի հանդեպ²⁹: Ամենամեծ թվաքանակը խեթական բանակն արձանագրեց Քադեշի ճակատամարտի ժամանակ, որին խեթական կողմը ներկայացել էր 35000 հետևակով և 2500 մարտակառով³⁰, ներառյալ բոլոր դաշնակիցների ու կախյալ երկրների՝ Արցալայի, Պիտասսայի, դարդանցիների (Տրոյա), Լուկկայի, Կասկայի, Կիցուվատոնայի, Կարգամիսի, Ուզարիտի և այլնի զորաջոկատները³¹: Մակայն զորքի նման քանակությունն ավելի շատ բացառություն էր, քան օրինաչափություն, որին որպես ամուղակի ապացույց կարող է ծառայել եգիպտացիների հեզմանքը. «Նա (Մուվատալիսը) Խաթթի երկրում արծաթ և ոսկի չբողեց՝ գորք հավաքելու և եգիպտացիների դեմ դուրս գալու համար»³²: Այնուհանդերձ, թե՛ խաղաղ պայմաններում և թե՛ տեղական հակամարտություններ լուծելու ժամանակ էլ պարենը, վարձկանների ջոկատները, ռազմական հանդերձանքը, մարտակառքերը հսկայական ծախսեր էին պահանջում, մասնավորապես որ խեթերը երկու մշտական "զխացավանք" ունեին՝ կասկերը, որտեղ խեթերի «քաղաքակիրթ» ազդեսիան բախվում էր իրենցից անհամեմատ ցածր մակարդակի վրա գտնվող անհնազանդ ցեղերին, որոնք պատերազմ վարելու սեփական, ուրույն և այդ իսկ պատճառով անկամխատեսելի ծևեր ունեին ու Արցավա երկրները, որոնք վերջնականապես հնազանդեցնելու ջանքերը մեծամասամբ ապարդյուն էին մինչև Խաթթիի անկումը: Ընդ որում, մշտական խնդիրներ առկա էին պետության բոլոր ասհմաններում, և խեթական բանակը հաճախ երկատվելու անհրաժեշտություն էր ունենում: Այդ իսկ պատճառով խեթական ռազմավարության առանցքը արագ պատերազմն էր, թե՛ ծնունդ ամիսներին փոքրասիական թերակղզում պատերազմ վարելու անհմարիմության, և թե՛ որևէ հակամարտության մեջ երկարատև խրվելու անցանկալի հետևանքներից խուսափելու պատճառով: Հիմնական շեշտը դրվում էր մարտակառքերի սրընթաց գործողությունների վրա³³, ինչը սակայն խուտիական մորամուծություն էր³⁴, ինչպես և Խաթթուսիլիս I-ից վկայված պաշարման մեթոդները³⁵: Պերմա-

մենտ պատերազմների առաջացրած ֆինանսական բարդությունները ոլորտ չափով թուլացան Հյուսիսային Միքսիայում հաստատվելուց հետո, չնայած հետագայում էլ ռազմական արշավանքների և ֆինանսական խնդիրների մեջ ներգրավված Մուրսիլիս II-ը խիստ բացասական վերաբերմունք ցուցաբերեց խորք մոր չպատճառաբանված առատաձեռնության հանդեպ. վերջինս ամուսնու մահից հետո թե՛ իր ազդեցությունը որպես տավանանմա պահպանելու, թե՛ քնակչության լայն շրջաններում ժողովրդականություն վայելելու նպատակով ամուսնու ողջ ունեցվածքը (ամենայն հավանականությամբ՝ անձնական) նվիրաբերեց Լելվանի աստվածուհու տաճարին և բաժանեց հասարակ մարդկանց: Նրա այս արարքը խիստ վրդովմունք առաջացրեց արքայի մոտ, և հետո էլ մեղադրականի մի մաս դարձավ կազմակերպված դատավարության ժամանակ³⁶:

Տարբերակ կարող էր լինել ֆինանսական խնդիրները զրավված երկրների, դաշնակիցների և կախյալ երկրների հաշվին լուծելը: Արդեն Խաթուսիլիս I-ից սկսած, խեթական բանակը վերադառնում էր հսկայական ավարով ու գերեվարվածների մեծ թվով. նրա սիրիական արշավանքը զուգորդված էր ավերածություններով, հրդեհներով և թալանով. իսկ Խախսում քաղաքն (Եփրատի միջին հոսանքների շրջան³⁷) ավերակների վերածելն ընդհանրապես ներկայացվում էր որպես Սարգոն Աքքադացու սխրանքները գերազանցող քայլ. «Չնայած Սարգոնգինան (Սարգոնը) ջախջախեց Խախսայի գործերը, բայց Խախսան նա չայրեց...» Տարեգրություններ, III 29-40, քարգմ. Güterbock, 1964)³⁸: Չնայած Նոր թագավորության շրջանում այս ոճն արդեն տեղի է տալիս, և խեթական արքաները, սկսած Մուպալիուլիումասից, աշխատում են իրենց արշավանքներին իրավաբանական հիմնավորում տալ և հաղթանակներն էլ նշելիս հեռու են այն դաժան մանրամասներից, որոնցով լեցուն են ասորեստանյան աղբյուրները³⁹: Նշենք, սակայն, որ մարզերը, պետությունները կամ կախյալ երկրներն անընդհատ թալանելն իմաստ ունեն այնքան ժամանակ, քանի դեռ նրանք տալիք ունենին, ռեսուրսների սպառմանը զուգընթաց այդ միավորը ավելի շուտ գլխացավանքի էր վերածվում, քան շահութաբեր մարզի՝ այնտեղ առաջացող դժգոհության, ապստամբությունների և խռովությունների, և հետո նաև այդ արդեն ոչ շահութաբեր տարածքում ավելորդ զորք պահելու պատճառով: Առաջավոր Ասիայի պատմության մեջ բազմաթիվ են դեպքերը, երբ նման անհեռառես քաղաքականությունը անդառնալիորեն խափանել է ակտիվ, ինտենսիվ առևտրական ու մշակութային կապերը. Խեթական պետության ակունքների մոտ կանգնած Անիտտասի նման գործողությունները ժամանակին կաթվածահար արեցին ասորեստանյան կարումների (առևտրական գաղութներ) արդյունավետ համակարգը: Նույն արդյունքն ունեցավ Ասորեստանի նման քաղաքականությունը Հյուսիսային Ասորիքում և Եգիպտոսի քաղաքականությունը Արևելյան Միջերկրականում, ինչը մեծապես նպաստեց հյուսիսսիրիական պետությունների՝ խեթական կողմն անցնելուն: Նման քաղաքականությունը անխուսափելիորեն իր տեղը պետք է զիջեր առավել մտածված և հեռատեսորեն հաշվարկված գործելաոճի: Ըստ

որում, դա պայմանավորված էր ոչ միայն տնտեսական նպատակահարմարությամբ, այլև ներպետական բարդ հանգամանքներով: Տևական ռազմական արշավանքներում արքայի ներգրավվածության գործոնը մեծապես ապակայունացնում էր պետության ներքին կյանքը: Օրինակ՝ Խաթթուսիլիս I և Մուրսիլիս I-ի հաջող սիրիական արշավանքները այնպիսի ապակայունացում առաջացրին ներխեժական կյանքում, որ մոտ դարուկես պահանջվեց այն վերջնականապես հաղթահարելու համար: Իսկ Մուվատալիսի ակտիվ գործողությունները հյուսիսային Սիրիայում և եգիպտական հարցը լուծելուն ուղղված նրա ջանքերը անուղղակիորեն նպաստեցին պետության մեջ ի դեմս Խաթթուսիլիս III-ի «ծանրության երկրորդ կենտրոնի» առաջացմանը՝ այդ իրավիճակից բխող բոլոր բարդություններով, երկպառակություններով և ապստամբություններով հանդերձ: Պետությունն ի վիճակի չէր միևնույն ժամանակահատվածում և՛ արտաքին ագրեսիա իրականացնել, և՛ ներքին կարգուկանոն ապահովել: Գործոնների այս համալիրը ի վերջո շեշտադրեց խեթական արտաքին քաղաքականության մեջ հիմնախնդիրների լուծման ոչ ուժային, դիվանագիտական մոտեցումը: Մուպիլուլիումաս I-ից սկսած, խեթերը ձեռնամուխ եղան դիվանագիտական հաշվարկված համակարգի ստեղծմանը, այնպիսի մի համակարգի, որն ունակ կլիներ թե՛ ապահովելու պետության անկախությունը, և թե՛ իր ծավալապաշտական ծրագրերն իրականացնելիս պերմանենտ կերպով իր մեջ ներմուծելու նոր միավորներ, և ավելին՝ դրանք իր մեջ ինտեգրելու⁴⁰: Ըստ էության, խեթերին, կամ այն սիմբիոզին, որին տվել են խեթեր անվանումը, դա հաջողվեց. մոտ 500 տարվա ընթացքում նրանք իրականացրեցին ոչ միայն ռազմական, այլ նպատակասլաց քաղաքակրթական էքսպանսիա՝ իրենց բարդ և մշակված դիվանագիտական համակարգի շնորհիվ: Որպես մոտավոր սխեմա ուրվագծվում է *ագրեսիա-կայունացում-քաղաքակրթում* մոդելը, կամ այլ բառերով ասած՝ գրավված միավորի ներգրավումը սեփական համակարգի մեջ, և, որպես շարունակություն՝ սեփական մոդելի բաղկացուցիչ տարրերի ներմուծում այդ երկիր: Հետագայում այս գործելաոճը փայլուն կերպով կրկնվեց հռոմեական արտաքին քաղաքականության մեջ, երբ գրավված պրովինցիաները զենքի ուժով «յուրացնելու» գործընթացը զուգորդվում էր այնտեղ հռոմեական քաղաքակրթության առավել ցայտուն ատրիբուտների արմատավորմամբ. դա թե՛ հռոմեական պոլիսի բնորոշիչ «ճարտարապետական-հասարակական» տարրերն էին՝ ֆորումը, թերմաները, տաճարները, թե՛ լեզուն, գրականությունը, թատրոնը, և թե՛ ճանապարհների զարգացած համակարգը, մի խոսքով, այն ամենը, ինչը ակնհայտ հռոմեական էր և դրանով իսկ՝ քաղաքական տեսակետից առավել բարձր, առավել քաղաքակիրթ: Խեթերի դեպքում, կարող ենք մշել նրանց քաղաքականության մեջ ամկա (և հետագա հռոմեականի նախակարապետը հանդիսացող) արդարացի իրավական դրույթներին և աստվածային նորմերին հետևելու քաղաքական սկզբունքների մշտական հռչակումը, իրենց վերահսկողության տակ եղած տարածքներում գրային երկու համակարգերի, մշակույթի, կրոնի⁴¹ տարածումը, զարգացած դիմաստիկ կապե-

րը, վասսալ պետությունների արքունիքի պարտադիր "խեթացումը" գահը խեթական արքայադատեր ժառանգներին փոխանցելու պարտադրամբով և այլն: Նշենք, սակայն, որ խեթական դիվանագիտության գոմե համառոտ քննարկումը դուրս է տվյալ հոդվածի սահմաններից, և առավել մանրամասն վերլուծման կարիք ունի:

Ամփոփելով, կարող ենք ասել հետևյալը.

- Իր առաջացման սկզբից եթ, խեթական պետությունը ստիպված էր գոյատևել որպես ակտիվ ռազմական գործողություններ իրականացնող պետական մոդել, որի համար նվաճողական քաղաքականությունը միջոց էր թե՛ իր սեփական անվտանգությունն ապահովելու, և թե՛ իր ռազմավարական կարիքները հոգալու համար: Նման ընթացքը շրջայական ռեակցիայի պես առաջացրեց նորանոր տարածքներ գրավելու, և մերթ ընդ մերթ ծագող հակամարտությունների ժամանակ հակառակորդից (որոնց թվում՝ Միտաննին, Եգիպտոսը, Ասորեստանը) գոմե ետ չընկնելու անհրաժեշտություն: Այս շրջանը հասնում է մինչև Մուպպիլուլիումաս 1-ի գահակալման վերջը (Ջ.ա. XIV դարի 2 կես):

- Երկրաչափական պրոգրեսիայով աճող նորանոր խնդիրներն ի վիճակի չլինելով լուծել միայն ռազմական ճանապարհով, խեթական պետության արտաքին քաղաքականության մեջ աստիճանաբար սկսում է շեշտադրվել դիվանագիտական մեթոդներին ավելի մեծ նախապատվություն տալու քաղաքականությունը: Այդ մեթոդներն են՝ կախյալ պետությունների զարգացած համակարգը, բուֆերային գոտիների ստեղծումը, դիմաստիական ամուսնությունների լայն տարածումը, տնտեսական պայմանագրերը և այլն: Այս գործելաճան իր զագաթնակետին հասավ Խաթթուսիլիս III-ի գահակալման ժամանակ (Ջ.ա. XIII դարի կեսեր):

- Այդուհանդերձ, խեթական պետության ներքին զարգացումները, մասնավորապես տերության ռազմավարական տեսանկյունից կարևոր (դեպի հարավ և հարավ-արևելք՝ Հյուսիսային Սիրիա և Վերին Եփրատի ավազան) և մշտական պաշտպանության կարիք ունեցող (Խաթթիի հյուսիս, հյուսիս-արևմուտք և հյուսիս-արևելք) գոտիների տրամագծորեն հակառակ ուղղությունների վրա գտնվելը և այդ տարածքներում առաջացող խնդիրներին միաժամանակորեն և մի անձի կողմից լուծելու անհնարինությունը արդեն Մուպպիլուլիումաս I-ին ստիպեցին Հյուսիսային Սիրիայի սահմաններին ստեղծել երկու փոխարքայություն՝ Կարգամիսի և Հալեպի, իր որդիներին հաստատելով այդ թագավորությունների գահերին, իսկ Մուվատալիս II-ի օրոք, ինչպես վերը նշեցինք, արդեն ի հայտ եկավ պետության հազիվ ուրվագծվող տրոհումը՝ Թարխունտասսա և Խաթթուսաս կենտրոններով: Պահի գերխնդիրը՝ եգիպտական հարցը լուծելով հանդերձ, այդ իրողությունը հետագա տասնամյակներին վերափոխվեց պետության հետագա տրոհման առաջին քայլին, իսկ գահակալական պայքարը, որը վերսկսվեց Խաթթուսիլիս III-ի կառավարմամբ, էլ ավելի խորացրեց այդ միտումը: Ի վերջո, այս և բազմաթիվ այլ գործոնների հետևանքով⁴², XIII դարի վերջում «*pax hethitica*»-ն փլուզվեց՝ առաջացնելով այսպես կոչված Նոր կամ Ետխեթա-

կան բազավորությունների (Կարգամիս, Մելիդ, Թարալ, Գուրգում) մի շարք (ըստ որում հենց վերոհիշյալ ռազմավարական նշանակություն ունեցող երկրամասերում), որոնք իրենց ուժերի ներածին չափով շարունակեցին խեթական կայսրության ավանդույթները:

MARIAM KHANZADYAN

ON THE ISSUE OF THE FOREIGN POLICY OF THE HITTITE EMPIRE

The article deals with the concept of foreign policy of the Hittite Empire. The permanent military activities, large territory and aggressive neighbors at all boundaries of the homeland dictated a structure of Hittite foreign policy. It was based on permanent availability of sufficient military forces, on the gradual integration of the buffer states into the *pax hethitica* and wide political, economic, military, and diplomatic ties with other great powers of the ancient Near East. However these conditions have stipulated ultimate changes in structure of the state: endless military incursions of warlike neighbors and internal problems have eventually caused decentralization of the Empire and further split of the *pax hethitica*.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Гумилев Л.Н., Этногенез и биосфера земли, М. 2001, стр. 214.
2. Դրա վառ օրինակն է համրապետական Հոմեր: Մ.թ.ա. III-I դարերի հոմերական ակտիվ նվաճումները Միջերկրական ծովի ավազանում ամբողջովին ձևափոխեցին այդ պետության ներքին համրապետական կառուցվածքը, և այդ ներսից պայթեցված համակարգի կայունացումը պահանջեց արյունալի քաղաքացիական պատերազմների մոտ երկու հարյուր տարի:
3. Garstang J. and Gurney O.R., The Geography of the Hittite Empire, London, 1959, p. 3.
4. Bryce T., The Boundaries of Hatti and Hittite border policy, Tel Aviv, volume XIII-XIV, 1986-1987, p. 85.
5. Macqueen J.G., The Hittites and their Contemporaries in Asia Minor, London, 2001, p. 53.
6. Korošec V., Warfare of the Hittites – from the legal point of view, *Iraq XXIII*, p.15.9.
7. Munn-Runkin J.M., Assyrian Military Power 1300-1200 B.C., in САН (Cambridge Ancient History), 1980, volume 2, pt.1, p.294, История Древнего Востока (далее ИДВ), часть 2, М, 1988. стр. 93.
8. Macqueen J.G., ... pp. 42-43.
9. Štušník Kempinski A. and Košak S., Hittite metal “inventories” (CTH 242) and their economic implications, Tel Aviv, volume IV, 1977, pp. 87-93.
10. История древнего мира, том 2, М. 1988, стр. 6.
11. Goetze A., The Hittites and Syria, in САН, volume 2, pt.1, p.261; ИДВ, часть 2, стр. 549.
12. Զոպան Ա., Մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը, Եր, 1999, էջ 177:
13. Герни О.Р., Хетты, М, 1990, p.98; Götze A., Kleinasien, München, 1957, S.122.
14. Macqueen J.G., ... p. 56.
15. Götze, ... p.122, Macqueen J.G., p. 56.
16. «Լոցցի», «սախխան». լոցցին՝ տարբեր բնույթի պարիսկների կատարումն էր,

- սախխամը՝ քմամբերդով հարկը; սախխամ կարող էր կոչվել մաս ռազմական, վարչական, արքունիքի սպասարկման ֆունկցիաների իրականացումը:
17. ИДВ, часть 2, стр 139.
 18. Götze, ... p. 123.
 19. Վարձկանների մասին վկայում է խեթական օրենքների ևս մի հոդված. §42: «Եթե որևէ մեկը մարդ է վարձում, և մա պատերազմ է գնում և զոհվում, ապա եթե վարձքը տրված է, փոխհատուցում էլ չկա, իսկ եթե վարձքը դեռ տրված չէ, ապա վարձողը պետք է 1 մարդ տա և վճարի 12 սիկլ արծաթ, և կնոջը պետք է վճարի 6 սիկլ արծաթ»:
 20. Խեթական Օրենքներ, էջ 54-55:
 21. Քոսյան, Ա., Հայկական լեռնաշխարհի տեղանունները (ըստ խեթական սեպագիր աղբյուրների), Ե, 2004, էջ 72:
 22. Քոսյան Ա., նշվ. աշխ., էջ 84:
 23. Քոսյան Ա., նշվ. աշխ., էջ 57:
 24. Քոսյան Ա., նշվ. աշխ., էջ 56:
 25. Քոսյան Ա., նշվ. աշխ., էջ 72:
 26. ИДВ, часть 2, стр 124; նշենք, որ Նորխեթական քաղափորության շրջանում և դրանից հետո լուվիացիները կամ լուվիախոսները, դատելով հիերոգլիֆիկ գրի տարածման արեալից, արդեն քմակալության մեծամասնություն էին կազմում: Տե՛ս մաս Дунаевская И.М., Язык хеттских иероглифов, М, 1969, стр. 23.
 27. Герни О.Р., 98; Götze, SS.126-127.
 28. Օրինակ, Ացցիի կողմից՝ 3000 կառապան:
 29. Götze, Kleinasien, p.123.
 30. Եզիպտական աղբյուրները նշում են 28 հազար հետևակ և 6000 ձի:
 31. Bryce T., The Kingdom of the Hittites, pp. 256-263.
 32. ИДВ, часть 2, стр 540.
 33. Մարտակառքերը, պաշարման մեթոդները և այլն կատարելագործելու առաքելությունն իրականացրել էին դեռևս խոտիները:
 34. Götze A., Warfare in Asia Minor, Iraq XXIII, p.125.
 35. Герни О.Р., 98; Bryce,T., The Kingdom of the Hittites, p.77; Götze, Warfare ..., p.128.
 36. Bryce T., The Kingdom of the Hittites, p.84.
 37. Քոսյան Ա., նշվ. աշխ., էջ 52:
 38. Bryce, T., The Kingdom of the Hittites, p.84.
 39. Korošec V., Warfare of the Hittites – from the legal point of view, Iraq XXIII, p.165.
 40. Տե՛ս մաս Yakar J., Anatolian civilization following the disintegration of the Hittite Empire: an archaeological appraisal, Tel Aviv, volume XX-XXI, 1993, pp. 3-28.
 41. Gurney O.R., The Hittite Empire, in Power and Propaganda, Mesopotamia, volume VII, p.166: Götze A., The Hittites and Syria, in CAH, volume 2, pt.1, p. 270.
 42. Առավել մանրամասն տե՛ս Քոսյան Ա., Մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը, Եր, 1999, էջ 112-117:

ԱՔԵՄԵՆՅԱՆ ՊԱՐԿԱՍՏԱՆԻ XVIII ՍԱՏՐԱՊՈՒԹՅԱՆ
ՄԱՏԻՆՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՈՒՐՋ

Պատմահայր Հերոդոտոսը գրում է. «Մատինների, սասպեյրների և ալարոդների վրա սահմանված էր երկու հարյուր տաղանդ հարկ. սա տասնութերորդ մասնաճիւղն էր»¹: Պատմահայրը տարբեր առիթներով մի քանի անգամ ևս անդրադառնում է նշված ցեղերին: Ստորև, մենք կքննենք մատիններին վերաբերվող ամտիկ աղբյուրների տեղեկությունները:

Մատինների վերաբերյալ սկզբնաղբյուրները տալիս են տարբեր տեղադրություններ: Այսպես, Հերոդոտոսը հաղորդում է, որ Մեդիայի և Լյուդիայի սահմանը կազմում էր Հալիս գետը, որը հոսում է Հայկական լեռներից սկզբում Կիլիկիայով, «այնուհետև թողնում է աջից մատիններին, ձախից՝ փոյուզիացիներին: Անցնելով այս երկրները, գետը թեքվում է դեպի հյուսիս և անցնում աջում՝ սիրիական կապադովկիացիների և ձախում՝ պափլագոնացիների միջով»²: Այս տեղեկությունից երևում է, որ մատիններին և փոյուզիացիներին պետք է տեղադրել Կիլիկեցիներից (իմա՝ Կեսաբիա - Մաժակի շրջանը)՝ հյուսիս և արևմուտք, իսկ սիրիացիներին և պափլագոնացիներին՝ մատիններից հյուսիս և հյուսիս-արևմուտք: Ըստ Պատմահոր մեկ այլ տեղեկության, հույն-պարսկական կռիվներին մատինները մասնակցել են պափլագոնացիների հետ մեկտեղ և «լիգիացիների, մատինների, մարիանդիների և սիրիացիների հանդերձանքը նույնական էր պափլագոնականի հետ: Այս սիրիացիներին պարսիկներն անվանում են կապադովկիացիներ: Պափլագոնացիներին և մատիններին առաջնորդում էր Դոտոսը, Մեգասիդոսի որդին, իսկ մարիանդիներին, լիգիացիներին և սիրիացիներին առաջնորդում էր Դարեեի և Արտյուստոնեի որդի Գորբյուեսը»³: Դատելով այս տեղեկությունից, մատինները մտել են III սատրապության մեջ և գտնվել են լիգիացիներից հյուսիս, որոնք թերևս նույն լիկաոնիացիներն են: Այսպիսով, համաձայն բերված երկու տեղեկությունների, մատինների մի հատվածը բնակվել է Փոքր Ասիայում, Հալիսի ոլորանի շրջանում, արևմուտքում՝ Հալիսի ձախ ափին, սահմանակցելով փոյուզիացիներին: Այս մատինները չէին կարող մտնել XVIII սատրապության մեջ, քանի որ XIII սատրապությունը չէր կարող դուրս գալ Սև ծով:

Հերոդոտոսի հաջորդ տեղեկությունները մատիններին կապում են բոլորովին այլ աշխարհագրական միջավայրի հետ: Հեղինակը գրում է. «... Կիլիկեցիներին հաջորդում են արմենները, որոնք նույնպես առատ հոտեր ունեն. արմեններից հետո, ահա այստեղ, բնակվում են մատինները: Հաջորդը, ահա, Կիսսիա երկիրն է, որտեղ Քուսասպես գետի վրա գտնվում է ահա Սուսա (քաղաքը), որտեղ ապրում է մեծ արքան և որտեղ գտնվում են նրա զանձները»⁴: Այս տեղեկության հետ առնչվում է Պատմահոր հետևյալ հիշատակությունը. «Կիլիկիայի և Արմենիայի սահմանը նավարկելի գետն է, անունը Եփրատ: Արմենիայում հիստունվեց և կես փարսախ տարածությ-

յան վրա կա տասնհինգ կայան իջևանատներով. այնտեղ կա մաև պահակակետ: Այս Արմենիայից ճանապարհը մտնում է Մատիենեն, որտեղ կա երեսունչորս կայան, հարյուր երեսունյոթ փարսախի վրա: Այս երկրի միջով հոսում են չորս նավարկելի գետեր, որոնք անհրաժեշտ է նավով անցնել: Այդ գետերից առաջինը Տիգրիսն է. երկրորդը և երրորդը համանուն են, բայց մույն գետերը չեն և մույն վայրից չեն բխում. քանզի հիշյալ գետերից առաջինը բխում է Արմենիայից, իսկ երկրորդը՝ Մատիենեից: Չորրորդ գետը կոչվում է Գյունդես, որը Կյուրոսը բաժանել էր երեք հարյուր վաթսուն ջրանցքների: Այս երկիրն անցնելուց հետո ճանապարհը մտնում է Կիսսիյան երկիրը, որտեղ քառասուներկու և կես փարսախի վրա կա տասնմեկ կայան, մինչև Քոասպես գետը, որը մույնպես նավարկելի է: Այս գետի վրա է գտնվում Սուսա (իմա՝ Շոշ-Հ. IV.) քաղաքը»⁶: Երկու մույնամուն գետերն ուսումնասիրողներն իրավացիորեն մույնացնում են Մեծ ու Փոքր Ջաբ գետերի հետ: Վերոբերյալ տեղեկությունը մեզ է հասել աղճատված վիճակում և հետազոտողները փորձել են վերականգնել մեջբերված հատվածի տեքստը: «Народы нашей страны в «Истории» Геродота» գրքի կազմողների և ծանոթագրողների կողմից տեքստի տվյալ հատվածի վերականգնումն ունի որոշ ներքին հակասություններ: Ստացվել է այնպես, որ բոլոր չորս նավարկելի գետերն էլ՝ Տիգրիսը, Մեծ ու Փոքր Ջաբերը, Գյունդեսը, հոսել են Հայաստանից⁸: Սակայն եթե Տիգրիսի ու Մեծ Ջաբի պարագայում, իրոք, երկու գետերն էլ հոսել են Հայաստանից, ապա Փոքր Ջաբը և Գյունդեսը իրենց ակունքներն ունեցել են Մատիենեում և հոսել են այս երկրի միջով: Մեր կարծիքով, Մատիենեն չի կարող մույնամալ Ասորեստանին, քանի որ Հերոդոտոսի մոտ Մատիենեն երկիրը հստակ տեղորոշվում է Ռիւմիո լճից հարավ: Ընդ որում, Հերոդոտոսը տեղեկություններ է հաղորդում հենց Ասորեստանի վերաբերյալ: Այսպես, Ասորեստանը ասորեստանցիներով բնակեցված երկիր է, Հայաստանին հարևան, և Ասորեստանի մի մասը Բաբելոնի հետ միասին կազմել են IX սատրապությունը⁹: Հերոդոտոսը նշում է նաև, որ Նիմոսը (իմա՝ Նիմվե) Ասորեստանի քաղաքն էր¹⁰: Այս տեղեկություններից կարելի է եզրակացնել, որ Մատիենեն և Ասորեստանը չեն կարող մույնամալ և՛ աշխարհագրական, և՛ վարչական առումներով: Հետևաբար, մեր կարծիքով, վերոբերյալ տեղեկության մեջ պետք է վերականգնել Ասորեստանի անունը, քանի որ պարսից արքայական ճանապարհը Հայաստանից մտնում էր Ասորեստան և հետո միայն Մատիենեն:

Հերոդոտոսի մոտ մատիենեների վերաբերյալ կան նաև այլ հաղորդումներ: Ըստ Հերոդոտոսի, Գյունդեսը բխում է Մատիենական լեռներից, հոսում Դարդանների երկրի միջով ու թափվում մեկ այլ՝ Տիգրիս գետը¹¹: Դարդանները գտնվել են, հավանաբար, Գյունդեսի միջին և ստորին հոսանքի շրջաններում: Կարծիք կա, որ նրանք թրակա-փոյուզական ցեղ են¹²: Մատիենական լեռները համապատասխանում են Ջագոսի լեռներին, որտեղից սկիզբ է առնում Գյունդեսը, ներկայիս Դիալան: Պատմահայրը հիշատակում է նաև. «Արաքս գետը բխում է մատիենների երկրից, որտեղից և Գյունդես գետը, որը Կյուրոսը բաժանեց երեք հարյուր վաթսուն ջրանցք-

ների, բաժանվում է քառասուն բերանների, որոնք բոլորը, մեկից բացի, դուրս են գալիս ճահիճների և խրտուների մեջ: Պատմում են, որ այդ ճահիճներում ապրում են հուս ծուկ ուտող մարդիկ, որոնք սովորաբար օգտագործում են փոկի կաշուց պատրաստած հագուստ: Իսկ Արաքսի բերաններից մեկը բաց տեղանքով հոսում է դեպի Կասպից ծով»¹³: Նկատի ունենալով այն տեղեկությունը, որ Արաքսն ու Գյունդեսը բխում են մատիենների երկրից և Արաքսը թափվում է Կասպից ծովը, ապա Արաքսն այս դեպքում համապատասխանում է Ամարդոս (ներկայիս Սեֆիդ-ռուդը) գետին, որի ակունքները բխում են Մատիենական լեռների (իմա՝ Ջագրոսի) արևելյան լանջերից: Հերոդոտոսի բերված տեղեկությանն անդրադառնում է մահ Ստրաբոնը, որը գրում է. «Նա (իմա՝ Հերոդոտոսը - Հ. Խ.) ասում է, թե այս գետը (իմա՝ Արաքսը - Հ. Խ.) Մատիենների երկրից դուրս հոսելով՝ ճյուղավորվում է քառասուն գետերի և բաժանում սկյութացիներին բակտրիացիներից: Կալիսթենեսը, մույնպես, հետևում է Հերոդոտոսին»¹⁴: Ստրաբոնը, որ մախորդ մախադասություններում խոսում էր հայկական Արաքսի մասին, Հերոդոտոսի պատմածը համարում է անհավանական և գտնում, որ հայկական Արաքսը և Հերոդոտոսի Արաքսը չեն մույնանում: Անկասկած, Ստրաբոնն իրավացի է այս հարցում, քանի որ Հերոդոտոսի տվյալ հիշատակության մեջ Արաքսը պատմական Օրոտուն է, ներկայիս Ամու-Դարյան, քանի որ Պատմահայրը տվյալ պարբերության առաջին մասում՝ «ոմանք ասում են, թե Արաքսն Իստրոսից (իմա՝ Դամուր գետը - Հ. Խ.) ավելի խոշոր է, ուրիշները թե՛ ավելի փոքր»¹⁵ և մախորդ պարբերությունում՝ «...Կյուրոսը ցանկացավ իրեն հպատակեցնել մահ մասսագետներին... Մասսագետները բնակվում են արևելքում, դեպի արևածագ, Արաքս գետից այն կողմ, իսսեղոններին հանդիպակաց»¹⁶, ինքն է հենց բացառում հայկական Արաքսի հետ որևէ մույնացում: Հետևաբար, Հերոդոտոսի վերոբերյալ տեղեկության (I, 202) Արաքսի մույնացումն ուսումնասիրողների կողմից հայկական Երասխ-Արաքսին քննություն չի բռնում և փնտրել Երասխի վերին ու միջին հոսանքների շրջանում մատիեններին ոչ մի դեպքում հիմնավորված չէ¹⁷: Հերոդոտոսի տեղեկությունները ցույց են տալիս, որ Մատիենն երկիրը գտնվել է Ուրմիո լճից հարավ ընկած շրջանում, որտեղից սկիզբ էին առնում Փոքր Ջաբը, Գյունդեսը և Սեֆիդ-ռուդը: Մատիենն երկիրն աշխարհագրորեն ընդգրկում էր մախկին Մանայի և հարակից որոշ շրջաններ և վարչական առումով մտել է X՝ մարական սատրապության մեջ:

Ամտիկ աղբյուրներում Մատիենն երկրի և մատիենների մասին պահպանվել են մահ այլ տեղեկություններ: Ստրաբոնի մոտ Մատիեննի հիշատակությունը Հայաստանի, Ստորին Փոյոգիայի հետ միասին՝ կապված երաշտի հետ, ցույց է տալիս, որ այստեղ խոսքը վերաբերում է հայրաքան մատիեններին¹⁸: Այդուհանդերձ, Մատիենն՝ որպես Մարաստանի երկրամաս, Ստրաբոնը հիշատակում է երկու անգամ. «Ասում են, թե Հյուրկանիայում մի որթատունկը տալիս է մի մետրետ գինի, մի թգենին 60 մեդմնոս թուզ, իսկ հասկից ընկած մի ցորենը մորից է բուսնում, մեղուները ծառի մեջ փեթակ են շինում և մեղրը տերևներից հոսում է: Նույնպես է Մա-

տիանեում՝ Մարաստան, և Մակասենեում և Արաքսենեում՝ Հայաստան: Բայց այդ տեղերում այնքան զարմանալի չէ այդ, որովհետև ավելի հարավ են, քան Հյուրկանիան, և մյուս երկրներից տարբերվում են չափավոր բարեխառնությամբ»¹⁹: Եվ երկրորդը գրեթե նույն բովանդակությամբ. «Նշաններ Հյուրկանից աշխարհի փարթամության. խաղողի մի որթը բերում է մի մետրետ գինի, մի թզենին 60 մեղիմնոս, հասկից ընկած ցորենը նոր բերք է տալիս, ծառերի մեջ մեղուները փեթակ են շինում և մեղրը հոսում է տերևներից: Նույնը լինում է Մարաստանում՝ Մատիանեի մեջ և Հայաստանում՝ Մակասենի և Արաքսենի մեջ»²⁰: Ստրաբոնը Մատիանեն և մատիեններին հիշատակում է նաև այլ տեղեկություններում:

Նա գրում է. «Վրկաններից հետո ծովի շրջագծով բնակվում են ամարդները, ամարիակները, կադուսիները, ալբանները, կասպերը, վիտիները և, հնարավոր է, ընդհուպ մինչև սկյութներ, այլ ժողովուրդներ: Վրկանների մյուս կողմում ապրում են դերրիկները, իսկ կադուսիները սահմանակցում են մեղացիներին և մատիաններին Պարաքոաթրես լեռան ստորոտին»²¹: Հույն աշխարհագետը Մեդիա-Ատրոպատենեն տեղադրում է Հայաստանից և Մատիանեից արևելք, Մեծ Մարաստանից արևմուտք և Մատիանեից ու Մեծ Մարաստանից հյուսիս, իսկ հարավում հարակից է համարում Վրկանից ծովի խորշին մերձակա մարզերին և Մատիանեին²²: Հեղինակը նաև հայտնում է, որ Մարաստանը բարձրալեռնային և ցուրտ երկիր է, և նրա լեռներն էկրատանայից, Ռագայից և Կասպիական դոցերից ձգվում են մինչև Մատիանե և Հայաստան²³: Պարաքոաթրես լեռան տակ պետք է հասկանալ, ելնելով հենց իսկ Ստրաբոնի տեղեկություններից²⁴, ոչ միայն Թալիշի և Գիլանի լեռները, այլ նաև Էլբուրսն ամբողջությամբ և, ընդհանրապես, Իրանական սարահարթի հյուսիս-արևմտյան լեռնաշղթաները: Պարաքոաթրես անունն որոշակիորեն պետք է տարածվեր նաև Ջազդուսի հյուսիս-արևելյան մասի վրա: Կադուսիները (հայկական աղբյուրների կատիշները) սկզբնաղբյուրներում որոշ դեպքերում նույնացվել են գելերի հետ: Նրանք բնակվել են Կասպից ծովի հարավ-արևմտյան շրջանում, հյուսիսում հասնելով Կուր գետի ստորին հոսանքի հատվածը: Եթե մատիենների տակ նկատի ունենանք Մատիենե երկրի բնակիչներին, ապա նրանք չէին կարող սահմանակցել կադուսիներին: Մակայն մեր կարծիքով, Ստրաբոնի տվյալ տեղեկության մատիեններին պետք է համարել Ուրմիո լճի արևելյան ափամերձ շրջանների բնակիչներ, որոնցից արևելք՝ դեպի Կարասու գետի վերնագավառն, արևմուտքում հասնում էին կադուսիները: Որպես երկիր Ստրաբոնի Մատիանեն իր տեղադրությամբ համապատասխանում է Հերոդոտոսի Մատիենեին, որը գտնվում էր Ուրմիո լճից հարավ: Հայաստանի և Մատիանեի համատեղ հիշատակությունը ցույց է տալիս նաև, որ այս երկու երկրները պետք է սահմանակից լինեին և Մատիանեի հետ Հայաստանը կարող էր սահմանակից լինել Ուրմիո լճի հարավ-արևմտյան ափի շրջանում:

Ստրաբոնը Հայաստանի մեծ լճերից է համարում Մանտիանեն, որն, ըստ հեղինակի, թարգմանաբար նշանակում է «կապույտ»²⁵: Աշխար-

հագեցող լիճը հիշատակում է նաև Մարաստանի կազմում՝ Σπαρτα անունով, որն ուսումնասիրողներն իրավացիորեն սրբագրել են՝ Καπαρτα կամ Καπαρταν²⁶։ Կապուտան անունն իր կառուցվածքով իրանական է, սակայն շատ հավանական է, որ լճին Կապուտան անունը տվել էին հայերը՝ «կապույտ» գույնանունը շատ ավելի հին ժամանակներում փոխառած լինելով իրանցիներից²⁷։ Այս եզրակացությունն ամրապնդվում է, քերևս, այն փաստով, որ իրանախոս Ատրպատականի նկարագրության առիթով լճանունը հիշատակվում է ոչ թե Կապուտան, այլ Մանտիանե գրությամբ, և այսպես են ծնվել Ուրմիո լճի անունները, թե ոչ, շատ էլ կարևոր չէ, քայց անտարակույս է մի բան, որ «կապույտի» գաղափարը գալիս էր հենց մատիեն կամ մատիան ցեղանունից²⁸։

Խնդրո առարկայի մասին տեղեկություններ է հաղորդում նաև Պտղոմեոսը, որի մոտ Մարտիանե կոչվող Ուրմիո լիճը տեղադրվում է Կադուսիայում²⁹, այն դեպքում, երբ, ըստ Ստրաբոնի, կադուսիները ասիանականցում էին մարեբին և մատիանների՝ Պարաքսաթես լեռան ստորոտին։ Պտղոմեոսը գրում է նաև. «Մեդիայի՝ Հայաստանին մոտ արևմտյան մասը, զբաղեցնում են կասպերը, որոնցից ներքև գտնվում է Մարգիանան՝ Ատրեստանի ողջ կողքի երկայնքով, իսկ ծովամերձ մարզերը՝ կադուսիները, գեղերը և դրիքիկները, որոնցից հետո մինչև երկրի խորքերը տարածվում են ամարիակների և մարդերի հողերը։ Կադուսիների շրջանին հարևան հողերը զբաղեցնում են կարդուխները...»³⁰։ Մարգիանան պետք է սրբագրել Մարտիանա-Մատիանա։ Հակառակ դեպքում, այն կնույնանա միջինասիական Մարգիանա երկրամասին, իսկ կասպերն էլ կհամապատասխանեն Մարգիանայից արևմուտք ընկած վրկաններին։ Սակայն քանի որ Մարգիանան ընկած է Ատրեստանի հարևանությամբ, ապա այն հենց Մարտիանա-Մատիանան է։ Պտղոմեոսի վերաբերյալ տեղեկությունը և նրա շարունակությունը Բ. Հարությունյանի մոտ ունի հետևյալ պատկերը. «Մեդիայի մոտ, Հայքին մոտ գտնվող մասում, բնակվում են կասպիացիները (իմա՝ կասպերը – Հ. Բ.), որոնցից ներքև գտնվում է Մարտիանեն՝ Ատրեստանի ողջ կողքի երկայնքով։ Ծովամերձ շրջաններում կադուսիացիները, որոնք կոչվում են նաև լեգեր (իմա՝ գեղեր – Հ. Բ.), և դրիքիկներ, որոնցից հետո մինչև երկրի խորքերը տարածվում են ամարիակները (իմա՝ ամարիակները – Հ. Բ.) և ամարդները (կամ մարդերը)։ Ներսի՝ դեպի կադուսիացիների գավառն ընկած մասերը զբաղեցնում են կարդուսները և Մարունդները՝ մինչև Մարտիանե լիճը։ Գեղերից ներքև մարգասներն են, որոնցից հետո Տրոպատենեն, որը տարածվում է մինչև ամարիակները (իմա՝ ամարիակները – Հ. Բ.)»³¹։ Ինչպես իրավացիորեն նկատում է Բ. Հարությունյանը, Մարաստանի պտղոմեոսյան նկարագրությունն անհամեմատ հին է, քան հեղինակի ապրած ժամանակաշրջանը, քանի որ մ. թ. II դարում Մարաստանն արդեն որպես ինքնուրույն պետություն գոյություն չուներ, իսկ եթե գոյություն էլ ունենար, ապա նրա կազմում չէր գտնվի Կասպքը, որը, բոլոր սկզբնաղբյուրների համաձայն, Արտաշես Ա - ից (մ. թ. ա. 189 – 160

թթ.) սկսած Մեծ Հայքի թագավորության մասն էր կազմում³²։ Մ. ք. Ուղարկում Ռիբմի լճի ավազանը ոչ մի կերպ չէր կարող պատկանել Մեդիա-Մարաստանին, քանի որ հայ Արշակունիները տիրում էին Ատրպատականի ձեռակամ իշխանության երկրին³³, իսկ կարողութեքը Մարաստանի մեջ կարող էին մտնել Անտոնիոսի Արևելքում գտնվելու տարիներին, ուստի և Պտղոմեոսը օգտագործել է Մարաստանի մի հին նկարագրություն, որը մափորձել է հարմարեցնել այլ երկրների նկարագրությանը և մտնել է աշխատության մեջ³⁴։ Պտղոմեոսի վերոհիշյալ տեղեկության մեջ աշխարհագրության տեսանկյունից բավականաչափ խառնաշփոթություն կա։ Օրինակ, դիրքիկները, որոնք մյուս հեղինակների դերքիկներն են, Պտղոմեոսի մոտ հիշատակվում են գելերից հետո, այն դեպքում, երբ դերքիկները գտնվել են Կասպից ծովի հարավ-արևելյան ափին, իսկ մարդերը (կամ ամարդները) և ամարիակները (= անարիակները), որոնք հիշատակված են դերքիկներից հետո, իրականում գտնվել են վերջիններիցս արևմուտք։ Մարդերը զբաղեցրել են ներկայիս Կըզըլ-Ուզեն գետի (պատմական Ամարդոսի) միջին և ստորին հոսանքի շրջանները մինչև գետաբերան, իսկ անարիակները կոնկրետ ցեղի անվանում չէ և նշանակում է «ոչ արիացի», այսինքն Կասպից ծովի հարավային, հարավ-արևմտյան և հարավ-արևելյան շրջանների ոչ իրանախոս բնակչությունը։ Կասպերը գտնվել են Փայտակարանում, իսկ նրանցից ներքև, այսինքն հարավ, գտնվել է Մարտիանան՝ Ատրեստանի ողջ սահմանի երկայնքով։ Ուրեմն, Պտղոմեոսի Մարտիանեն համապատասխանում է Հերոդոտոսի Մատինեն երկրին, Ուրմիո լճից հարավ։ Ինչ վերաբերում է մարումոնների, որոնք հասնում էին մինչև Մարտիանեն լիճը, ապա սրանք թերևս Պտղոմեոսի այն մարդերն են³⁵, որոնք տեղադրվում են Վասպուրականի արևելյան մասում՝ Մարդապետականում։ Գելերից ներքև՝ հարավ, հիշատակված մարգասներն էլ, հավանաբար, մարդերն են, որոնցից հետո նշված Տրոպատենեն Ատրպատականն է, որը տարածվել է մինչև անարիակները։ Պտղոմեոսի մոտ մատինեական հողերը կոչվում են Μαροσάνα (mati - և stan - ից)³⁶։

Մ. ք. ա. Ուղարի պատմիչ Պոլիբիոսը գրում է. «Մեդիայի դեպի հյուսիս նայող մասերը, որ շրջապատում են ելումայները, անիարակները (իմա՝ անարիակներ - Հ. Խ.) ու նաև կադուսիները և մատիանները՝ գտնվում են Պոնտոսի այն մասերի վերևում, որոնք սահմանակից են Մայոտիսին (իմա՝ Ազովի ծովը - Հ. Խ.)»³⁷։ Իսկ Պլինիոս Ավագը նշում է. «...մարտիաններ, ադրսներ, գելեր, որոնց հույներն անվանում էին կադուսիներ, մատիաններ...»³⁸։ Բ. Հարությունյանը կարծում է, որ մարտիանները մատինեներին կամ մարտիաններին ազգակից ցեղ է, որը զբաղեցրել է Պարաքոթես (հայկական աղբյուրների Պատիժահար լեռը) լեռան մերձակայքը՝ դառնալով հույն հեղինակների հակասական ընկալումների պատճառ³⁹։ Մեր կարծիքով, մարտիաններն ընդհանրապես ոչ մի կապ չունեն մատինեների հետ և, հնարավոր է, որ նույնիսկ նման ցեղ չի էլ եղել։ Մարտիանների մյուս տարրերիցումն է Nasotiani⁴⁰, որն այս դեպքում կհամեմատենք այնքան հայտնի Նիսեական դաշտի հետ։ Կամ էլ Հերոդոտոսի

մոտ լիզիացիներ, մատիեններ, մարիանդիներ, սիրիացիներ շարքը⁴¹ կարող էր ծնել մարիանդիներ – մարտիրաններ մամուլային: Սակայն սա քիչ հավանական է, քանի որ մարտիրանների առաջինը հիշատակվելը թույլ չի տալիս տարածքային առումով մույնիսկ նրանց փնտրել մատիենների հարևանությամբ: Իսկ մարտիրաններին տեղադրել Պարաքռաթրես լեռան մերձակայքում ոչ մի դեպքում չի հիմնավորվում: Ընդհանրապես մարտիրաններին (գուցե մարունդե⁴²) փնտրել Ատրպատականի սահմաններում կասկածելի է, քանի որ, օրինակ, նրանցից հետո հիշատակված աղքատներին Ստրաբոնը տեղադրում է Ազովի և Կասպից ծովերի միջև⁴³: Պարաքռաթրես լեռների (Գեղմանց լեռներ) շրջանում տեղադրելու դեպքում մարտիրանները թերևս ավելի շատ կմույնացվեն մարդերի հետ: Պոլիբիոսի և Պլինիոս Ավագի կողմից կադուսիների և մատիենների հիշատակությունը կրկին վկայում է նրանց սահմանակիցներ լինելու հանգամանքը: Քանի որ հին հեղինակների մոտ Ուրմիտ լիճը կոչվում է Մարտիանե - Մանտիանե (և՛ «ր»-ն, և՛ «մ»-ն ածական են), ապա, կարծում ենք, որ ավելի ընդունելի կլինի այն ենթադրությունը, որ լճի անունը հետագայում տարածվել է արևելյան և հարավային ափամերձ շրջանների բնակչության վրա, որոնք էլ կոչվել են մատիեններ, սակայն այս իրողությունն ավելի ուշ ժամանակներին է վերաբերում: Կարևոր է նկատի ունենալ, որ Հերոդոտոսն Ուրմիտ լճի ավազանում գրեթե մատիեններին չի հիշատակում և խոսում է միայն Մատիենների մասին: Այս իրողությունը ցույց է տալիս, որ մատիեններն այլևս գոյություն չունեին և իրենց անունը տվել էին երկրին: Անշուշտ, նկատի ունենալով, որ մատիենները հին սկզբնաղբյուրներում հիշատակվում են աշխարհագրական առումով տարբեր վայրերում, կարելի է մտածել, որ այս ցեղը կարող էր հայտնվել կադուսիների հարևանությամբ ևս, բայց հենց հին սկզբնաղբյուրները բացառում են մման հավանականությունը: Համեմատության համար նշենք, որ ինչպես Սև ծովի ծովափնյա բնակչությունը կոչվում էր պոնտացիներ, այնպես էլ Մանտիանե լճի հարավային և արևելյան ափամերձ բնակչությունը երբեմն կարող էր կոչվել մատիեններ ու ժամանակներում: Միաժամանակ նշենք, որ Մատիենների երկրի բնակչությունը կարող էր կոչվել մատիեններ անունով, բայց միայն այն պարագայում, եթե նրանք տեղորոշվում են Ուրմիտ լճից հարավ ընկած Մատիենների երկրում⁴⁴:

Այսպիսով, ո՛չ հայրուսյան մատիենները և ո՛չ էլ Ուրմիտ լճի մերձակայքում գտնվող Մատիենների չէին կարող մտնել XVIII սատրապության մեջ: Եթե առաջինը պարզապես անհնար է, ապա երկրորդի դեպքում, հաշվի առնելով սասպեյրների՝ Սպերի շրջանում մինչ այսօր ընդունված տեղադրությունը⁴⁵, դժվար թե Սպերից մինչև Ուրմիտ լճի շրջանը ընկած տարածքում այլ ցեղեր չգտնվեին և ալարոդները, որոնք պետք է զբաղեցնեին այդ տարածքը, անհետանում են տարածաշրջանի էթնիկական քարտեզից: Սակայն Հեկատեոս Միլետացու մոտ պահպանվել է տեղեկություն, որը մատիեններին տեղորոշում է աշխարհագրական բոլորովին այլ միջավայրում:

Հեկատոնոսը մատիենների մասին ունի մի քանի տեղեկություններ: Նա գրում է. «Հիոպեն մատիենների քաղաքն է, Գորդիոնի հարևանությամբ»: Այս մատիենները տարածքային առումով կապվում են պափլագոնացիների հետ և հեղինակը շարունակում է. «Հիոպե քաղաքում բնակիչները հագնվում էին պափլագոնացիների նման»⁴⁵: Ինչպես տեսնում ենք, Հեկատոնոսը երկու տեղեկություններում էլ նկատի ունի հայրասյան մատիեններին: Սակայն Հեկատոնոսի այն տեղեկությունը, թե մոսքերը կոլխական ցեղ են և հարևան մատիեններին⁴⁶, անհրաժեշտ է այլ տեսանկյունից քննել: Ն. Վ. Խազարաձեն առանց լուրջ հիմնավորման այս մատիեններին նույնացրել է Հեկատոնոսի վերը հիշատակված մատիենների հետ և տեղադրել Հալիս գետի ավազանի ներսում, ներկայիս Չորում-Ջիլե-Թոքատ գծից հարավ, իսկ մոսքերին էլ հատկացրել է ներկայիս Թոքատ-Կարահիսար-Գյումուշխանեի շրջանը⁴⁷: Սակայն ռատմնասիրողը նման պատմա-աշխարհագրական վերաձևման դեպքում հաշվի չի առել, որ XIII սատրապությունը չէր կարող դուրս գալ Սև ծով, որը հակասում էր Հերոդոտոսի տեղեկություններին⁴⁸: Հարկ է նշել, որ անտիկ աղբյուրները բացառում են նշված շրջանում մոսքերի տեղադրությունը, քանի որ մոսքերը նույնանում են «Անաբասիս»-ում հիշատակված՝ արևելյան խալյուբների հետ, որոնք զբաղեցրել են արևմտյան Գուզարքի կամ Կատարգա-Կղարջքի տարածքը⁴⁹: Նկատենք, որ Ն. Վ. Խազարաձեի կողմից մոսքերի նման տեղադրությունը հակասում է Հերոդոտոսի տեղեկություններին նաև այն առումով, որ նախ XIX սատրապությունը հարավային ուղղությամբ դուրս էր գալիս իր բնական և վարչական սահմաններից՝ Պոնտական լեռներից և ընդարձակվում էր ի հաշիվ XIII սատրապության տարածքների, երկրորդ՝ առանց լուրջ փաստարկման, ընդարձակվում էր կոլխերի՝ որպես հավաքական ամբողջության, աշխարհագրական սահմանները՝ հասցվելով մինչև Թոքատ-Կարահիսար-Գյումուշխանե⁵⁰: Այս տեղեկությունն, ըստ Բ. Հարությունյանի քննության, հաստատում է, որ Մատիենական ցեղախմբի մի հատվածը բնակվել է Այսրկովկասում, ներկայիս Վրաստանի Հանրապետության հարավ-արևմտյան շրջաններում հաստատված մոսխերի կամ մոսքերի հարևանությամբ և այս մատիեններին չի կարելի նույնացնել փոքրասիական մատիեններին, որովհետև նրանց հարևան մոսքերը կոլխական ցեղ են և նրանց պետք է տեղադրել մոսքերից հյուսիս⁵¹: Փասխանները գտնվել են Երասիս գետի վերին հոսանքի և Ուլթիս գետի ակունքների շրջանում և փասխաններից, որոնք մտնում էին XIII սատրապության մեջ, հարավ մատիեններ փնտրելը ծիծաղելի է, ընդ որում Երասիսի ակունքը հնում ոչ թե Բյուրակնյան լեռներից կամ Մերմանցից սկիզբ առնող գետն էր, այլ Բասենի դաշտով հոսողը, հեռավոր ստացվում է, որ փասխանների երկիրը նույնանում է մատիենների երկրին, որը ոչ մի հիմք չունի⁵²: Իսկ քանի որ Սպերը՝ Ջսենոփոնի հեսպերիոնների երկիրը, նույնպես ենթակա էր Տիրիբագոսին, ապա այն չէր կարող մտնել XVIII սատրապության մեջ և մատիեններին պետք է փնտրել մոսքերից հյուսիս⁵³: Մատիեններին Այսրկովկասում տեղադրելու վերաբերյալ, մեր կարծիքով, կարող է վկայել նաև Պոմպոնիոս

Մելասի, քեկուզև ոչ այնքան որոշակի տեղեկությունը: Թվարկելով տարբեր ցեղերի, որոնց աշխարհագրությունը շատ խճճված է, մա գրում է.«...իսկ որտեղ երկիրը (իմա՝ Ասիան – Հ. Խ.) մոտենում է մեր ծովերին (նկատի ունի Սև ծովը և Մեյոտիս լիճը – Հ. Խ.) ապրում են մատիանները, տիբարանները և ավելի հայտնի մեդագինները, հայերը...»⁵⁴: Մատիենները, քերևս, պատկանել են սկյութական աշխարհին և Այսրկովկասում նրանց գոյությունը ցույց է տալիս, որ այս ցեղախումբն իր շարժումը սկսել էր Կովկասից:

Այսպիսով, դատելով աղբյուրների տեղեկություններից, կարելի է XVIII սատրապության մատիեններին տեղադրել Հայկական լեռնաշխարհից դուրս, Կուր գետից հյուսիս, Արզվեթի լեռների արևելյան փեշերին, նույն լեռներով բաժանված լինելով XIX սատրապությունից:

HOVHANNES KHORIKYAN

ON THE LOCATION OF THE XVIIITH SATRAPY MATIENIANS OF ACHAEMENIAN PERSIA

The comprehensive investigation of the ancient sources shows that neither the Matienians, who inhabited the region of the Halys twist, nor the land of Matiene to the south of Lake Urmia belonged to the XVIIIth satrapy. The XVIIIth satrapy Matienians are located on the eastern slopes of the Argueti mountains, in Transcaucasia.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Геродот, История в девяти книгах, перевод и примечания Г. Стратановского, Ленинград, 1972, III, 94.
2. Անդ. I, 72:
3. Խորիկյան Հ., Սատրապական Հայաստանի արևմտյան և հարավային սահմանները մ. թ. ա. VI-IV դարերում, «Պատմա-բանասիրական հանդես», 2005, քիվ 3, էջ 177:
4. Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, թարգմ. Ս. Մ. Կրկյաշարյանի, Երևան, 1986, VII, 72:
5. Անդ. V, 49:
6. Անդ. V, 52:
7. Доватур А. И., Каллистов Д. П., Шишова И. А., Народы нашей страны в «Истории» Геродота, Москва, 1982, с. 388, примеч. 708(a).
8. Անդ. էջ 159:
9. Հերոդոտոս, II, 17, I, 194, III, 92:
10. Անդ. II, 150:
11. Անդ. I, 189:
12. Պետրոսյան Ս. Գ., Հին Մարաստանի տարածքի երրորդ էթնիկական տարրի մասին, ՊԲՀ, 1979, քիվ 4, էջ 51-52:
13. Հերոդոտոս, I, 202:
14. «The Geography of Strabo», with an English translation by H. L. Jones, in eight volumes, London, 1969, Loeb Classical Library, XI, XIV, 13.

15. Հերոդոտոս, I, 202:
16. Անդ, I, 201:
17. Տարբեր կարծիքների մասին տե՛ս Хазарадзе Н. В., К вопросу о локализации матиенов в свете дрезнегреческих источников VI-V вв. до н. э., ՊԲՀ, 1973, քիվ 2, էջ 201-210:
18. Ստրաբոն, քաղեց և բարգժ. Հ. Աճառյան, Երևան, 1940, էջ 11:
19. Անդ, էջ 13:
20. Անդ, էջ 35: Մասնագիտական գրականության մեջ կարծիք է հայտնվել, որ Մատինեն անունը կարող է առնչություն ունենալ, հ.-հ. *mad- կամ *me'dhu- «քաղցր, մեղր» արմատին (Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Երևան, 1987, էջ 466, ծանոթ. 1: Դալայան Ս., Հայ իշխանական տների հետքերը հարավ - արևմտյան Հայաստանում (քրդական որոշ ցեղանունների և ցեղերի ծագման հարցի շուրջ), ՊԲՀ, 2004, քիվ 2, էջ 176-179): Երբ նկատի ունենանք Մատինեի գինով և մեղրով հարուստ լինելու հատկությունը, ապա այդ կարծիքը չի բացառվում:
21. Страбон, География в 17 книгах, перевод, статья и комментарии Г. Стратановского, Ленинград, 1964, XI, VIII, 8.
22. Անդ, XI, XIII, 2:
23. Անդ, XI, XIII, 7:
24. Անդ, XI, VIII, 1:
25. Անդ, XI, XIV, 8:
26. Strabo, XI, XIII, 2, ծանոթ. 3:
27. Հարությունյան Բ., Արեւմեյան Պարսկաստանի XVIII սատրապության տեղադրության շուրջ, «Հանդես Ամսօրեայ», Վիեննա, 1999, քիվ 1-12, էջ 61:
28. Անդ: Երբ ճիշտ է Մատինեի կապը «քաղցր, մեղր» արմատին, ապա անունս ծագումնաբանորեն ոչ մի առնչություն չունի կապույտ բառի հետ և, ըստ էության, Ստրաբոնը իմանալով, որ լճի Կապուտան անունը կապված է «կապույտ»-ի հետ, ինքն էլ իր հերթին կապել է այն լճի մեկ ուրիշ՝ Մատինե անվան հետ: Իսկ լճի Կապուտան անունն այս դեպքում պետք է ծագեր վաղ կապույտ գույնից: Բայց և այնպես, ամօխտեղի է, որ լճի Մատինե անունը ծագել է մատինեների անունից:
29. Claudii Ptolemaei Geographia, edidit Carolus Fredericus Augustus Nobbe, t. I, Lipsiae, 1843, VI, 2, 2.
30. Латышев В. В., Известия древних писателей о Скифии и Кавказе, «Вестник древней истории», 1948, № 2, с. 255.
31. Հարությունյան Բ., նշվ. աշխ., էջ 62:
32. Անդ:
33. Հարությունյան Բ., Հայ Արշակունիների ձեռական իշխանության կալվածքների հարցի շուրջը, ՊԲՀ, 1988, քիվ 3 - 4:
34. Հարությունյան Բ., Արեւմեյան Պարսկաստանի XVIII սատրապության տեղադրության շուրջ, էջ 63:
35. Claudii Ptolemaei Geographia, V, 12, 9.
36. Անդ, VI, 2, 5:
37. Латышев В. В., Известия древних писателей..., ВДИ, 1947, №3, с. 301.
38. Латышев В. В., Известия древних писателей..., ВДИ, 1949, № 2, с. 304-305.
39. Հարությունյան Բ., Արեւմեյան Պարսկաստանի XVIII սատրապության տեղադրության շուրջ, էջ 65:
40. Латышев В. В., Известия древних писателей..., ВДИ, 1949, № 2, с. 304, примеч. 21.
41. Հերոդոտոս, VII, 72:
42. Страбон, XI, V, 8.
43. Հերոդոտոս, V, 49:
44. Մենք կիսում ենք սասպեյրներին Վիրքում և Աղվանքում տեղադրելու տեսակետը (տե՛ս Հարությունյան Բ., Արեւմեյան Պարսկաստանի XVIII սատրապության տեղադրության շուրջ, էջ 82):
45. St. Byz., s. Ὑποπτή; Müller C., Fragmenta historicorum graecorum, v. I-IV, Paris, 1841-

1870, fr. 189, 287.

46. Латышев В. В., Известия древних писателей..., ВДИ, 1947, № 1, с. 301.
47. Хазарадзе Н. В., К вопросу о локализации матиенов..., с. 209.
48. XIII սատրապությունը Մև ծով դուրս է եկել Թերմոդոնտ գետի և Յաստնի հրվանդանի միջև (Խորիկյան Հ., Սատրապական Հայաստանի արևմտյան և հարավային սահմանները..., էջ 177-178, 192):
49. Խորիկյան Հ. Գ., Արեմնեյան Պարսկաստանի XIX սատրապության էթնիկական կազմի վերաբերյալ, «Բանբեր Երևանի համալսարանի», 2006, թիվ 2, էջ 120: Մոսքերի մյուս հատվածը հաստատվել էր Հյուսիսային Կովկասում (ամդ, էջ 120-122):
50. Կովխերի քնակության շրջանը առավելագույնն արևմտյան ուղղությամբ հասել է մինչև Կեռասունտ, այն էլ Քսենոփոնի ժամանակ, երբ Հերոդոտոսի մոտ կովխերը տեղադրված են Փասիս գետից և՛ հարավ, և՛ հյուսիս (Խորիկյան Հ. Գ., Արեմնեյան Պարսկաստանի XIX սատրապության էթնիկական կազմի վերաբերյալ, էջ 123-124):
51. Հարությունյան Բ., ճշվ. աշխ., էջ 66-73: Մոսքերի տեղադրության մասին տե՛ս նաև Խորիկյան Հ., Արեմնեյան Պարսկաստանի XIX սատրապության էթնիկական կազմի վերաբերյալ, էջ 120-122:
52. Խորիկյան Հ. Գ., Հայաստանը և Այսրկովկասը Արեմնեյան Պարսկաստանի վարչական քաժանոմներում (պատմա-աշխարհագրական ուսումնասիրություն), պատմ. գիտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2007, էջ 50, 53, 80:
53. Ամդ, էջ 50, 55-56:
54. Латышев В. В., Известия древних писателей..., ВДИ, 1949, № 1, с. 273.

**ՃՇՋԱՐՏՈՒՄՆԵՐ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՍԵՊԱԳՐԵՐԻ
ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

1. iziduše գոյականը և izidumi բայը

Միևնույն izid- արմատով կազմված այս բառերից iziduše գոյականը ըստ էության հստակ ենթադրվում է Արգիշտի II-ի Հադիի և Չելերի-բադիի իդեմտիկ արձանագրություններում: Սակայն ուրարտական գրագրի անփութության պատճառով մասնագիտական գրականության մեջ դրանք փաստորեն երկու դեպքում էլ թյուրիմացաբար մատուցված և դիտարկված են izidumi բայական գրությամբ: Ահա այդ տեքստերը.

1. ...KI^{MES} qu-ul-di-i-ni ma-a-nu ú-i gi-e-i ab-si-e-[i] GJÁN^{GIS.SAMŠE}
GIS^{GIS} GEŠTIN ša-a-r[i] i]š-ti-ni ma-nu-ri ú-i P[A₃ i]š-ti-ni a-ga-a-ú-r[i] šú]-
ú-ki^d 'al-di-še i-zi-du-n[i] (?)! a-ru-me^d 'al-di-še (?)! za-du-ú-b[i] šu-e
a-su-a-•-i-i-n[a]... (KYKH, 406, երեսի կողմ, տողեր 38-45)
2. ...KI^{MES} qu-ul-di-ni ma-nu ú-i gi-i ab-si-i GÁN^{SAMŠE} ul-di ša-a-ri iš-
ti-ni ma-nu-ri ú-i PA₃ iš-ti-ni a-ga-a-ri šú-ú-ki^d 'al-di-i-še i-zi-du-ni
(?)! a-ru-me^d 'al-di-še (?)! za-du-bi i-ni šu-e a-su-a-•-na... (KYKH,
407, երեսի կողմ, տողեր 28-33)

Այժմ անդրադառնամք գրագրի մատուցած խեղաթյուրումներին և մասնագիտական գրականության մեջ տեղ գտած տարակարծություններին:

Գ.Ա. Մելիքիշվիլին, օրինակ, KYKH, 406 արձանագրության izidumi-ի մասամբ տուժած ռ[i] վերջավորության փոխարեն, ըստ երևույթին, ելնելով կոնտեքստի թելադրանքից, լիովին վերականգնել է չե: Ուստի իր առաջարկած izidu[še]-ն, բնականաբար համարել գոյական¹: Ի դեպ Հադիի և Չելերի-բադիի իդեմտիկ արձանագրությունների բայական տեսքով izidumi-ն «ժրահանգ» գոյական է համարում մաս Ե. Հ. Գրեկյանը՝ այնինչ առանց անդրադառնալու ուրարտական գրագրի խեղաթյուրմանը²: Իսկ Ֆ.Վ. Զյոնիզը, չզիտես ինչու, երկու դեպքում էլ գրագրի կողմից թյուրիմացաբար բայ մատուցված, սակայն ըստ էության գոյական ենթադրվող, izidumi-ն, միանշանակ բայ՝ Verb է համարում³:

Այստեղ մաս ավելացնենք, որ վերոհիշյալ երկու տեքստերում iziduše գոյականի փոխարեն izidumi բայի անհարկի մատուցումը, ցավոք, ուրարտական գրագրի կողմից մատուցված միակ կոպիտ սալթաքումը չէ: Štəpտի šuki^d 'al-diše izidumi (?)! aru-me^d 'al-diše (?)! zadubi šue asua•na... մատուցման պարագայում ստացվում է, որ Խալդիի կարգադրությունը՝ iziduše-ն իբր թե պետք է կատարի հենց ինքը՝ գեղագույն աստվածը: Այ-

նինչ, ^d՛՛aldišē iziduše (!) aru-me «Խաղին կարգադրություն արեց-ինձ» տեքստի համաձայն, սոսկ կարգադրողն է գերագույն աստվածը, իսկ կատարողը ուրարտական թագավորն է: Ուստի ինքնին հասկանալի է, որ ^d՛՛aldišē zadubi-ի փոխարեն անկասկած պետք է լինի *ieše zadubi* «ես կատարեցի»: Եվ բոլորովին էլ պատահական չէ, որ տողերիս հեղինակը արդեն նկատել և շտկել է այն: Հմմտ. Ռուսա II-ի Արծնեի KYKH, 427a արձանագրության իղենտիկ տեքստը. *šuki* ^d՛՛aldišē iziduni *ieše zadubi* «Հենց Խաղի աստվածը կարգադրեց, ես կատարեցի»⁴:

Հետևաբար, ելնելով Արգիշտի II-ի Հաղիի KYKH, 406 և Չելեքի-բաղիի KYKH, 407 իղենտիկ արձանագրությունների վերոհիշյալ հատվածների խեղաթյուրումներից, ստորև բերում ենք մրանց հավաստի մոր ընթերցումները և թարգմանությունները.

1. ...KI^{MES} qu-ul-di-i-ni ma-a-nu ú-i gi-e-i ab-si-e-[i] GÁN^{GIS.ŠAM.ŠE} GĒSTIN §a-a-r[i] i]š-ti-ni ma-nu-ri ú-i P[A₅ i]š-ti-ni a-ga-a-ú-r[i] šú]-ú-ki ^d՛՛al-di-še i-zi-du-š[e] (!) a-ru-me i-e-še (!) za-du-ú-b[i] §ju-e a-su-a-•i-n[a]... (KYKH, 406, երեսի կողմ, տողեր 38-45)

Հողը ամայի է եղել, ոչինչ երբեք (?) ցանքադաշտ, խաղողի (ու) պտղատու այգի այստեղ չի եղել, ոչ էլ ջրանցք է այստեղ անցկացվել: Հենց Խաղի-աստվածը կարգադրություն (!) արեց-ինձ, ես (!) ստեղծեցի ծով արհեստական:

2. ...KI^{MES} qu-ul-di-ni ma-nu ú-i gi-i ab-si-i GÁN^{ŠAM.ŠE} ul-di §a-a-ri iš-ti-ni ma-nu-ri ú-i PA₅ iš-ti-ni a-ga-ú-ri šú-ú-ki ^d՛՛al-di-i-še i-zi-du-še (!) a-ru-me i-e-še (!) za-du-bi i-ni §u-e a-su-a-•i-na... (KYKH, 407, երեսի կողմ, տողեր 28-33)

Հողը ամայի է եղել, ոչինչ երբեք (?), ցանքադաշտ, խաղողի (ու) պտղատու այգի այստեղ չի եղել, ոչ էլ ջրանցք է այստեղ անցկացվել: Հենց Խաղի-աստվածը կարգադրություն (!) արեց-ինձ, ես (!) ստեղծեցի այս ծովը արհեստական:

Հետևաբար, հետազոտված իղենտիկ տեքստերից հստակ երևում է, որ զրագրի կողմից խեղաթյուրված ^d՛՛aldišē iziduni (?) aru-me հատվածի կողք-կողքի հիշատակված «կարգադրեց» (?) խեղաթյուրված և «ստեղծեց-ինձ» իրական բայերից ամենևին չի մշմարվում, թե ի՞նչ է, արդյոք, միաժամանակ կարգադրել (?) և տվել ուրարտական թագավորին գերագույն աստված Խաղին: Մակայն կարծեցյալ iziduni (?) չտկված iziduše (?) ից հետո բացահայտվում է, որ Խաղին պարզապես հրաման է արձակել կամ կարգադրություն արել: Այնպես որ հիշյալ մախադասության ստորագյալը (բայը) սոսկ արսւ-ն է, իսկ շտկված iziduše(!)-ն՝ «կարգադրություն» գոյականը: Հմմտ. ^d՛՛aldišē iziduše (!) aru-me «Խաղին կարգադրություն (!) արեց-ինձ» (KYKH, 406, երեսի կողմ, տողեր 43-44 և 407, երեսի կողմ, տողեր 31-32) և ^d՛՛aldišē iziduni «Խաղին կարգադրեց» (KYKH, 427a, տող 3) իղենտիկ տեքստերը:

Ինչ վերաբերում է միևնույն izid- արմատով կազմված izid(u)- բա-
յին, ապա այն հիշատակվում է Ռուսա II-ի Արծկեի և Ռուսա III-ի Գյովելե-
քի նորագյուտ արձանագրություններում՝ մի դեպքում լիակատար i-zi-du-ú-
ni, իսկ մյուսում՝ խեղաթյուրված i-zi-ú-ni մատուցումներով՝ զրազրի մեղքով
du նշանի անտեսումով: Կարծում ենք, որ խեղաթյուրման մասին վկայում
են izid- արմատով միանշանակ կազմված վերոհիշյալ iziduAe գոյականի,
ինչպես նաև iziduni բայի ստորև բերվող հիշատակությունները.

1. ^mRu-sa-a-še ^mAr-giš-te-• i-ni-še i-ni ^ha-ši-• Ե-si-e za-du-ni qar-bi-e šú-li
ma-nu ú-i a-i-še-e-i LUGÁL-še za-da-la-ni šú-ki ^dYal-di-i-še i-zi-du-ú-
ni i-e-še za-du-bi (KYKH, 427a, տողեր 1-3)

Ռուսան, Արգիշտիի որդին, այս (տունը) զոհաբերության՝ պատ-
րաստեց: Ժայռը լքված է եղել, երբեք արքաները (այն) չեն կառուցապա-
տել: Հենց Խալդի աստվածը կարգադրեց, ես կատարեցի:

2. ^mRu-sa-še ^mE-ri-me-na-• i-ni-še a-li ^{KUR}Qi-il-ba-ni-ka-i ^{KI}qu-ul-di-
ni ma-nu ú-i gi-e-i [ab-si-e-i GÁN ^{GIS.ŠAM}ŠE] ma-nu-r[i ú-i PA, i-š-ti-ni]
a-ga-ú-ri šú-ki [^dYal-di-še] i-zi-<du>-ú-ni i-e-š[e PA, a-gu-bi]
DAN.NU ^{MEŠ}ar-ni-ú-[ši-ni-li za-du-bi i]š-ti-ni (SMEA, XLIV/1, Roma,
2002, էջ 117, տողեր 18-26)

Ռուսան, Էրիմենայի որդին, ասում է, Կիլբանի երկրի դիմացի հողը
ամայի է եղել, ոչինչ երբեք, ցանքադաշտ չի եղել, ոչ էլ ջրանցք է այստեղ
անցկացվել: Հենց Խալդի աստվածը կարգադրեց, ես ջրանցք անցկացրի,
հզոր սխրագործություններ կատարեցի այստեղ:

Ի դեպ, iziduše-iziduni-ի նման միևնույն արմատով կազմված գոյա-
կանների և բայերի առկայությունը ուրարտական սեպագրերում ըստ ամե-
նայնի համատարած և օրինաչափ երևույթ է: Հմմտ. aruše «նվեր» և ar(u)
«նվիրել», aš• ašteše «զոհաբերություն» և aš• ašt(u) «զոհել», «զոհաբերել»,
bidujaše «վերադարձ» և bid(u) «վերադառնալ», šidištuše «կառույց» և
šidišt(u) «կառուցել», zaduše «կատարում», «իրագործում» և zad(u) «կատա-
րել», meše «հարկ» և meš(u) «հարկահանել» և այլն:

Եվ, վերջապես, iziduni բայինաստի բացահայտման համար յուրա-
հատուկ նշանակություն ունի ubarduduni-ն, որը, Ֆ.Վ. Բյունիզի եզրահանգ-
մամբ, իրոք հանդիսանում է նրա §Synonym-ը: Սակայն ավտորիացի ա-
կանավոր ուրարտագետը տվյալ դեպքում անգզուշորեն նկատի է ունեցել
Արգիշտի II-ի KYKH, 406 և 407 իդենտիկ արձանագրություններում զրազրի
մեղքով թյուրիմացաբար iziduni (?) մատուցված, այնինչ Գ.Ա. Մելիքիշվի-
լու ջանքերով իրավամբ iziduše (!) ճշգրտված նույնարմատ գոյականը⁶:
Ինչ վերաբերում է իրական iziduni բային, ապա այն գիտությանը հայտնի է
մի փոքր ավելի ուշ՝ Ռուսա II-ի KYKH, 427a արձանագրությունից: Ահա
iziduni-ին համանիշ ubarduduni բայով օժտված ուրարտական իդենտիկ
արձանագրությունների մեզ հետաքրքրող հատվածները.

1. ^mRu-sa-še ^mAr-giš-te-•ⁱ-ni-še a-li qar-bi sal-zi ma-nu ú-i gi-e-i iš-ti-ni ši-da-ú-ri šú-ki ^dYal-di-še ú-bar-du-du-ni i-e-še ši-di-iš-tú-bi te-ru-bi ti-ni ^mRu-sa-a-i URU TUR (KYKH, 419, տողեր 3-7)

Ռուսան, Արգիշտիի որդին, ասում է. Ժայռը գահավեժ է եղել, ոչինչ այստեղ չի կառուցվել: Հենց խալդի աստվածը հրամայեց, ես կառուցեցի, որեցի անունը Ռուսայի քաղաք փոքր:

2. ^mRu-sa-a-še ^mAr-giš-te-•ⁱ-ni-še a-li ^{KUR}Qu-ár-li-ni •ⁿ-bi-i qi-ú-ra-a-ni šú-li-e ma-nu ú-i gi-e-i iš-ti-ni ma-nu-r[i] šú-ki ^dYal-di-še ú-bar-du-du-ni i-e-še ini ^{GIŠ}ul-di-e te-ru-bi GÁN ^{GIŠ.SAMX}ŠE ^{GIŠ}ša-ri šú-•ⁱ-e iš-ti-ni te-ru-ú-bi (KYKH, 421, տողեր 5-12)

Ռուսան, Արգիշտիի որդին, ասում է. Կուառլինի հովիտ երկրի հողը անմշակ է եղել, ոչինչ այստեղ չի եղել: Հենց խալդի աստվածը հրամայեց, ես այս խաղողի այգին հիմնեցի, ցանքադաշտ, պտղատու այգի մոր այստեղ հիմնեցի:

2. ^dAniqu դիցանվան և նրա սեռի ճշգրտումը

Ուրարտական իր դիվանի հրատարակության պահին Գ.Ա. Մելիքիշվիլին Անիկու դիցանվան միակ հիշատակությունը Ռուսա II-ի Ձվարք-նոցի արձանագրության մեջ չի նկատել, այդ պատճառով էլ նրա փոխարեն առաջարկել է DINGIR a-ni-qu gi-e խեղաթյուրված ընթերցումը: Իսկ մի փոքր ավելի ուշ Ֆ.Վ. Քյոնիգը հիշյալ արձանագրության ^dA-ni-qu-gi-e⁹, հետագայում նաև Մ. Սալվինին Ռուսա III-ի Գյովելեքի նորահայտ արձանագրության ^dA-ni-qu-gi¹⁰ դիցանունը սխալմամբ ընկալել են որպես Անիկու: Այնինչ տողերիս հեղինակը, ի տարբերություն Ֆ.Վ. Քյոնիգի և Մ. Սալվինիի, ^dAniqugi(e)-ն արդեն մատուցել է որպես Անիկու՝ -gi(e) վերջավորությունը դիտարկելով ուրարտերենի եզակի տրականի հոլովական ցուցիչ¹¹: Իսկ մեր այս տեսակետին համաձայն է Ե.Հ. Գրեկյանը Գյովելեքի արձանագրության իր վերահրատարակության մեջ¹²:

Ինչ վերաբերում է ^dAniqu դիցանվան սեռին, ապա առկա փաստական նյութի արտակարգ տրության հետևանքով երկար ժամանակ այն շարունակել է մնալ ուրարտագիտության պրոբլեմատիկ խնդիրների շարքում: Դեռ ավելին, ինչպես ներկայումս բացահայտվել է, ամենուրեք սխալմամբ այն կարգվել է աստվածների շարքը: Իսկ վերջերս, ելնելով Ռուսա III-ի Գյովելեքի արձանագրության առաջին հայացքից հակասական քվացող տվյալներից, Մ. Սալվինին հապճեպ այն համարում է մերթ աստված՝ (dio), մերթ էլ դիցուհի (dea)՝ հաշվի առնելով նրա պատվին և ^{GUÐ}AB-կովի, և UDU-ռյխարի գոհաբերությունը¹³:

Սույն հակիրճ նախաբանից հետո, կարծում ենք, և Անիկու դիցանվան, և նրա սեռի առթիվ մասնագիտական գրականության մեջ առայժմ արժարժված տեսակետները ինչպես հին, այնպես էլ նորահայտ փաստական նյութի հիման վրա զգալի վերանայման կարիք ունեն: Ի դեպ առաջարկվող մոր եզրահանգումները ընթերցողին ըստ ամենայնի տեսանելի

դարձնելու համար նպատակահարմար ենք զանում նախօրոք գիտական տառադարձմամբ մատուցել այստեղ հենց խնդրո առարկա Չվարթնոցի և Գյովելեքի սեպագիր արձանագրությունների փաստական նյութը՝ հոլովական վերջավորությունների ընդգծված տրոհումով.

1. ikuka•ni-e ^mRusaini-e •abi-gi aše pili nikidul[i] UDU.MÁŠ.TUR ^dYaldi-e nipsidulini UDU ^dYaldi-e TAG UDU ^dIM-a UDU ^dUTU-ni-e še•adie ^dAniqu-gie aše A^{MEŠ} ešiašiuili MÁŠ.TUR ^dYaldi-e nipsiduli UDU ^dYaldi-e TAG UDU ^dIM-a UDU ^dUTU-ni-e še•adi ^dAniq[u] (KYKH, 421, տողեր 16-25):

2. ^mRusaše ali gumi telzuše terubi aše A^{MEŠ} šuini-ni nikiduli UDU.MÁŠ.TUR ^dYaldi-e nipsidulini

GUD ^mRusaini-e DINGIR-gi¹⁴ GUD ÁB ^mRusaini-e ^dNIN^{GUD} ÁB ^dAniqu-gi ... III UDU ^{SADU} babana-ue atqanana-ue (SMEA, XLIV/1, Roma, 2002, էջ 117, տողեր 2-3, էջ 122, տողեր 4-5, 9-11, 14-15):

Եվ, այսպես, ներկայացված տեքստերից, կարծում ենք, ակներև է, որ Չվարթնոցի արձանագրության մեջ եզակի տրականի հոլովական վերջավորություններից են ikukani-ի տրոհված e-ն, •abi-ի նույն հոլովի տարբերակ gi-ն, ^dYaldi-ի e-ն, ինչպես նաև ^dAniqu-ի gie-ն և ^dUTU-ni-ի (^dŠuini-ի) e-ն: Այնուհետև, ^dIM-ի a-ն, ^dTeišeba-յի վերջավորությունն է՝ առանց տրական հոլովի ցուցիչի, քանի որ ուրարտերենում a-ով ավարտվող բառերը (նաև հատուկ անունները) սովորաբար հոլովական վերջավորությամբ չեն օժտվում (հմմտ., քերև, ^dIM-a EN-gie «Թեյշեբա աստծուն՝ տիրոջը» - KYKH, 390, տող 1): Իսկ կրկնակի հիշատակության դեպքում ^dAniqu-ի gie հոլովական ցուցիչի անտեսումը պայմանավորված է տողավերջում ազատ հատվածի բացակայությամբ (տողադարձը, որպես կանոն, սեպագրում բացառված է):

Ինչ վերաբերում է Գյովելեքի արձանագրությանը, ապա այնտեղ «uinini-ի վերջին ni-ն եզակի բացառականի ցուցիչն է, ^dYaldi-ի և ^mRusaini-ի e-ն ինչպես նաև DINGIR-ի և ^dAniqu-ի gi-ն՝ եզակի տրականի, իսկ ^{SADU} babanaue-ի և atqananaue-ի ue-ն՝ հոգնակի տրականի:

Հետևաբար, ելնելով հիշյալ հիմնավորումներից, ստորև բերում ենք Չվարթնոցի և Գյովելեքի արձանագրությունների մեզ հետաքրքրող հատվածների թարգմանությունը.

1. Այս Ռուսայան հովտին երբ ջրանցքը nikiduli, ուլ Խալդի աստծու (պատվին) թող մորթվի, ոչխար Խալդիին զոհաբերվի, ոչխար՝ Թեյշեբային, ոչխար՝ Ըփիմիին, še•adi՝ Անիկուն:
2. Ռուսան ասում է. իսկպես հրաման արձակեցի. երբ ջրերը ծովից հոսեն, ուլ Խալդի աստծու (պատվին) թող մորթվի, ցուլ՝ Ռուսայան աստծուն, կով՝ Ռուսայան դիցուհուն, կով՝ Անիկուն ..., III ոչխար՝ լեռնային զոհաբերություններին:

Միա այսքանը, Անիկու (բայց ոչ Անիկուզի՝ ըստ Ֆ.Վ. Քյունիզի և Մ.

Մալվինի) դիցանվան, կարծում ենք համոզիչ, հորջորջման մասին: Հմմտ., քերև, նաև մման վերջավորությամբ ուրարտական Išpiliuqu անձնանունը և Buqu, Gurqu, Šuqu տեղանունները:

Ինչ վերաբերում է Անիկուի սեռի բացահայտմանը, ապա, ճիշտ է, անցյալում, փաստական նյութի բացակայության պարագայում, մասնագիտական գրականության մեջ այն համարվել է աստված: Մակայն այժմ հենց սոսկ Ռուսա III-ի Գյովելեքի նորահայտ արձանագրության տվյալների համաձայն, երբ Անիկուին զոհաբերվում է ^{GUD}ÁB «կով», այլևս ոչ մի կասկած չի հարուցում, որ նրան միանշանակ պետք է դասել ուրարտական դիցուհիների շարքը: Հանրահայտ է, որ պաշտամունքային արարողությունների ժամանակ ^{GUD}ÁB-կովը զոհաբերվում է բացառապես դիցուհիների պատվին՝ սկսած գերագույն դիցուհի Վարուբանիից:

Մյուս կողմից, ակնառու է նաև որոշ դեպքերում դիցուհիների, այդ թվում առաջին հերթին Վարուբանիի, պատվին ^{GUD}ÁB-կովի հետ միասին նաև ոչխարների զոհաբերումը: Այդպիսին է իրերի վիճակը, օրինակ, Վարուբանիի, Բաբայի ու Տուշպուեայի պարագայում Սիերի դռան պաշտամունքային արձանագրության դիցարանում¹⁵: Դեռ ավելին, բացառիկ դեպքերում էլ ուրարտական դիցուհիների, ներառյալ Վարուբանիի, պատվին զոհաբերվում են սոսկ ոչխարներ (կովերի անտեսումով)¹⁶: Մակայն դրանից, միևնույն է, իրերի վիճակը ամենևին չի փոխվում:

Հետևաբար, նորագյուտ սեպագիր արձանագրությունների փաստական նյութի շնորհիվ ներկայումս ուրարտական աստվածների սակավաթիվ դիցարանը աստիճանաբար համալրվում է նոր դիցուհիներով՝ հայտնի Անիկուի հետ միասին, նաև առայժմ անհայտ Էյդուրուով և Ինուանիով: Եվ դա այն դեպքում, որ եթե Անիկուին դասում ենք դիցուհիների շարքը Չվարթնոցի և Գյովելեքի արձանագրություններում նրա պատվին զոհաբերվող կովերի շնորհիվ, ապա Էյդուրուն և Ինուանին Այանիսի նորահայտ արձանագրության մեջ նույնպես հանդես են գալիս դիցուհիների շարքում՝ թեև նրանց պատվին զոհաբերվող արդեն ոչխարների պարագայում: Դրան արժե ավելացնել նաև այն ցնցող նորությունը, որ նրանցից Ինուանին միաժամանակ խոսում անուն է՝ հենց «դիցուհի» ստուգաբանությամբ, որից սերում են ^dinuanaue-ն կամ ^dNIN^{MES}-ue-ն¹⁷:

3. še•adi բառի ստուգաբանությունը

Այս բառը ուրարտագիտությանը հայտնի է ավելի քան մեկ հարյուրամյակ առաջ, ըստ որում սոսկ Ռուսա II-ի Չվարթնոցի արձանագրությունից: Եվ չնայած այդ արձանագրությունը զանազան լեզուներով բազմիցս հրատարակվել է մի շարք երկրներում¹⁸, այնուամենայնիվ še•adi բառիմաստի բացահայտումը առայժմ շարունակում է մնալ ուրարտերենի բառապաշարի ծայրահեղ պրոբլեմատիկ խնդիրների շարքում:

Գ.Ա. Մելիքիշվիլին, օրինակ, ուրարտական արձանագրություննե-

UDU.ŠE UDU ^dUTU «Ոչխար գեր (և) ոչխար՝ Շիվինի(ին)»
 UDU.ŠE UDU ^dArubanie «Ոչխար գեր (և) ոչխար՝ Վարուբանին»
 UDU.ŠE UDU DINGIR^{MEŠ} «Ոչխար գեր (և) ոչխար՝ աստվածներ(ին)»
 UDU.ŠE UDU ^dNIN «Ոչխար գեր (և) ոչխար՝ դիցուհի(ներին)»
 GUD ^mRusainie DINGIR-gi «Զուլ՝ Ռուսայան աստծուն»
^{GUD}ÁB ^mRusainie ^dNIN «Կով՝ Ռուսայան դիցուհ(ուն)»
^{GUD}ÁB ^dAniqu-gi «Կով՝ Անիկու դիցուհուն»

Այսպիսով, ինչպես հստակ երևում է հիշատակված տեքստերի գիտական տառադարձումներից և թարգմանություններից, Գյովելեքի արձանագրության մեջ ըստ ամենայնի պարզ են՝ և աստվածությունները և նրանց հասցեագրված զոհաբերվող կենդանիների տեսականիւն: Ինչ վերաբերում է Զվարթնոցի արձանագրությանը, ապա այստեղ միակ բացառությունը հանդիսանում է զոհաբերվող կենդանիների շարքում առկա *še•adi* ուրարտական անհայտ բառը, որը առնչվում է ^dAniqu դիցանվան հետ: Եվ դա այն դեպքում, երբ Զվարթնոցի արձանագրության *še•adi* ^dAniqu-gi դարձվածքի դիմաց Գյովելեքի արձանագրության իդենտիկ տեքստում առկա է ^{GUD}ÁB ^dAniqu-gi «կով՝ Անիկու դիցուհուն» դարձվածքը: Ըստ որում հատկանշական է, որ ^{GUD}ÁB ^dAniqu-gi և *še•adi* ^dAniqu-gi դարձվածքները համընկնում են ոչ միայն ըստ էության, այլև շարահյուսորեն: Այստեղ սոսկ ավելացնենք, որ Զվարթնոցի արձանագրության *še•adie*-ի -e վերջավորությունը (հմմտ. 25-րդ տողի *še•adi*-ն) ունի սոսկ զրաֆիկ նշանակություն՝ տողի ազատ հատվածը լրացնելու համար (հմմտ. մաս. նույն տողի ^dAniqu-gie-ի ավելորդ e-ն՝ ^dAniqu-gi-ի փոխարեն):

Հետևաբար, սույն ^{GUD}ÁB – *še•adi* «կով» ըստ ամենայնի հետաքրքիր բացահայտումը, ավելի քան հարյուրամյա անհայտությունից հետո, աներկբա լրացնում է ուրարտական արձանագրությունների առայժմ հայտնի GUD - *pa•mi* «ցուլ», UDU - *šuše* «ոչխար», ANŠU.A.AB.BA - *uštuni* «տուտ»²⁴, UDU.MÁŠ-li - *niqali* «այծ» և UDU.MÁŠ.TUR - *sali* «ուլ»²⁵ շումերա-ուրարտական համադրությունների շարքը:

NICOLAY HARUTYUNYAN

CORRECTIONS AND INTERPRETATIONS IN THE READINGS OF URARTIAN TEXTS

The paper observes and gives precise readings and meanings of Urartian noun *iziduše* 'order', and the verb *izidumi* 'to order', the name and genus of divinity Aniqu and the etymology of the word *še•adi* 'cow'.

1. Գ.Ա. Меликишвили, УКН, 276, երեսի կողմ, տող 43 և ծմբ. 11:
2. Ե.Հ. Գրեկյան, Գլխավորի ուղարկական արձանագրությունը, ՊԲՀ, 2004, քիվ 1, էջ 235:
3. F.W. König, Hchl, II, էջ 156 և ծմբ. 9: Հմմտ. Н.В. Арутюнян, КУКН, էջ 463:
4. Н.В. Арутюнян, КУКН, էջ 316, ծմբ. 40ա:
5. F.W. König, Hchl, II, էջ 156 և ծմբ. 9, ինչպես նաև էջ 189:
6. Գ.Ա. Меликишвили, ВДИ, 1953, № 1, էջ 225; 1954. № 1, էջ 208:
7. Տես КУКН, էջ 359 այդ արձանագրությանը վերաբերող գրականությունը:
8. Գ.Ա. Меликишвили, УКН, 281, տողեր 21, 25, ինչպես նաև էջ 359:
9. F.W. König, Hchl, II, էջ 157, 172:
10. M. Salvini, SMEA, XLIV/1, Roma, 2002, էջ 123:
11. Н.В. Арутюнян, КУКН, 421, տող 21 և ծմբ. 12:
12. Ե.Հ. Գրեկյան, ՊԲՀ, 2004, քիվ 1, էջ 244 և ծմբ. 112:
13. Մ. Մալվինիի մոտ՝ ^dGI, իսկ Ե.Հ. Գրեկյանի մոտ՝ ^dGI/DINGIR-gi.
14. Հմմտ. M. Salvini, SMEA, XLIV/1, էջ 123:
15. КУКН, 38, տեքստ I, տող 21; 107, հակ. կողմ, տող 29; M. Salvini, Ayanis I, էջ 254, սեկցիա II, տող 1-2; էջ 258, սեկցիա V, տող 7:
16. M. Salvini, Ayanis I, էջ 254, սեկցիա II, տողեր 1-2:
17. Н.В. Арутюнян, Новые наблюдения в лексике урартского языка, 5 Эдубба вечна и постоянна", Санкт-Петербург, 2005, էջ 13-16:
18. Խաչիկ Դատեան, «Արարատ», 1900, էջ 380: K. Basmadjian, "Recueil de travaux relatifs à la philologie égyptiennes et assyriennes", XXIII, Paris, 1901. Б.С. Голенищев, ЗВО, XIII, вып. 4, 1901, էջ 686-692. A. Sayce, JRAS, LXXXVI, 1901 և այլն:
19. Գ.Ա. Меликишвили, УКН, 281 և էջ 406:
20. F.W. König, Hchl, II, էջ 126, տողեր 21, 23 և էջ 201: Հմմտ. КУКН, 421.
21. I.M. Diakonoff, HU, էջ 32, ծմբ. 25. М.Л. Хачикян, ХУ, էջ 48, 50:
22. Н.В. Арутюнян, КУКН, 421, տողեր 18-25:
23. M. Salvini, SMEA, XLIV/1, Roma, 2002, էջ 122, հակ. կողմ, տողեր 4-11; Ե.Հ. Գրեկյան, ՊԲՀ, 2004, քիվ 1, էջ 225:
24. Գր. Դափանցյան, Ուրարտուի պատմությունը, Երևան, 1940, էջ 53:
25. N. Harouthiounyan, New Relations and Interpretations in Urartian texts, "Studie Linguarum", 3/1, Moscow, 2002, էջ 207-208:

ՀԱՊԱՇՈՒՄՆԵՐ

- ՊԲՀ – Պատմա-քաղաքական հանդես (Երևան):
 ВДИ – Вестник древней истории (Москва).
 ЗВО – Записи восточного отделения Русского археологического общества (Москва).
 КУКН – Н.В. Арутюнян, Корпус урартских клинообразных надписей, Ереван, 2001.
 УКН – Գ.Ա. Меликишвили, Урартские клинообразные надписи, Москва, 1960.
 ХУ – М.Л. Хачикян, Хурритский и урартский языки, Ереван, 1985.
 Ayanis, I – A. Çilingiroğlu, M. Salvini, Ayanis I, Roma, 2001.
 HU – I.M. Diakonoff, Hurrisch und urartäisch, München, 1971.
 Hchl – F.W. König, Handbuch der chaldischen Inschriften, I-II, Graz, 1955-1957.
 JRAS – Journal of the Royal Asiatic Society (London).
 SMEA – Studi Micenei ed Egeo-Anatolici (Roma).

ԽԵՔԵՐԵՆ *marnuwa* ԲԱՌԸ

Հնդեվրոպական լեզուներում *mer- *mor- բազմիմաստ արմատով կազմվում են մի շարք համանուններ: Խեքերենը, ի թիվս այլ հնդեվրոպական լեզուների, ևս ունի վերոնշյալ արմատով կազմված բառեր: Մենք փորձել ենք առանձնացնել խեքերենում բառերի մի շարք, որն իմաստային առումով համընկնում է հնդեվրոպական *mer- *mor- արմատի ունեցած որոշ իմաստներին: Ստորև ներկայացվող աղյուսակի վերջին շարքում մենք դիտարկել ենք խեք. *marnuwa* բառը (խմիչքի անվանում), որն էլ հանդիսանում է մեր հոդվածի նյութը: Այն հնչողությամբ մնան է խեք. *mer/mar* - «անհետանալ» բառին¹, որն, ամենայն հավանականությամբ, ևս հանգում է հնդեվրոպական *mer- *mor- բազմիմաստ արմատին և համապատասխանում վերջինիս «սևացնել, մութ գույն, բիծ» նշանակությամբ: Հնարավոր է նաև, որ հայերեն *մառն* (մառախուղ, մեզ, մշուշ), բարբռ. *մռռ*, (մորի, մոշ) *մառի* (լրթագույն, մուգ մանուշակագույն) բառերը ևս ծագում են նույն արմատից: Եվ պատկերն ավելի հասկանալի դարձնելու համար հնդեվրոպական արմատին զուգահեռ կրերենը խեքերեն և հայերեն օրինակները: Ի դեպ, այս աղյուսակում հնչյունաիմաստական համընկնումներ են դիտարկվում խեքերենի և հայերենի բարբռառային տարբերակների միջև: (Խեքերեն օրինակների ընտրությունը մերն է², իսկ հնդեվրոպական և հայերեն զուգահեռները բերվում են ըստ Գ. Ջահուկյանի)³:

Հնդեվրոպական	Խեքերեն	Հայերեն
*mer - կյուսել, կապել թել, թուկ	<i>marra</i> - (նշանակությունների շարքում)-արձակել, հանգույց քանդել	—
*mer-առկայծել	<i>marnuwala</i> - (նշ. շարքում)-անտեսանելի	—
*mer- մեռնել	<i>marnu</i> , <i>mernu</i> - անհետամալ, չքանալ, մեռնել <i>marnuwala</i> -մահվան գնալ, մահկանացու	մեռամիմ, մարդ «մահկանացու»
*mer - տրորել	<i>marra</i> — ջարդել, քաժանել, կտրտել, մամրել	«մարտ»-պայքար մուրճ, մաշեմ <i>բրբռ</i> , մեռ, մառ «փայտի ծեղ», մառել «ցորենը մամրել, կախել»
*mer — սևացնել, մութ գույն, բիծ	<i>marnuwa</i> - խմիչքի անվանում	մոռայլ, մառ-ա-խուղ (Գ. Ջահուկյանի բերած այս օրինակին մենք կհավելենք <i>բրբռ</i> , մառի «լրթագույն, մուգ, մանուշակագույն» <i>բրբռ</i> , մոռ, (մոշ, մորի, մորեմի):

Ինչպես նշվեց, հողավածի բուն նյութն է marnuwa բառը:

Սակայն մինչ լեզվաբանական վերլուծություն կատարելը, ներկայացնենք marnuwa խմբից կիրառությունն ու հատկանիշներն ըստ խեթական տեքստերի: Այն հաճախ է հանդիպում հատկապես ծիսապաշտամունքային տեքստերում: Marnuwa-ն խմբիչ է, որ մատուցվում է աստվածներին, քազավորական ընտանիքի անդամներին, խմվում ծիսակարգի մասնակիցների կողմից, անգամ ծիսական արարողակարգի հիմնական բաղկացուցիչ մասն է կազմում (տե՛ս ստորև):

Օրինակ՝ Խաթթի Երկրի Ամպրոպի աստծուն նվիրված ծիսակատարության ժամանակ, այլ խմբիքների շարքում, քարե կոթողի առջև հեղվում է նաև marnuwa-ն⁴:

Խեթ (^{EZEN}•[•]anšumaš)⁵ տոմի ժամանակ արքայազնը այցելելով տարբեր պալատականների տներ, մասնակցում է ծիսական ճաշկերույթների, որոնց ընթացքում, գարեջրի և ուտեստեղենի հետ մատուցվում է նաև marnuwa-ն⁶:

Իլլույանկա օծի և Ամպրոպի աստծո հակամարտությանը նվիրված ամասպելույթի ամաջին տարբերակում, երբ Ինարա (Inara) աստվածուհին Իլլույանկայի և նրա որդիների համար ընդունելություն է կազմակերպում, նրանց հյուրասիրած խմբիքների շարքում հիշատակվում է marnuwa-ն, որը խմելուց հետո օծերն այլևս չեն կարողանում հետ սողալ իրենց բույնը, ինչի շնորհիվ էլ Ամպրոպի աստվածը հաղթում է նրան⁷: Այս տեքստից ակնհայտ է, որ marnuwa-ն հավանաբար ոգեկից խմիչք է, քանզի օձը հարքում է:

marnuwa-ն ունի նաև չարախափան նշանակություն: Այս մասին է խոսվում տեքստերից մեկում, որում ասվում է, որ marnuwa-ն կարող է ստիպել չարին հեռանալ (անհետանալ), իսկ լավ բաներին (բարուն) ի հայտ գալ⁸:

Սակայն ամենաուշագրավը խեթական մի ծես է՝ կապված Տիտիուտտի աստվածուհու հետ: Marnuwa-ով լցված ավազանում խորանի առջև ծնկաչոք և մերկ նստում են *պանցու*⁹ երկու մարդիկ (ծիսակարգի մասնակիցների անվանում): Տիտիուտտի աստվածուհու քրոնիին և պոռնկուհիների վերակացուհին երեք անգամ վազում են marnuwa-ով լի ավազանի միջով: Վերակացուհու ձեռքին փայտե դանակ է, որի առջևից ավազանի միջով վազում է Տիտիուտտի աստվածուհու բուրմը՝ ձեռքին զավազան, վերջինիս դիմաց էլ կապում են sipartin¹⁰: Քուրմը *պանցու* մարդկանց մեջքին երեք անգամ լցնում է marnuwa և նրանք երիցս փող փչելով՝ դուրս են գալիս ավազանից: Ծեսի վերջում քազավորը մոտենում է Ամպրոպի աստծո կոթողին, խոնարհվում և գնում աղոթատեղի:

Ըստ Վ. Արծիմբայի, ծեսում ի հայտ է գալիս խորանի (օջախի կրակի) և ավազանի (ջուր) այս երկու խորհրդանիշների հակադրությունը¹¹:

Ծեսն ինքնին շատ խորհրդապաշտական է, քատերականացված և, քանի որ նրանում դերակատարում ունեն նաև պոռնկուհիները, կարելի է ենթադրել, որ այստեղ տեղի էին ունենում էին նաև օրգիաներ, ինչը կարող

էր կապված լինել պտղաբերության պաշտամունքի հետ: Փաստերեն *marnuwa*-ն այստեղ ներկայանում է կարծես օժող, խորանի առջև մաքրագերծող, ինչպես նաև պտղաբերության պաշտամունքի հետ առնչվող խմիչք: Ավելացնենք, որ *marnuwa*-ն մատուցվում է նաև այլ աստվածություններին և նրանց հետ կապված ծեսերում (Տելեպիմուս, Արևի աստվածուհի, Տաուրի աստծուն և այլն):

Խեթական սեպագիր տեքստերում *marnuwa*-ն հիշատակվում է թե՛ առանձին, թե՛ զինու, զարեջրի և այլ խմիչքների հետ, որից կարելի է ենթադրել, որ այն, համեմայն դեպս, խաղողի զինուց և սովորական զարեջրից տարբերվող մի խմիչք է կամ նրանց առանձնահատուկ տեսակ:

Ա. ֆոն Շուլերը նկատել է, որ Կապադովկիայի հին ասորեստանյան տեքստերում հանդիպում է *marnuwatum* անվանմամբ խմիչք, որը պատրաստվել է զարուց և նա ենթադրում է, որ վերջինս զարեջուր է եղել: Հաշվի առնելով խեթ. *marnuwa*-ի հետ *marnuwatum*-ի ունեցած հնչյունական նմանությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ խեթ. *marnuwa*-ն մատուցվում է ¹⁰ AGRIC-ի¹² կողմից, Շուլերը ենթադրել է, որ խեթ. *marnuwa*-ն ևս զարեջրի տեսակ է¹³:

marnuwa խմիչքին անդրադարձել է նաև Ն. Մկրտչյանը, որը վերլուծելով տեքստերում նրա կիրառությունը, եկել է այն եզրակացության, որ խեթ. *marnuwa* (*marnuwanta*) բառի արմատն է *marnu*-ն և այն պահպանվել է հայերենի *մառ* կամ *մառն* բառերում, որը նշանակում է «մեզ և մշուշ», ինչպես նաև «զինու երեսին բռնած թաղանթ», նա եզրակացնում է, որ *marnuwa*-ն հողի տակ պահվող զինու հատուկ տեսակ է¹⁴:

Փաստորեն, խնդրո առարկա խմիչքի վերաբերյալ արտահայտված է երկու կարծիք՝ ա) որ այն զարեջուր է, բ) որ այն հողում պահվող զինու հատուկ տեսակ է:

Այնուհանդերձ, փորձենք բառակազմական վերլուծության ենթարկել *marnuwa* խմիչքի անվանումը: Այն տեքստերում հանդիպում է *marnu*, *marnuwa*, *marnuwan*, *marnuwant* ձևերով:

Վերջին երկու ձևերի մասին կարելի է ասել հետևյալը. *marnuwan* – կարծում ենք, որ կազմված է «*marnu*» արմատից և խեթ. *-uwan* վերջածանցից¹⁵, որը նշանակում է «փնջ-որ բանից ստեղծված, առաջացած» (*marn* + < *uwan*): Այսինքն, կարելի է ենթադրել, որ *marnuwan* նշանակում է. *marn*-ից պատրաստված (խմիչք): Ինչ վերաբերում է *marnuwant* ձևին, ապա այս դեպքում արմատը «*marnu*» է, որին ավելացել է *-(u)want* խեթ. վերջածանցը¹⁶ (տես օրինակ խեթ. *kašt*– «սով», *kišt(u)want*– «սոված»): Նույն ձևով *marn* > *marn(u)want*:

Փաստորեն, թե՛ *marnuwan*, թե՛ *marnuwant* ձևերում արմատը հանդիսանում է «*marnu*»-ը, որը թխեցվում է խեթ. **mer*, **mar* – ջրանալ, անհետանալ, մահանալ արմատից¹⁷:

Ինչպես տեսանք, այս մույն արմատն էր ընկած նաև վերը բերված աղյուսակի մի շարք խեթ. բառերում: Այդ աղյուսակում *marnuwa* խեթերեն բառը մենք ենթադրում ենք, որ կարելի է թխեցնել հնդեվրոպական **mer*,

*mor բազմիմաստ արմատի «սև, մութ գույն, բիծ» իմաստից: Փորձենք փաստարկել մեր այս մոտեցումը.

Հայտնի է, որ ցանկացած խմիչք պատրաստվում է ինչ-որ բույսից կամ մրգից և ուսումնասիրելով մրգերի և բույսերի հնդեվրոպական անվանումները պարզվեց, որ «սև թթենու» կամ «սև թթենու պտղի» ինչպես նաև «մորու» կամ «մոշի» հնդեվրոպական անվանման համար վերականգնվում է *mōro - արմատը, որն էլ ծագումնաբանորեն կապված է վերոնշյալ mer-, *mor- (սև, մութ գույն) արմատի հետ¹⁸: Հնդեվրոպական լեզուներում «սև թթենու պտուղների» և «մորու», «մոշի» անվանումների իմաստային առումով միախառնումը պայմանավորված է հավանաբար նրանց ունեցած արտաքին և գունային մոմանությամբ: Հունարեն μῆλον - թթենու պտուղ, թուփ, մոշ, լատ. mōrus - թթենի, mōrum - թթենու պտուղ, մոշ, վալլ. - merwydden - թթենու պտուղ¹⁹:

Հայերենում ևս այդ արմատը պահպանվել է մոր «մոշ, մորենու պտուղ» ձևով²⁰: Հայերենում ունենք նաև *Մորեաս «թութ» ձևը, որը պահպանված է միայն Երեմիա Մեղրեցու մոտ²¹, որը ըստ Հ. Աճառյանի համարվում է փոխառություն հունարենից: Ինչ վերաբերում է «թութ» բառին, ապա այն հայերենում համարվում է փոխառություն արամեերենից²²:

Հնարավոր է ենթադրել, որ խեթ. marnuwa-խմիչքը կարող է պատրաստված լինել «սև թթից» կամ «մորուց և մոշից», քանի որ նրա արմատը «marn»-ը ևս կարելի է հանգեցնել հնդեվրոպական վերոնշյալ արմատին: Ենթադրելի է, որ մման արմատով ծառի կամ թփի հիշատակություն ևս պետք է լիներ խեթական տեքստերում: Իրոք marnan կոչվող ծառի անվանումն պահպանվել է խեթական տեքստերում, որը սակայն, հանդիպում է առանց ցիժ գաղափարագրի (ծառերի և բույսերի համար դրվող գաղափարագիր), ինչն էլ կասկածների տեղիք է տալիս, որ խոսքն իրավամբ ծառի մասին է²³: Սակայն վերլուծելով տեքստը, որում հանդիպում է բառը, կարծում ենք, կարելի է ենթադրել, որ խոսքը ծառի մասին է: Տեքստը հետևյալն է. «O, իմ Հայր, դու կառուցեցիր քեզ համար տուն այնքան բարձր, որքան marnan-ը...»²⁴: Իհարկե, միանշանակորեն չի կարելի պնդել, որ տեքստում խոսվում է հենց թթենու ծառի մասին՝ փաստերի բացակայության պատճառով:

Ինչ վերաբերում է «Մև թթենու ծառին» (Morus nigra), ապա այն տարածված է Միջերկրածովյան և Հարավ-արևելյան Ասիայի երկրներում, սակայն նրա հնագույն հայրենիքը համարվում է Առաջավոր Ասիան: Նրա մեծ պտուղները բնութագրվում են մութ մանուշակագույն, գրեթե սև գույնով²⁵: Ավելացնենք, որ Եգիպտոսում այս թթենու տեսակին մոտ մեկ այլ տեսակ համարվում է «աստվածների սրբազան ծառ», որ մեծ ծիսական և առատալեզվական նշանակություն ուներ (հիշենք marnuwa-ի ունեցած ծիսական նշանակությունը)²⁶:

Փաստերի սակավությունը հնարավորություն չի տալիս պնդել նաև, որ marnuwa-ն կապված է marnan - ծառի անվանման հետ, սակայն հնչյունական մոմանությունը և բերված նյութը, կարծում ենք մտորումների տեղիք

են տալիս:

Մեր առաջադրած վարկածներին օգնության կարող է գալ նաև հայերեն բարբառներում պահպանված նյութը: Ինչպես նշվեց վերը, Ն. Մկրտչյանը ենթադրում էր, որ *marnuwa* բառի *marnu* արմատը պահպանված է հայ. «մամն»՝ ա) «մեզ, մշուշ, մառախուղ», բ) «գինու երեսին բռնած թաղանթ» բառերում: Մենք այս տեսակետին կավելացնենք հետևյալը. Հր. Աճառյանը հայ. «մամն» (ն. իլ. գործ մառամբ) - մշուշ, մեզ, մառախուղ՝ ծագում է հնդեվրոպական մախալեզվի **mer-*, **mor-* արմատից) բառի հոդվածում ենթադրում է, որ սրանից է կազմված Ղարաբաղի բարբառի *մաւմօշ < մառամոշ* «մի տեսակ մոշ, որի վրայ մշուշի բարակ մի խաւ է պատած», ինչպես նաև Մաշկերտի բարբառի *մառի* «լրբագույն, մուգ մանիշակագույն» բառերը (*մառի* բառի իմաստը, ի դեպ, շատ հիշեցնում է սև թթի վերոնշյալ նկարագրությունը)²⁷:

Հայտնի է, որ մի շարք դեպքերում բարբառները գրաբարի համեմատությամբ հանդես են բերում արմատական-բառակազմական զգալի տարբերություններ, որոնց հիմքերը, ըստ Գ. Ջահուկյանի, թերևս հասել են մինչև վաղնջահայերենի շրջանը: Եվ մամառտիպ օրինակներ թվարկելիս, գրաբարյան արմատական ձևի դիմաց ածականով կամ հին ածանցով ձևեր ունեցող բառերի շարքում մա հիշատակում է նաև *մոր* (հ.ե. - **mor*) և բարբառային (մոռ, մոշ (մորշ) (հ.ե. **mor-s*) ձևերը²⁸: Կարելի է ենթադրել, որ խեթ. *marnuwa*-ի *marnu-* արմատը, եթե իսկապես նշանակում է *սև թուք* կամ *մորի, մոշ*, ապա այն կարող է պահպանված լինել հայերեն բարբառային *մոռ* և վերը նշված *մառի* բառերում:

Բացի այդ, հայերեն *մառան* բառը ևս ստույգ ստուգաբանություն չունի: *Մառանը* -ա հոլովման է և նշանակում է «շտեմարան» (գինու, կերակրեղենի, մթերքի ևն), Նոր Հայկազյան բառարանում բխեցվում է *մառ* «մութ» բառից և մեկնվում է «նեղքին և մթին սեմեակ»²⁹: Փաստորեն, կարելի է ենթադրել, որ *մառան* բառը ևս հանգում է *մառն* արմատին, որն էլ ծագում է հնդեվրոպական **mer*, **mor* արմատից: Միգուցե հայերեն *մառան* բառն էլ ծագումնաբանորեն կապված է խեթ. *marnuwa*-խմիչքի անվանման հետ, հատկապես, եթե հաշվի առնենք, որ Ն. Մկրտչյանը *marnuwa*-ն համարում է հողի տակ պահվող խմիչք: Հիշենք նաև, որ *marnuwa*-ն, բացի հարբեցնելուց, ուներ չքացնելու, անհետացնելու հատկություն (օրինակ՝ չարը), որը իմաստային առումով կապվում է հողում թաղելու, պահելու հատկանիշի հետ:

Ի մի բերելով վերը գրվածը՝ մենք առաջադրում ենք հետևյալ վարկածները.

ա) *marnuwa* բառի *marnu* արմատը հավանաբար ծագում է հնդեվրոպական **mer-*, **mor-* արմատի «սևացնել, մութ գույն, բիծ» իմաստից, որի հետ ծագումնաբանորեն կապվում է սև թթեմու պտղի, ինչպես նաև մորու կամ մոշի հնդեվրոպական անվանման համար վերականգնվող **mōro* արմատը:

բ) Խեթ. տեքստերում հանդիպող *marnuwa*-ն հավանաբար ոգելից խմիչք է, ունի ծխական, չարախափան նշանակություն և հնարավոր է պատրաստվում էր սև թթից, մորուց կամ մուշից: Ի դեպ, միշտ պետք է հիշել, որ այս տարբեր բույսերի անվանումները միախառնված են հանդես եկել հնդեվրոպական լեզուներում:

զ) Հայերենում այն հնարավոր է պահպանվել է բարբառային *մոր* (մորի), *մարի* (լրբագույն, մուգ մանուշակագույն), ինչպես նաև հայերեն *մարան* (զինու պահեստ, շտեմարան) բառերում:

HASMIK HMayakyan

HITTITE MARNUWA

The author attempts to etymologize Hittite *marnuwa* from I-E *mer-, *mor- (meaning blacken, dark color) that entomologically relates to I-E reconstructed stem *mōro* for black mulberry or black raspberry.

The author supposes that *marnuwa* found in Hittite texts is an alcoholic drink having ritual evil preventing function and probably was prepared from black mulberry or black raspberry. It should be remembered that in I-E languages names for these different plants always has been mixed.

In Armenian it probably was preserved in dialectical words *mor* (raspberry), *mari* (dark lilac, dark magenta), as well as in Armenian *maran* (wine storage).

ՇԱՆՈՅԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. The Hittite Dictionary of the Oriental Institute of the University of Chicago. Edited by Hans G. Güterbock and H.A. Hoffner, vol.3, fasc. 2, Chicago, 1988, S.193.
2. Խեթերեն բառերի օրինակները բերվում են ըստ Johann Tischler, Hethitisches Handwörterbuch, Innsbruck 2001 - The Hittite Dictionary of the Oriental Institute of the University of Chicago բառարանների:
3. Ջահուկյան Գ.Ք., Հայոց լեզվի պատմություն. ճախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 55:
4. Ардзинба В.Г., Ритуалы и мифы древней Анатолии, Москва, 1982, стр. 13-14.
5. ^{ezbn} *haššumaiš* – 4 օր տևող խեթական ծես, որն իրականացվում է արքայազնի կողմից, որն այդ օրվա ընթացքում այցելում է մի քանի ծխական հաստատություններ:
6. Ардзинба В.Г., Ритуалы и мифы..., стр. 40.
7. The Hittite Dictionary..., S.194 (KBo 3.7 i 14-18).
8. The Hittite Dictionary..., S.193 (KUB 41.23 ii 2-5).
9. Ավանդո – խեթական ծեսերին մասնակցող մարդկանց անվանում, որոնց բնորոշ էր ծխականրդի ընթացքում աղոթելը կամ անիծելը, որոշ դեպքերում նրանք երաժշտական գործիքների վրա էին նվագում կամ պարում էին:
10. *šiparti* – հագուստ, հագուստի մաս. Johann Tischler, Hethitisches Handwörterbuch..., S.152.
11. Ардзинба В.Г., Ритуалы и мифы..., стр.104-105.

12. ԱՊ AGRIG – խեթական տեքստերում մատուցվակ, որ մատուցում է ոչ թե զինի, այլ ուրիշ խմիչքներ:
13. The Hittite Dictionary..., S.194.
14. Մկրտչյան Ն., Խեթա-հայկական ընդհանրություններ. Լրաբեր Հասարակական Գիտությունների, էջ 63-35, Երևան, 1976:
15. – uwan խեթական վերջածանցի մասին տե՛ս Иванов В.В., Хеттский язык, Москва, 1963, стр. 194.
16. – (u)want խեթական վերջածանցի մասին տե՛ս Иванов В.В., Хеттский язык, Москва, 1963, стр. 189, таб. № 2.1.
17. marguwa - բառի ծագումը խեթական mer, mar բայից տե՛ս The Hittite Dictionary..., S.193.
18. Гамкрелидзе Т.В, Иванов В.В., Индоевропейский язык и индоевропейцы. Реконструкция и историко-типологический анализ праязыка и протокультуры, том II, Тбилиси, 1984, стр. 645-646.
19. Նույն տեղում, էջ 645-646:
20. Աճառյան Հր., Հայերեն Արժատական Բառարան, հատոր III, Երևան, 1977, էջ 397:
21. Աճառյան Հր., Հայերեն Արժատական Բառարան, հատոր III, Երևան, 1977, էջ 348:
22. Гамкрелидзе Т.В, Иванов В.В., Индоевропейский язык и индоевропейцы...стр. 646.
23. The Hittite Dictionary..., S.192.
24. The Hittite Dictionary..., S.192 (КВо 12.70 rev. [III 10-12).
25. Гамкрелидзе Т.В, Иванов В.В., Индоевропейский язык и индоевропейцы...стр. 646, Вавилов Н.И., Избранные труды (в пяти томах), Москва-Ленинград, том 1, стр. 205, 343.
26. Гамкрелидзе Т.В, Иванов В.В., Индоевропейский язык и индоевропейцы...стр. 646.
27. Աճառյան Հր., Հայերեն Արժատական Բառարան, հատոր III, Երևան, 1977, էջ 263:
28. Ջահուկյան Գ.Բ., Հայոց լեզվի պատմություն. մախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 255:
29. Ջահուկյան Գ.Բ., Հայոց լեզվի պատմություն. մախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 262-263:

ԿԱՄԿԱ ԵՐԿԻՐՆ ԸՍՏ ՄԵՊԱԳԻՐ ԱՐՔՅՈՒՐՆԵՐԻ

Ք.ա. XVI-VII դդ. մերձավորարևելյան պատմության թատերաբեմում հանդես է եկել կասկա ժողովուրդը, որն իր ուրույն տեղն է գրավել ժամանակաշրջանի ռազմաքաղաքական պատմության մեջ: Նրանք մեծ ազդեցություն և դերակատարում են ունեցել հատկապես տարածաշրջանի կարևորագույն պետություններից մեկի՝ խեթական տերության՝ իրադարձություններով լի պատմության մեջ:

Կասկա երկրին վերաբերող համեմատաբար մեծաքանակ և արժեքավոր տեղեկությունների հիմնական աղբյուրը միջինխեթական և նորխեթական ժամանակաշրջանի սեպագիր արձանագրություններն են: Կասկեի մասին որոշ տվյալներ են պարունակում նաև Ք.ա. XIIդ. և VIIIդ. ասորեստանյան սեպագիր արձանագրությունները:

Կասկա երկրի սահմանները նշելիս պետք է հաշվի առնել, որ այն ընդգրկել է Արևելապոնտական լեռների զգալի հատվածը: Սակայն հարկավոր է տարամջատել կասկեի բուն երկրի սահմանները և նրանց տարածման գոտին տարածաշրջանում, որը երբեմն ընդգրկել է բավականին լայն արեալ: Հարկ է նշել, որ Արևելապոնտական լեռները բնական ապաստան էին կասկեի ցեղերի համար: Այստեղ նրանք պաշտպանվում էին խեթական բանակի հարձակումներից և այստեղից էին սկսում իրենց ավերիչ արշավանքները դեպի Խաթթիի կենտրոնական շրջաններ և այլ տարածքներ: Կասկական ցեղերը Ք.ա. II հազարամյակում բնակվում էին Հյուսիսարևելյան Փոքր Ասիայում և հարավային Մերձսևծովյան գոտում (Պոնտոս)՝ սկսած Հալիս (Kızıl İrmak) գետի վերին ավազանից մինչև Վերին Եփրատ՝ ներկայիս Երզնկայից արևմուտք, ներառյալ Իրիս (Yeşil İrmak) և Լիկոս (Գայլ-գետ, Կելկիթ) գետերի հովիտները: Բացառված չէ նաև, որ Հալիս և Լիկոս գետերի ակունքների շրջանից հյուսիս-արևելք՝ ներկայիս Տրապիզոնի և Բաթումիի շրջանները նույնպես բնակեցված են եղել կասկական ցեղերով: Հալիսի ներքին ավազանից արևմուտք ընկած տարածքներում որևէ հիշատակություն չկա կասկեի մասին:

Մինչ օրս պարզված չէ՝ արդյոք կասկեը բնիկ ժողովուրդ էին այդ տարածքներում, թե եկվոր: Համեմայն դեպս, մինչև Ք.ա. II հազարամյակի կեսերը նրանց մասին որևէ գրավոր վկայություն չի պահպանվել, չկա նաև հնագիտական վառ արտահայտված կասկական մշակույթի հետքեր:

Կասկեի լեզվի մասին կարող ենք դատողություններ անել հիմնականում խեթական տեքստերում պահպանված կասկական տեղանունների և անձնանունների հիման վրա:

Կասկեի անվանումը վաղուց արդեն մոտեցնում են հյուսիսկովկասյան չերքեզների անվանը: Ք.ա. II հազարամյակի վերջի ասորեստանյան աղբյուրները կասկեի անվան համարժեք օգտագործել են նաև ապիշլու (արեշլա) ցեղանունը, որը նույնանուն է կովկասյան ափշուա ցեղանվա-

մը: Այսպիսով, էթնոհիմների միջոցով կապ է հաստատվում փոքրասիական կասկերի և հյուսիսկովկասյան ցեղերի միջև:

Կասկերի լեզուն մերձեցվել է նաև խաթերենի հետ²: Խաթերեն ուսումնասիրող մասնագետներն իրենց հեքթին նշում են խաթերենի ազգակից լինելը հյուսիսկովկասյան լեզուներին, մասնավորապես՝ ուրիխերենին, չերքեզերենին կամ ադղերենին և արխագերենին³:

Կասկերն ապրում էին համայնքային կյանքով, հավանաբար, ունեին ցեղային ժողով, ավագանու խորհուրդ, ցեղի առաջնորդ, որի իշխանությունը ժառանգական չի եղել: Մակայն արդեն Մուրսիլիս II-ի օրոք ի հայտ է գալիս նոր երևույթ կասկերի մոտ, երբ ցեղի առաջնորդը դառնում է թագավոր⁴, այսինքն՝ նաև ժառանգական իշխանության համակարգ է ձևավորվում:

Կասկերի տնտեսության գլխավոր ճյուղը հանդիսացել է անասնապահությունը: Խեթական տեքստերից մենք տեղեկանում ենք, որ կասկերի դեմ արշավանքների ժամանակ խեթերը մեծ քանակությամբ խոշոր և մանր եղջերավոր անասուններ են ավար վերցրել: Կասկական ցեղերը զբաղվել են նաև խոզապահությամբ⁵: Կասկերի հիմնական մասը նստակյաց կյանք է վարել: Խեթական տեքստերում բազմիցս հիշատակվել են նրանց բնակավայրերը, նույնիսկ ամրացված քաղաքները: Կասկերի անվան տակ խեթերը հասկացել են ոչ թե մեկ ամբողջական քաղաքական միավոր, այլ բազմաթիվ, զարգացման տարբեր մակարդակների վրա գտնվող ցեղային միավորումներ, որոնք հաճախ միավորվել են դեպի Խաթթի ավարառուական հարձակումներ իրականացնելու, կամ խեթական բանակի արշավանքներին դիմագրավելու համար:

Կասկերի ռազմունակության և հմուտ պատերազմական գործողություններ վարելու մասին են խոսում նրանց՝ տարիներ շարունակ տևած ռազմական գործողությունները ժամանակաշրջանի խոշորագույն տերություններից մեկի՝ Խաթթիի դեմ: Բացի դրանից, հաշվի առնելով նաև նրանց բարձր մարտական հատկանիշները՝ խեթերը վարձում էին կասկ զինվորների: Կասկերը նաև տիրապետում էին ժամանակի հզոր ռազմական տեխնիկային՝ մարտակառքերին, որը խոսում է այն մասին, որ նրանք, հավանաբար, նաև ձիաբուծությամբ են զբաղվել: Կասկերն ունեցել են նաև քաղաքները զրավելու համար պաշարողական մեքենաներ, հակառակ դեպքում՝ դժվար է բացատրել խեթական ամրացված քաղաքների (նաև մայրաքաղաք Խաթթուսասի) զրավումը առանց հատուկ ռազմական տեխնիկայի:

Որևէ փաստ չկա այն մասին, որ դեռևս Աշշուրի առևտրական գաղութների ժամանակաշրջանում (Ջ.ա. III հազ. վերջ-II հազ. սկիզբ) կասկերը ակտիվություն են ցուցաբերել Փոքր Ասիայում: Ամենայն հավանականությամբ, որևէ սպառնալիքի բացակայությունը հարևան քաղաքական միավորների կողմից դեռևս չէր ուղղորդել այս ցեղերի ռազմունակ ակտիվությունը հարևանների դեմ, կամ, եթե նրանք եկվոր են եղել, ապա դեռ չէին հաստատվել իրենց հետագա բնօրրանում:

Կենտրոնական Փոքր Ասիայում Ջ.ա. XIXդ. կեսերին գերիշխող է

դառնում Կուսսար քաղաք-պետության կառավարիչ Անիտատաը, որը խեթական պետության իրական հիմնադիրն է: Նրա օրոք խեթերն իրենց ենթարկեցին բուն խաթական տարածքները՝ Խաթթուսաս քաղաքով՝ դրամով, հավանաբար, առաջին անգամ հարևան դառնալով այս քաղաքից հյուսիս ապրող կասկերին:

Հին խեթական բազավորության հզորացումը կապված է Խաթթուսիյիս I-ի կառավարման հետ (Ք.ա. 1650-1620թթ.)⁶, որի օրոք Խեթական պետությունը նվաճեց Փոքր Ասիայի մեծ մասը: Խաթթուսիյիսը մայրաքաղաքը Կուսսարից տեղափոխեց Խաթթուսաս, որն էլ մնաց որպես այդպիսին մինչև Խեթական պետության տրոհումը: Նրա օրոք էր, որ խեթերը հյուսիսում դուրս եկան դեպի Սև ծովի ափերը: Մակայն նոր մայրաքաղաքի դիրքը ռազմավարական առումով այդքան էլ հաջող չէր ընտրված: Այն բավականին մոտ էր գտնվում վատ պաշտպանված և հաճախ փոփոխվող պետության հյուսիսային սահմանին, և մայրաքաղաքը մշտապես հարվածի տակ էր ռազմատենչ կասկական ցեղերի հարձակումների ժամանակ: Այս ցեղերը խեթական պետության պատմության ընթացքում բազմաթիվ անգամ են անարգել ավերել և ամայացրել խեթերի մայրաքաղաքը և նրա շրջակայքը:

Խեթական առաջին գրավոր վկայությունը կասկերի ցեղերի մասին վերաբերում է խեթական արքա Խանտիլիսի կառավարման ժամանակաշրջանին (Ք.ա. 1590-1560թթ.)⁷: Խանտիլիս I-ը ստիպված էր պատերազմներ մղել երկու ճակատով՝ սիրիական խուրրիների և հյուսիսի կասկերի դեմ: Այդ ընթացքում կասկերը նվաճեցին և ավերեցին խեթերի կարևորագույն պաշտամունքային կենտրոններից մեկը՝ Ներիկը և Տիլիուռա քաղաքները⁸ (Հալիսի ստորին հոսանքներում՝ մերձսևծովյան գոտում), որի հետևանքով խեթական պետությունը կտրվեց սևծովյան ափամերձ տարածքներից: Խանտիլիսը հրամայեց նոր ամրություններ կառուցել Խաթթուսասի և հարակից քաղաքների շուրջ՝ հիմնականում հյուսիսից ապաստող վտանգի դեմ:

Խեթական արքա Տեղեպիմուսի (Ք.ա. 1525-1500թթ.) կառավարման մախօրեին խեթական պետությունը գերազանցապես սահմանափակվում էր Խաթթիի բնօրրանով՝ մայրաքաղաքի շրջակայքով և որոշ այլ տարածքներով: Հարավ-արևելքից խուրրիները, հյուսիսից և հյուսիս-արևելքից կասկական ցեղերը, իսկ արևմուտքից Ասսուվա հավաքական անվանումը կրող մանր պետականությունները պարբերաբար ասպատակում և ավերում էին երկիրը: Այժմ խեթերը չէին կարողանում պահպանել իրենց գերիշխանությունը ենթակա տարածքներում. ավելին՝ նրանց պետության բնօրրանը մույնպես վտանգի տակ էր գտնվում: Տեղեպիմուսին հաջողվեց վերականգնել Խեթական պետության թուլացած դիրքերը և որոշ չափով ամրապնդել պետությունը:

Թուլիսալիյաս I/II-ը (Ք.ա. XIVդ. I կես) կարողացավ նվաճել գրեթե ողջ Փոքր Ասիան: Մակայն այն ժամանակ, երբ խեթական հիմնական գործերը գտնվում էին թերակղզու արևմուտքում, հյուսիսից կասկական ուժերը

ներխուծեցին և ավերեցին խեթական պետության կենտրոնական շրջանները: Թուղխալիյասը ստիպված էր վերադառնալ Խաթթուսաս: Խեթական զորքերին հաջողվեց մաքրել երկիրը կասկերից, այնուհետև հետապնդելով նրանց՝ ներխուծել Կասկա, որտեղ նրանց դեմ դուրս եկավ կասկերի միացյալ բանակը: Ճակատամարտը տեղի ունեցավ Տիվարա բնակավայրի մոտ, որտեղ խեթերը հաղթանակ տարան և սկսեցին գրավել լեռներում գտնվող կասկերի դժվարամատչ ամրությունները: Հաջորդ տարի Թուղխալիյասը կրկնեց իր արշավանքը և նվաճեց Կասկա երկիրը⁹:

Թուղխալիյասին հաջորդած Առնուվանդաս I-ի օրոք (Ք.ա. XIV դ. I կես) կասկերն սկսել էին ասպատակել խեթահայատակ շրջանները՝ ավերելով մույնիսկ մայրաքաղաքին հարող բուն խեթական բնակավայրերը: Ավերվել և ամայացվել էին մի շարք խեթական հոգևոր կենտրոններ՝ Ներիկը, Խուրաման, Կաստաման, Սերիսան, Խիմուվան, Տագաստան, Կամմաման և այլ բնակավայրեր (Հալիսի ստորին հոսանքներում՝ մերձսևծովյան գոտում, խեթա-կասկական սահմանային գոտում): Այդտեղի տաճարները թալանվել էին, իսկ սպասարկող անձնակազմը գերեվարվել էր: Առնուվանդասը ջանքեր էր գործադրում ամրապնդել և ապահով դարձնել իր թագավորության հյուսիսային սահմանը: Նա պայմանագրեր կնքեց կասկական ցեղերի հետ¹⁰: Առնուվանդասը ուժերի գերագույն լարումով կարողացավ վերահսկողության տակ առնել իրավիճակը: Մակայն նրանից հետո այն կրկին սրվեց:

Ք.ա. XIII դ. Խաթթուսիլիս III-ի օրոք կազմված տեքստում¹¹ նկարագրվում է Առնուվանդասից հետո Խեթական տերությունում տիրող ծայրաստիճան ծանր վիճակը: Խաթթիին հարևան մի շարք երկրներ հարձակվել էին և նվաճել խեթական բազմաթիվ տարածքներ: Այսպես, կասկերը ավերել էին պետության կենտրոնական շրջանները՝ մայրաքաղաք Խաթթուսստով հանդերձ, իսկ Նեմասսա քաղաքն¹² իրենց սահմանն էին դարձրել:

Հնարավոր է, որ կասկերի լայնածավալ հարձակման պատճառով խեթական հիմնական ուժերը կենտրոնացել էին հյուսիսային ուղղության վրա, հատկապես որ վտանգված էր մայրաքաղաքը, ինչն անպաշտպան էր թողել խեթերին ենթակա տարածքները մյուս հարձակումներից:

Թուղխալիյաս III-ից (Ք.ա. 1360-1344 թթ.) մեծ ջանքեր են պահանջվել կորցրած տարածքները ետ գրավելու համար: Այդ պայքարում նրան օգնում էր որդին՝ արքայազն Սուպալիուլիումասը: Խեթական արքան իր հետագա զործողությունների համար հենակետ դարձրեց Վերին երկիրը¹³: Մակայն մախ և առաջ հարկավոր էր Վերին երկիրը անվտանգ դարձնել Կասկա և Հայասա երկրների հարձակումներից: Այդ երկրների դեմ արշավանքը ղեկավարել է Սուպալիուլիումասը, որը չհանդիպելով այդ երկրում (երկրի անուըն բաց է թողնված) Հայասայի զորքին՝ այնտեղ բախվել է Կասկա երկրի ուժերին և հաղթել նրանց: Ավելի ուշ արշավանքը կրկնվել է, և Սուպալիուլիումասի զորքը մորից հանդիպել է կասկերի մեծաքանակ ուժերին, որոնց օգնության էին եկել օգնական զորքեր (հավանաբար դաշնակից): Խեթերին հաջողվել է ծուղակը գցել նրանց և ջախջախել՝ մեծ քանա-

կությամբ գերիներ վերցնելով: Այնուհետև կռիվները շարունակվել են բուն հաթթիում: Այստեղ կասկական ուժերն առժամանակ նահանջել են՝ հնարավորություն տալով խեթերին վերականգնել իրենց ավերված քաղաքները: Թուղխալիյասն դրանից հետո իր ուժերն ուղղել է դեպի Փոքր Ասիայի արևմուտք: Օգտվելով խեթական բանակի հեռացումից՝ կասկերի ցեղերը Կատիսարիյա և Գազգապա բնակավայրերի կողմից (Հալիսի ստորին հոսանքներում, խեթականական սահմանային գոտում) հարձակվել և նորից ավերել են արքայազն Մուպպիլուլիումասի ամրացրած խեթական քաղաքները: Թուղխալիյասը վերադարձավ և գրավեց դրանք, իսկ օգնության եկած կասկական ուժերին պարտության մատնեց: Սակայն Թուղխալիյասին չհաջողվեց երկար ճաշակել իր հաղթանակի պտուղները. խեթականական պատերազմը դեռ ավարտված չէր: Շուտով կասկերի տասներկու ցեղերից բաղկացած աշխարհագորդ ներխուժեց հաթթի: Արքայազն Մուպպիլուլիումասը մեկ անգամ ևս հաղթեց նրանց և ետ խլեց վերցրած ավարը¹⁴: Կասկական ցեղերի ուժերը ջախջախելուց հետո միայն խեթերը կարողացան իրենց ուշադրությունը դարձնել պետության մյուս հատվածների վրա:

Թուղխալիյաս III-ին հաջորդած Մուպպիլուլիումաս I-ի օրոք (Ք.ա. 1344-1322թթ.) սկսվեց հաթթիի նոր վերելքը: Օգտվելով խաղաղությունից՝ խեթական բնակչությունը սկսեց վերադառնալ իր նախկին բնակավայրերը, որոնք գտնվում էին կասկական տարածքների մոտ: Սակայն այն բանից հետո, երբ կասկերին հայտնի դարձավ, որ խեթական բանակում համաճարակ է տարածված, նրանք հարձակվեցին և գերեվարեցին վերաբնակիչներին: Կասկերը մթության քողի տակ գրոհեցին նաև այդտեղ գտնվող խեթական գործերի ամրացված ճամբարների վրա: Սակայն խեթերին հաջողվեց ետ շարժել կասկերի գրոհը և ստիպել նրանց հեռանալ այդ տարածքներից: Մուպպիլուլիումասին հաջողվեց նաև կասկերին թշել Խստախառա երկրից¹⁵ և այնտեղ վերականգնել խեթական տիրապետությունը: Նա մուլ-նիակ իրեն ենթարկեց կասկերի «հանրահայտ Տիմուխալա քաղաքը»¹⁶:

Մուրսիլիա II-ն իր տարեգրության մեջ նշում է, որ այն ժամանակ, երբ իր հայրը (Մուպպիլուլիումաս I-ը) կռիվներ էր մղում խուրրիական երկրներում, հաթթիի թշնամի Կասկա երկիրը քիկուցեցից հարվածեց և ավերեց տեղության տարածքների մի մասը, իսկ մի մասն էլ զավթեց: Այստեղ առաջին անգամ հիշատակվում է Տիբիյա երկրի առաջնորդ Պիխսումիյան, որի կասկական ուժերը հարձակում էին գործել Վերին երկրի վրա և գրավել Խառիտինա երկիրը, այնուհետև հասել մինչև Ջագիսա երկիր¹⁷:

Խեթականական մի հերթական բախում էլ տեղի է ունեցել նախկինում խեթերին պատկանող սրբազան Ներիկ քաղաքի մոտ¹⁸: Ըստ խեթական աղբյուրի՝ խեթերն այստեղ հաղթանակ են տարել, բայց Ներիկն այդ ժամանակ չի ներառվել հաթթիի կազմի մեջ: Դա տեղի ունեցավ միայն Մուպպիլուլիումասի թոռան՝ հաթթուսիլիա III-օրոք:

Մուպպիլուլիումասի օրոք թեև հաթթին ջախջախեց Միտաննիին, մվաճեց Սիրիան ու սկսեց մրցակցել Եգիպտոսի հետ, սակայն կասկերի

հարցն այդպես էլ մնաց չլուծված: Այն ժամանակ, երբ հիմնական խեթական ռազմական ուժերը բացակայում էին բուն խաթթիից, կասկերը վերսկսեցին իրենց հարձակումները խեթական տարածքների վրա, և խեթերը հարկադրված եղան շատ տարիներ վատնել նրանց ասպատակությունների հետևանքները վերացնելու համար:

Հարևան երկրները սկսեցին թշնամանալ խեթական տերության դեմ դեռևս Սուպլիլիումաս I-ի կենդանության վերջին տարիներին, երբ համաճարակ էր տարածվել խաթթիում: Այնուհետև թշնամիների թիվը գնալով աճեց՝ պայմանավորված այդ արքայի և հաջորդ գահակալի՝ Անուվանդաս II-ի (Ք.ա. 1322-1321թթ.) մահով: Իսկ երբ խեթական գահը փոխանցվեց դեռահաս Մուրսիլիսին, քաղաքական իրավիճակը երկրում չկարգավորվեց¹⁹:

Մուրսիլիս II-ը (Ք.ա. 1321-1295թթ.) իր տարեգրություններում հաղորդել է այն մասին, որ թշնամի երկրները՝ այդ թվում նաև Կասկան, հարձակվել էին խեթական տարածքների վրա և ավերել դրանք: Իր կառավարման առաջին երկու տարիներին Մուրսիլիսը, այլ երկրների ապստամբությունները ճնշելուց զատ, զբաղված էր նաև կասկերի արշավանքների հետևանքները վերացնելով և նրանց դեմ պատժիչ գործողություններ ձեռնարկելով: Իր թագավորության միայն երրորդ տարում նրան հաջողվեց հաղթել կասկերին և իր ուժերը ուղղել դեպի Արծավա երկիր²⁰:

Իր գահակալության հիմնգերոդ տարում Մուրսիլիս II-ը լեռնային Աշխարպայա երկրում գրոհեց կասկական ուժերի վրա և հաղթելով նրանց՝ ազատագրեց դեպի Պալա երկիր տանող ճանապարհները: Հաջորդ տարի խեթերը նոր պատժիչ արշավանք ձեռնարկեցին Ջիխարիյա երկրի կասկերի դեմ, որոնց մեղադրեցին դեռևս Թուդխալիյաս III-ի ժամանակ Տար(1)իկարիմու լեռնային երկրի կողմից խաթթուսասի վրա արշավելու համար: Հավանաբար, սա միայն պատճառ էր, որպեսզի արդարացվեին խեթերի կողմից պատժիչ արշավանքի ընթացքում կասկերի դեմ գործադրված դաժանությունները: Ջիխարիյա երկիրը Տար(1)իկարիմու լեռնային երկրի հետ նվաճվեց, բնակչությունը սրի քաշվեց, իսկ բնակավայրերն ավերվեցին²¹: Այս երկիրը, հավանաբար, մոտ էր գտնվում մայրաքաղաքին, այդ պատճառով Մուրսիլիսն ավերեց այն, որպեսզի կասկերի հեթական արշավանքի համար այն հեմակետ չդառնա:

Սակայն Վերին երկրի անվտանգության հարցն այդպես էլ մնաց չլուծված, քանի որ այն սահմանակից էր ոչ միայն Կասկա երկրին, այլ նաև խաթթիի մեկ այլ վտանգավոր թշնամուն՝ Հայասային, որը նույնպես սպառնում էր այս խեթական երկրամասին և ժամանակ առ ժամանակ նաև համագործակցելով կասկերի հետ՝ ներխուժում այդ տարածքներ²²: Վտանգն առավել ցայտուն դարձավ, երբ կասկական Տիբիյա երկրի առաջնորդ Պիխիսունիյան իրեն հռչակեց թագավոր: Եթե նախկինում խեթերը բախվում էին լեռնաբնակ կասկական տարբեր ցեղերի հարձակումներին, որոնք, հավանաբար, միավորվում էին միայն խեթերի դեմ արշավանքների ժամանակ, ապա այժմ, Պիխիսունիյայի ի հայտ գալով, վտանգ ստեղծվեց,

որ կասկական ցրված ցեղերը կարող են միավորվել մեկ թագավոր-առաջնորդի իշխանության ներքո և ավելի կազմակերպված արշավանքներ ձեռնարկել խեթական տարածքների վրա: Խեթերի համար վտանգավոր էր հյուսիսում ունենալ կասկերի մեծ ռազմատենչ ցեղերի միացյալ-կենտրոնացված թագավորություն: Այդ պատճառով Մուրսիլիս II-ն ամմիջապես միջոցներ ձեռնարկեց՝ վերացնելու այդ վտանգը: Պատերազմի համար առիթ հանդիսացավ Պիխխուեիյայի հանդուգն պատասխանը խեթական արքայի պահանջին՝ վերադարձնել կասկերի կողմից գերված խեթահպատակներին և ազատել խեթական տարածքները: Խեթական զորքը ներխուժեց Տիբիյա, որտեղ տեղի ունեցած ճակատամարտում կասկական զորքը պարտություն կրեց, երկիրն ամայացվեց, իսկ Պիխխուեիյան գերվեց: Այնուհետև խեթերն իրենց իշխանությունը վերահաստատեցին Իստիտինա երկրում, որը մինչ այդ նվաճվել էր Պիխխուեիյայի կողմից²³: Կասկերի առաջնորդի հետագա ճակատագիրը մեզ հայտնի չէ: Հավանաբար, խեթական արքան նրան կա՛մ մահապատժի է ենթարկել, կա՛մ պատանդ է պահել՝ Տիբիյա երկիրը հնազանդ պահելու համար:

Սակայն կասկական խնդիրն այդպես էլ մնաց չլուծված: Իր թագավորման տասնիններորդ տարում Մուրսիլիսը կրկին արշավեց դեպի Կասկա երկիր: Կասկական Կապուպուվա բնակավայրի²⁴ մոտ տեղի ունեցած ճակատամարտում խեթական արքան հաղթանակ տարավ: Այս արշավանքի ընթացքում Մուրսիլիսը հավատիացնում էր, որ իրեն հաջողվել է հասնել այնտեղ, որտեղ մինչ այդ ոչ մի խեթական արքա ոտք չէր դրել: Խոսքը վերաբերում է Տակկուվախինա և Տախանտատիպա երկրների նվաճմանը²⁵: Իսկ իր թագավորման քսաներկուերորդ տարում Մուրսիլիս II-ը մորից արշավել է Կասկա երկիր, հաղթել կասկերի միացյալ բանակին, գրավել Տապապանուվա երկիրը²⁶, այնուհետև շարժվել դեպի Խաթենցուվա երկիր²⁷ և նվաճել Ջիթխարիյա բնակավայրը: Մուրսիլիսը նշում է, որ Տելիպինուս թագավորից հետո ինքն առաջինն էր, ով հասել է մինչ Խաթենցուվա երկիրը և նվաճել այն²⁸:

Մուրսիլիս արքան շարունակեց քայլեր ձեռնարկել պետության հյուսիսային սահմանները ամրացնելու ուղղությամբ: Նա իր կառավարման քսանչորսերորդ տարում նվաճեց և ավերեց կասկական մի շարք բնակավայրեր, որտեղից մեծ քանակությամբ ավար վերցրեց: Հաջորդ տարի Մուրսիլիսի զորքերը կրկին արշավանքի ելան և մի քանի կասկական բնակավայրերից բացի նվաճեցին նաև Կապեռի և Խումնա սրբավայրերը, որոնք չնայած չբախմվեցին, սակայն հարկատու դարձան խեթերին: Մուրսիլիսի կառավարման քսանվեցերորդ տարում խեթական կասկական պատերազմները վերսկսվեցին: Խեթական արքան գրավեց և ավերեց կասկական Տագաստա, Իտապուբա, Կաբուբուվա, Խութպա քաղաքները: Խութպայի մոտ տեղի ունեցած ճակատամարտում խեթերը հաղթանակ տարան: Այնուհետև Մուրսիլիսը գրավեց Ջագապուռա, Կասիպա բնակավայրերը, բարձրացավ Կապագապա լեռները, գրավեց Տախանտատիպան և Տակկուվախինան²⁹: Մուրսիլիս արքան ձեռնարկեց նաև կասկական տարածք-

ներին հարող ավերված բնակավայրերի վերաբնակեցման միջոցառումներ, որպեսզի ամրապնդելով դրանք՝ ամուր պատնեշ ստեղծի կասկական ներխուժումների դեմ (մասնավորապես, մա վերականգնեց դեռևս Խանտիլիս արքայի օրոք լքված Տիլիուռա քաղաքը, փորձ արեց մաս վերականգնել խեթական իշխանությունը սրբազան Ներիկ քաղաքի վրա): Այդ նպատակով հազարավոր մարդիկ նվաճված երկրներից և հենց Խաթթիի տարբեր շրջաններից վերաբնակեցվեցին այստեղ:

Մուրսիլիսին հաջորդած Մուվատալլիս II-ի օրոք (Ջ.ա. 1295-1272թթ.) նորից ծառացավ կասկական խնդիրը: Մուպալիլուլումասի և Մուրսիլիսի կողմից իրականացված ռազմական նվաճումները և վերաբնակեցման քաղաքականությունը բավարար չէին կասկական խնդրի վերջնական լուծման համար: Մուվատալլիսի թագավորման տարիներին նորից տեղի ունեցան կասկական ներխուժումներ դեպի տերության մայրաքաղաքից հյուսիս և հյուսիս-արևելք ընկած տարածքներ: Եգիպտոսի դեմ պատերազմի նախօրեին Մուվատալլիսը Խաթթիի մայրաքաղաքը տեղափոխեց հարավային Փոքր Ասիայում գտնվող երկրորդական նշանակություն ունեցող Թարխունտասսա բնակավայր: Այս ձեռնարկման պատճառները հիմնականում երկուսն էին: Արքան նպատակ ուներ նստավայր դարձնել Միրիային շատ ավելի մոտ գտնվող քաղաքը, որտեղից հեշտ էր ղեկավարել Եգիպտոսի դեմ սպառնող պատերազմը: Մակայն այս քայլին դիմելու առավել հիմնավոր պատճառ էր մայրաքաղաք Խաթթուսասին մշտապես սպառնացող կասկական վտանգը: Մինչ այդ տեղի էր ունեցել հեթոսկան ասպատակություն, որի ժամանակ կասկական միացյալ զորքերը (բաղկացած 800 մարտակառքից և մեծ քանակությամբ հետևազորից), անցնելով Մարասսանտիյա (Հալիս) գետը, հասել էին մինչև Կանեշ (ներկայիս Բյուրթեփե, Կայսերիի մոտ³⁰): Կասկական երկրներից հիշատակվել են առավել հզոր երեքը՝ Խիսուպիտտան, Պիսիտուրուն և Տաիստիպան³¹, որոնց առաջնորդներն էլ, հավանաբար, ղեկավարել են այս արշավանքը³²:

Կասկերի վտանգավոր ավարառուական արշավանքները չեզոքացնելու համար Մուվատալլիսը նրանց երկրին հարող ողջ սահմանամերձ գոտին, այդ թվում՝ Վերին երկիրը, հանձնեց իր փորձառու եղբորը՝ Խաթթուսիլիսին: Նրան հանձնված տարածքներում կազմակերպվում էր յուրաքանչյուր ռազմականացված գոտի: Այն արևմուտքից արևելք ձգվում էր մոտավորապես ժամանակակից Մերգիֆոնից մինչև Միվաս-Մեբաստիա՝ ընդգրկելով կասկական ցեղերին հարող մի շարք առանցքային շրջաններ (Խիսուպիտտա, Մարիտտա, Խիսասիսապա, Կատապա, Խանխանա, Դառախանա, Խաթթեմա, Դուրմիտտա, Պալա, Տումմանա, Գասսիյա, Մապպա, Խուլան գետի երկիրը³³): Մուվատալլիսը Խաթթուսիլիսին նշանակեց մաս Խակալիս երկրի թագավոր: Փաստորեն, խեթական արքան կասկական խնդրի լուծումը փորձեց գտնել սահմանամերձ թագավորության ստեղծումով³⁴: Այժմ տերության կենտրոնական նահանգներին վտանգ չէր սպառնում, և Մուվատալլիսը սկսեց ազատ գործել հարավում: Համեմայն դեպս, Ջ.ա. 1274թ. Միրիայի Քադեշ քաղաքի մոտ տեղի ունեցած խոշոր ճակա-

տամարտում, ի թիվս այլ երկրների, որոնք ճակատամարտին մասնակցել են խեթական կողմից, եգիպտական տեքստում նշվել է նաև Կասկա երկիրը³⁵։ Սա կարող է փաստել միայն այն մասին, որ կա՛մ այդ ժամանակ կասկական որոշ ցեղեր ենթարկվում էին Խաթթիին, կա՛մ ճակատամարտին մասնակցել են վարձկան կասկ զինվորներ, ինչն ավելի հավանական է։ Այս գործում, հավանաբար, կարևոր դեր է ունեցել Խաթթուսիլիսը։ Մուվատալլիսին հաջորդեց նրա որդին՝ Ուրխի-Թեշուրը (Ջ.ա. 1272-1267թթ.), որի կառավարման տարիներն անցան հորեղբոր՝ Խաթթուսիլիսի հետ հասկամարտության պայմաններում։ Այս առճակատման ընթացքում մի շարք կասկական ցեղեր օժանդակեցին Խաթթուսիլիսին՝ խեթական տարածքներում բնակվելու իրավունք ստանալու դիմաց³⁶։ Խաթթուսիլիսի (Ջ.ա. 1267-1237թթ.)՝ արքա հռչակվելուց հետո ոչ մի հիշատակություն չկա այն մասին, որ կասկերն արշավել են Խաթթիի վրա. նույնը նաև նրա հաջորդ Թուղխալիյասի օրոք։ Ավելին, եգիպտական մի արձանագրությունում նշվում է, որ Խաթթիի տիրակալը (Խաթթուսիլիսը), փարավոնին կնության տալով իր դստերը, նաև հարուստ ընծաներ է ուղարկել Կասկա (տեքստում տրված է Կեշկեշ) և Արծավա երկրներից³⁷։ Սա կարող է փաստել այն մասին, որ կասկերի մի մասը այդ ժամանակ ենթակա էր խեթերին։

Կասկերի վերաբերյալ ժամանակագրորեն վերջին հիշատակությունը³⁸ խեթերի մոտ հանդիպում ենք Խաթթիի արքա Թուղխալիյաս IV-ի (Ջ.ա. 1237-1209թթ.) կառավարման շրջանից։ Այս հաղորդումը տեղեկություն է պարունակում Թուղխալիյաս IV-ի կողմից Խաթթիի սահմանային նահանգների կառավարիչներին տրված հրահանգների մասին։ Խաթթիի արքան, հավանաբար, ցանկացել է նախագգուշական միջոցներ ձեռք առնել ընդդեմ Ազգի, Կասկա և Լուկկա երկրների։ Ուրեմն, նշված ժամանակաշրջանում Խաթթին քարիդրացիական հարաբերությունների մեջ չի եղել Կասկայի հետ։ Թուղխալիյասին հաջողվեց ժամանակավորապես կայունացնել իրավիճակը, սակայն նրա հաջորդ Ամուվանդաս III-ի կարճատև կառավարումից հետո իշխանության եկած մյուս որդու՝ Մուպպիլուլիումաս II-ի օրոք Ջ.ա. XIIդ. սկզբներին Խեթական տերությունը հետացավ պատմական ասպարեզից, ինչի վկայությունը խեթական գրավոր ավանդույթի ընդհատումն է և մայրաքաղաք Խաթթուսասի ու կենտրոնական Փոքր Ասիայի մի շարք քաղաքների ավերածությունները և ապաքնակեցումը։

Հաշվի առնելով խեթերի հյուսիսային, հյուսիս-արևելյան հարևան կասկական ցեղերի կողմից Խաթթուսասի և շրջակա քաղաքների վրա մշտապես կատարվող ավերիչ արշավանքների մասին բազմաթիվ հիշատակությունները խեթական աղբյուրներում՝ մասնագետների մի մասը հենց նրանց կամ միաժամանակ մի քանի ժողովուրդների հարձակմանն է վերագրում կենտրոնական Փոքր Ասիայի՝ Ջ.ա. XIIդ. սկզբի ավերածությունները³⁹։

Կասկերի և թերակղզու այլ ժողովուրդների մասնակցությունը նշված իրադարձություններին տրամաբանական է ոչ միայն նախորդ ժամանակաշրջանի նմանատիպ դեպքերի, այլև Ջ.ա. XIIդ. կեսերին կասկերի՝

մեկ այլ ուղղությամբ ընթացած տեղաշարժերի տեսանկյունից: Խոսքը վերաբերում է Թիզլաթպալասար I-ի կողմից Հայկական լեռնաշխարհի արևմուտքում կասկերի և այլ ժողովուրդների շարժումների հիշատակությանը:

Ասորեստանի թագավոր Թիզլաթպալասար I-ը (Ք.ա. 1115-1077թթ.) հայտնում է, որ 4000 կասկեր և ուրումեացիներ մեղիսուծել են Ասորեստանին ենթակա Սուբարտու երկիր և գրավել նրա քաղաքները, այնուհետև, հավանաբար, տեղի տալով ասորեստանյան գերագանցող ուժերին՝ հնազանդվել և ենթարկվել են Ասորեստանի արքային: Նույն իրադարձության մասին են պատմում Թիզլաթպալասարի ևս երկու տեքստեր, որտեղ կասկերի փոխարեն հիշատակվում են ապիշլուները⁴⁰:

Կասկերի առաջխաղացումը Ք.ա. XIIդ., հավանաբար, աշխարհագրական ավելի լայն բնույթ է կրել և տարածվել Սև ծովի հարավային ափերից մինչև Հյուսիսային Միջագետք: Այդ արշավանքներն, ինչպես և մախկինում, կրել են ավելի շատ ավարառուական բնույթ:

Ասորեստանի արքա Թիզլաթպալասար III-ը (Ք.ա. 744-727թթ.) տեքստերից մեկում տալիս է այն մարդկանց ցանկը, որոնք տարբեր երկրներից մվերներ էին բերել իրեն: Դրանց մեջ բազմաթիվ երկրների շարքում նշվում է նաև Կասկայից Դադիլուն⁴¹: Կասկա երկիրը նշվել է Մելիդ (հետագայի Մալաթիայի շրջան) և Թաբալ (հետագայի Կապադովկիայի տարածքը) երկրների մոտ: Այսինքն՝ այդ ժամանակաշրջանում կասկերը ստեղծել էին մի քաղաքական միավոր՝ Հալիսի մեծ ոլորտից հարավ-արևելք, որի մասին, կցկտուր տեղեկությունները, սակայն, հնարավորություն չեն տալիս կարծիք կազմելու դրա պետական կառուցվածքի և հարևանների հետ քաղաքական-տնտեսական հարաբերությունների մասին: Հավաստի է այն, որ կասկերը հարկատու են եղել ասորեստանցիներին և այլևս իրենցից չեն ներկայացրել ռազմական հզոր ուժ: Ավելին՝ նրանք, արդեն Ք.ա. VIIIդ. վերջում թուլանալով, նվաճվում են ասորեստանցիների կողմից:

Ք.ա. VIIIդ. երկրորդ կեսին Առաջավոր Ասիայի քաղաքական կյանքում տեղի ունեցած գլխավոր իրադարձությունը երկու խոշորագույն տերությունների՝ Ասորեստանի և Վանի թագավորության մրցակցությունն էր արևելյան Փոքր Ասիայի և Հյուսիսային Միդիայի համար: Ասորեստանի արքա Սարգոն II-ը (Ք.ա. 721-705թթ.), տարեգրություններից մեկում նշելով իր հաղթանակների մասին, հայտնում է, որ Կասկու, Թաբալու, Խիլակեկու երկրների բնակիչներին մա տարհանել է, իսկ մուշկերի երկրի Միտտային՝ վտարել իր երկրից⁴²: Մեկ այլ տեքստում Ասորեստանի արքան տալիս է այն երկրների ցանկը, որոնք մա նվաճել էր. այստեղ հիշատակվել է նաև Կասկու երկիրը⁴³: Կասկուն նշվել է Ուրարտու և Թաբալ երկրների միջև: Սարգոնն ակնհայտորեն ձգտում էր փոփոխել ժողովրդագրական վիճակը արևելյան Փոքր Ասիայում, ինչը կատարվում էր բռնի և դաժան միջոցներով՝ տեղական բնակչության ոչնչացմամբ և Ասորեստանից սեմական բնակչության բնակեցմամբ այդ տարածաշրջանում: Ասորեստանյան աղբյուրների հիշատակած Կասկու երկրի տարածքում Ք.ա. VIIIդ. վերջում նաև

հայտնվում են ռազմունակ կիմմերական ցեղերը: Սարգոն-II-ի՝ Կասկու երկրի հիշատակումը վերջինն է, որից հետո որևէ այլ հիշատակություն չկա այս երկրի և ժողովրդի մասին:

Հավանական է կարծել, որ կասկերի մի մասը ձուլվեց կամ զոհ դարձավ ասորեստանյան և կիմմերական արշավանքներին, իսկ մյուս մասն, անբարենպաստ քաղաքական պայմաններից ելնելով, վերադարձավ նախնական բնակության վայրերը (Արևելապոնտական լեռներ), կամ Փոքր Ասիայից անցավ դեպի Կովկաս: Հետագայում նրանք հայտնի դարձան՝ որպես ադրդա-չերքեզական ցեղեր (հին հայ. գաշք, հին վրաց. քա-շագ, բյուզ., հուն. կասսախսա, արաբ. կաշակ, հին ռուս. կոսոգ):

ROBERT GHAZARYAN

THE LAND OF KASKA ACCORDING TO CUNEIFORM SOURCES

The main sources of valuable data about the land of Kaska are Hittite and some Assyrian cuneiform texts.

In the II c. B.C. the Kaska tribes inhabited mainly the area of Pontus Mountains. Until now it is not discovered whether the Kaska people were autochthon to the area or newcomers. Nevertheless, there were no written data about them and no brightly expressed archaeological Kaskan culture until the middle of the II c. B.C.

The name of the Kaskans has long been assimilated with the name of the North-Caucasian Cherkess. Instead of Kaska the Assyrian sources of the end of the II c. B.C. used the tribal name apishlu (abeshla), which is similar to the Caucasian tribal name apshua. Thus, through ethnonyms a connection is established between the Asia Minor Kaskans and north Caucasian tribes. By saying Kaska the Hittites meant not one total political union, but numerous tribal unions that had different stages of development, who often united in order to make attacks on Hatti or to defend themselves from the raids of the Hittite army.

For centuries the Hittite kings made great efforts to put an end to the Kaskan attacks on the central parts of the state, but they failed to do that. The Kaskans had a great role in the fall of the Hittite Kingdom.

After the VII c. B.C. there is no mention of Kaskans in the texts that tell about the historical events of Asia Minor. It can be supposed that part of the Kaskans were assimilated or fell victim to the Assyrian and Cimmerian raids. Taking into account the inauspicious political situation some of them returned to the former habitat (Pontus Mountains), or went from Asia Minor to Caucasus where they became known to us as Adyghe-cherkess tribes (gashq, qashag, kasakha, kashak, kosog):

ՇԱՆՈՅԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ARI, II, 9, 26. АВРИУ, 10 (II, 89), 11, 12, 13. Հին հայ. գաշքը, հին վրաց. քաշագը, բյուզ., հուն. կասսախսան, արաբ. կաշակը, հին ռուս. կոսոգը ադրդ-չերքեզների անվանումն է: Հուն. Ἀπσιλαί, լատ. Absilae, հին հայ. ափշեղք, վրաց. ափշլի ձևերը ներկայիս Աբխազիայի տարածքում Կոդոր գետի շրջանում բնակված հնագույն ցեղերի

- և նրանց տարածման վայրի անվանումներն են: Հմմտ., արխագներ, ա-ափ-ս-ու, ա-ափ-շ-ուս ինքնանվան հետ: Նրանք նույնպես արխագադղական ծագում ունեին: Տե՛ս Մеликишвили Г., Наири-Урарту, Тбилиси, 1954, с. 75-76; նույնի՝ К истории древней Грузии, Тбилиси, 1959, с. 120-121; Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 42, 101, 129:
2. Меликишвили Г., Наири-Урарту, Тбилиси, 1954, с. 73, 410; Гиоргадзе Г., К вопросу о локализации и языковой структуре касских этнических и географических названий, ПАСБ, Москва, 1961, № 1, с. 161ff.; Schuler E.von, Die Kaškäer, Ein Beitrag zur Ethnographie des alten Kleinasien, Berlin, 1965, S. 100ff; Дьяконов И., Предыстория армянского народа. История Армянского нагорья с 1500 по 500 г. до н.э. Хурриты, лувийцы, протоармяне, Ереван, 1968, с. 12.
3. Մеликишвили Г., К истории древней Грузии, Тбилиси, 1959, с. 168-169; Дьяконов И., О языках древней Передней Азии, Вопросы Языкознания, 1954, № 5, с. 47; Дунаевская И., О характере и связях языков древней Малой Азии, Вопросы Языкознания, 1954, № 6, с. 76-78.
4. Götze A., Die Annalen des Mursiliš, MVAG, 1933, № 38, S. 88-89.
5. Schuler E.von, Die Kaškäer, Ein Beitrag zur Ethnographie des alten Kleinasien, Berlin, 1965, S. 75-78.
6. Խեթական արքաների թագավորման տարեթվերը տրված են ըստ Թրեյնի Բրայսի աշխատության մեջ նշված ժամանակագրության՝ Bryce T., The Kingdom of the Hittites, Oxford, 1999, p. XIII-XIV.
7. KUB XXI 29 (Schuler E.von, Die Kaškäer, S. 145-148) (Այս խեթական տեքստում Խարթուսիլիս III-ը (Ջ.ա. 1267-1237թթ.) իշխատակում է, որ Տիլուտում կասկերը ավերել էին դեռևս Խամտիլիսի օրոք)։ Որոշ հետազոտողներ գտնում են, որ կասկերի մասին գրավոր առաջին վկայությունը վերաբերում է Խամտիլիս II-ի ժամանակաշրջանին (Ջ.ա. XV դար), տես՝ Schuler E.von, Die Kaškäer, S. 24-27; Bryce T., The Kingdom of Hittites, p. 121.
8. RGTC, VI, 286-289, 421-422.
9. KUB XXIII II III 9-26 (Garstang J., Gurney O., The Geography of the Hittite Empire, London, 1959, p. 122-123; Այստեղ սխալմամբ այս դեպքերը վերագրվել են ավելի ուշ (Ջ.ա. XIII դարի վերջ) թագավորած Թուդսալիս IV-ին)։
10. CTH 375 (Schuler E.von, Die Kaškäer, S. 152-167).
11. KBo VI 28+KUB XXVI 48 (CTH 88).
12. RGTC VI, 282-283 (Հավանաբար գտնվել է Հալիս գետի ափին, նրա հարավային ոլորանի մոտ. տես՝ Bryce T., The Kingdom of Hittites, p. 158-159).
13. Վերին երկիրը (խեթ. KUR ^{URU}UGU^{RU}) գտնվել է Խեթական տերության հյուսիս-արևելքում՝ Հալիսի վերին հոսանքներից մինչև Վերին Եփրատի մեծ ոլորանն ընկած տարածքում՝ հյուսիսում հասնելով մինչև Գալլ գետի ավազանը (տես՝ RGTC, VI, 293-294)։
14. Güterbock H., The Deeds of Suppiluliuma as told by his Son, Mursili II, JCS, 1956, № 10, p. 62-67.
15. RGTC VI, 150-151.
16. Güterbock H., The Deeds of Suppiluliuma as told by his Son, Mursili II, p. 90-92, 110 (RGTC VI, 423-424. Հավանաբար գտնվել Հալիսի ստորին ավազանում)։
17. Götze A., Die Annalen des Mursiliš, MVAG, 1933, № 38, S. 86-89, 152-153.
18. Güterbock H., նշվ. աշխ., էջ 117-118։
19. Götze A., նշվ. աշխ., էջ 14-21։
20. Götze A., նշվ. աշխ., էջ 22-29, 42-45։
21. KBo III 4 = 2BoTU 48; 2 BoTU 53 (Götze A., նշվ. աշխ., էջ 76-81; RGTC VI, 46-47, 406).
22. Գալլ գետի վերին ավազանը համընկած է կասկերի և հայաստանի շփման գոտին։ Տես՝ Yakar J., Beyond the Eastern Borders of the Hittite Empire: an Archaeological Assessment. In: Hittite and Other Anatolian and Near Eastern Studies in Honour of Sadat Alp, Ankara, 1992, p. 510.

23. Götze A., նշվ. աշխ., էջ 88-95:
24. RGTC VI, 176-177.
25. Götze A., նշվ. աշխ., էջ 150-151; RGTC VI, 376-377, 388.
26. RGTC VI, 162-163.
27. RGTC VI, 102-103.
28. Götze A., նշվ. աշխ., էջ 162-165:
29. Götze A., նշվ. աշխ., էջ 166-189:
30. RGTC VI, 169-170.
31. RGTC, VI, 146-147, 316-317, 382.
32. Otten H., Die Apologie Hattušiliš III. Das Bild der Überlieferung, Wiesbaden, 1981, StBoT 24, § 6, II 2-10, § 7, II 34-37.
33. Otten H., Die Apologie Hattušiliš III. p. 56-60.
34. CTH 81; Friedrich J., Hethitisches Elementarbuch, II T., Heidelberg, 1946, S. 10-14.
35. Gardiner A., The Kadesh Inscriptions of Ramesses II, Oxford, 1965.
36. Bryce T., The Kingdom of Hittites, Oxford, 1999, p. 287-288.
37. Bryce T., The Kingdom of Hittites, p. 315.
38. KUB XXVI 12 (Forrer E., Hajasa-Azzi, Caucasica, 1931, № 9, S. 22; Ջոսյան Ա., Մ.թ.ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը, Երևան, 1999, էջ 71; Хачатрян В., Восточные провинции Хеттской империи (Вопросы топонимики), Ереван, 1971, с. 161, « 21. Տեքստը սխալմամբ վերագրվել է Խաթթու-սիլիս III-ին)։
39. Schuler E. von, Die Kaššäer, Berlin, 1965, S. 65; Lehmann G., Der Untergang des hethitischen Gross-reiches und die neuen Texte aus Ugarit, Ugarit-Forschungen, 2, 1970, S. 47f.; Ջոսյան Ա., Էբնիկական տեղաշարժերը Փոքր Ասիայում և Հայկական լեռնաշխարհում մ.թ.ա. XII դարում («Շուլի ժողովուրդներ», մուշկեր և ուրումեացիներ), ՊՐՀ, 1991, № 1, էջ 76 և այլն: Ըստ Ի.Ջինգերի, «ժուլի ժողովուրդների» Փոքր Ասիայի հարավային ափերով դեպի Միդիա շարժման հետևանքով Խաթթին պիտի զրկվեր իր սիրիական կախյալ երկրների հետ կապից, ինչպես նաև եգիպտոսից ու Միդիայից եկող հացահատիկի առաքումներից: «Շուլի ժողովուրդների» դեմ մղած պայքարից և մերձքի պակասից թուլացած Խեթական տերությունը կարող էր հեշտությամբ զոհ գնալ կասկերի հարձակմանը (Singer I., The Battle of Nihriya and the End of the Hittite Empire, ZA, 1985, № 75, p. 120ff):
40. ARI, II, 9, 26. АВИИУ, 10 (II, 89), 11, 12, 13.
41. АВИИУ, 44.
42. АВИИУ, 47.
43. АВИИУ, 53.

Հապավումներ

ՊՐՀ – Պատմա-քաղաքական հանդես, Երևան:

АВИИУ – Дьяконов И., Ассиро-вавилонские источники по истории Урарту, Вестник Древней Истории, 1951, № 2, 3, 4; 265-356, 207-264, 283-305 с.

ПАСБ-Переднеазиатский сборник, Москва.

ARI, II – Grayson A.K., Assyrian Royal Inscriptions, vol. II, part 2, Wiesbaden, 1976.

BoTU-Boğhazköi-Texte in Umschrift. Leipzig, 1922 ff.

CTH-Laroche E., Catalogue des textes hittites, Paris, 1971.

JCS – Journal of Cuneiform Studies, New Haven, 1947 ff.

KUB-Keilschrifturkunden aus Boğhazköi. Berlin, 1921 ff.

KBo-Keilschrifttexte aus Boğhazköi, Leipzig und Berlin, 1916 ff.

MVAG- Mitteilungen der Vorderasiatisch-ägyptischen Gesellschaft, Berlin und Leipzig, 1896ff.

RGTC VI-Del Monte G., Tischler T., Répertoire Géographique des Textes Cunéiformes, № VI, Die Orts-und Gewässernamen der hethitischen Texte, Wiesbaden, 1978.

StBoT-Studien zu den Boğazköy-Texten, Wiesbaden.

ZA-Zeitschrift für Assyriologie und Vorderasiatische Archäologie, Berlin.

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՎԱՐԴԱՎԱՌԻ ԽՈՐՀՐԴԻ ՄԱՍԻՆ»
 ԴԱՌԸ ՈՐՊԵՍ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ
 ՄՏԶԻ ՀՈՒՇԱՐՁԱՆ

Պատմահայր Մովսես Խորենացու գրական ժառանգությունը միշտ գտնվել է հայագետների ուշադրության կենտրոնում: Ուսումնասիրության առարկա են դարձել հիմնականում Խորենացու «Հայոց պատմության» հետ առնչվող գիտական հիմնախնդիրները, մինչդեռ նրա մեծարժեք աստվածաբանական ժառանգության վրա պատշաճ ուշադրություն չի դարձվել: Այս առումով մեծ հետաքրքրություն է ներկայացնում նրա անվան տակ մեզ հասած «Վարդավառի խորհրդի մասին» ճառը: Սույն հոդվածում փորձ է արվելու իմաստավորելու և արժևորելու այս ճառը որպես աստվածաբանական մտքի հուշարձան, չանդրադառնալով նրա վավերականության և հեղինակային պատկանելիության բանասիրական կնճռոտ խնդիրներին:

Վարդավառը՝ Քրիստոսի Պայծառակերպության տոնը հնուց ի վեր առանձնահատուկ նշանակություն է ունեցել եկեղեցու համար: Հատկապես մեծ էր նրա կարևորությունը արևելյան եկեղեցիների համար: Այս տոնը կապված է Քրիստոսի կյանքի կարևորագույն իրադարձություններից մեկի հետ, երբ Նա, Իր երեք ընտրյալ աշակերտների՝ Պետրոսի, Հակոբոսի և Հովհաննեսի հետ միասին բարձրացավ լեռ, (ըստ ավանդության, դա Թաբոր լեռն էր) և այնտեղ հրաշք կատարվեց: «Եվ Նրա դեմքը փայլեց ինչպես արեգակը, և Նրա զգեստները դարձան սպիտակ ինչպես լույսը: Եվ ահա նրանց երևացին Մովսեսն ու Մոիսեն, որ խոսում էին Նրա հետ»: (Մատ. Ժ 2-3) Քրիստոնեական ավանդույթի համաձայն, Քրիստոսից Թաբոր լեռան վրա ճառագած լույսը ոչ թե նյութական մի երևույթ էր, այլ Աստծո անեղ ներգործություն, և, ըստ այդմ, այդ լույսը տեսած առաքյալները տեսան Աստծուն: Ուստի Վարդավառը կարելի է Աստվածատեսության տոն անվանել, և դա չափազանցում չէ: Աստվածատեսության հոգևոր փորձը քրիստոնեական հոգևոր կյանքի առանցքն է կազմում, քանզի Նոր Կտակարանում ասված է. «Գիտե՛մք, որ երբ Նա հայտնվի, լինելու ենք նրա մասն, քանի որ Նրան տեսնելու ենք այնպես, ինչպես նա կա»: (Ա Հովհ. Գ 2) Սակայն մոյն Նոր Կտակարանում ասված է նաև, որ Աստված անճանաչելի է, որ «Աստծուն ոչ ոք երբեք չի տեսել»: (Ա Հովհ. Դ. 12)

Առաջին հայացքից այստեղ առկա է ակնհայտ հակասություն, սակայն պետք չէ մոռանալ, որ գերզգայական, հոգևոր իրողությունները պարտավոր չեն ենթարկվել ձևական տրամաբանության օրենքներին, որոնք ամբողջապես արտաժված են նյութական, զգայական աշխարհի երևույթներից և օրենքներից: Սույն հակօրինության (անտիմոմիայի) պատճառը ճիշտ ըմբռնելու համար նախ անհրաժեշտ է հասկանալ, թե ինչ էր իրենից ներկայացնում առաքյալների Թաբոր լեռան վրա տեսած լույսը: Դա, անշուշտ, նյութական կամ զգայական երևույթ չէր: Ըստ Խորենացու, «Եվ

դարձել էր Թաբորը որպես նոր Սինա սուրբ լեռ և լուսեղեն աստվածաբնակ վայր՝ հրավառ և ամպով պատված, նաև՝ նոր երկինք՝ Աստվածության ճառագայթներով բարձրացած երկրի վրա և պայծառագեղատ պսակված արփիափայլ հրաշքով»¹։ Հետևաբար, Քրիստոսից ճառագած լույսն աստվածային էր, և որևէ առնչություն չունեի համապատասխան ֆիզիկական երևույթի հետ։ Հարկ է նշել, որ թեև այդ լույսն, անմյուսակամ լինելով, չպիտի շփոթվի սովորական լույսի հետ, սակայն այն չպիտի համարվի նաև մի սոսկական այլաբանություն։ Այդ լույսը գերզգայական հայեցողության առարկա է, և հոգևոր զգայարանների վրա ներգործում է ճիշտ այնպես, ինչպես արեգակի լույսը ներագործում է աչքի վրա։ Փաստորեն, դա ոչ այլ ինչ էր քան աստվածային շնորհի լույսը, որի ներընդունումն ընկած է քրիստոնեական հոգևոր կյանքի հիմքում։ Արևելաքրիստոնեական աստվածաբանությունը ավանդաբար մույնացնում էր այն Աստծո անեղ ներգործության հետ, որի շնորհիվ Ս. Երբորդության անդրանցական անճանաչելի եությունն ի հայտ է գալիս աշխարհին։ Աստծո անեղ լույսի մասին վարդապետությունը սերտորեն կապված է այդպես կոչված «ապոֆատիկ» անճառելի աստվածաբանության հետ, որ իր դասական դրսևորումն է գտել Արեոպագիտիկաներում։ Այս աստվածաբանության համաձայն, Աստծո եությունը միանգամայն անճանաչելի և անճառելի է, և նրան չի կարելի վերագրել որևէ կոնկրետ հատկություններ։ Սակայն եկեղեցու Հայրերը դրանից չէին եզրակացնում, որ արարածները Արարչի մասին առհասարակ որևէ բան իմանալ չեն կարող։ Ըստ Աստծո պատկերի և մմանության ստեղծված մարդկային բնությունը թեև խաթարված է մեղքով, սակայն Ս. Հոգու շնորհի և առաքինասեր վարքի միջոցով կարող է նորոգվել և սրբագործվել, և մարդը հնարավորություն է ստանում վերագտնելու աստվածագիտության իր կարողությունը։ Ըստ Խորենացու «Իսկ մեր բանական բնության երկիրը լուսագարդված ցնծում է Աստուծո գալստեամբ՝ զարդարված մշտազվարճ առաքինության նորափետուր ծաղիկներով, և բարձրանալով հավատքի լեռը, տոնասերներին պսակում է ոսկեճաճանչ իմաստության ծաղիկներով, և աստվածագիտության բուրումը երկնախոհների միտքը ամբողջապես լցնում է անուշահոտությամբ»²։

Խորենացու ալյն ճառում իր վառ դրսևորումը ստացած արևելաքրիստոնեական աստվածաբանության կարևորագույն գաղափարներից մեկն այն է, որ Աստված, մի կողմից, բացարձակապես անդրանագական է և անմառչելի, իսկ մյուս կողմից՝ Նա ի հայտ է գալիս աշխարհին, և Նրա ներկայությունը կարող են անմիջականորեն ընկալվել արարածների կողմից։ Աստվածային եությունը վեր է ոչ միայն մարդկային, այլև հրեշտակային ճանաչողությունից։ Աստված գերիվերո է բոլոր իմաստասիրական կատեգորիաներից, և աստվածային եության կամ գոյության մասին խոսելիս, մենք երբեք չպիտի մոռանանք մարդկային լեզվի աստվածային գոյը նկարագրելու անկարողության մասին։ Սակայն դրա հետ մեկտեղ Աստված, քննալ չկորցնելով Իր խորհրդավորությունը, դրսևորվում է աշխարհում Իր ներգործությունների միջոցով։ Աստծո ներգործությունը ոչ Նրա մասն է, ոչ

էլ արարված մի բան: Այն նույնքան անեղական է, որքան Աստծո խորությունը: Վերջինս ամբողջապես դրսևորվում է ներգործության մեջ, միաժամանակ մնալով սքողված և խորհրդավոր: Լոկ Աստծո ներգործությունն է ճանաչելի, ուստի աստվածագիտությունը կարող է վերաբերել միայն նրան, այլ ոչ թե խորյանը: Աստծո ներգործությունները բազմազան են ու բազմապիսի, Արեւոյագիտիկաներում նրանք աստվածային անուններ են անվանվում, սակայն նրանց բազմակիությունը բնավ չի հակասում Աստծո միեղիւնությանը: Ներգործությունները պատկանում են Ս. Երրորդության բոլոր Անձներին, և սեփական անձ չունեն: Եկեղեցու Հայրերի համար դա բնավ վերացական փիլիսոփայական տեսություն չէր, քանի որ նրանց միտքը հիմնված Ս. Գրքի և անձնական խորհրդապաշտական փորձի վրա: Նրանք այդ ներգործությունները նույնացնում էին Աստծո փառքի լույսի հետ, որի մասին բազմիցս ասված է Աստվածաշնչում: Օրինակ «Եվ այն քերովքների վրայից օդի մեջ վեր բարձրացավ Տիրոջ փառքը, որ տաճարում էր. տաճարը լցվեց ծխի ամպով, սրահն էլ լցվեց Տիրոջ փառքի լույսով»: (Եզեկ. Ժ, 4): Այս գաղափարը իր չափազանց վառ դրսևորումն է ստացել մահ միջնադարյան հայ հոգևոր բանաստեղծության մեջ, որի, թերևս, լավագույն օրինակը Շողակաթի կանոնի հանրահայտ շարականն է. «Էջ Միածինն ի Հորէ, Եւ լոյս փառաց ի նրմա. Չայնք հընչեցին Սանդարամետք անդնդոց: Տեսեալ ըզլոյս մեծ՝ Հայրապետին Գրիգորի պատմէր ցնծութեամբ հաւատացեալ արքային: Եկայք շինեսցուք Սուրբ ըզխորանն լուսոյ, քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի»: Այդ նույն լույսի մասին է գրում մահ Խորենացին. «Սա է, արդարև, ցնծության և ուրախության օրը, որ Տերն արարեց. սա է Աստուծոյ մեծ փառքի ծագման օրը, որը նոր արքայության սկիզբն է և էական լույսի հայտնությունը և հավիտենական հույսի նկարագիրը»³:

Անեղ լույսի մասին վարդապետությունը բնավ վերացական աստվածաբանական տեսություն չէր, այն սերտագույն կերպով կապված էր քրիստոնեական հոգևոր կյանքի բուն խորյան հետ: Այդ լույսի հայեցողությունը քրիստոնյա խորհրդապաշտներին, և հատկապես խիխաստներին հայտնի գերագույն հոգևոր վիճակն էր: Այդ լույսն ուներ զանազան դրսևորումներ, սկսած ներքին պայծառացումից վերջացած արտաքին շողարձակումով, որն ընկալելի էր անզամ սովորական տեսողության համար: Թաքոր լեռան վրա առաքյալների տեսած Քրիստոսի պայծառակերպության լույսը դրա ամենավառ, սակայն բնավ ոչ միակ օրինակն էր: Այդ լույսը առաջոք կամ անցողիկ մի երևույթ չէ, այն հավիտենական է և անանց: Առաքյալներն ի գործու եղան հայելու այն, քանի որ նրանց մարդկային բնությունը սրբագործված էր Ս. Հոգու շնորհով: Այդ վեհագույն հոգևոր փորձը իր ամբողջությամբ մատչելի է լինելու միայն հանդերձյալ կյանքում, սակայն սրբերը այն սկսում են ճաշակել արդեն երկրավոր կյանքի ժամանակ: Նրանք դեռ կենդանության օրոք ձեռք են բերում Աստծուն դեմ առ դեմ տեսնելու կարողությունը, հասնելով այդ կատարելությանը իրենց մարդկային բնության շնորհանդրոգ լինելու հետևանքով: Փաստորեն, սրբերը հասնում են աստվածացման, շնորհով դառնալով այն, ինչ Քրիստոս եղել է ըստ

Իր բնության: Խորենացին աներկբայորեն կիսում է այդ տեսակետը. «Քանզի որ Վերնատեալն է, այնտեղ էլ Նրա աթոռն է, այնտեղ էլ բարերջանիկների խմբերն են՝ առաքյալների և մարգարեների պայծառ և մեծ լուսազգեաց դասերը՝ անմեղմեալի լույսի հապավորությամբ աստվածակերպված և բացերես առ Աստված հայելով աստվածացած. ավելի ճիշտ է ասելը՝ Աստված միավորել է Աստվածներին և հայտնել Իրեն»⁴:

Այստեղից բխում է, որ անեղ ներգործությունը, աստվածային լույսը և շնորհն, ըստ էության, չեն տարբերվում իրարից: Թաքոր լեռան վրա տեղի ունեցավ Մարդու Որդու բնության շնորհաշուք պայծառակերպությունն ու աստվածացումը: Այս աստվածացումը մարդուն Աստծո անմիջական հայեցողության հնարավորություն է ընձեռում, ինչն անհնարին էր Քրիստոսի մարդեղությունից առաջ: Եթե Հին Կտակարանում Աստծուն կարելի էր հայել լոկ զանազան նշանների ու խորհրդավոր տեսիլների միջոցով (ինչպես, օրինակ, Աստծո հայտնությունը Մովսեսին անկեզ մորեմու ֆփի միջից), ապա Նոր Կտակարանում Արարչին կարելի է տեսնել դեմ առ դեմ (դրա տիպիկ օրինակը հենց Քրիստոսի պայծառակերպությունն է Թաքոր լեռան վրա): Վերջինս ոչ թե վերացական գաղափար է, այլ հոգևոր իղեալ, որին պիտի ձգտեն բոլոր քրիստոնյաները: Աստվածության ու մարդկության կատարյալ միասնությունը, որ կար ի Քրիստոս ըստ բնության, քրիստոնյաները կարող են ձեռք բերել շնորհի միջոցով: Խորենացին իր ճառում տալիս է ուղղափառ քրիստոսաբանության ճշգրիտ և ամփոփ ձևակերպում. «Գթածաբար կամենալով փրկագործել մեր բնությունը՝ մեզ կերպակից է դառնում՝ չբաժանվելով Աստվածությունից: Որովհետև իր բնությամբ մարմնին միացավ՝ նրան իր հետ խառնելով և աստվածացնելով, սակայն մնալով ինչպես կար, ոչ շփոթվելով, ոչ էլ անխառն մնալով, այլ և խառնվելով, և միավորվելով բնությամբ՝ անշփոթաբար և անբաժանելի, որ էերի մտածությունից վեր է: Որովհետև Կույսի որովայնի մեջ անփոփոխելի լույսի ճառագայթը փոփոխական նյութով ճառագայթեց՝ ռդպես մի կայծակ այնտեղից նույնակերպ հրաշաքուսած, և մեր բովանդակ հոգին, մարմինը և միտքն անապական և աստվածախառնությամբ միաբուն դարձնելով՝ էմմանուելը ծնվեց Կույսից՝ չանջատվելով Հորից»⁵:

Եվ վերջապես, Վարդավառի խորհրդի մասին խոսելիս, անհնարին է շրջանցել այդ տոնի մարդաբանական և փրկագործական իմաստը: Մարդու էության և առաքելության քրիստոնեական ըմբռնումը խիստ յուրօրինակ էր և ինքնատիպ: Անտիկ իմաստասիրությունն ու կրոնը թերագնահատում էին մարդուն: Մարդու կատարելությունն ու վեհությունը տեսնում էին հիմնականում նրա ուժի և գեղեցկության մեջ, միեզդեռ բարոյական նկարագիրը և առաքինությունն էական չէին համարվում: Անզամ անտիկ գաղտնածիսությունները, որոնք հին աշխարհի հոգևոր և կրոնական կյանքի զագաթնակետն էին հանդիսանում, խորհրդագզածներին խոտտանում էին լոկ հանդերձյալ կյանքում տառապանքներից ազատագրում և երջանիկ կյանք անդրշիրիմյան դրախտատվայրերում, սակայն ոչինչ չէին ասում մարդկային կյանքի վերջնական ու հավիտենական նպատակի մա-

սին: Բանն այն է, որ հեթանոսության մեջ հետմահու կյանքը նույնքան ժամանակավոր և անցողիկ է, որքան և երկրայինը: Մի որոշ ժամանակ դրախտում երանելի կյանքով ապրելուց հետո անգամ բարեպաշտ և առաքինի մարդկանց հոգիները, ենթարկվելով ճակատագրի անդիմադրելի ուժին, ստիպված են լինում վերստին մարմնավորվել երկրի վրա, նորից ենթարկվելով զանազան փորձությունների և տառապանքների: Այնպես որ հեթանոսական աշխարհայացքի սահմաններում որևէ վերջնական փրկության ու հավիտենական երանելի կյանքի մասին խոսք լինել չի կարող:

Հին Կտակարանի կրոնական իդեալը նույնպես չէր նպաստում մարդ արարածի առավել բարձր գնահատականին: Թեև այնտեղ ասված է մարդու ըստ Աստծո պատկերի և մանության ստեղծված լինելու մասին, սակայն առաքինության և կատարյալ օրինապահության հրեական նույնացումը չէին նպաստում մարդու հոգևոր կատարելագործմանը: Մովսիսական օրենքի հարյուրավոր պատվիրանները հիմնականում ձևական բնույթ ունեին, և անգամ նրանց ամբերի կատարումը չէր հանգեցնում մարդկային հոգու ու սրտի սրբագործմանը: Այդ տեսակետից քրիստոնեական մարդաբանությունը հստակորեն տարբերվում է ինչպես հունականից, այնպես էլ հրեականից: Եթե հույների համար երանելի անդրշիրիմյան կյանքը մշտնջենավոր չէր, իսկ հրեաները աստվածային օրենքի կատարման նպատակն առհասարակ տեսնում էին երկրային կյանքի բարօրության ապահովման մեջ, ապա քրիստոնեությունն առաջ է քաշում վերջնական փրկության և հավիտենական կյանքի գաղափարը: Ճակատագրի և արատաքին օրենքի ստրուկից մարդը քրիստոնեության մեջ շնորհի միջոցով որևէ աստծո Որդի է դառնում: Դա հնարավոր դարձավ միայն Աստծո Որդու մարդեղությունից հետո, քանզի իրապես հավերժական, սուրբ և երանելի է լոկ աստվածային բնությունը, իսկ մարդու բնությունը կարող էր ձեռք բերել այդ կատարելությունները սոսկ աստվածամալուց հետո, ինչը և տեղի է ունեցել Քրիստոսի Անձի մեջ: Աստծո կողմից որդեգրվելու համար բացի շնորհից անհրաժեշտ է նաև հոգու մաքրագործում զանազան մեղքերից և կրքերից, ինչն անհնարին է առանց ճգնաճեղի: Խորենացին, եկեղեցու մյուս Հայերի մեհան, շեշտում է աստվածացման գործում բարոյական կատարելագործման անուրանալի կարևորությունը: «Եվ այս յոթ օրը տոնում ենք տաղավարներում՝ արմավենեաց ճյուղեր և կանաչագգեստ ոստեր և ընձյուղներ բռնած, և այս յոթօրյա շրջագայության ընթացքում, այս աշխարհին պատկանող կյանքի բոլոր հովիվումներն արտաքսելով, Աստուծո մեհան հոգով ենք ապրում և, ամամարմնական առաքինությունների ոստերի աճմամբ դեպի հրեշտակային բարձունքը վերընձյուղած, որպես արմավենիներ Աստուծոյ գավթում, ծաղկում ենք»⁶ Խորենացին չի թվարկում այդ առաքինությունները, ակներևաբար համարելով, որ նրա ունկնդիրներին վերջիններս քաջ հայտնի են: Սակայն մենք խնդրո առարկա ճառի մեջ պարունակվող աստվածաբանական հայեցակարգն առավել հստակ և ամփոփ կերպով ներկայացնելու համար հակիրճ թվարկելու ենք դրանք: Նախ և առաջ, դա Աստծո երկյուղն է, և դրանից բխող հիշողությունը մահվան և գա-

լիք անեղ դատաստանի մասին: Երկյուղելով Աստծո քարկուծությունից և գործած մեղքերի համար հասանելիք անեղ պատուհասներից, քրիստոնյան պիտի ապաշխարի, ձգտելով մեղքերի բողոքություն ստանալ Տիրոջից: Այս զգացումից օրգանապես առաջանում է զղջման արտասուքը, որը մեծապես նպաստում է հոգևոր առաջընթացին, քանզի Քրիստոս արտասվողներին և սգավորներին մխիթարություն է խոստացել: Սեփական մեղավորության զգացումը հանգեցնում է խոնարհությանը, որը քրիստոնեական ավանդության մեջ հոգևոր աղքատություն է կոչվում: Ապաշխարողն իր սրտից արմատախիլ է անում հպարտությունը, որը բոլոր մեղքերի և կրքերի հիմնական պատճառն ու շարժիչ ուժն է: Դրա վերացումից հետո հոգուց աստիճանաբար անհետանում են մահ մյուս արատները, ինչպիսին են որկրամոլությունը, շնությունը, բարկությունը, չարությունը, ատելությունը, նախանձը, սնամիատությունը և այլն: Եվ վերջապես, քրիստոնյան ձեռք է բերում մեծագույն առաքինությունը՝ սերը, որին անկարելի է հասնել առանց աղոթքի: Հարկ է նշել, որ աղոթքը, քրտոնեական հոգևոր կյանքի առանցքը լինելով, պիտի առաքվի առ Աստված այդ կյանքի բոլոր փուլերում: Առանց աղոթքի հնարավոր չէ ոչ կրքերը հաղթահարել, ոչ հոգին հանդարտեցնել, ոչ էլ առավել ևս սիրել Աստծուն և մերձավորին, քանզի ճշմարիտ քրիստոնեական սերը տրվում է ի վերուստ Ս. Հոգու շնորհի միջոցով, իսկ շնորհը, ըստ քրիստոնեական պատկերացումների, երբեք չի տրվում նրան, ով չի աղոթում: Այդ բոլոր առաքինություններով սրբագործված քրիստոնյան ի գորտ է դառնում հայելու Քրիստոսի պայծառակերպության անեղ լույսը, որի խորհրդին է նվիրված Վարդավառի տոնը:

Ամփոփելով մեր ուսումնասիրությունը, նշենք հետևյալը: Աստծո անճանաչելի անդրանցական էության և ճանաչելի անեղ մերձգործության մասին տեսությունը արևելաքրիստոնեական աստվածաբանական ավանդության առանցքն է հանդիսանում: Աստվածաբանության պատմության մեջ այն իր դասական բանաձևումն է ստացել 14-րդ դարում Բյուզանդիայում իսիխաստական շարժման առաջնորդ Գրիգոր Պալամասի երկերում, որը հենց այդ իր ծառայության համար «Ուղղափառության վարդապետ» տիտղոսի է արժանացել: Մակայն այդ տեսությունը ոչ անձամբ նրան, ոչ էլ մույնիսկ զուտ բյուզանդական աստվածաբանությանը չի պատկանում, քանզի այն ամբողջ արևաքրիստոնեական աստվածաբանության ընդհանուր սեփականությունն է: Հենց դրա մասին է վկայում Մովսես Խորենացու անվան տակ մեզ հասած «Վարդավառի խորհրդի մասին» ճառը, որտեղ Պալամասից դարեր առաջ արծարծվում են մույն իսիխաստական գաղափարները, թեև, անշուշտ, Խորենացու մոտ վերջիններս դեռ ձեռք չեն բերել վերջնական տրամաբանական և տերմինաբանական հղկումը: Քանի որ ժամանակակից օրթոդոքս աստվածաբանները (օրինակ Վլադիմիր Լուսկին կամ Խրիստոս Յաննարասը) հենց այդ գաղափարի առկայությունն են համարում այս կամ այն եկեղեցու ուղղափառ լինելու հիմնական չափանիշներից մեկը, ապա Խորենացու սույն ճառը կարելի համարել Հայոց եկեղեցու ուղղափառության համոզիչ ապացույցը:

THE DISCOURSE "ON THE MYSTERY OF THE FEAST
OF TRANSFIGURATION" BY MOSES OF KHOREN

The creative heritage of "the father of the Armenian history" Moses of Khoren always was in the focus of attention of armenologists, however they mainly showed interest in the problems connected with his "History of Armenia". Meanwhile his theological works, which have the considerable value, did not become the subject matter for researchers. In this connection the big interest represents the discourse "On the mystery of the feast of Transfiguration", traditionally ascribed to Moses of Khoren.

The feast of Transfiguration of the Lord, being one of the main christian feasts, had especially great importance for eastern Churches. According to the Christian tradition, the light, which illuminated Christ on the mount Thabor, was not an ordinary physical phenomenon, but the uncreated energy of God and consequently, the apostles which saw these light saw God. For this reason the feast of Transfiguration without exaggeration may be named the feast of God-vision. The spiritual experience of contemplation of the uncreated light, and accordingly - the cognition of God is the basis of christian spiritual life. At the same time the eastern christian theology, based on the principle of apophatism, categorically asserts that the essence of God is incognizable. The theoretical substantiation of internal harmony of these, at first sight, paradoxical theses belongs to the leader Byzantine hesychasts Gregory Palamas. He proved the possibility of the contemplation of the uncreated energy of God, whose essence nevertheless remains absolutely incomprehensible. However Palamas has only given the final and completed form to this doctrine, but did not create it. Moreover, this doctrine does not belong exclusively to the Byzantine theology. This discourse of Moses of Khoren, written long before Palamas, is its best proof, inasmuch as one can find in it all principal theses of the hesychast doctrine. Certainly Moses of Khoren, in contrast to Palamas, did not finally formulate this doctrine, but nevertheless this discourse proves that the hesychast doctrine, being one of the basic principles of orthodox theology, was well-known to the fathers of the Armenian Church, and this fact is one of the most convincing proofs of its belonging to Orthodoxy.

ԾԱՆԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ս.Մովսես Խորենացի «Լադղավառի խորհրդի մասին», գրաքարից փոխադրեց Գուրգեն Գասպարյանը, «Գանձասար», Բ, Երևան 1992, էջ 22:
2. Նույն տեղում էջ 20:
3. Նույն տեղում էջ 20-21:
4. Նույն տեղում էջ 22:
5. Նույն տեղում էջ 23-24:
6. Նույն տեղում էջ 22:

ԱՂՈՒՄՆՔՈՒՄ ԱՐԵԱԿՈՒՆԵԱՅ ԹԱԳԱՌՈՐՈՒԹԵԱՆ ԱՆԿՄԱՆ
ԺԱՄԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Յայտնի է, որ Ժ դարի վերջի հայ պատմիչ Մովսես Դասխուրանցու (մատենագրութեան եւ պատմագրութեան մէջ կոչուած նաեւ Կաղանկատուացի) «Պատմութիւն Աղուանից» աշխատութեան մէջ՝ գրեթէ բառացի արտագրութեամբ պահպանուած են Հայոց Արեւելից կողմանց վաղմիջնադարեան գրչութեան կենտրոններում ստեղծուած պատմական ու գրական քաղմարմոյթ երկեր²։ Դրանց թում հայագէտների եւ արեւելագէտների ուշադրութիւնը վաղուց գրաւել է Աղուանից վերջին՝ Վաչագան Բարեպաշտ թագաւորի մասին պատմող երկասիրութիւնը, որին ներկայումս, ելնելով երկի ռճական առանձնայատկութիւններից, պայմանականօրէն տրուած է «Վաչագանի վէպ» անուանումը։ Հ. Ներսէս Ալիկնեանի, Կիւմ Ղահրամանեանի եւ տողերիս հեղինակի կողմից արդէն քաւականին ճշգրտուած են այդ երկի քննադրային սահմանները («Պատմութիւն Աղուանից»-ի Ա զրքի Ձ գլխի առանձին կտորներ եւ ԺԴ-ԻԳ գլուխները, բացի ԺԵ-ի առաջին կէսից), ինչպէս նաեւ Ժ դարի հեղինակի միջամտութիւնները (այդ թում՝ բաժանումը գլուխների եւ դրանց վերնագրումը)³, որի շնորհիւ հնարաւոր է դառնում նրա առաւել հաւաստի օգտագործումը իբրեւ սկզբնաղբիւր⁴։ Երկի անանուն հեղինակը իրադարձութիւններին ժամանակով մօտ կանգնած կամ ականատես մատենագիր է, իսկ քնօրինակային վերնագիրը, ամենայն հաւանականութեամբ, պահպանուած է Ա.Ժգ գլխի վերտառութեան մէջ. «Կեանք եւ վարք եւ կարգաւորութիւնք Աղուանից, որ ի Վաչագանայ արքայէ եղան, եւ գիւտք նշխարաց սրբոց»⁵։

Յայտնի է նաեւ, որ Ե-Ձ դարերի հայ մատենագրութեան առաւել ճանաչուած աղբիւրներում չեն պահպանուել Վաչագան թագաւորին վերաբերող վկայութիւններ, փոխարէնը՝ «Պատմութիւն Աղուանից»-ում եւ այլուր պահպանուած են նրա անուան հետ կապուած մեծ թումլ կրօնաքարոյսագիտական բովանդակութեան եւ նշխարների գիւտերին վերաբերող ակնյայտօրէն ուշ գրուածքներ, ասանդութիւններ եւ անգամ վիմագրական վկայութիւններ։ Դրանցից շատերի հաւաստիութեան նկատմամբ հիմնաւոր կասկածը Հ. Ներսէս Ալիկնեանի համար պատճառ էր դարձել մերժելու հենց թագաւորի իսկ պատմականութիւնը⁶։ Ժամանակին մենք, թում էր, թէ զգոյշ ենք եղել այդ հարցում՝ յատուկ նշելով, որ Վաչագանի պատմականութեան խնդիրը ճիշտ կը լինէր քննարկել հետագայ վերագրումներից ու աւանդական նիւթից անկախ, այսինքն՝ միմիայն «Վաչագանի վէպ»-ի եւ Աղուէնի կանոնների հաղորդած տեղեկութիւնների շրջանակում։ Մակայն նկատելով (որոշ դէպքերում՝ սխալ) հենց այս սկզբնաղբիւրների պարունակած ինչ-ինչ հակասութիւններ՝ մենք եւս, ի վերջոյ, երկումս էլ համարել էինք ոչ համաժամանակեայ եւ թուազրել Ձ դարի երկրորդ կէտով, շտապելով եզրակացնել, որ եթէ անգամ ընդունենք Վաչագանի պատմականութիւնը, ապա ա-

ռանց լրացուցիչ աղբիւրագիտական նիւթի դժուարանալու ենք ասել, թէ «Վաչագանի վէպ»-ի եւ Աղուէնի կանոնների ո՛ր տեղեկութիւններն է հնա-րաւոր վերագրել այդ իրական թագաւորին՝:

Բարեբախտաբար մի քանի տարի առաջ մեր ուշադրութիւնը լրջօրէն գրաւեց մի հակասութիւն «Պատմութիւն Աղուանից»-ի Ա եւ Բ խմբերի ձեռագրերի ընթերցումներում, որի քննութեան շնորհիւ հնարատր եղաւ վերհանել ժամանակին վրիպած իրական պատկերը: Դրա հիման վրայ հրատարակուեց մեր՝ ««Վաչագանի վէպ»-ը եւ Արշակունեաց թագաւորութեան խնդիրը Դ-Ջ դարերի Աղուանքում» աշխատանքը⁸, ուր ցոյց տրուեց, որ կարելի է ամենայն վստահութեամբ վերաբերուել Վէպի փաստօրէն բոլոր տոհմաբանական ցուցումներ պարունակող վկայութիւններին, ինչպէս նաեւ «Աղուէնի կանոնների» հաւաստիութեան խնդրին, քանի որ ո՛չ Բուն Աղուանքի Վաչագան Բարեպաշտ թագաւորի պատմականութիւնը, ո՛չ «Վաչագանի վէպ»-ի ու Աղուէնի ժողովի հաւաստիութիւնը մերժելու համար իրական հիմքեր չկան:

Կրկնելով այդ եզրայանգումը՝ հարկ է միաժամանակ եւս մէկ անգամ վերապահում անել այն մասին, որ «Վաչագանի վէպ»-ի եւ Աղուէնի կանոնների հաւաստիութեան ճշտումից յետոյ նրանց գաղափարական ուղղութեան գնահատականը գրեթէ չի փոխուում: Կուրի հայկական աջափնեակում ստեղծուած այդ ծրագրային փաստաթղթերն իրօք պարունակում են Բուն Աղուանքի Արշակունեաց արքայատոհմի վերջին ներկայացուցիչ Վաչագան Բ Բարեպաշտ թագաւորի ձեռքով Աղուանից աշխարհում (արդէն մարգպանութեան ընդգրկմամբ) կատարուած աստուածահաճոյ գործերի շարադրանքը եւ մեծարժէք տուեալներ են պահպանել բուն աղուանական ինչ-ինչ իրողութիւնների (ռեալիաների) մասին, որոնք անփոխարինելի նշխարներ են աղուանագէտների համար: Սակայն այնուամենայնիւ նրանց գաղափարական նպատակն է եղել ամբապնդել Մասանեան տէրութեան գերիշխանութեանը ենթակայ Աղուանք-Առան վարչա-քաղաքական միաւորի մէջ Աղուանից եկեղեցու շուրջ համախմբուած քրիստոնեայ հասարակութիւնը (իւր բուն աղուանական եւ հայկական էթնիկական մասերով) ո՛չ թէ բուն աղուանական էթնոշակութային համակարգի գործառնան ոլորտի ընդլայնման, այլ ընդհակառակը՝ Կուրի աջափնեակի հայութեան ազգային-մշակութային-դատական անանդները այդ ամբողջ հասարակութեան մէջ հաստատագրելու ճանապարհով՝:

Այստեղ նաեւ կրկնենք նախորդ աշխատանքի այն հատուածի հիմնական դրոյթները (անհրաժեշտ լրացումներ կատարելով), որոնք թոյլ են տալիս բաւականաչափ ճշգրտութեամբ վեր հանել «Վաչագանի վէպ»-ի ստեղծման ժամանակի խնդիրը: Այդ խնդիրը լուծուում է Վաչագան Բարեպաշտի ժամանակակից Շուփհադիշոյ կաթողիկոսի մասին վկայութիւնների քննութեան շնորհիւ:

Շուփհադիշոյի անունը յայտնուում է երկի միայն վերջին հատուածում («Պատմութիւն Աղուանից»-ի գլուխ Ա.իգ)՝ արքայական «քանակի»՝ Ամարասից Դիւտական յետադարձ ճանապարհի նկարագրութեան մէջ:

Ըստ դրա՝ Ամարասի գետակը յետ անցնելուց յետոյ թագաւորը փոքրիկ դահար է յայտարարում («անցուցանէր ընդ մոյն գետն. եւ կացուցանել հրամայէր գղեսպակս սրբոցն»), որպէսզի գլխում հաւաքուած շրջակայ ժողովրդին տնէրն ուղարկի («եւ եպիսկոպոսացն՝ արիմնեալ զխառնիճաղանճ բազմութիւնն՝ հրամայէին զնալ յիւրաքանչիւր տեղիս»): Մնում են միայն հոգեւորականները, որոնց հետ թագաւորը, թագուհին եւ արքունականները հասնում են Քարուճ ամառանոց գիւղը («Եւ զդասս եպիսկոպոսաց եւ երիցանց եւ այլ պատուական արանց առեալ ընդ սրբոցն՝ տանէր մինչեւ ցՔարուճ արթի տեղ»): Թում է, թէ Քարուճում եկեղեցական ժողովի նման մի բան է տեղի ունեցել, որի ընթացքում հոգեւորականներն օրհնել են արքային եւ Շուշանիկ աշխարհատիկնոջը. «եւ նոցա միաբան արիմնեալ զթագաւորն թագուհուն [z թագուհեան] հանդերձ եւ ամենայն դրամբն՝ ասեն [bclrz ասացեալ]. «Ջամենայն բարի, զոր խնդրեսցես դու յԱստուծոյ, ի ձեռն սրբոյն Գրիգորիսի տացէ քեզ: Եւ շնորհեսցէ մեզ լինել քեզ [bclrz չիք քեզ] ընդ երկայն ատուքս խաղաղասէր ընդ աշխարհի եւ ի փառազարդութիւն եկեղեցոյ [bclrz եկեղեցեաց] առաւելապէս յորդորելով [a յարդարելով] ար ըստ արե»¹⁰: Ի դէպ, ճիշտ այդպէս Վաչագան թագաւորին հետագայում օրհնել է Աղուճի եկեղեցական ժողովը. «Ջայս պայման արարին եպիսկոպոսունք եւ քահանայք եւ ազատ մարդիկ առաջի արքայի, եթէ ի մեր եպիսկոպոսաց եւ յերիցանց եւ յեկեղեցոյ բերանոյ արիմնեալ լիցի՝ [bclrz եղիցի] թագաւորն թագուհուն եւ զաւակովն հանդերձ, եւ ամենայն աշխարհովս [bclrz աշխարհաս] հանդերձ, որք յայս ժողովս են, արիմնեալ եղիցին»¹¹:

«Վաչագանի վէպի» հեղինակն այնուհետեւ գրում է. «Եւ առեալ ինքեան զաւագ եպիսկոպոսապետն Շուփհաղիշոյ [a Շուփհաղիշու], եւ յորժամ գեաղջ ուրուք [bclrz գեղջ ուրեք] յայտ ելանէր դեսպակ սրբոցն, իջանէր թագաւորն եւ հետեակ սպասարկէր սրբոցն, մինչեւ տարեալ ընդ շինանիստն անցուցանէր: ... Այս ձեռով զային հասանէին ի սեփիական զիւղն Գիտական [bclrz Դուտական] եւ անդ հանգուցանէին...»¹²: Բերում հատուածներից կարելի է եզրակացնել, որ Շուփհաղիշոյ եպիսկոպոսապետը մասնակցել է Վաչագան Բարեպաշտի երթին եթէ ոչ ամենասկզբից, ապա գոնէ Ամարասից յետադարձ ճանապարհից կամ Քարուճի եկեղեցական ժողովից սկսած: Տեղին նշենք, որ բնագրի ընդգծուած հատուածում եպիսկոպոսապետ բառի «աւագ» մակդիրը, ուսումնասիրողների արդարացի կարծիքով՝ տեղեկատուական որեւէ արժէք չի ներկայացնում¹³:

Շուփհաղիշուն յիշում է նաեւ Աղուճի եկեղեցական ժողովի մասնակիցների շարքում որպէս «Պարտաւայ արքեպիսկոպոս»: Ժողովի արձանագրութիւնը պահպանուել է «Պատմութիւն Աղուանից»-ի առաջին գրքում՝ Վաչագան Բարեպաշտին վերաբերող զլուխների վերջում (զլուխ ԻԶ), եւ Հայոց կանոնագրքի՝ մօտաւորապէս Ժ-ԺԱ դդ. սահմանագլխին ձեւաւորուած դասական խմբագրութեան ձեռագրերում (Ա ձեռագրախմբում՝ ԼԵ, իսկ Բ-ում՝ ԼԹ կանոնախումբ)¹⁴: Գրչական որոշ (եբբեմն բաւական մեծ) տարբերւթեցումների պայմաններում երկու տարբերակում էլ «Շուփհաղիշոյ

[Կանոնագրքում՝ *Շուփադիշոյ*] Պարտաւայ արքեպիսկոպոս»-ը յիշատակում է առանց լուրջ շեղումների՝ Վաչագան արքայի անունից անմիջապէս յետոյ, ժողովի բուն արձանագրութեան ամենասկզբում («Եւ Վաչագան՝ Աղուանից արքայ, Շուփեադիշոյ՝ Պարտաւայ արքեպիսկոպոս, Մանաս՝ Կապադակայ [ա Կապադայ] եպիսկոպոս...»)՝¹⁵։ Տեղին յաւելնք, որ ժողովի մասնակիցների նոյն ցուցակում յիշատակւում է նաեւ «Մատթէ Պարտաւայ երէց»-ը)։

Այստեղ կրկնենք նաեւ նախկինում մեր արտայայտած կարծիքը Աղուէնի կանոնների առաջին պարբերութեան մասին («Յամա Վաչագանայ՝ Աղուանից արքայի բազում հակառակութիւնք լինէին ի մէջ աշխարհականաց եւ եպիսկոպոսաց եւ քահանայից, քրեպիսկոպոսաց, ազատաց եւ ռամկաց։ Ապա կամ եղեւ արքայի՝ առնել ժողով յԱղուէն՝ բազմամբոյս աւտեան, յամսեանն մարերի, որ աւր երեքտասան էր ամսոյն»)։ Մեր համոզմամբ՝ այն բխում է ոչ թէ Աղուէնի ժողովի արձանագրութեան սկզբնօրինակից, այլ աւելացուած է Կանոնագրքի կամ մէկ այլ բնոյթի (օրինակ՝ տոհմամատենային) ժողովածոյ կազմողի կողմից, ճիշտ այնպէս, ինչպէս դա արուել է սկզբնօրինակային «Քացատրագիր» չունեցած շատ ուրիշ կանոնախմբերի կամ Թղթոց գրքերի միւթերի համար¹⁶։ Դա նշանակւում է, որ Մովսէս Դասխուրանցին կամ նրա մի նախորդն է Աղուէնի կանոնների բնագիրն ընդօրինակել որեւէ կանոնագրքից կամ տոհմամատենից, ոչ թէ՛ հակառակը¹⁷։ Դա նաեւ նշանակւում է, որ անհրաժեշտ է որոշ վերապահումով մօտենալ «մարերի ամսի 13» ամսաթւի հաւաստիութեանը, որը նշուած է առանց արքայի տիրակալութեան համապատասխան տարուայ յիշատակութեան. թէպէտ, հնարատր է նաեւ, որ Կանոնագրքի կամ տոհմամատենային ժողովածոն կազմողը այդ ամսաթիւը քաղել է Աղուէնի ժողովի արձանագրութեան՝ իր ձեռքի տակ եղած բնագրի (գուցէ՛ մագաղաթեայ փաստաթղթի լուսանցքների կամ յետելի կողմի) ինչ-որ մի նշումից։ Տեղին նշենք նաեւ, որ վերջերս Յովհաննէս Օձնեցու կազմած «Կանոնագիրք Հայոց»-ի նախնական ժողովածոյի քննական բնագրի պատրաստման առիթով մեր կողմից ճշտուել է, որ Աղուէնի կանոնների բնագիրը Արցախից կենտրոնական Հայաստան է բերուել եւ այդպիսով Կանոնագրքի դասականացմանը ձեռնարկած վարդապետների տեսադաշտում յայտնուել, ամենայն հաւանականութեամբ, Անանիա Մոկացու շնորհիւ¹⁸։

Ժամանակին Շուփեադիշոյի՝ Պարտաւի արքեպիսկոպոս կոչուելու (ինչպէս նաեւ Պարտաւի Մատթէ երէցի յիշատակութեան) համզամանքը մեզ համար հիմք էր դարձել կասկածելու Աղուէնի կանոնների հաւաստիութեանը (ըստ այդմ՝ նաեւ «աւագ եպիսկոպոսապետ Շուփեադիշոյին» ճանաչող «Վաչագանի վէպ»-ի հաւաստիութեանը), քանի որ, ինչպէս յայտնի է, Աղուանից կաթողիկոսութեան աթոռանիստը մինչեւ 552 թ. Կուր գետի աջափնեակ տեղափոխուելը գտնուել է Չողում, որը ժամանակակից Դերբենդ քաղաքն է¹⁹։ Մանրամասնենք, որ Աղուանից կաթողիկոսանիստի նշուած տեղափոխման մասին տեղեկութիւնը հաղորդում է Մովսէս Դասխուրանցու օգտագործած աղբիւրներից մէկը՝ այսպէս կոչուած «Աղուանից

գաւազանագիրքը»: Մենք այն համարում ենք տոհմամատենանային գրա-
ռւմների հիման վրայ Ժ դարի առաջին կեսում ստեղծուած ժամանակա-
գրական երկ, որը նոյն դարի վերջին եղել է Դասխտւրանցու ձեռքի տակ²⁰:
Պատմիչն արտագրել է նրա բովանդակութիւնը իր երկի վերջին գլխում
(գլուխ Գ.իգ՝ «Անուանք հայրապետացն Աղուանից, ամբ եւ գործք նոցին»),
սակայն նրա որոշ տեղեկութիւններ էլ տեղափոխել է «Պատմութիւն Աղուա-
նից»-ի տարբեր գլուխներ: Մասնաւորապէս, այդ ձեռով է նա ստեղծել Բ.դ
գլխի վերնագիրը («Փոխումն հայրապետական աթոռոյն Աղուանից ի Չո-
ղայ [եւր Չորայ] եւ նստուցանել ի մեծ քաղաքին [եւր քաղաքն] Պարտաւ
գաթռակալութիւնն՝ սակս խազրաց հինին, որ յեւն խրեանց ւաւրեցին [ա
ւարեցին]») եւ շարադրանքը («Յետ այսորիկ գերեցաւ ի խազրաց աշ-
խարհս Աղուանից, հրկեզ եղեն եկեղեցիք եւ կտակարանք: Ապա յերկրորդ
ամին խոսրովու արքայից արքայի, յորժամ զսկիզբն Հայ թուականին եղին
[ա յիշ եղին], ի տյն ամի փոխեցին գաթոռ հայրապետութեանն Աղուանից ի
Չողայ [եւր Չորայ] քաղաքն ի մայրաքաղաքն Պարտաւ՝ վասն հինահա-
լած արշաւանացն թշնամեաց խաչին Քրիստոսի: Եւ նստուցին հայրապետ
զտէր Աբաս ի գաւառէն Մեծարանց [եւր Մեծիւրեանց], որ կալեալ գաթոռն
ամս խԴ...»): ՊԱ, էջ 118.17-119.6): Բուն Գ.իգ գլխում կաթողիկոսանիստի
տեղափոխման մասին պատմիչը թողել է միայն այսքանը. «ԺԳ. Տէր Աբաս,
որ ի սկզբանն թուականիս Հայոց փոխեաց գաթոռ հայրապետութեանն ի
Չորայ ի Պարտաւ, կալեալ ամս խԴ, յեպիսկոպոսութենէն Մեծիւրեանց [եւ
Մեծիւրեանց] կոչեցեալ» (ՊԱ, էջ 342.18-343.2): Դիշտ է՝ դրանից յետոյ Ա-
բասի մասին հաղորդում են ուրիշ, բաւականին մանրամասն տեղեկութիւն-
ներ (ՊԱ, էջ 343.2-16), որոնք մեզ կը հետաքրքրեն աւելի ուշ:

Նախ, տեղին նշենք, որ Չող-Դերբենդի՝ կաթողիկոսանիստ լինելու
մասին վկայութիւն է պահպանուել նաեւ «Պատմութիւն Աղուանից»-ի Գ գր-
քի՝ ժամանակագրական տեղեկութիւններ պարունակող գլուխներից մե-
կում: Դրանց շարադրանքի հիմքում, մեր կարծիքով, ընկած են Աղուանից
կաթողիկոսարանի դիւանում պահուած ձեռագրերի յիշատակարաններում
գրանցուած ժամանակագրական վկայութիւններ, որոնք քաղուել եւ ամփո-
փուել են կա՛մ Մովսէս Դասխտւրանցու, կա՛մ, որ աւելի հաւանական է, նրա
որեւէ մի նախորդի կողմից իբրեւ տոհմամատենանային շարադրանք²¹: Այս-
տեղ աւաւում է. «Եւ ի ՇՁ [=731 թ.] թուականին դարձեալ Մովսէսն շինէ
զԴարքանդ յանուն Տաճկաց, այլ զկաթողիկոսարանն Արեւելից ոչ ւաւրէ,
որ դեռես կայ ի նմա» (ՊԱ, Գ.ժգ, էջ 320.15-17):

Արդ, եթէ «Աղուանից գաւազանագրքից» եկող Բ.դ գլխի տեղեկու-
թիւնից բխում է, թէ Աղուանից եկեղեցու կաթողիկոսանիստը Չողից Պար-
տաւ է տեղափոխուել միայն 552 թ., ապա միայն այդ թուականից յետոյ
կարող էր «Պարտաւի արքեպիսկոպոս» կոչուել Աղուանից եկեղեցու ղեկա-
վարը: Նման տրամաբանութեամբ մենք ենթադրում էինք, որ «Վաչագանի
վէպ»-ը եւ Աղուէնի կանոնները կարող էին ստեղծուած լինել միայն Ձ դարի
երկրորդ կեսին, 552 թ. յետոյ (սակայն դարավերջին սկսուած եկեղեցական
հակամարտութիւններից առաջ)՝ իբրեւ Աղուանից եկեղեցու այնպիսի ծրա-

գրային փաստաթղթեր, որոնց հեղինակները իրենց ապրած ժամանակի ինչ-ինչ իրողություններ (այդ թույ՛մ՝ Պարտալի՝ կաթողիկոսանիստ լինելը) վերագրել են իրենց նկարագրած դարաշրջանին՝ Ե դարի վերջին²²։ Սակայն ներկայումս, «Վաչագանի վէպ»-ի հաղորդած պատմական նիւթի առանցքային վկայությունների հաւաստիութեան նկատմամբ վստահութեան լոյսի ներքոյ, մենք մեզ պարտաւորուած ենք համարույ՛մ վերանայելու հին մօտեցումը, թէկուզ եւ ստիպուած պէտք է լինենք ենթադրությունների օգնութեամբ լուծել որոշ նոր ծագող հակասություններ։

Սկսենք նրանից, որ ճիշտ չէր «Վաչագանի վէպ»-ը եւ Աղուէնի ժողովի արձանագրութիւնը լրիւ համաժամանակեայ համարելը։ Այսպէս, երկու աղբիւրում էլ յիշատակուող միեւնոյն ամձանցից առնուազն մէկի համար առկայ են տուեալներ, որոնք ժամանակային որոշակի միջակայք են ենթադրում։ «Վէպի» երեք դրուագներում յիշուո՛ւ է «թագաւորի *դրան երէց*» Մանասէն։ Ա.Ժ գլխում (էջ 60.14-16) Վաչագանը նրան ուղարկուո՛ւ է ճիղբերի Յրի քաղաքի մօտակայքում գտնուող Հակո զիւղում յայտնաբերուած Ջաքարիա եւ Պանդալէոն սրբերի նշխարներն իր մօտ՝ անուճով յիշատակուած թագաւորանիստ տեղափոխելու համար («Եւ զՄանասէ՝ զիւր *դրան երէցն*, որ էր յոյժ հաւատարիմ, հանդերձ իւրովք պաշտասնէիք, առաքէր փութապէս առնուլ առ իւր [a *չիք* առ իւր] զամենասուրբ նշխարս վկայիցն [bclrz գաստուածային այն զանձ *փխ* զամենասուրբ...վկայիցն]», այնուհետեւ Ա.իա գլխում, արդէն Գրիգորիսի նշխարների յայտնաբերման պատմութեան մէջ, Արածանք զիւղում Յովէլ սարկաւագի տեսած երագից յետոյ Վաչագանը Մանասէին եւ դրան սարկաւագ Յովէլին ուղարկուո՛ւ է Ամարաս, («Եւ արքայ յոյժ խնդալից եղեալ՝ զՄանասէ՝ զիւր *դրան երէցն* եւ զնոյն սարկաւագն առաքէր յԱմարաս յառաջ քան զիւր երթալն»²³), եւ նոյնը կրկնուո՛ւ է քիչ անց, Քարուէճ զիւղում Վաչագանի տեսած երագից յետոյ («Եւ անդէն վաղվաղակի զՄանասէ՝ զիւր *դրան երէցն* յառաջ քան զիւր երթալն յԱմարաս յղեաց»)՝²⁴։ Այս նոյն Մանասէն Աղուէնի ժողովի արձանագրութեան մէջ հանդէս է գալիս արդէն որպէս «Կապաղակայ [a Կապաղայ] *եպիսկոպոս*»²⁵։ Յայտնի է, որ Կապաղակը Բուն Աղուանքի թագաւորութեան մայրաքաղաքն էր սկսած մ. թ. ա. Ա դարից²⁶, ուստի շատ բնական է, որ այդ քաղաքի եպիսկոպոս կարող էր դառնալ թագաւորական «*դրան երէց*»։

Տեղին նշենք, որ Վաչագան Բարեպաշտի մայրաքաղաքի անունը «Վաչագանի վէպ»-ում չի տրուո՛ւմ։ Սակայն, պատահական չի թուո՛ւմ, որ նրա արքունիքի մասին խօսուո՛ւմ է միայն մէկ տեղում՝ Ա.իգ գլխի սկզբում՝ այն Խոճկոռիկ իշխանի տեսիլքի կապակցութեամբ, որը Կուրի ձախսափնեակում, հետագայի Շամախու շրջակայքում գտնուած Յրի քաղաքի (Կապաղակից մօտ 75 կմ արեւելք) «գործակալն» էր («Եւ զայր այրն առ *արքունիսն* [bclrz ի պալատն արքունի] եւ թուէր, եթէ արքայ ի քուն իցէ, եւ ինքն ոչ իշխէր [a չիշխէր] զարթուցանել»)՝²⁷։ Աւելացնենք, որ Ա.Ժ գլխում (էջ 60.5-7) Խոճկոռիկը նոյն Յրի քաղաքում Ջաքարիայի եւ Պանդալէոնի նշխարների գիւտից յետոյ արագօրէն ձիով հասնուո՛ւ է Վաչագան արքայի մօտ («Եւ

ինքն աշտանակեալ ի ծի [a դեսպան ձիով, bclr հեծեալ յերիվար մի] գնդեցիկ՝ ճեպէր հասանել առ Բարեպաշտն Վաչագան՝ պատմել գերեւունն մեծագոյն նշանացն [bclrz հրաշիցն]»): Այս առիթով նախորդ աշխատանքում կարեւոր ենք համարել նաեւ նշել այն տեսակետի արդարացուած չլինելը, ըստ որի՝ Վաչագան Բարեպաշտի թագաւորանիստը կարող էր լինել Գիւտական կամ Դիւտական կոչուող գիւղը՝ Արցախ նահանգի Մեծ Կողմանք եւ Ուտիքի Ուտի-Առանձնակ գաւառների սահմանին, Տրտու գետի ձախափնէայ տարալանջին²⁸:

Այսպիսով, Վաչագան Բարեպաշտի «դրան երեց» Մանասէի՝ «Կապաղակի եպիսկոպոս» դառնալն աւելի քան բնական պէտք է համարել: Դրանից թիւում է նաեւ, որ նրա երկու կարգավիճակների (երեցի եւ եպիսկոպոսի) միջեւ անհրաժեշտ է որոշակի ժամանակային միջակայքի առկայութիւն ենթադրել, որը հէնց մտնում է «Վաչագանի վէպ»-ի ստեղծման եւ Աղուէնի ժողովի գումարման միջեւ ընկած ժամանակահատուածի մէջ: Իսկ դա արդեն թոյլ է տալիս պնդել, որ նոյն ժամանակահատուածում կարող էր փոփոխութիւն տեղի ունեցած լինել նաեւ Շուփհաղիշոյ կաթողիկոսի կարգավիճակի մէջ, որը, ինչպէս տեսանք, «Վաչագանի վէպ»-ում կոչւում էր «աւագ եպիսկոպոսապետ», իսկ Աղուէնի ժողովի արձանագրութեան մէջ՝ «Պարտաւայ արքեպիսկոպոս»:

Ժամանակին մենք անդրադարձել ենք գրեթէ առանց բացառութեան գրականութեան մէջ մտած այն սխալին, ըստ որի՝ հաւաստիութիւն է վերագրում «Պատմութիւն Աղուանից»-ի Ա.Ժն գլխի յայտնի տեղեկութեանը՝ «Պերոգապատ..., որ այժմ կոչի Պարտաւ» քաղաքը Վաչէ Բ Աղուանից թագաւորի կողմից՝ «ի հրամանէ Պերոգի՝ պարսից արքայի» կառուցուած լինելու մասին²⁹: Կրկնենք, որ այդ տեղեկութիւնը չի դիմանում որեւէ քննադատութեան. Վաչէն, որն ապստամբել էր Սասանեան արքայից արքայ Յագկերտի մահից կամ նրա որդիների՝ Պերոգի եւ Որմիզդի միջեւ սկսուած արիւնալի պատերազմից անմիջապէս յետոյ եւ Պերոգից կրած պարտութեան հետեւանքով հեռացել էր գահից, չէր կարող քաղաք կառուցել նոյն Պերոգի հրամանով: Միւս կողմից՝ այդ տեղեկութիւնը որեւէ զուգահեռ չի գտնում այլ հայկական եւ օտարերկրեայ աղբիւրներում: «Պատմութիւն Աղուանից»-ի մէջ բառացի արտագրուած, պայմանականօրէն «684 թ. պատմութիւն» անուանուած երկում, որը է դարի 30-80-ական թթ. անցքերի մասին ժամանակակից հեղինակի հաւաստի շարադրանք է պարունակում³⁰, Աղուանից երկրի մայրաքաղաքը 11 դէպքից 7 կամ 8-ում կոչւում է ոչ թէ «Պարտաւ» (այդպէս ընդամենը 3 հատուածում) կամ «Պերոգապատ» (այդպէս միայն մէկում), այլ «Պերոգ-Կաւատ»³¹: Իսկ այս անունը միջին պարսկերէն նշանակում է «Կաւատը՝ յաղթող»³² եւ ըստ այդմ վկայում, որ քաղաքի կառուցողը կամ պատուիրատուն եղել է հէնց Կաւատ Ա Սասանեանը (488-531 թթ.):

Նոյնը հաղորդում են նաեւ արաբ մատենագիրները, որոնց ունեցած տեղեկութիւնները յանգում են ուշ սասանեան պատմական աւանդոյթին: Բալազորին, Իբն Խորդադաբէին, Իբն ալ-Ֆակիին, Իբն ալ-Ասիրը եւ

Եակոտ ալ-Համալին գրում են, որ իր տիրակալութեան սկզբում Կաաառը կարողացաւ յաղթահարել Պարսից ազնուականութեան հօգը դիմադրութիւնը (որոնց յաջողունց անգամ շուրջ երեք տարով զահ բարձրացնել նրա եղբորը՝ Ջամասպին՝ 496-498 թթ.), այնուհետեւ յաղթանակ տանել Բիւզանդիայի հրահրումով Իրանի հիւսիս-արեւմտեան տիրոջները ներխուժած հիւսիս-կովկասեան ցեղերի՝ հոմ-սաւիրների նկատմամբ (503-504 թթ.), որոնց դուրս մղմանը զուգընթաց արքան ամրապնդեց Կովկասեան սահմանները. նա մասնատրասպէս կառուցեց Բայլական եւ Բերդա'ա (=Պարտաւ) քաղաքները, իսկ նրա որդին՝ Խոսրով Անուշիրուան արքայից արքան (531-579 թթ.) էլ աւելի ամրացրեց Կովկասեան պաշտպանական զիծը՝ կառուցելով Դերբենդի քարաշէն պարիսպը³³: Այս պատմութեան համաձայն՝ Պերդ-Կաաառ - Պարտաւ քաղաքի կառուցման ամենից յարմար ժամանակը պէտք է համարել Ջ դարի առաջին տասնամեակի երկրորդ կէսին սկսուած պարսկա-բիւզանդական հաշտութեան եօթնամեակը (506-512 թթ.), երբ Կաաառ արքան Անաստաս կայսրից նաեւ մեծ գումար ստացաւ Կովկասեան պաշտպանական զիծը հոմ-սաւիրների դէմ ամրապնդելու նպատակով³⁴:

Ինչ վերաբերում է Պարտաւի անուան «Պերդպպատ» տարբերակին, ապա դժուար չէ կռահել, որ այն, ամենայն հաւանականութեամբ, առաջացել է «Պերդկաաառ» անուան ձեւափոխման արդիւնքում՝ Մովսէս Դասխուրանցու կամ նրա որեւէ մախորդի կողմից: Դա հաւանաբար տեղի է ունեցել քաղաքանուան ժողովրդական պարզեցումած ընկալման եւ հայ մարդու համար սովորական «պատ» վերջամասով քաղաքանունների հետ զուգորդութեան արդիւնքում (հմմտ. Վաղարշապատ, Ներսէսապատ): Իսկ «Պերդ-ա-պատ», այսինքն՝ «Պերդի քաղաք» ընկալումից էլ պէտք է առաջացած համարել այն մտայնութիւնը, իբրեւ թէ քաղաքը կառուցուել է Պերդ արքայի հրամանով:

Վերադառնալով Շուփհադիշոյի՝ Պարտաւի արքեպիսկոպոս լինելու հաւաստիութեան պարագային՝ տեսնում ենք, որ դրան կարելի է վստահութեամբ վերաբերուել գոնէ այնքանով, որքանով Պարտաւ քաղաքը կառուցուել է, ամենայն հաւանականութեամբ, 506-512 թթ. միջակայքում, ուստի մեծ խոչընդոտ չկայ Վաղարշ արքայից արքայի (484-488 թթ.) կողմից թագաւորական իշխանութեան վերադարձումած Վաչագան Արշակունու օրօք արքայապաճ «աւագ եպիսկոպոսապետին» ժամանակակից համարելու նորակառոյց մայրաքաղաքի կեանքի գոնէ առաջին տարիներին: Մնում է, սակայն, մի ուրիշ կարեւոր հակասութիւն՝ նորակառոյց Պարտաւի՝ արքեպիսկոպոսանիստ լինելու հանգամանքը: Ճիշտ է, արաբ մատենագիրների վերը բերուած պատմութիւնը լիովին թոյլ է տալիս ենթադրել, որ Կովկասեան ամրութիւնները, այսինքն՝ հաւանաբար նաեւ Չողի կաաաշէն պարիսպը յաղթահարած հոմ-սաւիրների ասպատակութիւնների առջեւն առնելուց յետոյ կառուցուած Պարտաւը ի սկզբանէ իբրեւ մարզպանանիստ է մտադրացուել: Այսինքն Ադուանից (Առան, Ռան) երկրի սասանեան վարչական կենտրոնի տեղափոխումը Չողից Պարտաւ թերեւս կարելի է վերագրել հենց

Ձ դարի երկրորդ տասնամեակի առաջին կեսին: Սակայն դա դեռես թոյլ չի տալիս նոյն ժամանակ Չոդից Պարտաւ տեղափոխուած համարել նաեւ Աղուանից եկեղեցու նստոցը, քանի դեռ մենք ունենք «Աղուանից գաւազանագրքին» յանգող վերը բերուած կոնկրետ տեղեկութիւնը, որն այդ տեղափոխութիւնը վերագրում է Հայոց թուականութեան առաջին տարուն՝ 552 թ.: Նշենք, որ մինչեւ այժմ ոչ ոք չի կասկածել այդ տեղեկութեան հաւաստիութեանը: Նախկինում մեր արտայայտած պնդման համաձայն՝ դրա օգտին վկայող պէտք էր համարել նաեւ այն հանգամանքը, որ սկսած Աբաս Մեծի րանցի կաթողիկոսից «Գաւազանագիրքը» կանոնաւոր ժամանակագրական տեղեկութիւններ է հաղորդում, այն դէպքում, երբ դրանից առաջ նրա շարադրանքը խառնակ է:

Սակայն այժմ, երբ նոր քննութիւնը առիպում է աւելի մեծ վստահութիւն ցուցաբերել «Վաչագանի վէպ»-ի եւ Աղուեհի ժողովի արձանագրութեան վկայութիւններին, անհրաժեշտ է կրկին անդրադառնալ «Գաւազանագրքին» տեղեկութեանը: Նախ՝ պէտք է ուշադրութիւն գրաւի մեր նշած նոյն հանգամանքը, սակայն արդէն հակառակ առումով: «Գաւազանագիրքն», իրօք, կանոնաւոր տեղեկութիւններ է հաղորդում սկսած Աբաս կաթողիկոսից, բայց իճնց դրանից էլ տրամաբանօրէն բխում է, որ Աբասի մասին տեղեկատւութիւնը գտնուում է հեղինակի ունեցած առաւել հաւաստի եւ պակաս հաւաստի տեղեկութիւնների սահմանագծում: Այսինքն՝ եթէ մենք կարող ենք լրիւ վստահել Աբասի աթոռակալութեան աւարտին վերաբերող հաղորդումներին, օրինակ՝ իշխսած տարիների քանակին՝ 44, ապա նրա իշխանութեան սկզբին վերաբերող տեղեկութիւնների վրայ պէտք է տարածուի գրեթէ նոյն կասկածը, որին արժանի են այդ կաթողիկոսի նախորդների մասին խառնակ տեղեկութիւնները: Պատահական չի թւում, որ «Գաւազանագիրքը» հաւաստի ոչինչ չի հաղորդում Աբասի անմիջական նախորդի մասին: Յամենայն դէպս պարզ է, որ դա աղբիւրի նշած Երեմիան չէ, քանի որ վերջինս իրականում Մաշտոցի ժամանակակիցն է եղել, այսինքն ապրել է Աբասից մէկ դարից աւելի առաջ³⁵: Որեւէ վստահութիւն չկայ նաեւ, որ Աբասի իրական նախորդը եղել է Շուփհաղիշոն («Գաւազանագրքում», ըստ Բ խմբի գրչագրերի անխաթար ընթերցման, վերջինիս յատկացուած երկրորդ տեղը՝ Եղիշայ առաքեալից անմիջապէս յետոյ, բացարձակ եւ առայժմ լրիւ անբացատրելի անախրոնիզմ է), որը Վաչագանի ժամանակակիցն էր եւ մինչեւ Աբաս հասնելու համար պէտք է աթոռակալած լինէր կէս դարից ոչ պակաս: Իսկ դա միայն տեսականօրէն բացառուած չէ, բացի այդ կարելի է յիշել նաեւ հայ-քաղկեդոնական պատմական աւանդոյթի եզակի հաղորդումը Աբասի նախորդներ Պետրոսի եւ Գրիգորի մասին (իհարկէ, լրջօրէն զգուշանալով այդ աւանդոյթի անհաւաստիութեան եւ խառնակութեան վտանգներից)³⁶:

Այսպիսի տրամաբանութիւնն ուշադրութեան առնելու դէպքում թւում է, թէ հնարատր է փորձել՝ իբրեւ առանձին շերտեր իրարից տարանջատելու Աբասի իշխանութեան սկզբի մասին «Գաւազանագրքի» յայտնած (աւելի ճիշտ՝ այդ աղբիւրից Բ-դ գլուխ տեղափոխուած) տեղեկութեան

առանձին մասերը: Տարանջատուած առաջին մասը կարելի է համարել Ջ դարի սկզբների պատմական իրողութիւնների հետ համընկնող տեղեկութիւնը Աղուանից կաթողիկոսարանը Չողից Պարտաւ փոխադրելու մասին, իր գլխաւոր պատճառով հանդերձ. «Յետ այսորիկ գերեցաւ ի Խազրաց աշխարհս Աղուանից, հրկեզ եղեն եկեղեցիք եւ կտակարանք... ի տյն ամի փոխեցին զաթոռ հայրապետութեանն Աղուանից ի Չորայ քաղաքն ի մայրաքաղաքն Պարտաւ *վասն հինահալած արշաւանաց թշնամեաց խաչին Քրիստոսի*» (ՊԱ, էջ 118.21 - 119.2-5): Իսկ ենթադրեալ մի երկրորդ աղբիւրի յանգող կարելի է համարել Աբասի՝ կաթողիկոս դառնալու թուականին վերաբերող տեղեկութիւնը. «Ապա յերկրորդ ամին Խոսրովու արքայից արքայի իրականում պէտք է լինէր «Բերող ամին»³⁷», յորժամ սկիզբն Հայ թուականին եղին, ի տյն ամի... մտուցին հայրապետ զՏէր Աբաս ի գաւառէն Մեծարանց [եւր Մեծիւքեանց]» (ՊԱ, էջ 119.1-2, 5-6):

Նկատենք այն կարեւոր հանգամանքը, որ 550-ական թուականներին համար հիսիսկովկասեան ցեղերի կողմից Կովկասեան սահմանագծի որեւէ խախտման մասին ուրիշ սկզբնաղբիւրները ոչինչ չգիտեն (այդ սահմանագիծը վերջնականապէս ամրացուել էր Խոսրով Անուշիրուանի իշխանութեան առաջին տարիներին)³⁸: Աւելացնենք նաեւ, որ «Գաւազանագրքի» տեղեկութիւնների մէջ ոչ միայն սկզբի, այլեւ մնացեալ հատուածներում նկատուում են իրական պատմութեանը հակասող հաղորդումներ, որոնք յանգում են այս կամ այն անհաստի սկզբնաղբիւրին: Օրինակ, նոյն Աբասին վերաբերող հատուածում կրկնուած են, ամենայն հաւանակամութեամբ, հայ-քաղկեդոնական պատմական աւանդոյթի յօրինուածքներին յանգող տեղեկութիւններ՝ իբրեւ թէ այդ կաթողիկոսի կողմից «եւ խաչեցար վասն մեր» միաբնակ բանաձեւը ընդունուած չլինելու մասին, որն իբրեւ թէ ընդունուեց միայն Եզր կաթողիկոսի ժամանակ Գարդմանի Մտեփաննոս եպիսկոպոսի ջանքերով. իրականում ե՛ւ Աբասի, ե՛ւ մոնոթեիզմին հարած Եզր Արահեզացու եւ Մտեփաննոս Գարդմանացու ժամանակներում եղել է լրիւ հակառակը³⁹:

Այսպիսով, «Գաւազանագրքի» խառնակ տեղեկութեան հիման վրայ, թոււմ է, թէ չի կարելի անվերապահօրէն մերժել Աղուէնի ժողովի արձանագրութեան վկայութիւնը՝ արդէն Շուփհաղիշոյ կաթողիկոսի եւ Վաչագան Բարեպաշտի օրօք Աղուանից կաթողիկոսանիստի՝ Չողից Պարտաւ տեղափոխուած լինելու մասին: Իսկ դա նշանակում է. որ Աղուէնի եկեղեցական ժողովը որոշակի հաւանականութեամբ հնարաւոր է թուագրել 510-ական թուականներով⁴⁰: Ինչ վերաբերում է «Վաչագանի վէպ»-ին, որը պէտք է գրուած լինէր անելի վաղ, ապա նրա ստեղծումը ճիշտ կը լինէր վերագրել Ջ դարի առաջին տասնամեակի սկզբներին (թերեւ՝ 501-502 թթ.), երբ Պարտաւ մարզպանանիստ-կաթողիկոսանիստը դեռեւս կառուցուած չէր եւ երկիրը խաղաղութեան շրջան էր ապրում: «Վէպում» նշմարում են նաեւ այլ հանգամանքներ, որոնք առիպում են խուսափել նրա շարադրման ժամանակը Ջ դարի երկրորդ տասնամեակին վերագրելուց եւ մօտեցնում են այն Վաչագանի թագաւորութեան առաջին տարիներին: Օրինակ՝ Ա.Ժգ

գլխում բառականին մանրամասն եւ յուզական գոյներով են նկարագրուած Վաչագանի հովանաւոր Վաղարշ արքայից արքայի նախորդ Պերոզ Սասանեանի բռնակալական տիրապետութեան ւարտական շրջանը եւ նրա կործանման պատմութիւնը «հեփթաղական ազգի» ձեռքով (484 թ.): Իսկ դա նշանակում է, որ «Վաչագանի վէպ»-ի շարադրման պահին դեռեւս թարմ են եղել հեղինակի կեանքի այդ ժամանակահատուածի տպաւորութիւնները: Սակայն միաժամանակ չի կարելի պնդել, որ Վէպը գրուած է Վաչագանի գահ բարձրանալուց անմիջապէս յետոյ: Թէպէտ իր ռական առանձնա-յատկութիւնների պատճառով այն չի տալիս դէպքերի ժամանակագրու-թիւնն ըստ տարիների, սակայն պարզ է, որ Վաչագանին վերագրուած գոր-ծերը ժամանակային բառականին մեծ միջակայք են ենթադրում. Վաղարշի օրօք գահ բարձրանալը (ամենայն հաւանականութեամբ՝ 485 թ., Նուարսա-կի պայմանագրի կնքման ժամանակ), քրիստոնէութիւնը ողջ երկրում վե-րականգնելը, Արցախում, Կամբէճանում եւ Բուն Աղուանքում մի քանի ա-ղանդների վերացումը, Ջաքարիայի ու Պանդալէոնի նշխարների յայտնա-բերումը ճիւղերի Յրի քաղաքում (այսինքն՝ Կուրի ձախափնեակում) եւ Գրիգորիսի նշխարների գիւտը Ամարասում (այսինքն՝ Արցախում):

Որ երկը չի գրուել Գրիգորիսի նշխարների գիւտից եւ դրանք Դի-տական հասցնելուց անմիջապէս յետոյ (այդ գործի նկարագրութեամբ է ա-ւարտուած շարադրանքը), երեսուն է եզրափակիչ հատուածի մի արտայայ-տութիւնից, ուր ասում է սրբերի յիշատակը ամեն տարի երկու անգամ կա-տարելու մասին. «Եւ զմնացեալն ի նշխարացն կնքեալ՝ մեծաւ զգուշու-թեամբ տայր պահել ի սուրբ եւ յազնուական սենեկի... Թողոյր երիցունս եւ սարկաւագունս եւ յոլովագոյն զունդ պաշտանէից, եւ ինքն *ի տարւոջն եր-կիցս անգամ* կատարէր զյիշատակ սրբոցն զերիս երիս ատուրս»⁴¹: Պարզ է, որ գտնէ մի քանի տարի արքայի կողմից պէտք է կատարուած լինէր այդպի-սի երկրպագութիւնը, որպէսզի հեղինակը գրէր դրա մասին: Նոյն կերպ՝ ԱԺԹ գլխում Ջաքարիայի եւ Պանդալէոնի նշխարների յայտնաբերումից յետոյ թագաւորի ուրախութեան եւ սրբերի երկրպագութեան նկարագրու-թիւնը իր մանրամասներով ու բարձրաձգ զեղարուեստականութեամբ թող-նում է դէպքից անմիջապէս յետոյ շարադրուածի տպաւորութիւն: Սակայն գլխի վերջում միայն մէկ պարբերութիւն՝ զուակ չունեցող արքային նշխար-ների գիւտի շնորհիւ, Բարձրեալի կամօք առաջնեկի (Պանդալէոն անունով որդու) պարգևման մասին, անմիջապէս ցոյց է տալիս, որ մեր նախնական տպաւորութիւնը վէպին բնորոշ ոճի արդիւնք է, իսկ շարադրանքի պահին գիւտից առնուազն 9 ամիս պէտք է անցած լինէր: Իսկ Ամարասում Գրիգո-րիսի մատուցների յայտնաբերման պահին (այս նկարագրութիւնը նոյնպէս անմիջապէս գրուածի տպաւորութիւն է թողնում) Վաչագանն արդէն նաեւ դուստր ունէր՝ Խնչիկ անունով եւ պատանեական տարիքի («տղա հասա-կով [եւեւ տղայական հասակաւ]»⁴², այսինքն՝ գտնէ 12-13 տարեկան), որը մի նոր ժամանակային միջակայքի առկայութիւն է ցոյց տալիս:

Ամփոփելով «Վաչագանի վէպ»-ի շարադրման ժամանակի մասին քննութիւնը՝ նշենք, որ այն առաւել մեծ հաւանականութեամբ հնարաւոր է

վերագրել Ջ դարի ամենաառաջին տարիներին, լրիւ չբացատրելով նաեւ Ե դարի ամենավերջին տարիները: Դա Կաւատ արքայից արքայի՝ զահին վերադառնալուն (498 թ.) յաջորդած տարիներն են, մինչեւ պարսկա-քիզանդական կարճատեւ պատերազմը (502-504 թթ.) եւ հիւսիսկովկասեան հոնսաւիրների աւերիչ ներխուժումը (503-504 թթ.), երբ «անիծեալ եւ չար Պարսիկը մարգպանքն»⁴³ երկրում չկային (նրանց գործառնողները հաւանաբար փոխանցուած էին Աղուանից թագաւորին), երբ Հայաստանում շարունակուած էր Վահան Մամիկոնեանի մարգպանութեան բարեյաջող շրջանը, իսկ Վիրքում՝ Վախթանգ Գորգասաւի թագաւորութեան: Մեր կարծիքով, դա է ամենայարմար ժամանակը «Վաչագանի վէպ»-ի նման մի ջատագովական երկի կամ վարքագրական վէպի ստեղծման համար, որի խնդիրն այնուամենայնիւ այդ արքայի ու նրա տոհմի կանոնաւոր պատմութիւնը գրելը չէր, այլ այն «ծրագրային» գործերի շարադրանքը, որոնք պէտք է կատարուէին եւ կատարուեցին նրա օրօք՝ ի շահ Սասանեաններին ենթակայ Աղուանից թագաւորութեան քրիստոնեայ հասարակութեան եւ եկեղեցու ամրապնդման («...եւ կարգաւորութիւնք Աղուանից, որ ի Վաչագամայ արքայէ եղան»⁴⁴):

Աւարտելով աղբիւրագիտական տեղեկութիւնների այս վերլուծութիւնը՝ նախորդ աշխատանքում նշել էինք, որ նման ժամանակագրական ճշգրտումներից յետոյ աւելի հաւանական է Վաչագան Բարեպաշտի գահակալման եւ Աղուանքում Արշակունեաց թագաւորութեան աւարտը (որեւէ սկզբնադիրում չարձանագրուած) ոչ թէ ենթադրաբար դնել կլորացուած 510 թուականին, ինչպէս արուել է մինչեւ այժմ, այլ կապել Սասանեան տէրութեան այն ենթադրելի վարչական ռեֆորմի հետ (իւր մնացեալ մանրամասներով՝ առայժմ անյայտ), որի արդիւնքում Կաւատ արքայից արքայի կողմից վերացուեց նաեւ Վիրքի (Իրերիա-Քարթլի) թագաւորական իշխանութիւնը: Պրոկոպիոս Կեսարացու տեղեկութիւնների հիման վրայ մասնագէտները Վրաց Գուրգեն թագաւորի զահրնկեց արուելը թուագրում են մօտաւորապէս 523 թուականով⁴⁵: Եթէ այսպիսի ենթադրութիւնն ընդունելի համարուի, ապա Բուն Աղուանքի անտիկ եւ վաղմիջնադարեան թագաւորութեան վերջին ներկայացուցիչ Վաչագան Բ Բարեպաշտ Արշակունոււն պէտք է վերագրել 38-ամեայ իշխանութեան մի շրջան (485-523 թթ.): Իհարկէ, նման մօտեցման դէպքում պէտք է նաեւ նորից կրկնել, որ աղբիւրների բացակայութեան պայմաններում այնուամենայնիւ հնարաւոր չէ Վաչագանի իշխանութեան բարեյաջող առաջին տասնամեակների հիման վրայ անպայման ենթադրել, որ բարեյաջող է եղել նաեւ մեզ առայժմ մանրամասնութիւններով անյայտ վերջին տասնամեակը (թէկու՞ղ Հայոց եւ Վրաց օրինակով):

Մեր նշուած աշխատանքի հրապարակումից յետոյ գրականութեան մէջ մեզ հանդիպեց մի դրամագիտական տուեալ, որը թոյլ է տալիս լրացուցիչ փաստարկել 523 թուականի հաւանականութիւնը: 2003 թ. հրապարակուած Էդուարդ Խուրշուդեանի ծանրակշիռ մեմագրութեան մէջ բերուած է դեռեւս 1993 թ. Ֆ. Գուրնէի կողմից յայտնաբերուած եւ հրատարա-

կուած՝ Կասատ արքայից արքայի 35-րդ տարում (=522/523 թ.) թողարկուած երկու միատեսակ դրամների վրայ առկայ միացագրի (մոնոգրամ) ընթերցումը Դ՛ն ձեռով, այսինքն՝ ALAN կամ ARAN⁴⁶: Առաջին անգամ 523 թուականին այդպիսի միացագրի յայտնուելը եւ Ֆ. Գուրնէն (իբրեւ տարբերակ), եւ Է. Խուրշուդեանը հակուած են կապելու հէնց Վրաց թագաւորութեան հետ մէկտեղ Աղուանից թագաւորութեան վերացման եւ այդ երկրներում Սասանեանների մարզպանական վարչակարգի հաստատման հետ:

Կարելի է յաւելել, որ այս առումով սասանեան դրամագիտական միջոց զարմանալի հետետղականութիւն է դրսեւորում: Մասնաւորապէս, նշելի է, որ ARM (=ARMINA-Հայաստան) մակագրութեամբ սասանեան դրամներն ի յայտ են գալիս միմիայն Վարահիրան Ե (Բահրամ Գուր՝ 420-438 թթ.) արքայից արքայի ժամանակներում⁴⁷, որի օրօք 428 թ. Հայաստանում վերացուեց Արշակունեաց թագաւորութիւնը եւ մտցուեց մարզպանական կառավարում: Համեմատութեան համար կարելի է նշել, որ Է դարի ամբողջ առաջին կեսին, ընդհուպ մինչեւ Սասանեանների անկումը 652 թ. թէ՛ Հայոց, թէ՛ Աղուանից, թէ՛ Վրաց մարզպանութիւնների քրիստոնեայ բնակչութիւնը օգտւում էր ամենալայն ինքնավարութիւնից (համապատասխանաբար՝ Հայոց, Աղուանից եւ Վրաց իշխանների հաստատութիւնների շնորհիւ, որոնք ձեւաւորուեցին այդ դարասկզբին կամ նախորդ դարի վերջին), սակայն Սասանեան արքաների անուններով դրամները, ի տարբերութիւն Այսրկովկասի երեք երկրների կիսանկախ թագաւորութիւնների գոյութեան ժամանակների՝ հատուտ էին անխափան կերպով⁴⁸:

ALEXAN HAKOBIAN

ON THE TIMING OF ARSHACID KINGDOM DOWNFALL IN ALBANIA

The article summarizes the facts that allow to date the end of reign of Albanian king Vachagan II to 523 A. D. – the time of king Kavad's reform which resulted to a downfall of Iberian king Gurgun's reign. The issuing of two coins with monogram Դ՛ն (=ARAN) on 35-th year of Kavad's reign (522/523 A.D.) also supports the facts in the article.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Տե՛ս Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Զմեական բնագիւղը եւ ներածութիւնը Վարդապ Առաքելեանի, Երեւան, 1983 (այսուհետեւ՝ ՊԱ): Մովսէս Դասխուրանցու երկի մասին վերջին ամփոփումը տե՛ս **Ա. Ա. Առօնյան**, *Албания-Алуанк в греко-латинских и древнесарматских источниках*, Ереван, 1987, էջ 150-272: «Պատմութիւն Աղուանից»-ի գրչագրերի մանրամասն քննութիւնը եւ նրանց ճիշդագրութիւնը տե՛ս **Ա. Յակոբեան**, Մովսէս Կաղանկատուացու «Աղուանից պատմութեան» ձեռագրերը, «Բանբեր Մատենադարանի», 15, Երեւան, 1986, էջ 110-143:
2. Մովսէս Դասխուրանցու աղբիւրների մասին մանրամասն տե՛ս *История агван Мовсеса Каганкатуаци*. Пер. К. Петканова, СПб., 1861, էջ X-XII; **A. Manandian**, *Beiträge zur*

albanischen Geschichte, Leipzig, 1897, էջ 17-22; Հ. Ն. Ալիմեան, Մովսէս Դասխուրանցի (կոչուած Կաղանկատուացի) եւ իր Պատմութիւն Աղուանից, Վիեննա, 1970; Հ. Ս. Սփազեան, Մովսէս Կաղանկատուացու «Աղուանից աշխարհի պատմութեան» արքիւրները, «ՊԲՀ», 1972, քիւ 3, էջ 195-206; К. А. Каграманян, Источники "История страны Алуанк", Автореф. дисс. ... к. и. н., Ереван, 1973; А. А. Акопян, Албания-Алуанк, էջ 177-210:

3. Միաժամանակ պարզաբանուած է, որ Վաչագանի մասին երկի հետ գոմէ ուղիղ կապ չունեն Ա.Իդ-իզ գլուխները: Դրանցում ներկայացուած են Վաչագանի հարցումների պատասխանները, որոնց հեղինակներն են Մատթէ Գիտմաւոր երեցը (պահպանուել է միայն «Պատմութիւն Աղուանից»-ում: տնն ման Մառտէ Գիտմաւոր, Հարցումն արքային Վաչագամայ, Առաջաբանը եւ գիտա-քննական բնագիրը Ա. Յակոբեանի, «Մատենագիրք Հայոց» (այսուհետեւ՝ «ՄՀ»), հ. Գ. 2 դար, Անթիլիաս, 2004, էջ 357-360) եւ Արքահամ Մամիկոնից եպիսկոպոսը («Պատմութիւն Աղուանից»-ում մէկ հատուած. ամբողջութեամբ պահպանուել է Հայոց կանոնագրքի դասական խմբագրութեան ձեռագրերում. տնն Կանոնագիրք Հայոց, Ա, Աշխատասիրութեամբ Վ. Յակոբեանի, Երեւան, 1964, էջ 501-506; Արքահամ Մամիկոնեան, Թուրք վասն նմեցելոց, Առաջաբանը եւ գիտա-քննական բնագիրը Ա. Յակոբեանի, «ՄՀ»), հ. Գ. 2 դար, Անթիլիաս, 2004, էջ 363-370. հմմտ. Հ. Բ. Մարգիսեան, Արքահամ Մամիկոնից եպիսկոպոսն եւ իւր առ Վաչագամ գրած թուրքն, Վենետիկ-Մ.Ղազար, 1899, էջ ԺԳ-ԺԵ), ինչպէս նաեւ Աղունի եկեղեցական ժողովի կանոնները (պահպանուել է ման Հայոց կանոնագրքի դասական խմբագրութեան ձեռագրերում. տնն Կանոնագիրք Հայոց, Բ, Աշխ. Վ. Յակոբեանի, Երեւան, 1971, էջ 91-100: Վաչագամ Աղուանից արքայ, Մահմաճաղութիւն կանոնական ի Վաչագամայ Աղուանից արքայէ եղեալ ի ժողովոյն, որ յԱղունն եղեւ, Առաջաբանը եւ գիտա-քննական բնագիրը Ա. Յակոբեանի, «ՄՀ»), հ. Գ. 2 դար, Անթիլիաս, 2004, էջ 127-140): Սրանք ինքնուրոյն գործեր են, որոնք մաշխող գլուխներից եւ իրարից տարբերուած են ման լեզուաճանկան առանձնայատկութիւններով: Նոյն պատճառով Վաչագանի մասին երկի մաս չի կարող լինել ման «Պատմութիւն Աղուանից»-ի՝ Հ. Նեոստե Ալիմեանի մատնանշած Ա.զ գլուխը (գոմէ ամբողջութեամբ), որը պարունակուած է Եղիշայ առաքելի պատմութիւնը: Եթէ Եղիշայի անունը եւ նրա նշխարների գիտող յայտնի լինէին երկի հեղինակին, ապա այդ սրբի յիշատակութեանը կը համոզւայինք նրա գոմէ այն տողերում, ուր Վաչագանի հրամանով հաւարում են Աղուանի տարբեր վայրերում պահուող սուրբ մշխարները (Գրիգոր Լուսաւորչի, Ջաքարիայի, Պանդուտեանի, Հովհաննէի եւ Գայիանէի), որպէսզի նրանց օգնութեամբ բացայայտուի Գրիգորիսի նշխարների տեղը: Իրականում առաջին հերթին հենց «Վաչագանի վէպ»-ում յիշատակուած չլինելու պատճառով է պարզ, որ Եղիշայ առաքելի եւ Ուռմայր թագաւորի հետ կապուող Աղուանից լուսաւորութեան պատմութիւնները ստեղծուած են 2 դարի վերջից կամ է դարի սկզբից ոչ վաղ եւ արդիւրեւ են այդ ժամանակ ծագած՝ Վրաց եւ Աղուանից եկեղեցիների Հայոց եկեղեցու գերագահութեան կարգավիճակից (ճշգրիտ՝ «առաջինը հաւասարների մէջ») ձեռքագատուելու միտումների, որպիսիք դեռեւս չեն մկատուոմ մեր երկում:
4. Հ. Ն. Ալիմեան, Մովսէս Դասխուրանցի, էջ 124-150 (ուսումնասիրողն այդ երկը լիովին անհամոզիչ փաստարկներով համարում է Ժ դարի սկզբի գործ, բայց միաժամանակ նշում «Գրական տեսակէտէ, սակայն, գնահատելի պէտք է դառնի վէպ, որ գրուած է ծաղկեալ ոճով»); К. А. Каграманян, Источники "История страны Алуанк", էջ 22; А. А. Акопян, Албания-Алуанк, էջ 183-188:
5. Մեր կողմից կազմուել եւ հրատարակուել է ման «Վաչագանի վէպ»-ի նոր քննական բնագիրը (Անճում, Կեանք եւ վարք Վաչագամայ արքայի, Առաջաբանը եւ գիտա-քննական բնագիրը Ա. Յակոբեանի, «ՄՀ»), հ. Գ. 2 դար, Անթիլիաս, 2004, էջ 51-112): Նրա տողատակերում նշուած են միայն 2 դ. սկզբների մակի վերականգնման համար կարեւորութիւն ունեցող «Պատմութիւն Աղուանից»-ի ա եւ եւր (Բ խումբ՝ եւ եւ եւրախներով) գրչագրերի տարբերութեւնները: Ա.Ժ-իզ գլուխների մասում օգտագործել ենք ման Հայոց մի քանի ճառերտիրներում պահպանուած հատուածային վարքագրական տարբերակը (շ): Ժամանակին մենք շտապել ենք համարել, որ այդ տարբե-

րակի ընդօրինակման համար մախագաղափար է ծառայել ՊԱ Ա եւ Բ ձեռագրախմբերի մայրերից անկախ գրչագիր (Ա. Յակոբեան, Մովսէս Կաղանկատաացու «Աղուամից պատմութեան» ձեռագրերը, էջ 137): Մակայն քննական քնագրի պատրաստման առիթով պարզել ենք, որ ծառքնտիրների հատուածի մայր օրինակը յանգում է շատ տեղերում իւրայատուկ խմբագրումներ ունեցող Բ խմբի այն մայր գրչագրին, որից առանձին արտագրուել է ման մեզ հասած եւր ձեռագրերի ընդհանուր մայրը:

6. Մանրամասն տե՛ս Հ. Ն. Ալիմեան, Մովսէս Դասխուրյանի, էջ 124-127:
7. **А. А. АКОПЯН, Албания-Алуанк**, էջ 188:
8. Տե՛ս «Հանդէս ամսօրեայ», ՇժԷ. տարի, Վիեննա-Երեւան, 2003, էջ 45-142:
9. Մանրամասն տե՛ս նշումս աշխատանքում «Հանդէս ամսօրեայ», Վիեննա-Երեւան, 2003, էջ 121-125:
10. Տե՛ս ՊԱ, Ա.իգ, էջ 84. 8-20; «ՄՀ», հ. Գ, էջ 110, մախ. 85-87:
11. Տե՛ս ՊԱ, Ա.իգ, էջ 94. 11-15; «ՄՀ», հ. Գ, էջ 139, մախ. 43: Ի դէպ, մախորդ հրատարակիչները ուշ գրչագրերի հիման վրայ համարակալել են այս մախաղատութիւնն իբրեւ Աղուէնի ժողովի վերջին՝ ԻԲ կանոն, որպիսի «վերականգնումն» ընդունելի չի բուս:
12. Տե՛ս ՊԱ, Ա.իգ, էջ 85.1-16; «ՄՀ», հ. Գ, էջ 110-111, մախ. 89-92:
13. Տե՛ս Բ. Ուրտարեան, Դարձեալ Աղուէնի ժողովի գումարման տարբերուի մասին, «ԼՀԳ», 1969, քիւ 6, էջ 55; **Мовсэс Каланкатуацэ, История страны Алуанк, Перевод с древнеармянского, предисловие и комментарии III В. Смеляева**, Ереван, 1984, էջ 190:
14. Տե՛ս վերնում, ծան. 3:
15. ՊԱ, Ա.իգ, էջ 89.19-20; «ՄՀ», հ. Գ, էջ 133, մախ. 3:
16. Հայոց վաղ տռնմամատեանների մասին մասնատրապէս տե՛ս Ա. Յակոբեան, Աղուամից իշխանների ժամանակագրութիւնը Է. դարի վերջին - Ը. դարի սկզբին. «Հանդէս Ամսօրեայ», ՇժԷ տարի, Վիեննա-Երեւան, 2004, էջ 269-271:
17. Հմմտ. **А. А. АКОПЯН, Албания-Алуанк**, էջ 185: Հայոց կանոնագրերի քննական հրատարակութեան հեղինակ Վազգէն Յակոբեանի ենթադրութիւնը հակառակն է (տե՛ս հ. Ա, էջ 346), սակայն դա չի հաստատում Աղուէնի կանոնների՝ մեր կազմած քննական քնագրի համեմատութիւնների արդիւնքում (հմմտ. «ՄՀ», հ. Գ, էջ 133-139):
18. Տե՛ս Ա. Յակոբեան, Յովկրեանէն Օձնեցու «Կանոնագիրը Հայոց» ժողովածոյի խմբագրութիւնների խնդիրը եւ Ամանիա Մոկացին, «Հանդէս Ամսօրեայ», ՇԻԱ տարի, Վիեննա-Երեւան, 2007, էջ 247:
19. Հմմտ. **В. В. Бартольд, Место прикаспийских областей в истории мусульманского мира**, Баку, 1925, էջ 24; **М. И. Артамонов, История хазар**, Ленинград, 1962, էջ 119-122; **А. А. Кудрявцев, Древний Дербент**, Москва, 1982, էջ 83-84; **А. А. АКОПЯН, Албания-Алуанк**, էջ 121-122:
20. Մանամասն տե՛ս **А. А. АКОПЯН, Албания-Алуанк**, էջ 210-211; Ա. Յակոբեան, Աղուամից իշխանների ժամանակագրութիւնը, էջ 269-271:
21. Մանամասն տե՛ս **А. А. АКОПЯН, Албания-Алуанк**, էջ 212, 223-224; Ա. Յակոբեան, Աղուամից իշխանների ժամանակագրութիւնը, էջ 270-271:
22. Հմմտ. **А. А. АКОПЯН, Албания-Алуанк**, էջ 186-187:
23. ՊԱ, Ա.իա, էջ 71.16-17; «ՄՀ», հ. Գ, էջ 96-97, մախ. 40: Այս տեղում Բ խմբի ձեռագրերը Մանասին փոխարեն տալիս են Մատթէ երցի անունը. «Ջուարեացեալ արքայ վազվադակի առաքէ զՄատթ (1 զՄատթէ) երեք եւ գՅովէլ սարկաւագ յԱմարաս, մախրան զիր երթալն»: Սակայն տուեալ դէպքում կարեւոր չէ, թէ ո՞ր խմբի ընթերցումն է սկզբնօրինակայինը:
24. ՊԱ, Ա.իա, էջ 73.1-2; «ՄՀ», հ. Գ, էջ 98, մախ. 48: Բ խմբի ձեռագրերը չունեն այս մախաղատութիւնը: Նախապատուութիւնը տալիս ենք **а** ձեռագրին, քանի որ դժուար թէ որեւէ գրիչ (տուեալ դէպքում **а-ի** գրիչը) յօրինէր մեծան պատասխամատու տեղեկութիւն, իսկ արտագրութեան ժամանակ ինչ-ինչ արտայայտութիւններ վրիպումով բաց թողնելը որեւէ գրիչ համար (այդ բուս Բ խմբի մայր ձեռագրի գրչի) սովորական բան է:
25. ՊԱ, Ա.իգ, էջ 89.20; «ՄՀ», հ. Գ, էջ 133, մախ. 3:
26. Հմմտ. **Очерки истории СССР. Первозытно-општинный строй и древнейшие государства на территории СССР**, Москва, 1956, էջ 484; **К. В. Тревер, Очерки по истории и культуре**

Кавказской Албании, էջ 142; **А. А. АКОПЯН**, *Албания-Алуанк*, էջ 36, ծան. 74; **Հ. Ս. ՍՎԱԳԻԱՆ**, Աղոսանից աշխարհի պատմություն (ինագոյն շրջանից - VIII դարը ներառելով), Երևան, 2006, էջ 67-68 շար.:

27. ՊԱ. Ա.Իգ, էջ 79.1-2; «ՄՀ», հ. Գ, էջ 104, մաս. 35: Ծիրերի երկրի Յրի քաղաքի տեղադրությունը Շամախի քաղաքի հատուածում ճշտում է Բաբկեն Յարությանցի կողմից (Բ. Յարությանց, Լիկիների տեղադրության հարցի շուրջը, «Քամերը Երևանի համալսարանի», 1971, թիւ 1, էջ 122-123): Թւում է, թէ կարելի է անել ճշգրտել այդ տեղադրությունը ենթադրելով վարմիջնադարեան «Յրի» քաղաքանուան հետ նոր ժամանակների Մարեան հայաբնակ գիւղի (Շամախուց 5 կմ արեւմուտք) անուան համապատասխանությունը, որն ամենայն հավանականութեամբ բաղկացած է «Մադի» հիմքից եւ իրանական «ան» տեղանունականելով վերջաւորութիւնից, իսկ Յ-Մ եւ Բ-Լ(Դ) հնչիւնական անցումները իրանալեզու միջակայում յայտնի են եւ միջնադարեան Շիրուանի տարածքում լիովին հնարաւոր:
28. Մանրամասն տե՛ս «Հանդէս ամսօրեայ», Վիեննա-Երևան, 2003, էջ 109-110:
29. Տե՛ս, օրինակ, Հայ ժողովրդի պատմութիւն, հ. Բ, Երևան, 1984, էջ 193: Հմմտ. **А. А. АКОПЯН**, *Албания-Алуанк*, էջ 217: Մեզ յայտնի միակ քաջատրիւնը Խօզեֆ Մարկուարտն է, որը ճշում է, որ Պարտաւը կառուցուած է Կառատ Ա-ի կողմից (**J. Marquart**, *Eranšahr nach der Geographie des Ps. Moses Xorenaci*, Berlin, 1901, էջ 177):
30. Այդ սկզբնաղբիւրի մասին մանրամասն տե՛ս **А. А. АКОПЯН**, *Албания-Алуанк*, էջ 196-201; **А. АКОПЯН**, О хронологии последних событий в “Истории 684 года”, “Кавказ и Византия”, вып. 6, Ерewan, 1988, էջ 24-36: Զմնական նոր բնագիրը տե՛ս Ամամում, 684 թուականի պատմութիւն, Առաջարանը եւ գիտա-բնական բնագիրը **Ա. Յակոբեանի**, «ՄՀ», հ. Ե, է. դար. Անթրիխաս, 2005, էջ 795-895:
31. Տարբերակներ՝ Պերոմ-Կառատ, Պերոզ-Ջառատ (**ՊԱ**, Բ.Ժր, էջ 178.2; 180.6; Բ.Իդ, էջ 187.15; Բ.Ին, էջ 190.3; Բ.լա, էջ 212.3; Բ.լր, էջ 213.11; Բ.լր, էջ 238.13-14):
32. **Հ. Աճառեան**, Հայոց անձնանունների բառարան, հ.Դ, Երևան, 1948, էջ 262:
33. Արաքացի մատնմագիրը Հայաստանի մասին, հաւաքեց եւ թարգմանեց **Բագրատ Խալաբեանց**, Վիեննա, 1919, էջ 29; 125; **СМОМПК**, вып. 38, 1908, отд. 10, էջ 41, 43: Օտար աղբիւրները Հայաստանի եւ հայերի մասին, 11, Արաքական աղբիւրներ, Բ. Իրմ ալ-Մաիք, Թարգմ. բնագրից, առաջարանը եւ ծանօթագրութիւնները **Ա. Տեր-Ղևոնդեանի**, Երևան, 1981, էջ 42: Օտար աղբիւրները Հայաստանի եւ հայերի մասին, 16, Արաքական աղբիւրներ, Գ, Արաք մատնագիրներ, Թ-Ժ դարեր, Ներածութիւնը եւ բնագրերից թարգմանութիւնները **Ա. Տեր-Ղևոնդեանի**, Երևան, 2005, էջ 265-266, 448, 494-495:
34. Այդ տարիների պարակա-քիւզանդական առնչութիւնների մասին բաւականին մանրամասն պատմում են Պրոկոպիոսը (*De bello Persico*, I, 7, 5. *Պրոկոպիոս Կեսարացի* (Բիւզանդական աղբիւրներ, Ա), թարգմանութիւն բնագրից, առաջարան եւ ծանօթագրութիւններ Հրայ Բարբիկեանի, Երևան, 1967, էջ 154) եւ ասորական ժամանակագրութիւնները (**Н. В. Пигулевская**, *Месопотамия на рубеже V-VI вв. н. э. Сирийская хроника Иешу Стильита как исторический источник*, Москва-Ленинград, 1940, էջ 130; **Н. В. Пигулевская**, *Сирийские источники по истории народов СССР*, Москва-Ленинград, 1941, էջ 155): Մանրամասն տե՛ս Հայ ժողովրդի պատմութիւն, հ. Բ, էջ 211; **Ю. Р. Джафаров**, К вопросу о первом появлении савир в Закавказье, “Вестник древней истории”, Москва, 1979, № 3, էջ 163-172:
35. «Գաւազանագրի»՝ Մովսէս Դասխուրանցու կողմից վերարտադրուած բնագրում «ԺԲ. Տէր Երեմիայ. ի տրայ ատուքս արար գիր Աղոսանից երամեկին Մեսրոպ (a Մեսրոպ), որ եւ Հայոց եւ Վրաց ետ զնշանագիր ջանիւ մեծաւ: ԺԳ. Տէր Արաւս...» (**ՊԱ**, Գ.Իգ, էջ 342.16-18): Աղոսանից գրի ստեղծման առիթով Մաշտոցի եւ Երեմիայի համագործակցութեան ժամանակի մասին մեր ճշգրտումները վերջին անգամ տե՛ս **Ա. Յակոբեան**, Մաշտոցի երկրորդ հիւսիսային ուղեւորութեան ժամանակը եւ խնդիրները, «Միջազգային գիտա-ժողով՝ մուկրուած Հայոց գրերի գիտի 1600-ամեակին. Երևան, 12-17 սեպտեմբերի, 2005 թ., Զեկուցումների ժողովածոյ», Երևան, 2006, էջ 122-131:

36. Sh'u La Narratio de rebus Armeniae. Édition critique et commentaire par G Garitte, Louvain, 1952, էջ 38: Այս աղբյուրի մասին վերջին անգամ մանրամասն տե՛ս В. А. Арутюнов-Фадеев, Повествование о делах армянских. VII век. Источник и время. Москва, 2004., Կ. Մելիքեան, «Narratiode rebus Armeniae» հայ-քաղեղոմական երկը վաղ միջնադարեան հայոց եկեղեցու պատմութեան կարեւոր սկզբնաղբիւր, Երեւան, 2007:
37. Շատ Հ. Ներսէս Ալիմնեանի՝ «...յերկրորդ ամին խոսարովու» հարկ է ուղղել «ի քսաներորդ ամին», հաւամբօրէն «ի Ի ամին» «ի Բ ամին» կարդացուած է: Խոսարով Ա-ի քսաներորդ տարին է 551/552» (Հ. Ն. Ալիմնեան, Մոսկւէ Դասխոսարանցի, էջ 164): Տեղին նշենք մի կարեւոր փաստ. Խոսարով Ամուշիրուանի երկրորդ տարին է Դուինի ժողովի գումարման (այսինքն՝ Արասի ձեռնադրման) տարի համարում նաեւ Խ դարի Վրաց մատենագիր Արսէն Մափաբեղին, որն իր «Վրաց եւ Հայոց քաժամման մասին» երկը շարադրելիս օգտուել է հայ-քաղեղոմական պատմական աւանդոյթի տեղեկութիւններից (Լ. Մելիքսեթ-Քեչլ, Վրաց աղբիւրները Հայաստանի եւ հայերի մասին, հ. Ա (Ե-ԺԲ դար), Երեւան, 1934, էջ 40):
38. Հմմտ. Geschichte der Perser und Araber zur Zeit der Sassaniden. Aus der arabischen Chronik von Tabari, übersetzt von Th. Nöldeke, Leyden, 1879, էջ 340; A. Christensen, L'Iran sous les Sassanides, Copenhagen, 1944, էջ 359; М. М. Дьяконов, Очерк истории Древнего Ирана, Москва, 1961, էջ 313-314: «Պատմութիւն Աղոսանից»-ի Բ.դ գլխում ներկայացուած «խազարական ասպատակութիւններին» հաւաստիութիւն վերագրելու ճանապարհով Կամիլա Տրեւերը փորձում է վերականգնել այդպիսի մի արշաւանք (Ք. Յ. Թրեւեր, Очерки по истории и культуре Кавказской Албании, էջ 228): Սակայն վերը կատարուած քննութեան լոյսի ներքոյ այդպիսի մտահոգութիւնը կարելի է ամբողջութեամբ փարատուած համարել:
39. Աւելի մանրամասն՝ А. А. Акопян, Албания-Алуанк, էջ 194:
40. Շատ այսմ՝ իրականութեան մեծնից աւելի մօտեցած Բազրատ Ուլուրաբեանի քուսգրումը՝ «Աղուէնի ժողովը գումարուել է Ե դարի վերջին կամ Զ դարի սկզբին» (տե՛ս Բ. Ուլուրաբեան, քրուագներ Հայոց Արեւելից կողմանց պատմութեան, Երեւան, 1978, էջ 178), անհրաժեշտ է մի փոքր էլ առաջ քերել, շուրջ 10-15 տարով:
41. ՊԱ, Ա.իգ, էջ 86.3-8; «ՄՀ», հ. Գ, էջ 112, նախ. 98:
42. ՊԱ, Ա.իգ, էջ 85.18; «ՄՀ», հ. Գ, էջ 111, նախ. 94:
43. Հմմտ. ՊԱ, Ա.ժը, էջ 52.1; «ՄՀ», հ. Գ, էջ 75, նախ. 8:
44. Հմմտ. ՊԱ, Ա.ժգ, էջ 42.8-9; «ՄՀ», հ. Գ, էջ 66, նախ. 01:
45. De bello Persico, I, 12, 4-14; Պրոկոպիոս Կեսարացի (Բիզանդական աղբիւրներ, Ա), էջ 154: Հմմտ. Очерки истории СССР. Кризис рабовладельческой системы и зарождение феодализма на территории СССР. III-IX вв., Москва, 1958, էջ 251; Очерки истории Грузии, т. II, Тбилиси, 1988, էջ 141-143:
46. F. Gernet, A new Sasanian Mintmark? London, 1993; Э. III. Хуршудия, Армения и Сасанидский Иран (Историко-культурологическое исследование), Алматы, 2003, էջ 190-193:
47. Հմմտ. Э. III. Хуршудия, Армения и Сасанидский Иран, էջ 186:
48. Sh'u Э. III. Хуршудия, Армения и Сасанидский Иран, էջ 186-187, 193:

ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱԿՅԱՆ

ԹՈՒՐԻԱՅԻ ԶԱՂԱԶԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՆԿԱՏՄԱՍԻ ԵՎ ՎՐԱՅ-ԱՔԻԱԶԱԿԱՆ ՀԱԿԱՍՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ 1991-1994ԹԹ.

ԽՍՀՄ փլուզումից հետո Թուրքիայի համար ստեղծված նպաստավոր պայմանները հնարավորություն ընձեռեցին նրան ակտիվ քաղաքականություն վարելու Հարավային Կովկասում: 1990-ականների սկզբներին Թուրքիան մեծ շահագրգռվածություն էր ցուցաբերում Հարավային Կովկասում իր դիրքերի ամրապնդմամբ և այդ ուղղությամբ ակտիվ քայլեր էր ձեռնարկում: Այս համատեքստում Վրաստանի աշխարհագրական դիրքը ռազմավարական, տնտեսական և քաղաքական տեսանկյունից Թուրքիայի համար մեծ կարևորություն էր ներկայացնում: Ուստի Թուրքիան առանձնահատուկ հետաքրքրությամբ հետևում էր Վրաստանում ընթացող գործընթացներին, Վրաստանի անկախացման գործընթացին և երկրում սկիզբ առած էթնիկ հակամարտություններին՝ մասնավորապես վրաց-աբխազական հակամարտությանը:

1991 թ. նոյեմբերի 1-ին Թուրքիան ճանաչեց Վրաստանի անկախությունը, սակայն դիվանագիտական հարաբերություններ հաստատեց միայն 1992 թ. մայիսին՝ ԱՄՆ կողմից Վրաստանի ճանաչումից և Էդուարդ Շևարդնաձեի՝ Վրաստանի ղեկավար դառնալուց հետո: 1992 թ. վերջերին Թուրքիայի վարչապետ Սուլեյման Դեմիրելը պաշտոնական այցով ժամանեց Վրաստան: Այցի ընթացքում Ս. Դեմիրելը և Է. Շևարդնաձեն ստորագրեցին Բարեկամության և համագործակցության մասին պայմանագիրը¹:

Թեև Թուրքիան ճանաչեց Վրաստանի անկախությունը և դիվանագիտական հարաբերություններ հաստատեց նրա հետ, այնուամենայնիվ բուրք-վրացական հարաբերություններում սկզբնական շրջանում որոշակի լարվածություն էր նկատվում: Թուրքիան ձեռնապահ էր մնում զարգացնել հարաբերությունները Վրաստանի հետ, ինչը մեծապես պայմանավորված էր Վրաստանում ընթացող ներքին առնակատումներով: Բացի այդ, վրաց-աբխազական հակամարտությունը, որը սկսվել էր 1992 թ. օգոստոսի 14-ին վրացական զորքերի Աբխազիա ներխուժմամբ, Թուրքիային կանգնեցրել էր դժվարին երկնտրանքի առջև: Մի կողմից, Թուրքիան հարավկովկասյան իր քաղաքականությունն իրականացնելիս մեծ կարևորություն էր տալիս Վրաստանին, մյուս կողմից՝ վրաց-աբխազական հակամարտության սկսվելուն պես՝ Թուրքիայում աննախադեպ կերպով ակտիվացավ աբխազական և չերքեզական համայնքների գործունեությունը:

Տարիների ընթացքում Թուրքիայում ձևավորվել էր ազդեցիկ հյուսիսկուլկասյան համայնքը, որը վրաց-աբխազական հակամարտության ընթացքում ակտիվ լոբիստական գործունեություն էր տանում ոչ միայն Թուրքիայի հասարակական-քաղաքական շրջանակներում, այլև՝ բուն թուրք հասարակության լայն շրջանակներում: Հաջող լոբիստական գործունեության շնորհիվ Թուրքիայում գործող «Կուլկասաբխազական համերաշխության կոմիտեն» ստացավ Թուրքիայի տարբեր քաղաքական կուսակցությունների պատգամավորների աջակցությունը: 1992թ. հոկտեմբերին Թուրքիայի Ազգային Մեծ Ժողովում (ԹԱՄԺ) թեժ քննարկումներ ծագեցին մի կողմից՝ աբխազներին, մյուս կողմից՝ վրացական իշխանությանն ներքին աջակցող պատգամավորների միջև: Այս քննարկումների արդյունքում Վրաստանի տարածքային ամբողջականության պահպանման սկզբունքի հիման վրա ձեռք բերվեց կոմպրոմիս: Թուրքիան աբխազներին և վրացիներին հումանիտար օգնություն էր ցուցաբերելու հավասարապես: Այս համգամայնքը վկայում է, որ Թուրքիայում ձևավորված աբխազ էթնիկ համայնքը խորհրդարանում լոբիստական գործունեության ճանապարհով կարողացավ ազդել Հարավային Կովկասում թուրքական քաղաքականության վրա²:

Բացի այդ, Թուրքիայի իշխանությունները չէին խոչնդոտում Թուրքիայում բնակվող աբխազական և չերքեզական համայնքներին աբխազներին աջակցելու խնդրում, ինչը անհանգստացնում էր պաշտոնական Թբիլիսիին³: Աբխազական համայնքի ակտիվ գործունեության մասին է խոսում մաս այն հանգամանքը, որ 1992-1993 թթ. Աբխազիայի մախազահ Վլադիսլավ Արծիմբան մի քանի անգամ այցելեց Թուրքիա, ու, թեև երբեք Թուրքիայի պաշտոնատար անձանց կողմից ընդունության չարժանացավ, այնուամենայնիվ աբխազական լոբիի ակտիվ ազդեցության արդյունքում Թուրքիայի հասարակական կարծիքի զգալի մասը իր աջակցությունը հայտնեց Աբխազիային⁴: Այս ամենը չէր կարող չանհանգստացնել վրացական իշխանություններին, ինչն իր ազդեցությունն էր թողնում թուրք-վրացական հարաբերությունների վրա:

Թեև վրաց-աբխազական պատերազմի ընթացքում Թուրքիայի հասարակության մեծ մասի համակրանքը աբխազների կողմն էր, այնուամենայնիվ պաշտոնական Անկարան հանդես էր գալիս Վրաստանի տարածքային ամբողջականության օգտին: Օրինակ, վրաց-աբխազական պատերազմի սկսվելու կապակցությամբ Թուրքիայի ԱԳ մախարար Հիքմեթ Չեթինը նշեց. «Դա Վրաստանի ներքին գործն է», որին շուտով հաջորդեց Թուրքիայի փոխվարչապետ Ե. Իմոնյուլի ելույթը, որտեղ նա խստորեն դատապարտում էր Հարավային Օսիային և Աբխազիային Վրաստանում տեղի ունեցած ընտրություններին չմասնակցելու համար: Իսկ 1992 թ. հոկտեմբերի 13-ին Թուրքիայի Ազգային Մեծ Ժողովը հանդես եկավ Վրաստանի տարածքային ամբողջականության օգտին հայտարարությամբ⁵:

Անդրադառնալով վրաց-աբխազական հակամարտությանը՝ պետք է նշել, որ պատերազմի ընթացքում ռուս-վրացական հարաբերությունները

լարված բնույթ էին կրում, քանզի վրաց-աբխազական հակամարտությունում Ռուսաստանը մեծ աջակցություն էր ցուցաբերում աբխազական կողմին, որը առաջացնում էր Վրաստանի խիստ դժգոհությունը: Դրա հետևանքով վրաց-ռուսական հարաբերությունները բավականին լարված բնույթ էին կրում, իսկ ժամանակ առ ժամանակ անմիջական բախման եզրին էին գտնվում⁶:

Ելնելով այս հանգամանքից՝ Վրաստանը ցանկանում էր հակամարտության մեջ անմիջականորեն ներգրավել Արևմուտքը, միջազգային կազմակերպություններին և հատկապես Թուրքիային: Այս ցանկությունն էլ ավելի մեծացավ, երբ 1992 թ. հոկտեմբերին աբխազական կողմին հաջողվեց գրավել Գագրան, որին անմիջապես հաջորդեց Վրաստանի ղեկավար Է. Շևարդնաձեի դիմումը ՆԱՏՕ-ին՝ որում մա խնդրում էր վերջինից աջակցություն ցուցաբերել աբխազական հիմնահարցում: Ավելին, Վրաստանի ղեկավարը հայտարարեց, որ չի բացառում Թուրքիայի ակտիվ մասնակցությունը խաղաղարար գործընթացին. «Թող մասնակցի Ռուսաստանը, բայց թող իր խոսքն ասի մաս Թուրքիան»⁷: Մակայն Արևմուտքը պատրաստակամություն չհայտնեց միջամտել Վրաստանում ընթացող հակամարտությանը:

1993թ. Էդուարդ Շևարդնաձեն, հաշվի առնելով Աբխազիայում ստեղծված բարդ իրավիճակը և Արևմուտքի մերժողական դիրքորոշումը՝ աջակցել Վրաստանին ծագած էթնիկական հակամարտությունում, որտեղ փնտրել Մոսկվայի աջակցությունը: 1994 թ. փետրվարին Ռուսաստանը և Վրաստանը ստորագրեցին ռուս-վրացական Բարեկամության և համագործակցության մասին համաձայնագիրը, որտեղ հատուկ նշված էր Ռուսաստանի իրավունքը Վրաստանում 25 տարով ունենալ ռազմական բազաներ: Սրան հաջորդեց Վրաստանի հարկադիր անդամակցությունը ԱՊՀ-ին⁸:

Վրաստանում տեղի ունեցող իրադարձությունները փոփոխություններ մտցրեցին Վրաստանի նկատմամբ Թուրքիայի քաղաքականության մեջ: 1993 թ. վերջերին և 1994 թ. Թուրքիան սկսեց ավելի հստակ քայլեր ձեռնարկել՝ բարելավելու Վրաստանի հետ իր հարաբերությունները, ինչը զիսավորապես պայմանավորված էր նրանով, որ Ռուսաստանը ակտիվ քայլեր էր ձեռնարկում Հարավային Կովկասում վերականգնելու իր գերակա դիրքը, որը սասանվել էր ԽՍՀՄ փլուզման արդյունքում: Թուրքիային լուրջ մտահոգություն էին պատճառում ոչ միայն Վրաստանի շուրջ կատարվող իրադարձությունները, այլ մաս Հարավային Կովկասում Ռուսաստանի ազդեցության ուժեղացումը: Թուրքիայի համար Վրաստանի նշանակության մեծացումը պայմանավորված էր մաս նրանով, որ 1994թ. Թուրքիան Վրաստանին սկսեց դիտել որպես Կասպից ծովից աղբյուրեղանական մակթի փոխադրման ուղիների համար մրցավազքում առավել իրական տարանցիկ երկիր⁹: Ուստի Թուրքիան սկսեց ավելի ակտիվորեն քայլեր ձեռնարկել թուրք-վրացական հարաբերությունները բարելավելու համար:

Վրաց-թուրքական հարաբերությունների բարելավմանն էր ուղղված 1994 թ. հունվարին Վրաստանի նախագահ Էդուարդ Շևարդնաձեի պաշտոնական այցը Թուրքիա: Այցի ընթացքում է. Շևարդնաձեն և Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելը Անկարայում ստորագրեցին հռչակագիր, որտեղ կոդները հաստատում էին իրենց պարտավորությունը՝ աջակցելու անկախությանը, խաղաղությանը, կայունությանը և ժողովրդավարությանը: Վրաստանի և Թուրքիայի ղեկավարները հայտարարեցին, որ իրենց համագործակցությունը ուղղված է լինելու ողջ տարածաշրջանի կայունացմանը նպաստելուն: Բացի այդ, ստորագրվեցին առևտրական և տնտեսական մի շարք համաձայնագրեր¹⁰:

Թե Վրաստանը, և թե Թուրքիան, երկկողմ հարաբերությունների զարգացմամբ պայմանավորված, լուրջ նպատակներ էին հետապնդում: Վրաստանը Թուրքիային համարում էր կարևոր դաշնակից տարածաշրջանում և Թուրքիայի օգնությամբ ցանկանում էր ամրապնդել իր անկախությունը, ապահովել այլընտրանքային առևտրի և ներդրումների աղբյուր, որը կհավասարակշռեր Ռուսաստանի ազդեցությունը Վրաստանի տնտեսության վրա: Այստեղ թերևս հիշատակման են արժանի ազգությամբ թուրք ամերիկացի հայտնի վերլուծաբան Ջեյմս Բարսանի խոսքերը. «Նախկինում Վրաստանը օսմանցիների ղեմ պայքարելու համար ռուսներից խնդրում էր օգնություն, սակայն այսօր Վրաստանը ռազմական, տնտեսական և քաղաքական աջակցություն է ստանում Թուրքիայից»¹¹:

Բացի այդ, 90-ականների սկզբներին հարավկովկասյան տարածաշրջանային զարգացումներին Թուրքիայի ակտիվ ներգրավմանը աջակցելով՝ Վրաստանը ցանկանում էր ոչ միայն թուլացնել Հարավային Կովկասում Ռուսաստանի դիրքերը, այլ նաև Թուրքիայի հետ սերտ հարաբերությունների օգնությամբ զարգացնել հարաբերությունները ՆԱՏՕ-ի հետ: Վրաստանը գտնում էր, որ Թուրքիայի, որպես ՆԱՏՕ-ի կարևորագույն անդամ-պետության հետ հարաբերությունների ամրապնդումը էական ազդեցություն կունենա Վրաստանի և ՆԱՏՕ-ի միջև հարաբերությունների զարգացման գործում¹²: Թուրքական որոշ հետազոտողներ մույնիսկ համարում են, որ Վրաստանը իր իրական անկախության համար պարտական է Թուրքիային: Նրանց կարծիքով, Թուրքիայի հարևան լինելու հանգամանքը թույլ տվեց Վրաստանին նախկինում զոյություն ունեցող առևտրային համակարգի գրեթե համընդհանուր կործանման ֆոնի վրա վերակազմավորել իր արտաքին կապերը: Սահմանային Մարայ-Բաթում կետի բացումը հսկայական ազդեցություն ունեցավ Վրաստանի արտաքին տնտեսական կապերի վրա: Թուրքիայի հետ սահմանակետերը Վրաստանի համար դարձան պատուհան դեպի արտաքին աշխարհ¹³:

Ինչ վերաբերում է Թուրքիային, ապա նա, ունենալով քաղականին սերտ հարաբերություններ Ադրբեյջանի հետ, Վրաստանի հետ հարաբերությունների բարելավմամբ ակնկալում էր ուժեղացնել իր ազդեցությունը ողջ տարածաշրջանում: Թուրքիայի համար թուրք-վրացական բարիդրացիական հարաբերությունները կարևոր էին նաև նրանով, որ Թուրքիայի

հարաբերությունները իր հարևան երկրներից Իրանի, Հայաստանի և Սիրիայի հետ բավականին լարված էին, ուստի տրանսպորտային բեռնափոխադրումների բնագավառում Վրաստանը շատ կարևոր նշանակություն ունի Թուրքիայի համար¹⁴:

Հատկանշական է, որ Արխագիան Վրաստանի դեմ իր անկախության համար մղվող պատերազմում նույնպես մեծ ակնկալիքներ ուներ Թուրքիայից և հատկապես Թուրքիայի արխագական և չերքեզական համայնքներից, ուստի ակտիվ ջանքեր էր գործադրում այդ ուղղությամբ: Վրաց-արխագական պատերազմի ամենաթեժ պահին՝ 1993 թ. հունվարի 27-ին, Արխագիայի նախագահ Վլադիսլավ Արծինբան կոչով դիմեց Արխագիայից դուրս գտնվող բոլոր արխագներին և չերքեզներին վերադառնալ Արխագիա:

Նա, մասնավորապես, ասում էր. «...Մեր զինված պայքարին աջակցելու եկան Հյուսիսային Կովկասի մեր եղբայրները, Թուրքիայում, Սիրիայում, Հորդանանում ապրող արխագները, կաբարդիները, ադիգեյցիները, ինչպես նաև մեզ աջակցելու եկան հայերը, ռուսները, թաթարները: Սրանով պատերազմի շրջանակները ընդլայնվեցին: 6 ամիս ընթացող այս պատերազմում բշնամին մեծ կորուստներ ունեցավ: Ահա այսպիսի հանգամանքներում աշխարհում ապրող բոլոր չերքեզներին կոչ եմ անում հնաբավոր ամեն ինչ անել մեր հայրենիքին օգնելու համար»¹⁵:

Թուրքիան նույնպես բավականին լուրջ կարևորություն էր տալիս Արխագիային և թուրք-արխագական հարաբերություններին: Արխագիան, որը կարևոր դիրք էր գրավում սևծովյան ավազանում և կովկասյան տարածաշրջանում, ռազմավարական և տնտեսական տեսանկյունից մեծ նշանակություն ուներ Թուրքիայի համար: Արխագիայի հետ հարաբերություններում Թուրքիան իր քաղաքական նպատակները հետապնդելիս օգտագործում էր թուրք-արխագական մշակութային և տնտեսական հարաբերությունները: Թուրքիայի ղեկավարությունը բավականին հետևողական քաղաքականություն էր վարում Արխագիայում թուրքական մշակութային տարրերի ներմուծման և ընդլայնման հարցերում: Թուրքական մշակույթի ներթափանցումը Արխագիա լայն թափ էր ստացել դեռևս Օսմանյան կայսրության տիրապետության ժամանակ, երբ 16-րդ դարում թուրքական իշխանությունները բռնի ուժով իսլամը ներմուծեցին Արխագիա, իսկ 17-րդ դարի սկզբին Արխագիայում իսլամի ազդեցությունը բավականին ուժեղացավ: Սակայն Արխագիայում իսլամը հասարակական մակարդակով այդպես էլ լայն տարածում չստացավ և ըստ ոչ պաշտոնական տվյալների, այսօր Արխագիայի բնակչության միայն 20-30 տոկոսն է իսլամադավան¹⁶:

Անդրադառնալով տնտեսական հարաբերություններին՝ ընդգծենք, որ Թուրքիան բավականին մեծ ուշադրություն է դարձնում Արխագիայի տնտեսության մեջ թուրքական կապիտալի ակտիվ ներթափանցմանը, որը բավականին ակտիվացավ հատկապես վերջին տասնամյակում: Արխագիայում թուրքական կապիտալն հատկապես կենտրոնացված է ածխի արդյունահանման ու վերամշակման ոլորտում և անշարժ գույքի առք ու

վաճառքի բնագավառում¹⁷:

Այսպիսով, վրաց-աբխազական հակամարտությունում Թուրքիայի ներգրավմամբ էականորեն շահագրգռված էին թե՛ վրացական կողմը, և թե՛ աբխազական կողմը, ինչը վրաց-աբխազական հակամարտությունում Թուրքիայի դերակատարությանը շատ յուրահատուկ բնույթ է տալիս:

Ինչպես վերը նշվեց, չերքեզական սփյուռքը անգնահատելի աջակցություն է ցուցաբերել Աբխազիային վրաց-աբխազական հակամարտությունում: Թուրքիայում գոյություն ունեն մոտ 40 հյուսիսկովկասյան ժողովուրդներ՝ աբխազներ, կաբարդիներ, դաղստանցիներ, ինգուշներ, չեչեններ և այլք, և այս բոլոր ժողովուրդներին անվանում են «չերքեզներ»: Իսկ չերքեզները իրենց սովորաբար անվանում են ադիգեյցիներ¹⁸: Նշենք, որ չերքեզական համայնքը մեծ հարգանք էր վայելում Օսմանյան կայսրությունում¹⁹: 90-ականների սկզբներին, ըստ ոչ պաշտոնական տվյալների, Թուրքիայում աբխազական սփյուռքը կազմում էր մոտ 500-700 հազար, իսկ ընդհանուր առմամբ Թուրքիայում բնակվում էին մոտ 2 մլն. հյուսիսկովկասցիներ²⁰: Թուրքիայում հյուսիսկովկասցիները մեծամասամբ բնակվում են արևմտյան և կենտրոնական Անատոլիայում, իսկ 1995 թ. համայնքի ունեցած փնակագրական տվյալներով բնակչության 60 տոկոսը բնակվել է Ստամբուլում, Անկարայում և Սամսունում²¹:

Այսպիսով, Թուրքիայում ժամանակի ընթացքում ձևավորվել էր մոտ 2 միլիոն բնակչություն ունեցող չերքեզական սփյուռքը: Չերքեզական սփյուռքի կյանքում կարևոր դերակատարություն ունեին դեռևս 1870-ական թվականներից Թուրքիայում ստեղծված հյուսիսկովկասյան կազմակերպությունները: Մինչև 1980-ականների վերջերը հյուսիսկովկասյան կազմակերպությունների գործունեությունը հիմնականում նպատակաուղղված էր էթնիկ համախմբվածության զարգացմանը և թուրքացման գործընթացին հակադրմանը: Խորհրդային Միությունում իրականացվող վերակառուցման քաղաքականությունը հնարավորություն ընձեռեց Թուրքիայի հյուսիսկովկասյան համայնքին այցելելու իրենց նախնիների բնակավայրերը և Հյուսիսային Կովկասից հրավիրելու ուսանողների և քաղաքական գործիչների²²:

1992 թ. Կովկասյան Մշակութային Միության նախաձեռնությամբ 20 այլ կազմակերպությունների հետ ստեղծվեց դաշնային մարմին՝ Կովկասյան Միությունը (*Kafkas Dernegi*), որը շուտով ընդլայնվեց և իր 23 մասնաճյուղերով վերանվանվեց Կովկասյան Մշակութային Միության (*Kafkas Kültür Dernegi*): Այն մինչ օրս հանդիսանում է Թուրքիայում հյուսիսկովկասցիների ամենաազդեցիկ կառույցը²³:

Թուրքիայի հյուսիսկովկասյան համայնքը նշանակալից դեր է ունեցել Աբխազիայի համար վրաց-աբխազական հակամարտությունում: Վրաց-աբխազական պատերազմի սկսվելուն պես Թուրքիայի հյուսիսկովկասյան համայնքն ակտիվորեն ներգրավվեց հակամարտության մեջ: Վրացական զորքերի Աբխազիա ներխուժումից 2 օր անց՝ 1992 թ. օգոստոսի 16-ին Կովկասյան Միության (*Kaf-Der*) նախաձեռնությամբ Ստամբու-

լում և Անկարայում կազմակերպվեցին հզոր ցույցեր ընդդեմ վրացական զորքերի Արխագիա ներխուժման և Թուրքիայի կառավարության պասիվ դիրքորոշման: Ցույցերին մասնակցում էին հազարավոր հյուսիսկովկասցիներ: Հյուսիսկովկասցիները մի ակնթարթում դարձան քաղաքական գործուն Թուրքիայում, իսկ Կովկասյան Միությունը սկսեց ակտիվ լրբիստական քաղաքականություն վարել, որը կենտրոնացված էր Թուրքիայի և Ռուսաստանի դեմ:

1992 թ. օգոստոսի 22-ին Թուրքիայի հյուսիսկովկասյան կազմակերպությունները հանդես եկան համատեղ հայտարարությամբ՝ դատապարտելով Վրաստանի ներխուժումը Արխագիա: Առաջին անգամ չերթեզական համայնքը հանդես եկավ որպես միասնական ուժ: Հյուսիսկովկասյան կազմակերպությունների նախաձեռնությամբ ոչ միայն հարյուրավոր կամավորներ մեկնում էին Արխագիա և պայքարում ընդդեմ վրացական զորքերի, այլ նաև հսկայական չափերի դրամական և պարենային օգնություն էր ցուցաբերվում Արխագիային²⁴: Դրան հաջորդեց 1992 թ. օգոստոսին ադիգեյցիների և արխագների միջազգային Միության նախագահ Յուրի Կալմիկովի հայտարարությունը, որտեղ նա նախազգուշացնում էր Վրաստանի նախագահ Է. Շևարճևաձեին, որ եթե Վրաստանը սկսի համընդհանուր զորահավաք, ապա, ի պատասխան դրա, նա կոչ կանի հյուսիսկովկասցիների ամբողջ համայնքին զինվելու ընդդեմ վրացիների²⁵:

1992 թ. մոտ 150 հյուսիսկովկասցիներ են ժամանել Թուրքիայից պայքարելու Արխագիայի կողմից²⁶: Բացի այդ, բավականին մեծ թվով կամավորներ Հորդանանից և Սիրիայից ժամանել են Արխագիա, որոնցից շատերը մնացել են այնտեղ պատերազմից հետո: Այդ կապակցությամբ բավականին հետաքրքիր դիտարկում էր արել Հելսինկյան «Human Rights Watch» կազմակերպությունը: Ըստ կազմակերպության դիտարկման, «Արխագական ղեկավարությունը երախտապարտ էր, որ պատերազմի ժամանակ արխագական սփյուռքից ստացել էր ոչ միայն նշանակալից ֆինանսական աջակցություն, այլ նաև բավականաչափ թվով մարտիկներ»²⁷:

1993 թ. հունիսի 20-25-ը Ադիգեյի հանրապետության մայրաքաղաք Մալկոպում տեղի ունեցավ Չերքեզների Համաշխարհային Կոնգրեսը: Կոնգրեսի շրջանակներում իրականացրած միջոցառումներից հետո՝ 1993 թ. սեպտեմբերի 1-ին, Արխագիա վերադառնալիս Չերքեզների Համաշխարհային Կոնգրեսի անդամ, նրա տպագիր օրգանի՝ «Nart Gazetesi» գլխավոր խմբագիր Նեզուլ Շարիանը «Yedi Yıldı» ամսագրին տված հարցազրույցում հանգամանորեն անդրադարձել էր կոնգրեսի շրջանակներում իրականացված միջոցառումներին և քննարկված հարցերին: Նեզուլ Շարիանը մասնավորապես նշել էր. «Երբ մեր հայրենիքի մի մասնիկը կազմող Արխագիայում պատերազմ սկսվեց, իրենց հայրենիքը պաշտպանելու համար բավականին մեծ թվով արխագներ և հյուսիսկովկասցիներ Թուրքիայից, Սիրիայից և աշխարհի մյուս մասերից ժամանեցին Արխագիա՝ օգնելու մեր եղբայրներին: Արտերկրի արխագական և չերքեզական սփյուռքից հարյուրավոր կամավոր երիտասարդներ են ժամանել Արխա-

զիս՝ պայքարելու ընդդեմ վրացական զորքերի: Մեծ թիվ են կազմում մաս. Թուրքիայից և արաբական երկրներից ժամանած կամավորները: Օրինակ, միայն Թուրքիայից արդեն ժամանել են ավելի քան 2 հազար մարդ, որոնց թվում շատ են մաս. ազգությամբ թուրք կամավորները: Ընդհանրապես թուրք հասարակությունը մեծ համակրանքով է վերաբերվում Աբխազիային»²⁸:

Ինչպես վերը նշվեց, Թուրքիայի հասարակության մեծ մասը համակրանքով էր վերաբերվում արխագներին: Այս համատեքստում հիշատակման է արժանի այն, որ թուրքական հետախուզությունը և պանթուրքիստական կազմակերպությունները մույնպես մասնակցել են վրաց-արխագական հակամարտությանը: Մասնավորապես, Թուրքիայի տարածքում, թուրքական հետախուզության և պանթուրքիստական կազմակերպությունների անմիջական մասնակցությամբ ձևավորվում էին կամավորական խմբեր, որոնք, մասնակցելով ռազմական գործողություններին, աջակցել էին արխագական կողմին: Կամավորների հավաքագրումը կատարվում էր Թուրքիայում բնակվող արխագ մահմեդականների թվից: Այս գործին ակտիվ աջակցություն է ցուցաբերել թուրքական «Աբխազիայի հետ համերաշխության համայնք» կազմակերպությունը²⁹:

Վրաց-արխագական հակամարտությունում Աբխազիային նշանակալից աջակցություն են ցուցաբերել ոչ միայն Վրաստանի և Աբխազիայի էթնիկ փոքրամասնությունները՝ հայերը, ռուսները, ուկրաինացիները, թուրքերը, հույները և մյուսները, որոնք արխագների հետ միասին պայքարել են վրացական զորքերի դեմ, այլ մաս. Հյուսիսային Կովկասի հանրապետության ժողովուրդները՝ չեչենները, ադղները, չերքեզները և մյուսները³⁰:

1994 թ. վրացական կողմի պարտությամբ ավարտվեց վրաց-արխագական հակամարտությունը³¹: 1993 թ. դեկտեմբերի 1-ին Ժնևում ՄԱԿ-ի հովանու ներքո և ՌԴ միջնորդությամբ, կողմերը ստորագրեցին Փոխըմբռնման մասին հուշագիրը, որով նախատեսվում էր կրակի դադարեցում բանակցությունների վարման շրջանում և պատանդների փոխանակում³²: Իսկ 1994 թ. ապրիլի 4-ին Մոսկվայում ստորագրվեց 2 կարևոր փաստաթուղթ՝ Փախստականների և տեղահանված անձանց կամավոր վերադարձի և Քաղաքական միջոցներով վրաց-արխագական հակամարտության կարգավորման մասին հայտարարության ընդունումը³³:

Ամփոփելով՝ կարող ենք նշել, որ 90-ականների սկզբին թուրք-վրացական հարաբերություններում առկա էր որոշակի լարվածություն, ինչը մեծապես պայմանավորված էր Թուրքիայի վարքագծով: 90-ականների սկզբին Թուրքիան արխագական հիմնահարցում իրեն բավականին զուսպ էր պահում, ինչը պայմանավորված էր նրանով, որ Անկարան այդ հիմնահարցում դժվարին երկրնտրանքի առջև էր կանգնած: Մի կողմից, նրա ռազմավարական շահերից բխում էր սերտ համագործակցություն Վրաստանի հետ, մյուս կողմից՝ անհրաժեշտ էր հաշվի առնել արխագամետ դիրքորոշում ունեցող հասարակական կարծիքը: Բացի այդ, վրաց-արխագական հակամարտության սկսվելուն պես՝ Թուրքիայում անմիապաշար կեր-

պով ակտիվացավ մոտ 2 միլիոնանոց չերքեզական ափյուռքը, որը լուրջ լուրիստական աշխատանք էր տանում՝ ազդելու Թուրքիայի քաղաքականության վրա: Այս հանգամանքը մույնպես իր ազդեցությունը ունեցավ վրաց-աբխազական բուն հակամարտության հարցում Թուրքիայի դիրքորոշման վրա:

1993 թ. վերջերին և 1994 թ. Թուրքիան սկսեց ավելի մեծ ուշադրություն դարձնել Վրաստանին, ինչը գլխավորապես պայմանավորված էր Ռուսաստանի ակտիվ քայլերով՝ վերականգնելու ԽՄՀՄ փլուզման արդյունքում Հարավային Կովկասում իր սասանված գերակա դիրքը: Ելնելով այս հանգամանքից՝ Թուրքիան սկսեց զարգացնել Վրաստանի հետ իր հարաբերությունները, որը ստացավ Վրաստանի ղեկավարության աջակցությունը: Թուրքիան և Վրաստանը մեծապես շահագրգռված էին երկկողմ հարաբերությունների մերձեցմամբ, որն իր սուր ծայրով ուղղված էր Հարավային Կովկասում Ռուսաստանի դիրքերի թուլացմանը:

Վրաց-աբխազական պատերազմում աբխազական կողմի հաղթանակին էապես աջակցել են ոչ միայն ՌԴ մաս կազմող Հյուսիսային Կովկասի հանրապետություններից ժամանած կամավորական ջոկատները, կազակները և ռուսները, այլ նաև Աբխազիան անգնահատելի աջակցություն է ստացել արտերկրում բնակող հյուսիսկովկասցիների համայնքներից, հատկապես Թուրքիայի աբխազական և չերքեզական ափյուռքից: Նրանք Աբխազիային ցույց են տվել ոչ միայն զգալի ֆինանսական և տնտեսական օգնություն, այլ նաև բավականին մեծ թվով երիտասարդ կամավորներ Թուրքիայի ժամանել են Աբխազիա և իրենց անմիջական զինված մասնակցությունն են ունեցել աբխազական կողմի վերջնական հաղթանակին:

Կամավորների շարքում մեծ թիվ են կազմել նաև ազգությամբ թուրք կամավորները, որոնք մեծ համակրանք էին տածում աբխազ ժողովրդի հանդեպ: Վրաց-աբխազական հակամարտության կարգավորման գործընթացում Ռուսաստանի դերը բացառիկ էր: Ռուսաստանին հաջողվեց միանձնյա միջնորդության շնորհիվ դադարեցնել վրաց-աբխազական պատերազմը և հրադադար հաստատել այնտեղ, ինչի շնորհիվ նա հնարավորություն ստացավ պահպանել իր ռազմական ներկայությունը Վրաստանում և ռուսական ուժերի ներկայությունը Աբխազիայում ԱՊՀ խաղաղապահ ուժերի շրջանակներում: Դրանով Ռուսաստանը կարողացավ ոչ միայն ամրապնդել իր ազդեցությունը Վրաստանում, այլ նաև, որը շատ կարևոր էր, կասեցնել Թուրքիայի ակտիվ քաղաքական և նաև հավանական ռազմական ներթափանցումը Վրաստան:

THE POLICY OF TURKEY IN GEORGIA AND GEORGIAN-ABKHAZIAN CONFLICT IN 1991-1994

Turkey formally recognized Georgia's independence in November 1991, but established diplomatic relations only in May 1992, after the United States had done so and after Eduard Shevardnadze returned to head the country. In late 1992, the then Turkish president Mr. Demirel visited Tbilisi, where he and Shevardnadze signed a treaty on friendship and cooperation. The war started in August 1992 and ended in 1994 through the decisive success of the Abkhazian side. Other ethnic groups of the region also became involved and affected by the conflict. Most of Georgia's and Abkhazia's minorities (Armenians, Russians, Ukrainians, Greeks, Turks, etc.) allied themselves either with the Abkhazians or the Georgians. In addition, peoples related to the Abkhaz from the North Caucasian republics notably Chechens, Circassians and Abazas, came to Abkhazia and fought alongside the Abkhazian forces. On December 1, 1993 talks began in Geneva between the Georgian and Abkhazian sides under the aegis of the United Nations and with the Russian Federation as intermediary. The sides signed a "Memorandum of Understanding" which stipulated a formal ceasefire, exchange of prisoners and continuation of the negotiation process. On April 4, 1994 the sides signed in Moscow the "Declaration on Measures for a Political Settlement of the Georgian-Abkhazian Conflict".

ՇԱՆՈՅԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Manos Karagiannis. The Turkish-Georgian Relationship and the Transportation of Azerbaijani Oil, <http://ourworld.compuserve.com/HOMEPAGES/USAZERB/413.htm>:
2. Gareth M. Winrow, Turkey and the Caucasus: Domestic Interests and Security Concerns. London, Royal Institute of International Affairs, 2000, p. 33.
3. Омер Коджаман, Южный Кавказ в политике Турции и России в постсоветский период, М., 2004, с. 146:
4. Tütüncü M., The Caucasus Policy of Turkey (1990-1997): Caucasus: War and Peace: New World Disorder in Caucasia, Haarlem, Holland, 1998, p. 195.
5. Ömer Aytek Kurmel, Yedi Yıldız, Aylık Dergisi, Ekim 1994, s. 12.
6. Ghia Nodia, Georgian perspectives. www.abkhazia.georgia.parliament.ge/Publications/Georgian/ghia_nodia.htm:
7. Свободная Грузия, 10.10.1992.
8. Robert Ketcherside, Georgia: A Country Out of Control, www.zombiezodiac.com/rob/ps271.htm:
9. Омер Коджаман, Բշկ. աշխ., p. 147.
10. Manos Karagiannis, The Turkish-Georgian Relationship and the Transportation of Azerbaijani Oil, <http://ourworld.compuserve.com/HOMEPAGES/USAZERB/413.htm>:
11. Միջինասիական լուսն Singh Gajendra, Russian bear calls on gray wolf, Asia Times Online, 31.08.2004.
12. Achim Wennmann, Renewed Armed Conflict in Georgia? Options for Peace Policy in a New Phase of Conflict Resolution, Program for the Study of International Organization(s),

13. Տես օրինակ Бурчу Гюльтекин, Турция-Южный Кавказ: анализ современной ситуации, "Spectrum", Ереван, 2004, с.58.
14. Manos Karagiannis, The Turkish-Georgian Relationship and the Transportation of Azerbaijani Oil, <http://ourworld.compuserve.com/HOMEPAGES/USAZERB/413.htm>:
15. Yedi Yıldız, Aylık Dergisi, Ocak 1993, s. 11-12.
16. Կարեն Վերանյան, Արխագան աշխարհաքաղաքական շահերի խաչմերուկում, «21-րդ Դար», 2005, No. 4, էջ 52:
17. Նույն տեղում, էջ 54:
18. Ricks Smeets, Circassia, Central Asian Survey, Vol. 14, No. 1, March 1995, p. 111.
19. Թուրքիայում չերքեսական սփյուռքի մասին ավելի մանրամասն տես՝ Арсен Авакян, Черкесский фактор в Османской империи и Турции (вторая половина XIX – первая четверть XX вв.). Ереван, 2001. 421с.
20. Sever Metin, Kafdağı'nın Bu Yüzü: Türkiye'deki Kafkas Kökenliler, İstanbul, 1999, p. 183, Yedi Yıldız, Aylık Dergisi, Mayıs 1994, s. 12.
21. Kaf-Der Bülten, No. 19-20, March-April 1995, pp. 20-21.
22. Lowell Bezanis, Soviet Muslim Emigrés in the Republic of Turkey, Central Asian Survey, Vol. 13, No. 1 Winter 1994, p. 85.
23. Marje, Sönmez Baykan, Bir Ulus Olmak, Bir Vatana Sahib Olabilmek İçin Birlemek Zorundayız, October 1992, p. 4-5.
24. Marje, Abhaz Delegasyonunun Abhazya Cumhuriyeti İncelemeleri, August 1992, p. 43.
25. Egbert Wesselink, The North Caucasian Diaspora In Turkey, <http://www.kapba.de/CaucasianDiaspora.html>
26. Ibid.
27. Human Rights Watch/Helsinki, Georgia/Abkhazia, Violations of the Laws of War and Russia's Role in the Conflict, Vol. 7, No. 7, New York/Washington, March 1995, p. 43.
28. Yedi Yıldız, Aylık Dergisi, Eylül 1993, s. 4-6.
29. Сваранц А., Пантюркизм в геостратегии Турции на Кавказе, Академия гуманитарных исследований, Москва, 2002, с. 491.
30. Vyacheslav Chirikba, The Georgian – Abkhazian Conflict: In Search of Ways Out, (<http://www.abkhazia-georgia.parliament.ge/Publications/Abkhaz/Chirikba.htm>. - accessed 20/03/2003):
31. Stakeholders of South Caucasian Conflicts: Geopolitical Perspective, textus.diplomacy.edu/Thina/txtGetXDoc.asp?IDconv=3207:
32. Stuart Kaufman, Modern Hatreds: The Symbolic Politics of Ethnic War, London, 2001, p. 122, SIPRI Yearbook 1995, Oxford 1995, p. 251.
33. Дипломатический вестник, 1993, No. 9-10. с. 55-57.

«ԿԱՐՄԻՐ ՔՐԴԱՏԱՆ»։ ՊԱՏՄԱՆ-ՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Հարավային Կովկասի առավել տարօրինակ և դեռևս բավականաչափ չուսումնասիրված վարչատարածքային կազմավորումներից մեկը «Կարմիր Քրդստանն» է, որի կազմավորման և լուծարման պատճառների ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի ոչ միայն պատմական, այլև քաղաքական տեսանկյունից:

1923թ. հուլիսի 16-ին Ադրբեջանի ԽՍՀ Կենտրոնական գործադիր կոմիտեի (ԿԳԿ, նախագահ Ս.Կիրով) որոշմամբ կազմավորվեց «Քրդստանն» գավառը: Այդ օրը դրվեց «Կարմիր Քրդստանի» կարճաժամկետ ու ձևական գոյության սկիզբը: Մինչ այդ, Ադրբեջանի ԽՍՀ ԿԳԿ-ն չորս լիազորմար միատերի ընթացքում (1922թ. հոկտեմբերի 21-22-ին, դեկտեմբերի 30-ին և 1923թ. հունվարի 13-ին) չկարողացավ լուծել այդ հարցը ապագա գավառի սահմանների վերաբերյալ տարածայնությունների պատճառով, և միայն հուլիսի 7-ին ընդունվեց որոշում նրա կազմավորման մասին: «Քրդստանի» գավառը գտնվում էր Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի միջև և ներառում էր Քելբաջարի, Լաչինի և Կուբաթլիի շրջանները: Սակայն քրդական վարչական կազմավորման մասին խոսակցություններ կային արդեն 1921 թվականից: Այսպես, 1921թ. հոկտեմբերի 3-ին Ի.Ստալինի ղեկավարած Ազգությունների ժողովրդական կոմիսարիատն իր «Ազգությունների կյանքը» թերթում հրապարակեց «Պայմանագրային սովետական հանրապետություններում. Քրդստանում» վերտառությամբ հոդվածը, որով խորհրդային հասարակությանը տեղեկացնում էր այն մասին, որ լրջորեն քննարկվում է «Քրդստանի հանրապետության» կազմավորման հարցը¹: 1921թ. ընթացքում բազմաթիվ նյութեր հրապարակվեցին այն մասին, որ «Կարմիր Քրդստանում» սարսափելի սով է սկսվել: Ի դեպ, «Քրդստան» անվանման առաջին հիշատակությունը կապված է հենց սովի հետ:

1921թ. մայիսին Ադրբեջանի ԿԳԿ մտաշրջաններից մեկում քննարկվում էր «Քրդստանում» սովի հարցը, որի ընդգրկած չափերով «Քրդստանը» մոյլնիսկ համեմատում էին Պոլովոժիեի հետ: 1921թ. նոյեմբերի 14-ին Ադրբեջանի Ժողովմխորհի նախագահ Ն.Նարիմանովը հեռագրեց Լենինին և տեղեկացրեց խորհրդային առաջնորդին, որ ստեղծվել է Ադրբեջանի պետական բանկը և նշել, որ, ի նշան պրոլետարական համերաշխության, 40 մլն ռուբլի օգնություն է հատկացվել եղբայրական Պոլովոժիեի և «Քրդստանի» սովյալներին²: Այդ հեռագրին Վ.Լենինը արձագանքեց երեք օր անց: Նա իր կարճ ուղերձում Պոլովոժիեին և «Քրդստանին» տրված օգնությունը բնութագրեց որպես Կարմիր ինտերնացիոնալի դրոշի ներքո առաջ ընթանալու պատրաստակամություն³:

Ինչպես վերը նշվեց, «Քրդստան» անվանումը շրջանառության մեջ մտավ արդեն 1921թ., այսինքն Քրդստանի գավառի կազմավորումից երկու տարի առաջ: Քրդստանի գավառը կազմված էր վեց դայրաներից Ղա-

րադշլադի, Քելբաջարի, Կուրաթլիի, Կոթուրլիի, Քյուրդ-Հաջիի և Մուրադ-խանլիի: Գավառի կենտրոն դարձավ Լաչին ավանը: 1926թ. համամիութենական մարդահամարի տվյալներով Քրդստանի գավառի բնակչությունը կազմում էր 51,2 հազ. մարդ, որոնցից քուրդ էին 37470-ը (73,1%), քյուրք 13520-ը (26,3%), հայ 256-ը (0,5%): Բոլոր դայրաներում, բացի Կուրաթլիից, քրդերը բացարձակ մեծամասնություն էին կազմում. Վարադշլադում 99,7%, Քելբաջարում 99,8%, Կոթուրլիում 99,9%, Քյուրդ-Հաջիում 98,6%, Մուրադխանլիում 98,2%: Կուրաթլիի դայրայում բնակչության մեծամասնությունը քյուրք էր 98,9%: Հայերը երկրորդն էին Կուրաթլիի (1%) և Մուրադխանլիի (1,6%) դայրաներում:

Քրդստանի գավառը գոյատևեց կարճ ժամանակ և 1929թ. ապրիլի 8-ին լուծարվեց Խորհուրդների VI համաադրբեջանական համագումարի որոշմամբ: Գավառների լուծարման որոշումն ընդունվել էր ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունների կողմից գավառների փոխարեն օկրուգներ ստեղծելու համար: Թեև այդ որոշումը վերևից իջեցված հրահանգ էր, միութենական համադաստիարակներն իրենք էին որոշում, թե ինչպիսի օկրուգներ են կազմավորելու: Ադրբեջանի ԽՍՀ-ում գոյություն ունեցող 13 գավառների փոխարեն կազմավորվեցին 8 օկրուգներ: Բայց այդ օկրուգների թվում "Քրդստանը" չկար: Դրա տարածքը մերառված էր վերակազմավորված Վարաբադի օկրուգի մեջ, որն ընդգրկում էր մաս. Ջանգելանի, Ջաբրայիլի, Ֆիզուլիի, Աղդամի մախկին շրջանները, ինչպես և Աղջերեղիի և Ժդանովի շրջանների մի մասը: Բացառված չէ, որ ադրբեջանական իշխանություններն այս քայլն արեցին այն բանի համար, որ հետագայում միացնեն այդ օկրուգը ԼՂԽՄ-ին, ստեղծեն առավելապես քյուրքական վարչատարածքային միավոր և այդպիսով յուրացնեն մաս. Վարաբադը:

Այնուամենայնիվ, 1930թ. մայիսի 25-ին հրապարակվեց Ադրբեջանի ԽՍՀ ԿԳԿ որոշումը Քրդստանի օկրուգի կազմավորման մասին: Այն տարածքով ավելի մեծ էր, քան իր նախորդը Քրդստանի գավառը: Նախկին գավառի տարածքից բացի, նրա կազմի մեջ մտան մաս. Ջանգելանի շրջանն ամբողջությամբ և Ջաբրայիլի շրջանի մի մասը: Այսպիսով, Կարմիր Քրդստանը սահման ունեցավ Իրանի հետ: Լաչին ավանը նորից դարձավ օկրուգի կենտրոն:

Ի սկզբանե Ադրբեջանի ԽՍՀ ԿԳԿ-ն մտադիր էր Վարաբադի օկրուգի տարածքում Ջաբրայիլ կենտրոնով կազմավորել "Արաքսի օկրուգ"՝ միավորելով Կարյազիմոյի, Ջանգելանի, Կուրաթլիի և Լաչինի շրջանները: Այս նախագիծը տեղերում լուրջ առարկություններ առաջացրեց, քանի որ դրա իրագործմամբ ծայրամասային և բոլոր առումներով հետամնաց Քելբաջարի և Կոթուրլիի շրջաններն ամբողջությամբ կտրվում էին օկրուգի կենտրոնից կորցնելով մույնիսկ տարածքային ուղղակի կապը նրա հետ: Բացի դրանից, կոժվարանալ Լաչինի շրջանի կապն օկրուգի նոր կենտրոնի Ջաբրայիլի հետ, քանզի Լաչինից Ջաբրայիլ ճանապարհի 130 կիլոմետրից 45-ն անցնում էր անջրդի ու անմարդաբնակ Գեյլանի անապատով:

Կարյազիմոյի օկրուգի վերաձևավորման հարցը քննարկվեց Վա-

րաբաղի օկրուգային կուսկոնֆերանսի ժամանակ, առաջ քաշվեց Քրդստանի օկրուգի (Ջաբրայիլի գավառի մի մասը նրան միացնելու միջոցով) ստեղծման նախագիծը⁵:

Սակայն արդեն երկուսուկես ամիս անց 1930թ. հուլիսի 23-ին, ԽՍՀՄ Ժողկոմխորհը և ԿԳԿ-ն համատեղ որոշում ընդունեցին, ըստ որի օկրուգները, որպես վարչական միավորներ, լուծարվում էին: Օգոստոսի 8-ին համապատասխան որոշում ընդունվեց նաև Խորհրդային Ադրբեջանի իշխանությունների կողմից⁶: Օկրուգների փոխարեն մտցվում էին նոր վարչատարածքային միավորներ շրջաններ: Քրդստանի օկրուգը նորից լուծարվեց, բայց Քրդստանի շրջան այդպես էլ չստեղծվեց: Այսպիսով, քրդական վարչատարածքային կազմավորումը գոյատևեց ոչ լրիվ 7 տարի:

Չնայած տարածքային առումով բավական փոքր այս վարչական միավորի կարճաժամկետ գոյությանը նրա կազմավորումը, գործառնությունը, լուծարումը, գոյության իսկ փաստն ադրբեջանական պետականության պատմության ողջ ընթացքում, փաստորեն, մնում են աշխարհաքաղաքականության հարթության մեջ: Հենց այդ պատճառով էլ Կարմիր Քրդստանը մինչ օրս տարբեր շահարկումների առարկա է հանդիսանում: Սակայն քրդական խաղաթուղթն սկսեց խաղարկվել արդեն իսկ Ադրբեջան պետության ստեղծման օրից 1918թ.: Առաջին ադրբեջանական պետության Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության (1918-1920թթ.) կարճաժամկետ գոյության ընթացքում էլ իշխող մուսավաթական վարչակարգը քրդերին որպես վճռորոշ տարր օգտագործում էր Լեռնային Ղարաբաղի դեմ պայքարում: Հիմնական հրամայականն այստեղ Հայաստանի և Ղարաբաղի միջև էթնիկական անջրպետի ստեղծումն էր: Դրա համար պետք էր հայերից վերջնականապես «մաքրել» Լեռնային Ղարաբաղի արևմտյան լեռնային շրջանները, ուր հայերն արդեն ճնշող մեծամասնություն չէին կազմում: Միայն այդ «գտումն» իրականացնելուց հետո էր հնարավոր ժողովրդագրական առումով անջատել Լեռնային Ղարաբաղը Հայաստանից՝ դրանից բխող բոլոր հետևանքներով:

Սակայն այդ տարածքներից, ուր հետագայում կազմավորվեց Կարմիր Քրդստանը, հայկական բնակչությունն ամբողջությամբ չանհետացավ: Մինչև 1918-20թթ. այդ շրջաններում դեռ բավական խոշոր գյուղեր կային: Բայց հաշվի առնելով այդ տարածքների աշխարհառազմավարական դրությունը (Հայաստանի և կենտրոնական Լեռնային Ղարաբաղի միջև գտնվելը) Ադրբեջանը սկսեց այնտեղ մնացած հայ բնակչության վերջնական վտարման քաղաքականությունը: 1918-20թթ. այդ նպատակի համար քրդերին օգտագործելու իսկական ժամանակն էր: Միջազգային հանրությունն ավելի քան բացասաբար կվերաբերվեր հայ-քուրդական բախումներին (դեռ շատ թարմ էր 1915թ. ցեղասպանության հիշատակը), իսկ հայ-քրդական ընդհարումները համեմատաբար ավելի հեշտ էր ներկայացնել որպես սոցիալ-տնտեսական և ոչ թե քաղաքական գործընթաց: Ի հավելումն այդ ամենի, հետագայում քրդերին ավելի հեշտ կլինեք չեզոքացնել ձուլման միջոցով, քանի որ քրդերը չունեին պետականություն, զիր և

մեծ մասամբ շիա մահմեդականներ էին:

Ըստ 1918թ. տվյալների Ակերա (Հակարի) գետի ավազանում, որը հետագայում մտավ Կարմիր Քրդստանի կազմի մեջ, ընդամենը մի քանի հայկական բնակավայր էր մնացել, որոնցից առավել խոշոր էին Հակ (Մինքեմ), Ալդուլի և Հարար գյուղերը: 1918թ. Հակում հայ բնակչությունը կազմում էր 811 մարդ⁷: 1918թ. մուսավաթական գործակալները հրահրեցին հայ-քրդական ընդհարումներ, որոնց արդյունքում հայ բնակչությունը վտարվեց գյուղից: Փաստորեն, նույն ճակատագիրն ունեցավ նաև հայկական Ալդուլի գյուղը: 1885թ. տվյալներով գյուղում ապրում էին 758 մարդ, նրանք բոլորն էլ հայեր էին⁸: 1905թ. հայ-թյուրքական ընդհարումներից հետո գյուղն ամայացավ, բայց որոշ ժամանակ անց հայերը վերադարձան: 1918թ. գյուղի բնակչությունը կրկին հայկական էր և կազմում էր 1012 մարդ⁹: Բայց նույն 1918թ. գյուղը հերթական անգամ ավերվեց, և աղույեցիները ստիպված էին թողնել իրենց տներն ու հիմնավորվել Ջանգեզուրի ու Ղարաբաղի տարբեր վայրերում, գլխավորապես Հայաստանի Գորիսի և Լեռնային Ղարաբաղի Մարտունու, Մարտակերտի ու Ասկերանի շրջաններում: Աղույեցիների հիմնած մի ամբողջ թաղամաս կա նաև ԼՂՀ մայրաքաղաքում (Մարտունու փողոցն ու հարակից թաղերը):

Հակարի (Ակերա) գետի ձախ վտակներից մեկի ափին գտնվող Հարար գյուղի բնակչությունը (հետագայում Աշաղի Ֆարաջան) 1918թ. տվյալներով կազմում էր 1078 մարդ, իսկ 1921թվականին՝ 55¹⁰: Վերոնշյալ գյուղերի բնակչության վերաբերյալ տվյալներն ի մի բերելով պարզվում է, որ 1918թ. միայն այդ երեք գյուղերի բնակչությունը կազմում էր 2901 մարդ: Եթե սրան հավելենք նաև այլ գյուղերում ապրող հայերին, ապա կստացվի Ակերա գետի վերին հոսանքների և վտակների տարածքների բնակչության զգալի տոկոս:

XIX դարավերջին Օսմանյան կայսրությունում հայերին կոտորելու համար սուլթան Աբդուլ Համիդի կողմից ստեղծված Համիդիե գնդերի օրինակով մուսավաթական իշխանությունները ստեղծեցին հայերի դեմ պայքարելու համար քրդական հատուկ հեծյալ ջոկատներ¹¹: Մուսավաթականներին հաջողվեց քրդերի օգնությամբ հայերին վտարել վերը նշված տարածքներից, որից հետո անմիջապես հալածանքներ սկսվեցին նաև քրդերի դեմ: Քրդերի ջարդերն իրականացնում էին Ադրբեջանի կանոնավոր զորքերը: Նրանց ստիպում էին հրաժարվել իրենց լեզվից և ազգային պատկանելությունից: Առավել դաժան վարվեցին Քամալի գյուղի քրդերի հետ¹²: Ավելին, Բաքվի իշխանությունները ձուլման և զինյալ քրդերի շարքերում ազգային զգացմունքները թուլացնելու քաղաքականություն էին վարում և այդ նպատակով նրանց ուսման էին ուղարկում Բաքու: Մուսավաթական Ադրբեջանում քրդական ինչ-որ վարչական միավորի ստեղծման մասին խոսք անգամ չկար:

Բոլշևիկների իշխանության գալուց հետո շատ քրդեր անցան նրանց կողմը: Այստեղ քիչ դեր չխաղաց քրդերի հանդեպ մուսավաթական կառավարության վարած քաղաքականությունը: Բոլշևիկների համար ռազ-

մավարական կարևորություն ուներ վերահսկողությունն այն տարածքների վրա, ուր հետագայում կազմավորվեց Կարմիր Քրդստանը, ինչը թույլ չէր տա հայկական առավել մարտունակ շրջաններում՝ Ջանգեզուրում և Լեռնային Ղարաբաղում, բոլշևիկների դեմ պայքարի միասնական ճակատի ստեղծումը: Թե որքան կարևոր էր այս որոշումը երևաց 1921թ., երբ սկսվեց պայքարը հայկական անկախ պետության վերջին պատվարի Գարեգին Նժդեհի ղեկավարած Լեռնային Հայաստանի դեմ: Ջանգեզուրի դեմ պայքարում բոլշևիկների առավելությունն ապահոված վճռորոշ գործոններից մեկն էլ հենց այն էր, որ Ղարաբաղի և Ջանգեզուրի միջև ընկած տարածքները գտնվում էին Կարմիր բանակի հսկողության տակ: Ընդ որում, հայերի դեմ պայքարում բոլշևիկները չէին օգտագործում քրդերին:

Կարմիր Քրդստանի կազմավորումը շատ կարևոր աշխարհաքաղաքական նշանակություն ուներ, առաջին հերթին, երիտասարդ խորհրդային պետության համար, որն ամեն ինչ ամուս էր իրապես հիմնավորվելու համար կենսականորեն կարևոր նշանակություն ունեցող Հարավային Կովկասում: Առավել գործուն մեխանիզմներից մեկն էր վարչատարածքային կազմավորումների ստեղծումն ու կազմացումը: Ստեղծելով Քրդստանի գավառը, խորհրդային ստրատեգները լուծում էին միաժամանակ ռազմավարական բնույթի մի քանի խնդիր:

Նախ քրդական վարչատարածքային միավորի միջոցով Կրեմլը կկարողանար ազդեցություն գործել Ադրբեջանի վրա, որն այդ ժամանակ ոչ միայն խորհրդային պետության, այլև ողջ տարածաշրջանի հիմնական մավթարդյունահանող շրջանն էր: Խորհրդային իշխանության հանդեպ Ադրբեջանի վերաբերմունքի վրա սթավեցնող ազդեցություն էին գործում մի շարք իրողություններ, որոնցից կարևորագույններն էին Կարմիր Քրդստանի գոյությունը, արդեն առկա երկու ազգային տարածքային ինքնավար կազմավորումները (ԼՂԻՄ և Նախիջևանի ԻԽՍՀ), Կրեմլից տարածվող լուրերը Քրդական միութենական հանրապետություն ստեղծելու մասին, ինչպես նաև այն իրողությունը, որ Ադրբեջանի գավառների սահմաններն այն ժամանակ հասնում էին ազգային փոքրամասնությունների էթնիկ սահմանների հետ: Հակախորհրդային տրամադրությունների ու ժեղացման պարագայում վարչատարածքային կազմավորումները Բաքվի վրա ճնշում գործադրելու շատ գործուն լծակներ կարող էին դառնալ: Կարմիր Քրդստանն այստեղ շատ կարևոր դեր էր խաղում: Այն Ադրբեջանի ԽՍՀ միակ գավառն էր, որի անվանումը ազգային պատկանելություն էր ցույց տալիս: Մյուս անվանումները (մասնավորապես Լենքորան և Ղուբա) պատկերացում չէին տալիս այդ տարածքային կազմավորումների ազգային պատկանելության մասին, թեև գավառների սահմանները համընկնում էին էթնիկ սահմանների հետ: Իսկ Քրդստանի գավառը մնան պատկերացում տալիս էր: Եվ գավառի հենց այդ յուրահատկությունն էլ շատ հարմար հնարավորություն կտար անհրաժեշտության դեպքում բարձրացնել նրա կարգավիճակը: Նման մտադրությունների առկայությունն իսկ, չխոսելով արդեն կոնկրետ գործողությունների մասին, բնականաբար, բավական ցա-

վոտ ազդեցություն էր գործում Ադրբեջանի վրա:

Ստեղծելով Քրդստանի գավառը, խորհրդային ստրատեգները, որ-
քան էլ առաջին հայացքից տարօրինակ թվա, թուլացրին լարվածությունը
երկու միութենական հանրապետությունների Հայաստանի և Ադրբեջանի
միջև: Բանն այն է, որ 1918 թվականից Հայաստանի և Ադրբեջանի միջև վի-
ճելի էին համարվում այն տարածքները, որոնց վրա հետագայում կազմա-
վորվեց Կարմիր Քրդստանը: Նորաստեղծ Ադրբեջան պետությունը հա-
վակնություններ ուներ բուն հայկական տարածքների հանդեպ, ինչն էլ եր-
կու երկրների միջև հակամարտության պատճառ դարձավ: Նույնիսկ Ազգե-
րի լիգան ընդունեց, որ այդ տարածքները վիճելի են: Հարկ է նշել նաև այն
փաստը, որ 1918-1920թթ. Ադրբեջանի Հանրապետության սահմանադրու-
թյան մեջ պետության սահմանները նշված չէին: Հենց այդ պատճառով էլ
1920թ. դեկտեմբերի 7-ին Ազգերի լիգայի նախագահ Փոլ Հյումանսին (Paul
Hymans) ուղղած նամակում Ազգերի լիգայում Ադրբեջանի պատվիրակու-
թյան ղեկավար Թուֆաթաշևը Ղարաբաղի պատկանելությունն Ադրբեջա-
նին հիմնավորում էր այն բանով, որ նման որոշում կայացվել էր Կովկասում
դաշնակիցների նախկին ներկայացուցչի կողմից¹³: Հարավային Կովկասի
խորհրդայնացմամբ իրավիճակը փոքրիշատե պարզվեց: 1920թ. նոյեմբերի
30-ին և դեկտեմբերի 1-ին Ադրբեջանը հռչակեց Նախիջևանի, Ջանգեզուրի
և Ղարաբաղի նկատմամբ որևէ հավակնությունից հրաժարվելու և դրանք
Հայաստանի անբաժան մաս համարելու մասին¹⁴: Ռուսաստանի կոմունիս-
տական բոլշևիկյան կուսակցության (ՌԿ(Բ)Կ) Կովկասյան բյուրոն 1921թ.
հունիսի 3-ի նիստում, որին մասնակցում էր նաև Ադրբեջանի ղեկավար
Նարինանովը, միաձայն որոշեց. «Հայաստանի կառավարության հռչա-
կագրում նշել Լեռնային Ղարաբաղի Հայաստանին պատկանելության մա-
սին»: Բյուրոյի այդ որոշման համաձայն 1921թ. հունիսի 12-ին Խորհրդա-
յին Հայաստանի կառավարությունը դեկրետ է ընդունում, որում ասվում է.
«Ադրբեջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Հեղկոմի
հռչակագրի և Հայաստանի ու Ադրբեջանի Սոցիալիստական Հանրապե-
տությունների միջև պայմանագրվածության հիման վրա հռչակվում է, որ
այսուհետ Լեռնային Ղարաբաղը հանդիսանում է Հայաստանի Խորհրդա-
յին Սոցիալիստական Հանրապետության անբաժան մասը»¹⁵:

Առաջին հայացքից կարող է թվալ, թե այս ամենը Քրդստանին չեն
վերաբերում: Սակայն իրականում Կարմիր Քրդստանի ստեղծումը ինչ-որ
չափով թելադրված էր նաև 1918-1921թթ. Հայաստանի և Ադրբեջանի միջև
վիճելի տարածքային հարցերի ամկայությամբ: Բանն այն է, որ երբ
Խորհրդային Ադրբեջանն ընդունեց, որ Ղարաբաղը և Ջանգեզուրը Հայաս-
տանի մաս են, Կարմիր Քրդստանի ամբողջ տարածքը մտնում էր այդ
շրջանների մեջ: 1918-1921թթ. Լեռնային Ղարաբաղ ասելով հասկանում
էին ոչ այն տարածքները, որոնց վրա հետագայում կազմավորվեց ԼՂԻՍ-ը,
այլ Հյուսիսային Ղարաբաղը, Քարվաճառը, Հարավային Լեռնային Ղա-
րաբաղը՝ ընդհուպ մինչև Արաքս:

Այսպիսով, որպես Լեռնային Ղարաբաղ էին ընդունվում Ելիզա-

վետապոլի նահանգի Ջևանշիրի, Շուշիի և Կարյազիմյի գավառների լեռնային շրջանները, ինչպես նաև Ջևանշիրի գավառին հարակից Ելիզավետպոլի գավառի շրջանները: Չանգեզուրի տարածքը մույնպես ավելի մեծ էր, քան ներկայիս Հայաստանի Հանրապետության Մյունիքի մարզի տարածքը: Ելիզավետպոլի նահանգի կազմի մեջ Չանգեզուրի գավառը մտնում էր հստակ գծված սահմաններով, որոնք ներառում էին ներկայիս Մյունիքի ամբողջ տարածքը, ինչպես նաև Լաչինի, Կուրաթլիի և Չանգեղանի նախկին շրջանները: Այսպիսով, ընդունելով Չանգեզուրն ու Լեռնային Ղարաբաղը որպես Հայաստանի մաս, Ադրբեջանն ընդունեց նաև, որ Հայաստանի մաս են կազմում նաև վերոնշյալ տարածքները: Հետաքրքրական է, որ տվյալ հանգամանքը ճշված է նաև Ստալինի Հայաստանի խորհրդայնացմանը նվիրված հոդվածում: Ազգությունների ժողկոմը գրում էր. «Դեկտեմբերի 1-ին Խորհրդային Ադրբեջանը հոծարական հրաժարվում է վիճելի նահանգներից և հայտարարում է Չանգեզուրը, Նախիջևանն ու Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանին հանձնելու մասին»¹⁶: «Նահանգ» բառն այստեղ մեկ անգամ ևս ցույց է տալիս Չանգեզուրի վարչական նշանակությունը: Յավոք, այս հանգամանքը շատ հաճախ մոռանում են Ղարաբաղյան հակամարտությունն ուսումնասիրողները:

Բայց, ինչպես հայտնի է, 1921թ. հուլիսի 5-ին ՌԿ(ք)Կ Կովկասյան բյուրոյի արտահերթ նիստում, Ստալինի ճնշմամբ և առանց հաշվի առնելու Ղարաբաղի ժողովրդի կամքը, երկրամասը հանձնվեց Ադրբեջանին: Ադրբեջանին հանձնվեց նաև Ելիզավետպոլի նահանգի մեծ մասը. ութ գավառներից վեցն այդ երկրին անցան ամբողջությամբ: Մյուս երկու գավառները բաժանվեցին Հայաստանի և Ադրբեջանի միջև, բայց վերջինս ստացավ Չանգեզուրի մեծ մասն ու Ղազախի գավառի խոշոր հատվածը: Բնականաբար, նման բաժանումը, առավել ևս Լեռնային Ղարաբաղը Հայաստանին կապող տարածքների հանձնումը Ադրբեջանին, չէր կարող բավարարել Հայաստանին, և Քրդստանի գավառի կազմավորումը մեղմացրեց այդ դժգոհությունը: Ստացվում էր այնպես, որ Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի միջև ոչ թե Ադրբեջանն էր, այլ քրդական վարչատարածքային միավորը, որի կարգավիճակը ցանկացած պահի կարող էր բարձրացվել և որի ստեղծումը ազգերի ինքնորոշման իրավունքի և ինտերնացիոնալիզմի "մարմնավորումն" էր: Բացի դրանից, կազմավորելով Կարմիր Քրդստանը, խորհրդային իշխանություններին հաջողվեց հետազայում հասնել այն բանին, որ մոռացվեցին Չանգեզուրի և Ղարաբաղի նախկին սահմանները, իսկ նորերն գուցե դրվում էին նախկին ԼՂԻՄ և Հայաստանի ներկայիս Մյունիքի մարզի սահմանների հետ:

Քրդստանի գավառի ստեղծումը հետապնդում էր նաև արտաքին քաղաքական ռազմավարական նպատակներ: Այն տարիներին քրդական հարցը շատ սուր էր դրված Մերձավոր Արևելքում, առանձնապես Թուրքիայում: Կարմիր Քրդստանը, փաստորեն, դարձավ աշխարհում առաջին քրդական վարչատարածքային միավորը, և միայն այդ հանգամանքն արդեն ամրապնդում էր խորհրդային պետության դիրքերը քրդերի շրջանում:

Առավել ևս, որ 1925թ. Թուրքիայում բռնկվեց Շեյխ Սալիդի գլխավորած քրդական ապստամբությունը. Սևրի դաշնագրի պայմաններից ձեռքազատվելու համար թուրքական իշխանություններն ակտիվորեն սիրաշահում էին քրդական վերնախավին (սկզբում քեմալականները հայտարարում էին թուրքերի հետ քրդերի ազգային իրավահավասարության, մույնիսկ քրդական ինքնավարության մասին), բայց 1923թ. Լոզանի պայմանագրից հետո այդ սիրաշահումները փոխարինվեցին պաշտոնական Անկարայի հետապնդումներով: Քրդական ապստամբությունը դաժանորեն ճնշելուց հետո քեմալականները հայտարարեցին, որ Թուրքիայում ոչ քուրդ կա, ոչ էլ քրդական հարց: Իսկ ԽՍՀՄ-ում Կարմիր Քրդստանը շարունակում էր իր գոյությունը: Հասկանալի է, որ դա չէր կարող տպավորություն չգործել քրդերի վրա: Ի դեպ, թուրքական Քրդստանում համաքրդական ազգային ապստամբության ճնշումից հետո անլեզալ ճանապարհով Թուրքիայից Խորհրդային Միություն տեղափոխվեցին երկու հազար քրդեր¹⁷:

Կարմիր Քրդստանի ստեղծման վերջին երկու պատճառները, որքան էլ տարօրինակ է, բխում էին Ադրբեջանի շահերից: Նախ, Ադրբեջանն, ի վերջո, ստացավ Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի միջև գտնվող ռազմավարական նշանակության տարածքները: Երկրորդ, Ադրբեջանն էլ ավելի ընդգծեց իր արտաքին քաղաքական նշանակությունը որպես պրոլետարական գաղափարների և մահմեդական Արևելքի տարբեր երկրներում խորհրդային ազդեցության տարածման վճռորոշ գործոն:

Հետաքրքրական է, որ դեռ մինչև Կարմիր Քրդստանի ստեղծումը, Կարմիր բանակի Հարավային Կովկաս մուտք գործելու ժամանակ, խորհրդային պետական գործիչների պաշտոնական մամուլագրություններում Հայաստանի և Վրաստանի խորհրդայնացումը հիմնավորվում էր հենց մահմեդական գործոնով: Այսպես, Կովկասյան բյուրոյի ղեկավար Մ.Օթոնիկիժնի հեռագրերից մեկում բառացիորեն նշված էր հետևյալը. «...Նկատի ունեցեք, եթե դուք Հայաստանի հետ խաղաղություն կնքեք, ապա դա ինչ-որ սարսափելի բան կլինի մուսուլմանների համար... Կատացվի, որ մենք քրիստոնյաներս, նվաճել ենք Ադրբեջանը, մի կողմ թողել Վրաստանն ու Հայաստանը»¹⁸:

Ի դեպ, Հայաստան Կարմիր բանակի ներխուժման հիմնական ուղղություններից մեկը Լեռնային Ղարաբաղի և Զանգեզուրի կողմից էր: Դա առավել նպատակահարմար ուղղությունն էր, քանի որ այդ տարածքները վիճելի էին Հայաստանի և Ադրբեջանի միջև, ինչպես նաև այն պատճառով, որ այդտեղ լարված ազգամիջյան հարաբերություններ գոյություն ունեին հայերի և թյուրքերի, թյուրքերի և քրդերի, նաև քրդերի և հայերի միջև: Սա մույնպես, այլոց թվում, Կարմիր բանակի համար ստեղծում էր իբրև կայունացնող ուժի վարկանիշ: ՌԽՖՍՀ արտաքին գործերի ժողկոմ Չիչերինը, Հայաստանի ԱԳՆ-ին բացատրելով Կարմիր բանակի առաջխաղացման պատճառները, հայտարարեց. «Ռուսական զորամասերի կողմից այն տարածքների գրավումը, որոնք հարևան ժողովուրդների միջև պայքարի գործընթացում ստացել են վիճելի բնույթ Հայաստանի և Ադրբեջանի միջև,

նպատակ ունի կանխել արյունալի հակամարտությունները... և ստեղծել պայմաններ, որոնք հնարավոր կդարձնեն վիճելի տարածքային հարցերի հանգիստ և անկողմնակալ քննարկումը»¹⁹։

Բայց, մյուս կողմից, այս ամենը չէր կարող փոխհատուցել այն մտահոգությունը, որն ուներ Բաքուն Ադրբեջանի կազմում քրդական վարչատարածքային կազմավորման գոյության հետ կապված։ Ուստի ադրբեջանական իշխանություններն անում էին հնարավոր ամեն բան այդ միութրի լուծարման համար։ Սկզբում ընտրվեց, եթե կարելի է այդպես անվանել, ծածուկ գործողությունների մարտավարություն։ Հիմնական շեշտը դրվում էր նրա վրա, որպեսզի Կենտրոնին աստիճանաբար համոզեն, թե քրդերը ձուլվել և քյուրքացել են և այսպիսով հասնեն Քրդստանի լուծարմանը։ Խորհրդային Ադրբեջանի իշխանություններն անում էին ամեն հնարավոր բան դրան հասնելու համար։

Առաջին քայլն այս ճանապարհին եղավ Կարմիր Քրդստանի սահմանների անցկացումը։ Ինչպես նշվեց, չորս լիազմար միստերի ընթացքում Ադրբեջանի ԽՍՀ ԳԳԿ-ն այդպես էլ չկարողացավ լուծել Քրդստանի ստեղծման հարցը՝ ապագա գավառի սահմանների վերաբերյալ տարածայնությունների պատճառով։ Ամենից շատ վեճերի տեղիք էր տալիս Կուբաթլիի դայրան Կարմիր Քրդստանի կազմում ընդգրկելու նպատակահարմարության հարցը։ Ի վերջո, որոշում ընդունվեց դրա ընդգրկման մասին։ Բայց այդ դայրան, ինչպես արդեն նշվել է, 98,9%-ով բնակեցված էր քյուրքերով։ Նրա կազմում ներառելով Քրդական գավառը Բաքվի իշխանություններն էապես նվազեցրին քրդերի տոկոսը գավառում։ Կարմիր Քրդստանի ղեկավար նշանակվեց էթնիկ ադրբեջանցի Գ.Հաջիևը, որը մինչ այդ ղեկավարում էր Կուբաթլիի ադմինիստրացիան²⁰։ Կարմիր Քրդստանի ողջ գոյության ընթացքում պարբերաբար այստեղ էին բնակեցվում քյուրքեր Ադրբեջանի ԽՍՀ տարբեր վայրերից։ Այսպես, 1925թ. քրդերը կազմում էին Քրդստանի գավառի բնակչության 80,7%-ը²¹։ Իսկ 1926թ. համամիութենական մարդահամարի համաձայն, ինչպես վերը նշվել է, արդեն 73,1% էին կազմում։ Ուրեմն, մեկ տարվա ընթացքում Բաքվի իշխանություններին հաջողվել էր ավելի քան 7%-ով կրճատել քրդերի թիվը Կարմիր Քրդստանում։ Թյուրքերին բնակեցնում էին գավառի տարբեր վայրերում։ Օրինակ, 1920-ական թթ. վերջին Լաչին ավանի բնակչության մեծամասնությունը կազմում էին Ադրբեջանի այլ շրջաններից եկած քյուրքական ազգության տղամարդիկ։ Մինչդեռ Թյուրքիայից եկած երկու հազար քրդերին Քրդստանում չէին բնակեցնում։ Դրա փոխարեն Եվլախում, նախկին միլիոնատեր Թադիկի կալվածքում վերաբնակներին հատկացվեց 4000 հա հող, տրվեց 60 հազար ռուբլի անհատույց վարկ։ Այս մույն շրջանում ձևավորվում է նոր Նարիմանաբադ գյուղը 181 ընտանիքով։ Ադրբեջանի արդյունաբերության ժողովուրդը գյուղի համար հատկացրեց 2000 հա հող և երկարաժամկետ վարկ²²։ Իսկ երբ ստեղծվեց Քրդստանի օկրուգը, նրա կազմում ևս ներառվեցին քիչ թե շատ նշանակալի քուրդ բնակչություն չունեցող այնպիսի տարածքներ, ինչպիսիք էին նախկին Ջանգեղանի շրջանը և Ջաբրայիլի շրջա-

նի մի մասը: Այսպիսով, Բաքվի իշխանություններն էլ ավելի նվազեցրին քրդերի տոկոսը Կարմիր Քրդստանում:

Ադրբեջանի իշխանություններն ամեն կերպ նպաստում էին Կարմիր Քրդստանի բյուրքացմանը արգելելով քրդական դպրոցների բացումը, քրդական լեզվի և մշակույթի զարգացումը: Հրապարակվում էին զանազան նյութեր, որոնք «ապացուցում» էին քրդերի ծուլումն ու բյուրքացումը: Օրինակ, 1925թ. տվյալներով բյուրքացման են ենթարկվել Ադրբեջանի ԽՍՀ իրանցիները (հիմնականում թաթեր), նրանց բյուրքացման տոկոսը հասնում էր ավելի քան 60-ի²³: Քրդերի մասին մեծ քան չէր ասվում: Անվանակիր ազգի գիտակցության մեջ. «քուրդ» բառին համառոտ են տրվում էր վիրավորական նշանակություն: Նրա պատկերացմամբ քրդերն անգրագետ, հետամնաց մարդիկ էին, քոչվորներ: Քուրդ մտավորականության շատ ներկայացուցիչներ ստիպված էին հրաժարվել իրենց ազգային պատկանելությունից միայն այն պատճառով, որ կարող էին կորցնել աշխատանքը²⁴: Նման գործողությունները լարվածություն էին ստեղծում Կարմիր Քրդստանի ազգամիջյան հարաբերություններում: “Заря Востока” քերթի 1929թ. հոկտեմբերի 15-ի համարում կարդում ենք. «Ազգային հարաբերություններն ադրբեջանական Քրդստանում առանձնանում են բարդությամբ և բարձրորդի վիճակում են... Ադրբեջանական բյուրքերը, ի տարբերություն հայերի, համեմատաբար մոտ էթնիկ խումբ են, որոնք ոչ թե նվազման միտում են դրսևորում, այլ, ընդհակառակը, ամսահման աճի և ամրապնդման: Դա նկատելի է ոչ միայն ազգային միջուկի մեխանիկական ավելացման ճանապարհով Ադրբեջանի հարևան գոտի բյուրքական շրջաններից վերաբնակեցման արդյունքում, այլև, և դա ամենագլխավորն է, անհամեմատ ավելի մեծ չափով մշակութային ձուլման բարդ գործընթացների ճանապարհով «բյուրքացման» եղանակով»²⁵: Հետաքրքրական է, որ մինչև 1931թ. Ադրբեջանում քրդերենով ոչ մի դպրոց չէր գործում²⁶: Առաջին քրդական դպրոցներն ի հայտ եկան 1931-1932թթ., այսինքն Կարմիր Քրդստանի վերջնական լուծարումից հետո²⁷: Սակայն դրանք երկար չգոյատևեցին և փակվեցին 1937-1938թթ.: Դրանից հետո Ադրբեջանում ոչ մի քրդական դպրոց չբացվեց, չէր գործում ոչ մի քրդական թատրոն: Ի դեպ, դա ոչ միայն քրդերի իրավունքի, այլև Կենտրոնի քաղաքականության խախտում էր, հատկապես Կարմիր Քրդստանի գոյության առաջին տարիներին: Խորհրդային պետության կազմավորման հենց սկզբում հռչակվել էր բոլոր ժողովուրդների իրավահավասարության սկզբունքը: Այսպես, 1918թ. զարմանը Ի.Ստալինը, ներկայացնելով խորհրդային պետության կազմակերպական կառույցը, մշել է հետևյալը. «...Մնացած բոլոր գործերը և, նախևառաջ, ընդհանուր դեկրետների իրականացման ձևերը, դպրոցը, դատավարությունը, ադմինիստրացիան և այլն, կանցնեն մարզային ժողովուրդներին: Ոչ մի պարտադիր, «պետական» լեզու՝ ոչ դատավարությունում, ոչ դպրոցում: Յուրաքանչյուր մարզ ընտրում է այն լեզուն կամ լեզուները, որոնք համապատասխանում են տվյալ մարզի բնակչության կազմին, ընդ որում բոլոր հասարակական և քաղաքական մարմիններում պահպանվում է ինչպես

փոքրամասնությունների, այնպես էլ մեծամասնության լեզուների իրավահավասարությունը»²⁸:

Այնուամենայնիվ, անգամ երբ արդեն Կարմիր Ջրդաստանը գոյություն չուներ, Ադրբեջանի իշխանություններն ամեն կերպ խոչընդոտում էին քրդական մշակույթի զարգացմանը և քրդական դպրոցների տարածմանը: Նախիջևանի քրդերն, օրինակ, կրթություն էին ստանում Երևանում, որտեղ 1931թ. բացվել էր քրդական մանկավարժական տեխնիկումը, իսկ Ադրբեջանի այլ մասերի քրդերն ուսում էին ստանում Շուշիի ադրբեջանալեզու մանկավարժական տեխնիկումում, որն, ի դեպ, գտնվում էր նախկին հայկական ռեալական ուսումնարանի շենքում: Հայաստանում և Վրաստանում կրթություն ստացող քրդերն ուսումը շարունակում էին Լենինգրադում, մինչդեռ ադրբեջանական քրդերն այդ հնարավորությունից զրկված էին²⁹: Բաքվի իշխանություններն ամեն կերպ խոչընդոտում էին քրդերին դասագրքերի և գրքերի հրատարակմանը: 1929-1938թթ. ընթացքում Ադրբեջանում տպագրվել են ընդամենը 28 քրդերեն գրքեր, մինչդեռ Հայաստանում դրանք տպագրվում էին անհամեմատ ավելի մեծ թվով³⁰: Նույնիսկ «Կարմիր Ջրդաստան» թերթը, որը հիմնադրվել էր 1931թ. Լաչինում (նույնպես Կարմիր Ջրդաստանի լուծարումից հետո) և գոյություն ուներ մինչև 1963թ., լույս էր տեսնում ադրբեջաներեն: Հետաքրքիր է, բայց «Կարմիր Ջրդաստան» թերթի փակման առիթ է հանդիսացել այն, որ 1963 թվականին Կարմիր Ջրդաստանի կազմավորման 40-ամյակի կապակցությամբ «պրոլետարներ» թուր երկրների, միացե՛ք» կարգախոսի փոխարեն թերթի խմբագրությունը տեղադրել է «Кечан гулгара гюнь чатмас» ("օր չի հասնի անցած օրերին") կարգախոսը: Ամմիջապես ստեղծվեց թերթի փակման պետական հանձնաժողով, որի մեջ մտան նաև նախկին ԼՂԽՄ-ի ներկայացուցիչները: ԼՂԽՄ-ը ներկայացնում էր «Սովետական Ղարաբաղ» թերթի գլխավոր խմբագիր Լազար Գասպարյանը, որը այնուհետև զբաղեցնում էր Ղարմետաքսկոմբինատի պաշտոնաթերթի խմբագրի պաշտոնը³¹: ԼՂԽՄ-ի ներկայացուցիչների ընդգրկումը այս հանձնաժողովի մեջ նպատակ էր հետապնդում ցույց տալ նաև ղարաբաղցիներին, որ Ադրբեջանը պատրաստ է ամենայն խստությամբ պատժել ազգային ինքնագիտակցության ցանկացած դրսևորում: Հատկանշական է, որ Ադրբեջանում նույնիսկ քուրդ գիտնականներին թույլ չէր տրվում նյութեր տպագրել Ադրբեջանի ԽՍՀ քրդերի մասին: Նրանք բոլորը աշխատություններ էին հրապարակում արտասահմանի քրդերի մասին, մինչդեռ Հայաստանում ուղիղ հակառակն էր³²:

Այս ամենը հանգեցրեց նրան, որ սկսած անցյալ դարի 30-ական թթ. քրդերն Ադրբեջանում սկսեցին «անհետանալ»: Կարմիր Ջրդաստանի լուծարումից հետո, նախկին Ադրբեջանական ԽՍՀ-ի տարածքով մեկ սկսեցին համատարած ձևով վերացնել դրա մասին բոլոր վկայությունները: Վերանվանվեցին նույնիսկ փողոցները: Օրինակ, Ստեփանակերտ քաղաքի Կարմիր Ջրդաստանի փողոցը վերանվանվեց Չկալովի փողոցի (այժմ դա Վարդան Մամիկոնյանի փողոցի մի հատվածն է): Արդեն 1937թ. մարդա-

համարի տվյալներով Ադրբեջանի ԽՍՀ-ում քրդերի թիվը կազմում էր 10,8 հազար մարդ³³։ Եվ դա այն դեպքում, երբ 1921թ. մարդահամարի տվյալներով Ադրբեջանի ԽՍՀ միայն գյուղական վայրերում նրանց թիվը հասնում էր 32.780 մարդու³⁴։ Իսկ 1926թ. քրդերի թիվն Ադրբեջանում մոտավորապես 41 հազար էր (հանրապետության բնակչության 1,8%-ը)³⁵։ 1939թ. նրանց թիվն ընդամենը 6 հազար էր (0,2%), 1959թ. 1,5 հազար, իսկ 1970թ. 5,5 հազար (0,1%)։ 1979թ. մարդահամարից հետո արդեն հայտարարվեց, թե Ադրբեջանում քրդեր չկան³⁶։ Համեմատության համար նշենք, որ Ադրբեջանի հարևան Հայաստանում և Վրաստանում քրդերի թիվը, 1920-ական թթ. կեսերի համեմատ, ինչի մասին վերը նշել էինք, ավելացել էր 3,5-4 անգամ³⁷։ Այնինչ, Ադրբեջանի քրդերն ընդհանուր առմամբ բարձր ծնելիությամբ աչքի ընկնող գյուղաբնակներ էին։ ԽՍՀՄ վերջին 1989թ. մարդահամարի տվյալներով ամբողջ Ադրբեջանի քրդերի թիվը կազմում էր 12 հազարից մի փոքր ավելի³⁸։ Նրանց գերակշռող մասը չէր տիրապետում մայրենի լեզվին։ Եվ, այնուամենայնիվ, ճիշտ չէր լինի քրդերի «ամենտացման» գործում մեղադրել միայն Ադրբեջանի իշխանություններին։ Բնական է, որ վերջիններս շահագրգռված էին Ադրբեջանի ԽՍՀ-ում քրդերի «վերացմամբ»։ Մակայն կարևոր նշանակություն ունեցավ նաև այն, որ քրդերը չկարողացան բավականաչափ ներուժ գտնել Բաքվի իշխանությունների ծուլման քաղաքականությանն արդյունավետորեն դիմակայելու համար։

Դա հիմնականում Ադրբեջանի ԽՍՀ քրդերի մեջ վառ արտահայտված ազգային ինքնության բացակայության կամ անբավարար չափով զարգացած լինելու, ազգային ինքնագիտակցության մեջ կլանային, ընտանեկան և տոհմային տարրերի գերակշռության արդյունք էր։ Դրա ցայտուն օրինակը քրդական բնակավայրերի կառուցվածքն էր։ Ահա թե ինչպես է բնութագրում Ադրբեջանի ԽՍՀ քրդերին հայտնի խորհրդային քրդագետ Տ.Ֆ. Արիստովան. «Հայաստանի քրդերի մոտ մինչև XX դարի 30-40-ական թթ. գոյություն ունեին նահապետական և տոհմացեղային բնակատեղիներ, ինչը վկայում է տոհմային հարաբերությունների երկարատև պահպանման մասին։ Ադրբեջանում գյուղերի մեծ մասն ստեղծվում էր առանց տոհմացեղային պատկանելության պահպանման, որի մասին ադրբեջանական քրդերը չեն հիշում։ Բնակավայրերը սովորաբար հիմնվում էին աղբյուրների մոտ։ Հասարակական շինություններ գոյություն չունեին»³⁹։ Ադրբեջանական քրդերը չունեին նաև սեփական ազգային մտավորականություն, ինչը մույնպես բացասաբար էր ազդում ազգային ինքնագիտակցության վրա։ Ազգային մտավորականության բացակայության կարևոր գործոններից մեկն այն էր, որ մույնիսկ մինչև Հարավային Կովկասի խորհրդայնացումը քրդերը չունեին իրենց հոգևոր դասը։ Այն տարածքներում, ուր կազմավորվեց Կարմիր Քրդստանը, չկային մույնիսկ մզկիթներ։ Ա.Ալեքալերովը, դիտարկելով այս հարցը, իրավիճակը ներկայացնում էր հետևյալ կերպ. «Քրդստանում մզկիթներ չկան։ Մեր ըմբռնմամբ հոգևորականություն այստեղ չկա։ Հաճախ մուլան իր մեջ միավորում է և առևտրականին, և կուլակին։ Պաշտոնական իսլամն այս կողմերում հատկապես զուգակցվում է

մինչի պամական մնացուկների հետ: Պաշտամունքի առարկա են նախնիները, գոյություն ունեն ուխտատեղիներ, սրբավայրեր: Առավել հայտնի են Լաչինի մոտ գտնվող Սուլբան Բաբա և Սեիդլար գյուղի մերձակայքում գտնվող Հոչագի կիրճի Աղ-Բաբա սրբատեղիները»⁴⁰:

Կարմիր Քրդստանի քրդաբնակ վայրերում մզկիթներ չկային: Նախկին Քելբաջարի շրջանի քրդական և թյուրքական պատմական հուշարձանները բացառապես գերեզմանատներում էին. դամբարաններ (կումբազներ) և պարզապես քարեր (այդ թվում ձիակերպ և խոյակերպ), որոնցից ամենահինները վերաբերում են 1870-ական թթ.⁴¹: Միակ մզկիթի հիմքն այստեղ դրվեց 1990թ., նախկին Քելբաջարի շրջանում: Բայց այն այդպես էլ անավարտ մնաց և գտնվում է Ջլֆդարի գյուղից հարավ⁴²: Քրդերը, որոնք շիա մահմեդական էին, հոգևոր կրթություն ստանալու համար ստիպված էին ուսանել պարսկերեն և թյուրքերեն: Հիմնականում վերոնշյալ գործոնների արդյունքում Ադրբեջանի ԽՍՀ քրդերի շրջանում բարձր էր լեզվական ծուլման տոկոսը: Այսպես, 1926թ. մարդահամարի տվյալներով Ադրբեջանի ԽՍՀ-ում գրանցված էին 41,1 հազար քուրդ, որոնցից միայն 6,8 հազարն էին մշել, որ իրենց մայրենի լեզուն քրդերենն է: 34,1 հազար քրդեր որպես մայրենի լեզու մշել էին թյուրքերենը⁴³: Քրդստանի գավառի ամբողջ քուրդ բնակչությունից միայն 3123 մարդ էր քրդերենը մշել որպես մայրենի լեզու, մնացյալը մայրենի լեզու էին մշել թյուրքերենը⁴⁴: Հետաքրքրական է, որ Նախիջևանում իրադրությունն արմատապես այլ էր: Նախիջևանի 2649 քրդերից 2631-ը քրդերենը մշել էին որպես մայրենի լեզու⁴⁵: Հնարավոր է լեզվային ինքնության պահպանման պատճառն այն էր, որ այս քրդերը սուննի մահմեդական էին: Քրդերի ծուլմանը շատ բանով նպաստում էր նաև այս ժողովրդի ներկայացուցիչների համատարած անգրագիտության փաստը: Այսպես, Ադրբեջանի ԽՍՀ 41,1 հազար քրդերից միայն 1756-ն էին գրագետ, ընդ որում ընդամենը 10 մարդ էր տիրապետում քրդերենի քերականությանը⁴⁶:

Այս ամենի առկայությունն էականորեն հեշտացնում էր Բաքվի իշխանությունների գործը քրդերի ծուլման նպատակին հասնելու համար: Ընդ որում նրանք դա նախատեսել էին իրականացնել բավական կարճ ժամկետում. չէ որ որքան երկար գոյություն ունենար Կարմիր Քրդստանը, այնքան դժվար կլիներ հասնել դրան: Դրա համար ծանրակշիռ պատճառներ կային: Կարմիր Քրդստանի տեղծումից շատ չանցած, անցյալ դարի 20-ական թթ., Հյուսիսային Կովկասում սկսվեց քրդերի շարժումը հանուն ինքնավար Քրդստանի⁴⁷: Շարժումն, ըստ էության, համաքրդական էր, իսկ ինքնավարություն ցանկանում էին տեղծել Ադրբեջանի ԽՍՀ-ում Քրդական գավառի հիմքի վրա: Շարժումն ուղեկցվում էր հողի ազգայնացման, նստակեցության անցման, արտափայրերի և վարելահողերի վերաբաշխման մասին կարգախոսներով: Շարժման մեջ առանձնանում էին ազգային-մշակութային հիմնախնդիրները, մասնավորապես, կրթության, մայրենի լեզվով ուսուցմամբ դպրոցների ստեղծման հարցերը: Մշակութային-ուսավորական աշխատանքը սերտորեն կապվում էր քուրդ գրողներ Արաբ Շա-

միլիոն, Հաջիե Ջնդիի, Ամինե Ավդալի անունների հետ: Այս երեք գործիչներն էլ Հայկական ԽՍՀ քուրդ մտավորականներ էին: Այսպես, Արաբ Շամիլովը և Հաջիե Ջնդին ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչներ էին: Ամինե Ավդալն աշխարհում առաջին քրդական թերթի «Ռ-յա թագայի» տպագրության ջատագովներից էր, որը լույս էր տեսնում Հայաստանում: Հետաքրքրական է, որ 1933թ. Արաբ Շամիլովն գիտարշավ կազմակերպեց Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի քրդաբնակ վայրեր նպատակ ունենալով ուսումնասիրել կենցաղն ու տնտեսությունը, ստեղծել ԽՍՀՄ քրդերի միասնական գրական լեզու⁴⁸: Բնական է, որ Բաքվի իշխանությունները մտահոգ էին քրդերի ինքնավարություն ստեղծելու ակտիվությամբ և այն բանով, որ, փաստորեն, շարժումը գլխավորում էին հայաստանցի քրդերը, մանավանդ որ դեռևս 1921թ. Հայաստանում ստեղծվել էր հայատառ քրդական այբուբեն, որով լույս տեսավ քրդական առաջին այբբենարանը «Շամա»-ը: Քրդերի ազգային ինքնագիտակցության կայացումը խաթարելու առավել գործուն ռազմավարությունը Կարմիր Քրդաստանի լուծարումն էր: Լուծարելով այն՝ ուժացման քաղաքականությունը կարելի էր հասցնել տրամաբանական ավարտի:

Բաքվի իշխանությունները ծուլման նպատակին հմտորեն ծառայեցրին նաև 1937թ. իրադարձությունները: Ինչպես արդեն նշել ենք, 1926թ. համամիութենական մարդահամարի տվյալներով՝ Ադրբեջանի ԽՍՀ-ում քրդերի թիվը հասնում էր 41,1, 1937թ.՝ 10,8 հազար մարդու, իսկ 1939թ. մարդահամարի տվյալներով՝ ընդամենը 6 հազար մարդու⁴⁹: Որոշ հետազոտողներ կարծում են, թե բոլոր քրդերը, բացի 1939թ. մնացած 6 հազարից, տեղահանվել են: Մյուսների կարծիքով՝ տեղահանվել են առավելագույնը 5 հազար մարդ: Սակայն և՛ առաջինները, և՛ երկրորդները համամիտ են այն հարցում, որ տեղահանումից խուսափելու համար քրդերն առավել նպատակահարմար էին համարում իրենց ազգությունը աղբրեջանականով փոխելը⁵⁰:

Այդ նույն ժամանակ ամբողջ ԽՍՀՄ-ում և, մասնավորապես, Ադրբեջանում սկսվեց բավական հզոր տնտեսական վերելք: Ջարգանում էին արվեստը, մշակույթն ու կրթությունը: Նշված ոլորտների զարգացումն անմիջականորեն ազդում էր նաև ազգային ինքնագիտակցության գործընթացի վրա, մանավանդ թյուրքալեզու բնակչության համար, որը հանրապետությունում թվաքանակով ամենամեծն էր և, մինչև նույն ժամանակ, շրջապատված այնպիսի ժողովուրդներով, որոնք ունեին պետականության բազմադարյա պատմություն (պարսիկներ, հայեր, վրացիներ): Այս պայմաններում երիտասարդ ժողովրդի, հատկապես նրա վերնախավի մոտ, կարող է առաջանալ անլիարժեքության բարդույթ, և այդ բարդույթի հաղթահարման մեխանիզմ ընտրվում է ինքնամույնականացումն այն ժողովրդի հետ, որն ավելի մոտ է էթնիկ կամ հոգևոր առումով և իր բնակչության տարածքում ունի կշիռ, հատկապես՝ քաղաքական: Ուստի առավել նպատակահարմար ռազմավարությունը դարձավ Ադրբեջանի Խորհրդային Մոցիալիստական Հանրապետության մահմեդական ժողովուրդների համախմբումը իբրև մեկ՝

աղդրեջանցի ժողովուրդ⁵¹։ Բայց տարբեր ժողովուրդների համախմբումը մեկ միասնության մեջ բավական բարդ և երկարատև գործընթաց է։ Եվ առաջին բանը, որ պետք էր անել, ընդհանուր ինքնամույնականացման սերմանումն էր, որի համար հիմք պիտի ծառայեր վարչատարածքային պատկանելությունը։ Տարբեր ազգությունների պատկանող մարդիկ պետք է ինքնամույնականացվեին աղդրեջանցիների հետ և համարվեին Աղդրեջանցի բնակիչներ։ Այն բանից հետո, երբ ընդհանուր ինքնամույնականացումը «կպատվաստվեր», ժամանակի ընթացքում այն պետք է վերածեր ազգային ինքնագիտակցության և ազգային ինքնության (ազգի)։ Աղդրեջանը ԽՍՀՄ միակ հանրապետությունն էր, որտեղ կարելի էր դա անել, քանի որ պետության անվանումը նրա տարածքում բնակվող հիմնական ժողովուրդի անվան ածանցյալը չէ։ Այսպիսով, նոր՝ աղդրեջանական հանրության, մաս էին դառնում կովկասյան աղվանների հետնորդներ լեզգիները, իրանական մշակույթի կրողները՝ թալիշները, թաթերը, քրդերը և այլ ազգություններ, լեռնային ժողովուրդները, ինչպես նաև թյուրքական էթնոսը։ Արդյունքում՝ նոր հանրությունը կարծես թե դառնում էր ժամանակակից Աղդրեջանի տարածքում հազարամյակների ընթացքում գոյություն ունեցող պատմական, հոգևոր և քաղաքական ժառանգության տեղը։ Բացի այդ, վարչատարածքային պատկանելության հիմքի վրա ընդհանուր ինքնամույնականացման ձևավորումը հնարավորություն էր տալիս մահմեդական այլ ժողովուրդների ներկայացուցիչներին թոթափել թյուրք էթնոսի հետ հնարավոր ձուլման երկյուղը, ինչպես նաև նրանց հետագա զարգացման լավ հնարավորություններ էր ստեղծում։ Ուստի մացիոնալիզմի ցանկացած դրսևորում ցանկացած էթնիկ միջավայրում դաժանորեն ճնշվում էր։ Իսկ Աղդրեջանի բարձր ղեկավարությունում ներկայացված էին հանրապետության բոլոր ազգերը։ Աղդրեջանական հանրության ստեղծման շրջանակներում խրախուսվում էր Աղդրեջանի մահմեդական ժողովուրդների ազգային պատկանելությունը փոխելու քաղաքականությունը, և նրանք պարզապես գրանցվում էին որպես աղդրեջանցիներ։

Իհարկե, ընդհանուր ինքնամույնականացման վերաճումը ազգային ինքնագիտակցության և ազգային ինքնության Աղդրեջանում տեղի ունեցավ մի փոքր այլ կերպ, քան ծրագրվել էր։ Որպես աղդրեջանցի ինքնամույնականացումը, իսկ այնուհետև դրա փոխակերպումը ազգային ինքնագիտակցության և ազգային ինքնության բավական հաջող անցավ հանրապետության թյուրքալեզու բնակչության շրջանում։ Միայն դա արդեն համապատասխանում էր Մոսկվայի շահերին։ Բայց ինքնամույնականացման փոխակերպումը ազգային ինքնագիտակցության այլ ժողովուրդների մոտ տեղի էր ունենում ավելի դանդաղ։ Դրա համար էլ ազգային համախմբման գործընթացն Աղդրեջանում սկսեց ձեռք բերել միանգամայն այլ ուղղություն։ Թյուրքական ընտրանին, հաջող անցնելով «ինքնամույնականացում-ինքնագիտակցություն-ազգային ինքնություն» շղթան, սկսեց, փաստորեն, աղդրեջանական ինքնությունը պարտադրել հանրապետության մյուս մահմեդական ժողովուրդներին ու նրանց ընտրանիներին, որոնց

համար աղբրեջանական հանրությունը հիմնականում գտնվում էր դեռևս ինքնանույնականացման փուլում: Արդյունքում՝ Աղբրեջանի ազգային մահմեդական փոքրամասնությունները աղբրեջանական հանրությունն սկսեցին ընկալել որպես իրենց այլ ժողովրդի ազգային ինքնության պարտադրման փորձ: Եվ «աղբրեջանցի» ասելով հասկանում էին հենց Աղբրեջանի քյուրք էքնոսը, իսկ աղբրեջանական հանրությունը դադարեց լինել համախմբող տարր հանրապետության մահմեդական ժողովուրդների համար:

Այնուամենայնիվ, Բաքվի իշխանությունները մեծ հմտությամբ օգտվեցին դրամից և գրեթե առանց արյունահեղության կարողացան ամբողջովին ազատվել քուրդ բնակչությունից, մանավանդ որ Կարմիր Քրդստանի զբաղեցրած տարածքը ռազմավարական կարևոր նշանակություն ուներ Աղբրեջանի համար: Բաքվի իշխանություններն արեցին հնարավոր ամեն ինչ՝ թույլ չտալու համար նաև Ալդուլի, Հակ, Հարար գյուղերի հայ բնակչության վերադարձն իրենց տները՝ 1918-1920թթ. կոտորածից հետո: Միաժամանակ նշված տարածքներում գրանցվում էր բնակչության մեծ աճ: Այսպես, եթե 1926թ. Քելբաջարի և Լաչինի շրջանների բնակչության թիվը 37 հազար էր, ապա 1980-ական թթ. սկզբին այն հասնում էր 100 հազարի³²: Քելբաջարի և Լաչինի շրջանների բնակչությունը հիմնականում գյուղական էր, այն դեպքում, երբ Աղբրեջանի ԽՍՀ-ում ընդհանուր առմամբ անշեղորեն նվազում էր գյուղաբնակների թիվը, մարդիկ գյուղերից տեղափոխվում էին քաղաքներ: Այսպես, եթե 1926թ. Աղբրեջանի ԽՍՀ գյուղական բնակչության թիվը բնակիչների ընդհանուր թվի 72%-ն էր կազմում, ապա 1987թ. այն արդեն 46% էր³³: Բայց ուրբանիզացիան ԼՂԽՍ և Հայաստանի միջև գտնվող տարածքները շրջանցեց: Դրանք չափազանց կարևոր աշխարհառազմավարական նշանակություն ունեին, դրա համար էլ թույլ չէր տրվում բնակչությանն այդտեղից տեղափոխվել Աղբրեջանի ԽՍՀ խոշոր արդյունաբերական կենտրոններ:

Այս բոլոր փաստերը վերստին ապացուցում են, որ վերոնշյալ տարածքները ոչ մի դեպքում սակարկության առարկա լինել չեն կարող Ղաթաբաղյան հակամարտության կարգավորման մեջ: Դրանցից են կախված ամբողջ հայ ժողովրդի անվտանգ զարգացումը և առաջընթացը:

DAVID BABAYAN

THE RED KURDISTAN: HISTORICAL REVIEW

On July 23, 1923 the territories of later to be know as Kelbajar, Lachin and Kubatly regions were united to form a separate Kurdistan uyezd (area), which is more known as Red Kurdistan. Interestingly, but information about the formation of a Kurdish administrative unit was disseminated back in 1921. For example, on October 3, 1921 Russian Federation People's Commissariat on Nationalities headed by Joseph Stalin in its newspaper published an article where it informed Soviet public that the formation of a Kurdish Republic was in process.

The Kurdish uyezd was comprised of six diara or sub-districts – Kelbajar, Koturlou, Karakishlagh, Muradkhanly, Kurd-Haji and Kubatlou. The administrative center of the uyezd was the settlement of Lachin. The total population of the uyezd was 51,2 thousand people, the Kurds comprising 73,1 percent of the population. The Kurdistan uyezd existed for several years and was abolished on April 8, 1929. Instead of 13 uyezds there were formed eight okrugs (regions) in Azerbaijan Soviet Socialist Republic (SSR). The territories of the Red Kurdistan were included in the newly formed Karabagh okrug. It was only on May 25, 1930 when a separate Kurdistan okrug was formed. The Kurdistan okrug was bigger than its predecessor and incorporated not only the territory of the former Kurdistan uyezd but also the former Zangelan rayon (district) entirely and Jebrail district partly. On July 25, 1930 the Central Executive Committee of the USSR adopted a decision abolishing okrugs as administrative units and introducing new units – the rayons (a sort of regions). Accordingly, the Central Executive Committee of the Azerbaijan SSR adopted a decision on abolishing the Kurdistan okrug. However, no Kurdistan rayon was established later on. Thus, the Kurdish administrative unit existed for around 7 years.

In spite of such short period of existence, the formation, existence, abolition and memories of that entity in general have been laid in the sphere of geopolitics since the first day of the formation of the Azerbaijani state. The formation of the Red Kurdistan in 1923 simultaneously solved some geopolitical issues. First of all, the formation of this entity was a perfect leverage for Moscow to influence Azerbaijan and its attitude towards the new Soviet system. Azerbaijan SSR having two autonomous entities and the Red Kurdistan hardly could have disloyal attitude towards the Communist system. Otherwise, it could lose these territories. Second, having formed the Red Kurdistan, Soviet authorities weakened tensions between two Soviet Republics – Armenia and Azerbaijan. In 1921 Azerbaijan declared Zangezur and Mountainous Karabagh integral parts of Armenia. At that time the territories on which the Red Kurdistan was formed were parts of Zangezur and Mountainous Karabagh. However, in the same year Mountainous Karabagh and most part of Zangezur were given to Azerbaijan under the pressure of Joseph Stalin. This fact, of course, was very painful for Armenia. Consequently, forming the Red Kurdistan, Moscow eased tensions between Armenia and Azerbaijan because from the Armenian perspective those territories did not become parts of Azerbaijan in a pure sense. There was formed a new separate national entity. Third, existence of the Red Kurdistan was also of great importance from foreign policy perspective, since taking into consideration the fact that at that time it was the only Kurdish entity in the world and by such it was, indeed, a very efficient leverage to influence the Kurdish people in general.

Geopolitical considerations became actually the most important reason for abolishing the Red Kurdistan too. In 1930-s there were some significant trends in global politics, the most important of them being the Nazi coming to power in Germany, the imminence of a war between the USSR and Germany and traditionally close ties between Germany and Turkey. In this situation Soviet authorities to form a new Azerbaijani identity, a new Azerbaijani nation, which was to incorporate all the Moslem peoples of the Azerbaijan SSR. What the Kremlin had in mind was to loosen and eventually cut any ties between Soviet Azerbaijan and Turkey. For this very reason not only the existence of the Red Kurdistan, but also the Kurds of Azerbaijan SSR in general became needless and soon to be abolished and disappeared.

1. В договорных Советских республиках. В Курдистане,- "Жизнь национальностей", N20, 3 окт. 1921, с. 4.
2. Ленин В., Полное собрание сочинений, М., т. 54, 1975, с. 560.
3. Ленин В., Биографическая хроника, М., т. XI, 1980, с. 641-643.
4. "Список населенных мест Азербайджана по данным переписи 1926 года. Курдистанский уезд", Азербайджанское центральное статистическое управление, Баку, 1927.
5. Տիւ "Заря Востока", 2 июня 1930.
6. История государства и права Азербайджанской ССР, Баку, 1973, с. 412, 505.
7. Ա.-Պ., Հայ-թուրքական ընդհարումները 1905-1906, Ե., 1907, էջ 255:
8. Միկար Եսու. Բարխուդարեան, Մրցախ, Քաղաք, 1895, էջ 258:
9. ЦГИАРА, ф. 150, сл.1, д. 59, л. 5.
10. ЦГИАРА, ф. 150, сл.1, д. 59, л. 5; Карапетян М., Этническая структура населения Нагорного Карабаха в 1921 году, Ер., 1991, с. 17.
11. Стеклов А., Армия мусаватского Азербайджана, Баку, 1928, с. 40.
12. Бакшпан А., Азербайджанские курды, Баку, 1932, с. 26, 27, 69-72.
13. Letter from the President of the Peace Delegation, Republic of Azerbaijan, to President of League of Nations, December 7, 1920, objecting to League's conclusion on difficulties in assessing frontiers, boundaries, and refuting problems in dispute with Armenia, [FO 371/4955], in Caucasian Boundaries, Documents and Maps (1802-1946), edited by Anita L.P. Burdett, Archive Editions, 1996, p. 715, 717, 719.
14. «Կոմունիստ», Ե., 7 դեկտեմբերի, 1920:
15. «Ժողովրդային Հայաստան», 12 հունիսի 1921:
16. Сталин И., Да здравствует Советская Армения, "Правда", N273, 4 декабря 1920.
17. "Заря Востока", N225, 29 июля 1928 г.
18. Счастье на штыках. Секретная борьба в большевистском руководстве по поводу «совестизации» Закавказья, "Лабиринт Времени", <http://hist.ru/kavbolsh.html>.
19. Там же.
20. Бакшпан А., Азербайджанские курды, с. 50-53.
21. Большая советская энциклопедия, раздел «Аз. ССР», т. I, 1929, с. 642.
22. "Заря Востока", N225, 29 июля 1928 г.
23. Большая советская энциклопедия, раздел «Аз. ССР», т. I, 1929, с. 641.
24. Аристова Т., Курды Закавказья, М., 1966, с. 86.
25. "Заря Востока", N237, 15 октября 1929 г.
26. Бакшпан А., Азербайджанские курды, с. 5, 62, 77-78.
27. Аристова Т., Курды Закавказья, с. 86.
28. Сталин И., Организация Российской Федеративной Республики,- "Правда", N62 и 63, 3 и 4 апреля 1918.
29. Бакаев Ч., Основы курдской орфографии, М., 1983, с. 269.
30. Подробнее см. "Библиография советской курдской книги", Ер., 1962.
31. Անճնական գրքը Դարձեալստի կոմրինատի նախկին տնօրին Կ.Ավագյանի հետ, Ստեփանակերտ, 29 հունվարի 2006:
32. Muller D., The Kurds of Soviet Azerbaijan (1920-91),- "Central Asian Survey", N19, 2000, p. 65.
33. Всесоюзная перепись населения 1937 года, Институт истории Академии наук СССР, М., 1991, с. 95.
34. Обзор деятельности Совнаркома ЗСФСР, Тб., 1923, с. 16.
35. Мамедов К., Население Азербайджанской ССР за 60 лет, Баку, 1982, с. 55.
36. Мрон Ш., Еще раз об азербайджанских курдах, http://www.ezdixane.ru/index.php?option=com_content&task=view&id=114&Itemid=27, 5 сентября, 2004.

37. Мгон Ш., указ. соч.
38. Национальный состав населения СССР. По данным Всесоюзной переписи населения 1989 года, Финансы и статистика, М., 1990, с. 118-121.
39. Энциклопедия «Народы России», М., 1994, с. 217.
40. Алекперов А., К вопросу об изучении культуры курдов.- "Труды Азербайджанского филиала Академии наук СССР", Баку, 1936, с. 33-61; Алекперов А., Материалы по археологии и этнографии Азербайджана, Б., 1960, с. 162.
41. Ушйришый ишэ Эфендиев Р., Камни говорят, Б., 1980. (աղբրքանքանքն):
42. Շարափաբազյան Ս., Քարվաճառի շրջանի միակ նզկիքի պատմությունը, Ազատամարտ, N47, 1994, էջ 13:
43. Всесоюзная перепись населения 17 декабря 1926 года, т. IV, пп.14, Центральное статистическое управление СССР, М., 1929, с. 13.
44. Всесоюзная перепись населения 17 декабря 1926 года, указ.док, с.71
45. Всесоюзная перепись населения 17 декабря 1926 года, указ.док, с.19.
46. Всесоюзная перепись населения 17 декабря 1926 года, указ.док, с.73.
47. Энциклопедия «Народы России», указ. док., с. 217.
48. Люди и судьбы. Библиографический словарь востоковедов - жертв политического террора в советский период (1917-1991), раздел Шамилов А., СПб., 2003.
49. Бугай Н., Броев Т., Броев Р., Советские курды: Время перемен, М., 1993, с. 46; Всесоюзная перепись населения 1939 года, М., 1992, с. 71.
50. Muller D., The Kurds of Soviet Azerbaijan, 1920-91, p.62.
51. Бабаян Д., Нагорно-карабахский конфликт и самоопределение азербайджанского народа.- "Центральная Азия и Кавказ", N5, 2003.
52. Азербайджанская советская энциклопедия, Б., 1981, т. V, с. 334, том VI, с. 173.
53. Атлас Азербайджанской ССР, М., 1963, с. 14-15; Советский Энциклопедический Словарь, М., 1990, с. 23.

**«ԱՆ-ԿԱՀՏԱՆԻԱ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԳԱՂԱՓԱՐԱՆՈՍՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ**

1909թ. մարտի 31-ին Օսմանյան կառավարության դեմ կազմակերպված խռովությունը ճնշելուց և իրենց իշխանությունը ամրապնդելուց հետո իթթիհադականների վարած ազգային քաղաքականության ակնհայտ փոփոխությունը հիասթափեցրեց արաբ քաղաքական ակտիվ շրջաններին՝ վերջիններինս մոտ հասումացնելով «Իթթիհադ վե քերաք-քիին» ընդդիմադիր արաբական կազմակերպությունների ստեղծման գաղափարը:

Այս պայմաններում ի հայտ եկան մոր հայացքներ և ուղղվածություն ունեցող արաբական կազմակերպություններ, որոնք իրենց հիմնական առաքելությունը տեսնում էին ընդհանուր գաղափարական հիմքի ստեղծման մեջ, որը պետք է միավորեր արաբներին ինքնավարության և իրավահավասարության իրենց պայքարում:

Այս շարժումն առավել ակտիվ էր կայսրության մայրաքաղաք Ստամբուլում, ուր կենտրոնացված էին արաբ մտավորականության, ուսանողության և զինվորականության առավել գործունյա տարրերը: Նրանց ամմիջական մասնակցությամբ հիմնվեցին մի շարք կազմակերպություններ, որոնք պետք է մեծ դեր խաղային ազգային շարժման զարգացման մեջ:

1909թ. վերջերին Ստամբուլում ստեղծվեց երիտթուրքական հեղափոխությունից հետո արաբական առաջին գաղտնի կազմակերպությունը՝ «ալ-Կահտանիան»¹, որի մասին տեղեկությունները սուղ են, ինչը նրա ստեղծման հանգամանքների, գործունեության և հետապնդած նպատակների ամենատարբեր, հաճախ միանգամայն հակադիր, մեկնաբանությունների և գնահատականների առիթ է տվել²:

Արաբական, ինչպես նաև արևմտյան պատմագրության մեջ երբեմն թուրքական բանակի զլխավոր շտաբի սպա Մելիմ ալ-Ջազաիրիի հետ միասին «ալ-Կահտանիայի» հիմնադիր է համարվում թուրքական բանակի սպա Ազիզ Ալի ալ-Միսրին: Այս տեսակետի տարածման համար հիմք է հանդիսացել Ալեքիան դատավարության³ հրապարակված փաստաթղթերի մեջ առկա վկայությունը⁴: Հարկ է նշել, սակայն, որ ժամանակի պատմաբաններ Ահմադ Իզետ ալ-Ազամին և Մուստաֆա ալ-Շիհաբը հերքում են Ալեքիան դատավարության տեղեկությունները և, ամենևին չփորձելով նվազեցնել ալ-Միսրիի դերակատարությունն ընկերության գործունեության մեջ, այնուամենայնիվ, «ալ-Կահտանիայի» հիմնադիր են դիտում Մելիմ ալ-Ջազաիրիին⁵:

Անկասկած է, որ «ալ-Կահտանիան» ստեղծվել էր թուրքական բանակի արաբ սպաների նախաձեռնությամբ և նրանում վերջիններին ազդեցությունն ամփոփելիորեն մեծ էր: Սակայն «ալ-Կահտանիան» գուտ զին-

վորական կազմակերպություն չէր. նրա մեջ ներգրավված էին նաև մտավորականության, ուսանողության և այլ խավերի ներկայացուցիչներ: Կազմակերպության առավել հայտնի գործիչներից էին Արդել Քերիմ Քասեմ ալ-Խալիլը, էմիր Արդել Արսլանը, դոկտոր Իզեթ ալ-Ջունդին, Հասան բեյ Համադեն, էմիր Արեֆ ալ-Շիհաբը, Ամին Լուքֆի բեյ ալ-Հաֆեզը, Ալի էֆենդի ալ-Նաշաշիբին⁵:

Քանի որ ընկերությունը գործում էր խիստ գաղտնի, նա իր անդամներին ընտրում էր մեծ զգուշավորությամբ և իր շարքերն էր ընդգրկում միայն նրանց, ում հայրենասիրությունը որևէ կասկած չէր հարուցում: «Ալ-Կահտանիան» անդամներն իրար ճանաչում էին հատուկ նշանաբաններով և գաղտնաբառերով⁷: Միայն ավելի ուշ, երբ նրա անդամների թիվը ավելացավ, կազմակերպության գաղտնիությունը որոշակիորեն տուժեց:

Ըստ արաբ պատմաբան Մաջիդ Խադուրիի՝ սկզբնական շրջանի արաբական ընկերություններն ընդհանրապես (ենթադրվում է նաև «Ալ-Կահտանիան»-Ա.Գ.) հիմնադրվում էին ի հակադրումն թուրքական քաղաքական վերնախավի, որն իրենց կազմակերպություններում արաբ վերնախավի ներկայացուցիչներին չէր ընդունում որպես լիիրավ անդամներ⁸:

Տարածված տեսակետներից մեկն այն է, որ «Ալ-Կահտանիան» իր խնդիրները սահմանափակում էր զուտ քաղաքա-լուսավորական շրջանակներով⁹: Այդ տեսակետի ընդդիմախոսները, սակայն, համարում են այն քիչ հավանական, պատճառաբանելով, որ այդպիսի նպատակի իրականացման համար խիստ գաղտնի կազմակերպության ստեղծման անհրաժեշտությունն ուղղակի չկար: Առավել ճշմարտամոտ է թերևս այն, որ արդեն 1909թ. վերջերին կայսրությունում տիրող իրադրությունն ու երկրաբանական ազգային քաղաքականությունն իր բնույթով արաբ ազգային գործիչների և նրանց կազմակերպությունների առջև անխուսափելիորեն պետք է դներ այդ պահի համար շատ ավելի կարևոր գործնական խնդիրներ, ինչպես, ասենք, արաբ հայրենասիրական ուժերին համախմբելն ու նրանց ազգային նպատակների իրականացմանն ուղղելը: Տեսակետների մեծանազանությունը միանգամայն հասկանալի է, եթե նկատի ունենանք, որ գաղտնի կազմակերպությունների ծրագրերի տեքստերը ուսումնասիրողներին անհասանելի էին:

Ուսումնասիրողների մի մասը հակված է «Ալ-Կահտանիային» վերագրել արաբա-թուրքական դուալիստական կայսրություն ստեղծելու գաղափարի մտահղացումը: Ջ. Անտոնիուսն, օրինակ, ուղղակի գրում է, որ այդ կազմակերպության հիմնադիրները համարձակ մարդիկ էին, և նրանց նպատակն Օսմանյան կայսրությունը դուալիստական կայսրություն դարձնելու «նոր և խիզախ» ծրագրի առաջընթացն էր, ինչը, վերջինիս գնահատմամբ, իթքիհադական կոմիտեի կենտրոնացման քաղաքականության հարուցած պրոբլեմի դեմ պայքարելու փորձերից մեկն էր: Ըստ այդ ծրագրի՝ արաբական վիլայեթները պետք է միավորվեին մեկ միասնական թագավորության մեջ՝ սեփական խորհրդարանով, տեղական կառավարման մարմիններով, որտեղ արաբներն լեզուն պետք է դառնար պետական լեզու:

Արաբական թագավորությունը պետք է կազմեր արաբա-թուրքական միասնական թագավորության մաս՝ ավստրո-հունգարական պետության օրինակով: Օսմանյան սուլթանը, ի հավելումն թուրքական գահի, պետք է կրեր նաև արաբական թագավորության թագը¹⁰: Այսպիսով, փաստորեն, միասնությունը կապահովվեր բաժանման միջոցով:

Ռուս հեղինակ Լ.Կոտլովը, չբացառելով «ալ-Կահտանիայի» ծրագրում դուալիստական կայսրության գաղափարի առկայությունը, այն կարծիքն է հայտնում, որ նրա հիմնադիրներին գրավում էր ոչ թե Ավստրո-Հունգարիայի՝ ձևականորեն երկու մասերից կազմված պետության ձևը, այլ «տեղական կառավարման ավստրո-հունգարական մոդելը, որը շատ բանով ներդաշնակում էր ապակենտրոնացման հայեցակարգի հետ»¹¹:

Ինչպիսին էլ որ լինի «ալ-Կահտանիայի» ծրագրում դուալիստական պետության գաղափարի մեկնաբանությունը, այնուամենայնիվ, մնան ծրագրային դրույթը կասկածելի է դառնում, եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ ավստրո-հունգարական տիպի դաշնային պետության գաղափարն արաբների կողմից մասնույում և քաղաքական շրջանակներում ակտիվ քննարկման առարկա դարձավ միայն 1912թ. Բալկանյան պատերազմից հետո¹²: Բացի այդ, ինչպես իրավացիորեն նշում է արաբ ուսումնասիրող Թաուֆիկ Բիրուն, քանի դեռ քաղաքականապես ակտիվ ռումելիական մահազները գտնվում էին կայսրության կազմի մեջ, մնան կարգախոսը անհնարին էր¹³: Ավելորդ չէ հիշեցնել նաև, որ ինքը՝ Ազիզ Ալի ալ-Միսրին ևս կտրականապես մերժում էր «ալ-Կահտանիայի» ծրագրի և նպատակների մնալ մեկնաբանությունը¹⁴:

«Ալ-Կահտանիայի» ծրագրի ու նպատակների հստակեցման հարցում, թերևս, կարևոր նշանակություն է ձեռք բերում լայնորեն շրջանառության մեջ չորված մի փաստաթուղթ՝ ալ-Կահտանիայի կենտրոնական կոմիտեի՝ համայն արաբներին ուղղված կոչը, որ հրապարակվել է 1912թ. «ալ-Ահրամ» թերթում, 1912թ. ընտրաքաղաքական ժամանակ, որի օրինակներն ուղարկվել էին օսմանյան բարձրաստիճան պաշտոնյաներին¹⁵:

Ստորև մեջբերում ենք կոչի տեքստն ամբողջությամբ.

«Բոլոր արաբներին.

Մենք ձեզ ենք դիմում հանուն Աստծո.

Ո՛վ թագավորների հետնորդներ, ժողովրդի պահապաններ և ժողովրդի առաջնորդներ: Կա՛նգ առեք և լսե՛ք շիրիմներից ձեզ դիմող ձեր նախնիների ձայնը, որը ձեզ կոչ է անում վերականգնել այն փառքը, որ դուք կորցրեցիք, այն պատիվը, որ դուք արհամարհեցիք և այն գիտելիքները, որոնցից դուք հրաժարվեցիք:

Եղե՛ք ճշմարիտ արաբներ, ինչպես ձեր նախնիները: Վերածնվե՛ք, ու՛ժ ստացե՛ք և ընդունե՛ք այն, ինչ որոշեցին երիտասարդ Կահտանյանները անապատում տեղի ունեցած իրենց վերջին ժողովի ժամանակ՝ միավորելով բոլոր վիլայեթները (արաբական-Ա.Գ.): Ահա այդ որոշումները:

1. Որ կառավարությունը (Օսմանյան-Ա.Գ.) ձեզ ճանաչի որպես խոսքով և գործով իրավունքներ ունեցող առանձին մի ազգ:

2. Որ նա ձեր լեզուն ճանաչի որպես պաշտոնական լեզու:
3. Որ նա ձեզ տա գործելու հնարավորություն ձեր արաբական երկրներում, քանի-որ դուք ընդունակ եք և առավել շահագրգռված ձեր երկրների բարօրությամբ:
4. Որ նա սահմանի արաբ զինվորների և սպայական անձնակազմի ծառայությունը իրենց երկրներում:
5. Որ նա նպատիի հասարակական խորհուրդների արտոնությունների ընդլայնմանը այնպես, որ դատավորները պատասխանատու լինեն նրանց առջև բոլոր գործողությունների համար, լինեն նրանք մեծ, քե՛ս փոքր:
6. Որ արաբական ցեղերն իրավունք ստանան ներկայացված լինելու խորհրդարանում մույն իրավունքներով, ինչ բնակության մշտական վայր ունեցող ազգաբնակչությունը՝ զրանցված լինեն նրանք, քե՛ս ոչ՝ քաղաքացիական գրանցումների գրքում:

Մրանք են «ալ-Կահտանիա» ընկերության կենտրոնական կոմիտեի հիմնական պահանջները: Հանուն արաբների իրավունքի և պատվի ոտքի ելեք, ո՛վ արաբներ, մի՛ եղեք դավաճաններ: Կյանքը արհամարհանքի մեջ՝ մահ է: Եվ պատվի մեջ մահը՝ կյանք»¹⁶:

Այս կոչի բովանդակությունը անժխտելիորեն որոշակիացնում է ընկերության պահանջները, որոնք միանգամայն համահունչ են ապակենտրոնացմանը հետամուտ կազմակերպությունների նպատակներին: Այստեղ արտահայտված է արաբների՝ իրենց էթնիկ առավելությունը վերահաստատելու և իրենց նախկին կարգավիճակը վերականգնելու ձգտումը:

Չենք քաջառում, որ «ալ-Կահտանիայի» այսպիսի կողմնորոշումն արդյունք էր նրա քաղաքական հայացքների էվոյուցիայի: Այսուհանդերձ, ակնհայտ է, որ կոչի բովանդակությունը ինքնին քաջառում է այն բնորոշումը, որ այդ կազմակերպությունը միայն քաղաքական-լուսավորչական նպատակներ էր հետապնդում:

Այսպիսով, «ալ-Կահտանիա» գաղտնի ընկերության ստեղծման փաստը հստակորեն վկայում է, որ երիտթուրքերի կառավարման արդեն իսկ սկզբնական շրջանում ձևավորվում էր արաբների ինքնավարությանն ուղղված շարժումը: «Ալ-Կահտանիայի» անժխտելի առավելությունը կայանում է նրանում, որ նա կարողացավ իր շուրջը համախմբել արաբ ազգային գործիչներին և արաբական շարժման մեջ ներգրավել թուրքական բանակում ծառայող արաբ սպաներին, ինչը և հետագայում դարձավ արաբական ազատագրական պայքարի կարևորագույն գործոններից մեկը:

Իր խիստ գաղտնիությամբ և զգուշավորությամբ հանդերձ՝ «ալ-Կահտանիան», այնուամենայնիվ, իր շարքերում դավաճանների ամկայության պատճառով¹⁷ ի վերջո կանգնեց փլուզման առջև: Նա մախ հարկադրված եղավ թուլացնել իր ակտիվությունը, իսկ որոշ ժամանակ անց ինքնալուծարվեց¹⁸: Հետագայում ընկերության անդամները մտան ավելի ուշ ստեղծված կազմակերպությունների և կուսակցությունների շարքերը («Գրական ակումբ», «Երիտասարդ Արաբիա», «ալ-Ահդ»):

IDEOLOGY AND GOALS OF THE ORGANIZATION "AL-KAHTANIA"

After suppressing the sedition organized against the Ottoman government on March 31 in 1909 and reinforcing their supremacy, national political obvious changes run by the Ittihat made the Arab active political authorities fell into despair. The latter was pondering on creation of opponent Arab organizations versus "Ittihat ve Terakki".

In this condition Arab organizations appeared with new viewpoints and direction, and saw their key mission in creating universal ideological ground that would unite the Arabs in their struggle for self-governing and equal rights.

The first underground Arab organization "Al-Kahtania" was formed under these circumstances at the end of 1909.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Կահտան արաբ լեգենդար հերոսի անունով:
2. Hajjar J., L'Europeen les Destinées du Proche-Orient. La Nationalisme arabe, Syrien Entree la Jeune Turque et les Puissances (1908-1914), Damas 1996, էջ 271:
3. 1916 թ. արաբ զագայնականների՝ երիտթուրքերի կողմից կազմակերպված դատավարություն:
4. Համաձայն Ալեհյան դատավարության փաստաթղթերի՝ «ալ-Կահտանիայի» հիմնադիր անդամներն էին Ազիզ Ալի ալ-Միսրին, Սելիմ ալ-Ֆազաիրին, Աբդ-ալ Համիդ ալ-Ջախրավին և Հալիլ ալ-Հիմադը: Իդախար ան ալ-մասալիլ ալ-սիյասա ալաբի ջառաբ քաղկիկաա քիդայուն ալ-խարր ալ-առաֆի ալ-մուքաշարիլ քիալիլա, ս., 14.
5. Котлов Л., Становление национально-освободительного движения в арабских странах Азии 1908-1914гг., М., 1986, ст. 207.
6. J. Hajjar, նշվ. աշխ., էջ 272:
7. Antonius G., The Arab Awakening. The Story of the Arab National Movement, N.Y., 1947, pp. 110-111.
8. Majid K., Aziz Ali Misri and the Arab Nationalist Movement, / Middle Eastern Affairs: Number Four: ed. Albert Hourani, Oxf., 1965, p. 141.
9. Այս վարկածի օգտին խոսում է այն հանգամանքը, որ ալ-Կահտանիայի փակումից հետո նրա անդամների մի մասը ընդգրկվեց «Գրական ակումբի» շարքերը: Majid Khaduri, նշվ. աշխ., էջ 142:
10. G. Antonius, նշվ. աշխ., էջ 110-111:
11. Котлов Л., Становление национально-освободительного движения в арабских странах Азии, նշվ. աշխ., էջ 208:
12. Majid Khaduri, նշվ. աշխ., էջ 142:
13. Ալ-դոքթոր Թաուֆիկ քիլու, ալ-արաբ ու ալ-թուրք ֆի ալ-սիդ ալ-դուսթուրիյա ալ-օսմանիյա 1914-1918, դիմաշկ 1991, ս. 320:
14. Նույն տեղում:
15. Հավանական ենք համարվում, որ կոչը ձևակերպվել էր ավելի վաղ: J. Hajjar, նշվ. աշխ., էջ 477:
16. Ըստ՝ J. Hajjar, նշվ. աշխ., էջ 477-478 նաև՝ ալ-դոքթոր Թաուֆիկ քիլու, նշվ. աշխ., էջ 324-325:
17. Лувкин В., Новая история арабских стран, М., 1965, ст. 299:
18. Հավանական է, որ ալ-Կահտանիան ինքնալուծարվել է 1912 թ. հետո, քանի-որ 1911 թ. սկսված թուրք-իտալական պատերազմի ընթացքում նա բավական ակտիվ աշխատանքներ ծավալեց արաբ սպաների մորիլիզացման գործում:

**ՆԱՎԹԸ ԵՎ ԻՐԱՆԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՐՄԻՑ ԾՈՑԻ
ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ 1960-1970 ԹԹ.**

Սկսած 1950-ական թթ. վերջից մավթի դերը Իրանի սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման գործընթացում զգալիորեն մեծանում է: Նավթից ստացվող եկամուտներն աստիճանաբար դառնում են պետական բյուջեի ֆինանսավորման հիմնական միջոցը և նպաստում Իրանի դեկավար օդակների կողմից արտաքին քաղաքականության ակտիվացմանն ու վերանայմանը: Կառավարությունը ՕՊԵԿ-ի՝ շրջանակներում այլ մավթարդյունաբերող երկրների հետ մեկտեղ սկսում է պայքարել արևմտյան խոշոր մավթային մենաշնորհների դեմ՝ ավելի նպաստավոր պայմաններով համագործակցելու նպատակով: Նավթի և գազի արդյունաբերությունը դարձել էր Իրանի տնտեսության առավել արագ զարգացող ճյուղը:

1950-ական թթ. վերջին և հատկապես 1960-ական թթ. սկզբին Պարսից ծոցը Իրանի արտաքին քաղաքականության մեջ գլխավոր դեր սկսեց խաղալ, որը կապված էր տարածաշրջանում Մեծ Բրիտանիայի ազդեցության թուլացման, արաբական ժողովուրդների կողմից ազգային-ազատագրական շարժումների բարձրացման, Արևմուտքի մավթային մենաշնորհատերերի կողմից Պարսից ծոցի ավազանի և մայրցամաքային ծանծաղուտի մավթային աղբյուրներին տիրամալու միտումների հետ:

Նավթային շահերը մույմպես նշանակալից դեր ունեցան Իրանի կառավարության կողմից Պարսից ծոցում քաղաքական ակտիվացման գործում: Նավթային եկամուտների դերը աստիճանաբար ավելի էր մեծանում երկրի տնտեսական զարգացման ֆինանսավորման հարցում: Միևնույն ժամանակ Խուզիսթանում և Պարսից ծոցի մայրցամաքային ծանծաղուտում նոր հարուստ մավթի և գազի հանքաշերտերի հայտնագործումը ավելի էր կարևորում հարավ-արևմտյան շրջանների նշանակությունը Իրանի տնտեսության, հարևան արաբական պետությունների, ինչպես նաև Մեծ Բրիտանիայի հետ հարաբերությունների համակարգում: Իրանին առավել անհանգստացնում էին Արաբական Արևելքի երկրների ժայռահեղ ազգայնականների տարածքային ունեցվածությունները Խուզիսթանի մահաբի նկատմամբ, որտեղ բնակչության զգալի մասը արաբներ են: Այդ տագնապը ավելի էին խորացնում ամերիկացիները՝ տարածաշրջանում Ջամալ Նասերի գլխավորությամբ Եգիպտոսի ազդեցության տարածման սպառնալիքով, միևնույն ժամանակ Իրանի և Մեծ Բրիտանիայի, ինչպես նաև վերջինի հպատակության տակ գտնվող Պարսից Ծոցի որոշ իշխանությունների միջև դեռ վաղ ժամանակներից գոյություն ունեին տարածքային վեճեր: Բացի այդ առկա էին սահմանային տարածայնություններ Իրանի և Իրաքի միջև:

Հատկանշական է, որ ծովի ընդերքում մավթի և գազի հարուստ

պաշարների հայտնաբերումից հետո Իրանի, Իրաքի և Մաուդյան Արաբիայի կառավարությունները 1959թ. ապրիլի 12-ին ընդունեցին ջրային գոտու 12 մղոն շառավղով բաժանման սկզբունքը, որը պաշտոնապես բողոքարկեցին ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի կառավարությունները: 1955թ. հունիսի 19-ին ընդունվեց Իրանի կողմից իր տարածքը հարող մայրցամաքային ծանծաղուտի նկատմամբ երկրի իրավունքների մասին օրենքը³: Մայրցամաքային ծանծաղուտի սահմանագծման հարցն առաջացել է 1950-ական թթ. վերջից, երբ հնարավոր դարձավ Պարսից ծոցի ընդերքի նավթի հանքաշերտերի շահագործումը: 1957-1958թթ. Իրանում գործող համատեղ ընկերությունները, որոնց մեջ ընդգրկվում էին ԻԱՆԸ-ը և ամերիկյան ու իտալական նավթային մենաշնորհները, սկսեցին Իրանի մայրցամաքային ծանծաղուտում նավթի արդյունահանման աշխատանքներ տանել: Միևնույն ժամանակ մի շարք արևմտյան և ճապոնական մենաշնորհատերեյ նավթային կոնցեսիաներ են ստանում Մաուդյան Արաբիայի, Քուվեյթի, Օմանի, Բահրեյնի և Դատարի ծանծաղուտներում: Մակայն Իրանի և տարածաշրջանի այլ երկրների մայրցամաքային ծանծաղուտների սահմանագատումը պաշտոնապես չէր կատարվել, ինչը այդ երկրների մեջ լուրջ հակասությունների առիթ էր դառնում:

Երբ 1963թ. ապրիլին ԻԱՆԸ-ը (Իրանի ազգային նավթային ընկերություն) Պարսից ծոցի հյուսիսային շրջանի երկու տեղամասերի վաճառք հայտարարեց, Իրաքը, Մաուդյան Արաբիան և Քուվեյթը հանդես եկան բողոքարկումներով՝ պատճառաբանելով, թե Իրանը խախտում է իրենց երկրների ինքնիշխանությունը⁴:

Հարցի լուծման համար 1963թ. հոկտեմբերին Ժնևում հանդիպեցին Իրանի, Իրաքի, Մաուդյան Արաբիայի և Քուվեյթի ներկայացուցիչները, սակայն նրանք որևէ դրական արդյունքի չհասան: Բայց նույն թվականի նոյեմբեր ամսին Իրանի և Իրաքի ներկայացուցիչները պայմանավորվեցին վիճարկելի տարածքներում համատեղ շահագործել նավթը⁵:

1965թ. վերջին Իրանը մայրցամաքային ծանծաղուտի սահմանագծման և նավթի շահագործման վերաբերյալ համաձայնության եկավ նաև Մաուդյան Արաբիայի հետ, ինչը նախատեսում էր Իրանի գերիշխանությունը Ֆարս և Մաուդյան Արաբիայի՝ էլ-Արաբիա կղզիների նկատմամբ: Համաձայնագիրը նախապես ստորագրվել էր Մաուդյան Արաբիայի թագավոր Ֆեյսալի 1965թ. դեկտեմբերին Իրան կատարած այցի ժամանակ, սակայն այն չհաստատվեց Մեջլիսի կողմից և գործի չդրվեց⁶:

Ենթադրում ենք, որ Իրանի կողմից այդ համաձայնագիրը չհաստատելու փաստը մասամբ բացատրվում է Իրաքի և Քուվեյթի բացասական վերաբերմունքով Իրանի և Մաուդյան Արաբիայի միջև անջատողական համաձայնագրի ստորագրման նկատմամբ: Առկա է նաև կարծիք, թե պատճառը նավթային ընկերությունների կողմից Մաուդյան Արաբիային բաժին ընկած հատվածում մեծ նավթային պաշարների գոյության մասին տարածված լուրերն էին⁷:

Իրանի և Մաուդյան Արաբիայի միջև տվյալ խնդրի լուծման բար-

դասման հարցում հավանաբար իր գործում մասնակցությունը ունեցավ նաև Մեծ Բրիտանիայի քաղաքականությունը, որը 1967թ. վերջին իր ռազմական ուժերը դուրս էր բերել Ադենից և մտավախություն ունենալով վերջնականապես կորցնել իր տնտեսական և քաղաքական դիրքերը Պարսից ծոցում ձգտում էր իրանական կառավարության հետ սերտ հարաբերություններ ունենալ:

Դեռևս 1965թ. սեպտեմբերին Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար Ջ. Թոմսոնը Իրանի կառավարության հետ բանակցություններից հետո հայտարարեց, որ Պարսից ծոցի գոտում և ամբողջ Միջին Արևելքում Անգլիան և Իրանը ունեն մնամատիպ շահեր: Այս համոզիպումներն ավարտվեցին 1966թ. օգոստոսին Իրանի և Մեծ Բրիտանիայի միջև ժամանակակից զենքի և ռազմական զինամթերքի զմման համաձայնագրի ստորագրումով⁸:

ԱՄՆ-ի և Անգլիայի կառավարությունները փորձում էին սրել Իրանի և հարևան արաբական պետությունների միջև հարաբերությունները: Արևմտյան քաղաքագետները դիմում էին զանազան սադրանքների Եգիպտոսի և տարածաշրջանի երկրների հարաբերությունների վատթարացման և միմյանց միջև թշնամություն սերմանելու նպատակով: Այսպես, 1967թ. փետրվարին պահպանողականների առաջնորդ Ալեք Դուգլաս-Հյուն հայտարարեց. «Եթե Եգիպտոսը զրափի Ադենը, Պարսից ծոցի մուտքը վտանգի տակ կհայտնվի, և Իրանն ու Սաուդյան Արաբիան ստիպված կլինեն արագորեն գործել, իսկ ԽՍՀՄ-ը հավանաբար կօգտագործի ստեղծված իրավիճակը տարածաշրջանում կոմունիզմի տարածման համար»⁹:

1967թ. արաբա-իսրայելյան պատերազմից հետո Մեծ Բրիտանիան ավելի ակտիվացրեց իր դիվանագիտական գործունեությունը Պարսից ծոցում: Անգլիայի արտգործնախարար Գ. Ռոբերտսը երկակի այցելություններ կատարեց Թեհրան և Ծոցի արաբական երկրներ՝ զաղտնի հանդիպելով տեղական ղեկավար մարմինների հետ: Հարկ է նշել, որ բրիտանական կառավարությունը ելնելով ֆինանսական ճգնաժամից՝ ստիպված էր վերացնել իր ռազմական կայանները «Մուեզից արևելք» և ցանկանում էր Իրանն ու Սաուդյան Արաբիան դարձնել իր շահերի պաշտպանը Պարսից ծոցում¹⁰:

1968թ. հունվարի 19-ին ԱՄՆ-ի փոխպետքարտուղար Յ. Ռոսթոուն հայտարարեց Արևմտքի կողմից Մերձավոր և Միջին Արևելքում մոր ռազմական դաշինք ստեղծելու մտադրության մասին, ինչին միանգամայն բացասաբար արձագանքեցին ինչպես տարածաշրջանի երկրներում՝ մասնավորապես Զուվեյթում և Սաուդյան Արաբիայում, այնպես էլ Մեծ Բրիտանիայում, որակելով այն որպես ԱՄՆ-ի կողմից բրիտանացիների հեռանալուց հետո Պարսից ծոցում առաջացած «վակուումը» իր շահերին համապատասխան լրացնելու փորձ¹¹: ԱՄՆ-ը մտադիր էր Պարսից ծոցի անվտանգության ապահովման հարցը դնել հենց տեղական պետություններից որևէ մեկի վրա: Բարձրաստիճան պաշտոնյան նշել էր, որ տարածաշրջանում կան պետություններ, ինչպես Սաուդյան Արաբիան, Իրանը,

Թուրքիան, Պակիստանը, Զովեյթը, որոնք կարող էին ստանձնել Պարսից ծոցի անվտանգության ապահովողի դերը¹², սակայն, ամենայն հավանականությամբ, այդ կարևոր դերը ԱՄՆ-ը կարող էր վստահել կամ Իրանին, կամ Սաուդյան Արաբիային:

Անգլիական ղեկավար օդակները չէին հաշտվում Պարսից ծոցում իրենց ազդեցության թուլացման մտքի հետ և ջանքեր էին գործադրում այնտեղ ինչ-որ չափով մնալու ուղղությամբ: 1968թ. փետրվարին հայտարարվեց Մեծ Բրիտանիայի հովանու տակ Պարսից ծոցի իշխանությունների դաշնության ստեղծման մասին: Սակայն իշխանությունների միջև եղած տարաձայնությունների և Իրանի կողմից ցուցաբերված հակաազդեցության պատճառով այդ կառույցը դեռևս վերջնականապես չկազմավորված փլուզվեց¹³:

Իրանն ու Սաուդյան Արաբիան չցանկանալով բորբոքել ազգային ազատագրական շարժումը Արաբական Արևելքում և հատկապես խուսափելով Եգիպտոսի հետ հարաբերությունների վատթարացումից՝ որոշում են սեփական ուժերով լրացնել անգլիացիների դիրքերի թուլացումից Պարսից ծոցում առաջացած «վակուումը»: Արդյունքում 1968թ. հոկտեմբերի 24-ին Սաուդյան Արաբիայի և Իրանի միջև կնքվեց Պարսից ծոցում մայրցամաքային ծանծաղուտի և նավթի շահագործման սահմանագծման համաձայնագիրը, որի հիմքն էին կազմում 1965թ. դեկտեմբերի 13-ի համաձայնագրի կետերը¹⁴:

Հաշվի առնելով Բահրեյնի ազգաբնակչության ցանկությունը և ձգտելով շտկել հարաբերությունները Սաուդյան Արաբիայի հետ՝ Իրանի կառավարությունը համաձայնվեց 1970թ. մարտին Անգլիայի հետ միասին դիմել ՄԱԿ՝ Բահրեյնի քաղաքական կարգավիճակի որոշման համար: 1970թ. մայիսին ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը ընդունեց Բահրեյնի ժողովրդի պահանջը այդ երկրին ինքնիշխան պետության կարգավիճակի շնորհման խնդրանքը¹⁵:

1971թ. Բահրեյնը և Ղատաբը դարձան անկախ պետություններ: 1971թ. դեկտեմբերի 2-ին նախկին Պայմանագրային Օմանի վեց արաբական իշխանությունները հայտարարեցին մոր պետության՝ Միացյալ Արաբական Էմիրությունների (ՄԱԷ) ստեղծման մասին: ՄԱԷ-ի ստեղծմանը զուգորդեց Անգլիայի ռազմական ուժերի կողմից Պարսից ծոցը պաշտոնապես լքելու փաստը: 1971թ. նոյեմբերի 30-ին Իրանն Անգլիայի հետ պայմանավորվածության ներքո գորք իջեցրեց Մեծ ու Փոքր Թոմբեր և Աբու Մուսա երեք կղզիներում, որոնց նկատմամբ վաղուց հավակնություններ ուներ: Սակայն, քանի որ այդ կղզիները գտնվում էին Շարժա և Ռաս-ալ Հայմա Էմիրությունների իրավասության ներքո, իրանական զորքի ներխուժման հարցը բողոքարկեցին արաբական պետությունները և ժամանակավոր խոչընդոտեցին երկրին ՄԱԷ-ի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը¹⁶: Միայն 1972թ. հոկտեմբերի 28-ին ՄԱԷ-ի հետ Իրանը դիվանագիտական հարաբերություններ հաստատեց:

Իրանը ամեն կերպ փորձում էր իր տնտեսական և քաղաքական

ազդեցությունը տարածել Պարսից և Օսմանի ծոցերի արաբական փոքր պետությունների վրա: Այդ հարցում մա նշանակալից հաջողության հասավ Օսմանի նկատմամբ, որտեղ 1970թ. հուլիսի 23-ին իշխանության եկավ Ասքուս իբն Սաիդ սուլթանը: 1972թ. օգոստոսին երկու երկրների միջև կնքվեց համաձայնագիր, ըստ որի Իրանը պարտավորվեց Օսմանին ռազմական, քաղաքական և տնտեսական օգնություն ցուցաբերել¹⁷:

Իրանի կառավարությունը ելնելով իր նավթային, տնտեսական և աշխարհաքաղաքական շահերից Պարսից ծոցի երկրների հետ վարում էր համագործակցության ընդլայնման քաղաքականություն: Սակայն Պարսից ծոցի արաբական պետությունները և հատկապես Սաուդյան Արաբիան, հանդիմանում էին Իրանի կողմից տեղական ռազմական դաշինք ստեղծելու առաջարկներին՝ մտավախություն ունենալով, որ Իրանը այդ դաշինքում կարող էր ղեկավար դեր ստանձնել: Ինչևէ, 1972թ. դեկտեմբերին Իրանն ու Սաուդյան Արաբիան պայմանավորվեցին ստեղծել Պարսից ծոցում կայունության պահպանման և վտանգավոր տարրերի դեմ պայքարելու համատեղ կոմիտե¹⁸:

Իրանի և Իրաքի հարաբերություններն ավելի բարդ բնույթ էին կրում: Իրաքյան Հանրապետության ստեղծումից հետո նրանց միջև ավելի հաճախակի դարձան տարածքային և սահմանային հարցերի շուրջ տարածայնությունները: Այսպես, 1961 և 1965թթ. Շատ-էլ-Արաբ գետի նավարկության պայմանների շուրջ վեճեր ծագեցին¹⁹: Իսկ Նավթեշահ և Նավթխանե նավթային շրջաններում, որտեղ երկու երկրների միջև սահմանը գծված չէր, տեղի ունեցող ընդհարումները հաճախակի երևույթ էին դարձել: Երկու երկրների հարաբերություններում նշանակալից դեր էր խաղում հատկապես քրդական հարցը: Իրանի ղեկավարությունը ցանկանալով թուլացնել Իրաքի կառավարությունը ժամանակ առ ժամանակ նյութապես հովանավորում էր քուրդ ապստամբներին²⁰: Իր հերթին Իրաքի կառավարությունը խոչընդոտում էր Իրանի կողմից որոշ արաբական պետությունների հետ հարաբերությունների բարելավմանը: Հենց Իրաքի քաղաքականությունից ելնելով՝ Իրանը երկար ժամանակ չէր կարողանում մայրցամաքային ծանծաղուտի սահմանագծման վերաբերյալ Քուվեյթի հետ համաձայնագիր կնքել:

Այս հանգամանքները չխանգարեցին Իրանի և Իրաքի միջև հարաբերությունների բարելավմանն ուղղված աշխատանքներին, ինչը նրանց ստիպում էին երկու երկրների նավթային և տնտեսական շահերը, հատկապես՝ ՕՊԵԿ-ի շրջանակներում քաղաքականության կոորդինացումը: Նշանակալից էին 1966թ. դեկտեմբերի 19-ին տեղի ունեցած երկու երկրների արտգործնախարարների հանդիպումը և մինչև 1967թ. հարաբերությունների լարվածության վերացմանը ուղղված միջոցառումները²¹:

1968թ. Իրաքի արտգործնախարարի՝ Իրան կատարած պաշտոնական այցի ժամանակ կողմերը որոշեցին համատեղ հանձնաժողովներ ստեղծել՝ երկրների միջև վիճելի և այլ հարցերի լուծման հավանական եղանակներ առաջադրելու նպատակով:

1968թ. հուլիսին իրաքյան հեղաշրջումից հետո իրանա-իրաքյան բանակցությունները չդադարեցին: Սակայն երկու երկրների 1968-1969թթ. քաղաքական գործիչների համդիպումները էական արդյունք չտվեցին: 1969թ ապրիլի 19-ին Իրանի կառավարությունը օգտվելով Իրաքի ներքաղաքական վիճակից, հայտարարեց երկրների միջև 1937թ. կնքված պայմանագիրը անվավեր ճանաչվելու մասին, որը նախատեսում էր Շատտ-է-Արաբի նավարկության պայմանները և երկրների հարավային սահմանագիծը, և փաստորեն իր գերիշխանության տակ վերցնում գետի ջրավազանի մի մասը: 1971թ. դեկտեմբերին Իրանի զինված ուժերի կողմից Հորմուզի ջրանցքի երեք կղզիներ մուտք գործելուց հետո Իրաքը խզեց իր դիվանագիտական հարաբերություններն Իրանի հետ, որը 1972թ. քերեց սահմանային ռազմական ընդհարման²³: 1973թ. աշմանը հեղթական արաբա-իսրայելյան պատերազմի ընթացքում Իրաքի առաջարկով դիվանագիտական հարաբերությունները վերականգնվեցին, սակայն միջպետական հարաբերությունները վերջնական բարելավվեցին միայն 1975թ:

Այսպիսով, կարելի է ասել, որ 1960-ական թթ. Իրանին հաջողվեց ամրապնդել իր դիրքերը Պարսից ծոցում և բարելավել, որոշ բացառություններով, հարաբերությունները հարևան արաբական պետությունների հետ: Միաժամանակ այն քաղաքական իրավիճակը, որը ստեղծվել էր Անգլիայի հեռացումից հետո, Իրանի ղեկավար օղակների մոտ առաջացրել էր ռազմական ուժերի ընդլայնման և տնտեսական մվաճողության միջոցով Ծոցում իրենց քաղաքական ազդեցության ընդլայնման մտադրություն: Կապիտալիստական խոշոր պետությունները սաստարեցին Իրանի կողմից Պարսից ծոցում իշխող և հզոր պետության կարգավիճակ ձեռք բերելու ձգտումը՝ տեսնելով Իրանին որպես իրենց նավթային և ռազմավարական շահերի պաշտպանը տարածաշրջանում:

Չնայած ԱՄՆ-ը և Անգլիան Պարսից ծոցում որպես իրենց շահերի մյուս պաշտպան տեսնում էին Սաուդյան Արաբիան, այնուամենայնիվ նրանք երբեմն դիտավորյալ նպաստում էին Թեհրանի և Էր-Ռիադի միջև մրցակցության ուժեղացմանը, ինչը կատարվում էր ՕՊԵԿ-ի երկու առաջատար անդամների մերձեցմանը խոչընդոտելու նպատակով, քանի որ վերջինի հեղինակության բարձացումը խիստ անհամազուտություն էր առաջացնում խոշոր նավթային մենաշնորհների շրջանում:

ALBERT KHACHATURYAN

OIL AND RELATIONS OF IRAN WITH PERSIAN GULF STATES IN 1960-1970

It has been suggested that Iran's relations with the Gulf oil-producing Arab states have had cooperative and competitive dimensions. While enjoying similar interests in maintaining the high price of oil, the improvement of concessions, and maintenance of the flow of oil, interests have diverged and the competitive dimension has intruded on the rate of production of individual countries. Throughout the decade the Iran government has sought to regain its position as the Gulf's leading oil producer and has adopted a hard

line attitude toward both the oil companies and the other producing states in pursuit of this goal.

ՇԱՆՈՅԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Organization of Petroleum Exporting Countries.
2. Նախկինում Իրանի կողմից Պարսից Սոցում գիլքերը ամրապնդելու ձգտումներին համատեղեց ընդդիմանում էր Մեծ Բրիտանիան: 1927թ. նոյեմբերի 22-ին Մեծ Բրիտանիային ուղղված հայտագրով Իրանի կառավարությունը պաշտոնապես հայտարարեց Բահրեյնի կղզիների վերաբերյալ իր հավակնությունների մասին: Հետագայում Իրանը քաղաքացիական պատերազմի ուղարկեց Անգլիային, որոնցով պնդում էր, որ այդ կղզիները բռնի կերպով տարանջատվել էին Իրանից: 1957թ. Իրանի Մեջլիսը ընդունեց Բահրեյնը պաշտոնապես Իրանի կազմի մեջ ընդգրկվելու մասին օրենքը: Shu' 62 سیاست مهردی ع. 1375 خارجی ایران در دوران پهلوی 1300-1357.
3. Al-Baharna H.M., The Legal Status of the Arabian Gulf States. A Study of their Treaty Relations and their International Problems, L., 1968, p. 279-280. Համաձայն մայրցամաքային ժամնադրուտի վերաբերյալ Ժնևյան կոնվենցիայի 1958թ. ապրիլի 26-ի որոշման, որն ուժի մեջ մտավ 1964թ. հունիսի 10-ին, մայրցամաքային ժամնադրուտին են վերաբերվում ծովի ընդերքի և մակերեսի այն ստորջրյա շրջանները, որոնք հարում են ափին և գտնվելով 200մ և ավելի խորությամբ, թույլ են տալիս կատարել այդ շրջանների բնական ռեսուրսների շահագործումը, տես՝ Сборник действующих договоров, соглашений и конвенций, заключенных СССР с иностранными государствами, Вып. XXIII. М., 1970, с. 101.
4. The Middle East Journal, vol 6, No. 2, 1964, p. 326.
5. Chubin Sh., Zabih S., The Foreign Relations of Iran. A Developing State in a Zone of Great Conflict. Berkley-L.A., L., 1974, p. 176.
6. Chubin Sh., Zabih S., նշվ. աշխ., էջ 291:
7. Chubin Sh., Zabih S., նշվ. աշխ., էջ 291-292:
8. Kayhan International, 01.09.1966.
9. Orient, 1967, No. 2, p. 66.
10. Calvocoressi P., Britain and the Middle East. Political Dynamics in the Middle East, N. Y., 1972, p. 443-444.
11. Chubin Sh., Zabih S., նշվ. աշխ., էջ 237:
12. Драмбянц Г., Персидский залив без романтики, М., 1968, с. 51.
13. Драмбянц Г., Персидский залив между прошлым и будущим. Международная жизнь, 1970, No. 9, с. 67.
14. Համաձայնագրի տեքստը տես՝ International Legal Materials: Current Documents, VIII (May, 1969), pp. 493-496; Echo of Iran (political ed.), Oct. 30, 1968.
15. Swearingen Will D., Sources of Conflict Over Oil in the Persian/Arabian Gulf, The Middle East Journal, Vol. 35, No. 3, 1981, p. 328.
16. Медведко Л.И., К востоку и западу от Суэца, М., 1980, с. 196.
17. Griffith W.E., Iran's Foreign Policy in the Pahlavi Era, Iran Under The Pahlavis, edited by G. Lenczowski, Stanford, 1978, p. 380.
18. Hammond P.Y., An Introductory Perspectives on the Middle East, Political Dynamics in the Middle East., N. Y., 1972, p. 25-26.
19. Binder L., Iran's Potential as a Regional Power, Political Dynamics in the Middle East., էջ 385:
20. Griffith W.E., նշվ. աշխ., էջ 381:
21. Shu' Chubin Sh., Zabih S., նշվ. աշխ., էջ 176-180:
22. سیاست خارجی ایران در دوران پهلوی, նշվ. աշխ., էջ 356:
23. Kayhan International, 18.12.1971.

ԱՂԻՔԵԶԱՆԻ ԶԱՂԱԶԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎԱՑՈՒՄԸ
ԶԱՆԳԵԶՈՒԻ ԿԱՐՑԻ ԼՈՒԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ 1919 թ.
ԵՐԿՐՈՐԴ ԿԵՄԻՆ

Դաշնակիցների որոշմամբ Զանգեզուրում պահպանվեց Հայոց Ազգային խորհրդի իշխանությունը, և Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետությունը, կարծես թե ստիպված էր համակերպվել այդ իրողության հետ, առավել ևս, որ դեռ չէր լուծվել Ղարաբաղի ենթակայության հարցը: Սակայն 1919թ. ամռանը տեղի ունեցավ իրավիճակի արմատական փոփոխություն. հունիս-հուլիսին Բեյութ Վեդիի և Նախիջևանի ապստամբությունների արդյունքում ՀՀ իշխանության տակից դուրս եկավ հսկայական տարածք Օրդուբադից մինչև Ղամարլու: Օգոստոսի 22-ին Ղարաբաղի Ազգային խորհրդի հետ պայմանագրով Բաքուն իր իշխանությունը ժամանակավորապես տարածեց Շուշիի, Ջևանշիրի և Կարյազիի գավառների նկատմամբ: Նման պայմաններում Զանգեզուրի գավառը երկու կողմից հայտնվեց օղակման մեջ՝ դրանով իսկ վերածնելով նրան տիրանալու Ադրբեջանի ձգտումը¹:

Ուսուրբեկովի երկրորդ կառավարությունը իր օգոստոսյան հռչակագրում, արձանագրելով հաջողությունները երկրի տարածքային ամբողջականության ապահովման գործում, նշում էր, որ Զանգեզուրը Ղարաբաղի անբաժան մասն էր, իսկ վերջինը՝ Ադրբեջանի ոգին: «Այժմ Ղարաբաղի երեք ու կես գավառներ գտնվում են մեր ձեռքում, իսկ Զանգեզուրի գավառի կեսը գտնվում է մի քանի խռովարարների ձեռքում»²: Ադրբեջանը ձգտում էր հարցը կարգավորել՝ իր առջև ունենալով Ղարաբաղի տարբերակը: Այսպես, «Աзербайджан» պաշտոնաթերթը նշում էր, որ Ղարաբաղի հայերի հետ ձեռք բերված համաձայնությունը արժանի էր էր ստեղծված վիճակից առանց արյունահեղության դուրս գալու համար: Հակառակ դեպքում բացահայտ սպառնալիք էր արտահայտվում Զանգեզուրի հայերի ֆիզիկական գոյությանը³:

Այսպիսով, Ադրբեջանը, օգտվելով իր համար բարենպաստ իրավիճակից, հստակ խնդիր էր դրել գրավել Զանգեզուրը և ստեղծել ԱԴՀ տիրապետության տակ գտնվող համատարած գոտի Ադղամից մինչև Ղամարլու: Զանգեզուրը վերջին պատվարն էր, որը մնում էր հաղթահարել Արաքսի հովտի ընդարձակ տարածքներում կոմպակտ բնակվող մուսուլմանական զանգվածին միանալու և նրա միջոցով Թուրքիայի հետ ուղղակի կապ հաստատելու համար:

Բաքուն սկզբում փորձեց դիվանագիտական ճանապարհով ամրագրել իր համար ստեղծված նպաստավոր կացությունը: Հուլիսի 22-ին ադրբեջանական կողմի նախաձեռնությամբ կայացավ հանդիպում Տ. Բեկզադյանի և հաղորդակցության ուղիների նախարար, պաշտպանության խորհրդի անդամ Խուլադաթ Բեկ Մելիք Ասլանովի հետ, որի ժամանակ

վերջինը, արձանագրելով երկկողմ հարաբերությունների լարված բնույթը և բազմաթիվ բարդ խնդիրների առկայությունը, առաջարկեց գումարել հայ-ադրբեջանական խորհրդակցություն և ուղղակի բանակցությունների միջոցով, առանց երրորդ կողմի միջնորդության, լուծել այդ հարցերը: Խորհրդածողովի օրակարգում առաջարկվեց ընդգրկել երկու կարևոր դրույթ՝ 1. կողմերը համաձայնության էին գալիս վիճելի հարցերը արբիտրաժով լուծելու շուրջ, 2. լուծվելու էին բոլոր տարածքային վեճերը, իսկ դրա անհնարինության դեպքում հաստատվելու էր որևէ պարտադիր բաժանարար գիծ, որը կսահմանազատեր կողմերի ազդեցության ոլորտները, ու միաժամանակ կողմերը կերաշխավորեին ազգային փոքրամասնությունների ինքնավար իրավունքները: Սակայն մի քանի օր հետո ԱԳ նախարար Ջաֆարովի հետ հանդիպման ժամանակ պարզվեց, որ Բաքուն որպես բաժանարար գիծ դիտում էր Նախիջևանի, Շարուրի և Նոր Բայազետի գավառների վարչական սահմանները, որոնք հաստատվել էին դեռ գեներալ Թոմսոնի կողմից: Իր հերթին Բեկզադյանն ընդգծեց, որ այդ գիծը հնացած էր, քանի որ դրանից հետո գեներալ Զորին սահման հաստատեց Հազարա գետով և Ջարուղ գյուղով:

Փաստորեն, հանդես գալով խորհրդածողովի գումարման ու մշտական սահմանների հաստատման առաջարկությամբ, Ադրբեջանը ձգտում էր օգտվել ուժերի բարենպաստ հարաբերակցությունից. Բեյութ Վեդիի և Շարուր-Նախիջևանի ապստամբությունների արդյունքում ՀՀ-ն կորցրել էր վերահսկողությունն այդ երկրամասի նկատմամբ, լուծման նախօրեին էր թվում Ղարաբաղը Ադրբեջանին ենթարկելու հարցը: Նման պայմաններում Բաքվին ձեռնտու էր երկկողմ ձևաչափով, առանց դաշնակիցների միջամտության, վերջնականապես լուծել տարածքային հարցը՝ ԱԴՀ-ին միացնելով Ղարաբաղը, Ջանգեզուրը և Շարուր-Նախիջևանը: Նույն իրողություններից ելնելով՝ Երևանը ձգտում էր հասնել միայն բախումների դադարեցմանը ժամանակավոր գծի հաստատման միջոցով:

Օգոստոսի վերջին Ադրբեջանից դուրս բերվեցին անգլիական զորքերը. օգոստոսի 26-ին նրանց վերջին շարասյունը հեռացավ Բաքվից: Դրանով, ինչպես ցույց տվեց ժամանակը, դաշնակիցները զրկվեցին Անդրկովկասում քաղաքական իրադրության վրա ազդելու լուրջ լծակից: Բաքուն հնարավորություն ստացավ վարել ավելի ինքնուրույն քաղաքականություն՝ օգտագործելով ոչ միայն դիվանագիտական մեթոդները, այլև զենքի ուժը: Ադրբեջանն ընտրեց վերջին ճանապարհը. սեպտեմբերի 4-ին ԱԴՀ ՁՈՒ գլխավոր շտաբի պետը Ղարաբաղի գեներալ-նահանգապետին նամակում նշում էր, թե Ղարաբաղի հարցի խաղաղ լուծումը թույլ էր տալիս մտածել, որ Ջանգեզուրի գավառի խաղաղ միացումը տեղի կունենար առանց զինված պայքարի, քանի որ տեղի հայությունը Նախիջևանի ջախջախումից հետո հայտնվել էր երկու կրակի արանքում: Նման իրավիճակում Հայաստանն իրենից վտանգ չէր ներկայացնում, սակայն այդ բարենպաստ դրությունը երկար չէր կարող տևել: Ուստի անհրաժեշտ էր համարվում քրդերից կազմակերպել հեծելազոր և հետևակ՝ «համլոխե» զնդերի

օրինակով⁷:

Տեղյակ լինելով ԱԴՀ նախապատրաստությունների և արդեն իսկ սկսված գորքերի առաջխաղացման մասին՝ ՀՀ ԱԳՆ-ը սեպտեմբերի 28-ին ԱԴՀ դիվանագիտական ներկայացուցչին ուղղված հայտագրում պահանջեց դադարեցնել այդ գործողությունները՝ մատնանշելով, որ Ջանգեզուրը Հայոց Ազգային խորհրդի կառավարմանը հանձնվել էր դաշնակիցների ուրոշմամբ: Պատասխան հայտագրում հոկտեմբերի 4-ին Հախվերդովը հայտնեց, որ Ջանգեզուրի գավառը գտնվում էր ԱՀ տարածքում, ուստի ՀՀ ԱԳՆ հայտագիրը միջամտություն էր ԱԴՀ ներքին գործերին, և ԱԴՀ կառավարությունը պարտավոր չէր զեկուցել ՀՀ կառավարությանը Ադրբեջանի առանձին մարզերի ներքին կառավարմանը վերաբերող միջոցառումների մասին⁸: Դրանով փաստորեն Ադրբեջանը անուղղակի կերպով խոստովանում էր Ջանգեզուրի գրավման ուղղությամբ իր կողմից իրականացվող միջոցառումների մասին և բացահայտորեն հրաժարվում էր կատարել դաշնակիցների որոշումները: Բաքուն, ստանալով ձեռքերի ազատություն և վստահություն զգալով իր ուժերի վրա, ձգտում էր իր օգտին փոխել գոյություն ունեցող ստատուս-քվոն:

Արդեն սեպտեմբերին սկսվեցին ԱԴՀ առաջին զինված հարձակումները Ջանգեզուրի վրա, որոնք ավարտվեցին ռազմական պարտությամբ: ՀՀ կառավարությունը բողոք հղեց դաշնակիցներին՝ փորձելով արագացնել Շարուր-Նախիջևանում ամերիկյան զենքալ-նահանգապետի նշանակումը և դաշնակիցների ներկայացուցիչների ուղարկումը Ջանգեզուր, ինչը ավելի վերահսկելի կդարձներ ԱԴՀ քաղաքականությունը⁹: Եթե Երևանը ձգտում էր հասնել Հասկելի մշակած համաձայնագրի դրույթների կատարմանը, որոնց թվում էր նաև դրույթը Ջանգեզուրում ստատուս-քվոյի պահպանման մասին, ապա Ադրբեջանը ձգտում էր չեղյալ հայտարարել այն՝ արդարացնելու համար իր կողմից նախապատրաստվող ռազմական գործողությունները: Այդ նպատակով Բաքուն պնդում էր, թե ՀՀ-ն կանոնավոր զորք էր կենտրոնացրել Ջանգեզուրում՝ դրանով իսկ խախտելով համաձայնագիրը¹⁰:

ՀՀ-ն նաև փորձեց հասնել երկկողմ խորհրդաժողովի գումարմանը՝ հուսալով նրա միջոցով ժամանակ շահել և խուսափել աննպաստ պայմաններում ռազմական բախումից¹¹: Հոկտեմբերին Տ.Բեկզադյանն առաջարկեց գումարել խորհրդաժողով և լուծել վիճելի հարցերը, կամ դրանք հանձնել արբիտրաժին: Սակայն Բաքուն հրաժարվեց նրա օրակարգում ընդգրկել Դարաբադի, Ջանգեզուրի և Շարուր-Նախիջևանի հարցերը՝ իր համար անընդունելի համարելով վեճը դրանց շուրջ: Ադրբեջանը պատրաստ էր միայն քննարկել Դարաբադյանի, Ղազախի և Գոկչայի (Սևան) սահմանները ուղղելու հարցը: Չընդունվեց նաև Բեկզադյանի առաջարկը վիճելի շրջաններում ստատուս քվոյի պահպանման վերաբերյալ: Բաքուն բանակցությունների մեկ այլ պարտադիր պայման էր համարում ոչ թե ժամանակավոր բաժանարար գծի, այլ մշտական սահմանների որոշումը¹²:

Սակայն վերը նշված պատճառներով դաշնակիցների միջամտությամբ

յունը և համաձայնության գալու ՀՀ փորձերը չէին կարող էական արդյունքների հանգեցնել: Նոյեմբերի 1-ին սկսվեցին լայնամասշտաբ ռազմական գործողություններ, որոնց Ադրբեջանի կողմից մասնակցում էր մոտ 7000-ոց զորք ու անկանոն ուժեր գեներալ Ալի Ադա Շիհինսկու գլխավորությամբ¹³: Իր հերթին Երևանը ամմիջապես բողոք հղեց դաշնակիցներին և Ռուսաստանի Հարավի Ջինված ուժերի հրամանատարությանը՝ ԱԴՀ քայլերը որակելով, որպես զենքի ուժով տարածքային հարցերի լուծման անթույլատրելիության մասին խաղաղ խորհրդածողովի հունվարի 24-ի հրահանգների խախտում ու խնդրելով միջնորդել հարձակումը դադարեցնելու համար: Ձգտելով հասնել ռազմական գործողությունների դադարեցմանը՝ Երևանը պատրաստակամություն էր հայտնում դիմել արբիտրաժի և մասնակցել Բաքվում հայ-ադրբեջանական խորհրդածողովի աշխատանքներին: ԱԴՀ կառավարությանն ուղղված հայտագրում ՀՀ-ն ուղղակի ընդգծում էր, որ Բաքվի գործողությունները հակասում էին հայ-ադրբեջանական խորհրդածողովի նպատակներին¹⁴: Շեշտելով խորհրդածողովի տապալման վտանգը՝ հայկական կողմը հույս ուներ այդ կերպ ներազդել Բաքվի վրա: Դաշնակիցները ևս ճշշում էին գործադրում Բաքվի վրա՝ դադարեցնելու համար հարձակումը և կողմերին բանակցությունների սեղանի շուրջ նստեցնելու համար:

Սակայն Բաքուն սկզբնական շրջանում լուծում էր, քանի որ հասել էր որոշակի մարտավարական հաջողությունների Ձանգեզուրում՝ տիրանալով մի շարք կարևոր կետերի ու մոտենալով Գորիսին: Դաշնակիցների առջև Ադրբեջանն արդարանում էր նրանով, որ Ձանգեզուրում տեղի էր ունենում մուսուլմանների ջարդ¹⁵:

Ի վերջո, նոյեմբերի 13-ին դաշնակիցները միաժամանակ դիմեցին ՀՀ և ԱԴՀ կառավարություններին՝ կտրուկ կերպով պահանջելով դադարեցնել ռազմական գործողությունները և նախագգուշացնելով, որ հարցը զենքի ուժով լուծելու նրանց փորձերը կվնասեին իրենց շահերին՝ խաղաղ խորհրդածողովի աչքերում կասկածի տակ դնելով իրենց պահանջների արդարացիությունը¹⁶: Իր հերթին Բաքուն պատասխանեց, որ Ձանգեզուրը Ադրբեջանի անբաժան մասն էր, ինչն ընդունում էին նաև դաշնակիցները, ի դեմս անգլիական հրամանատարության և գնդապետ Հասկելի: Ըստ ադրբեջանական կողմի, Հասկելը Նախիջևանի հարցով համաձայնագրի կետերից մեկում պահանջել էր ՀՀ կառավարությունից օգնել Ադրբեջանին օրինական ճանապարհով լիկվիդացնել ապստամբական շարժումը Ձանգեզուրի գավառում և դրանով ստիպել Ձանգեզուրի հայ բնակչությանը ենթարկվել Ադրբեջանին: Մինչդեռ ՀՀ-ն ոչ միայն դա չէր արել, այլև Ձանգեզուր էր ուղարկել կանոնավոր զորք՝ ապստամբներին ուժեղացնելու համար: Ուստի ԱԴՀ կառավարությանը ստիպված էր եղել Ղարաբաղի գեներալ-նահանգապետին ռազմական օգնություն տալ՝ կարգուկանոնը վերականգնելու և ամարխիստական ու բոլշևիկյան տրամադրություններ ունեցող հայ ապստամբներին ճնշելու համար: ԱԴՀ կառավարությունն իր նպատակ էր հռչակում դադարեցնել Ձանգեզուրում մուսուլմանների հալածանքը ու այն-

տեղ վերադարձնել 60 հազար մուսուլման գաղթականներին: Միաժամանակ հայտնվում էր, որ Խոսրով բեկ Սուլթանովին հայձնարարվել էր չձեռնարկել ռազմական գործողություններ¹⁷:

Այսպիսով, ԱՂՀ-ն մեկնաբանում էր պայմանագիրն այն տեսակետից, որ դաշնակիցները ճանաչում էին Չանգեզուրի պատկանելությունը Ադրբեջանին, Չանգեզուրի Ազգային խորհրդին մեղադրում էր բռնկիզմի մեջ՝ դրանով ձգտելով շահել դաշնակիցների համակրանքը: ԱՂՀ համաձայնությունը՝ չձեռնարկել ռազմական գործողություններ, պայմանավորված էր նրանով, որ սկզբնական հաջողություններից հետո ադրբեջանական զորքերը ծանր պարտություն կրեցին ու հետ մղվեցին: Փաստորեն տապալվեց Չանգեզուրը գեմքի ուժով գրավման ծրագիրը՝ Բաքվին հարկադրելով համաձայնություն տալ քանակցություններին:

Նոյեմբերի 19-ին Թիֆլիսում գեղապետ Ռեայի մասնակցությամբ խորհրդակցություն սկսվեց վարչապետներ Ուսուբբեկովի և Խատիսյանի միջև¹⁸: Ուսուբբեկովն առաջարկեց Չանգեզուրի խնդրի հետ մեկտեղ քննարկել նաև Չանգիբասարի և այլ շրջանների հարցը՝ գտնելով, որ պետք էր քննարկել ընդհանուր դրույթներ՝ առանց անդրադառնալու կոնկրետ դեպքերի: Նշելով, որ Կարսի մարզի երեք գավառ չէին ճանաչում ՀՀ-ն, իսկ Չանգեզուրի գավառը՝ ԱՂՀ-ն, ԱՂՀ վարչապետը գտնում էր, որ կողմերը պետք է իրար օգնեին նման դեպքերում՝ դրդելով բնակչությանը ընդունել մյուս կողմի իշխանությունը: Ի պատասխան, Խատիսյանը մերժեց միևնույն հարթության վրա դնել Չանգեզուրը և Չանգիբասարը՝ նշելով, որ երկրի ներսում հուզումները կարելի էր դադարեցնել խաղաղ ռազմական միջամտությամբ, ինչպես օրինակ, դա արեց ԱՂՀ-ն Գյանջայի շրջանում: Մինչդեռ Չանգեզուրը խոշոր գավառ էր, որը երբեք չէր գտնվել ԱՂՀ կազմում:

Ուսուբբեկովը կրկնեց այն հայտնի դրույթը, որ ԱՂՀ կառավարությունը Չանգեզուրը համարում էր ԱՂՀ մաս ու մույնիսկ ընդգծեց, որ Ադրբեջանը կարող էր մույն կերպ պահանջել Կարսի մարզի մուսուլմանական հատվածներն ու Երևանի գավառը: Սակայն Խատիսյանը մերժեց նման ձևակերպումը՝ շեշտելով, որ չէր կարելի կառավարության սովորական հայտարարության հիման վրա համարել, որ այս կամ այն տարածքը պատկանում էր իրեն: ՀՀ վարչապետը հայկական պահանջները հիմնավորեց դաշնակիցների ընդունած որոշումներով, որոնցով Չանգեզուրը պետք է գտնվեր ՀՀ հսկողության ներքո: Չեզոքացնելու համար դաշնակիցների գործոնը՝ Ուսուբբեկովը հայտարարեց, որ Լարաբադին ու Չանգեզուրին վերաբերող նրանց որոշումը կայանում էր նրանում, որ Սուլթանովը նշանակվել էր այդ շրջանի գեներալ-մահանգապետ, ինչը ապացուցում էր դաշնակիցների կողմից այդ տարածքի նկատմամբ ԱՂՀ իշխանության ճանաչումը¹⁹:

Սակայն գեղապետ Ռեան պաշտպանեց ՀՀ դիրքորոշումը Չանգեզուրի հարցում, և Չանգեզուրի կարգավիճակի հարցում ստատուս քվոն փոխելու Բաքվի դիվանագիտական փորձերը տապալվեցին. նոյեմբերի

20-ի նիստում Ուսուրբեկովը հայտարարեց, որ դեմ չէր, որ Ջանգեզուրի նկատմամբ վերահսկողությունը տրվեր ՀՀ-ին: Բայց միաժամանակ նա պահանջեց ՀՀ ուժերի դուրսբերում գավառից, բնակչության զինաթափում և ուղիների բացում, ինչը կստեղծեր բարենպաստ միջավայր Ջանգեզուրի հարցը հետագայում լուծելու համար: Խառնաշառձ, համաձայնելով, որ կողմերի գործերը դուրս բերվեին այն դիրքեր, որոնք նրանք զբաղեցնում էին երկու շաբաթ առաջ, համաձայն չէր բնակչության զինաթափմանը այն պատճառաբանությամբ, որ Ջանգեզուրի հայությունը գտնվում էր բշտանի շրջապատում: Ընդգծելով Ջանգեզուրի բնակչության զրգոված տրամադրությունները՝ Խառնաշառձը վաղաժամ էր համարում մաս զաղթականների վերադարձը²⁰:

Խորհրդակցության նոյեմբերի 21-ի նիստում կողմերը գնդապետ Ռեայի արքիտրաժին ներկայացրեցին իրենց առաջարկությունները: Աղդրեջանն առաջարկում էր՝ 1. ՀՀ-ն և ԱԴՀ-ն չպետք է ռազմական ուժ կիրառեին՝ ենթարկելու համար այն տարածքները, որոնց բնակչությունը տվյալ պահին չէր ճանաչում այդ կառավարությունների իշխանությունը; 2. կողմերը պարզավորվում էին բոլոր վիճելի հարցերը լուծել խաղաղ համաձայնության միջոցով; 3. ԱԴՀ կառավարությունը հետ էր կանչում Ջանգեզուրի շրջան Դարաբադի գեներալ-նահանգապետի տրամադրության տակ ուղարկված ուժերը; ՀՀ կառավարությունը հետ էր կանչում Ջանգեզուրի գավառից իր զորամասերը, սպաներին, հրահանգիչներին և նպաստում տեղի հայ բնակչությունից հրետանու, գնդացիների և հատուկ ռազմական նշանակություն ունեցող այլ զենքի առգրավմանը, ինչպես նաև միջոցներ էր ձեռնարկում քանդելու համար բոլոր ամրություններն այդ շրջանում; 4. կողմերը միջոցներ էին ձեռք առնում Ջանգեզուրից տանող ճանապարհների բացման ուղղությամբ և նպաստում բնակչության ազատ տեղաշարժին; 5. Ջանգեզուրի գաղթականներին հնարավորություն էր տրվում վերադառնալ; 6. կողմերը վիճելի բոլոր հարցերը հանձնում էին Բաքվում կայանալիք երկկողմ խորհրդաժողովին: Փաստորեն, Աղդրեջանը ձգտում էր դիվանագիտական միջոցներով հասնել նրան, ինչին չկարողացավ հասնել զենքի ուժով՝ Ջանգեզուրի զինաթափմանը և այնտեղ ՀՀ ներկայության դադարեցմանը՝ փոխարենն ընդամենը համաձայնելով գավառի սահմաններից հետ կանչել իր զորքերը, որոնք առանց այդ էլ պարտված ու հետ էին մղվել: Գավառի զինաթափման հետ մեկտեղ գաղթականների վերադարձն անխուսափելիորեն կփոխեր ուժերի հարաբերակցությունը երկրամասում: Պահանջելով չփորձել զենքի ուժով ենթարկել այն տարածքները, որոնց բնակչությունը չէր ճանաչում տվյալ կառավարության իշխանությունը՝ Բաքուն նկատի ուներ Շարուր-Նախիջևանը և Երևանի գավառի մուսուլմանաբնակ տարածքները՝ դրանով ձգտելով բացառել ՀՀ կողմից այդ շրջանների նկատմամբ իր իշխանության վերականգնման փորձերը:

Իր հերթին ՀՀ-ն առաջարկում էր՝ 1. Հայաստանը հետ էր կանչում ռազմական գործողությունների ժամանակ Ջանգեզուր ուղարկված զորքը և հրետանին; 2. կողմերը նպաստում էին Ջանգեզուրից տանող ճանապարհ-

ների բացմանը՝ դրան տնտեսական նպատակներով օգտագործման համար՝ Ձանգեզուրի Ազգային խորհրդի համաձայնությամբ: 3. ԱԴՀ-ն Ձանգեզուրի սահմաններից հետ էր կանչում զորքերը ու այլևս չէր փորձելու զենքի ուժով գրավելու գավառը: 4. Դարաբաղում ԱԴՀ-ն պարտավորվում էր չպահել և չտեղաշարժել զորքեր, համաձայն օգոստոսի 22-ի համաձայնագրի կետերի²¹:

Նոյեմբերի 23-ին Թիֆլիսում երկու երկրների վարչապետների միջև ստորագրվեց համաձայնագիր, որով կողմերը պարտավորվում էին՝ դադարեցնել բախումները ու այլևս չդիմել զենքի ուժի, իրական միջոցներ ձեռնարկել Ձանգեզուր տանող ճանապարհների բացման, նրանցով խաղաղ տեղաշարժման համար, վիճելի բոլոր հարցերը, այդ թվում նաև սահմանային հարցերը լուծել խաղաղ համաձայնության միջոցով, մինչև հաջորդ կետով նախատեսված խորհրդատուական կողմից որոշումների ընդունումը: Խաղաղ համաձայնության անհնարինության դեպքում կողմերը պարտավորվում էին ընտրել երրորդ կողմ, որը հանդես կգար, որպես միջնորդ դատավոր և որի որոշումները պարտադիր կլինեին նրանց համար: ՀՀ և ԱԴՀ կառավարությունները անհապաղ պատվիրակություններ էին նշանակելու Բաքվում նոյեմբերի 26-ին կայանալիք երկկողմ խորհրդատուական մասնակցելու համար, որը պետք է քննարկեր վիճելի բոլոր հարցերը²²:

Համաձայնագիրն իրենից ներկայացնում էր անցումային մի փաստաթուղթ, որը, ամրագրելով վիճելի բոլոր հարցերը բացառապես խաղաղ ճանապարհով լուծման սկզբունքը, փաստորեն դրանով իսկ պահպանում էր ստատուս-քվոն՝ պարտված Ադրբեյջանին թույլ չտալով կրկին անգամ փորձել գրավել Ձանգեզուրը, բայց նաև թույլ չտալով Հայաստանին զինված ճանապարհով վերականգնել իր իշխանությունը Շարուր-Նախիջևանում:

Ձանգեզուրի գրավման փորձի ծախսողունը ծանր անդրադարձավ Բաքվի հեղինակության վրա: Երևանը մի կողմից ավելի ամրապնդեց իր իշխանությունը Ձանգեզուրում և ձեռքերի ազատություն ձեռք բերելով՝ ձեռնամուխ եղավ գավառի ըմբոստ տարրերի վերջնական վտարմանը: Ձանգեզուրի լեռնային մասի երկու մուսուլմանական անկլավներում՝ Օխչիի և Գեղվա ձորերում ակտիվ գործունեություն էին ծավալել թուրք և ադրբեյջանական սպաները Էդիֆ բեյի գլխավորությամբ՝ կատարելով մոբիլիզացիա և պաշտոնապես հայտարարելով, որ այդ շրջանները ԱԴՀ անբաժան մասերն են: Այնուհետև նրանք փակեցին Դափանից Գողթան տանող ճանապարհները, ինչպես և սպառնալիք ստեղծեցին տեղի հայության համար: ԱԴՀ կառավարող զորքերի հարձակումը հաջողությամբ հետ մղելուց հետո հայկական ուժերը նոյեմբերի 20-ին հարձակում գործեցին ու մինչև դեկտեմբերի 8-ը գրավեցին Օխչիի և Գեղվա ձորերի շուրջ 40 մուսուլմանական գյուղերը: Դրանով Ձանգեզուրի լեռնային հատվածում վերջնականապես ամրապնդվեց ՀՀ իշխանությունը²³: Հայկական ուժերը նաև հաջողությամբ հետ մղեցին Նախիջևանի կողմից Հալիլ բեյի գրոհները Դարալազյազի վրա, որոնց նպատակն էր՝ գրավել Դարալազյազն ու Մելիքի լեռնանցքը և

կտրել Ձանգեգուրը ՀՀ-ից, ու անցնելով հակազդրոհի՝ ավարտեցին գավառի ռազմավարական բոլոր կարևոր կետերի գրավումը²⁴:

Աղբրեջանն ամմիջապես բողոք հղեց ՀՀ-ին, սակայն նա արդեն ի վիճակի չէր ամմիջապես վերսկսել ռազմական գործողություններ ու ստիպված էր բավարարվել բողոքի հայտագրերով: Դաշնակիցներին ուղղված բողոքներում Բաքուն նշում էր, որ հայերը օգտվում էին նրանից, որ ԱԴՀ-ն նոյեմբերի 23-ի համաձայնագրով գործ չուներ Ձանգեգուրում և կոտորում տեղի մուսուլմաններին: Պահանջվում էր ամերիկյան սպաներ ուղարկել այնտեղ՝ հայկական ավազակախմբերը զինաթափելու համար²⁵:

Դաշնակիցներն իրենց հերթին փորձեցին ներազդել իրադրության վրա և ՀՀ-ից պահանջեցին հետ կանչել Ձանգեգուրից իր ուժերը՝ թույլ չտալու համար վերահաս սրումը: Գնդապետ Հասկելը հայկական կողմին առաջարկեց, որ Ձանգեգուրը մտնել ՀՀ, իսկ Նախիջևանը՝ ԱԴՀ կազմի մեջ: Սակայն Երևանը կատեգորիկ նշեց, որ ամենաընդունելի որոշումն այդ պահին և Հայաստանի կողմից հնարավոր միակ զիջումն այն էր, որ Ձանգեգուրը կառավարվեր Հայոց Ազգային խորհրդի, իսկ Շարուր-Նախիջևանը՝ ամերիկյան զեներալ-մահանգապետի կողմից: Բաժանարար գիծ կարող էր լինել միայն Ջաբուղի գիծը, իսկ Դարաբաղի հարցում ԱԴՀ-ն պետք է ամխտիր կատարեր օգոստոսի 22-ի համաձայնագրի կետերը²⁶:

Նման պայմաններում դեկտեմբերի 14-ին Բաքվում գումարվեց հայ-աղբրեջանական խորհրդաժողովը:²⁷ Դեկտեմբերի 15-ի մասնավոր նիստում հոկտեմբերին արդեն իսկ որոշված օրակարգին ԱԴՀ պատվիրակությունն առաջարկեց ավելացնել դատախարակական հարցերը, ինչպես և կրկին պնդեց տարածքային հարցի առաջնահերթ և վերջնական լուծման վրա²⁸: Իր հերթին հայկական կողմը նշում էր, որ կողմերի հակադիր դիրքորոշումները թույլ չէին տա վերջնական լուծում տալ տարածքային հարցին, ուստի հարկավոր էր մախսառաջ լուծել երկկողմ ֆինանսատնտեսական ու գաղթականների հարցերը, ինչը հոգեբանական լավ մթնոլորտ կձևավորեր բնակչության շրջանում՝ նպաստելով վերջնական սահմանազատմանը:

Աղբրեջանական կողմը կրկին բարձրացրեց համադաշնության ստեղծման հարցը, որպես տարածքային հարցի լուծման և անվտանգության վերացման կարևոր մախսապայման: Դա կրկին հանդիպեց ՀՀ պատվիրակության դիմադրությանը, որն ընդգծեց, որ դա Անդրկովկասի բոլոր հանրապետություններին վերաբերող հարց էր, ուստի պետք է քննարկվեր Անդրկովկասի խորհրդաժողովում²⁹: Ի վերջո որոշվեց այդ հարցը հետա-ձգել մյուս նիստին, ըստ որում երկուստեք նշվեց դրական վերաբերմունքը համադաշնության գաղափարին:

Դեկտեմբերի 17-ի մասնավոր նիստում կողմերը, հայկական կողմի նշած վերոհիշյալ պատճառներով ընդունելով համադաշնության հարցի տվյալ պահին քննարկման աննպատակահարմար լինելը, որոշեցին բավարարվել հայտարարությամբ համադաշնության ստեղծման ցանկալիության մասին և այդ հարցը հանձնել Անդրկովկասի խորհրդաժողովին³⁰:

Սակայն մյուս նիստում ԱԴՀ կողմը կրկին բարձրացրեց համա-

դաշնության հարցը տարածքային հարցի լուծման համատեքստում՝ դրանով իսկ ցույց տալով, որ մտադիր չէր քննարկել օրակարգում առկա երկկողմ բազմաբնույթ հարցերը: ՀՀ պատվիրակությունը չհապաղեց արձանագրել այդ փաստը՝ առաջարկելով ժամանակավորապես դադարեցնել խորհրդածողովի աշխատանքները, որպեսզի լիազորություններ տաճար համադաշնության հարցը քննարկելու համար: Կրկին բանավեճ սկսվեց մանր և խոշոր հարցերի լուծման առաջնահերթության մասին, և կողմերը որոշում ընդունեցին խորհրդածողովը Թիֆլիս տեղափոխելու մասին³¹:

Այսպիսով, խորհրդածողովը տապալվեց՝ չհասնելով գոնե որևէ միջակա արդյունքի: Այն ընդամենը միջոց էր կողմերի համար՝ ժամանակ շահելու և վճռական գոտեմարտին նախապատրաստվելու համար: Դրա վկայությունն էին խորհրդածողովի նախօրեին, նրա ընթացքում, նրանից հետո Ջանգեզուրի, Դարալագյազի, Գողթանի և հարակից շրջաններում տեղի ունեցող ռազմական գործողությունները, որոնք ուղեկցվում էին բնակչության ջարդերով ու տեղահանությամբ: Դեռ չէր ավարտվել խորհրդածողովը, երբ ղեկավարների կեսերին թուրք-ադրբեջանական զանգվածը կանոնավոր գործամասերի մասնակցությամբ Խալվ և Էդիֆ բեյերի գլխավորությամբ ոչնչացրեց Հայկական Գողթանը՝ կոտորելով բնակչության մեծ մասին և գերեվարելով կանանց: Երևանը բողոքեց ԱԴՀ կառավարությանը և դաշնակիցներին, որին ի պատասխան, Բաքուն հայտնեց, որ տեղեկություն չունեւր այդ մասին և եթե այդ տվյալները հաստատվեին, մեղավորները կպատժվեին: Մեկ այլ հայտարարագրում, արդեն ի վիճակի չլինելով հերքել կատարված ջարդը, Բաքուն հայտնում էր, որ Ազուլիսը գրավել էին ցրտահար և սովահար մուսուլման փախստականները Ջանգեզուրի, Երևանի, Էջմիածնի և Մուրմալուի գավառներից, որոնք ենթարկվելով ՀՀ կանոնավոր զորքերի հալածանքներին, փախել էին Նախիջևան: Բաքուն նշում էր, որ միջոցներ էր ձեռնարկում թույլ չտալու հայկական գյուղի բնակեցումը մուսուլման գաղթականներով: Իր հերթին ԱԴՀ դիվանագիտական ներկայացուցիչը հաղորդում էր, որ հայերը Ներքին Ազուլիսից հեռացել էին Վերին Ազուլիս, և զոհեր չկային: Գողթանի հարցում ԱԴՀ քաղաքականությունը հստակ ցույց տվեց, որ մուլիսկ անվերապահ հնազանդություն հայտնելը ամենևին չէր կարող երաշխիք համդիսանալ հայության կյանքի և գույքի ապահովության համար³²:

Իրենց հերթին Ջանգեզուրի հայկական ուժերը հունվարի 19-ին լայնածավալ հարձակման անցան Ջանգեզուրից արևելք՝ Հազարու գետի ուղղությամբ՝ նվաճելով ու տեղահան անելով շուրջ քսան գյուղ: Ի պատասխան Բաքվի բողոքներին, Երևանը, որդեգրելով իր հակառակորդի վարքագիծը, պատասխանում էր, որ տեղեկություն չունեւր այդ մասին և դրա հաստատման դեպքում պատժելու էր մեղավորներին³³:

Այդ բոլոր ռազմական գործողությունները նպատակ էին հետապնդում ապահովել առավել հարմար ռազմավարական դիրքեր գալիք մարտերում Ջանգեզուրի և Դարաբաղի համար:

Ամփոփելով՝ պետք է նշենք, որ Ադրբեջանը չկարողացավ ավար-

տին հասցնել Ելիզավետպոլի նահանգի՝ իր իշխանությունից դուրս գտնվող միակ գավառի՝ Ջանգեզուրի նվաճումը: Դրա հիմնական պատճառներից էր Շարուր-Նախիջևանի, Բեյլոր Վեդիի, Լեմբորանի, Մուղանի և Ղարաբաղի հաջողությունների ֆոնի վրա սեփական ուժերի գերազմահաստումը, որը բերեց իսկական ռազմական աղետի Գորիսի մատույցներում:

DAVID KNYAZYAN

ACTIVISATION OF THE POLICY OF AZERBAIJAN ON THE ISSUE OF ZANGEZUR IN THE SECOND HALF OF 1919

In the result of the revolts in the regions of Beyuq Vedi and Sharour-Nakhichevan during the summer of 1919 Armenia lost control over a vast territory from Ghamarlu to Ordubad. Meantime Azerbaijani Government signed an agreement with the Karabagh National Council, thus spreading its power to the borders of Zangezur district. In such auspicious political conditions Baku resumed the attempts to seize besieged Zangezur by means of force. In November Azerbaijani regular forces attacked the district, but they failed.

Owing to the efforts of the Allies in November 23 the Prime-Ministers of Armenia and Azerbaijan signed an agreement on the cessation of clashes and peaceful resolution of the disputes.

In the conclusion we should state, that one of the main reasons of the failure to conquer Zangezur was the overestimation of its military resources by the Azerbaijani Democratic Republic.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Աзербայժան»-ը գրում էր, որ Ղարաբաղի հայերն իրենք հասկացան, որ չէին կարող հանգիստ աշխատանքային կյանք վարել, առանց ԱՂՀ հետ քաղաքական և տնտեսական կապի: Նախիջևանը, Շարուր-Ղարաբաղյազը և Օրդուբադն իրենց սեփական ուժերով ազատվել էին օտար իշխանությունը բռնի ենթակայությունից և ճանաչել էին ԱՂՀ իշխանությունը: Թերթը եզրակացնում էր, որ Ուսուրբեկովի կառավարությունը չնչին միջոցներով և մեծ քաղաքական տակտի շնորհիվ կատարեց իր պարտավորությունները երկրի տարածքային ամբողջականության ապահովման գործում: Մեկ այլ հոդվածում նշվում էր, որ Շարուր-Նախիջևանի գրավումով Ջանգեզուրը դառնում էր պաշարված քերդ: Տես՝ Դաշերա «Աзербայժան», #182, 1919թ. օգոստոսի 28 (ՀԱԱ, ֆ.278, y 1q.44):
2. ՀԱԱ, ֆ.278, q.4, p.5: Հռչակագրում պատրաստակամություն էր հայտնվում սպասել, մինչև հարցի խաղաղ լուծումը:
3. Թերթը նշում էր, որ Ջանգեզուրի հայերի առաջնորդները պետք է հասկանային, որ իրենց ժողովրդի գոյության պահպանման համար անհրաժեշտ էր համաձայնության գալ: Ըստ բերքի, հայերը կցմային այդ ուղիով, երբ համոզվեին ԱՂՀ կառավարության հանգուց՝ դակությունից և դեմոկրատիային հավատարմության մեջ: Տես՝ Դաշերա «Աзербայժան», #182, 1919թ. օգոստոսի 28 (ՀԱԱ, ֆ.278, y 1q.44) և ՀԱԱ, ֆ.200, q.50, p.385:
4. Տ.Բեկզադյանը նշում է, որ Մելիք Ալանովն այդ ամենն անկեղծորեն էր ասում: Իր հերթին ՀՀ դիվանագիտական մերկայացուցիչն առաջարկել էր տարածքային սահմանազատման հարցը թողնել խաղաղության խորհրդաժողովին, քանի որ այդ հարցի շուրջ հնարավոր չէր համաձայնության գալ, ինչն իր հերթին բարդացնում էր մյուս հարցերի կարգավորումը: Նույն օրը վարչապետՈւսուրբեկովի հետ հանդիպման ժամանակ աղո-

բեջանական կողմը կրկին ընդգծեց *modus vivendi*-ի հաստատման անհրաժեշտությունը: Տես՝ ՀԱԱ, ֆ.200, Կ 1, Գ.352, Բ.1-2:

5. Ջաֆարովը Բեկզադյանին հայտնել էր, որ ԱՂՀ կառավարությունը, քննարկելով իբր թե վերջինի կողմից արված առաջարկը *modus vivendi*-ի հաստատման մասին, համաձայնել էր խորհրդակցության գումարմանը: Իր մամուլում սակայն Բեկզադյանը նշում է, որ խորհրդաժողովի նախաձեռնողը Մելիք Ասլանովն էր բայց ինքը դրան չտվեց հատուկ նշանակություն, համուն խորհրդաժողովի գումարման: Տես՝ ՀԱԱ, ֆ.200, Կ 1, Գ.352, Բ.3:
6. 1919թ. սեպտեմբերի 22-ին Տ.Բեկզադյանը գումար էր ՀՀ ԱԳ-ն-ին, որ Աղբյուրանը պատ-րաստվում էր բռնագրավել Ջանգեզուրը և նրա վրայով Ջուլֆայի միջոցով կապվել Պարսկաստանի, իսկ Շարուր-Նախիջևան-Սուրմալուի վրայով կապվել Թուրքիայի հետ: Նշվում էր, որ ԱՂՀ-ն ոգեշնչվել էր Նախիջևանի, Շարուրի և Բեյլաթ Վեդիի հաջողու-թյուններից և մեծ տերությունների ներկայացուցիչների բարյացակամությունից ու իր քա-ղաքականության մեջ ավելի սանձարձակ դարձել: Տես՝ ՀԱԱ, ֆ.200, Կ 1 Գ.50, Բ.135:
7. ՀԱԱ, ֆ.200, Կ 1, Գ.271, Բ.47-53:
8. ՀԱԱ, ֆ.200, Կ 1, Գ.50, Բ.144, 149, 158:
9. ՀԱԱ, ֆ.200, Կ 1, Գ.50, Բ.143, 160:
10. ՀԱԱ, ֆ.200, Կ 1, Գ.50, Բ.207: Հոկտեմբերի 26-ին ՀՀ վարչապետը գնդապետ Ռեային ուղղված մամուլում հեղքում էր ՀՀ կանոնավոր զորքերի առկայությունը Ջանգեզուրի գավառում և նշում, որ Բաքվի մեղադրանքները ընդամենը պատրվակ էին՝ մեծելու հա-մար ԱՂՀ կառավարության և գնդապետ Հասկեյի միջև կնքված համաձայնագիրը: Տես՝ ՀԱԱ, ֆ.200, Կ 1, Գ.50, Բ.182: Պետք է նշել, որ դաշնակիցները կատեգորիկ պահանջեցին Բաքվից ձեռնպահ մնալ Ջանգեզուրի վրա հարձակումից: Տես՝ ՀԱԱ, ֆ.200, Կ 1, Գ.50, Բ.188:
11. Ռուբեն, Հայ յեղավոխակամի մը հիշատակները, հատոր 7, Թեհրան, 1982 թ., էջ 245-246:
12. ՀԱԱ, ֆ.200, Կ 1, Գ.352, Բ.3: Այդուհանդերձ Բեկզադյանը, համուն քախումների դադա-րեցման, ցանկալի էր համարում խորհրդաժողովի գումարումը: ՀՀ ԱԳ-ն իր հոկտեմբե-րի 7-ի հայտնադրում առաջարկում էր խորհրդաժողովի օրակարգում ընդգրկել ժամանակավոր քաժամարար գիծ սահմանելու, գաղթականների, առևտրական և երկաթուղային կոնվենցիաների ստորագրման և այլ հարցեր:
13. ՀԱԱ, ֆ.276, Կ 1, Գ.193, Բ.172-176, Գ.50, Բ.212: Ջանգեզուրի դեմ համվել էր երեք հետևակ գումը (6000 զինվոր), երկու հեծյալ գումը (800 հեծյալ), ութ թևի հրաման և չորս հատից: ԱՂՀ դիվանագիտական ներկայացուցիչը հեղքում էր ԱՂՀ կանոնավոր զորքերի մասնակցությունը հարձակմանը՝ այն վերագրելով քրդական ավազակախմբերին: Հա-րձակմանը մախորդեց խորսով թեկ Սուլթանովի կողմ Ջանգեզուրի հայությանը՝ վտարել արկածախնդիրներին ու վերջ տալ անիշխանությանը: Հակառակ դեպքում մա նշում էր, որ թավարար ուժ ուներ ստիպելու համար նրանց ճամաչել ԱՂՀ իշխանությունը: Սուլթա-նովը օրինակ էր բերում Լենքորանը, Մուղանը և Ղարաբաղը, որոնք առանց ուժի կիրառ-ման ճամաչել էին ԱՂՀ իշխանությունը: Տես՝ ՀԱԱ, ֆ.200, Կ 1, Գ.50, Բ.386:
14. ՀԱԱ, ֆ.200, Կ 1, Գ.50, Բ.196, 207, 209-210, 217, 224-225, 235:
15. ՀԱԱ, ֆ.200, Կ 1, Գ.50, Բ.218, 221, 225: Իսկ իրենք՝ դաշնակիցները գտնում էին, որ Աղ-բյուրանի հարձակումը պայմանավորված էր Բաքվի երկուտով, որ Դեմիկիմի հարձակ-ման դեպքում Հայաստանը, իբրև նրա դաշնակից, կհարձակվեր ԱՂՀ վրա Ջանգեզուրի և Ղարաբաղի վրայով:
16. ՀԱԱ, ֆ.200, Կ 1, Գ.50, Բ.250-251: Երևանը վրդովմունքով ընդունեց դաշնակիցների մեմա հավաժար վերաբերմունքը հարձակվողի և պաշտպանվողի համոխա՝ պատասխանելով, որ ՀՀ կառավարությունը վաղօրոք զգուշացրել էր դաշնակիցներին ԱՂՀ մախապա-րաստությունների մասին ու պահանջել միջոցներ ձեռք առնել ԱՂՀ հարձակումը դադա-րեցնելու համար՝ նշելով, որ հակառակ դեպքում ստիպված էր անցնել ինքնապաշտպա-նության: Տես՝ ՀԱԱ, ֆ.200, Կ 1, Գ.50, Բ.252-253:
17. ՀԱԱ, ֆ.200, Կ 1, Գ.50, Բ.266: Իսկ ՀՀ կառավարությունը գնդապետ Ռեային ուղղված մա-մուլում նշում էր, որ իրականում Հասկեյը ԱՂՀ կառավարության նախկին կարգը՝ այն թողնելով Հայոց Ազգային խորհրդի ձեռքում: Հեղքվում էր գավառում ՀՀ կանոնավոր զորքերի առ-

կայությունը ու ընդգծվում, որ Ջանգեզուրում չկային ԱՂՀ դեմ ուղղված ապստամբական շարժումներ, քանի որ նրա իշխանությունը երբեք չէր տարածվել Ջանգեզուրի վրա: Տես՝ ՀԱԱ, ֆ.200, Կ. 1, գ.50, ք.268:

18. Գեղապետ Ռեան կողմնորոշում էր արեգ զնալ փոխգեղումների ու հրաժարվել արտաքին ուժերի՝ Թուրքիայի ու Կամավորական բանակի միջամտությանը դիմելուց: Նա միաժամանակ կարևորեց Աղդեբջանում ամենուր գործող թուրք գործակալներից ազատվելը:
19. ՀԱԱ, ֆ.200, Կ. 1, գ.50, ք.309-311: Մակայն ԱՂՀ դիրքորոշումը չունեի թավարաք իրավական հիմք, օգոստոսի 22-ի համաձայնագիրը հստակ սահմանում էր այն տարածքը, որը ժամանակավորապես անցնում էր ԱՂՀ կառավարման ներքո, ի դեմս մահանգապետ Սուլթանովի: Այդ տարածքը ներառում էր միայն Ջանաշիրի, Շուշիի և Կարյազիի գավառների հայաբնակ՝ լեռնային մասերը՝ միաժամանակ քաջառելով Ջանգեզուրի գավառը:
20. ՀԱԱ, ֆ.200, Կ. 1, գ.50, ք.311-313:
21. ՀԱԱ, ֆ.200, Կ. 1, գ.271, ք.54: ՀՀ-ն ներկայացրեց հետևյալ առարկությունները ԱՂՀ առաջարկություններին: Նշելով, որ ԱՂՀ և Թուրքիայի գործակալների հրահրմամբ Վեդիքասարում, Ջանգեբասարում և այլուր ընդվզումներ էին տեղի ունենում, հայկական կողմը ընդգծում էր, որ կփորձեր խաղաղ ուղիով վերականգնել կարգավիճակը, իսկ ծայրահեղ դեպքում՝ կստիպեր: Ենթադրվում էր, որ ԱՂՀ պահանջների 1-ին կետում բարձրացված հարցը ՀՀ ներքին գործն էր: Մերժվում էր Ջանգեզուրի ենթակայությունը Ղարաբաղի գեներալ-մահանգապետին՝ հղում բերելով օգոստոսի 22-ի համաձայնագիրը: Անհնար և անմպատակահարմար էր համարվում պահանջել Ջանգեզուրի քնակչությունից զինաթափվել, քանի որ չկար շրջակա մուսուլմանների չհարձակման եղաշխիք: Ամբողջովի էր համարվում նաև փախստականների վերադարձը այն պատճառաբանությամբ, որ նրանք գաղթել էին ոչ թե վերջին զինված հակամարտության շրջանում, այլ ավելի քան մեկ տարի առաջ, և, քացի այդ, կողմնորոշում էր միջև լարված հարաբերությունների պայմաններում գաղթականների վերադարձը կարող էր նոր արյունահեղության պատճառ դառնալ: Մյուս կողմից հայկական կողմը վստահ էր, որ գաղթականների վերադարձի պատրվակի տակ Աղդեբջանը մտադիր էր գործ մտցնել Ջանգեզուր: Ձինված գործողություններից հետո ՀՀ-ն անընդունելի էր համարում խորհրդաժողովի գումարումը Ռաբլում՝ պահանջելով ընտրել չեզոք վայր:
22. ՀԱԱ, ֆ.200, Կ. 1, գ.50, ք.318: Համաձայնագրի ստորագրումից հետո ԱՂՀ կառավարությունը պաշտոնական հաղորդագրություն տարածեց Ջանգեզուրի դեպքերի մասին, ըստ որի վերջին մեկ տարում քոչվիկաբար տրամադրված հայկական ավազակախմբերը Ջանգեզուրում անընդհատ հարձակվում էին մուսուլմանական գյուղերի վրա, իսկ խաղաղ միջոցներով կարգուկանոն հաստատելու ԱՂՀ իշխանությունների փորձերը չէին հաջողվում: Այնուհետև ՀՀ կառավարությունը կանոնավոր գործեր ուղարկեց Ջանգեզուր, ինչը ստիպեց ԱՂՀ կառավարությանն իր հերթին փոքր զորամաս ուղարկել Ղարաբաղի գեներալ-մահանգապետի տրամադրության տակ՝ կարգուկանոն վերականգնելու, մուսուլմաններին հարձակումներից պաշտպանելու և ավազակախմբերը ճնշելու համար: Իր առաջխաղացման ընթացքում այդ զորամասը դիմադրության հանդիպեց Տոլ գյուղի մոտ և մերժվեց նրա պահանջը՝ թույլ տալ անցնել Գորիս: Խոզմավար և Խոնաձախ գյուղերի մոտ մարտերում ԱՂՀ զորքերը կորցրին 15 սպանված և վիրավոր հայկական կողմի 70 սպանվածի դիմաց: Հերքվում էին տեղեկությունները բազմաթիվ զոհերով ուղեկցվող անընդհատ արյունահեղ մարտերի մասին: Տես՝ Կ.50, ք.331: ՀՀ պաշտոնական հաղորդագրությունը տես՝ Կ.50, ք.338:
23. ՀԱԱ, ֆ.200, Կ. 1, գ.475, ք.52-54: Օխյիի 5 մուսուլմանական գյուղերից ազատվեց միայն 20 հոգի, իսկ մի քանի ընտանիք ազատեցին հայերը: Դեկտեմբերի սկզբին Դոլիի հրամանատարությամբ էքսպեդիցիոն ջոկատին հրահանգվեց անցնել Ջանգեզուր, կազմակերպել Ջանգեզուրի գործերը, օգնել Դարյալագյազին հետ մղել հարձակումները ու միջոցներ ձեռնարկել Շուշիի, Նախիջևանի և Կարյազիի գավառի կողմից Ջանգեզուրի պաշտպանությունը կազմակերպելու համար: Նկատի ունենալով ԱՂՀ-ի հետ համաձայնագրի կնքումը՝ հրահանգվում էր ձեռնարկել քաջառապես պաշտպանական միջոցառումներ, ինչպես նաև թույլ չտալ բռնություններ ոչ հայ քնակչության մկատմամբ: Տես՝ ՀԱԱ, ֆ.200, Կ. 1, գ.50, ք.348:

24. ՀԱԱ, ֆ.200, Կ. 1, Գ.50, Բ.351-354, 379, R.Hovannisian, Republic of Armenia, University of California Press 1982, էջ 225-226:
25. Солов, #93, 1919թ. դեկտեմբերի 5: Դեկտեմբերի 1-ի հայտարարության մեջ Բաբուն քողորում էր Ձանգեզուրում և Դարալագյազում մուսուլման գյուղերի ունչացման և ջարդերի (Դարալագյազում 300 տղամարդու սպանություն և 30 կանանց զերում) կապակցությամբ: Ի պատասխան այդ բողոքի, Երևանը հայտարարեց, որ մոյեմբերի կեսին Նալիլ Բեյի գործը հարձակվեց Դարալագյազի վրա, ինչը ստիպեց Ձանգեզուրի գործերին քայլեր ձեռնարկել հարձակումը հետ մղելու ուղղությամբ և գրավել գավառի կարևոր կետերը, որի ընթացքում խաղաղ մուսուլման բնակչությանը վնաս չէր հասցվել: Նշվում էր նաև, որ քաղաքի վրա չկային ԱԳ մախարադ Ջաֆարովի նշած մուսուլմանական գյուղերը Ձանգեզուրի գավառում: Իսկ դեկտեմբերի 12-ի հայտարարությունում Երևանը հերքում էր հայկական գործերի առկայությունը Ձանգեզուրում ու նշում, որ տվյալներ չկային Ձանգեզուրում մոյեմբերի 23-ից հետո հայերի որևէ ակտիվ գործողության մասին: Տես՝ մաս ՀԱԱ, ֆ.200, Գ.50, ֆ.341, 345, 396, 428:
- Սպառելով զինված միջամտության հնարավորությունը՝ Բաբուն այդուհանդերձ իր հավակնությունները Ձանգեզուրի նկատմամբ վերահաստատելու համար մերթնե գործերի մասխարարության հրահանգով Ձանգեզուրի բնակչությանը հույսեց ԱԳ՝ քաղաքացիներ՝ առաջ բերելով ՀՀ բողոքը, որը դա գնահատեց, որպես մոյեմբերի 23-ի համաձայնագրի խախտում: Տես՝ ՀԱԱ, ֆ.200, Գ.50, ֆ.360:
26. ՀԱԱ, ֆ.200, Կ. 1, Գ.50, Բ.370-371, Բ.374, 377, 402, 404: Պատասխան հայտարարության մեջ Ալ.Նախալյանը, հերքելով ՀՀ ուժերի ներկայությունը Ձանգեզուրում, շեշտում էր, որ Բաբարները լուր էին իրենց հարձակումների մասին, բայց վայնասում բարձրացնում, երբ այդ հարձակումները հետ էին մղվում: Մուլթամուլի հեռագրում նշված հարձակումները հայերի պատասխանին էին Սիսիանի և Դարալագյազի վրա Բաբարների հարձակումները:
27. ՀԱԱ, ֆ.200, Կ. 1, Գ.365, Բ.28-32:
28. ՀԱԱ, ֆ.200, Կ. 1, Գ.365, Բ.33-38: Ըստ ԱԳ՝ պատվիրակ Մ.Հ.Հաջինսկու, Ժամանակավոր քաժամարար գծի հաստատումը ոչինչ չէր տա, քանի որ մոյեմբերի 23-ի համաձայնագրով հաստատվել էր ստատուս քվո:
29. ՀՀ պատվիրակությունը պահանջեց մախապես քմնարկել այլ հարցեր՝ ընդգծելով, որ այդ հարցը չափազանց բարդ էր և պետք է մախ քմնարկվեր երկու հանրապետությունների խորհրդարաններում, ինչպես նաև նշելով այդ հարցին անըդարձատնալու լիազորությունների բացակայությունը: Տես՝ ՀԱԱ, ֆ.200, Կ. 1, Գ.365, Բ.33-38:
30. ՀԱԱ, ֆ.200, Կ. 1, Գ.365, Բ.39-41: Այդ նիստում հետաձգվեց տարածքային հարցի քմնարկումը և օրակարգում մտցվեցին հյուպատոսական գործակալությունների ստեղծման և դատախարակական հարցերը:
31. ՀԱԱ, ֆ.200, Կ. 1, Գ.365, Բ.42-45: Դեկտեմբերի 21-ին կայացած խորհրդածողովի 2-րդ և վերջին հրապարակային նիստում ԱԳ՝ պատվիրակ Նաժ Նոյսեկին առաջարկեց քմնարկման դեմ Անդրկովկասի համադաշնության ստեղծման հարցը՝ որպես կարևոր մախադրյալ Անդրկովկասի ժողովուրդների պետականության ամրապնդման, տարածքային, տնտեսական, քաղաքական և այլ հարցերի լուծման, անվտանգության վերացման համար: Իր հերթին ՀՀ պատվիրակությունը, ողջունելով այդ գաղափարը, նշեց, որ այդ կարևոր հարցը քմնարկության առաջ հարկավոր էր անցկացնել հասարակական քմնարկումներ: Տ.Բեկզադյանի առաջարկությամբ կողմերը հայտարարեցին վիճելի հարցերի խաղաղ ճանապարհով լուծման անհրաժեշտության մասին: Տես՝ նույն գործ, Բ.42-44:
32. Աշխատառք, #1, 10, 11, 15, 19, 1920թ. հունվարի 1, 13-14, 18, 25, ՀԱԱ, ֆ.200, Գ.427, Բ.69-71, Գ.475, Բ.52-54, Գ.484, Բ.6, 8, R.Hovannisian, նշվ. աշխ., էջ 236-238: Գողթանի հայությունը հավատաց Էդիֆ Բեյի խոստումներին և չընդունեց Գողթանի հայկական ուժերի հրամանատար Քոչարյանի օգնությունը: Զարդը կամխելում չօգնեց մաս Ձանգեզուրի գեներալ կոմիսարի վերջնագիրը՝ Ագուլիսի վրա հարձակման դեպքում ունչացնել Շիխլարի ձորի 7 մուսուլման գյուղերը:
33. R.Hovannisian, նշվ. աշխ., էջ 239, ՀԱԱ, ֆ.200, Գ.475, Բ.15, Բ.23-25, 29, 31-32, 60:

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՄԻՐԻԱ-ԱՄԵՐԻԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԼԻՔԱՆԱՆԻ
1988Թ. ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՃԳՆԱԺԱՄԻ
ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

1988թ. առաջին ամիսներին Մերձավոր Արևելքում (այսուհետ՝ ՄԱ-ում), հատկապես Լիբանանում ԱՄՆ-ի քաղաքականության ակտիվացման պայմաններում, Մայրիների երկրի մախսազահական ընտրությունների մախաշեմին քննարկման հիմնական թեման սիրիա-ամերիկյան հարաբերություններն էին¹: Խնդիրն այն է, որ ԱՄՆ-ը և նրա արևմտյան գործընկերները 1986թ. աշմանից սկսել էին ակտիվ միջոցներ ձեռնարկել Դամասկոսի հետ «սառեցված» հարաբերությունների «ջերմացման» ուղղությամբ՝ բացահայտ շահագրգռվածություն հանդես բերելով Սիրիայի հետ քաղաքական երկխոսության վերականգնման հարցում: Արևմուտքն ըստ ամենայնի հույս ուներ Դամասկոսի քաղաքական հնարավորություններն օգտագործել իրան-իրաքյան պատերազմի, Լիբանանում մի շարք խնդիրների կարգավորման՝ մախսառաջ արևմտյան պատանդների ազատագրման, մերձավորարևելյան կարգավորման մեխանիզմների վրա ներգործելու ուղղությամբ², հաշվի առնելով մաև Իրանի և ԽՍՀՄ-ի հետ Սիրիայի սերտ դաշնակցության փաստը³: Չի բացառվում, որ «Իրանգեյթի» ստորաջյուղ կրելուց հետո, Դամասկոսի միջնորդությամբ Լիբանանում գտնվող ամերիկյան պատանդների ազատագրման մպատակով, ԱՄՆ-ը «ստիպված էր ջերմացնել» Սիրիայի հետ հարաբերությունները, որն անշուշտ կմեծացներ մաև Ասադի հաղթաթղթերը⁴: Դեռ ավելին, նոր իրողության պայմաններում ԱՄՆ-ը ձգտում էր մեղմացնել Լիբանանում Սիրիայի Արաքական Հանրապետության (ՍԱՀ) հակաամերիկյան և հակաիրայելական քաղաքականությունը, ծայրահեղ դեպքում՝ չեզոքացնել նրա դերն այդ երկրում լիբանանյան մախսազահական վերահաս ընտրությունների մախաշեմին: Իր հերթին՝ Սիրիայի մախսազահ Հաֆիզ ալ-Ասադն ԱՄՆ-ի պետքարտուղար Ջորջ Շուլցի հետ տարեսկզբին ունեցած հանդիպումից (որի ընթացքում անդրադարձել էին միջազգային համաժողովի հրավիրման, ԽՍՀՄ-ին այդ գործընթացի մեջ կառուցողական ոգով ներգրավելու 5 և այլ հիմնախնդիրների) հետո, որոշ հանգամանքների բերումով, սկսեց «հաշվի առնել» Վաշինգտոնի կարծիքը՝ Շուլցի ծրագրում «ակտիվ կառուցողական դեր» ստանձնելով⁵: Ուշագրավն այն է, որ, ի տարբերություն 1983-84թթ. լիբանանյան զարգացումներում ռազմական միջամտության և հակամարտող կողմերի նկատմամբ ԱՄՆ-ի ոչ անկողմնակա դիրքորոշմանը, Վաշինգտոնն այժմ փորձում էր ԱՄՆ-ի դիվանագիտության համար հաջողություն ապահովագրել տեղական կուսակցությունների հետ գործակցության միջոցով⁷:

Իրենց հերթին, լիբանանյան քաղաքական ուժերը՝ կորցնելով ներլիբանանյան գործերը ներքին միջոցներով կարգավորելու հույսը, մեծ ակն-

կալիքներ ունեին ՄԱ-ի և Հարավային Ասիայի գծով ԱՄՆ-ի պետքարտուղարի օգնական Ռիչարդ Մերֆիի դամասկոսյան այցի արդյունքներից: Այս անգամ ԱՄՆ-ի ներկայացուցիչները գերադառնում էին խոսել ոչ թե ինչ-որ նախաձեռնության կամ ծրագրերի, այլ այդ երկրի հիմնախնդիրների համալիր կարգավորման մասին: Ուշագրավն այն է, որ լիբանանյան հոգսերի նկատմամբ տարիներ շարունակ լիակատար անտարբերությունից հետո, ճգնաժամի կարգավորման ուղղությամբ Վաշինգտոնի միջնորդությամբ հանդես գալու նախաձեռնությունը լիբանանցիները բոլոր դեպքերում պայմանավորում էին Դամասկոսի հետ⁸:

Այս անգամ Վաշինգտոնը հետամուտ էր մի կողմից Սիրիայի ու նրա լիբանանյան դաշնակիցների, մյուս կողմից՝ Լիբանանի նախագահ Ամին ժմայելի ու աջ-քրիստոնեական ուժերի միջև «կամուրջների անցկացմանը», քաղաքական բարեփոխումների հարցում քրիստոնյաների համաձայնության ձեռք բերմանը և Լիբանանում Դամասկոսի հատուկ դերի ճանաչմանը⁹:

Ներլիբանանյան կարգավորման ճանապարհին Վաշինգտոնը երկու հիմնախնդիր էր տեսնում՝ Լիբանանի պետական կառույցի կոնֆեսիոնալ համակարգի բարեփոխումն ու մուսուլմանական համայնքի մասնակցությունը քաղաքական որոշումների ընդունման գործընթացին: Ընտրությունների անցկացումն ու նոր կառավարության ձևավորումն անհնար էր դիտվում առանց «ազգային հաշտության» կայացման: Մինչդեռ քրիստոնյաները չէին ցանկանում հրաժարվել իրենց իշխանական արտոնություններից՝ «հաշտությունը» պայմանավորելով Լիբանանում սիրիական զորքերի դուրսբերման հետ:

Մերֆին հետապնդում էր նաև Ամին ժմայելի և սիրիական ղեկավարության միջև երկխոսության վերականգնման¹⁰, ապա՝ Սիրիայի հովանու ներքո՝ 1983 և 1984թթ. Ժնևում գումարված ազգային հաշտեցման համաժողովի նմանությամբ լիբանանյան «համազգային երկխոսության» հրավիրման նպատակ: Խնդիրն այն է, որ 1983թ. հոկտեմբերի 31-ից նոյեմբերի 4-ը Ժնևում Լիբանանի հակամարտող կողմերի միջև Ազգային երկխոսության կայացման նպատակով գումարված համաժողովի¹¹ արդյունքում վերահաստատվել էր Լիբանանի՝ իբրև արաբական պետության կարգավիճակը: Այս կանխադրույթից ելնելով՝ համաժողովն արտահայտվել էր մայիսի 17-ի լիբանանախորայելական համաձայնագրի մերժման օգտին: 1984թ. մարտի 12-20-ին Լոզանում Վալիդ Ջումբլաթի և Նաբիի Բերրիի շնորհիվ մասնակիցների նախկին կազմով սկսված ազգային երկխոսությանը նվիրված հանդիպումների երկրորդ փուլը, որին մասնակցել էին նաև այդժամ ՄԱՀ-ի փոխնախագահ Աբդել Հալիմ Խադդամը: Չնայած կողմերի տարաձայնության արդյունքում նրանց չհաջողվեց բոլոր մասնակիցներին ընդունելի պայմաններով քաղաքական բարեփոխումների շուրջ համաձայնության գալ, այնուհանդերձ, նրանք ամրագրեցին հրադադարի հասնելու միջոցները և հավանություն տվեցին նոր սահմանադրության մշակման սկզբունքներին¹²:

Սակայն լիբանանյան «Ալ-Մասա» թերթի համաձայն՝

1. ԱՄՆ-ի համար լիբանանյան խնդիրներն արաբ-խորայելական հիմնախնդրի համեմատությամբ ետին պլանի վրա էին գտնվում:
2. Վաշինգտոնն ամենևին էլ չէր պատրաստվում հրաժարվել տարածաշրջանում Իսրայելի շահերի պաշտպանությունից:
3. Ամերիկացիները գործ ունեին գերազանցապես մախազահի Ամին Ժմայելի հետ, որոնց ջանքերը կենտրոնացված էին մախազահի կապերը Դամասկոսի հետ վերականգնելու ուղղությամբ: Մինչդեռ մախազահի քաղաքական մեկուսացման ու Լիբանանի մուսուլմանների կողմից նրա դեմ բողոքարկման պայմաններում վերջինս ոչ թե մախազահ, այլ առաջնորդ էր, այն էլ՝ ոչ թե ժողովրդական, այլ՝ քրիստոնեական կլանի:

Միևնույն ժամանակ սիրիական ղեկավարությունը Մերֆիին ներկայացրել էր լիբանանյան ճգնաժամի նկատմամբ իր ծրագիրը՝ առանձնացնելով այն մերձավորարևելյան հիմնախնդիրների կարգավորման փաթեթից: Վերջինիս համաձայն՝ Վաշինգտոնը պետք է Իսրայելին համոզեր դուրս բերել իր զորքերը Լիբանանի տարածքից՝ իբրև լիբանանյան հիմնախնդիրը մերձավորարևելյան փաթեթից առանձնացման գործընթացի սկիզբ: Դամասկոսի կարծիքով՝ միայն այդ դեպքում երկրի հարավում իսրայելական օկուպացիայի դեմ լիբանանյան ու պաղեստինյան տարբեր զինված խմբավորումների ներկայությունը չէր կարող արդարացվել իբրև Թեյ-Ավիվի դեմ պայքարի միջոց: Մինչդեռ իսրայելցիների դուրս բերումը Լիբանանի հարավում և կոնկրետ լիբանանաիսրայելական սահմանի երկայնքով ՄԱԿ-ի ուժերի հետ մեկտեղ լիբանանյան ուժերի տեղակայման հնարավորություն կընձեռներ: Արդյունքում՝ «խաղաղության գոտու» վերածված երկրի հարավում ու Բեքաա հովտում (Լիբանանի արևելք) ցանկացած զինված ելույթ կճնշվեր իբրև Իսրայելի օկուպացիայի դեմ չարդարացված քայլ:

Սիրիացիներն էլ հնարավորություն կստանային զբաղվել արևմտյան Բեյրութի անվտանգության ապահովման, լիբանանյան մայրաքաղաքի հարավային շրջանների հսկողության խնդրով¹³, ուր տեղակայված էին «Հիզբալլահի» և իրանական կողմնորոշմամբ մուսուլմանական ծայրահեղական այլ խմբավորումների հենակետեր: Վերջին առաջարկի առնչությամբ Մերֆիին ԱՄՆ-ի կողմից «կանաչ լույս» չերաշխավորեց՝ գտնելով, որ Դամասկոսն արևելյան Բեյրութով կարող է զբաղվել միայն հարավային Լիբանանի անվտանգության խնդիրներն Իսրայելի հետ կարգավորելուց հետո:

Ինչ վերաբերվում է Լիբանանի մախազահի թեկնածության խնդրի շուրջ երկու պետությունների դիրքորոշումներին, ապա Սիրիայի մախազահի կարծիքով՝ «Դամասկոսի միջով» ընտրությունների անցկացումը կարող էր Լիբանանում խաղաղության վերականգնման ազդանշան ծառայել, հակառակ դեպքում՝ իրադրությունը հղի էր անկանխատեսելի հետևանքներով: Վաշինգտոնի պաշտոնական դիրքորոշումն այս հարցում առավել չե-

գործ էր. Մերֆին համաձայն՝ ԱՄՆ-ը որոշել էր գործակցել Լիբանանում նախագահական ընտրությունների անցկացմանը՝ նշված ժամկետում և առանց խոչընդոտների:

Այսպիսով, սիրիա-ամերիկյան բանակցություններն այնուհանդերձ որոշ արդյունքներ արձանագրեցին, որոնց ուղղությամբ ԱՄՆ-ի ձեռնարկած քայլերն էին՝

- Մերֆին Լիբանանի նախագահի խորհրդական Ի.Սալեմի միջոցով նախագահին պետք է հանձնել լիբանանյան կառավարության նոր կառուցվածքի և կոնֆեսիոնալ համակարգի փոփոխության հնարավորության շուրջ Սիրիայի և ԱՄՆ-ի պայմանավորվածությունների փաթեթը: Լիբանանի նախագահը պետք է ամենասեղմ ժամկետում պատասխաներ առաջարկներին:
- ԱՄՆ-ի դեսպանատան աշխատակիցները մի շարք հանդիպումներ էին ձեռնարկել աջքրիստոնեական ուժերին և նախագահ Ժմայելին ընդդիմադիր կուսակցությունների և կազմակերպությունների ղեկավարների հետ: Ամերիկացիները լիբանանյան քաղաքական գործիչներին տեղեկացրել էին Դամասկոսում Մերֆիի վարած բանակցությունների արդյունքների մասին՝ խնդրելով հնարավորին չափ շուտ պատասխանել առաջարկներին:

Սիրիան և ԱՄՆ-ը պայմանավորվածության էին եկել հետևյալում՝

1. Խորհրդարանում պատգամավորների տեղերը բաժանվում էին մուսուլման և քրիստոնյա համայնքների միջև հավասարապես, որի արդյունքում պատգամավորական տեղերն ավելացվելու էին:
2. Խորհրդարանի նախագահը և անդամներն ընտրվում էին քառամյա ժամկետով:
3. Վարչապետն ընտրվում էր խորհրդարանի պատգամավոր: Խորհրդարանի նախագահի ստորագրությունը պարտադիր էր՝ կառավարության ձևավորումը, նրա կազմի հաստատումը կամ կաբինետի արձակումը հրահանգավորող նախագահի ստորագրությամբ զուգահեռ:
4. Նախագահի, խորհրդարանի նախագահի և վարչապետի ընտրության դեպքում պահանջվող պատգամավորական ձայների մեծամասնությունը պետք է որոշվեր նույն կարգով:
5. Նախարարների խորհուրդը համարվում էր գործադիր իշխանության կողմից որոշումներ ընդունող կոլեկտիվ աղբյուր, որին մատաշրջանների անցկացման նպատակով տեղ էր հատկացվում՝ վարչապետի, իսկ հատուկ դեպքերում՝ նախագահի գլխավորությամբ:
6. Պատգամավորների ձայների ոչ պակաս, քան 2/3-ով ընդունված հրամանագրերը ստորագրվելու էին նախագահի, վարչապետի և համապատասխան նախարարությունների ղեկավարների կողմից:
7. Որոշ ժամանակ (16 տարի) անց քաղաքական կրոնադավանական համակարգը պետք է վերացվեր¹⁴:

Սիրիայի ղեկավարները ևս իրենց լիբանանյան դաշնակիցներին ներկայացրին քաղաքական բարեփոխումների ուղղությամբ ձեռք բերված

պայմանավորվածությունների հիմնադրությունները: Այդ նպատակով Դամասկոս գործողվեց Լիբանանի խորհրդարանի նախագահ Հուսեյն ալ-Հուսեյնը, վարչապետի պաշտոնակատար Սելիմ ալ-Հոսը, ինչպես նաև Առաջադիմական Սոցիալիստական կուսակցության՝ ԱՄԿ-ի նախագահ Վալիդ Ջումբլաթը, շիական շարժման ԱՄԱԼ-ի առաջնորդ Նաբիհ Բերրին, որոնք ընդհանուր առմամբ համաձայնվեցին քաղաքական բարեփոխումների ճանապարհով Լիբանանի հակամարտության կարգավորման ծրագրի հետ: Ամերիկացիները մույնպես քրիստոնեական համայնքի ներկայացուցիչներին հանձնեցին ամերիկա-սիրիական գործակցության արդյունքում ձեռք բերված առաջարկների փաթեթը¹⁵:

Հարկ է նկատել, որ թեև Վաշինգտոնի և Դամասկոսի միջև պայմանավորվածություններն առաջին հայացքից չէին շոշափում Լիբանանի հիմնախնդիրներն ու ճգնաժամի առաջացման պատճառները, այնուհանդերձ, վերահաս նախագահական ընտրությունների նախաշեմին զգալիորեն ակտիվացնում էին ինչպես երկրի ներքաղաքական զարգացումները, այնպես էլ լիբանանյան ճգնաժամի, մասնավորապես նախագահական ընտրությունների նախապատրաստության ու անցկացման շուրջ միջազգային՝ մասնավորապես Դամասկոսի ու Վաշինգտոնի ներգրավվածությունը:

Այսպիսով, բազմաթիվ լիբանանցիներ նախագահական ընտրությունների նախաշեմին «հրաշքի» էին սպասում Վաշինգտոնի, Բեյրութի և Դամասկոսի միջև «աշխատանքային փաստաթղթերի» փոխանակությունից, ինչպես նաև ամերիկախորհրդային հանդիպումներից, իրան-իրաքյան պատերազմի ավարտից:

Այնուհանդերձ, 1988թ. սեպտեմբերի դրությամբ, երբ լրանում էր Ամին Ժմայելի պաշտոնավարության ժամկետը, լիբանանյան քաղաքական ուժերը դեռևս համաձայնության չէին եկել նախագահի իրավահաջորդի հարցում: Քաղաքական այս փակուղու առաջացմանը, որոշ կարծիքների համաձայն, նպաստեց նաև ամերիկյան դիվանագիտությունը, որի միջամտության արդյունքում, Ռ.Սերֆիի առաջարկով, Սիրիան հրաժարվեց իր թեկնածուի՝ Լիբանանի նախկին նախագահ Մուլեյման Ֆրանժիեի առաջադրությունից¹⁶: Իսկ Դամասկոսի երկրորդ թեկնածուի՝ իրավաբան և խորհրդարանի անդամ Միխաիլ ալ-Դահերին լուռ սատարումը Վաշինգտոնի կողմից լիբանանյան կառավարության հետագա պառակտման պատճառ դարձավ¹⁷:

Մինչ այդ Դամասկոսը հավանություն չտվեց նաև ԱՄԿ-ի առաջնորդ Վալիդ Ջումբլաթի առաջ քաշած քրիստոնյա մարոնի Անտուան ալ-Աշքարի (վերջինս աջակցություն չէր գտել նաև ԱՄԱԼ-ի մոտ) թեկնածությանը՝ հակառակ Լիբանանի ներքին գործերին չմիջամտելու ուղղությամբ Սիրիայի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարի նախկինում արված հայտարարություններին: Սիրիայի հավանությանը չարժանացան նաև պատգամավորների շրջանից խորհրդարանի նախագահ Հուսեյն ալ-Հուսեյնիի առաջադրած թեկնածուները: Դամասկոսին բնականաբար դուր չեկավ նաև լիբանանյան արհմիությունների առաջնորդների ու

զգալի թվով խորհրդարանի պատգամավորների աջակցությունից օգտվող «Ազգային Դաշինքի» առաջնորդ Ռայմոն Էդդեի թեկնածությունը, որը երդվել էր պայքարել Լիբանանից սիրիական և իսրայելական ուժերի դուրս բերման համար:

Ինչ վերաբերվում է լիբանանյան սուննի մուսուլմանների գլխավոր քաղաքական խմբավորմանը՝ «Ժալամական հանդիպմանը», ապա վերջինս Սիրիայի միջնորդությամբ բանակցություններ էր վարում քրիստոնյա քաղաքական գործիչների հետ փոխզիջման հասնելու հնարավորության շուրջ: Խմբավորման անդամները պատրաստ էին նախագահ չընտրվելու դեպքում իրենց կողմից նոր, անցումային կառավարության ղեկավարման հարցում: Իսկ վարչապետի պաշտոնակատար սուննի մուսուլման Սեյիմ Հոսը, որն իր գլխավոր խնդիրը համարում էր ստատուս քվոյի պահպանումը, հատկապես տնտեսության ոլորտում, լրացնում էր լիբանանյան սիրիամետոների շարքերը:

«Հիզբալլահն» իր հերթին պահանջում էր «քաղաքական մարտնչականի վերացում» և նախագահի պաշտոնում շիա աստվածաբանի ընտրությամբ «իսլամական հանրապետության» ստեղծում: Լիբանանի շիական բարձրագույն իսլամական խորհրդի նախագահի տեղակալ շեյխ Մուհամմադ Մահդի ալ-Դիմն առաջ էր քաշում «ժողովրդավարական մեծամասնության» հիման վրա ընտրությունների գաղափարը՝ հերքելով քրիստոնյա-մարտնիների օգտին նախագահի պաշտոնի ամրագրումը, և առաջ քաշելով Սեյիմ Հոսի թեկնածությունը: Ինչ վերաբերվում է «Ժալամական-հայրենասիրական» ճամբարին¹⁸, ապա վերջինիս գործողությունների համակենտրոնացմանը խոչընդոտեցին ԱՄԱԼ-ի և «Հիզբալլահի» միջև ռազմական գործողությունները և Արաֆաթի կողմնակիցների ու հակառակորդների միջև քառատված «ճամբարների միջև պայքարը», որոնց միավորում էր քացառապես Լիբանանում սիրիական ուղեգծի սատարումը¹⁹:

Իրենց հերթին Սամիր Ժաժայի գլխավորած Լիբանանյան ուժերը²⁰ (ԼՈՒ), բողոքարկեցին Հաֆիզ Ասադի մերձավոր ընկերոջ, Սուլեյման Ֆրանժիեի թեկնածությունը՝ ելնելով սիրիական 40 հազարանոց զորքերի պայմաններում Ասադի կամքին Ֆրանժիեի ականջալուր լինելու մտավախությունից: Աջ-քրիստոնյաների համար անընդունելի էր նաև սիրիական նախագահի երկրորդ թեկնածու Միխաիլ ալ-Դահիերը²¹:

Այսպիսով, լիբանանյան քաղաքական ողջ սպեկտրը ներկայացնող ուժերի միջև ծրագրերի բացակայության ու տարածայնությունների պայմաններում, 1988թ. սեպտեմբերի 21-ի նախագահական ընտրությունները գործնականում դատապարտված էին ձախողման: Ընտրությունների հաջորդ օրը նախագահ ժմայելն իր աշխատակազմի ղեկավար լիբանանյան բանակի հրամանատար Միշել Աունին նշանակեց վարչապետի պաշտոնում, որը պետք է ղեկավարեր 6 զինվորականներից կազմված անցումային «զինվորական կառավարությունը»: Մուսուլմանները հավանություն չտվեցին Աունի թեկնածությանը՝ չընդունելով նրա իշխանական լեգիտիմությունը: Ռազմական կարիներտի 3 մուսուլման ներկայացուցիչներ՝ սուն-

նի, շիա և դրուզ, հրաժարվեցին համագործակցել Աունի և երկու սպա քրիստոնյաների հետ: Փոխարենը՝ մուսուլման առաջնորդները Սիրիայի աջակցությամբ իրենց հավատարմությունը հայտարարեցին վարչապետի պաշտոնակատար Սեյիմ ալ-Հոսի գլխավորած լիբանանյան կառավարությանը²²:

Այդժամ Աունը ձևավորեց իր կառավարությունը, որի մեջ երկու քրիստոնյա նախարարների՝ գեներալ Իսամ Ջամրայի ու Էդգար Մալուֆի հետ մտնում էր նաև վարչապետը²³: Փաստորեն, երկրում ստեղծվեց լեզիտիմ իշխանության ձեռք բերման ուղղությամբ մրցակցող երկու հակամարտող կառավարությունների (իրենց առանձին բանակներով) համագոյակցություն: Լիբանանը կրկին բաժանվեց քրիստոնյա մեծամասնությամբ արևմտյան Բեյրութի (Սեյիմ Հոսի վարչապետով) և մուսուլման մեծամասնությամբ արևելյան Բեյրութի կառավարությունների (Միշել Աուն վարչապետով) միջև: Աունն աշխատանքային խումբ ստեղծեց և սկսեց ասպարեզից հեռացնել ԱՄՆ-ի, Սիրիայի ջատագովներին և լիբանանյան քաղաքական թափուրաբեմի այլ դերակատարների՝ առաջացնելով վերջիններիս բացասական հակազդեցությունը: Սիրիային դուր չեկավ նաև իր լիբանանյան դաշնակիցների՝ դրուզների և ԱՄԱԼ-ի դեմ Աունի ծավալած ռազմարշավը: Իր հերթին Վաշինգտոնը՝ ելնելով ճգնաժամի սրման մտավախությամբ, հանդես եկավ զինվորական վարչապետի նշանակման դեմ:

Սկզբնական շրջանում թվում էր, թե կառավարության պառակտումը չի երկարատևի երկու վարչապետների կողմից նախագահական շտապ ընտրությունների անցկացման շուրջ արտաքուստ համաձայնության գալու լույսի ներքո: Եվ իսկապես, կառավարական աշխատանքները շարունակվում էին երկու կաթինետների միջև: Սակայն շուտով պարզվեց, որ Աունի հավակնությունները դուրս են գալիս Հոսի կաթինետի լեգիտիմությունը մերժելու շրջանակներից և նախագահական պաշտոնի զբաղեցման նպատակ են հետապնդում²⁴: Աունը՝ անտեսելով նախագահական ընտրությունների անցկացման հրատապությունը, ձեռնամուխ եղավ անկախ քաղաքական ուղեգծի վարմանը՝ միաժամանակ պայքար ծավալելով Լիբանանյան ճակատի ներսում՝ վերջինիս ղեկավարությունը ստանձնելու ուղղությամբ:

1989թ. փետրվարին ԼՈՒ-ի միլիցիայի հետ Աունի առաջին բախումը՝ Բեյրութի նավահանգստի նկատմամբ վերահսկողություն հաստատելու նպատակով, վերածվեց բացահայտ առճակատման, որի արդյունքում նավահանգիստը վերադարձվեց պետությանը: Աունը մեկ ամիս անց ծովային շրջափակման ենթարկեց մեծամասամբ մուսուլմաններից կազմված միլիցիաներին, որոնց ձեռքում էին գտնվում երկրի գրեթե բոլոր նավահանգիստները: Սա առաջացրեց ԱՄԱԼ-ի, դրուզների և Ս.Ֆրանժիեի «Մարադայի», ինչպես նաև նրանց սիրիական հովանավորի դիմակայությունը՝ ճգնաժամի էսկալացիայի պատճառ դառնալով: Մարտի 14-ին Աունն «ազատագրական պատերազմ» հայտարարեց Լիբանանում սիրիական ուժերի ներկայության դեմ²⁵, որն ըստ էության ռազմական մեծ խիզախում էր ընդդեմ ներքին, տարածաշրջանային ու միջազգային համերաշխության

նը: Միրիան իր հերթին ցամաքային և ծովային շրջափակման ենթարկեց Միշել Աունի զինված խմբավորումների հսկողության տակ գտնվող «Քրիստոնեական ինքնավարության» շրջանները: Միշել Աունը պատասխան հարվածներ հասցրեց արևմտյան Բեյրութի սիրիական ուժերի դիրքերին²⁶: Վեց ամիս շարունակ արևելյան Բեյրութը ենթարկվում էր մուսուլմանական ու սիրիական ուժերի, իսկ արևմտյան Բեյրութն ու Շուֆը՝ ԼՈՒ-ի բանակի քրիստոնյա զորամիավորումների փոխհրաձգություններին:

ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշի²⁷ վարչակազմը, որը մինչ այդ խուսափում էր ՄԱ-ի նկատմամբ համապարփակ քաղաքականության ձևավորումից, այժմ՝ ելնելով լոկալ հակամարտությունների (կոնկրետ դեպքում լիբանանյան) ծավալման մտավախությունից, փորձեց կասեցնել Միրիայի ջանքերը՝ հրաձգությունների և ցամաքային զորհների միջոցով Լիբանանի քրիստոնեական ինքնավար շրջանի ոչնչացման ուղղությամբ²⁸:

Սակայն ԱՄՆ-ն այդժամ լիբանանյան իրադարձություններում ստիպված էր գործ ունենալ մոր դերակատարի հետ՝ ի դեմս Իրաքի, որի միջամտությունը հակամարտությանն առավել սուր բնույթ հաղորդեց: Խնդիրն այն է, որ իրան-իրաքյան պատերազմի ընթացքում Միրիան տարածաշրջանում ազդեցիկ ռազմավարական դիրքեր էր զբաղեցնում Իրանի հետ դաշինքի շնորհիվ: Սակայն պատերազմի ավարտից հետո Իրաքը, ասես Միրիայի դեմ ռևանշի նպատակով²⁹, 1988թ. աշնանից զինում ու հանդերձավորում էր (հաճախ Իրանից բռնագրավված զենքով ու հանդերձանքով) Լիբանանի քրիստոնյա ընդդիմությանը³⁰: Միրիան, որը չէր կարող վերջիններիս դեմ պայքարում ապավինել ԱՄՆ-ի աջակցությանը, և որը դժգոհ էր իր ռազմավարական դաշնակցի՝ ԽՄԺՄ-ի ՄԱ-ի քաղաքականության որոշ ասպեկտներից³¹, ստիպված էր դիմելու Իրանի աջակցությանը՝ թե՛ Իրաքի կողմից սատարվող Միշել Աունի նկատմամբ ճնշում գործադրելու, և թե՛ Սաուդյան Արաբիայի ու ԱՊԼ-ի կողմից Լիբանանում Միրիայի բացառիկ դերի ճանաչումն ապահովելու հարցում: Իրանին գործնականում հաջողվեց Լիբանանում իսլամական ազգայնական հակա-սունա-կան կռիվիցիա³² ստեղծել, որը Միրիայի համար էական զսպիչ գործոն ծառայեց Աունի դեմ պայքարում՝ նամանավանդ վերջինիս օգտին Ֆրանսիայի կողմից սպառնացող միջամտության պայմաններում: Սա միաժամանակ իբրև նախազգուշացում ծառայեց Սաուդյան Արաբիային ու ԱՊԼ-ին, որոնք Լիբանանում Միրիայի խաղաղարար դերակատարությանը դիմակայելու դեպքում ստիպված էին լինելու գործ ունենալ իսլամական հեղափոխության հետ³³:

Ի վերջո, Միրիան ստեղծված ճգնաժամի պայմաններում տարրորշված ռազմավարություն որդեգրեց՝ գործի դնելով ռազմական ճնշամիջոցների, Միրիայի նկատմամբ արաբական, ֆրանսիական և միջազգային ճնշման դիմակայման, ԱՄՆ-ին Միրիայի հետ առավել լայն երկխոսության մեջ ներգրավվելու քաղաքականություն՝ վերջինիս հետ հարաբերություններին առավել մեծ նշանակություն տալով և այդ ուղղությամբ առավել մեծ ջանքեր գործադրելով³⁴: Իր հերթին ԱՄՆ-ը՝ հաշվի առնելով Լիբանանում

Դամասկոսի կարևոր դերակատարությունը, փորձում էր լիբանանյան և արաբ-խորալեկան հիմնախնդիրների կարգավորման հետո գնացող նկատառումներով Սիրիայի հետ համագործակցությունն առավել ընդլայնել³⁵։ Այդ նպատակով լիբանանյան և մերձավորարևելյան խաղաղության հիմնախնդիրներն ԱՄՆ-ի աջակցությամբ քննարկման դրվեցին 1989թ. մայիսի 25-26-ին Կասաբլանկայում գումարվող արաբական երկրների զազաթնաժողովում³⁶։ ԱՊԼ-ի նշանակած համձնախումբը՝ հանդիպումներ կազմակերպելով լիբանանյան երկու կառավարությունների ղեկավարների հետ՝ երկու կողմերին էլ հնարավորություն ընձեռեց արտահայտել իրենց դիրքորոշումները³⁷։ ԱՊԼ-ի ձևավորած եռակողմ հաճնաժողովի կազմում ընդգրկվեցին Մաուդյան Արաբիայի ու Մարոկկոյի թագավորները և Ալժիրի նախագահը, որոնց հիմնական նպատակը Լիբանանի սահմանադրական քարեփոխումների ու նոր նախագահի ընտրության ապահովումն էր³⁸։ Հանդիպումը նախատեսվում էր անցկացնել սեպտեմբերի 30-ին Մաուդյան Արաբիայի Թաիֆ քաղաքում, ուր, նախապես հրապարակված պաշտոնական հաղորդագրության համաձայն, հրավիրված էին նաև Լիբանանի խորհրդարանի պատգամավորներ³⁹։ Հարկ է նշել, որ իրենց հեթքին 1989թ. սեպտեմբերի 23-ին ԽՍՀՄ-ն ու ԱՄՆ-ն հանդես եկան համատեղ հայտարարությամբ՝ ընդգծելով Լիբանանի հիմնախնդիրը խաղաղ ճանապարհով և հակամարտող կողմերի շահերից բխող կառուցողական երկխոսության ոգով կարգավորելու անհրաժեշտությունը⁴⁰։

Այսպիսով, միջարաբական ու միջազգային խորհրդակցությունների և բանակցությունների արդյունքում ստեղծված Բարձրագույն Եռակողմ Համձնախումբը քննարկման ներկայացրեց իր կողմից պատրաստված գեկուցագիրը, որը հայտնի էր դառնալու իբրև «Թաիֆի համաձայնագիր» կամ «Ազգային Հաշտության Խարտիա»⁴¹։ Այն օրինականացնելու էր Լիբանանում Սիրիայի դերը՝ յուրօրինակ «Pax-Syriana» հաստատելու հնարավորություն ընձեռելով Դամասկոսին։

Հարկ է նկատել, որ թեև լիբանանյան իրադարձությունների առնչությամբ ԱՄՆ-ի և Սիրիայի համագործակցության տրամաբանական ավարտ նախանշող Թաիֆի համաձայնագիրը չկարողացավ բավարարել Լիբանանի հակամարտող բոլոր կողմերի պահանջներն ու անկեկայիքները, այնուհանդերձ, եզոք միջազգային ու տարածաշրջանային աջակցության պայմաններում համաձայնագրով սկիզբ դրվող գործընթացներն ըստ էության ունեցան ինչպես իրենց մասնակի կենսագործումը, այնպես էլ շարունակությունը։

SYRIA-AMERICAN COOPERATION TOWARD LEBANESE PRESIDENTIAL ELECTION OF 1988 AND CRISES REGULATION

In early monts of 1988 before Lebanese presidential elections the key issue of discussion in light of activization of USA policy toward ME, especially toward Lebanon, became the USA-Syria relations. USA guess to use Syria's opportunities in resolution of some issues connected with Iraq-Iran war, liberation of Western hostages in Lebanon, in effecting on ME regulation mechanism, taking into account meantime Syria's close alliance with USSR and Iran.

This time USA attempted to ensure success for USA diplomacy through cooperation with Lebanese parties, in "passing bridges" between Damascus and its Lebanese allies, as well as attaining Christian's agreement on implementation of political reforms and ensuring the recognition of Syria's special role in Lebanon. USA saw two main problems in inter-Lebanon regulation: abolition of political confessionalism and muslim participation in political decisionmaking process which considered possible only in condition of "National conciliation". But Lebanese Presidential election of September 1988 entered into a deadlock mainly as a result of USA refusal of Syria's first candidate for Lebanese presidantial post and supporting the second one. It served as a pretence of splitting govenrment into two competing coalitions: the first was Syria-oriented coalition headed by Sunni leader S.Hoss, the second was anti-Syrian coalition headed by M.Aun, who eventually unleshed "war against Syria".

Eventually, specifying Syria's role in Lebanese developments, USA supported Damascus in defeating Aun, and in signing Taif Accord or "National Conciliation Charter" in September 1989 between governments of Syria and Lebanon which consequently legitimized Syria's presence in Lebanon helping to establish "Pax-Syriana" in this country.

ՑԱՆԽԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Онищенко Ю. и Крутихина М., предстоящим президентским выборам, Внутриполитическая обстановка в Ливане, ТАСС, БПИ, N 61, 29.3.1988г., стр. 29-32.
2. Шенников В., Основные направления политики США и других стран НАТО на Ближнем Востоке, ТАСС, БПИ, N 93, 16. 05.1988, стр. 40.
3. «International Herald Tribune», Paris, 27.9.1988.
4. Тони Уокер, Сирия стремится сохранить свое влияние в Ливане, ТАСС, БПИ, N 203, 18.10.1988, стр. 35.
5. Правда, 25.10.1987. Դեռևս 1987թ. սեպտեմբերի 27-ին ԽՍՀՄ-ի արտգործնախարար Է.Շևարդմանին և ՍԱՀ-ի արտգործնախարար Ալ-Շարաան հանդիպել էին Նյու-Յորքում՝ Էլմերով բոլոր շահագրգիռ կողմերի և ՊԱԿ-ի մասնակցությամբ միջազգային համաժողովի հրավիրման միջոցով ՍԱՀ-ի կարգավորման ուղղությամբ գործնական շտապ քայլերի դիմելու անհրաժեշտությունից:
6. К итогам поездки госсекретаря США Шульца на Ближний Восток, ТАСС, БПИ N 49, 11.03.1988, стр. 5.

7. Rabin Barry, The US Policy in the Intifadah Era, 1988-1990, Middle East Contemporary Survey, Vol. 11, 1987 (Westview, 1989). Ինտերն. կայքը՝ <http://meria.idc.ac.il/uspolicy/data1988.html>
8. Крутихин М., Некоторые аспекты ливанского кризиса ТАСС, БПИ, N 55, 21.4.1988г., стр. 33.
9. К предстоящим президентским выборам, Եզվ. աշխ., էջ 30:
10. Այս կապակցությամբ Դամասկոսը հիշեցնում է, որ հատկապես նախագահ Ամին ժամային էր ծախսվել 1985թ. դեկտեմբերին Սիրիայի նախաձեռնած ներկրանման համաձայնության պաշտոնական փորձերը, այն դեպքում, երբ հիմնական զինված խմբավորումները ստորագրել էին «Եռյակ համաձայնագիրը»: Այս մասին տե՛ս Шуйская Н., Ливан, Сторонники и противники гражданского примирения (осень 1985-1986г.), Восток и Современность, Научно-информационный бюллетень, N 1(43), ЭКЗ. N 000252, АН СССР, Институт Востоковедения, Москва, 1978, стр. 52.
11. Համաժողովին մասնակցում էին նախագահ Ամին ժամայել, Ազգային Փրկության Դավաթի՝ ԱԾԴ-ի առաջնորդ Վալիդ Ջուբրաբը, Ռաշիդ Քարամնե, Սուլեյման Ֆուադի, ԱՄՄԼ-ի ղեկավար Նաբիհ Բերրին, աջորհատոնական առաջնորդներ՝ Պիեր ժամայել, Քամիլ Շամունը, ՍԱՀ-ի արտգործնախարար Արդել Հալիմ Հադդադը և Սաուդյան Արաբիայի ներկայացուցչը:
12. Новейшая история арабских стран (1917-1988), Академия Наук СССР, Издательство «Наука», Москва, 1988, стр. 152-153.
13. Սակայն Բեյրութի «ԱԼ-Նահար ալ-Արաբի վալ-Դուալա» բերքի համաձայն՝ Բեյրութի հարավային արվարձանների մասին հարցն այլ կերպ է դրվել Մերֆիի և Ասադի հանդիպման ընթացքում: Երբ ամերիկյան պատվիրակը հարցրել է «Հիզրալլահի» նկատմամբ սիրահանների կողմից միջացառումներ ձեռնարկելու հնարավորության մասին, Ասադը պատասխանել է, որ դրանց կիրառումն անհիմաստ է առանց արևելյան Բեյրութում աջորհատոնական միլիցիայի և կուսակցությունների նկատմամբ մեծամասնիկ միջցառումների կիրառման:
14. Крутихин М., Եզվ. աշխ., էջ 33-36:
15. К предстоящим президентским выборам, Եզվ. աշխ., էջ 31-32:
16. Фишер Дин, Упущенный шанс на измученной земле, Иностранная печать о неурегулированном внутривполитическом положении в Ливане, ТАСС, БПИ N 203, 18.10.1988, стр. 34.
17. «New York Times», 30.8.1989.
18. Դամբարը կազմված էր 4 մասից՝ ԱՀՈՒ-ից, «Իսլամական հանդիպումից», ԱՄՄԼ-ից և «Հիզրալլահից»:
19. Крутихин М., «Исламско-патриотический» лагерь Ливана, ТАСС, БПИ, N 216, 4.11.1988г., стр. 23-24.
20. Լիբանանյան Դավաթի կամ Լիբանանյան ուժերի մեջ մտնում էին լիբանանյան աջերը՝ Լիբանանյան Փաղանգներ կուսակցությունը, Ազգային Լիբերալ կուսակցությունը, «Թաճգիճը», Մարոնական Լիզան, Լիբանանյան Մայրիի Պաշտպանության կազմակերպությունը: Լիբանանյան ծախսերը կազմում էին Ազգային Շարժում (ԱՇ) կուսիցիան, որի մեջ մտնում էին Լիբանանի Կոմունիստական կուսակցությունը, Կոմունիստական Գործողության կազմակերպությունը, Լիբանանի Մաջադիմական Սոցիալիստական կուսակցությունը, Ազգային Սոցիալիստական կուսակցությունը, Անկախ Նասերականների շարժումը, Արաբական Սոցիալիստական Միությունը, ԱՄՄԼ-ը և այլ կուսակցություններ ու խմբակցություններ:
21. Фишер Дин, Եզվ. աշխ., էջ 33-34: Բեյրութում Մերֆին բախվեց ալ-Դահեի առաջընդման դեմ քրիստոնյաների բողոքներին: Մամիր ժամայի համոզմամբ Դահեի գրավոր պարտավորություն էր տվել Սիրիային «մուսուլմաններին չափից դուրս զիջումների» զնալու հարցում:
22. Фишер Дин, Եզվ. աշխ., էջ 33:
23. Salem P., Awn and Taif, Two Years of Living Dangerously, General Awn and the Precarious Rise of Lebanon's Second Republic, The Beirut Review, LCPS, Vol. 1, No 1, 1991, p. 66.
24. Լիբանանի սահմանադրության համաձայն՝ նախագահի պաշտոնը թափուր մնալու

- դեպքում վերջինիս լիազորությունները վստահվում էին Նախարարների Խորհրդին:
25. Salem P., նշվ. աշխ., էջ 65-67:
26. Հարությունյան Լ., 1980-ականների վերջին և 1990-ականների սկզբին լիբանանյան աջ ուժերի ճակատում հակասությունների արմատ հարցի շուրջ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. 25, Երևան, 2006, էջ 85:
27. Ջորջ Բուշ ԱՄՆ-ի մայնագահի պաշտոնը ստանձնել էր 1989թ. հունվարին:
28. О внешней политике Сирии, ТАСС, Атлас, N 36(1678), Еженедельный вестник иностранной информации, 4.9.1989, стр. 58.
29. «New York Times», 30.8.1989.
30. Тони Уокер, նշվ. աշխ., էջ 35:
31. Ասադին մտահոգող գործոններն էին՝ ԽՍՀՄ-Իսրայել հարաբերությունների բարելավումը, Իսրայելի հետ քաղաքական գործընթացին մասնակցելու ուղղությամբ Արաֆաթի նոր պրագմատիկ քաղաքականության սատարումը, ՄԱ-ում ԽՍՀՄ-ի կողմից ճանաչված ուժ դառնալու ուղղությամբ ջանքերի ակտիվացումը՝ բոլոր կողմերի հետ հարաբերությունների հաստատման միջոցով, ՄԱ-ի իրադրության շուրջ ԱՄՆ-ԽՍՀՄ համաձայնության հեռանկարը: Այս մասին տե՛ս «New York Times», 30.8.1989.
32. Կոալիցիայի մեջ մտան ԱՄՆ-ի Նաբիհ Բերրին, «Հիզբալլահ»-ի մի շարք շեյխեր, Երևան քաղաքային խորհրդից՝ Մահդի Շամսադին, Վ.Ջումրաթը, պաղեստինցիներ Աբու Մուսան և Սիմեյ Ջեբրիլը, մասերականներ, կոմունիստներ, Թաուհիդից՝ շեյխ Շա՛բան:
33. Ehteshami Anoushirvan and Hinnebusch Raymond A., Syria and Iran, London and New York, 1997, p. 135.
34. О внешней политике Сирии, նշվ. աշխ., էջ 57-58:
35. О внешней политике Сирии, ТАСС, Атлас, Еженедельный вестник иностранной информации, N 36(1678), 4.9.1989, стр. 57-58.
36. Tuoni Ghassan, Lebanon's Wars and Middle East Peace, Mediterrenian Quarterly, A Journal of Global Issues, Vol., 1, No. 3, Summer, 1990. p. 94.
37. Nasrallah Fida, The Treaty of Brotherhood, Co-operation & Co-ordination - An Assessment' in State and Society in Syria and Lebanon by Youssef M. Choueiri (Ed.), Exeter: University of Exeter Press, 1994.
38. Smith Susan, The Taif Agreement: Still on Schedule After 1-1/2 Years, Washington Report on Middle East Affairs, Special Report. May/June 1991, p. 1.
39. Հովհաննիսյան Ն.Հ., Արաբական երկրների պատմություն, Անկախության և ինքնիշխանության դարաշրջան (1918-2005թթ.), հ. 3-րդ, Երևան, 2006, էջ 657:
40. Հովհաննիսյան Ա., ԱՄՆ-ի քաղաքականությունը Իսրայել-Պաղեստինյան հակամարտության հանդեպ, Եր., 2001, էջ 26:
41. Այս մասին տե՛ս Հարությունյան Ա., Միջին-լիբանանյան Թայեֆի համաձայնագիրը, Հանդես Երևանի համալսարանի (գիտաինֆորմացիոն լրատու), N 1(96), Երևան-2000, էջ 111-118:

ԱՔԴՈՒՐՐԱՀԱՄԱՆ ՇԵՐԵՖ. ԹԱՆՁԻՄԱԹԻՑ
ՄԻՆՉԵՎ ՀԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Օսմանյան կայսրության վերջին վակաա-նյովիս¹ և պետական գործիչ Աբդուրրահման Շերեֆի (1853-1925) կյանքը և գործունեությունը ժամանակագրական առումով համընկավ Թուրքիայի պատմության բեկումնային շրջանի հետ՝ Թանազիմաթ, առաջին Սահմանադրության ընդունում, գուլումի տարիներ, երիտթուրքական հեղաշրջում, Առաջին աշխարհամարտ, Հայոց Մեծ Եղեռն, Թուրքիայի Հանրապետություն: Նրա կենսագրության հանգուցային կետերի ուսումնասիրումը կարող է լրացուցիչ լույս փռել վերը հիշատակված իրադարձությունների, որոնց անմիջական ակնատեսն ու մասնակիցն է եղել Շերեֆը՝ որոշ մանրամասներին, ինչպես նաև դրանց աղբյուրություններին հայկական խնդիրների հետ²:

Աբդուրրահման Շերեֆը ծնվել է Ստամբուլում 1853թ.-ին, պալատական քարտուղարի (kâtip) ընտանիքում: Բարձրագույն կրթությունը ստացել է Ստամբուլի Մուլլահիյե դպրոցում, ավարտելով թուրքերեն և ֆրանսերեն լեզվի և պատմության բաժինները: Իր գործունեությունը սկսել է որպես ընդհանուր պատմության ուսուցիչ, այնուհետև դարձել է դպրոցի տնօրեն: 1895թ.-ին նշանակվել է հանրահայտ Գալատասարայ վարժարանի տնօրեն: 1905թ.-ից սկսած, Սահմանադրության վերահռչակումից հետո զբաղեցրել է մի շարք պետական պաշտոններ կայսրության բարձրագույն ատյաններում՝ Օսմանյան կայսրության խորհրդարանի վերին պալատի անդամ (Ayan Meclisi), կրթության նախարար Հուսեյն Հիլմի-փաշայի կաբինետում, 1909թ.-ից մինչև 1919թ. եղել է վակաա-նյովիս, հանդիսացել է 1909թ. ստեղծված «Օսմանյան պատմական ընկերության» առաջին նախագահը և, վերջապես, 1923թ., ընտրվելով պատգամավոր Ստամբուլից, մասնակցել է Թուրքիայի Ազգային մեծ ժողովի աշխատանքներին, ավելին՝ լինելով մեջլիսի ամենատարեց անդամը, հենց նա է բացել ժողովի աշխատանքները³:

Ադուրրահման Շերեֆ-պատմագիրը մեծապես ազդվել է իր նախորդների՝ Ահմեդ Ջևդեթ-փաշայի և Վեֆիկ-փաշայի աշխատություններից: Թանգիմաթի շրջանի ականավոր պատմագիր, ուլեմ⁴, պետական գործիչ Ահմեդ Ջևդեթը չնայած մեղոնսում ստացած կրթությանը, իր պատմական աշխատություններում օգտագործել էր որոշ արևմտյան աղբյուրներ, որոնք թուրքերեն էին թարգմանվել և հրատարակվել Եգիպտոսում⁵: Պատմագիր Վեֆիկ փաշան, որը թուրք դիվանագետի որդի էր և որոշ ժամանակ կրթվել էր Փարիզում, իր աշխատություններում օսմանյան պատմությունը շարադրելով ավանդական գահատոհմական սկզբունքներով, այնուամենայնիվ փորձել էր բաժանել այն որոշակի ժամանակաշրջանների՝ ծավալման, հզորության և անկումի⁶: Դեռևս Գալատասարայի վարժարանում իր տնօրինության տարիներին Շերեֆը ծանոթանում է այն դասագրքերին՝ և

մեթոդներին, որոնցով դասավանդվում էր պատմությունը նույն վարժարանի ֆրանսիական և հայկական բաժանմունքներում: Այդ առումով ոչ մահմեդական (հայական և հունական) կրթօջախները, ինչպես գրում են Ա. Ժելտյակովը և Յու. Պետրոսյանը, միշտ էլ օրինակ են եղել թուրքերի համար⁸: 19-րդ դարի վերջում (1307/1890թ. և 1315/1898թ.) Արդուրրահման Շերեֆը հրատարակում է երկու աշխատություն՝ «Tarih-i Osmani» և «Fezleke-i tarih-i Devlet-i Osmaniyye» («Օսմանյան պատմություն» և «Օսմանյան պետության ամփոփ պատմություն»), որոնք բոլորովին նոր խոսք էին թուրքական պատմագրության մեջ: Յուրովի սինթեզելով իր նախորդների՝ Ահմեդ Ջևդեթի և Վեֆիկ-փաշայի մոտեցումները պատմության շարադրանքին, լայնորեն օգտագոծելով եվրոպական աղբյուրները, Շերեֆը դիտարկում է օսմանյան պատմությունը համաշխարհային պատմության ենթատեսքատում, փորձում է չսահմանափակվել իրադարձությունների լոկ շարադրմամբ, այլ բացահայտել դրանց պատճառահետևանքային կապերը: Շերեֆը առաջինն էր թուրք պատմագիրներից, ով իր «Tarih»-ում տեղադրեց ծանոթագրություններ, հղումներ աղբյուրներին, բազմապիսի քարտեզներ: Շերեֆի պատմությունը որոշ մասնագետների կարծիքով «առաջին թուրքական գիտական պատմագրական աշխատությունն էր, որը ստեղծվել էր թուրք հեղինակի կողմից»⁹: Այդ աշխատությունը իր կրկնօրինակումներն է ունեցել նույնիսկ հանրապետական շրջանում¹⁰: Օսմանյան կայսրության բարձրագույն ուսումնական հաստատությունների համար գրված իր մեկ այլ դասագրքում՝ «Cografya-i Umumi»-ում («Ընդհանուր աշխարհագրություն») նա առաջին անգամ շրջանառության մեջ է դնում այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են՝ «Hukümet-i mülterre» (քաղաքական միապետություն), «Hukümet-i meşrûta» (սահմանափակ միապետություն) և «Hükümet-i cumhuriyye» (ժողովրդավարական պետություն), որպես արդի աշխարհում գոյություն ունեցող պետությունների կառավարման տարբեր համակարգեր¹¹:

Արդուրրահման Շերեֆի լուրջ մտավորականի և ազնիվ պաշտոնյայի հեղինակությունը հիմք են հանդիսանում, որպեսզի երիտթուրքական հեղաշրջումից և Սահամանադրության վերահռչակումից հետո նա նշանակվի վսկաա-մյուվիս (1909թ.) և այնուհետև նորաստեղծ «Օսմանյան պատմական ընկերության» (Tarih-i Osmani Encümeni) նախագահ:

Ինչպես նշվում էր «Ընկերության» կանոնադրության մեջ, այն հիմնադրվել էր սուլթան Մեհմեդ Ռեշադի հրամանագրով (irade) և նյութական աջակցությամբ որպես պատմագիտական հանձնաժողով, որի առաքելությունն էր կրթօջախների համար Օսմանյան կայսրության պատմության նոր և համապարփակ դասագիրք պատրաստելը¹²: Այդպիսի պատմության ստեղծման հիմնական նպատակներից էին հայտարարվում պետության բոլոր «էլեմենտներին» (unsurlar)¹³ մեկը մյուսին ճանաչելը, իրար նկատմամբ անվատահոության և ստելության (nefret) հաղթահարումը, «գիտելիքների հորիզոնի ընդլայնումը»: «Ընկերության» ստեղծման մասին հռչակագրում նշվում էր նաև, որ միմյանց և ընդհանուր պատմությանը հաղոր-

դակից լինելով, կայսրության տարբեր ժողովուրդները կզիտակցեն մի պետության մեջ միահամուռ ուժերով գոյատևելու անհրաժեշտությունը և սեր կտածեն ընդհանուր օսմանյան հայրենիքի (vatan-ı müstereke) հանդեպ¹⁴։ Մա, անշուշտ, այն ժամանակվա պաշտոնական գաղափարախոսության օսմանիզմի դրսևորումն էր, գաղափարախոսություն, որով երիտթուրքերը փորձում էին փրկել ազգային-ազատագրական շարժումներից մասնատվող օսմանյան բռնապետությունը։ «Օսմանյան պատմական ընկերության» անդամներ էին ժամանակվա հայտնի հասարակական գործիչներ, պատմաբաններ, հրապարակախոսներ՝ Ստամբուլի թանգարանների վարիչ Հալիլ Էդիսն Էլզեմը, Հնեագիտական հանձնաժողովի նախագահ Ալի Էմիրին, Ստամբուլի համալսարանի դասախոս Մեհմեդ Ֆուադ Ջուփրուլուն, Շենեղդին Սամին և Ահմեդ Ռեֆիկը (Ալթընայ)։ Վերջինս պատկանում է այն թուրք պատմաբանների շարքին, որոնք Առաջին համաշխարհային պատերազմից հետո հանդես եկան աշխատություններով, որոնցում թեև հայերի կոտորածի փաստը չէր ժխտվում, սակայն վիճարկվում էր այդ ոճրագործության կազմակերպված բնույթը, կամ ներկայացվում որպես երկկողմանի բախում¹⁵։

Արդուրահաման Շերեֆի պնդմամբ «Ընկերության» աշխատանքների մեջ ներգրավվեցին նաև ոչ թուրք մասնագետներ՝ Խորհրդարանի պալատի անդամ սերբ Իսկանդեր Յանկո Հուջին, մեջլիսի պատգամավոր հույն Կառուլիդին, Մուտավիդիս Քրիստովուլուսը, հայ լրագրող, «Մարահ» թերթի խմբագիր Տիրան Ջելեքյանը¹⁶։

Շերեֆի համոզմամբ, օսմանյան կայսրության համապարփակ պատմություն գրելու համար անհարժեշտ էր օգտագործել ոչ միայն թուրքական աղբյուրներ, այլ նաև բյուզանդական և հայկական, քանի որ իր մտահղացմամբ, շարադրանքը պետք էր սկսել այն ժամանակաշրջանից, երբ թուրքերը Անատոլիայում հիմնում են առաջին պետությունը (սելջուկներ) և, բնականաբար, առնչվում են «այլ ժողովուրդների պետական միավորումների հետ»¹⁷։ «Ընկերությունը» ձեռնամուխ է լինում նաև սեփական ամսագրի հրատարակմանը։ Ամսագիրը, “Tarih-i Osmanî Encümeni Mecmuası”-ն առաջին թուրքական պարբերականն էր, որն օսմանյան հասարակությանը ծանոթացնում էր արդի պատմագիտական ձեռքբերումների հետ, հրատարակում էր հազվագյուտ փաստաթղթեր, հուշագրություններ, համաշխարհային և սեփական պատմության ակնառու դեմքերի կենսագրություններ։ Պարբերականը լույս էր տեսնում մինչև 1928թ., նրա երկու համարները լույս տեսան արդեն 1930թ.-ին, մոր այբուբենի ներդրվելուց հետո (yeni seri)¹⁸։

«Mecmuası»-ի ամբողջական տեսությունը թույլ է տալիս միանշանակ արձանագրել, որ ոչ թուրք հեղինակների ներկայությունը պարբերականի էջերում զգալիորեն զիջում էր նրանց թուրք համագործակիցների հրապարակումներին։ Նշված փաստը աներկբա բացահայտումն է օսմանիզմի իրական էության, որը թեև հայտարարում էր, որ բոլոր ժողովուրդները կայսրությունում համահավասար են, սակայն իրականում թուրքերն «ամե-

նահավասարն» էին:

Անհրաժեշտ է ընդգծել, որ «Encümen»-ի «Օսմանյան պատմության» նախագիծը, իր բոլոր թերություններով հանդերձ, առաջին և վերջին փորձն էր Թուրքիայի ողջ պատմության ընթացքում, ներկայացնել այն պետության ոչ-թուրք ժողովուրդների մասնագետների մասնակցությամբ: Այդ նախագիծը այդպես էլ երբեք չիրագործվեց:

1913թ.-ին մամուլում լայն քննարկման համար հրապարակվելուց հետո, նախագիծը սուր քննադատության արժանացավ «Türk Yurdu» պանթուրքիստական ամսագրի էջերում¹⁹: Զննադատական հոդվածի հեղինակը, ամենայն հավանականությամբ, Յուսուֆ Աքչուրան էր²⁰: Նա գրում է, որ օսմանյան պատմությունը պետք է ներկայացված լինի որպես ընդհանուր բյուրքական պատմության (türk irki tarih) մի մասը միայն, որ մոռացված է ժողովրդի արարողական դերը պատմության մեջ, որ չի կատարված համապատասխան սոցիալ-տնտեսական վերլուծություն և, վերջապես, ոչ մի տեղ չի հիշատակված «türk» բառը: Հոդվածագիրը առաջարկում էր մաս հանել շարադրանքից այն մասերը, որոնք նվիրված են թուրքերի Փոքր Ասիա և Եվրոպա ներխուժելուց առաջ այստեղ ապրող և պետություններ ունեցող ժողովուրդների պատմությանը: Մա, իհարկե, հետևանք էր Բալկանյան պատերազմից հետո Թուրքիայում ուժգնացող ազգայնական տրամադրություններին՝ օսմանիզմի գաղափարախոսությանը փոխարինում էր պանթուրքիզմը:

«Encümen»-ի նախագահ Աբդուրրահման Շերեֆը կտրականապես դեմ էր նախագծի փոփոխմանը, որի կողմնակիցներից էին Ահմեդ Ռեֆիկը և Ֆուադ Ջյուրիուլուն: Չհամարձակվելով բացահայտորեն հակադրվել նախագահի հեղինակությանը, նրանք մամուլի էջերում երկար վիճաբանություն են սկսում «Ընկերության» կանոնակարգի շուրջ, որի իրական նպատակն էր որպես համահեղինակ (Մեհմեդ Արիֆի հետ, որին համձնարարված էր առաջին հատորի կազմումը) ներգրավել իր ծայրահեղ ազգայնական հայացքներով հայտնի Նեջիբ Ասըմին²¹:

Այդուհետ բանասերկությունները, «Encümen»-ի նախագահի դեմ երկիմաստ դեմարշները սովորական երևույթ դարձան «Ընկերության» աշխատանքում: Գրքի առաջին հատորի հեղինակ Մեհմեդ Արիֆի անապասելի և երկարատև «հիվանդության» պատճառով, աշխատանքը միանձնյա կատարում էր Նեջիբ Ասըմը:

Ի պատասխան սույնամական պալատից հնչող անվերջ ակնարկներին առ այն, որ «Ընկերությանը» տրամադրված գումարները արդյունք չեն տվել պատրաստի աշխատության տեսքով, չուներալով այլընտրանք, «Encümen»-ը հրատարակման է հանձնում Ասըմի հեղինակած գիրքը: Այն լույս տեսավ 1917թ. «Թուրքերի պատմությունը» վերնագրով և լի էր ծայրահեղ ազգայնական և մույնիսկ ռասիստական դատադրություններով: Օրինակ, թուրքերի ամենաարժանի հատկանիշներից էր, ըստ Ն. Ասըմի, նրանց ռազմական տաղանդը, իսկ թուրքերի վարած պատերազմները միշտ կրել են «քաղաքակրթչական» բնույթ, քանի որ առանց պատերազմելու հնարա-

վոր չէր «մշակույթն ու օրենքը տարածել»²²: Այսպիսով, Բալկանները կորցնելուց և Հայկական Հարցը թուրքական ձևով լուծելուց հետո «Էլեմենտներին» ընդհանուր հայրենիքի գաղափարին միտված պատմության դասագիրք ստեղծելը կորցրել էր իր իմաստը:

Ուշագրավ է ևս մի փաստ «Encümen»-ի գործունեությունից: Քանի որ «Ընկերության» առաքելություններից մեկը պատմական հիշարժան փաստաթղթերի հրապարակումն էր, նրան վերապահված էին արտակարգ լիազորություններ՝ պետական կարևորագույն արխիվներից օգտվելու համար (Sadaret Hazine-i Evrakı): Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արդուրախման Երեմիքը պաշտոնական պատմագիր էր (vakaa-nüvis), մա միանձնյա էր կատարում փաստաթղթերի հետ կապված աշխատանքը: 1917թ. ամռանը, երբ Երեմիքը արխիվային ուսումնասիրություններ կատարելու նպատակով մեկնել էր Բեռլին, Ահմեդ Ռեֆիկը «Encümen»-ին անհրաժեշտ և շտապ արխիվային հետազոտություններ կատարելու պատրվակով կարողանում է ստեղծել մի նոր կառույց՝ «Tasnif-i Vesaik-i Tarihiye Encümen» (փաստաթղթերի դասակարգման բաժին ընկերության շրջանակներում): Նման զուգահեռ կառույցի ստեղծումն առաջին հայացքից անիմաստ է թվում: Մակայն, եթե ի նկատի ունենանք, որ Ահմեդ Ռեֆիկը սերտորեն կապված էր «Իթթիհատի» հետ, և որ 1917թ. արդեն ակնհայտ էր Թուրքիայի պարտությունը Առաջին աշխարհամարտում, պատճառաբանված ենք համարում երիտթուրքերի՝ ոչ իրենց լիազորության տակ գտնվող փակ պետական արխիվներին հասու լինելու ցանկությունը: Մեր այս ենթադրությունը հիմնված չէ որևէ որոշակի աղբյուրի վրա, սակայն երիտթուրքերի պարագլուխների փախուստից առաջ փաստաթղթերի «դասակարգման», այսինքն՝ զտման խնդիրը իրենց կուսակցության համակիրին հանձնարարելը միանգամայն տրամաբանական է թվում:

Ձևակառույթն Երեմիքը «Encümen»-ի նախագահ մնաց մինչև իր կյանքի վերջը (1925թ.), սակայն այնտեղ գործնականում տիրում էին ծայրահեղ ազգայնական հայացքներ ունեցող պատմաբանները՝ Ահմեդ Ռեֆիկը, Նեջիբ Ասըմը, Ֆուադ Բյուրուլուն և Յուսուֆ Աքչուրան, որն այդ ժամանակահատվածում նույնպես դարձավ «Ընկերության» անդամ: «Mecmua»-ի այդ տարիների հրապարակումներից շատերը զուտ քաղաքական բնույթ էին կրում, մինչդեռ Երեմիքի կարծիքով, իրադարձություններին պատմական, այլ ոչ թե քաղաքական գնահատական տալու համար, դրանց պետք է անդրադառնալ 30 տարուց ոչ շուտ²³:

Մեր կարծիքով Երեմիքը երբևէ համակրանք չի տածել երիտթուրքերի նկատմամբ, համարելով նրանց «devrimci» (հեղափոխական) և կիսելով իր ուսուցիչ Ահմեդ Ջադեթի այն գնահատականը, որ նրանք երկրում «խառնաշփոթ» ստեղծող «արիկաներ» (alcaklar) և «թափառականներ» (serseri) են²⁴:

Իր պատմագրական գրառումներում Երեմիքը անդրադարձել է նաև «Մարտի 31» դեպքերին և 1909թ. Ադանայի ջարդերին²⁵: Ինչպես հայտնի է, «Իթթիհատականները», որոնք այդ ջարդերի կազմակերպիչներն էին, փոր-

ծում էին դրանք պատճառաբանել հայերի, իբր, դավադրության մեջ ներգրավվածությամբ: Շերեֆը, որն ամիջականորեն մասնակցել էր այդ հարցը հատուկ ուսումնասիրող կառավարական հանձնաժողովի զեկույցի նախապատրաստական աշխատանքներին, գրում է, որ հայերը քանիցս ապացուցել են Օսմանյան հայրենիքի հանդեպ իրենց տածած մվիրվածությունը (derkâr olan sadakatları ...) և զոհ են գնացել անհիմն «կասկածների և զրգոթյունների»: Պատմագիրը նշում է նաև, որ այդ զեկույցի տակ ստորագրել են կառավարության մի շարք անդամներ: Սակայն, ինչպես արդարացի նկատում է Վ. Դադրյանը Ադանայի ջարդերին մվիրված իր անդրադարձում, այնտեղ ոչ մի ակնարկ չկար առ այն, «թե եթե հայերը անպարտ էին հապա ուլքե²⁶» էին յանցապարտները²⁶:

Արդուրրահման Շերեֆը բացասական զնահատական է տվել նաև օսմանյան Սահմանադրության «հայր» Ահմեդ Միդհաթ-փաշային, ներկայացնելով նրան որպես դավադրության և արյան գնով իշխանության հասած մի գործչի²⁷:

Արդուրրահման Շերեֆի վերջին պատմագրական աշխատությունը նրա «Ջրույցներ պատմության մասին» գիրքն էր²⁸: Այն Շերեֆի 1921-1922թթ. «Sabah» և «Vakit» օրաթերթերի համար գրված հոդվածների ժողովածու էր, «ինչ են տեսել, ինչ են լսել» վերտառությամբ և մվիրված էր հիմնականում 19-րդ դարի պատմությանը: Թուրքիան համեմատելով «երբեմնի հզոր, բայց ներկայումս ծերացած և ատամները թափած առյուծի» հետ և փորձելով բացատրել Թանզիմաթի շրջանի բարեփոխումների անհաջողությունները Շերեֆն ինքն իրեն հարց է տալիս. իսկ կարո՞ղ էին նման դեղահաբերը (բարեփոխումները Ա.Հ.) փրկել «հիվանդին»: Նրա կարծիքով Թուրքիայի փրկության ճանապարհը «քաղաքակրթության ուղին բռնելն էր» (medeniyet): Շերեֆը չի բացահայտում, սակայն, թե ինչ է նա հասկանում «քաղաքակրթության ուղի» ասելով: Արդուրրահման Շերեֆի այս աշխատության մեջ առավել ցայտուն է զգացվում արաբ անվանի պատմագիր-փիլիսոփա Իբն-Խալլունիի հայացքների ազդեցությունը²⁹: Ինչպես գրում է թուրք հետազոտող Թ. Աքչամը, նման տրամադրությունները բնորոշ էին 20-րդ դարասկզբի օսմանյան մտավորականներին, որոնց մեջ կանխորոշված կործանման սպասումը միախառնվում էր նաև իբն-Խալլունյան «աստվածային միջամտությամբ» փրկությանը հասնելու հույսերի հետ³⁰:

Մեր կարծիքով հենց նման տրամադրությունների լույսի ներքո է պետք դիտարկել Արդուրրահման Շերեֆի՝ կյանքի վերջին տարիներին քեմալականների հետ մերձեցումը, և ո՛չ թե նրա հետևողական հանրապետական (cumhuriyetçi) լինելու հանգամանքով, ինչպես դա փորձում են ներկայացնել որոշ թուրք պատմաբաններ³¹:

Արդուրրահման Շերեֆի անձը Քեմալ Աթաթուրքի ուշադրությունը գրավում է այն բանից հետո, երբ Շերեֆը, լինելով Ռիզա-փաշայի կաբինետի անդամ, հրաժարվում է իր ստորագրությունը դնել «Ազգային ուխտով» (Milli Misak) պայմանավորված Թուրքիայի սահմանները որոշող փաստաթղթի տակ³²: «Ես արդեն մի ոտքով գերեզմանում եմ,-ըստ Մինա Աքչինի

ասում է Շերեֆը,- սրանից հետո ինձ խայտառակ անող որևէ փաստաթղթի տակ չեմ դնի իմ ստորագրությունը»³³: Միևնույն ժամանակ Անատոլիայում գործող ազգայնական շարժման ղեկավարները ամեն կերպ փորձում էին քողարկել այդ շարժման կապը մախսկին իթթիհադականների հետ³⁴:

Քենալ Աբաթուրբը, կարևորելով Շերեֆի նման հեղինակավոր և «մաքուր» կենսագրություն ունեցող մարդու իրենց շարքերի մեջ ներգրավելու խնդիրը, մամակ է գրում վերջինիս, հրավիրելով նրան մասնակցել սկզբում Միվասի, իսկ այնուհետև երկրորդ գումարման ԹԱՄԺ-ի աշխատանքներին: Ձեռքի Բայարի հուշագրությունների համաձայն, նրա 1923թ. քննարկվում էր նորաստեղծ պետության կառավարման ձևը, Աբաթուրբի Չանկայա պալատում ներկա էր նաև Արդուրրահման Շերեֆը: Պետության կառավարումը ժողովրդի ձայնով ընտրված մախսազահին հանձնելը, ըստ Շերեֆի, ամենախմաստուն որոշումը կարող է լինել: «Պետության ամունը հստակ է, դա Հանրապետությունն է», - եզրահանգում է Շերեֆը: Այնուհետև ինքն իրեն հեզնելով, ավելացնում, որ ինքն էլ չէր պատկերացնում, թե այդ աստիճան «հանրապետական» է (cumhuriyetçi)³⁵:

Այսպիսով, Արդուրրահման Շերեֆը թուրք պատմության մեջ մտավ որպես նորաստեղծ պետության «անվանադիր» (doğan çocuğun adını koyan):

Հատկանշական է, որ վերջին տարիներին Թուրքիայում ծավալվող իսլամականների և քեմալականների ինտելեկտուալ վիճարարություններում հաճախ է շահարկվում Շերեֆի անունը, որն ի դեպ երկար ժամանակ մոռացության էր մատնված: Իսլամականները շեշտը դնում են նրա պատմա-փիլիսոփայական հայացքների վրա, որոնք համահունչ են «անատոլիական խճանկարի» իրենց կոնցեպտին, քեմալականներն իրենց հերթին՝ նրա կարճատև հանրապետական գործունեության վրա: Մեր կարծիքով, այդ ակնառու թուրք պատմաբանը և պետական գործիչը իր ժամանակի արդյունքն էր, նրա մեջ միախառնված էին առաջադեմ ու հետադիմականը և, իհարկե, մաքուր մտավորական էր իր թուրք դրսևորումներում: Արդուրրահման Շերեֆի կյանքի, աշխատությունների և գործունեության օբյեկտիվ լուսաբանումը առավել հասկանալի են դարձնում Թուրքիայի պատմության 19-րդ դարի վերջի 20-րդ դարասկզբի բեկումնային դարաշրջանի առանձնահատկությունները:

ANUSH HOVHANNISJAN

ABDURRAHMAN SHEREF. FROM TANZIMAT TO REPUBLIC

The article is dedicated to the analyses of the biography of Abdurrahman Sheref, the last chronist of the Ottoman Empire. His life (1853-1925) and activities coincided with the crucial period of the Turkish history, marked with the decline of Empire, Ittihadist bloody adventurous rule, Kemalist nationalist movement and declaration of Turkish Republic. All these events among others had their effect on the

foundation of Turkish national historiography too.

The main place in the article is devoted to the conflict between Ottomanist and Pan-Turkist views on history in “Tarih-i Osmanî Encümeni”, which was headed by Sheref at the time. Sheref’s project to prepare a new general history of the Ottoman Empire, including the history of non-Turk peoples, in accordance with the doctrine of Ottomanism seeking to break the barriers between the various communities, was the first but failed attempt in Turkish historiography. From that time Turkist and Pan-Turkist views became the mainstream of Turkish history-writing of that period.

The analyses of Abdurrahman Sheref’s ideas can help to have a more complete picture of that important period in the history of Turkey.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. 18-րդ դարից սկսած օսմանյան տարեգրությունը կապվում է պետական պաշտոնի հետ, քանի որ կառավարության կողմից նշանակում են հատուկ պատմագիր-տարեգիրներ՝ վակաա-նյուվիսներ
2. Հողվածում օգտագործված աղբյուրներից շատերը առաջին անգամ են դրվում գիտական շնչամատուցման մեջ: Դրանք օսմաներեն են, ուստի տպագրման տարեթիվը ներկայացվում է մուսուլմանական տարեգրությամբ:
3. St’u M. H. Ynanç, Abdurrahman Şeref Efendi, Türk Tarih Encümeni Mecmuası, No. 1, Mayıs, İstanbul, 1341; M. Demiryörek, Ötmenün 78. yılında son vakantüs Abdurrahman Şeref Efendi ve Cumhuriyet, “Milli Eğitim”, 2003, <http://yayim.meb.gov.tr/dergiler/> 158; Abdurrahman Şeref, <http://www.ottoman-historians.com/seref/>.
4. Ulem’ մուսուլմանական գիտնական-աստվածաբան:
5. Այդ առումով Նիզամիյե Օսմանյան կայսրության այն երկրամասն էր, որը «մասախարաթում էր» կենտրոնը եվրոպական գրքերով: Մոհամեդ Ալիի կառավարման տարիներից սկսած Նիզամիյեում սկիզբ առավ եվրոպական հեղինակների պատմագիտական աշխատությունների կայսրության պաշտոնական լեզվով՝ օսմաներենով թարգմանելու և հրատարակելու գործը: St’u Jamal el-din el-Shayyal, Historiography in Egypt in the nineteenth century, in “Historians of the Middle East”, New York – Toronto, 1962, pp. 403-421.
6. St’u E. Kuran, Ottoman Historiography of the Tanzimat Period, in “Historians of the Middle East” ... pp. 422-429.
7. Մասնավորապես Գ. Այվազովսկի, Պատմություն օսմանյան պետության, Հ. Ա. Բ., Վենետիկ, 1841: St’u Ե. Սարգսյան, Հայ բուրժուազիստությունը XIX դարում և XX դարասկզբին, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. X, Երևան, 1979, էջ 241-267:
8. А. Желтяков, Ю. Петросян, История просвещения в Турции, М., 1961, с. 82.
9. F. Babinger, Die Geschichtsschreiber der Osmanen und ihre Werke, Leipzig, 1927, s. 405.
10. E. Kuran, Ottoman historiography ..., p. 425.
11. Պետք է նշել, որ այդ հասկացությունները վաղուց արդեն հայտնի էին Թուրքիայի քրիստոնյա ժողովուրդներին, մասամբ էլ լուսարևակված էին բուրժուական մամուլի էջերում, իհարկե, մինչև արդարամիտյան զրաբնության կողմից արգելվելը: Մակայն դասագրքերում դրանց հայտնվելը միանգամայն անմախաղիչ երևույթ էր: St’u A. Желтяков, Печать в общественно – политической и культурной жизни Турции, М., 1972; Ю. Петросян, Турецкая публицистика эпохи реформ в Османской империи (конец XVIII- начало XX в.) М., 1985.
12. Tarih-i Osmanî Encümeni Mecmuası (այսուհետ՝ TOEM), No. 1, 1 Nisan 1326, s. 2.
13. Խոսքը գնում է կայսրության տարածքում բնակվող տարբեր ժողովուրդների մասին:
14. Ifade-i Meram, TOEM, No 1, 1 Nisan 1326, s. 2.
15. «Ցեղասպանություն» եզրը այն ժամանակ չկար: Ahmed Refik, “Kavkasya yollarında” -

- "İki komite, iki kital", տե՛ս «Հայկական հարց», Երևան, 1996, էջ 275-277:
16. Սույն հոդվածում մենք չենք անդրադառնում Տ. Ջեղեղյանի հայացքներին և գործունեությանը: Նրա մասին տե՛ս Z. Toprak, Diran Kelekyan, Fransız Devrimi ve Mülkiye Mektebi, "Tarih ve Toplum", İst., 1989, cilt 12, sayı 67, s. 39-41; Ա. Ավագյան, Տիրան Ջեղեղյանը և օսմանյան ազգայնականությունը, «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», No. 12, Երևան, 2006, էջ 112-120:
 17. Բյուզանդական թագավորությունից բացի անշուշտ, ենթադրվում է, որ պետք է խոսվեր նաև Անիի հայկական թագավորության մասին: Հայերը, սակայն, հիշատակվում են լիկ որպես տեղաբնակ ժողովուրդներից մեկը, բանի որ դեռևս Արդու Համիդ II ժամանակ արգելված էր պատմության և աշխարհագրության վերաբերյալ «Հայաստան» և նման անունների հիշատակումը: Տե՛ս Ա. Փափագյան, Թուրքական վավերագրերը Հայաստանի և հայերի մասին (16-19 – դարեր), Երևան, 1999, էջ 237:
 18. «Ընկերությունը» բնկ դադարեցրեց իր գործունեությունը 1928թ, բայց, փաստորեն, մրա իրավահաջորդը դարձավ հանրապետական Թուրքիայում Զեմալ Արաթուրիի կողմից ստեղծված «Türk Tarih Kurumu»-ն («Թուրքական պատմական ընկերությունը»):
 19. Köçak Muhtıra, "Türk Yurdu", c. 4, No. 23, 1913.
 20. H. Akbayrak, Tarih-i Osmanî Encümeni'nin "Osmanlı Tarihi" yazma serüveni, "Tarih ve Toplum", No. 42, 1987, s. 47.
 21. Ahmed Refik, Encümen Raporu, TTEM, No 19, s. 161-165.
 22. Տե՛ս А. Оганесян, К истории зарождения националистического (тюркистского) направления в турецкой историографии (конец XIX – начало XX вв), «Լրարեր հասարակական գիտությունների», No. 2, Երևան, 1996, էջ 74-79; Ա. Հովհաննիսյան, Ռախվե և ցեղասպանություն, «1915թ. հայոց ցեղասպանությունը (պատմության և պատմագրության հարցեր)», Երևան, 1995թ., էջ 41:
 23. Abdurrahman Şeref, <http://www.ottomanhistorians.com/seref>
 24. T. Akçam, Türk Ulusal Kimliği ve Ermeni Sorunu, İstanbul, 1992, s.39.
 25. Abdurrahman Şeref, 31 Mart Olayı, Adana vaka'sı, <http://www.ottomanhistorians.com/seref>: «Մարտի 31»-ի դավադրության մասին տե՛ս В. Шпилькова, Младотурецкая революция (1908-1909 гг.), М., 1977, с. 221-239.
 26. Վ. Տառքեան, Հայկական Ցեղասպանությունը Խորհրդադաճային եւ Պատմագիտական Զեմարկումներով, Berkley-Massachusetts, 1995, էջ 112:
 27. А. Оганесян, Турецкий историк о политических событиях 1876-1878 гг. в Османской империи, «Մերձավոր Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. XVI, Երևան, 1996, էջ 143-149:
 28. Adurrahman Şeref, Tarih Musahabeleri, İstanbul, 1339.
 29. Իբն-Խալլունի կարծիքով պետությունները, ինչպես և մարդիկ, ունենում են կյանքի (գոյատևման) տարբեր ժամանակաշրջաններ՝ երիտասարդություն, ծաղկում չրջան, ծերություն և մահ, տե՛ս F. Rosental, The influence of the biblical tradition on Muslim Historiography, in "Historians of the Middle East", p. 40.
 30. T. Akçam, Türk Ulusal Kimliği ..., s. 56.
 31. M. Demiryörek, Olımtının 78. yılında...
 32. М. Гасратян, С. Орешкова, Ю. Петросян, Очерки истории Турции, М., 1983, с. 168.
 33. M. Demiryörek, Olımtının 78. yılında ...
 34. Հետազոտող Յուրիերի կարծիքով, «թուրք ազգային շարժումը... իբրիհայական անցյալ ունեցող տարբեր կազմակերպությունների և անձների գործունեության արդյունք էր», տե՛ս E. Zürcher, The Unionist Factor. The role of Committee of Union and Progress in the Turkish National Movement 1905-1926, Leiden, 1984, p. 118.
 35. M. Demiryörek, Olımtının 78. yılında ...

**ԹՈՒՐԶ-ԱՐԻՔԵԶԱՆԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐՆ ԱՐԻՔԵԶԱՆԻ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ
ԲԱՐԵՓՈՆՈՒՄՆԵՐԻ ԸՐԶԱՆԱԿՈՒՄ**

Աղյուսակի կառավարությունն ակտիվ քայլեր է ձեռնարկում երկրի զինված ուժերի ոլորտում բարեփոխումների իրականացման ուղղությամբ, ինչը նպատակ է հետապնդում դրանք ընդհանուր առմամբ համապատասխանեցնել ՆԱՏՕ-ում առկա չափանիշներին: Աղյուսակի ռազմական բարեփոխումներն իրականացվում են Հյուսիսատլանտյան դաշինքի Անհատական Գործընկերության Գործողությունների Շրջագրին (IPAP-Individual Partnership Action Plan-այսուհետ՝ ԱԳԳՏ) Աղյուսակի մասնակցության շրջանակներում: Առաջիկայում նախատեսվում է ստորագրել 2007-2009 թթ. գործողության մեջ մտնող ԱԳԳՏ երկրորդ ծրագիրը¹: Նորմալ ընթացքի պայմաններում նախատեսված է աղյուսակի բանակի ամբողջական վերափոխումները ՆԱՏՕ-ի չափանիշներին ավարտին հասցնել 2015 թ.: Աղյուսակի բանակի բարեփոխումների իրականացման գործում լուրջ դերակատարություն է փորձում ապահովել Թուրքիան: Աղյուսակի բանակի բարեփոխումների գործընթացում բուրքական զինվորական շրջանակները պետք է անմիջական դերակատարություն ունենան աղյուսակի զինվորների կրթության, սպայական կազմի վերապատրաստման եւ բանակային կառուցվածքը ՆԱՏՕ-ի չափանիշներին վերափոխելու խնդրում: Թուրքիայի համար աղյուսակի բանակի բարեփոխումների ծրագրերը առաջին հերթին ելնում են իր ռազմավարական շահերի դիրքերից՝ ձգտելով «եղբայրական երկրի» ռազմական համակարգում ապահովել իր անմիջական ազդեցությունը:

Թուրք-աղյուսակի ռազմական համագործակցությունը բուռն կերպով սկսեց զարգանալ 90-ական թվականների կեսերից: Երկու երկրների միջև ռազմական եւ ռազմատեխնիկական համագործակցության խնդիրները կարգավորվում են հիմնականում 1996 թ. հուլիսի 10-ին Անկարայում ստորագրված «Ռազմական կրթության, տեխնիկական եւ զինական համագործակցության» մասին պայմանագրով, 2001թ. մարտին ստորագրված «Աղյուսակի եւ Թուրքիայի կառավարությունների միջև փոխադարձ ռազմական օգնության» մասին համաձայնագրով եւ «Աղյուսակի պաշտպանության նախարարության եւ Թուրքիայի ԶՈՒ գլխավոր շտաբի միջև նյութական օգնության» վերաբերյալ արձանագրությամբ²: Թուրքական կողմը բավականին մեծ ներդրում է ունեցել աղյուսակի բանակի կայացման եւ ամրապնդման գործում, ինչը դրսևորվել է ինչպես զինվորական կադրերի պատրաստման, ուսուցանման, այնպես էլ տարբեր տիպի սպառազինության եւ ռազմական տեխնիկայի եւ ֆինանսական օժանդակության տրամադրման ձևով: 2005 թ. Աղյուսակի կառավարած այցի ընթացքում Թուրքիայի պաշտպանության նախարար Վեջդի Գյոնուլը հանդի-

պումներից մեկի ժամանակ նշել է, որ Թուրքիայի կողմից Ադրբեջանին հատկացված ռազմական օգնությունն ընդհանուր առմամբ կազմել է ավելի քան 170 մլն դոլար³։ Նշված թիվը իրականում չի համապատասխանում իրականությանը, քանի որ թուրքական ռազմական օժանդակության դրսևորումներն ավելի մեծ զուամրների են հասնում։ Ադրբեջանի անկախությունից հետո Թուրքիայի ռազմական տեխնիկայի եւ տարբեր ռազմական օժանդակությունը զգալիորեն մեծ է եղել հատկապես Նախիջևանում, ինչը հաստատել է նաեւ ադրբեջանական ռազմական փորձագետ Ուեյր Ջաֆարովը⁴։

1990-ական թթ. սկզբին, դեռեւս չունենալով ռազմական համագործակցության վերաբերյալ երկկողմ պայմանագրեր, այնուամենայնիվ Ղաբաբադյան հակամարտության ընթացքում Թուրքիան զգալի ռազմական աջակցություն ցույց տվեց Ադրբեջանին՝ փորձելով ապահովել այդ երկրի լիակատար հաղթանակը։ Խախտելով միջազգային կոնվենցիաներն ու նորմերը, Թուրքիան, թե ոչ անմիջական, սակայն Ադրբեջանին տրամադրված լայնածավալ ռազմական օժանդակությամբ փորձում էր ազդել պատերազմի վերջնական ելքի վրա⁵։ Ադրբեջանին ռազմատեխնիկական օժանդակությամբ զուգահեռ թուրքական զինվորական շրջանակները սկսեցին մեխանիզմներ մշակել ադրբեջանական բանակի կազմավորմանն աջակցելու համար։ Թուրքիայում մշակվեց համապատասխան ծրագիր՝ մինչեւ 1995 թ. բանակի արդիականացման նպատակով, որի համար թուրքական կողմը պետք է հատկացներ շուրջ 300 մլն դոլար։ Նախատեսվում էր թուրքական բանակի պահուստային սպաների կազմից Ադրբեջան գործուղել շուրջ 3 հազար զինվորական մասնագետների եւ հրահանգիչներ⁶։

Այն, որ Ադրբեջանը գտնվում է Թուրքիայի աշխարհաքաղաքական գերակայությունների տիրույթում, հետեւում է Թուրքիայի զինված ուժերի ցամաքային զորքերի գլխավոր հրամանատար Իլքեր Բաշբուրդի՝ 2005 թ. զարմանը Ադրբեջան կատարած այցի ժամանակ հնչեցրած այն հայտարարությունից, որ «Ադրբեջանը Թուրքիայի համար եզակի է բոլոր առումներով եւ եզակի է նաեւ ռազմական համագործակցությունը»։ Թուրք բարձրաստիճան զինվորականը Ադրբեջանի գործընկերներին վատահեցրել է, որ Թուրքիան ադրբեջանական բանակի վերակազմավորման գործում ապահովելու է լուրջ աջակցություն⁷։ Վերջին շրջանում ակտիվացան երկու երկրների միջեւ բարձրաստիճան զինվորականների փոխայցելություններն ու համատեղ միջոցառումները։ Նկատվում է ռազմական ոլորտում թուրք-ադրբեջանական համագործակցության աշխուժացում, ինչը հիմնականում ուղղված է ԱԳԳԾ շրջանակներում ադրբեջանական բանակի բարեփոխումներում Թուրքիայի կողմից աջակցության տրամադրմանը։ Ակտիվացան թուրք բարձրաստիճան զինվորականների այցելությունները Ադրբեջան տեղում գնահատելու եւ քննարկելու բարեփոխումների հիմնական ուղեգծերն ու ոլորտները։ 2007 թ. մարտի սկզբին Ադրբեջան այցելած Թուրքիայի ՋՈՒ գլխավոր շտաբի երկրորդ պետ Էրգին Մայգունը ադրբեջանցի գործընկերների հետ քննարկել է երկու երկրների միջեւ ռազմական

համագործակցության խնդիրներն ու անելիքները՝ հավաստիացնելով, որ Թուրքիան իր ակտիվ ներդրումը կապահովի ադրբեջանական բանակի վերակազմավորման գործում: Թուրք բարձրատիժան զինվորականը երկու երկրների ռազմական համագործակցության մեջ առանցքային է համարել հատկապես զինվորական կադրերի վերապատրաստման եւ կրթության հարցերը⁸: Այցի շրջանակներում Ադրբեջանի պաշտպանության մախարարության եւ Թուրքիայի ՁՌԻ գլխավոր շտաբի միջեւ համագործակցության զարգացման վերաբերյալ փաստաթուղթ ստորագրվեց⁹: Նույն ժամանակահատվածում Ադրբեջան այցելած Թուրքիայի ՁՌԻ ցամաքային զորքերի հրամանատար Իլքեր Բաշրուղը տեղում ծանոթանալով ադրբեջանական բանակի զարգացման եւ բարեփոխումների ընթացքին, ԱԳ-ԳՄ շրջանակներում ՆԱՏՕ-Ադրբեջան համագործակցության խնդիրներին՝ վերստին հաստատել է Թուրքիայի կողմից Ադրբեջանի ՁՌԻ բարեփոխումների գործում ցուցադրվելիք աջակցության շարունակականությունը¹⁰:

Բանակի բարեփոխումների այդ գործընթացն արագացնելու եւ առավել սահուն տանելու նպատակով մախսատեակում է ադրբեջանական ՁՌԻ եւ պաշտպանության մախարարության համակարգում որպես խորհրդականներ նշանակել մի խումբ թուրք բարձրատիժան զինվորականների: Ադրբեջանական մամուլի համաձայն՝ Ադրբեջանում պատրաստվում են պաշտպանության մախարարի օգնական նշանակել Թուրքիայի ՁՌԻ մի գեներալի, իսկ նրան եւ նրա հետ Թուրքիայից եկած խմբին լայն իրավասություններ եւ աշխատելու թույլտվություն կտրվի: Ենթադրվում է, որ մինչեւ 2011թ. այդ աշխատանքներում ծառայություն կկատարեն Թուրքիայի զինված ուժերի եւս մի խումբ գեներալներ¹¹: Բացի այդ մախսատեակում է ստեղծել թուրք-ադրբեջանական համատեղ ռազմական հանձնաժողով, որն էլ իրավասություն կունենա ծրագրել եւ մշակել ադրբեջանական բանակի բարեփոխումների գործընթացը՝ այն համապատասխանեցնելով ՆԱՏՕ-ական չափանիշներին: Ադրբեջանի զինվորական շրջանակները իրենց թուրք գործընկերներից հիմնականում աջակցություն են սպասում ՆԱՏՕ-ի չափանիշներին համապատասխան ռազմական ուսուցման, ռազմական գործողություններում տեխնոլոգիաների կիրառման եւ ռազմական ոլորտում նորամուծությունների ներդրման հարցերում¹²: Հարկ է նշել, որ հենց թուրք զինվորականների գործում աջակցությամբ կատարվեց Բաքվի սովորական ուսումնարանի վերակազմավորումն ու դրա վերափոխումը ՆԱՏՕ-ական չափանիշներին: Թուրքիայի բարձրագույն ռազմական հաստատություններում, զինվորական ուսումնարաններում, տարբեր հատուկ դասընթացներում ուսումնառություն են անցել ադրբեջանական ՁՌԻ 1137 ներկայացուցիչ, 2006 թ. ընթացքում 121 զինվորական շարունակել են ուսումնառության մեջ գտնվել: Ադրբեջանցի սպաները ամեն տարի մասնակցում են Թուրքիայում անցկացվող «Mehmetcik», «Deniz Aslanı», «Karadeniz Ortaklık» անունները կրող զինավարժություններին: Թուրքական կողմը օժանդակություն է տրամադրում նաեւ ադրբեջանական խաղաղաբար ուժերին, որոնք թուրքական զորակազմում ծառայություն են կատարում Կո-

սովորյում եւ Աֆղանստանում¹³։ Ներկայումս Ադրբեջանի ներքին գորքերի (այսուհետ՝ ՆՁ) հրամանատարին կից ծառայություն է կատարում թուրք բարձրաստիճան զինվորական Ավնի Յըղդըզը, որը համակարգային եւ խորհրդատվական ծառայություն է իրականացնում։ Համաձայն 1997 թ. ադրբեջանական ՆՁ եւ թուրքական ժանդարմերիայի միջեւ ստորագրված արձանագրության՝ ամեն վեց ամիսը մեկ Ադրբեջանի ՆՁ հրամանատարի խորհրդական է նշանակվում թուրք զինվորական, որը համակարգում է ՆԱՏՕ-ական չափանիշներին համապատասխան ուսումնակրթական կատարելագործման գործընթացը¹⁴։ Դեռեւս 2006 թ. դեկտեմբերին Բաքու այցելեց Թուրքիայի ժանդարմերիայի հրամանատար Ըշըք Քոշաները, որի այցը կապված էր ադրբեջանական ՆՁ զինծառայողների կադրային վերապատրաստման եւ ուսումնառության կազմակերպման խնդիրների հետ։

Ամենայն հավանականությամբ թուրք զինվորական շրջանակներն իրենց դերակատարությունը կունենան նաեւ առաջիկայում ընդունվելիք Ադրբեջանի պաշտպանական հայեցակարգի հիմնական ռազմավարական ուղեգծերի սահմանման մեջ։ Ի դեպ, Ադրբեջանում պատրաստվող եւ դեռեւս մշակման փուլում գտնվող պաշտպանական հայեցակարգը նախատեսում է տոտալ (համընդհանուր) պաշտպանության սկզբունքը¹⁵։

Ադրբեջանական բանակում թուրք զինվորական խորհրդականների գործունեությունը ինքնին նորություն չէ։ Դեռեւս 1992 թ. Դարաբադյան պատերազմի ժամանակ տասնյակ թուրք զեներալներ եւ բարձրաստիճան զինվորականներ ամիջական մասնակցություն են ունեցել ռազմական գործողությունների մշակման եւ ադրբեջանցի զինվորների վարժեցման գործում¹⁶։ Երկու երկրները համագործակցում են նաեւ հետախուզական ծառայությունների միջեւ տեղեկատվության փոխանակման ոլորտում։ 2007 թ. սեպտեմբերին Բաքու այցելեց թուրքական ռազմական պատվիրակություն՝ Թուրքիայի ՋՈՒ գլխավոր շտաբի հետախուզական վարչության պետ, զեներալ Մյունիր Էրթենի գլխավորությամբ, որի արդյունքում քննարկվել են ռազմական հետախուզության ոլորտում երկկողմ համագործակցության խնդիրները¹⁷։ Գրեթե նույն ժամանակահատվածում Ադրբեջան այցելեց նաեւ Թուրքիայի Ներքին գործերի նախարարության ավիաներձ պահպանության հրամանատար Ջան Էրենօղլուի գլխավորած զինվորական պատվիրակությունը։ Այցի շրջանակներում քննարկման են դրվել երկկողմ հետաքրքրություն ներկայացնող հարցերը, հետագա ռազմական համագործակցության խնդիրները։ Երկու երկրների համապատասխան կառույցների մեջ ստորագրվեց երկկողմ համագործակցության մասին արձանագրություն¹⁸։

Երկկողմ ռազմական հարաբերությունների զարգացման նպատակով նախատեսվում է ակտիվացնել նաև համագործակցությունը երկու երկրների ռազմաարդյունաբերական համալիրների միջեւ։ Թուրքիայի իշխանություններն ու հատկապես զինվորական շրջանակները քայլեր են ձեռնարկում Ադրբեջանի հետ համատեղ ռազմաարդյունաբերական ոլորտում համագործակցության ծավալման ուղղությամբ։ Բաքվում Թուրքիայի

դեսպան Թուրան Մորալը 2006թ. հայտարարեց, որ իր երկիրը մասնակցությունն է ունենալու Ադրբեջանի ռազմաարդյունաբերական համալիրի ստեղծման գործում՝ նշելով, որ ծրագրվում է ռազմական մեքենաշինության ոլորտում համատեղ նախագծերի մշակում, քանի որ առկա են բոլոր մեխանիզմները Թուրքիայի և Ադրբեջանի միջև ռազմական դաշինք ձևավորելու համար: Թուրք դեսպանը նշել էր, որ ամերաժեշտության դեպքում Թուրքիան ըստ արժանվույն կգնահատի ստեղծված իրավիճակն ու ամերաժեշտ քայլեր կձեռնարկի այդ ոլորտում¹⁹: Ադրբեջանական մամուլի համաձայն՝ մոտ ժամանակում թուրքական «Aselsan» եւ «Roketsan» ռազմաարդյունաբերական ընկերությունները²⁰ համագործակցության կոնկրետ ծրագրեր կառաջարկեն Ադրբեջանի նորաստեղծ պաշտպանական արդյունաբերության նախարարությանը՝ ռազմական տեխնոլոգիաներ վաճառելու փոխարեն համատեղ արտադրության առաջարկներ կներկայացնելով Ադրբեջանին²¹: 2007 թ. մայիսին ադրբեջանական զինվորական պատվիրակությունը պաշտպանության նախարար Սաֆար Աբիեի եւ ռազմաարդյունաբերության նախարար Յավեր Ջամալովի գլխավորությամբ մասնակցեցին Անկարայում անցկացված 8-րդ միջազգային ռազմաարդյունաբերական ցուցահանդեսին, որը կարելի է ասել առաջին գործնական քայլն էր թուրքական ռազմական արդյունաբերական արտադրանքին ծանոթանալու եւ համատեղ ծրագրեր մշակելու ուղղությամբ²²: Դեռեւս 2005 թ. դեկտեմբերին Ադրբեջանի նախագահի հրամանագրով ստեղծվեց Ռազմաարդյունաբերության նախարարություն, որը պետք է ադրբեջանական բանակի համար ամերաժեշտ սպառազինություն եւ զինտեխնիկա արտադրի: Չնայած արդեն գործող նախարարության գոյությանը եւ հատկացվող մեծ գումարներին, այնուամենայնիվ այն դեռեւս կայացման լուրջ գործընթաց պետք է անցնի: 2007 թ. ռազմական բյուջեով Ռազմաարդյունաբերության նախարարությանը հատկացվել է շուրջ 114 մլն դոլար: Նախատեսվում է, որ այդ հատկացված գումարները նպատակ ունեն վերականգնել արդեն Ռազմաարդյունաբերության նախարարության ենթակայության տակ գտնվող մի շարք գործարանների գործունեությունը, ինչպես օրինակ՝ «Ալիսազրեզաու», «Ուլդուզ», «Ազոն» եւ այլն: Արդեն իսկ բանակցություններ են վարվում Թուրքիայի, Ուկրաինայի, Բելառուսի, Ռուսաստանի, Իսրայելի, Ռումինիայի եւ Պակիստանի համապատասխան գերատեսչությունների հետ՝ համատեղ կոնկրետ ծրագրերի իրագործման ուղղությամբ: Ադրբեջանական կողմը, հատուկ ուշադրություն է դարձնում հատկապես Թուրքիայի Պաշտպանական արդյունաբերության քարտուղարության հետ ամուր համագործակցությանը, ինչի համար շահագրգռված է նաեւ թուրքական կողմը: Ռազմաարդյունաբերության ոլորտում համագործակցության ակտիվացում է նկատվում նաեւ Պակիստանի հետ, որի հետ Թուրքիան ունի ռազմատեխնիկական համագործակցության ամուր բազա²³: Ադրբեջանի նորաստեղծ ռազմաարդյունաբերական համալիրի կայացման եւ զարգացման գործում իր լուրջ դերակատարությունը կունենա Թուրքիան, որն արդեն լուրջ հաջողություններ է գրանցել այդ ոլորտում: Բացի այդ, թուրքա-

կան կողմի աջակցությամբ աղդբեջանի նորաստեղծ գերատեսչությունը կարող է համապատասխան քայլեր ձեռնարկել հատկապես խառնելական եւ պակիստանյան համապատասխան կառույցների հետ ռազմատեխնիկական գործարքների հաստատման ուղղությամբ:

Այսպիսով, Թուրքիան փորձում է ռազմական համագործակցության միջոցով լուրջ դերակատարություն ստանձնել աղդբեջանական ուժային համակարգում՝ ամրապնդելով իր ռազմաքաղաքական ազդեցության լծակներն ինչպես այդ երկրում, այնպես էլ տարածաշրջանում: Ուստի թուրք-աղդբեջանական ռազմական համագործակցության զարգացումն ու դաշինքի ձեւավորումը, հատկապես Լեռնային Ղարաբաղի հակամարտության չկարգավորված լինելու պայմաններում, լուրջ խնդիր է ներկայացնում տարածաշրջանում ուժային քաղաքական խախտման, ինչպես նաեւ Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի անվտանգության համար: Ինչ վերաբերում է Թուրքիայի ռազմավարությանն ու վարած քաղաքականությանը Հարավային Կովկասում, ապա՝ նպատակ ունենալով դառնալ տարածաշրջանում որոշում կայացնող երկիր՝ այն առաջին հերթին պետք է հենվի Աղդբեջանի վրա, որի հետ էթնիկական ընդհանրություն ունենալուց բացի ունի նաեւ ընդհանուր ռազմաքաղաքական շահեր: Հետևաբար Թուրքիան ձգտում է տարածաշրջանում ունենալ ռազմականապես և տնտեսապես հզոր Աղդբեջան, իր ազդեցության տակ գտնվող Վրաստան և, իհարկե, ամեն առումներով թույլ Հայաստան: Աղդբեջանի նկատմամբ Թուրքիայի ազդեցության մեծացումը պայմանավորված է Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում թյուրքալեզու հանրապետությունների հետ Թուրքիայի հեռու գնացող քաղաքական նպատակներով: Ինչպես բազմաթիվ թուրք զինվորական և քաղաքական գործիչներ են բազմիցս հայտարարել, այնպես էլ նոյեմբերի 6-8-ը Աղդբեջան կատարած այցի ժամանակ, Թուրքիայի նախագահ Գյուլը հայտարարեց, որ Աղդբեջանի հետ տարբեր ոլորտներում լուրջ գործակցությունը նոր հեռանկար է բացում եվրասիական քաղաքականության համատեքստում՝ նշելով, որ «Թուրքիան և Աղդբեջանը եվրասիական աշխարհաքաղաքականության ողնաշարն են կազմում»²⁴: Հարկ է նշել, որ Եվրասիայի աշխարհագրության մեջ թուրք զինվորական և քաղաքական շրջանակները ներառում են հիմնականում Անդրկովկասի և Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու երկրները: Թուրքիա-Աղդբեջան հարաբերությունները ռազմավարական իմաստով գոտ երրկողմ հարաբերություններ չեն, այլ դրանց զարգացումը պայմանավորում է Թուրքիայի տարածաշրջանային և աշխարհաքաղաքական նկրտումների հետագա ողջ համապատկերը: Հենց այս համատեքստում կարելի է դիտարկել նաև Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրն ու դրա նկատմամբ Թուրքիայի վերաբերմունքը: Լեռնային Ղարաբաղի խնդիրը ինչպես 90-ական թթ., այնպես էլ ներկայումս դիտարկվում է որպես խոչընդոտ Թուրքիայի հետագա աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական ծրագրերի իրականացման համար, ինչը կարող է լուրջ մարտահրավեր ներկայացնել Հարավային Կովկասում ուժային հավասարակշռության տեսակե-

տից: Թուրք-ադրբեջանական ռազմական համագործակցության զարգացմամբ, հետագայում Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի դեմ նոր ռազմական գործողությունների սկսման պարագայում Թուրքիան կարող է ունենալ իր զգալի ազդեցությունը՝ չմնալով ռազմական գործողությունների քստերաբեմից այն կողմ:

LEVON HOVSEPYAN

TENDENCIES OF DEVELOPMENT OF THE TURKISH-AZERBAIJANI MILITARY COOPERATION WITHIN THE FRAMEWORK OF THE AZERBAIJAN'S ARMED FORCES REFORMS

Azerbaijan is pressing ahead with plans to overhaul the country's armed forces in order to bring them up to NATO standards. Military reforms in Azerbaijan fulfills through the country's participation in the alliance's Individual Partnership Action Plan. Turkey, a NATO member with strong cultural ties with Azerbaijan, is ready to act as an expeditor of Baku's military reform process. Turkey first of all wants to restore and maintain a direct Turkish military role in Azerbaijan. In the reform process Turkey's support particularly will be put on training of the military personnel and establishing an army structure that meets NATO standards. Azerbaijan is asking the Turkish military to give it more assistance on meeting NATO's standards for military training, know-how and usage of technology in military operations. The Turkish Armed Forces (TSK) and the Azerbaijan Armed Forces have intensified their co-operation in the last months with high-level visits. According recent reports in Azerbaijan press a Turkish military highranking officer as a consultant will be appointed in the Azerbaijani Defence Ministry. The Turkish general would be granted significant and sweeping powers within the Azerbaijani Defence Ministry, including direct and sole control over a team of lower-ranking Turkish military officers serving as military instructors and advisers. Also Azerbaijani and Turkish militaries are expected to establish a joint commission to coordinate the Azerbaijani Armed Forces preparations for NATO membership. Bilateral cooperation in the field of defence industry will be developed. Intensification of the Turkish-Azerbaijani military cooperation is very sensitive for Armenia from the point of view its security, as Nagorno-Karabagh problem unresolved.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Khazri Bakinsky and Mina Muradova, Azerbaijan pursues NATO integration, <http://www.eurasianet.org>, 16.03.2007. ԱԳ-ԳՄ պլանը Ադրբեջանը ՆԱՏՕ-ի դեկլարացիայում է մեղկայացրել դեռևս 2004 թ., որից հետո սկսվեցին քննարկումներն ու մախապատրաստական աշխատանքները: 2005 թ. օգոստոսից գործնական քայլեր են ձեռնարկվում, որոնք մախատնաված են դաշինքի հետ ԱԳ-ԳՄ պլանով: Պաշտպանության ոլորտում մախատնվում է պաշտպանական հայեցակարգի և մեմանտոյի այլ փաստաթղթերի մշակում և հաստատում, զինվորական կրթության համապատասխանեցում ՆԱՏՕ-ի չափանիշներին, քափանցիկ ռազմական քյուբի պլանավորման մախտակով հատուկ կարգերի պատրաստում և փաստաթղթերի ընդունում, մորթի քանակալին միավորումների հիմնում, ԶՈՒ «Գործընկերություն հանում խաղաղության» կրթական կենտրոնի ընդլայնում, ռազմածովային ուժերի մավերի և ռազմական օդակայանների արդիականացում: Указанных НАТО выполняются, Азербайджанские

- Вооруженные силы готовы считаться по плану IPAP, http://www.vpk-news.ru/article.asp?pr_sign=archive.2006.136.articles.chronicle_01
2. Nazim CAFERSOY, Azərbaycan - Türkiye İlişkileri (1993 - 2000), <http://www.turksam.org/tr>
3. Сергей Минасян, Вооруженные силы Азербайджана: оценка военного потенциала и перспективы развития, <http://www.noravank.am>
4. Турецкие военные помогли Азербайджану реорганизовать бывшее суворовское училище в Баку в современный военный лицей НАТО, http://www.mia-info.ru/news/full/article/120.html?no_cache=1&cHash=52efe62820
5. Դադարադյան պատերազմի ընթացքում Ադրբեջանին Թուրքիայի կողմից տրամադրված ուժերի օժանդակության մասին ավելի մանրամասն տե՛ս Դանկ Դեմոյան, Դարձյալ և Կարաբախի կոնֆլիկտ, Երևան 2006:
6. Նույն տեղում, էջ 121:
7. Turkish Daily News, 18.05.2005.
8. <http://www.regnum.ru>, 01.03.2007.
9. Azerbaijani Defense Ministry and Turkish Armed Forces General Staff sign cooperation document, http://www.turkses.com/index.php?option=com_content&task=view&id=1835&Itemid=36
10. <http://www.regnum.ru>, 07.03.2007.
11. <http://www.zerkalo.az>, 07.01.2007.
12. Turkish Daily News, 03.04.2007.
13. "Реформы в армии - Процесс долговременный", <http://old.zerkalo.az>
14. <http://www.regnum.ru>, 01.08.2007.
15. Տոտալ պաշտպանության սկզբունքը ենթադրում է պատերազմի ժամանակ ոչ միայն երկրի ՁՈՒ կիրառումը, այլ մասն թշնամուց պաշտպանվելու բոլոր հնարավոր մեթոդների ու միջոցների օգտագործումը: <http://www.echo-az.com/politica02.shtml>
16. Դեռևս 1990-ականների սկզբին Ադրբեջանի մայիսին մայիսահա Ա. Էլչիբեյի խորհրդական է նշանակվել բուրք զենքավաճառ Զ. Դեմիրբուլաբը, որը հետագայում դարձել է մասն Ադրբեջանի Անվտանգության խորհրդի անդամ: Տե՛ս Դանկ Դեմոյան, ժ. 111.
17. <http://www.day.az>, 20.09.2007.
18. <http://www.regnum.ru>, 26.09.2007.
19. <http://www.regnum.ru>, 16.08.2006.
20. Թուրքիայի ռազմաարդյունաբերական համալիրի վերաբերյալ մանրամասն տե՛ս Լևոն Հովսեփյան, Թուրքիայի ռազմաարդյունաբերական համալիրի զարգացման և զինված ուժերի արդիականացման ռազմավարությունը, Թուրքիա: Անվտանգության ու պաշտպանության հիմնախնդիրները, Վերլուծական նյութեր, Թողարկում 1, Քաղաքական հետազոտությունների ինստիտուտ, Երևան 2007, էջ 78-103; Թուրքիայի ռազմական արդյունաբերության զարգացման և զինված ուժերի արդիականացման մասին տե՛ս Լ. Հովսեփյան, Թուրքիայի զինված ուժերի արդիականացման խնդիր շուրջ, Մեծավոր Արևելք, N 4, Երևան 2007:
21. <http://www.zerkalo.az>, 07.01.2007.
22. <http://www.regnum.ru>, 23.05.2007.
23. <http://www.regnum.ru>, 20.05.2007.
24. Zaman, 07.11.07.

ՀԱՅՈՑ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՆՁՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ
ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 1920 Թ.

1918թ. Վրաստանի Դեմոկրատական Հանրապետության կազմավորումով նրա սահմանների ներսում հայտնվել էր մինչև 400.000 ազգաբնակչություն ունեցող հայ համայնքը: Վրաստանի հայության առջև ծառացած բազմաթիվ խնդիրների կարգավորմանը պիտի նպաստեր մշակութային ազգային ինքնավարության մասին գաղափարի իրականացումը: Հարևան երկրի կառավարությանը հղած դիվանագիտական նոտայում ՀՀ արտգործնախարար Ս. Տիգրանյանը շեշտում էր, որ Հայաստանի Հանրապետությունը հրաժարվել էր տարածքային պահանջներից Բորչալուի հյուսիսային և Թիֆլիսի գավառի հարավային հայաբնակ մասերի նկատմամբ, նախապայմանով, որ Վրաստանի հայ բնակչությունը կօգտվի մշակութային ինքնավարությունից: Նորակազմ Վրաստանում, նրա կառավարությունը հրաժարվում էր հատուկ օրենքով սահմանել ազգային մշակութային ինքնավարության սկզբունքը: Հարցի լուծումը հետաձգվել էր մինչև Վրաստանի սահմանադրության ընդունումը, որով էլ կսահմանագծվեին հայկական մշակութային ինքնավարության իրավունքները:

Վրաստանի սոցիալ-դեմոկրատական (մենշևիկյան) դեկավարությունն արժանացել էր II Ինտերնացիոնալի առաջնորդներ՝ Էմիլ Վանդերվելդեի և Կառլ Կառտսկու գովասանքներին, որպես միակ կառավարություն, որը 1918-1920 թթ. իրականացնում էր այդ միջազգային սոցիալիստական կազմակերպության ծրագիրը: XX դարի սկզբին եվրոպական սոցիալիստական գաղափարախոսությունը համարում էր, թե մշակութային ինքնավարության իրականացման միջոցով հնարավոր է լուծել ազգային փոքրամասնությունների խնդիրները: Ազգային հարցի լուծման գործում վրաց սոցիալ-դեմոկրատները իրականում այլ ճանապարհ էին ընտրել, քան նրանք քարոզում էին մինչև Վրաստանի անկախացումը: Դեռ 1912 թ. նրանց տեսակետներն արտահայտող մամուլը գրում էր, որ «...բոլոր մշակութային գործերի ղեկավարումը պիտի տրամադրվի հենց շահագրգռված ազգերի տնօրինմանը: Մենք հռչակում ենք Կովկասի ազգությունների մշակութային ինքնավարության գաղափարը»³: Այդ սկզբունքը IV Պետդոմայի ամբիոնից պաշտպանում էին վրաց պատգամավորներ՝ Ա. Չխենկելին, Վ. Գելովանին, Ն. Չխեիժեն⁴: Որպես օրինակ էին ծառայում ավստրիացի հայտնի սոցիալ-դեմոկրատներ Օտտո Բաուերի և Կառլ Ռենների կողմից մշակված սկզբունքները (յուրաքանչյուր քաղաքացի պարտադիր պիտի լինի կցագրված այս կամ այն ազգությանը: յուրաքանչյուր ազգությունն իրավական ամբողջականություն է կազմում, որին տրամադրվում է իր անդամների վրա պարտադիր տուրք տարածելու իրավունք: դպրոցի և այլ մշակութային օջախների տնօրինումը հանդիսանում է ազգային ինքնավարության մենաշնորհը: յուրաքանչյուր ազգություն ընտրում է իր խորհրդարանը: մշա-

կութային ինքնավարությունից օգտվող ազգության շահերը կառավարության ներսում ներկայացնում և պաշտպանում է նրա գործերով զբաղվող հատուկ նախարարը⁵:

Շարադրված պահանջներին լիովին համապատասխանում էին Վրաստանի Հայոց ազգային խորհրդի կողմից մշակված «Թեզերը»:

Ըստ այդ փաստաթղթի՝

1. «Հայերը Վրաստանի սահմաններում կազմում են Հայկական Ազգային Ինքնավարություն:
2. Ազգային Ինքնավարութիւնը իրականացում է Ազգային Ժողովի և նրա գործադիր մարմնի՝ Ազգային Խորհրդի միջոցով:
3. Ազգային Ժողովն ընտրում է ընդհանուր, հասաար, գաղտնի, ուղղակի ու համեմատական ընտրական սկզբունքով և գումարում է իր իսկ որոշած ժամանակաշրջաններում, իսկ Ազգային Խորհուրդը գործում է Ազգային Ժողովի կողմից տրամադրված իրաւունքների սահմաններում:
4. Ազգային Ժողովն ու Խորհուրդն հասարակական իրաւական օրգաններ են, օժտւած իրաւական անձի (юридическое лицо) բոլոր իրաւունքներով, որոնց մէջ նաև շարժական և անշարժ կայքեր ձեռք բերելու ու սեփականացնելու իրաւունքով, օրինական բոլոր միջոցներով:
5. Հայոց Ազգային Ինքնավարութեան գոյքերը համարում են Վրաստանի հայոց ազգային սեփականութիւն:
6. Ազգային Ժողովի ընդհանուր ժողովներում անդամները օգտւում են խօսքի ազատութիւնից նոյն հիմունքներով, որով օգտւում են Օրենսդիր Հիմնարկութեան անդամները: Թերացումների և ընդհանուր յանգանքների համար Ազգային Ժողովի և Խորհրդի անդամները, կարող են հետապնդւել և զրկւել ազատութիւնից միայն դատական կարգով:
7. Այն շրջաններում, որտեղ հայ ազգաբնակչութիւնը կազմում է տեսաւռայունի (քաղաք, գաւառ, քեմի գիւղ) բնակիչների 15-ից ոչ պակաս տոկոս, հայոց լեզուն ճանաչւում է իրաւահաւասար պետական լեզւին վարչական տեղերում, ինքնավարութեան օրգաններում, դատական հաստատութիւններում, իրապարակական ժողովներում և պոստ-հետազոտական հաղորդակցութեան մէջ, այդ տեղերը, հիմնարկութիւնները, հաստատութիւնները և պաշտօնական անձինք, հայերի հետ յարաբերութիւններ, բացատրութիւններ ու բոլոր գործավարական թղթերը հայերէն լեզուով, այլ և պատասխանել ու թղթեր տալ նոյն հայերէն լեզուով:
8. Կենտրոնական կառավարութեան համապետական օրէնքներն ու կարգադրութիւնները իրատարակւում են բացի վրացերէնից նաև հայերէն լեզուով: Հայերէն են իրատարակւում մմանապէս սոյն թէղիսների 7-րդ կէտում յիշած վայրերում, վարչական տեղերի և անձանց, տեղական ինքնավարութիւնների և դատական մարմինների բոլոր որոշումներն ու կարգադրութիւնները:
9. Հայոց լեզւի իրաւունքները, որոնք յիշած են սոյն թէղիսների 6 և 7 կէտերում, ապահովւում են յատուկ օրէնքով:

10. Ազգային Ինքնավարութեան իրաւասութեանը ենթակայ են.
ա/Ներկայացուցչութիւն ու պաշտպանութիւն շահերի և իրաւունքների
հայկական հիմնարկութիւնների և հայերի՝ ինչպէս անհատական,
նոյնպէս և խմբական, որոնք բխում են նրանց հայ ազգին պատկանե-
լուց:

բ/ Վարումն ժողովրդական կրթութեան և ազգային կուլտուրայի զար-
գացման գործերի, ինչպէս և օգնութիւն հայ ազգաբնակչութեան պարե-
նաւորման, գիւղատնտեսական, առողջապահական և խնամատարա-
կան ասպարէզներում:

11. Հայ ժողովրդական կրթութեան գործը ամբողջութեամբ յանձնւում է
Հայոց Ազգային Ինքնավարութեան, դպրոցներում դասաւանդութիւնը
տարւում է հայերէն լեզուով: Ստորին, միջնակարգ և բարձրագոյն թէ
հանրակրթական և մասնագիտական դպրոցներում դասաւանդելիք
ծրագիրների որոշման և հաստատման, ինչպէս և նրանց կառավարե-
լու գործը ամբողջութեամբ անցնում է Ազգային Ինքնավարութեան:
Բարձր, տարրական և միջնակարգ դպրոցներում վրաց լեզվի դասա-
ւանդութիւնը պարտաւորեցուցիչ է:

12. Ժողովրդական կրթութեան, ազգային կուլտուրայի զարգացման հա-
մար Հայոց Ազգային Ինքնավարութեանն է տրամադրւում միջոցներ
ազգաբնակչութեան համեմատական չափով – պետական և տեղական
ինքնավարութիւնների համապատասխան բիջէներից:

13. Հայոց Ազգային Ինքնավարութիւնը իրաւունք ունի նշանակել և յա-
տուկ տուրքեր հայերի վրայ, իր իրաւասութեան մէջ եղող գործերի հա-
մար:

14. Նախարարական Խորհրդի նիստերում մասնակցում է Հայոց Ազգա-
յին Խորհրդի ներկայացուցիչը, որպէս հայկական ինքնավարութեան
գործերի վարիչ, մինիստրական իրաւունքներով»⁶:

Ըստ եվրոպական սոցիալիստների, հնարավոր էր ծնւալորել երկու
տեսակի մշակութային ինքնավարութիւն՝ արտերկրային (լայն) և տարած-
քային (տեղական): Վրաստանի Հայոց ազգային խորհուրդը պնդում էր
առաջին՝ մաքսիմալ տարբերակը, հայտարարելով. «Ազգային խորհուրդը
այս թէգերը համարում է այն մագագոյն իրաւունքները, որոնք պիտի
ապահովեն Սահմանադիր ժողովի կողմից հայութեան Վրաստանի հատո-
ւածում՝ նրա ազգային կուլտուրական գործերը անարգել կերպով վարելու
համար: Ազգային Խորհուրդը պիտի պահանջի, որ հայ դպրոցը և ազգային
այլ գործերի ինքնավարութիւնը ապահովւած լինի հիմնական օրենքներում,
Սահմանադրութեան մէջ»:

Սակայն սպասելիքը չարդարացրեց իրեն: Վրաստանի սահմա-
նադրութեան միջնագծի այն հատվածը, որը նվիրված էր ազգային փոքրա-
մասնաւորութիւնների իրավունքների կարգավորման նպատակին⁷, բոլոր դժգո-
հութեան առիթ տվեց: Ըստ Վրաստանի Հայոց ազգային խորհրդի անդամ-
ների հաստատում կարծիքի՝ «Փոխարեն դրութեան, որոնք իրենց պարզ
իմաստով կերաշխավորեն մեր դեմոկրատական հանրապետութեան ազ-

գային փոքրամասնությունների ինքնակառավարման տարրական հիմքերը, այս նախագիծը պարունակում է հոգվածներ, որոնցից յուրաքանչյուրը կարծես թե ունի նպատակ շրջանցելու ազգային ինքնավարության սկզբունքի պարզ հռչակումը և նրա հաստատումը: Հոգվածների որոշ մասը մույնիսկ արտահայտում է բացահայտ միտում՝ ամեն կերպ խոչընդոտել ոչ վրացի ազգության քաղաքացիներին դասելու այն ազգին, որին նրանք իրականում պատկանում են... պարզ է, որ այս բոլոր պատրվակագործական խոսքերը չեն պատասխանում մեր կողմից առաջ քաշած հարցերին և անարդյունավետ փորձում են կոծկել նախագիծը կերտողների հիմնական միտքը՝ ոչ մի [մշակութային] ինքնավարություն ազգային փոքրամասնություններին: Ինչ վերաբերում է Վրաստանի հայ բնակչությանը, ապա [Հայոց խորհրդի] ներկայացուցիչները բազմիցս հավաստիացումներ էին ստանում վրացական կառավարող կուսակցության տարբեր պատասխանատու ղեկավարներից այն մասին, որ ի նկատի ունենալով Վրաստանի կյանքում հայ բնակչության խոշոր տնտեսական և մշակութային նշանակությունն ու նրա թվաքանակը, որը զգալիորեն գերազանցում է այլ ազգային փոքրամասնություններին, ապա հայ բնակչությունն անկասկած կստանա ինքնակառավարում այն ծավալով, որի չափի մասին Ազգային խորհուրդը բազմիցս բանավոր և գրավոր հայտնել էր Վրաստանի կառավարության ներկայացուցիչներին: Հայոց ազգային խորհրդի 14 թեզերից բաղկացած զրոյությունը չունի որևէ նմանություն Սահմանադիր ժողովում մշակված նախագծի 12 հոդվածների հետ և, մույնիսկ, ցարական վարչակարգի համեմատությամբ, երբ հայերն օգտվում էին զգալի դպրոցական ինքնավարությունից, Վրաստանի հայերի իրավիճակի բարելավման փոխարեն այն թեքվում է դեպի վատթարացում»¹⁰: Վրաց պաշտոնական շրջանակները բազում անգամ զարմանք էին հայտնում փոքրամասնությունների մշակութային ինքնավարություն ունենալու ցանկության վերաբերյալ: Նրանք անընդունելի էին համարում մույնիսկ մշակութային ինքնավարության չափավոր՝ տարածքային (տեղական) տեսակը: Վրաց գործիչներն այդ ձգտումը դիտում էին որպես թաքնված անջատողականություն¹¹: Վրաստանում գործող ազգային խորհուրդներին իշխանությունները չէին տրամադրում իրավական սուբյեկտի կարգավիճակ և, հետևապես, չէին ճանաչում նրանց հասարակաքաղաքական լիազորությունները¹²: Պաշտոնաթերթ «Էթերա»-ն գրում էր. «Սահմանադիր ժողովը հանդիսանում է Վրաստանի բոլոր քաղաքացիների ներկայացուցիչը՝ առանց ազգային խտրականության: Հետևապես, որևէ ազգային խորհուրդների գոյությունը անթույլատրելի է, եթե, իհարկե, այդ խորհուրդները չեն լինի օժտված միայն մշակութալուսավորչական ֆունկցիաներով...»¹³:

Վկայակոչելով մոր իրողությունը վրաց քաղաքական շրջանակները բեմ հանեցին «դեմոկրատական հանրապետության» գաղափարը, որի շնորհիվ քաղաքացիների ազգային կարիքները պիտի բավարարվեին տեղական ինքնակառավարման մակարդակով: Վրաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության 2-րդ համագումարը, որը կայա-

ցել էր 1920 թ. ամռանը, եկավ այն եզրահանգման, որ ազգային համայնքների մշակութային և կրթական ոլորտները պետք է ամբողջովին տրվեն տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինմանը, քանի որ ազգային փոքրամասնությունների կարիքների լիակատար բավարարումը հնարավոր է պետական կառուցվածքի լայն ժողովրդավարացման պայմաններում: Ըստ վրաց ղեկավարների, ազգային փոքրամասնությունների իրավունքներն ապահովված էին իրենց երկրում, քանի որ հռչակված «դեմոկրատական» կարգերը երաշխիք են ստեղծում ազգային որևէ հալածանքի դեմ¹⁴: Ինքնավարության սկզբունքի փոխարեն, այդ թվում մշակութային, ազգային փոքրամասնություններին առաջարկվեց բավարարվել լայն ժողովրդավարացման մասին կարգախոսով: Այս առթիվ Հայաստանի Առաջին Հանրապետության ականավոր գործիչ Արշակ Ջամալյանն իրավացիորեն մատնանշում էր, որ «Վրաստանի ազգային փոքրամասնությունների վիճակի մասին գաղափար կազմելու համար մենք օրենքներին չէ որ պետք է դիմենք, այլ այն գործնական քաղաքականութեանը, որին հետևում էր վրաց կառավարությունն այս հարցում: Եւ բաւական է թէկուզ հարևանցի ակնարկ նետել այդ քաղաքականութեան վրայ համոզուելու համար, որ [վարչապետ] Ժորդանիան և իր կառավարութիւնը շատ քիչ բան ունին պարծենալու գոնէ հայկական փոքրամասնութեան իրաւունքների հարցում...»¹⁵:

Խնդրո առարկա էր համարվում Վրաստանում հայկական ազգային դպրոցի ստեղծման պահանջը: Վրաստանի Հայոց ազգային խորհրդի ենթակայության տակ գտնվում էին ժողովրդական դպրոցներ, որոնք կառավարության կողմից ճանաչված չլինելով՝ փաստորեն օգտվում էին ինքնավարությունից¹⁶: Ավանդաբար հայկական դպրոցը գոյատևում էր հիմնականում ունևոր խավերի քարեգործության շնորհիվ: Հայոց ազգային խորհրդի տնօրինման տակ գտնվող հայկական ժողովրդական դպրոցները լուրջ ֆինանսական ճգնաժամ էին ապրում, որի լուծման համար Վրաստանի լուսավորության նախարարությունն առաջարկում էր իրեն հանձնել հայկական կրթական օջախների վերահսկումը: Փաստերը վկայում են, որ Վրաստանի իշխանությունները հակված չէին հանդուրժել պետական վերահսկողությունից դուրս գործող ևս մեկ ուսումնական համակարգի գոյությունը և անընդհատ հարմար պատրվակ էին փնտրում հայկական ժողովրդական դպրոցները պետականացնելու համար: Վրաց գործիչները համարում էին, որ հայերն արդեն մշակութային օջախ ունեն Հայաստանի Հանրապետությունում և, որ հարկ չկա համաման պայմաններ ստեղծել Վրաստանի հայ համայնքի համար: Հայերը, որ կազմում էին Վրաստանի բնակչության զգալի մասը, հետզհետե գրկվում էին ինքնուրույն կրթամշակութային կյանքի կազմակերպման հնարավորությունից, մի բան, որն ունեին ցարական տիրապետության ժամանակաշրջանում: Հայկական հասարակական շրջանակներն այդ ձգտումը դիտում էին որպես նախադեպ Վրաստանի հայկական համայնքի միասնականության թուլացման, ապա ազգաձուլման համար:

Եվրոպական սոցիալ-դեմոկրատների առաջադրած սկզբունքներով կազմված Հայոց ազգային խորհրդի առաջարկները իրականում անիրագործելի չէին, քանզի 1918 թ. հունվարին Ուկրաինական Ժողովրդական Հանրապետության Կենտրոնական Ռադան հաստատեց համանման սկզբունքով կազմված ազգային մշակութային ինքնավարության մասին օրենքը, որի հիման վրա լեհերի և հրեաների շահերը ներկայացնող նախարարներն ընդգրկվել էին կառավարության կազմում¹⁷։ Էստոնիայում մույնպես ձևավորվել էին արտերկրային մշակութային ինքնավարություններ ռուսների, գերմանացիների, շվեդների և հրեաների համար։ Օրենքը ուներ միայն մեկ սահմանափակում. մշակութային ինքնավարությունից օգտվող ազգային համայնքը պիտի նվազագույնս ունենար 3000 անդամ¹⁸։

Ազգային մշակութային ինքնավարության մասին պահանջը արժարժվում էր նաև Այսրկովկասի խորհրդայնացումից հետո։ Մշակութային ինքնավարությունը «նշանակում է, - գրում է ականավոր վիրահայ հասարակական գործիչ Արտաշես Աբեղյանը, - ոչ միայն որոշ տարիների ընթացքում դայրոցական ցանցի շնորհիվ գրաճանաչ դարձնել հարիւր հազարաւոր հայերի, այլ նշանակում է ոչ միայն հայ գիրքն ու հայ թերթը - Հայաստանից ևս յղելով - տասնեակ հազարաւոր օրինակներով տարածել մեր ցեղակիցների մէջ... այդ նշանակում է միևնույն ժամանակ՝ բարձրացնել նրանց ազգային գիտակցութիւնը, ինքնավար մարմինների շնորհիւ և միջոցով սերտօրէն շաղկապել նրանց իրար հետ, բայց նաև Հայաստանի հետ, հայ մշակոյթի կենդրոնի հետ։ Այդ նշանակում է՝ այժմու կենդրոնախոյս ուժերը փոխարինել կենդրոնաձիգ ուժերով և ազդակներով։ Կարճ՝ *ազգային-մշակութային ինքնավարութեան պահանջը մեր ազգային քաղաքականութեան հիմնաքարերից մէկը պիտի կազմէ*։ Հրաժարուիլ նրանից՝ նշանակում է հաշտուիլ այն մտքի հետ, որ Հայաստանից դուրս գտնող հարիւր հազարաւոր ազգակիցներ վաղ թէ ուշ ուժանան իրենց հայրենի մարմնից, փոշիանան մեզ համար և պարար դառնան ուրիշների համար։ Նման մտքի հետ հաշտել չի կարող հայութիւնը»¹⁹։ Ուշագրավ է, որ այս խոսքերը շարունակում են արդիական մնալ նաև այսօր։

BENIAMIN MAILYAN

THE PROJECT OF THE ARMENIAN'S CULTURAL AUTONOMY IN THE REPUBLIC OF GEORGIA IN 1920

After the announcement of Georgia's independence a 400,000 Armenian community appeared in its domain, that was in need of status definition in the relations with the Georgian state. According to the activists of Armenian national council in Georgia it would have to assist cultural autonomy of Armenians, consisting part of which was the idea of the National School.

К ВОПРОСУ О ФОРМИРОВАНИИ ПОЛИТИЧЕСКОЙ ЭЛИТЫ В СИРИИ В МАНДАТНЫЙ ПЕРИОД

Формирование сирийской идентичности и идея сирийского государства

Идея образования сирийского государства возникла по окончании Первой мировой войны, когда арабские войска¹ 30 сентября 1918 г. заняли Дамаск и водрузили над городом “флаг арабской независимости”, а 5 октября 1918 г. эмир Фейсал аль-Хашими создал первое независимое арабское правительство в Сирии, которое возглавил генерал Али Риза аль-Рикаби. В мае 1919 г. были проведены выборы Сирийского Верховного конгресса (мутамар ас-сури аль-ам), а 2 июня конгресс принял Дамасскую программу, которая выдвигала требование “безусловной политической независимости”. 8 марта 1920 г. сирийский парламент провозгласил создание независимого королевства Великой Сирии, однако в 25 апреля того же года на конференции в Сан-Ремо мандат на всю Сирию получила Франция, а в июле, после битвы при Майсалуне французские войска заняли Дамаск².

В момент, когда Сирия становилась субъектом международных отношений она обладала важной предпосылкой своего суверенного существования – территориальным пространством, в рамках которого могли существовать институты ее государственности, которое однако было результатом политической воли внешней силы, бывшей метрополиии и не могло рассматриваться в качестве действительно гомогенного и свободного от центробежных тенденций регионалистского, национально-этнического и конфессионального характера. В силу этого, территориальное пространство, унаследованное от эпохи европейской экспансии, нуждалось в наполнении адекватным ему национальным содержанием. “Арабская идея” становилась средством создания соответствующего этому государству социума³.

Территория, на которой складывалось Королевство Сирия и которая впоследствии стала частью французского мандата, не обладала монолитностью, присущей например, Египту. Сирийское наследие было получено от Османской империи, в состав которой эта территория входила в течение 4 веков: с 1516 г. до заключения Мудросского перемирия в 1918 г. Территории эти были вилайетами, управляемыми назначаемыми султаном губернаторами-вали. Самоидентификации населения с территорией своего проживания не было. Клановая или племенная принадлежность были более важными звеньями социальной организации, чем единая территория проживания. К этому нужно добавить тот факт, что

границы между арабскими странами были очерчены колониальными властями произвольно и, по сути, не содержали никакой мотивированной связи с национальным составом, проживающего на этой территории населения.

Сирия не имела истории отдельного государственного и, как следствие, политическая идентичность страны и ее населения была замкнута в меньших единицах – город, племя, религиозная группа или на более широкой общности – империи, исламской уммы и все более усиливающейся идеи арабской нации. Возникла даже своеобразная коллизия: большинство сирийцев ощущало себя мусульманами или османцами, хотя империи уже не было. Существовала своеобразная “потеря идентичности”, когда жители страны не понимали, кто они есть на самом деле. В этих условиях рождалась новая идентичность, основанная на сирийском диалекте арабского языка и историческом мифе (провозглашалось, что именно Дамаск является центром Арабской-Омейядской империи)⁴.

Именно эти два составляющих и стали основой государственного строительства новых арабских стран. Использование того или иного современного местного письменного языка – языка прессы, книг и радиовещания и превращение его в официальный “национальный” язык преследовало следующие цели: подчеркивалась независимость от колониальных властей, которая использовала язык метрополии, а также утверждалась новая идентичность граждан уже независимых государств. “Проведя секуляризацию письменного языка, правящие националистические элиты взяли его на вооружение, чтобы его средствами выразить ценности нации, государства и современности, как они их понимали”⁵. Кроме того, новые элиты намеревались создать новую Историю, действующими лицами, которой были бы они сами, обозначив тем самым радикальный и решительный разрыв с прошлым. Турция отныне не была Османской империей, а арабские страны уже не являлись европейскими колониями – начиналась новая эра⁶. Именно эта национальная идея была поставлена во главу создания нового государства – Сирии⁷.

Фактор религиозной принадлежности в этих условиях не играл важной роли. Принадлежность к определенной религиозной общине не стала частью нововозникавшей сирийской национальной идентичности.

Всю первую половину 20 века продолжался процесс формирования сирийской нации из населения, проживающего на этой территории⁸. Затягиванию этого явления способствовал пестрый и разнообразный национальный и религиозный состав самоорганизованных и довольно сильных этно-конфессиональных групп населения, проживающего на этой территории. Кроме составляющих большинство арабов-суннитов на этнорелигиозной карте Сирии выделялись также

другие многочисленные единицы – арабы-алавиты, арабы-друзы, курды, туркмены, арабы-исмаилиты, черкесы, шииты-имамиты (мутавали), арабы-христиане (православные, сиро-яковиты, несториане, мелькиты-греко-католики, сирийки-сиро-католики, марониты и халдеи), армяне (представители армянской апостольской церкви и католики) и ассирийцы⁹. Известную роль в обособлении этноконфессиональных групп играла и политика Османской империи. По этому поводу, сирийский исследователь А.Хаурани отмечал, что в Османской империи «барьеры между общинами становились все более труднопроходимыми, и религиозные группы постепенно начинали превращаться в национальные».¹⁰

Французский мандат и Сирия

նաև հույսեր է կապում Արարական պետությունների լիզայի կողմից հետագա աջակցության հետ, ինչը այդ կազմակերպության կողմից հավանության է արժանացել քաղաքական գործընթացի առումով, այդ թվում նաև Բաղդադում 2006թ. նախատեսված կոնֆերանսը:

Խորհուրդը վորստին հայտարարում է, որ ինքը համոզես է գալիս, որպեսզի Իրաքը դառնա ֆեդերատիվ, դեմոկրատական, պլուրալիստական և միասնական պետություն, որպես միջազգային հանրության պատասխանատու անդամ, ուր ապահովվում են կայունությունը, բարգավաճումը և մարդու իրավունքների բազմակողմանի հարգանքը, օրինականության ապահովումը:

Խորհուրդը նաև վերստին հաստատում է Իրաքի անկախությունը, սուվերենությունը, միասնությունը և տարածքային ամբողջականությունը²⁰:

2006թ. մայիսի 26-ին Անվտանգության Խորհրդի նախագահը դիմել է Գլխավոր քարտուղարին հետևյալ մամակով՝

«Պատիվ ունեմ Ձեզ հայտնել, որ 2006թ. մայիսի 23-ի մամակը, որով Դուք հայտնում եք Ձեր մտադրության մասին պ-ն Ֆրենսիս Կ.Ռեկորդին դիտորդության գծով Միացյալ Ազգերի Կազմակերպության Համձնաժողովին կից լիազորի պաշտոնում, հասցված է Անվտանգության Խորհրդի անդամներին: Նրանք Ձեր մամակում արտահայտված մտադրությունը ընդունել են ի գիտություն:

2006թ. հունիսի 15-ի 5463 միստում Խորհուրդը որոշեց Իրաքի արտգործնախարարին հրավիրել առանց ձայնի իրավունքի, մասնակցելու «Իրաքի նկատմամբ սիտուացիան» վերնագրով հարցի կետի քննարկմանը՝ Գլխավոր քարտուղարի զեկուցումը, 1546 (2006) (S/2006/360) բանաձևի 30 կետի կատարման մասին»²¹:

Այդ նույն միստում, համապատասխան Խորհրդի նախկինում կայացած կոնսուլտացիաների ձեռք բերված պայմանավորվածության, Խորհուրդը որոշեց նաև հրավեր ուղարկել Գլխավոր քարտուղարի քաղաքական հարցերի գծով օգնական տիկին Անգելե Կեյնին, համաձայն արարողակարգի իր ժամանակավոր կանոնակարգերի 39 կանոնակարգի²²:

2006թ. հունիսի 15-ի 5464-րդ փակ միստով Խորհուրդը որոշեց լիազորել իր նախագահին հրապարակել հետևյալ կոմյունիկեն Գլխավոր քարտուղարի միջոցով, համաձայն Խորհրդի արարողակարգի ժամանակավոր կանոնակարգերից 55 կանոնակարգի՝

«Իր 5464-րդ միստում, որը կայացավ փակ դռների ետևում, 2006թ. հունիսի 15-ին, Անվտանգության Խորհուրդը դիտարկեց «Իրաքի նկատմամբ սիտուացիան» անվանումով հարցի կետը: Համաձայն նախկինում կայացած 5463-րդ միստի ընդունած որոշման, նախագահը Խորհրդի արարողակարգի ժամանակավոր կանոնակարգերից 37 կանոնակարգի հրավեր ուղարկեց Իրաքի արտաքին գործերի նախարար պ-ն Խոշիյար Ջիբա-ին²³:

Համաձայն 5463-րդ միստում ընդունված որոշման, ըստ Խորհրդի

արարողակարգի ժամանակավոր կանոնակարգերի 39 կանոնակարգի նախագահը հրավեր ուղարկեց Գլխավոր քարտուղարի քաղաքական հարցերի գծով օգնական Անգելե Կեյմին:

Խորհրդի անդամները, պ-ն Զիբարին և տ-ն Կեյմը մտքեր փոխանակեցին»²⁴:

Ինչպես երևում է վերը շարադրածից, 2005թ. օգոստոսի 11-ին ընդունված 1619 բանաձևի²⁵ ակնկալած Իրաքի ազգային երկխոսությունը՝ ՄԱԿ-ի Իրաքի գծով օժանդակության առաքելության հետ զնալով ավելի մոտ զարգացումներ է գրանցում: Երկխոսությունը բնորոշ է մասնավորապես ժամանակահատվածում ընդունված որոշ բանաձևերին ու որոշումներին, որոնց որպես հավելում ծառայում են պաշտոնական գրություններն ու նախկինները:

KARINE SAMVELYAN

RESOLUTIONS AND STATEMENTS OF THE UNITED NATIONS SECURITY COUNCIL ABOUT THE SITUATION IN IRAQ (2005-2007)

The article deals with the analyses of the Resolutions and Statements of the Security Council about the Situation in Iraq's political transition process, new phase in this transition, calling upon the international community, particularly countries in the region and Iraq's neighbors to support the Iraqi people in their pursuit of peace, stability, security, democracy and prosperity.

The United Nations role in this period of 2005-2007 is a very important, continual and historical factor.

The article deals with the analyses of the Security Council Resolutions: S/RES/1618, 4 August 2005, Condemnation of terrorist attacks in Iraq; S/RES/1619, 11 August 2005, Extension of UN Assistance Mission in Iraq; S/RES/1637, 8 November 2005, Extension of mandate of Iraq Multinational Force and Security Council Statements: /S/2006.

The vision and purpose of Iraq's democratic future can become a reality with the help of the international community.

ՇԱՆՈՅԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տես՝ Կարինե Սամվելյան, ՄԱԿ-ի սանկցիաները Իրաքի նկատմամբ, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XXI, Երևան, 2002, էջ 137-146; Կարինե Սամվելյան, ՄԱԿ-ը և Իրաքի դեմ ԱՄՆ-ի ռազմական գործողությունների հարցը, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XXII, Երևան, 2003, էջ 119-128; Կարինե Սամվելյան, ՄԱԿ-ի գործունեությունը Իրաքում (2003 թ. մարտ – 2004 թ. հունիս) և իսաարական կարծիքի ձևավորումը, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XXIII, Երևան, 2004, էջ 242-253; Կարինե Սամվելյան, Քաղաքական իրադրությունը Իրաքում և ՄԱԿ-ի դիրքորոշումը (2004 թ. հունիս – 2005 թ. օգոստոս), «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XXIV, Երևան, 2005, էջ 218-235; Կարինե Սամվելյան, ՄԱԿ-ի մասնակցությունը Իրաքում օրինաստեղծ գործընթացներին 2005 թվականին, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ»,

- XXV, Երևան, 2006, էջ 134-155:
2. Տես՝ Организация Объединенных Наций, Резолюции и решения Совета Безопасности, 1 августа 2005 года — 31 июля 2006 года, с. 34.
 3. Նույն տեղում:
 4. Նույն տեղում, էջ 35: S/2005/509:
 5. Նույն տեղում: S/2005/536:
 6. Նույն տեղում: S/2005/541:
 7. Նույն տեղում, էջ 35:
 8. Նույն տեղում, էջ 36:
 9. Նույն տեղում:
 10. Նույն տեղում:
 11. Նույն տեղում: Տես՝ United Nations Security Council, Press Release, Department of Public Information, News and Media division, New York. SC/8627, 2 February 2006, Resolutions and Statements of the Security Council, 2005, S/RES/1637/, p. 106-109; Կարինե Սամվելյան, ՄԱԿ-ի մասնակցությունը Իրաքում օրինաստեղծ գործընթացներին 2005 թվականին, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XXV, Երևան, 2006, էջ 134-155:
 12. Организация Объединенных Наций, Резолюция и решения..., էջ 38:
 13. Նույն տեղում, էջ 41: S/2005/703:
 14. Նույն տեղում, S/2005/713:
 15. Նույն տեղում, էջ 41-42: S/2005/848:
 16. Նույն տեղում, էջ 42: S/2006/94:
 17. Նույն տեղում, էջ 42:
 18. Նույն տեղում, էջ 42-43: SPRST/2006/8:
 19. Նույն տեղում, էջ 43: S/2006/195:
 20. Նույն տեղում, էջ 43-44: S/PRST/2006/24:
 21. Նույն տեղում, էջ 44:
 22. Նույն տեղում:
 23. Նույն տեղում, էջ 45:
 24. Նույն տեղում:
 25. Տես՝ United Nations Security Council, Press Release..., 2005, S/RES/1619, p. 77.

ԿՐՈՆԸ ԹՈՒՐԶԻԱՅՈՒՄ 1980-ԱՎԱՆ ԹԹ.
«ԹՈՒՐԶ-ԻՍԼԱՄԱՎԱՆ ՀԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ» ՆԱԽԱԳԾԻ
ԷՈՒԹՅՈՒՆԸ

Սույն հոդվածում անդրադառնում ենք Թուրքիայի Հանրապետության 1980-ական թթ. պատմության ամենաուշագրավ դրվագներից մեկին՝ երկրի հասարակական-քաղաքական կյանքում իսլամի դերի ու նշանակության վերելքին և այդ ուղղությամբ իրականացված պետական քաղաքականության հիմնական դրույթներին: 1980 թ. երրորդ ռազմական հեղաշրջումից հետո պահանջվեց երեք տարի, որպեսզի զինվորականները երկրի կառավարման գործադիր և օրենսդիր լծակները հանձնեն քաղաքացիական իշխանություններին: Այդ ընթացքում՝ 1982 թ. նոյեմբերին զինվորականների աջալուրջ հսկողության պայմաններում ընդունված մոր սահմանադրությունը նպատակ ուներ կարգավորել երկրի հասարակական-քաղաքական ու գաղափարական կյանքը: Արդյունքում, թուրքական հասարակությունը 1980-ական թթ. ընթացքում ականատես եղավ իսլամի մորուվի մատուցման պետական քաղաքականությանը, որի հիշարժան դրվագներից էր «Թուրք-իսլամական համադրություն» գերնախագիծը:

1. Իսլամը Օզալի վարչապետության տարիներին

1983 թ. խորհրդարանական նոյեմբերյան ընտրությունների արդյունքում Թ. Օզալի «Մայր հայրենիք» կուսակցությունը (հետայսու՝ ՄՀԿ) տպավորիչ հաղթանակ տոնեց: Օզալին հաջողվեց երկրում հիմնադրել մորաջների գաղափարախոսություն՝ ակնհայտորեն կրելով Ռ. Ռեյզանի և Մ. Թեռչեռլի քաղաքական հայացքների ազդեցությունը: Վերլուծելով խորհրդարանական ընտրությունների ընթացքը՝ հարկ է փաստել, որ Օզալի կուսակցության քաղաքական հաղթարշավը բավական ինքնատիպ զարգացումների բյուրեղացում էր: ՄՀԿ-ն, ըստ էության, վերածվեց մինչև հեղաշրջումը գործած աջ ուղղվածության երեք կուսակցությունների (Արդարություն (ԱԿ), Ազգային շարժում (ԱՇԿ) և Ազգային փրկություն (ԱՓԿ)) գաղափարների և անդամների հավաքատեղի, ուստիև նրա հետագա քաղաքական վերելքը, գերազանցապես, այս կուսակցությունների գաղափարակիրների շնորհիվ էր: Օզալը չէր թաքցնում, որ կուսակցությունը նպատակ ուներ «ապաստան տալ թուրքական քաղաքականության չորս հոսանքներին՝ արևմտամետ լիբերալներին, իսլամականներին, ծախ ազգայնականներին և աջակողմյան քաղաքական ուժերին»¹: Օզալի կուսակցության շարքերում ընդգրկված ԱՇԿ և ԱՓԿ կուսակցությունների կողմնակիցների պատճառով ՄՀԿ-ին կոչում էին մաս «Սուրբ երրորդության դաշինք»²: Կուսակցության իսլամամետ թևը զիսավորում էր կուսակցության փոխնախագահ Մեհմեթ Քեչեքիլերը³: Ինչպես Նիլուֆեր Գյուլեն է նշում՝ Օզալի կուսակցությունն ըստ էության «կառուցողական իրատեսության և մշակութային պահպանողականության համատեղում էր», որը մա կոչում է «հասարակության

վերաձևման իսլամական տարրերակ»⁵: 1980-ականների ամբողջ ընթացքում իսլամամետ ուժերի նկատմամբ Օզալի բարեհամբույր դիրքորոշմանը բացահայտորեն դեմ արտահայտվեց նախագահ Ջենման Էվրենը՝ Օզալին մեղադրելով իսլամական ուժերին «փափկասիրելու» մեջ⁶: Ավելին, Էվրենը հետագայում իր վեցհատորյա հուշերում նշելու էր, որ նքն 1983 թ. նա տեղյակ լինեք, որ Օզալը մաքշիքենդի կրոնական միաբանության անդամ էր, ապա միանշանակ դեմ կարտահայտվեք վարչապետության պաշտոնում նրա թեկնածությանը՝ գերադասելով քաղաքականությունից հեռացված Դեմիրելին⁷: Իրականում, թե՛ ՄՀԿ-ի հիմնադրման, թե՛ հետագա գործունեության ընթացքում Էվրենն Օզալին մշտապես հիշեցնում էր, խորդորում, հաճախ նաև սաստում՝ գերծ մնալ իսլամական տարրերին խրախուսելու, կուսակցության շարքերում նրանց ներգրավելու վտանգավոր գաղափարներից⁸:

Դեռ Ուլուսուի վարչապետության տարիներին Օզալն ի պաշտոնե սերտորեն համագործակցել էր Համաշխարհային բանկի, Միջազգային արժույթային հիմնադրամի և եվրոպական ազդեցիկ ֆինանսական կառույցների հետ, ավելին, ինչպես նշում է Ահմադը՝ Օզալը համարվում էր «Թուրքիայի տնտեսական դեսպանն Արևմուտքում»⁹: Ուստի, կարելի է ենթադրել, որ Օզալի կուսակցության նկատմամբ բանակի նախնական բարեհամբույր դիրքորոշումը ավելի շուտ ԱՄՆ-ին ու եվրահամայնքին կատարված «ծեստ» էր՝ ցուցադրելու համար արևմտյան ֆինանսական շրջանակների հետ Թուրքիայի համագործակցության պատրաստակամությունը¹⁰: Օզալը, 1970-ական սկզբներին ԱՄՆ-ից վերադառնալով Թուրքիա, իր եղբոր Ջորդուքի հետ միասին, դարձավ Էրքաքանի հավատարիմ համախոհներից մեկը: Ավելին, 1977 թ. խորհրդարանական ընտրություններին Թ. Օզալն ԱՓԿ-ի ցուցակներով անգամ առաջադրվեց պատգամավորության թեկնածու, սակայն անհաջողություն կրեց¹¹:

1983 թ. ընտրությունների արդյունքում ստանալով բացարձակ մեծամասնություն՝ Օզալը հնարավորություն ստացավ իրագործել մի շարք գաղափարներ՝ միևնույն ժամանակ ձգտելով հնարավորինս հաճոյանալ բանակին: Օզալի կուսակցության շարքերում առկա իսլամամետ քաղաքական գործիչները հնարավորինս աջակցեցին մի քանի անսպասելի և հակասական օրենքների ընդունմանը: 1983 թ. նորակազմ կառավարությունում կրթության նախարար նշանակված, մաքշիքենդի կրոնական միաբանության անդամ Վեհրի Դինչելլերը թե՛ տարրական, թե՛ միջմակարդ դպրոցներում արգելեց Դարվիշյան տեսության դասավանդումը, փոխարենը ավելացան արաբերենի ուսուցման և «Իսլամական փիլիսոփայություն» առարկաների դասաժամերը: Անճախադեպ ձևակերպումներով վերաշարադրվեց հանրապետության վաղ շրջանի պատմությունը՝ հիմնական շեշտը դնելով քաղաքական ու ռազմական այն գործիչների վրա, որոնք ունեցել են Աթաթյուրքից տարբերվող հայացքներ¹²: «Մենք կամ շատ առաջ ենք գնում, կամ՝ աննկարագրելիորեն հետ», - ակնարկել էր Զ. Էվրենը, երբ 1985 թ. սեպտեմբերի 14-ին ստորագրել էր կրթության նախարար Դինչելլերի ներկայաց-

րած հրաժարականի դիմումը¹³։

Առավել ուշագրավ էին նոր կառավարության որոշ ձեռնարկումները. այսպես՝ հեռուստատեսությամբ ցուցադրվող ամագոյնյան ցեղերի մասին վավերագրական կինոնկարից հետո արդարադատության մախարարի հրամանով զբաղեցրած պաշտոնից հեռացվեց հեռուստատեսության գլխավոր տնօրենը¹⁴։ Նույն տրամաբանությամբ, զրոսաշրջության ոլորտի ազդեցիկ ձեռներեցներից մեծագույն ջանքեր պահանջվեցին համոզելու համար զրոսաշրջության մախարարին, որ վերջինս դադարեցնի իր անընդունելի համոզմունքները «արևմուտքից ժամանած կանանց մերկ արևահարման դեմ»։ Նախարարը պնդում էր, որ «այն կանայք, որոնք զալիս են Թուրքիա արևահարվելու, կարող են անտեղի դրամներ չվատնել, հետալսու երկիրը նրանց առջև փակվելու է», սակայն, երբ մա վերջապես գիտակցեց, որ մեծ պարագայում երկիրը տարեկան երեք մլրդ. դոլլար վնաս կկրի, հրաժարվեց այդ զաղափարից¹⁵։ Օգալի կառավարության օրոք արգելվեցին մահ ռադիոյով ու հեռուստատեսությամբ գարեջրի գովազդումը, ավելին՝ դպրոցներից, ուսանողական հանրակացարաններից, սպորտային համալիրներից ու մզկիթներից 200 մետր հեռավորության վրա խստիվ արգելվեց ժամանցի վայրերի հիմնումը։

1984 թ. մարտի 25-ին նշանակված տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքում իսլամամետ Բարօրություն կուսակցությունը (ԲԿ)՝ Ահմադ Թեքդալի գլխավորությամբ ստացավ քվեների 4,4 տոկոսը, այդ թվում Վանի և Ուրֆայի քաղաքապետների պաշտոնները¹⁶։ ԲԿ-ն հետզհետե ընդլայնելով իր շարքերը՝ բազմաթիվ քաղաքագետների կարծիքով, դարձավ ժամանակին Թուրքիայում գործող ամենակազմակերպված, հստակ ներկուսակցական կառուցվածք ունեցող կուսակցություններից մեկը։

Նախագահ Էվրենիմ մտահոգում էր մահ. Օգալի արաբամետ արտաքին քաղաքականությունը։ Նախագահը կարծում էր, որ մախ այդ հարաբերությունները կարող են ճիշտ չընկալվել Արևմուտքի կողմից, իսկ հետո իսլամական աշխարհի առջև դռները լայնորեն բացելով, պարարտ հող կարող է ստեղծվել իսլամական արմատականների տարերային ներխուժման համար¹⁷։ Ուշագրավ էր, որ իսլամական աշխարհի հավատարմությունը շահելու և տարածաշրջանում հեղինակության բարձրացման նպատակով Թուրքիան նվազեցրեց Իսրայելի հետ դիվանագիտական հարաբերությունների մակարդակը՝ այն հասցնելով երկրորդ քարտուղարի գործերի հավատարմատարի աստիճանին։ Ավելին, 1988 թ. Թուրքիան պաշտոնապես ճանաչեց Պաղեստինի անկախությունը¹⁸։ 1980-ականների սկզբին Թուրքիան սկսեց շահավետորեն օգտվել Իսլամական զարգացման բանկի անդամակցությունից և արդեն 1984 թ. ստացավ 750 մլն. ԱՄՆ դոլարի վարկ, որից 500 մլն. ուղղվեց արտահանման ոլորտի զարգացմանը¹⁹։

2. «Թուրք-իսլամական համադրություն» մախազիծը

1980-ականների կեսերին, երբ գեներալների աշախույժ հսկողությամբ

յան ներքո ներկրում իշխում էին քաղաքացիական իշխանությունները և թվում էր՝ ստեղծվել էր ներդաշնակ քաղաքական կացություն, ակնհայտ դարձավ, որ ռազմական հեղաշրջմանը հաջորդած կրոնական քաղաքականությունը ուներ առավել հեռագնա նպատակներ: Վերլուծելով վերոշարադրյալ դեպքերը՝ հնարավոր է իրավիճակի բարդությունը առավել պարզորոշ ներկայացնել հետևյալ փաստարկմամբ. եթե կրոնական հետադիմության (թուրք. *irtija*) վերելքը և կրոնի անհանգստացնող քաղաքական ակտիվությունը դասվում էին երրորդ ռազմական հեղաշրջման հիմնական պատճառների շարքին, ապա հետագայում գեներալների համար հենց կրոնը դարձավ հասարակական կարգը և արժեքները նորովի ցենսնտող գաղափարական զենք:

Այսպիսով, ի հեճուկս ռազմական հեղաշրջումից հետո ակտիվորեն շրջանառվող ենթադրությունների, թե բանակը վերջ կդնի իսլամի քաղաքական և հասարակական ակտիվությանը, վերջինս ձեռնարկեց մի շարք քայլեր հասարակությունում կրոնի դերը վերանայելու, ամրապնդելու և ցանկալի շրջանակների մեջ պահելու ուղղությամբ: Ավելին, հետագա քայլերը ապացուցեցին, որ «գեներալները ցանկանում էին իսլամական գաղափարները միաժույլ ազգայնամոլական նպատակների հետ» կերտելու համար «սոցիալապես առավել համակուռ և մվազ քաղաքականացված իսլամական համայնք»²⁰: Այս ամնախադեպ քաղաքական վերաձևումով իսլամը բանակի համար դարձավ միջոց մվազեցնելու, անգամ վերացնելու համար թուրքական հասարակության ներսում ծառացած արժեհամակարգերի այն տարբերությունը, որը հանգեցրել էր նրա չափից դուրս քաղաքականացմանը: Ավելին, թուրք քաղաքագետ Յումիթ Մաքալուօղլու համաձայն, հեղաշրջման ղեկավարները իսլամը համարում էին խաղաղեցնող ու հնազանդեցնող գաղափարախոսական զենք, որի նպատակային ճիշտ օգտագործման դեպքում, այն կարելի էր ուղղել կոմունիզմի և քրդական էթնո-ազգայնականության դեմ²¹: Իսլամը, համաձայն գեներալների, մվազեցնելու կամ իսպառ վերացնելու էր հասարակությունում առկա մշակութային պառակտումը: Հակառակ Յավուզը, հղում կատարելով հեղաշրջումից հետո ստեղծված իրավիճակի վերաբերյալ Ալի Յաշար Մարըբայի վերլուծությանը, նշում է, որ, համաձայն նոր գերնախագծի, երկիրը մնամվելու էր համայնքային բնույթ ունեցող պետական համակարգի, որտեղ «գերիշխող բարոյականության աստիճանը կախված էր պետության տևականության կարևորագույն գրավական հանդիսացող հասարակական միասնությունից»²²: Ջեննի Ուայթը, վերլուծելով իռլանդ ոլորտը կարգավորող քաղաքականության վերանայման վերնախավային մոտեցումը, համոզմունք է հայտնում, որ նոր իրադրությունը հարկավոր է քննարկել մաս սերնդափոխության դիտանկյունից: Քննալականների նոր սերունդը՝ նոր հետաքրքրություններով, շահերով և մտահոգություններով, քիզնեսի և քաղաքականության ոլորտում գալիս էր փոխարինելու նախորդ սերնդի ներկայացուցիչներին: «Սևրի աղտանիշ»-ով ուղեկցվող նախորդ տասնամյակների քաղաքական էլիտան, «քենալիզմ կոչվող կացինն» օգտագործում էր երկրում

գլուխ քարծրացրած էթնիկական և կրոնական ընդվզումները ճնշելու համար, իսկ նոր սերունդը պատրաստական էր դիմել փոխգիջումների և վերանայել իսլամի և էթնիկ խմբերի նկատմամբ նախկինում իրականացված քաղաքական ուղեգիծը²³։

Հասարակության նորոշվի վերակերտման պահանջը հայտնվեց ՁՈՒ-ի քաղաքական օրակարգում և գեներալները ձեռնամուխ եղան այն գաղափարական հոսանքի ստեղծմանը, որի առանցքային նպատակը 1970-ական թթ. վերջին տեղի ունեցած դեպքերի կրկնության բացառման նպատակով ազդեցիկ գաղափարական արգելապատնեշի ստեղծումն էր։ Համաձայն Յունգի՝ ՁՈՒ-ի ղեկավարությունը գիտակցում էր, որ երրորդ հեղաշրջման արդյունքում պարտադրված ապաքաղաքականացումը ստեղծել էր գաղափարական անջրպետ, որն ավելի էր մեծացնում ներհասարակական սոցիալական ու գաղափարական առնակատման հավանականությունը²⁴։ ՁՈՒ-ում գիտակցեցին, որ ընթացիկ տնտեսական քարեփոխումների սոցիալական հետևանքների քննարկման և հնարավոր քննադատություններից խուսանավելու նպատակով, նպատակահարմար է հղկված գաղափարախոսության շրջանակներում հասարակությանը վերահիշմանցնել սոցիալական արդարության կրոնական հիմնադրույթները։

1983 թ. Պետական պլանավորման կազմակերպության պատրաստած փաստաթղթում և Ազգային մշակույթի հատուկ հանձնաժողովի գեկույցում հստակորեն նշվում էին, որ «ներկա սոցիալական փոփոխությունների և արագընթաց ինդուստրիալիզացման» հորձանուտում կրոնը դիտվեց, որպես կարևորագույն գործիք «պետության և ազգի միասնությունը ապահովելու տեսանկյունից»²⁵։ 1985 թ. հունիսի 20-ին «Աթաթյուրքի բարձրագույն խորհուրդը»²⁶ Էլբեցի նախագահությամբ, վարչապետի և ՁՈՒ գլխավոր հրամանատարների մասնակցությամբ հավանություն տվեց «Թուրք-իսլամական համադրություն» կոչվող մշակութային հայեցակարգին, որի «Ազգային փոխգիջում» կոչվող հոչակագրում գետեղված էին հետևյալ գերնպատակները՝ ա) պայքար ձախ և անջատողական ուժերի դեմ, բ) Աթաթյուրքի փափագած միատարր հասարակության ամրապնդում, գ) նոր լույսի ներքո «Օսմանյան կայսրության վեհանձն անցյալի» մատուցում, դ) թուրքականության, իսլամականության, արևմտականացման սկզբունքների համատեղման վրա հիմնված մշակութային ժառանգության խրախուսում²⁷։

Նոր գերնախագծի նախաձեռնողները 1970-ական թվականներից ակտիվ գործունեություն ծավալած «Մտավորականների օջախ» խումբն էր, որի հիմնական նպատակը քաղաքական դաշտի աջ ուժերի հետ դաշինքի ստեղծումն էր ու դրա շնորհիվ բարոյական և փիլիսոփայական ռացիոնալ, սինթեզված համակարգի մշակումը, որը պետք է ներառեր օսմանյան, իսլամական և թուրքական մշակութային ժառանգությունը²⁸։ Այն նախաձեռնվել էր ԱԿ-ի կողմից ձախերի և ԱՀԿ-ի դեմ պայքարելու համար։ Գենչայ Շալանը, իր «Իսլամը և քաղաքականությունը» գրքում «Մտավորականների օջախն» անվանում է «թուրքական օպիոս դեի», պնդելով, որ այն

ևս իր հետապնդած ռազմավարության մեջ ուներ ակնհայտ մնամտություններ իսպանական կաթոլիկական կազմակերպության հետ, քանզի երկուսն էլ գործող վարչակարգերին տրամադրում էին գաղափարական ու բարոյական ռեսուրսներ: «Մտավորականների օջախը» կարևորում էր ուժեղ, կենտրոնացված պետության առկայության հանգամանքը, որի շնորհիվ միայն հնարավոր կլիներ պայքարել «ազգային մշակույթը և ինքնությունը» քայքայող շարժումների դեմ: «Մտավորականների օջախը» դատապարտում էր նաև քեմալիզմի ունեցած դերը Թուրքիայի մշակութային ժառանգությունը մերժելու և 1970-ականների բռնությունների գաղափարական պատճառ դառնալու համար²⁹: Կիրենկի կարծիքով՝ նոր բանաձևը, դարասկզբին հենց քեմալականների կողմից մերժված պանիսմալիզմի և պանթյուրքիզմի գաղափարախոսությունների խմբագրված տարբերակն էր՝ երկուսին խիստ բնորոշ հատկանիշներով³⁰: Նոր գերնախագծի գաղափարական ակունքները ձգվում էին 19-րդ դարի 60-70-ական թվականները, որոնք շուրջ մեկդարյա խմբագրումներից հետո ավելի էին հղկվել՝ դառնալով ներդաշնակ գաղափարական ուղեգիծ: Անկարայի Հաջեթեհե համալսարանի պրոֆեսոր Գյոքհան Չետինսայան համոզմունք է հայտնում, որ «Թուրք-իսլամական համադրության» մշակման գործում հսկայական ավանդ են ներդրել «իմամ-հաթիփ» դպրոցների շրջանավարտները և «Ուլ-քուջու» երիտասարդական շարժման հետևորդները, որոնց հայացքներն իրենց հերթին ձևավորվել էին Մեհմեթ Աբիֆի, Յահյա Քեմալի, Նեջիփ Ֆազլի, ինչպես նաև Ջիյա Գյոքալփի, Փեյամի Սաֆայի, Նիհալ Աքսըզի գաղափարների ազդեցության ներքո³¹: 1960-ականների վերջերից պարբերաբար դարձած մտավորական համաժողովներում իսլամի և ազգայնականության մերձեցման կարևորումը, 70-ականներին Ալփապան Թյուրքեշի Ազգային շարժում կուսակցության գործունեությունը, Ահմեթ Արվասու, Նեջիփ Ֆազլու Քիսաքյուրեքի և մի շարք այլ ազդեցիկ մտավորականների դավանած գաղափարները ևս խթանեցին իսլամի և ազգայնականության կողք-կողքի գոյության անհրաժեշտությունը³²:

Վերամեկնարանելով ազգը և պետությունը որպես ընտանիք և համայնք՝ «Թուրք-իսլամական համադրության» գաղափարախոսները դիմեցին օսմանյան-իսլամական խորհրդանիշներին, արժեքներին ու հայեցակարգերին շեշտադրելու համար ընտանիքի, ազգի և պետության գաղափարական հատվածայնության անցանկալի հետևանքները և ընդգծեցին «ազգային փոխզիջման» գաղափարի կարևորությունը: Նոր գերիշխող գաղափարախոսությունը ամփոփում էր նաև թուրքական հասարակության բազմամշակութային բնույթը՝ դրանով հանդերձ ամփոփելով ազգային փոքրամասնությունների գոյության փաստը³³: Մի խումբ պահպանողական մտավորականներ՝ կենտրոնամետ քաղաքական գործիչների, բյուրոկրատական ու դատական համակարգի, ինչպես նաև ազդեցիկ ֆինանսական կազմակերպությունների օժանդակությամբ, սկսեցին ակտիվորեն աջակցել բանակին նոր մախաձեռնության իրագործման գործում: Շուտով թե՛ կրթական համակարգը, թե՛ ՋԼՄ-ները լծվեցին այս գաղափարախոսության

հրապարակայնացման գործին:

Ջյուրբյուր, վերլուծելով նոր գաղափարական ձեռնարկումը, նշում է, որ, վերամատուցելով իսլամական նորատիպ ինքնությունը, իշխանությունները կատարեցին չափազանց համարձակ քայլ, որը յուրաքանչյուր պետական համակարգ չէ, որ կհամարձակվեր իրագործել: Նա նաև նշում է, որ այդ քայլի շնորհիվ Թուրքիան կատարեց իր պարտավորությունները Վաշինգտոնի առջև, որի «կանաչ գոտի» ծրագիրը, նախատեսում էր Իրանի և Աֆղանստանի շուրջ ստեղծել տարածաշրջանի ազդեցիկ իսլամադավան երկրների շրջա՝ ԽՍՀՄ-ի ազդեցության ոլորտների հարավային ընդարձակումը կասեցնելու և Իրանի նոր կառավարության դեմ պայքարելու համար³⁴:

3. Իսլամի հասարակական վերելքը

1980-ականների կեսերին, կարծես հակառակ հասարակության հանդարտեցման վերնախավի ցանկություններին, երկրում անմախաղեպ ակտիվություն ցուցաբերեցին իսլամական կազմակերպությունները, շարժումները, մշակութային ուղղվածություն ունեցող խմբերը: 1986թ. սեպտեմբերին 13-ին Ստամբուլում գործող Նեվե-Շալում սինագոգում պայթեցված մոմակների արդյունքում 24 մարդ սպանվեց: Ահաբեկչության պատասխանատվությունը ստանձնեցին վեց իսլամական ծայրահեղական կազմակերպություն՝ այդ թվում «Իսլամի պաշտպանության լիգան» և «Իսլամական Ջիհադը»: Այդ դեպքից հետո Ստամբուլի համալսարանի պրոֆեսոր Պ. Աթալան հրապարակեց մի ուսումնասիրություն, որի համաձայն կրոնական զարթոնքը մասնավորապես շեշտված է երիտասարդության շրջանում, բերելով հետևյալ խոսում թվերը՝ մզկիթներում աղոթողների 70%-ը 16-30 տարեկան երիտասարդներ են:

«Ջումհուրիյեթ» օրաթերթը 1986 թ. հոկտեմբերի 28-ին հրապարակեց Էջևիթի հետ ունեցած բացառիկ մի հարցազրույց, որտեղ վերջինս նշում էր. «Ցավոք, Թուրքիան հետզհետե հեռանում է Եվրոպայից՝ քաղաքական ու տնտեսական իր ներկա հակումներով միսթրվելով կրոնական ավագուտների մեջ»³⁵: 1986 թ. նոյեմբերին նույն օրաթերթի լրագրողներ Արջաքյուրտը և Թոլյանը կրոնական հոսանքների ակտիվության համար բացեիքաց մեղադրում էին վարչապետ Օզալին և ավելացնում: «Օզալը հետամուտ է քվեների որսին, և դրանով հանդերձ արհամարում է կրոնական շարժումների լրջությունը»³⁶: Շատ ավելի կարծր էր ճշմարիտ ուղի կուսակցության (հետայսու՝ ՃՈՒԿ) առաջնորդ Հ. Ջինդորուքի դիրքորոշումը. «ՄՀԿ-ում» հոմեյնիական՝ դավանանք է իշխում Թուրքիայի կառավարությունը վստահված է այնպիսի տարրերի, որոնք պետության ուժը կրոնամոլության հետ են կապում»³⁷:

1987 թ. դեկտեմբերին խորհրդարանում կրկին սրվեցին կրքերը կրոնական ալիքի վերջին ակտիվացումների կապակցությամբ, որտեղ առավել ուշագրավ էր ՃՈՒԿ-ի պատգամավոր Մ. Յաշայի ելույթը: Նա գործընկերների ուշադրությունը հրավիրեց այն հանգամանքին, որ երկրի 400

ուսանողական կազմակերպություններում գերակշռում են կրոնամոլները և պնդում, որ եթե պետությունը շարունակի անտարբեր մնալ պատեհապաշտների գործունեության հանդեպ, ապա վաղը դասախոսական ամբիոնները կգրավեն ոչ թե գիտության մարդիկ, այլ՝ «գլխաշոր կրող հոգևորականները»³⁸:

1987 թ. հունվարի 8-ին Ադանայի համալսարանում Զ. Էվրենը մեկ անգամ ևս վճռական տոնով խոսեց կրոնական հետադիմության մասին և ազդարարեց, որ պետք է վերացնել բոլոր այն ուժերը, որոնք կցանկանան կոմունիստական կամ կրոնապետական կարգեր հաստատել Թուրքիայում: Էվրենի մամն վճռական ելույթի պատճառներից մեկը գլխավոր շտաբի այն զեկույցն էր, որտեղ նշված էր. «հետադիմությունը բանակում ահռելի չափեր է ընդգրկել, որը կրոնամոլների գործունեության ամենաստակալի հետևանքն է»: Նա դատապարտեց կրոնական հոսանքների անմախաղեպ ակտիվացումը՝ մտավախություն հայտնելով, որ Աթաթուրքի աշխարհիկ սկզբունքները լքողներն վտանգված են³⁹: Ոմանց կարծիքով մախազահի մամն ելույթը պատասխան էր պարբերաբար իր հասցեին ուղղված այն մեղադրանքներին, որոնցում մա քննադատվում էր կրոնական կրթության անվերահսկելի ազատականցման համար⁴⁰:

Պետական օդակները դարձան առավել զգոն կրոնական հետադիմություն որակված շարժումների նկատմամբ, իսկ քրեական օրենսգրքի 163 հոդվածի (աշխարհիկ պետության դեմ գործունեության ծավալում) ոտնահարման մեղադրանքով անցնող քրեական գործերի հարուցումը դարձավ առավել հաճախակի⁴¹: 1987 թ. մայիս-հունիս ամիսների թուրքական մամուլը ողողված էր բազմաքանակ նյութերով՝ նվիրված ուսանողության շրջանում կրկին ակտիվացած կրոնական ելույթներին: Հատկապես «Ջումհուրիյեթ»-ի լրագրող Ուղուր Մումջուն բավական խիստ էր այդ ելույթների գնահատման հարցում, և ընդհանրապես կրոնամոլական հետադիմական շարժումների ամենամոլի հակառակորդներից մեկն էր: «Ջումհուրիյեթ»-ն անդրադարձավ մաս համալսարանների կողքին գործող մզկիթների հարցին՝ նշելով, որ ապագայում «չի լինի մի համալսարան, որն իր կողքին չունենա մամն հաստատություն»: Ըարունակելով այդ շարժումնեի դեմ արշավը՝ Ու. Մումջուն համոզմունք է հայտնում, որ այդ շարժումները հովանավորվում են դրսից և ունեն մեկ նպատակ՝ «Թուրքիան դարձնել իսլամական պետություն»: Նրա «հետաքննությունից» պարզ էր դարձել, որ հատկապես Գերմանիայում գործող կրոնական կազմակերպությունները անմիջական աջակցություն են գտնում «Խալամի տարածման հաստատություն» անունը կրող կազմակերպության կողմից՝ «Թուրքիայի վերախալանացման աստվածահաճո գործը շարունակելու համար»⁴²: Նրանց ֆինանսավորմամբ հրատարակվում են գրքեր, որոնցում Աթաթուրքը ներկայացված էր որպես կրոնի, իսլամական բարոյականության և ավանդույթների թշնամի: Մատուցյալ Արաբիայում հրատարակվում էին մոտ 30000 տպաքանակով գրքեր՝ բոլորն էլ հակաքեմալական և հակաաշխարհիկ բարոգչության կոչերով և դրանք ուղարկում Եվրոպայում ապրող թուրքերին: Նա նշում էր, որ այդ

թուրքերի մեծ մասը անարգել թափանցում են Թուրքիա՝ «իրենց գիտելիքները եղբայրներին փոխանցելու նպատակով»: Անդրադառնալով այսինքն մային՝ անկարելի է շրջանցել Գերմանիայում ապրող 3-4 մլն. թուրքերին, սակայն խնդիր չունենալով ծանրանալ նրանց հետ կապված մանրամասնությունների վրա, պարզապես նշենք, որ հատկապես այս թուրքական գաղութը ազդեցիկ գործոն էր: Երկար տարիներ ապրելով ու աշխատելով Գերմանիայում՝ նրանք կուտակել էին հսկայական խնայողություններ, որի շնորհիվ մշտապես օժանդակել են իսլամական շարժումներին ու կուսակցություններին, ավելին, Կիրեկի կարծիքով 90-ականների սկզբից տարեկան առնվազն 250 մլն. ԱՄՆ դոլար էր փոխանցվել ԲԿ-ին⁴³: ԲԿ-ն իր հերթին ակտիվորեն աշխատում էր Գերմանիայում ապրող «եղբայրներին» հոգևոր արմատներից չկտրելու գործում՝ նրանց համար ստեղծելով «Ազգային տեսակետ» ամսուր կրող կազմակերպությունը, որի գլխավոր գրասենյակը գտնվում էր Զյուլն քաղաքում: Այս կազմակերպության մասնաճյուղերի թիվը Գերմանիայում հասնում էր 170-ի: Ուշագրավ էր նաև այս կազմակերպության աջակիցների ջերմեռանդ մասնակցությունը ընտրություններին (ի դեպ, նրանք հատուկ չվերթներով այցելում էին Թուրքիա ԲԿ-ի օգտին քվեարկելու համար)⁴⁴: Թուրքական գաղութում ազդեցիկ էին մի շարք առաջնորդներ, որոնցից հարկ է նշել Քափլան-հոջայի և նրա որդու Ջեմալեդդին-հոջայի անունները, ովքեր քարոզում էին չվախենալ քեմալական օրենքներից և պայքարել ոչ թե կուսակցությունների, այլ՝ մզկիթների միջոցով, քանզի Աթաթյուրքի կերպարը արդեն անկարող է պայքարել աճող իսլամական ալիքի դեմ: Պաշտոնական Անկարան, անկարող լինելով արյունավետ պայքարել այդ դրսևորումների դեմ, սահմանափակվում էր միայն իր վստահելի անձանց Գերմանիա ուղարկելով, որոնք իսլամի դասընթացներ էին կազմակերպում՝ պետական մշակված ծրագրի համաձայն⁴⁵: Իրականում ԲԿ-ն, ինչպես և երկրում գործող մի շարք այլ ազդեցիկ կրոնական կազմակերպություններ, հսկայական ֆինանսական աջակցություն էին ստանում արտերկրից և հատկապես Շոցի երկրներից: Մի շարք քաղաքագետներ՝ Յեշիլադա, Այաթա, Ուրագովա՝ համոզված են, որ հատկապես օտարերկրյա կապիտալի հոսքը խթանեց իսլամական շարժումների ակտիվության աճին⁴⁶:

1987 թ. սեպտեմբերի 6-ին անցկացված հանրաքվեի արդյունքում Ս. Դեմիրելը, Բ. Էջևիթը, Ն. Էրբաքանը, Ա. Թյուրքեշը վերադարձան ակտիվ քաղաքականություն⁴⁷: 1987 թ. սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին կայացան ՃՈՒԿ-ի, ՍԴԿ-ի, ԲԿ-ի, ԱԳԿ-ի հերթական համագումարները, որոնք իրենց առաջնորդներ ընտրեցին համապատասխանաբար Դեմիրելին, Էջևիթին, Էրբաքանին և Թյուրքեշին: 1987 թ. նոյեմբերի 29-ին նշանակվեցին արտահերթ խորհրդարանական ընտրություններ: Երկրում հապճեպ ընտրապայքար սկսվեց, որին, ի թիվս այլ խորհրդարանական կուսակցությունների, մասնակցեց նաև ԲԿ-ն: ԲԿ-ն իր քարոզարշավում հիմնականում շեշտադրեց Օզալի քաղաքականության բարոյական «սնանկությունը» նրան մեղադրելով հասարակությունում գլուխ հանած մոր ա-

րատների տարածման համար: Անդրադառնալով կանանց գլխաշորին՝ ԲԿ-ն մեկ անգամ ևս հաստատեց այն միտքը, որ եթե ընտրություններում բախտը ժպտա ԲԿ-ին նա թրքուհիների համար մահմեդական քողը կդարձնի «ազգային հազմատի անբաժան մաս», և կհիմնադրի առանձին հեռուստաալիք՝ բացարձակապես «հոգևոր արժեքներ քարոզելու համար»: Նա նաև անդրադարձավ կրոնական կրթության հարցին, նշելով. «ի հավելումն առկա կրոնական առարկաների անհրաժեշտ է նաև ավելացնել «Դուրանի մեկնարանություն» («Քասալիր») և «մարգարեի ավանդություններ» («Քադիս») առարկաները⁴⁸: ԲԿ-ն պնդում էր, որ իսլամական բանկային համակարգը հարկավոր էր տարածել նաև գյուղերում՝ «նրանց ևս հնարավորություն ընձեռելով օգտվել այդ «արդար բարիքից»: Էրբաքանը քաջ գիտակցում էր, որ հարկ էր հնարավորինս ձեռնպահ մնալ կրոնական կարգախոսների բացահայտ օգտագործումից և «տեղավորվել օրենքի սահմաններում»⁴⁹:

Ընտրությունների արդյունքում ՄՀԿ-ն հաղթեց, իսկ ԲԿ-ն, թեև չկարողացավ հաղթահարել անհրաժեշտ 10 %-ի ընտրական արգելապատնեշը, սակայն ընտրությունների արդյունքները միանշանակ ցույց տվեցին, որ Արևելյան Ամատոլիայի (Դիարբեքիր, Քոնյա, Մալաթիա և մի քանի այլ հիմնականում քրդաբնակ շրջաններ) և Սև ծովի ափամերձ շրջաններում ԲԿ-ն աճող համակրանք էր վստելում, անգամ երկրի արևմտյան արդյունաբերական առումով առավել զարգացած շրջաններից մի քանիսում ԲԿ-ի հաղթանակը վկայում էր կուսակցության աճող հեղինակության մասին: Հարկ է նաև հավելել, որ մի խումբ քաղաքագետներ շատ ավելի բարձր տոկոս էին նախատեսել ԲԿ-ի համար և այն չիրագործելու համար մեղադրեցին Էրբաքանին, «հաճախ անպատասխանատու քաղաքական հայտարարությունների համար», և օրինակ բերում այն հանգամանքը, որ նա իր ընտրարշավում բավական հաճախ էր կրկնում այն միտքը, որ Օզալը «սիրոնիզմի դրածո է» կամ, որ իր կուսակցությունը կլինի միակը, որը կհաղթահարի 10 %-ի արգելքը⁵⁰:

Թեև ԲԿ-ն ցանկանում էր միավորել և ղեկավարել երկրում ակտիվացած կրոնական շարժումները, այնուամենայնիվ նրան այդ հարցում լուրջ խնդիրներ էին սպասվում, որի խորքային պատճառներից մեկը գաղափարական ու մարտավարական տարաձայնություններն էին ԲԿ-ի և երկրում ազդեցիկ դիրքեր ունեցող թե՛ օրինական, թե՛ ընդհատակում գործող կրոնական կազմակերպությունների միջև: 1990 թ. Ստամբուլում տեղի ունեցած համաժողովում ազդեցիկ մաքշիբեղի միաբանության առաջնորդ Չոշանը քննադատեց Էրբաքանին՝ երկրում առկա իսլական ման շարժումների երկատվածության, մաքշիբեղի և այլ ազդեցիկ եղբայրությունների արհամարման համար: Անդրադառնալով հիշյալ ընտրությունների արդյունքներին՝ նա նշեց. «20 տարվա քաղաքական գործունեությունից հետո (իմա՝ ԲԿ-ն) ստացավ ընդամենը 7 %, մյուս ընտրություններում ամենահամարձակ կանխատեսումները չեն կարող գերազանցել 10-15 %-ի սահմանագիծը և այս ամենն այն երկրում որտեղ 99 % մահմեդականներ են ապրում»⁵¹: 1988 թ. ընթացքում կառավարող կուսակցության հասցեին քննադատութ-

յունը ավելի խիստ բնույթ կրեց: Դա մեծապես կապված էր այն հանգամանքի հետ, որ մեջլիսի ընտրություններից հետո Թ. Օզալն իր խմբակցության մեջ խիստ կրճատել էր կրոնական և ազգայնական անդամների թիվը: Մի շարք գործիչներ, այդ թվում Օզալի առաջին տեղակալ Քեչեքլիեռլը, շրջագրվեցին ՄՀԿ-ի նոր կառավարությունում:

Եվրոպական պետությունները ամիսը բաց չէին բողոքում իր անհամատեղությունը արտահայտելու Թուրքիայում կրոնի հաստատում վերելքի կապակցությամբ: Բրիտանական «Էկոնոմիստ» թերթի թղթակից Ք. Մակ-Քինլին այդ ամիսով 1989 թ. հրապարակեց մի նյութ⁵¹, որը գրեթե ամբողջական պատկերացում է տալիս Արևմուտքի մտահոգության մասին: Նա նշում էր, որ Օզալը պետք է իրական միջոցներ ձեռնարկի հակազդելու համար կրոնական հոսանքների աճին: Ըստ նրա, եթե ՄՀԿ-ի «շարիական» թևը կուսակցության մեջ հզորանա և իրական իշխանության հասնի՝ Թուրքիան անկարող կլինի պահել իր վստահելի հեղինակությունը և Արևմուտքն այդ դեպքում Թուրքիային կդիտի որպես «այլախոհ երկիր»⁵²:

Ամփոփելով փաստերը, որ Աբաթյուրքի մասին հաջորդած մի քանի տասնամյակների ընթացքում կրոնը դանդաղ բայց հաստատում կերպով վերահաստատվեց քաղաքական կյանքում: Այդ համատեքստում, 20-րդ դարի վերջին երկու տասնամյակների ընթացքում կրոնական գործընթացներն ունեցան որակական ու բովանդակային նոր դրսևորումներ: 1980 թ. հեղաշրջմանը հաջորդած ժամանակահատվածում հասարակության «վերահսկելի իսլամականացման» միջոցով, բանակը մտադիր էր կերտել ապաքաղաքականացված նոր հասարակություն-համայնք, որը կրելու է օսմանյան ժամանակաշրջանի որակական հատկանիշները: Օզալի կառավարման տարիներին կրոնական գործընթացները շատ ավելի արագ զարգացան քան կարելի էր ակնկալել: Նրա զգուշավոր, սակայն համակարգված իսլամականացման ծրագրերը գործունեության լայն դաշտ տրամադրեցին իսլամական սկզբունքներով ուղեկցվող հասարակական ու քաղաքական շարժումներին: Արդյունքում, կրոնը, համեմվելով ազգայնականության բաղադրատարրերի հետ, դարձավ նորառծ քաղաքական գերմասկադի մի մասը: Ոմանք «Թուրք-իսլամական համադրության» ավարտը թվագրում են 1990-ականների սկզբին, սակայն, կարծում ենք, որ այն, ունենալով տարբեր դրսևորումներ, մերթնդներք հայտնվել է տարբեր կուսակցությունների քաղաքական օրակարգում: Ավելին, իշխող Արդարություն և զարգացում կուսակցության մարտավարությունը հիշյալ համադրության խելամիտ կիրառման ապացույց է: ԱԶԿ-ի վեցամյա պատմությունը վկայում է այն մասին, որ այդ կուսակցության գաղափարախոսները, վերագնահատելով այդ նախագծի արժեքավոր տարրերը, կարողացել են յուրացնել դրա ամենամարտունակ տարրերը և հաջողությամբ ներդրել սեփական կուսակցության ռազմավարության մեջ:

RELIGION IN TURKEY IN THE 1980S: THE ESSENCE OF THE "TURKISH-ISLAMIC SYNTHESIS" PROJECT

After the third military intervention in 1980, the Turkish military took a special care to shape a new society with innovative power and value-structures. The power centers of the Turkish elite took all the precautions to eliminate all the causes resulting in the unprecedented ideological and power struggle in the 1970s. They thought that Turkish society required a heavy handed management around those values which would make Turkey immune to various ideological attractions coming mainly from the left. To that end, they reinvented religion by attaching a special mission to it – to unite, pacify and consolidate the society. One of the components of the grand-project was the "Turkish-Islamic synthesis", which was to fuse religion with nationalist sentiments. Some believe that project had a short life with the death of Ozal, but we contend that Turkish-Islamic synthesis, through different manifestations, was present in the 1990s and was even revitalized with the victory of the Justice and Development Party in Turkey.

ՇԱՆՈՋԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ալվիլի մանքաման տե'ս Tünay Muharrem, *The Turkish new right's attempt for hegemony*, The political and socioeconomic transformation of Turkey, eds. Eralp Atila, Tunay Muharrem & Yeşilada Birol, Westport, Praeger, 1993 - Ayata, Ayşe, *Ideology, social bases and organizational structure of the post-1980 political parties*, The political and socioeconomic transformation of Turkey. ed. Eralp Atila, Tunay Muharrem & Yeşilada Birol, Westport, Praeger, 1993.
2. Ahmad Feroz, *The making of modern Turkey*, London, Routledge, 1993, p. 192.
3. Sh'u Hale William, *Turkish politics and the military*, London, Routledge, 1994, p. 277.
4. Sh'u Liel Alon, *Turkey in the Middle East: Oil, Islam and politics*, London, Boulder, 2001, p. 14.
5. Göle Nilüfer, *Authoritarian secularism and Islamist politics: the case of Turkey//Civil society in the Middle East*. ed. Norton A., v. 2. Leiden, 1996, p. 31.
6. Sh'u Evren Kenan, *Kenan Evren'in Anıları*, Istanbul 1990, c. 4, s. 17, 247.
7. Նույն տեղում, էջ 251:
8. Sh'u Heper Metin, *The executive in the Third Turkish Republic, 1982-1989*, *Governance*, v.3, 1990, p. 5.
9. Ahmad Feroz, *Military intervention and the crisis in Turkey*, MERIP reports, New York, v.93, 1981, p. 5.
10. 1980-83թթ. ԱՄՆ-ի կառավարման տարիներին Եվրոպայում, Եվրոպայում իրեն հարաբերությունների և ընթացիկ բանակցությունների համար տե'ս Dağı İhsan, *Democratic transition in Turkey, 1980-83: The impact of European diplomacy*, *Middle Eastern Studies*, v.32/2, 1996.
11. Sh'u Данилов В., *Турция 80-х: от военного режима до "ограниченной демократии"*, Москва, Наука, 1991, с. 101.
12. Sh'u Toprak Binnaz, *The state, politics and religion in Turkey*, *State, Democracy and the Military: Turkey in the 1980s*, Heper M. & Evin A, Berlin, Walter de Gruyter, 1988, p. 132.
13. Pope Nicole & Hugh, *Turkey unveiled: Atatürk and after*, London, J. Murray, 1997, p. 170.
14. Sh'u Toprak Binnaz, *Pollitisation of Islam in a secular state: the National Salvation party in Turkey*, *From nationalism to revolutionary Islam*, ed. Arjomand S., London, 1984, p. 125.
15. Sh'u Ahmad Feroz, նշվ. աշխ., էջ 223:

16. Sbu Данилов, Գշվ. աշխ., էջ 127:
17. Sbu Рорв, Գշվ. աշխ., էջ 169:
18. Цыбѣй Գաբրիելյան տնի՝ Зиганшина. Г., Светская Турция в Организации Исламская Конференция, *Азия и Африка сегодня*, no. 3, 2004, с. 33.
19. Sbu Иванова И., "Исламский фактор" в политике турецкого руководства после военного переворота 1980г., Ислам и проблемы национализма, п.р. Гонковского, Москва, Наука, 1986, с. 131.
20. Sbu Yasar Ali, The place and the future of secularism in Turkey, *Zeitschrift für Türkei studien*, v.6/1, 1993, p. 80.
21. Sbu Sakallioğlu Umit Cizre, Parameters and strategies of Islam-State interaction in republican Turkey, *International Journal of Middle Eastern studies*, v.28/2, 1996, p. 235.
22. Sbu Yavuz Hakan, Political Islam and the Welfare (Refah) Party in Turkey, *Comparative Politics*, v.30/1, 1997, p. 69.
23. Sbu White Jenny, Islamist mobilization in Turkey; A study of vernacular politics, Seattle, University of Washington Press, 2002, p. 57.
24. Sbu Jung Dietrich & Piccoli Wolfgang, Turkey at the crossroads: Ottoman legacies and a greater Middle East, London, Zed Books, 2001, p. 186.
25. Sbu Erkan Akin, Omer Karasapan, The "Turkish-Islamic synthesis", *Middle East Report*, no. 153, 1988, p. 18.
26. Հառավարչությանը կից գործող այս խորհուրդը, որի լրիվ անվանումը է՝ «Արաբյուրքի անվան մշակույթի, լեզվի և պատմության բարձրագույն խորհուրդ», ազդեցիկ զաղափարական-սահմանադրական մարմին է, որի հսկողության պայմաններում գործում են 4 գիտական ինստիտուտներ՝ Թուրքիայի պատմության միությունը, Թուրքիայի լեզվի միությունը, Արաբյուրքի ուսումնասիրության կենտրոնը և Արաբյուրքի անվան մշակութային կենտրոնը:
27. Sbu Ateş ve Toktamış, Türk-Islam Sentezi, Istanbul, 1991, p.11-12.
28. Sbu Hale William, Turkish politics and the military, London, Routledge, 1994, p. 229.
29. Sbu Erkan Akin, Omer Karasapan, Գշվ. աշխ., 1988, p. 18.
30. Sbu Киреев Н., Турция: синтез национализма и исламизма в государственной идеологии, Национализм и фундаментализм на Ближнем Востоке. Материалы конференции. Москва, ИИИиБВ, 1999.
31. Sbu Çetinsaya Gokhan, Rethinking nationalism and Islam: Some preliminary notes on the roots of "Turk-Islamic synthesis" in modern Turkish political thought, *The Muslim World*, Jul-Oct 1999, v.89, 3-4, p. 369-370.
32. Sbu Tanil Bora and Kemal Can, Devlet-Ocak-Dergah, 13 Eylül den 1990's İara Ulkucu Hareket, Istanbul, 1991.
33. Sbu Ross Jeffrey, Politics, religion and ethnic identity in Turkey//Religion and politics in the Middle East, ed. by Michael Curtis, Westview Press, Boulder, Colorado, 1982.
34. Kurkçu Ertugrul, The crisis of the Turkish state, *Middle East Report*, v.26/2, 1996, p. 5.
35. «Դրօշակ», 1986, հ. 11:
36. Sbu «Դրօշակ», 1987, հ. 20:
37. Նույն տեղում:
38. Նույն տեղում:
39. Sbu Ahmad Feroz, Islamic reassertion in Turkey, *Third world quarterly*, v.10/2, 1986, p. 752.
40. Sbu Kushner David, Turkish secularism and Islam, *Jerusalem Quarterly*, v.38, 1986, p. 98.
41. Sbu Ahmad Feroz, Գշվ. աշխ., 1988, p. 752.
42. Киреев Н.Г., Религиозный экстремизм — угроза внутренней стабильности Турции//Ближний Восток: Проблемы региональной безопасности, Москва, ИИИиБВ, 2000, сс. 92-106.
43. Sbu Киреев Н., Турция между Европой и Азией, 2000, с. 266.
44. Sbu Toprak Binnaz, Politisation of Islam in a secular state: the National Salvation party in Turkey// From nationalism to revolutionary Islam, Said Amir Arjomand, London, 1984, p.

45. Տի'ս Старченков Г., Агония лаицизма?, Азия и Африка сегодня, но. 6, 1996, с. 56-57.
46. Տի'ս Yeşilada, Birol, Turkish foreign policy towards the Middle East// The political and socioeconomic transformation of Turkey, A. Eralp, M. Tunay & B. Yeşilada, Westpoint, CT, Praeger Publishers, 1993, p. 189; Ayata Sencer, The rise of Islamic fundamentalism and its institutional framework, 1993, p. 58-59// The political and socioeconomic transformation of Turkey, A. Eralp, M. Tunay & B. Yesilada, Westpoint, CT, Praeger Publishers, 1993; Уразова Е., К оценке роли исламских идей и капиталов в турецкой экономике, Ближний Восток и современность, вып. 9, 2000, с. 232.
47. 1982 թ. ընդունված սահմանադրության անցումային դրույթների չորրորդ հոդվածի համաձայն այդ որոշման մի խումբ ազդեցիկ քաղաքական փոփոխություններ 10 տարով, իսկ ուրիշներ էլ 5 տարով գրկվել էին քաղաքական գործունեությամբ զբաղվելու իրավունքից, տե'ս Данилов, 1991, с.160.
48. Տի'ս Finkel Andrew, Municipal politics and the state in contemporary Turkey// Turkish state: Turkish society, eds. Finkel A. & Sirman Nukhet, A publication of the SOAS Centre of Near and Middle Eastern Studies, London, Routledge, 1990, p. 122.
49. Նույն տեղում:
50. Տի'ս Finkel Andrew, Municipal politics and the state in contemporary Turkey// Turkish state: Turkish society, ed. Finkel A. & Sirman N., London, Routledge, 1990, p. 134.
51. Տի'ս Shankland David, Islam and Society in Turkey, Huntingdon, The Eothen Press, 1999, p. 91.
52. Տի'ս The Economist, v. 313/7605, 1989.
53. Տի'ս նույն տեղում:

ՀԱՄԱԿ ՄՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹՈՒՐԶԵՐԵՆ, ԹԱԹԱՐԵՐԵՆ,
ՂՓՉԱՂԵՐԵՆ, ԶՐԴԵՐԵՆ ԵՎ ՀՈՒՆԱՐԵՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ*

Շատ ժողովուրդներ և ազգեր կան, որոնք իրենց գրականությունը ստեղծել են միաժամանակ երկու լեզվով՝ սեփական ու օտար, և կամ էլ՝ օտար լեզուներով:

Օսմանյան պետության կողմից Հայաստանի նվաճումից հետո ավելի քան 400 տարի հայերն ապրել են թուրքական տիրապետության տակ: Սա սովորական հպատակություն չի եղել, այլ կրոնական մոլեռանդության մոլուցքով տարված ռազմա-ֆեոդալական իշխանության տևական ու անհավոր ճնշում մշակութային խոր անցյալ ունեցող մի ժողովրդի վրա: Թուրք տիրապետողները ոչ միայն կողոպտել են հայ ժողովրդի ստեղծած նյութական բարիքները, նրա ֆիզիկական աշխատանքի արդյունքը, այլև ամեն կերպ աշխատել են ոչնչացնել կամ յուրացնել նաև նրա մտավոր ստեղծագործության արժանիքները, ձուլել ու մահմեդականացնել հպատակ ժողովուրդներին: Հայաստան թուրքերեն գրականությունը ծնունդ է առել որպես ինքնապահպանման ու լուծագման դեմ պայքարի միջոց: Խորապես ազգային այս երևույթն իր ձեռագիր ու տպագիր զարգացման ժամանակաշրջանում վերաճել է մշակույթի մի այնպիսի հզոր, բազմաժանր ու ինքնուրույն ճյուղի, որը ոչ միայն արդարացրել է իր նախնական առաքելությունը, այլև վերաճել է ավելի լայն գործոնի՝ ծառայել ոչ միայն թուրքախոս ու նաև թուրքերենին տիրապետող հայերին, այլև Օսմանյան կայսրության մեջ ապրող այլ ազգերի ևս, իր մասն ունենալով այդ ժողովուրդների նկրտականացման և լուսավորության զարգացման գործում:

Հարկ է նշել, որ ի թիվս հայերեն ու հայաստան թուրքերեն գրականության, գոյություն են ունեցել հայաստան ղիչաղերեն, լատիներեն, արաբերեն, քրդերեն և շատ այլ հայաստան գրականություններ:

Պահպանված և մեզ հասած հայաստան հունարեն ձեռագրերը չափազանց փոքր թիվ են կազմում: Դրանք հիմնականում ԺԵ-ԺԺ դարերում Թիֆլիսում, Մեծոփայ վանքում, Աստրախանում, Կ.Պոլսում և այլուր գրի առնված մատյաններում տեղ գտած աղբյուրներ են, տաղեր, բառացանկեր, որոնց կից որպես կանոն եղել են դրանց այլալեզու տարբերակները: Այս ձեռագրերն ունեցել են կիրառական հստակ մշակակություն:

Հայաստան քրդերեն գրականությունը ստեղծվել է որոշակի նպա-

տակադրվածությամբ: Քանի որ այլընտրանք համարյա չկար, ապա քրդախոս ժողովուրդների համար ստեղծված գրականությունը հիմնականում եղել է հայատառ: Ընդդիմ հայ գրիչների, մեզ են հասել այս գրականության ձեռագիր և տպագիր նմուշներ², որոնք տպագրվել են հայկական տպարաններում³, մասամբ հայ հեղինակներ ունեցել: Հայատառ քրդերեն ձեռագրերը աղոթքներ են, ժողովրդական բանահյուսության օրինակներ, ինչպես՝ առակներ, հանելուկներ, ասացվածքներ, երգեր, նաև բառարաններ: Դրանք որոշակի ազգագրական արժեք են ներկայացնում: Հետաքրքրական է Ախալքալաքի Էշտիա գյուղում գրիչ, տաղերգու Մարգիս Զյուր-դօղլյանի 1869-81թթ. գրի առնված Տաղարանը⁴: Մասնագետների կարծիքով դա միջնադարյան հայտնի քուրդ փիլիսոփա բանաստեղծ Ֆադիե Տայրայի ստեղծագործություններն են: Կարծում ենք հետաքրքրություն են ներկայացնում 1680-1719 թթ. Բաղեշում գրի առնված ժողովածուի մեջ տեղ գտած քրդական «Տաղ Դ-նե խանմանայ» երգերը, Ի դարի հայ-քրդերեն գրուցարառարանը⁵:

Հայատառ քրդերեն տպագիր գրականության մի մասը կապվում է Օսմանյան կայսրության ժողովուրդների շրջանում ամերիկյան և եվրոպական տարբեր կազմակերպությունների միսիոներների գործունեության հետ: Այս շրջանում թարգմանվել ու տպագրվել են տարբեր լեզուներով Աստվածաշունչ, Ավետարաններ, դավամաքանական գրքեր, այդ թվում՝ հայատառ քրդերեն⁶: Հայատառ քրդերեն տպագիր գրականության մյուս մասն իրենից ներկայացնում է լուսավորական առաքելության արտահայտություն: Դրանք Մկրտիչ վարդապետ Տիգրանյանի, Պետրոս Ամիրխանյանի հեղինակած քրդերենի և հայերենի դասագրքերն են, այբբենարաններ, բառարաններ: Այն ուղղված էր քրդերին գրաճանաչ դարձնելու նպատակին⁷:

Հայատառ թաթարերեն և հայատառ ղփչաղերեն գրականությունը հայ մշակույթի անբաժանելի մասն է կազմում և որոշակի պատմաբանասիրական արժեք ունի: Այն հայատառ թուրքերեն գրականության մի տարբերակն է և առաջացել է հավանաբար 14-15-րդ դարերում: Այս ձեռագրերը պատկանելի թիվ են կազմում և գտնվում են աշխարհի տարբեր հայկական ու մասնավոր ձեռագրատներում: Մեզ են հասել հիմնականում 16-րդ դարի ձեռագրեր, որոնք ստեղծվել են Արևմտյան Ուկրաինայի, Լեհաստանի հայկական գաղթավայրերում, որոնց մի մասը թրքախոս էր և ունեն հույժ ազգային բնույթ, ծառայել են համայնքի ամենօրյա կենցաղային, հոգևոր-ծիսական խնդիրներին: Դրանք քարոզգրքեր, աստվածաշնչային պատմություններ են, համայնքի համար որպես օրենսգիրք ծառայած դատաատանագրքեր (Մխիթար Գոշի Դատաատանագիրքն է՝ 10 գլուխ թարգմանությամբ), եկեղեցական, արարողակարգային ձեռագրեր, աղոթքներ, ժամագրքեր, սաղմոսագրքեր, վարք սրբոց, համայնքի կանոնադրություններ, եկեղեցական հաշվառման, ամուսնական դաշնագրերի ու ծնունդի մատյաններ, պարգևագրեր, անդորրագրեր, կահագրքեր, հաշվմատյաններ, պատմություններ (Խիկարի պատմությունը և այլն), տաղեր, բառգրքեր և

այլն⁸:

Հայատառ դիչադերեն ձեռագրերը⁹ պարունակում են բառարաններ, ժամագրքեր ու աղոթագրքեր, դատաստանագրքեր, բժշկարաններ: Չափազանց արժեքավոր են դիչադերենի եզակի քերականությունները, բառարանները¹⁰: Դրանք իրենց համագործ չունեն քյուրքական ժողովուրդների մոտ:

Երբեմն հայատառ թուրքերեն, հայատառ քաթարերեն և հայատառ դիչադերեն բաժանումները հարաբերական են՝ կախված ձեռագրացուցակներ կազմողների հայեցողությունից, ձեռագրերի ստեղծման ժամանակային ու լեզվական նրբություններին տիրապետելուց: Հետագայում այս ձեռագրերի մի մասը տպագրվել է հիմնականում Լվովում¹¹:

Գալով հայատառ թուրքերեն գրականությանը, ապա նրան ևս հատուկ է շեշտված հայ ազգային նկարագիրը: Հայատառ թուրքերեն գրականությունը չի համարվում հայ ժողովրդի հիմնական, առավել ևս՝ հայ ժողովրդի մտավոր զարգացման գրական միակ արտահայտությունը: Հայատառ թուրքերենը ստեղծվել է հայերի կողմից որպես հաղորդակցության միջոց ոչ միայն հայերեն չինացողների, այլ նաև մասամբ հայերենին տիրապետողների համար: Հայատառ թուրքերեն գրականության սկզբնավորումն ու զարգացումն ընթացել է բուն հայ գրականությանը զուգահեռ և երբեք պայմանավորված չի եղել հայ գրականության վերելքով կամ վայրէջքով: Այն թելադրված էր միայն Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական, քաղաքական իրավիճակով: Հայատառ թուրքերեն գրականությունն ունի սոցիալ-քաղաքական խոր արմատներ: Հայատառ թուրքերեն գրականությունը, բնականաբար, թե՛ քանակական և թե՛ որակական առումներով զիջում է բուն հայ գրականությանը և կազմում ինքնուրույն արտահայտչաձև գտած նրա մի անբաժանելի մասը: Հայ ժողովրդի արևմտահայ հատվածը դարեր շարունակ գոյատևելով Օսմանյան կայսրության տիրապետության տակ, անընդհատ գտնվել է բռնի ուժացման քաղաքականության դեմ հանդիման, որը եթե լիակատար հաջողությամբ չի պսակվել, բայց և անհետևանք չի անցել: Ջարդերից ու հետապնդումներից, հարկերից ու մանկահավաքներից հիմնականում ազատվել են այն մարդիկ, որոնք փոխել են, երբեմն միայն առերես, իրենց ազգությունն ու կրոնը: Հարյուրավոր հայկական գյուղեր, որոնք անցյալում ունեցել են իրենց վանքերն ու եկեղեցիները, աստիճանաբար ամայացել են, և 19-րդ դարի կեսերին այդ վայրերում քրիստոնյա հայախոս հայերի թիվը խիստ նվազել էր:

Հայատառ թուրքերեն գրականությունն անցել է զարգացման երկու շրջան՝ ձեռագրական և տպագիր: Ձեռագրական շրջանն ընդգրկել է մոտ 600 տարի (14-19- դդ.): Տպագիր շրջանը գոյատևել է մոտ 250 տարի: Այս շրջաններից յուրաքանչյուրն իր առանձնահատկություններն է ունեցել.

Հայատառ թուրքերեն ձեռագրական շրջանն ունեցել է հարուստ բովանդակություն և ընդգրկումների լայն շրջանակ: Այն ներառել է աշուղական գրականության հսկա մի հատված¹², ազգագրական բազմազան ու բազմաժանր գրականություն, Աստվածաշունչ, Ավետարաններ, կրոնադա-

վանաբանական, բարոյախոսական գործեր, քարոզներ, վարքագրական երկեր ու մարտիրոսությունների պատմություններ, ինչպես նաև քիմիային, բժշկությանը, քվաբանությանը, աստղագիտությանը, անասնաբուծությանը վերաբերող գիտական ձեռագրեր, գեղարվեստական, պատմական ինքնուրույն ու թարգմանական գործեր և այլն¹³։

4. Առերկված է մնում այն փաստը, որ ակտիվ/շնչավոր դասի դերամունը պարունակում է ոչ-ակտիվ դասի -b-, իսկ ոչ-ակտիվ/անշնչալոր դերամունը՝ ակտիվ դասի -n- ցուցիչը:
5. Բայանմունք արտահայտություն է գտնում ինչպես ենթակայի, այնպես էլ ուղղ և անուղականի խմբի դերերը:
6. Կողմնորոշման կարգը արտահայտում է գործողության ուղղվածությունը խոսողի տեսանկյունից. ա տարրը պարունակող մախածանցները (mo-, mota-, moti-) ենթադրաբար արտահայտում են գործողության ուղղությունը դեպի խոսողը, b տարրը (ba-, bi-)՝ խոսողից դուրս:
7. Այս փաստի բացատրությունը տե՛ս [Խաչիկյան 2004, 503-504]:
8. Այս հակադրությունը առանձին վերցված կարող է դիտվել որպես նոմինատիվ տիպի բնորոշ գիծ, քանի որ նոմինատիվ տիպի լեզուներում ենթակայի հոլովը մեկն է՝ ուղղականը, սակայն լեզվի ամբողջական համակարգում դիտարկվելիս այս երևույթը ներկայանում է մեզ որպես ակտիվ տիպաբանության հատկանիշ, ի տարբերություն էրգատիվի:
9. Այս փաստը, ինչպես և անձնական դերամունների համակարգում էրգատիվ հոլովի բացակայությունը, կարող է ընկալվել և ընկալվել է (տե՛ս [Michalowski 1980]) որպես նոմինատիվ լեզուներին հատուկ երևույթ (վերջիններին հատուկ չէ անցողական խոնարհման հակադրությունը անանցողականին): Սակայն, ինչպես հեղինակին հաջողվել է ցույց տալ [Խաչիկյան 2004], անկատար և անանցողական խոնարհումների նույնությունը առաջին երկու դեմքերում, ինչպես և 3 դեմքում ի հայտ եկող տարբերությունները (տե՛ս աղյուսակ) հեշտությամբ բացատրվում են ակտիվ տիպաբանության շրջանակներում. առաջին երկու դեմքերը համընկնում են, քանի որ խոսողն ու խոսակիցը կարող են միայն ակտիվ դասին պատկանել, մինչդեռ 3 դեմքի տարբերությունները գալիս են ակտիվ և ոչ-ակտիվ հակադրությունից (անանցողական խոնարհումը ծագում է վիճակի քայի խոնարհումից և, հետևաբար, սուբյեկտի ցուցիչը սկզբնապես ոչ-ակտիվ դասին էր պատկանում, ի տարբերություն անկատար խոնարհման ցուցից, որը ծագումով ակտիվ է:

Օգտագործված գրականություն

Խաչիկյան Մ.

2004 - Կերպի քերականական կարգը շումերերենում, - ՄՄԱԵԺ, XXIII, եր., էջ 497-506:

2006 - Կերպի/ծանամակի ձևավորումը շումերերենում, էլամերենում, խոտիերենում և ուրարտերենում, ՄՄԱԵԺ, XXV, եր., էջ 273-283:

Климов Г. А.

1973 - *Очерк общей теории эргативности*, М.

1977 - *Типология языков эргативного строя*, М.

1983 - *Принципы контингентной типологии*, М.

Michalowski P.

1980 - Sumerian as an Ergative Language I, *Journal of Cuneiform Studies* 32/2, pp. 86-103.

Հապավումներ

- ՄՄԱՆԺ Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ
- CL F. Steel, The Code of Lipit-İstar, *American Journal of Archaeology* 3, 1948, 425-450.
- DD B. Alster, Dumuzi's Dream. Aspects of Oral Poetry in a Sumerian Myth, Copenhagen, 1972 (*Mesopotamia*, vol.1).
- ELA S. Cohen, Enmerkar and the Lord of Aratta, 1973 (Dissertation Philadelphia)
- G.Cyl.A,B A. Falkenstein, W. von Soden, Sumerische und akkadische Hymnen und Gebete, Zürich-Stuttgart, 1953.
- GA S.N. Kramer, Gilgameš and Agga, *American Journal of Archaeology* 53, 1949, 1-29.
- GLL S. N. Kramer, the Land of the Living, *Journal of Cuneiform Studies* 1, 1947, 3-46.
- IE G. Farber-Flügge, Der Mythos §Inanna und Enki" unter besonderer Berücksichtigung der Liste der m e, Rome, 1973 (*Studia Pohl* 10).
- LE K. Wilcke, Das Lugalbandaeapos, Wiesbaden. 1969.
- NE A. W. Sjöberg, Nungal in the Ekur, *Archiv für Orientforschung* 24, 1973, 19-46.

**ԴԱՐԻ ԵՎ ՊԱՐՄԿԵՐԵՆ ԼԵՋՈՒՆԵՐԻ ԲԱՌԱՅԻՆ ԿԱԶՄԵՐԻ
ՀԱՄԵՍՏԱԿԱՆ - ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՄԻՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁ**

Աֆղանստանում լայն գործածություն ունեցող դարին, պարսկերենի հետ նշանակալի ընդհանրություններ ունենալով հանդերձ, դրսևորում է մաս լեզվական բազմաբնույթ տարբերություններ լեզվանյութի ամենատարբեր մակարդակներում: Ընդ որում, եթե լեզվական ընդհանրությունները հիմնականում պայմանավորված են այդ լեզուների ընդհանուր ցեղակցական, պատմական կապերով, ապա այսօրվա դրությամբ արձանագրվող նրանցից յուրաքանչյուրին բնորոշ տարբերությունները նրանց առանձին, ինքնուրույն զարգացման արդյունք են: Այս խնդրին վերաբերող լեզվական նյութի դիտարկումները, ինչպես մաս դարի և պարսկերեն լեզուների կրողների ընդհանուր պատմական անցյալը արտացոլող գրականության հետ ծանոթությունը հնարավորություն է ընձեռում լիակատար պատկերացում կազմել երկու լեզուների միջև ձևավորված փոխհարաբերությունների, այդ թվում մաս նրանց առանձին տարբերությունների, միմյանցից զանազանվելու և սահմանազատվելու հանգամանքների մասին: Խնդիրը, որը իր որոշ մասերում առանձին դեպքերում ընդհանուր գծերով արծարծվել է իրանագիտական որոշ աշխատություններում, սակայն իր ամբողջության մեջ առաջին անդամ քննության առարկա է դառնում ներկա հոդվածում: Նրա լուծման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ այն կարող է որոշակի դեր խաղալ և՛ պատմահամեմատական հիմնարար ուսումնասիրությունների իրականացման համար, և՛ թե գործածական-կիրառական մի շարք խնդիրների լուծման ժամանակ՝ դարի և պարսկերեն լեզուները արտացոլող անհրաժեշտ դասագրքերի, ուսումնական ձեռնարկների, բառարանների կազմության, ինչպես մաս թարգմանչական աշխատանքներ ծավալելիս:

Դարի և պարսկերեն լեզուների բառային կազմերի համեմատական-համադրական դիտարկումների ընթացքում բացահայտվող տարբերությունները՝ ըստ իրենց լեզվական բնույթի, դասակարգվում են երեք հիմնական խմբերի՝ իմաստաբանական, բառակազմական և բառափոխական:

I. Դարի լեզվի բառային կազմի իմաստաբանական առանձնահատկությունները պարսկերենի համադրությամբ

Դարի և պարսկերեն լեզուները ընդհանուր առմամբ ունեն բառային կազմերի մեծ քանակ կազմող ընդհանրություններ: Միևնույն ժամանակ նրանք շատ հաճախ տարբերվում են միմյանցից բառային կազմերի առանձին կողմերին բնորոշ առանձնահատկություններով, որոնք վերաբերում են հասարակական-քաղաքական, ֆինանսատնտեսական, գիտակրթական, գիտատեխնիկական ոլորտներին, ինչպես մաս դիվանագիտության, արդյունաբերության, գյուղատնտեսության, առողջապահության բնա-

գավառներին: Պարսկերենի համադրությամբ դարիի բառային կազմը բնութագրվում է մաս նրան բնորոշ առանձնահատկություններով, որոնք վերաբերում են կենդանական և բուսական աշխարհի, մարդու մարմնի մասերի, հիվանդությունների, ազգակցական կապերի, արհեստների, աշխարհագրական, ռազմական բնագավառների տերմինաբանությանը, ինչպես մաս առօրյա-կենցաղային և առանձին հատկամիջներ արտացոլող հասկացությունների խմբերին: Այստեղ, առաջին հերթին, տարբերակման ենթակա են տարբեր առարկայական հարաբերակցության ձևախմբատային կառուցվածքի ու կիրառության բառերի առանձին խմբերը, որոնցից մասնավորապես առանձնացվում են.

Հասարակական-քաղաքական բնագավառի հասկացություններ արտացոլող բառեր՝ (դարի և պարսկերեն լեզուներից բերվող օրինակները ներկայացվում են լատինատառ, դարի, պարսկերեն հերթականությամբ) rezākār-nikukār (բարեգործ), nofus šomāri¹-saršomāri (մարդահամար), haywādwāl - hamvatan (հայրենակից) և այլն:

Տնտեսական բնագավառի հասկացություններ արտացոլող բառեր՝ bārčālāni- bārkeši (բեռների առաքում), tahwilxāna-*anbār* (պահեստ), lilām²-*harāj* (աճուրդ) և այլն:

Ֆինանսական ոլորտին բնորոշ բառեր՝ as`ār-e xāreja - *arz-e xāreji* (արտաքույթ), āyed-darāmad (եկամուտ), fisad-darsad (տոկոս), qeymat-e tamāmsod-arzeš-e māye (ինքնարժեք) և այլն:

Գիտակրթական բնագավառի հասկացություններ արտացոլող բառեր՝ ta`limāt-e sānawi-tahsilāt-e motevassete (միջնակարգ կրթություն), layliya³-xābgāh (հանրակացարան), maktab-e layliya - *šabāneruzi* (գիշերօթիկ) և այլն:

Տեխնիկական բնագավառի հասկացություններ արտացոլող բառեր՝ eštreng - *farmān* - *e otomobil* («մեքենայի ղեկ»), barma-ye barqi - *drel* - *e barqi* (էլեկտրաշաղափ), hefz o morāqebat-*bahrebardāri* (շահագործում), regmāl-*sonbāde* (հղկաթուղի) և այլն:

Գիվանազիտության ոլորտին բնորոշ բառեր-տերմիններ՝ šeyxossofarā⁴- *moqaddamossofarā* (ղիվանազիտական ներկայացուցչությունների ավագ), qayr-e monsalek - *qeyre moteahed* (չմիացող), sekartar - *monsī* (քարտուղար), wiza - *ravādīd* (վիզա) և այլն:

Արդյունաբերության ոլորտին բնորոշ բառեր, հասկացություններ՝ bādi - *otāq-e otomobil* (մեքենայի քափք), perifabriket-*toullid šode dar kārkhāne* (պատրաստի արտադրանք), čālān-*fāāl* (գործող, աշխատող), six-e gul-*milgerd* (ամրան), nat-*mohre* (պնդողակ) և այլն:

Գյուղատնտեսության բնագավառի հասկացություններ արտացոլող բառեր՝ jāwāri - *zorrat* (եղիպտացորեն), čarmaqz - *gerdu* (ընկույզ), xoškābi - *xošksālī* (երաշտ), zardak- *havjī* (զազար), rumi-*goujefarangi* (լուլիկ) և այլն:

Առողջապահության բնագավառին բնորոշ բառեր, հասկացություններ՝ totla - loknat-e zabān (կակազ), hefzossahhiya - behdāšt (հիգիենա), dermeltun - daruxāne (ղեղատուն), mrastun - āsāyeshgāh-e sālmāndān (ծերանոց) և այլն:

Կենդանական աշխարհին արտացոլող բառեր՝ sangbaqa - sangpošt (կրիա), nažārak - dārkuḅ (փայտփորիկ) և այլն:

Ռազմական բնագավառում կիրառվող բառեր, բառ-տերմիններ՝ bolukmešer - farmānde-ye daste (դասակի՝ հրամանատար), drestiz - setāde ko II (զլխավոր շտաբ), rasm-e gozašt-reje (շքերթ), qulordu-sepāh (կորպուս), yaraqmāl-gerougān⁵ (պատանդ) և այլն:

Կենցաղի ոլորտին վերաբերող բառային միավորներ՝ ābbāzi⁶-šenā (լոռ), ātešgolkon⁷-ātešxamuškon (կրակմարիչ), patlun⁸-šālvar (տաբատ), čayjūš-kebrī (թեյնիկ) և այլն:

Աշխարհագրական անվանումներ՝ almaqreb-marākeš (Մալոուկյո), bahrulkāhel⁹ - oqyānus - e ārām (Խաղաղ օվկիանոս), beytulmoqaddas - uršalim (Երուսաղեմ), hāg - lāhe (Հաագա) և այլն:

Արհեստների և առանձին մասնագիտությունների բնագավառներին վերաբերող բառ-անվանումներ՝ tarjomān - motarjēn (թարգմանիչ), jāwāli - bārbar (քեռնակիր), rangmāl - rangkār (ներկարար) և այլն:

Մարմնի մասերին առնչվող բառեր՝ borut - sebil (բռն), kopak - gujpošt (սապատավոր), gorda - koliye (երկկամ) և այլն:

Հատկանիշ ցույց տվող բառեր՝ čatal - kasif (կեղտոտ), qāq - bayāt (չորացած հաց), nesāyi - zanāne (կանացի), wārxtā¹⁰ - dastpāčē (շփոթված) և այլն:

Իմաստային կառուցվածքի տարբեր բնութագրումներով և հնչյունական կազմով տարբերվող բառեր.

Դարի և պարսկերեն լեզուների բառային կազմերում դիտարկվող հնչյունական և ուղղագրական համակարգերի տարբերությունների և նրանցում առանձնացվող իմաստաբանական դաշտերի առանձնահատկությունների բացահայտման ընթացքում նկատվում են բառերի երկու այլ խմբեր, որոնք հիմնականում ընդհանուր լեզվից եկող բառերն են, սակայն այսօրվա դրությամբ ընդհանուր լինելով հանդերձ, մի դեպքում ներկայացնում են հնչյունական կազմի որոշ փոփոխություններ, մյուս դեպքում՝ իմաստային տարբեր պատկերներ.

1. Հնչյունակազմերով և գրությամբ նույն բառեր, որոնք ներկայացնում են իմաստաբանական տարբեր բնութագրումներ՝ սեռատեսակային հարաբերություններ

Այս տիպի բառերի օրինակ են ծառայում alwān, enkešāf, talāsi և այլն: Նրանցից առաջինը՝ alwān-ը դարձիւմ արտահայտում է «կարմրագույն» նշանակությունը, իսկ պարսկերենում «գունավոր», երկրորդը՝ enkešāf-ը դարձիւմ արտահայտում է «առաջընթաց», իսկ պարսկերենում՝

«հայտնագործում», երրորդը՝ *talāsi* բառը դարիում նշանակում է «խուզարկում», «տակնուվրա (անել)», իսկ պարսկերենում՝ «քայքայում»:

2. Գրությամբ մույն, բայց հնչյունակազմով և իմաստով տարբեր բառեր

Դարիի *axta*, *adwiya*, *eāša*, *afsāna*, *pelawar*, *jāla* հնչյունակազմով բառերը կիրառվում են «սպխտում», «դեղորայք», «ուտելիք», «սռակ», «մետաքսագործ», «կարկուտ» իմաստներով, իսկ պարսկերենում մույն գրությամբ, սակայն *axte*, *advie*, *eāše*, *afsāne*, *pilevar*, *jāle* հնչյունակազմերով գործածվում են «կրտած», «համենունք», «սպրտստ», «սռասպել», «չարչի», «ցող» իմաստներով և այլն:

II. Դարի լեզվի բառակազմական առանձնահատկությունները պարսկերենի համադրությամբ

Դարի և պարսկերեն լեզուները բառակազմության քննազննարկում ընդհանուր առմամբ շատ մոտ են: Նրանց ընդհանրությունները վերաբերում են ինչպես նյութական միջոցներին, այնպես էլ կազմության կաղապարներին: Սակայն դրա հետ մեկտեղ նրանք ներկայացնում են նաև բազմաբնույթ տարբերություններ, որոնք հիմնականում վերաբերում են նրանցում գործող բառաբարդմանը, բառածանցմանը, այդ թվում բայակազմությանը, բարդ թվականների ձևավորմանը, ինչպես նաև ընդհանուր պարսկական հնաբանությունների գործածությանը, արաբերենի հատուկ բառակազմական ձևերով բառակերտումներին, հապավումների կազմությանը և այլ գործընթացներին:

Ստորև ներկայացվում են այդ տարբերություններից ամենատարածվածները:

1. Ածանցավոր բառեր

ա. Գոյականակերտ ածանցներով նորակազմություններ

Փուշտուից դարի անցած հնդկական ծագում ունեցող *wāl* և *wālā* գոյականակերտ վերջածանցների միջոցով դարիում կազմվում են մի շարք բառային միավորներ ինչպես սեփական, այնպես էլ օտար լեզուներից փոխառած բառերով, որոնք ցույց են տալիս անձի պաշտոնը, մասնագիտությունը, զբաղմունքը, ունեցվածքը և այլն¹¹: Օրինակ՝ *siyāsatwāl*¹² (քաղաքական գործիչ), *barqwālā* (էլեկտրիկ), *šerwālā* (կաթնավաճառ), *gomrokwālā* (մաքսատանաշխատող) և այլն:

Դարիում *bān* և *wān* ածանցներով ևս կազմվում են մի շարք բառեր, որոնք չեն գործածվում պարսկերենում: Օրինակ՝ *gallabān* (հովիվ), *gādiwān* (սալապան), *gādibān* (սալապան), *pādawān* (հովիվ), *sārawān* (քարավանապետ), *sagwān* (շներ հսկող) և այլն: Այս կարգի բառերից *wān* ածանցով կազմվող բառերը հատկապես գործածվում են խոսակցական դարիում, որտեղ նշված *wān* գոյականակերտ ածանցը ինքը հենց ձևափոխված մույն *bān* ածանցն է: Դարիին հատուկ է նաև *rān* գոյականակերտ ածանցը, որը ցույց է տալիս անձ և պաշտոն: Այս ածանցը խոսակցական լեզվում հաճախ գործածվում է ձայնափոխված *wān* ձևով: Օրին.

նակ՝ gādirān - gādiwān (սալապան), tayyārārān - tayyārāwān (օդաչու), karāčirān - karāčiwān (սալապան) և այլն:

Լեզվում լայն գործածություն ունի նաև խոսակցական ոլորտին բնորոշ gak գոյականակերտ ածանցը¹³, որն, օրինակ, պարսկերենում բացակայում է: Այս ածանցը համապատասխանում է հայերենի -իկ, -ուկ, -ակ ածանցներին արտահայտելով «նվազականության», «քմբշանք», «փաղաքշանք» իմաստները: Օրինակ՝ baččagak (մանկիկ), čučagak (ճուտիկ), kaštigak (նավակ), nawagak (թոռնիկ) և այլն:

Այս ածանցով դարձում կազմվում են մի շարք այլ բառեր, այդ բոլորն առաջացել են բայեր, ինչպես նաև դարձված-տերմիմներ, որոնց մի մասում -իկ նվազական ածանցը կորցրել է իր իմաստը: Օրինակ՝ godigak šodan (անթից կարմրել), abrugak zadan (աչքով ամել), šanagak zadan (բանի տեղ չդնել), keligak šodan (պապանձվել) և այլն:

Գոյականակերտ dāni ածանցով կազմվում են նոր բառեր, որոնք գործածվում են որպես ամանների և այլ կենցաղային իրերի անվանումներ: Դարիի այս ածանցը համապատասխանում է պարսկերենի dān ածանցին: Օրինակ՝ čāydāni (թեյաման), goldāni (ծաղկաման), kēqazdāni (աղբաման), namakdāni (աղաման) և այլն:

Գոյականակերտ i ածանցը, որը կա երկու լեզուներում, դարձում է տարբերություն պարսկերենի, ինչպես սեփական, այնպես էլ փոխառված բառերից կազմում է նաև գոյականներ: Դրանց օրինակ են հանդիսանում. tabdili (փոփոխություն), mawjūdi (գույքագրում), naldawāni (խողովակադրություն), tarjōmāni (թարգմանչություն) և այլն:

բ. Մակբայակերտ ածանցներով բառեր

Պարսկերենի և դարիի համար ընդհանուր ուղղագրությամբ āne (դարձում āna) ածանցով կազմված որոշ ածականներ, որոնք կիրառվում են որպես համեմատական իմաստով մակբայներ, դարձում, ստանալով նակ wār ածանցը, կազմում են նոր մակբայներ նույն նշանակության գաճազան նրբերանգներով: Օրինակ՝ dozdanawār (զոդաբար), begānawār (օտարաբար), mardānawār (տղամարդավարի), mastānawār (հարբածի մման) և այլն:

Դարիի մի խումբ գոյականներ և ածականներ, ստանալով wār կա՛ն wāri ածանցներ, կազմում են նոր բառեր, որոնք ավելի շատ արտահայտում են ածականի իմաստ¹⁴: Օր.՝ baččawār-baččawāri (մանկան պես), hawtawār-hawtawāri (շաքաբական), oštokwār-oštokwāri (մանկան պես), āšeqwār (սիրահարի պես), bozorgwāri (մեծի պես) և այլն:

Ավելացնենք, որ wāri ածանցով կազմված բառերը հիմնականում հատուկ են խոսակցական դարիին:

Դարիին հատուկ են նաև մի շարք ժամանակի մակբայներ, որոնք կազմվում են āki ածանցի օգնությամբ: Օրինակ՝ šāmaki¹⁵ (երեկոյան), čāštaki¹⁶ (կեսօրին), degaraki (երեկոյան) և այլն:

Այս *aki* ածանցի *oquməpəjə*մը դարձում մի խումբ գոյականների միջոցով կազմվում են նոր բառեր, որոնք ցույց են տալիս առարկայի որակը, նրա հատկությունը: Օրինակ՝ *šartaki* (պայմանով, պայմանական), *xaraki* (իշավարի), *sangaki* (ամուր, քարի պես) և այլն:

2. Արաբերենի *āt* հոգնակերտ մասնիկով նորակազմ բառեր

Դարիի բառային կազմում դեռևս պահպանվում են արաբական *āt* հոգնակերտ մասնիկով բազմաթիվ բառեր¹⁷, որոնք արտահայտում են ինչպես եզակիի, այնպես էլ հոգնակիի իմաստներ: Օրինակ՝ *ekmālāt*¹⁸ (մատակարարում), *ta'mināt* (ապահովագրություն), *gomrokāt* (մաքսատուն), *ejṛāt* (ծախսեր), *woquāt* (դեպքեր) և այլն:

Այս երևույթը նկատվել է նաև հայերեմում, երբ առանձին բառերի ք հոգնակիակերտը վերածվել է բառակազմական ածանցի, իսկ բառը երկրորդաբար հոգնակի ձև է ստացել այլ մասնիկով (ռոք, ծեռք, միտք, խելք):

Դարիի վերը նշված հոգնակերտ մասնիկով կազմվող որոշ բառերում դիտվում է վերջնահար չինչող *h-ի* սղում: Օրինակ՝ *ma'mulāt* (արտադրանք), *qataāt* (գործասեր, զինվորական միավորումներ) և այլն:

3. Արաբերենին հատուկ բառակազմական ձևերով նոր միավորներ

Դարիում նոր բառեր են կազմվում նաև նրանում լայն գործածություն ունեցող արաբերեն լեզվի *belā* (առանց)՝ սեռը բնութագրող *be* (-ով) և ժխտական *lā* (ոչ) մասնիկներից կազմված սեռը արտահայտող ցուցիչով: Օր.՝ *belāestesnā* (առանց բացառության), *belātawaqof* (անհետաձգելի), *belā qayd o šart* (անպայման), *belāewaz* (անվերադարձ) և այլն:

Այս և նման տիպի կառուցվածքները կիրառվում են ածականական և մակբայական նշանակությամբ:

Հաճախական կիրառությամբ են բնութագրվում նաև բառեր, որոնք կազմված են սեռանիշ *be* մասնիկի և *āl* որոշիչ հոդի օգնությամբ: Լեզվում լայն գործածություն ունեն նաև *an* սեռանիշ (հարձ-ե ջան) մասնիկի միջոցով կազմված միավորներ: Օր.՝ *be'lxosus* (հատկապես), *be'ttab* (ըստ էության), *be'lmoqābel* (փոխադարձաբար), *anqarib* (շուտով) և այլն:

Քիչ չեն նաև արաբական *lā* ժխտական մասնիկով կազմված բառեր, որոնք իրենց իմաստով համապատասխանում են պարսկերենի *bi* և *nā* ժխտական մասնիկներով կազմվող բառերին՝ *lāentehā - bi entehā* (անվերջ), *lādarak - bi xabar* (անտեղյակ), *lāalāḡ - moālefenāpāzir* (անբուժելի), *lāyanqat' - veqfe nāpāzir* (անընդմեջ) և այլն:

Լայն գործածություն ունեն նաև արաբերենի *qasir* (կարճ), *jadid* (նոր), *tawil* (երկար), *kasir* (շատ), *dār* (տուն), *hefz* (պահպանում), *moxtalef* (զանազան), *qarib* (մոտ) բառերով և *āl* որոշիչ հոդի օգնությամբ կազմվող նոր բառեր: Օրինակ՝ *jadidolta'sis* (նորաստեղծ), *jadidolzar'* (նոր ցանք), *qasirolmoddat* (կարճատև), *moxtalefolnau* (բազմազան), *dārolenšā* (քարտուղարություն), *dārolulum* (ակադեմիա), *dārolsaltana* (արքունիք), *kasirolentešār* (բազմատիրած), *kasirolmellat* (բազմազգ), *hefzossahhiya*

(հիզիենա) և այլն:

Ի տարբերություն պարսկերենի, դարիում շատ գործածական են մասնաբաժիններն *hatta* (մինչև), *hatmi* (անպայման), *and* (մոտ), *taht* (տակ), *hasb* (ըստ), *zi* (ունեցող) ցուցիչներով (մախլիդներ) կազմվող նոր բառերը: Օրինակ՝ *hattalemkān* (հմարավորության սահմաններում), *hattalmaqdur* (հմարավորության սահմաններում), *hatmiolwoqu* (անխուսափելի), *andalemkān* (հմարավորության սահմաններում), *andalmotāleba* (ցպահանջ), *tahtolarzi* (ստորգետնյա), *tahtolhemāya* (հովանավորության ներքո), *hasbolamr* (հրամանի համաձայն), *zialāqa* (շահագրգիռ) և այլն:

4. Բարդ գոյականներ և բաղադրական կազմություններ

Համեմատվող երկու լեզուներում էլ *sar* բաղադրիչով գործածվում են բազմաթիվ ընդհանուր իմաստ արտահայտող բարդ բառեր, սակայն ի տարբերություն պարսկերենի, դարիում կազմվում են մի շարք նոր գոյականներ, որոնք հիմնականում բառապատճենումներ են: Օրինակ՝ *sarinjīnyer* (զխավոր իմեներ), *sarkārgar* (քրիզադավար), *sarmohāseb* (զխավոր հաշվապահ), *sarqonsul* (զխավոր հյուպատոս), *sartabib* (զխավոր բժիշկ) և այլն:

Դարին ժամանակի ընթացքում իր բառապաշարը հարստացրել է ինչպես սեփական, այնպես էլ զանազան լեզուներից վերցրած բառերով ու բառակազմական միջոցներով: Ընդ որում այս բառերը և բառակազմական միջոցները փոխառվել են տարբեր լեզուներից, մասնավորապես.

ա. Փուշտուից՝ *patra* → *patragar* (հախճապակյա ամաններ նորոգող), *tal* → *tal-e-but* (կոշիկի տակի կաշի), *til* → *tilkaši* (յուղազտում) *deriši* → *deriši-ye kār* - (աշխատանքային զգեստ), *zina* → *zinaxāna* (աստիճանավանդակ), *godī* → *godī parān* - (օղապարիկ) և այլն:

բ. Հնդկական¹⁹ լեզուներից՝ *awdorbačča* - *pesaramu* (հորեղբոր տղա), *čawkidār* - *darbān* (պահակ), *katlāwi* - *hamegāni* (մասսայական), *kelkinča*²⁰ - *havākeš* (օդանցք), *nāsekka* - *nātāni* - (խորթ) և այլն:

գ. Ռոմանագերմանական և սլավոնական լեզուներից՝

Դարիի և պարսկերենի բառային կազմերի միջև գոյություն ունեցող տարածված տարբերություններից մեկն էլ այն է, որ նրանցում շատ հաճախ միևնույն առարկաներն ու երևույթները անվանում են տարբեր բառերով, որոնք կազմվում են ինչպես սեփական, այնպես էլ փոխառյալ բառերով կամ ածանցներով: Այս կարգի բառերի շարքին դասվում են.

Անգլերենից փոխառված *box* (տուփ, արկղ, սնդուկ), *ticket* (տոմս), *crem* (կրեմ), *pencil* (մատիտ), *oil* (յուղ) բառերը, որոնք դարիում *baks*, *teket* կամ *teyket*, *kerim*, *pensel* կամ *pensen*, *āyl* ձևերի հնչյունափոխվելուց հետո գործածվում են հետևյալ բառակազմություններում: Օրինակ՝ *āyldāni* - *rouqandān* (յուղաման), *baks-e jeybi* - *kif-e jibi* (ղրամապանակ), *teket-e posta* - *tambr* (մամականիշ), *teket-e lāteri* - *bellit-e baxtāzmāyi* (վիճակախաղի տոմս), *kerim-e but* - *vāks* (կոշիկի ներկ, վաքս), *māstar pelān* -

barnāme-ye koll (գլխավոր պլան), *layndawāni - simkeši* (լարանցում) և այլն:

Ուսերեն լեզվում կիրառվող *техник, микрорайон, комбинат, форма, аппарат* բառերը գործածվում են *taxnik, makroryān, kāmbināt, formā, aparāt* գրութայնք ու հնչյունակազմով:

5. *Քաղաքային*

Լեզվի բառապաշարի հարստացման մեկ այլ միջոց է նաև բառաբարդումը: Այս երկու լեզուներն էլ հարուստ են բարդ բառերի կազմության հնարավորություններով: Տարբեր խոսքի մասերի միջոցով կազմում են ինչպես համադասական հարաբերություններով, այնպես էլ ստորադասական հարաբերություններով բարդություններ՝ համադրական կամ հարադրական կազմությամբ: Պարսկերենում և դարիում նշված երկու տեսակի բարդություններն իրենց կազմությամբ տարբերվում են:

Դարիում պարսկերենի հետ ընդհանուր իմաստ արտահայտող բարդություններում տեղի է ունենում ոչ միայն բաղադրիչ եզրերի տեղափոխություն, այլև նրանցից մեկի հնչյունափոխություն կամ ձևափոխություն, նույնիսկ երբեմն էլ որևէ բառի ավելացում: Այս տեսակի բարդ բանձրացական և վերացական գոյականներ կազմվում են գոյականին գոյականի ավելացմամբ, գոյականին ածականի ավելացմամբ, բայերի անցյալի հիմքերի միմյանց համադրությամբ, բայերի ներկայի հիմքերի ավելացմամբ և այլ կաղապարներով, երբ բաղադրիչներից առաջինը ըստ իմաստի լինում է երկրորդի լրացումը, և հակառակը, երբ բարդության գլխավոր իմաստը արտահայտվում է առաջին մասի մեջ, և նրան լրացնում է երկրորդ բաղադրիչը: Օրինակ՝ *čapkuča - kučečap* (սարուձոր), *harām maqz - maqz-e harām* (ողնուղեղ), *sorfasiyāh - shahsorfe* (կապույտ հագ), *āmad o raft - raftāmad* (զնալ-զալ), *bāl o par - par o bāl* (թև) [թև+թև], *qālmaqāl - qil o qāl* (աղմուկ-աղաղակ) և այլն:

Բարդ ածականներ կազմելիս դարիում, հակառակ պարսկերենի, նույնպես տեղի է ունենում ինչպես բաղադրիչ եզրերի տեղափոխություն, այնպես էլ շաղկապի սղում: Իսկ առանձին դեպքերում էլ այդ լեզուների ընդհանուր ածականը մեկում լինում է պարզ, մյուսում շաղկապով և ածականների կրկնությամբ կամ՝ մեկում պարզ, մյուսում՝ բաղադրյալ կազմություններով: Այսպիսի ածականներ կազմվում են ինչպես գոյականին ածականի ավելացմամբ, այնպես էլ գոյականների կրկնությամբ: Օրինակ՝ *be poštošanāh - bi panāh* (անպաշտպան, առանց պաշտպան ունենալու), *foftāq - tak o foft* (գույգ-կենտ), *sarddīl - dēlsard* (սառնասիրտ), *nafastang - tangnafas* (շնչահեղձ) և այլն:

6. *Բարդ քվականներ*

Դարիում դեռևս գործածվում են հնդկական ծագում ունեցող *lak* («հարյուր հազար») և *kror*²¹ (տասը միլիոն) քանակական քվականները, որոնք ժամանակին նույնպես ընդունված են եղել պարսկերենում, որտեղ սակայն վերջինս գործածվում էր *koru*²² հնչյունակազմով և նշանակում էր

ոչ թե «տասը միլիոն», այլ «հինգ հարյուր հազար»: Այսօր իրենց կազմութեամբ իրարից տարբերվում են մահ *դարիում* և պարսկերենում կիրառվող «երկու հարյուր», «երեք հարյուր» և «հինգ հարյուր» քանակական բարդ թվականները:

Վերոհիշյալ *dosad, sesad, panjsad* քանակական բարդ թվականները դարիում, ի տարբերություն պարսկերենում տեղ գտած *dvist, devist, sisad* և *pānsad* ձևերի, կիրառվում են միավորների և հարյուրավորների միակցումով, ըստ որում միավորը լինում է մախադաս: Ներկայացնում ենք նշված լեզուներում բարդ թվականների միջև դիտարկվող մի շարք տարբերություններ: Օրինակ՝ *hejdah - hejdah* (տասնութ), *nozdah - nuzdah* (տասնինը), *dosad - devist* (երկու հարյուր), *sesad - sisad* (երեք հարյուր), *panjsad - pānsad* (հինգ հարյուր), *lak - sad hezār* (հարյուր հազար) և այլն:

Դարիում բազմազան են մահ քանակական թվականների հետ գործածվող դասանիշերը, որոնք շատ դեպքերում խիստ տարբերվում են մեքորյա պարսկերենում ընդունված դասանիշերից: Նշենք դրանցից մի քանիսը, որոնք կիրառվում են հետևյալ գոյականների դասանիշը ցույց տալու համար. օրինակ *saub -* հագուստների, *rāsta-* բնակարանների, *darband -* խանութների, *bāb -* դռների, լուսամուտների, շենքերի, *toqrā -* կնիքների, *pāye -* մեքենասարքավորումների, էլեկտրական սարքավորումների, սեղան-աթոռի, *qāb -* ժամացույցների, *asla -* ծառերի, տունների, *panja -* բանալիների, *jura -* կոշիկների, ձեռնոցների, *six -* ասեղի, *tār -* պարանի, թելի, *yaxan -* վերնաշապիկների, *dāne -* դանակների, պատառաքաղների, մոմերի համար և այլն:

7. Բայականություններ

Փուշտուի միջոցով դարիին անցած *āleš* (փոխանակում), *andiwāli* (բարեկամություն, ընկերություն), *pāleš* (փայլեցում), *pečkāri* (սրակում, մեքարկում), *tayār* (պատրաստ), *jāgra* (վեճ), *čālān* (միացում), *sātteri* (զրոսանք, ժամանց), *sayl* (դիտում), *gad* (խառը), *kut* (կույտ) բառերով, հնդկական լեզուներից դարի մուտք գործած *čatal* (կեղտոտ, աղտոտ), *čir* (պատառ), *lat* (ծեծ) բառերով, ինչպես մահ թյուրքական լեզուներից փոխառած *toy* (ամուսնանություն, հարսանիք) բառով կազմում են բազմաթիվ բարդ և հարաբարդ կազմություններով բայեր: Օրինակ՝ *āleš kardan* (փոխել), *andiwāli kardan* (բարեկամություն անել), *pāleš kardan* (փայլեցնել), *pečkāri kardan* (սրակել, մեքարկել), *toy kardan* (ամուսնանալ), *sātteri kardan* (զրոսնել), *kut kardan* (կուտակել), *lat kardan* (ծեծել), *māšinčālāni kardan* (շարժիչը աշխատեցնել) և այլն:

Այս նույն եղանակով դարիում անցվեցնից փոխառած *aksidan, āfar, brodkāst, bandāj, palastar, pāking, pelān, dāyl, dreywar, dizāyn, rikārd, sekj, layn, woldeng, hāran* և ֆրանսերենից վերցրած *sābotāj, sort* բառերի օգնությամբ կազմվում են մի շարք նոր բառեր. Օրինակ՝ *āfar gerftan* (ստանալ առաջարկներ), *aksidan kardan* (բախվել՝ մեքենայով), *brodkāst kardan* (հաղորդել ռադիոյով),

bandāṣ bastan (վլղակապել), palastarkāri kardan²³ (սվաղում, սվաղել), pārkīng kardan²⁴ (կանգ առնել), pelāngozāri kardan (ծրագրավորել), dāyl kardan (հավաքել հեռախոսահամար), dreywari kardan (վաքել մեքենա), dizāyn kardan²⁵ (ծևավորել), rikārd bastan (ռեկորդ սահմանել), sābotāṣ kardan (սաղորել), sortbandi kardan (տեսակավորել), seki kardan²⁶ (դահուկով սահել), layn andāzi kardan (լարանցում կատարել), woldengkāri kardan²⁷ (զողել), hāran zadan (ագդանշան տալ) բայակազմությունները:

Ի տարբերություն պարսկերենի, դարիի բայի բնագավառում (հատկապես խոսակցական լեզվում) հանդիպում են բարդ բայեր, որոնք կազմվում են կամ ենթակայական դերբայի և օժանդակ բայի համադրությամբ կամ խոնարհվող բայի անցյալի հիմքով ու օժանդակ բայով կամ էլ անցյալի դերբայի և budan (լինել) ու kardan (ամել) օժանդակ բայերի օգնությամբ: Օրինակ՝ *estād kardan - istādan* (կանգնել), *xāb kardan - xābīdan* (քնել), *basta kardan - bastan* (փակել), *poxta kardan - poxtan* (եփել, խաշել), *xanda kardan - xandidan* (ծիծաղել), *rawān kardan - ferstādan* (ուղարկել) և այլն:

Ներկայացված համեմատություններից երևում է, որ բայական ուրույն կառուցվածքներ պարսկերենում հանդիսանում են պարզ կազմություններ, մինչդեռ դարիում նրանք ներկայացված են իբրև բարդ բայեր և վկայում են այն մասին, որ դարին ավելի հարագատ է մնացել ընդհանուր լեզվում ժամանակին կիրառվող բառակազմական ձևերին, քան պարսկերենը:

Դարի և պարսկերեն լեզուների բառային կազմերում տևական զարգացման ընթացքում գոյացել են բազմաթիվ հնչյունական տարբերություններ, որոնք առանձին դեպքերում հանգեցրել են քերականական ցուցիչների հնչյունական փոփոխությանը: Մասնավորապես, այս երկու լեզուների բայի խոնարհման համակարգում ընդհանուր տոնաբանական մասնիկը դարիում կիրառվում է *me* և *ne* հնչյունակազմերով: Նշենք նաև՝ գոյությամբ ընդհանուր հոգնակի թվի առաջին և երկրորդ դեմքերի դիմային վերջավորությունները պարսկերենում կիրառվում են *im* և *id*, իսկ դարիում՝ *em* և *ed* տարբերակներով²⁸: Օրինակ՝ *namerawam - nemi ravam* («չեմ գնում»), *namerawi - nemi ravi* («չես գնում»), *namerawad - nemi ravad* («չի գնում»), *namerawem - nemi ravim* («չենք գնում»), *namerawed - nemi ravid* («չք գնում»), *namerawand - nemi ravand* («չեմ գնում») և այլն:

III. Դարի և պարսկերեն լեզուների բառափոխական առանձնահատկությունների համեմատական-համադրական բնութագիրը

Երկու լեզուներում բառակազմական տարբերություններից բացի դիտվում են նաև առանձին տարբերություններ բառափոխության համակարգերում, որոնք վերաբերում են բացառապես բայի խոնարհման դեպքերին, մասնավորապես, առանձին ժամանակների բայաձևերի կազմությանը:

Դարի և պարսկերեն լեզուները ընդհանուր առմամբ ձևակազմության շատ մոտիկ համակարգեր ունենալով հանդերձ, դրսևորում են նաև առանձին տարբերություններ, որոնք վերաբերում են հատկապես բայի խո-

մարհման հարացույցին (պարադիզմային): Մասնավորապես, հատկանշական է առաջին հերթին ապառնի ժամանակի ձևերի կազմությունը դարիում: Այստեղ ապառնի ժամանակը կազմվում է խոնարհվող բայի և *xāstan* («ցանկանալ») օժանդակ բայի անցյալի հիմքերով: Ընդ որում խոնարհվող բայի անցյալի հիմքին ավելանում են համապատասխան դիմային վերջավորություններ, իսկ օժանդակ բայի անցյալի հիմքը բոլոր դեմքերի եզակի և հոգնակի թվերում մնում է անփոփոխ: Պարսկերենի այս ժամանակը կազմվում է այլ եղանակով՝ խոնարհվող բայի անցյալի հիմքի և *xāstan* («ցանկանալ») օժանդակ բայի ներկայի հիմքով: Այստեղ խոնարհվող բայի անցյալի հիմքն է բոլոր դեմքերի եզակի և հոգնակի թվերի համար մնում անփոփոխ, իսկ օժանդակ բայի ներկայի հիմքին միանում են համապատասխան դիմային վերջավորություններ: Օրինակ՝ *xāhad raftam - xāham raft* («կգնամ»), *xāhad rafti - xāhi raft* («կգնաս»), *xāhad raft - xāhad raft* («կգնաս»), *xāhad raftem - xāhim raft* («կգնանք»), *xāhad rafted - xāhid raft* («կգնաք»), *xāhad raftand - xāhand raft* («կգնան») և այլն:

Դարիում գործածվում է նաև ապառնի ժամանակի մեկ այլ ձև, որը կազմվում է խոնարհվող բայի անցյալ դերբայի, *xāstan* («ցանկանալ») և *budan* («լինել») օժանդակ բայերով: Այս ձևի կազմության ժամանակ խոնարհվող բայի բոլոր դեմքերում, եզակի և հոգնակի թվերում անփոփոխ մնացող անցյալի դերբային ավելանում է *xāstan* («ցանկանալ») օժանդակ բայը համապատասխան դիմային վերջավորություններով և *budan* («լինել») օժանդակ բայը, որը համընդ է գալիս իր անցյալի հիմքով ու մույնպես անփոփոխ է եզակի և հոգնակի թվերի բոլոր դեմքերի համար: Օրինակ՝ *rafta xāham bud-xāham raft* («կգնամ»), *rafta xāhi bud - xāhi raft* («կգնաս»), *rafta xāhad bud-xāhad raft* («կգնաս»), *rafta xāhem bud-xāhim raft* («կգնանք»), *rafta xāhed bud-xāhid raft* («կգնաք»), *rafta xāhand bud -xāhand raft* («կգնան») և այլն:

Դարի և պարսկերեն լեզուների կարևոր տարբերություններից է նաև դերբայական ձևերով բայերի ժամանակաձևերի կազմությունը: Ի տարբերություն պարսկերենի, դարին ներկայացնում է երկու դերբայով կազմվող ժամանակաձևեր, որոնք կազմվում են *budan* («լինել») օժանդակ բայի օգնությամբ:

Օրինակ՝ *rafta buda bāšam* («զմացած լինեի»), *rafta buda bāši* («զմացած լինեիր»), *rafta buda bāšad* («զմացած լինեք»), *rafta buda bāšem* («զմացած լինեինք»), *rafta buda bāšed* («զմացած լինեիք»), *rafta buda bāšand* («զմացած լինեին») և այլն:

Մեկ այլ դեպքում դարին ճշանակալիորեն տարբերվում է պարսկերենից նրանում կիրառվող խոսակցական լեզվից մուտք գործած ձևերի կազմությամբ, որոնք համապատասխանում են սահմանական եղանակի անցյալ անկատար և անցյալ շարունակական ժամանակաձևերին: Անցյալ անկատար ժամանակի ձևը կազմվում է խոնարհվող բայի անցյալի անկատար ժամանակի և *zadan* («խփել») բայի անցյալ դերբայի միացությամբ:

Այս դեպքում *zadan* («խփել») բայը հանդես է գալիս որպես օժանդակ բայ և բոլոր դեմքերի եզակի ու հոգնակի թվերի խոնարհման ժամանակ մնում է անփոփոխ: Օրինակ՝ *zada me raftam* («զմում էի»), *zada me rafti* («զմում էիր»), *zada me raft* («զմում էր»), *zadan me raftem* («զմում էինք»), *zada me rafted* («զմում էիք»), *zada me raftand* («զմում էին»), որոնք պարսկերենում համապատասխանաբար կիրառվում են հետևյալ ձևերով՝ *mi raftam* («զմում էի»), *mi rafti* («զմում էիր»), *mi raft* («զմում էր»), *mi raftim* («զմում էինք»), *mi raftid* («զմում էիք»), *mi raftand* («զմում էին») և այլն:

Անցյալ շարունակական ձևը կազմվում է խոնարհվող բայի անցյալ դերբայի, *budan* («լինել») բայի անցյալ կատարյալ ժամանակաձևերով և նրանց շաղկապող *rāhi* բառի միջոցով: Այս դեպքում *budan* («լինել») բայը հանդես է գալիս որպես օժանդակ բայ, եզակի ու հոգնակի թվերի բոլոր դեմքերում ենթարկվում է փոփոխության, իսկ խոնարհվող բայի անցյալ դերբայը և շաղկապող *rāhi* - ին բոլոր դեմքերում, եզակի և հոգնակի թվերում մնում են անփոփոխ: Օրինակ՝ *rafta rāhi budam* («զմում էի»), *rafta rāhi budi* («զմում էիր»), *rafta rāhi bud* («զմում էր»), *rafta rāhi budem* («զմում էինք»), *rafta rāhi buded* («զմում էիք»), *rafta rāhi budand* («զմում էին»), որոնք պարսկերենում համապատասխանաբար գործածվում են հետևյալ ձևերով՝ *dāštam mi raftam* («զմում էի»), *dāšti mi rafti* («զմում էիր»), *dāšt mi raft* («զմում էր»), *dāštim mi raftim* («զմում էինք»), *dāštid miraftid* («զմում էիք»), *dāšand miraftand* («զմում էին») և այլն:

Վերը թվարկված տարբերությունները, որոնք հակադրում են երկու լեզուների բայերի խոնարհման համակարգերը, մնացած բնագավառներում ամկա տարբերությունների հետ միասին վկայում են այդ լեզուների առանձին, ինքնուրույն ուղիներով զարգացման մասին:

A COMPARATIVE SURVEY ON WORD-BUILDING IN DARI AND FARSI LANGUAGES

This study is the first attempt in investigating the comparative word-formation in modern Dari and Farsi languages. The work embraces semantical, morphological and word-building aspects of Dari and Farsi and their interrelations conducted by the author.

The outcome of the studies, most probably, may have a significant importance both from the viewpoint of carrying out fundamental historical and comparative studies and of solving some specific practical problems referring, mainly, to compiling manuals, textbooks, dictionaries in Dari and Farsi as well as doing translation work.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Виноградова С.П., Пирейко Л.А., Карманный дари-русский словарь, М., "Русский язык", 1989, с.323.
2. Safae J. N., English - Dari Daily idioms dictionary, Compiled & Published by Naim Janbaz Safae, Kabul, 1973, p. 172.
3. Փարսադանյան Վ.Խ., Պարսկերեն-դարի-հայերեն և դարի-պարսկերեն-հայերեն բառարան, Երևանի «Հրաշյա Ածառյան» համալսարան, Երևան, «Տիգրան Մեծ», 2002, էջ 224:
4. Նույն տեղում, էջ 198:
5. Նաիրանյան Գ.Մ., Պարսկերեն - հայերեն բառարան, Երևան, «Լույս», 1987, էջ 487:
6. Островский Б. Я., Карманный русско-дари словарь, Москва, "Русский язык", 1987, с. 225.
7. Киселева Л.Н., Миколайчик В. И., Дари-русский словарь, Москва, "Русский язык", 1978, с. 25.
8. Afghanistanis Abdollah, Afghan ghamus farsi pa pashtu dar so jeld, Chape Shamir, Kabol, 1335-1336, jeld 1, s.291.
9. Слинкин М.Ф., Русско-дари военный и технический словарь, Москва, Военное издательство министерства обороны СССР, 1981, с. 831.
10. Safae J. N., English-Dari Daily idioms dictionary, p. 36.
11. Дорофеева Л.Н., Язык фарси-Кабули, Издательство "Восточной литературы", Москва, 1960, с.26.
12. Асланов М.Г., Афгано-русский словарь, Москва, "Советская Энциклопедия", 1966, с. 534.
13. Дорофеева Л.Н., Язык фарси-Кабули, с. 27.
14. Там же, с. 28.
15. Киселева Л.Н., Миколайчик В.И., Дари-русский словарь, с. 472.
16. Там же, с. 273.
17. Дорофеева Л.Н., Язык фарси-Кабули, с. 26.
18. Слинкин М.Ф., Русско-дари военный и технический словарь, с. 648.
19. Дорофеева Л.Н., Язык фарси-Кабули, с. 6.
20. Большая Советская Энциклопедия. М., "Советская Энциклопедия", 1972, третье изд., т. 10, с.202.
21. Там же, с. 686.
22. Moïn Mohammad, Farhange farsi dar shesh jeld, Entesharate Amirkabir, Tehran, 1375, jeld 3, s. 2959.
23. Naman marja, s. 2959.
24. Киселева Л.Н., Миколайчик В.И., Дари-русский словарь, с. 169.
25. Там же, с. 145.
26. Там же, с. 386.
27. Там же, с. 454.
28. Там же, с. 726.

ՔՐԻՍՏԻՆԵ ԿՈՍՏԻԿՅԱՆ

**ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՅ ՄԵԼԻՔՆԵՐԸ ՆԱԴԻՐ ՇԱՀԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ
ՏԱՐԻՆԵՐԻՆ**

1734-1735թթ. պատերազմելով Օսմանյան Թուրքիայի դեմ՝ Նաղիր շահը վերանվաճում է նախկինում Սեֆյան Իրանին հպատակ Արևելյան Հայաստանի շրջանները, որոնք այնուհետև մնում են նրա ստեղծած պետության կազմում մինչև նրա մահը՝ 1747թ.: Հայաբնակ շրջաններում իրանական զորքերի հաջողությանը մեծապես նպաստում է տեղի բնակչության օժանդակությունը: Նաղիր շահը գիտակցելով այդ օժանդակության կարևոր դերը ռազմական հաջողությունների հասնելու գործում՝ սիրաշահում էր Ամենայն Հայոց Կաթողիկոսին ու հայ մելիքներին, խրախուսում նրանց խոստումներով, ինչպես նաև վավերացնում նրանց իրավունքները հրովարտակներով: Պահպանված հրովարտակներն ու կալվածագրերը Ղարաբաղի այդ ժամանակաշրջանի պատմության արժեքավոր սկզբնաղբյուրներից են:

Հայ մելիքներին Նաղիր շահը հրովարտակներ է շնորհում 1734-1736 և 1744-1745 թվականներին, երբ նա, գտնվելով Անդրկովկասում, ռազմական գործողություններ էր իրականացնում Օսմանյան Թուրքիայի ու Դաղստանի լեզգիների դեմ:

Դիզակի Մելիք Եզանի կնիքը դրոշմված ենք գտնում արդեն 1718թ. Դիզակի շրջանում կատարված հողի առքուվաճառքի ու հետագա շրջանի այլ կալվածագրերում¹: Պարսից պատմագիր Մուհամմադ Քյազինը Մելիք Եզանի ու Մելիք Թամրազի անուններն է հիշատակում 1723թ. Գանձակում ու Երևանում ապստամբություն բարձրացնելու նպատակով Իրանի շահից օգնություն խնդրող հայ պատվիրակների թվում²: Թե՛ Մելիք Եզանը և թե՛ Ղարաբաղի մյուս մելիքները XVIII դարի 20-ական թվականների կեսերին Օսմանյան զորքերի դեմ իրենց պայքարի ընթացքում մի քանի անգամ դիմում են նաև Ռուսաց կայսեր օգնությանը³: Հետագայում՝ 1735թ. մայիսին Մելիք Եզանի անունը հիշվում է Եղվարդի շրջակայքում Նաղիրի բանակատեղին ներկայացած հայ մելիքների մեջ: Վերը նշված պարսից պատմագիրը մատնանշում է Մելիք Եզանի ակնհայտ ջանքերը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ու նրա կաթողիկոսի նկատմամբ Նաղիրի բարեհաճությունը շահելու ուղղությամբ, որի արդյունքում Նաղիրը այցելում է վանքը, 1000 թուման հատկացնում նրա վերանորոգմանը և տալով նաև այլ քանկարժեք նվերներ, հրովարտակներով հաստատում է վանքի, կաթողիկոսի ու նրա միա-

քանության հետոց հաստատված իրավունքները⁴։ Նաղիր շահը 1736թ. գարնանը իր պաշտոնական թագադրումից անմիջապես հետո Ղարաբաղի հինգ մելիքությունները հաստատում է Ատրպատականի փոխարքայի ենթակայության տակ գտնվող «մահալ-ե խամսե» կոչվող առանձին վարչական միավորի մեջ։ Մելիք Եզանը, որ մասնակցում է Նաղիրի թագադրությանը Մուղանի դաշտում⁵, նշանակվում է այդ վարչական միավորի կառավարիչ։ Թեև չի պահպանվել Մելիք Եզանի այս իրավունքը հաստատող շահական որևէ հրամանագիր, սակայն այդ ժամանակաշրջանի Ղարաբաղին վերաբերող գրեթե բոլոր վավերագրերը պատմական այլ սկզբնաղբյուրների հետ փաստում են Ղարաբաղում նրա ունեցած լայն լիազորությունների ու անվիճելի հեղինակության մասին։

Մելիք Եզանին 1744թ. հաջորդած նրա ավագ որդի Արամի մահից (1745թ.) հետո Դիզակի մելիքը դարձած Եսային մելիք էր նշանակվել Նաղիր շահի կողմից։ Նաղիր շահի կողմից 1746թ. Մելիք Եսայուն տրված մի հրովարտակի մասին, որ պահվում է Աղդրեջանի Պետական Կենտրոնական Պատմական աթխիվում, տվյալներ ենք գտնում Ֆ. Պոդոսյանի հոդվածում. «նշանակում են նրան Դիզակ գավառի մելիք կամ կառավարիչ՝ ղեկավարելու նրա վրա պարտականություն հետևել պետական շահերին»⁶։

Այնուամենայնիվ պատմական աղբյուրները փաստեր են պահպանել նաև հայ մելիքների կողմից Նաղիր շահին ցուցաբերած անհնազանդության ու հարկերի վճարումից հրաժարվելու մասին։ Նման վարքագիծ է ցուցաբերում Վարանդայի Մելիք Սիրգաբեկը, որը հաջորդում է 1736թ. մահացած Վարանդայի Մելիք Հուսեյնին⁷։ Մելիք Սիրգաբեկը կյանքով է վճարում իր անհնազանդության համար և սպանվում 1744թ. Նաղիր շահի հրամանով⁸։ Նաղիր շահը մահապատժի ենթարկված մելիք Սիրգաբեկի փոխարեն Վարանդայի տիրակալ է նշանակել Մելիք Հուսեյնի ավագ որդի Մելիք Յովսեփին⁹։ Ըստ Բաֆթու Մելիք Հովսեփին պարսիկները «Հուսեյն» էին կոչում¹⁰։ Ուստի ամենայն հավանականությամբ այս մելիքի ստորագրությունն ու կնիքն է պահպանվել 1745թ. պարսկերեն կալվածագրում «Վարանդայի Մելիք Հուսեյն» ձևով¹¹։

Այս ժամանակաշրջանի Խաչենի մելիքությանը վերաբերող վավերագրերը արժեքավոր տվյալներ են պարունակում այնտեղի մելիքների ու գյուղերի մասին։

Խաչենի Հասան-Ջալալյանների տոհմի անդամ Մուլքի Բեկի (մահ. 1716թ.) որդիներ Մելիք Գրիգորն ու Մելիք Ալլահվերդին շահական ու սուլթանական հրովարտակներով, որ հրապարակվել էին 1126 (1714), ի 1131 (1718/19), ի 1141 (1728/29), ի 1148 (1735/36) թվականներին, իշխում էին Խաչեն գավառում¹²։ Ինչպես նշվում է Նաղիր շահի 1736թ. հրովարտակի հրամանագրի հատվածում, շահին ներկայացած Խաչենի Մելիք Գրիգորի խնդրանքով նրան ենթակա տարածքում գտնվող Դուլշանլու և Ղարաբքթու գյուղերի պետական հարկերը գանձելու իրավունքը հանվում է Բարդայի կառավարիչների իրավասության շրջանակներից և տրվում Մելիք Եզանին,

որպեսզի վերջինս այդ հարկերը փոխանցի Ատրպատականի փոխարքա Մուհամմադ Իբրահիմին¹³:

Պահպանված վավերագրերում բացի Խաչենի մելիքներ Գրիգորի¹⁴ ու Ալլահվերդու անուններից, հաճախ նրանց անունների հետ միաժամանակ նշվում են Մելիք Դավթի և Մելիք Ուլուխանի¹⁵ անունները:

Նաղիր շահի երեք հրովարտակները, հրապարակված 1734թ. հոկտեմբերից 1735թ. հունվարն ընկած ժամանակահատվածում, ուղղված են Առաջաձոր (Դովշանլու) գյուղի ավագերեց և մելիք Դավթիին: Այս հրամանագրերից առաջինը¹⁶ Խաչենի մելիքության տարածքում գտնվող Դովշանլու գյուղի ավագերեց Դավթի ու մյուս բնակիչների կողմից ներկայացված խնդրագրի բովանդակությանը համապատասխան հաստատում է վերոհիշյալ հոգևորականին այդ շրջանի ավագի դիրքում: Թերևս այս կապակցությամբ է կազմված եղել նաև համախոսական գրությունը՝ հաստատված Խաչենի Ղազանչի, Չորման, Ներքին Քուլատակ, Բազարքենդ, Բալլուղալա, Խնձիրստան, Տամկալե, Վանք, Շալվա և մի քանի այլ գյուղերի տանուտերերի ու ավագների կողմից, որոնք իրենց համաձայնությունն են տվել, որպեսզի Առաջաձոր գյուղի ավագերեց Դավթիը դառնա իրենց առաջնորդն ու մելիքը¹⁷:

Ինչպես փաստում են Մատենադարանի Կաթողիկոսական դիվանում պահպանված հայերեն վավերագրերը, այս Դավթիը դեռևս իր հոր՝ Առաջաձոր գյուղի ավագերեց Եսայու¹⁸ մահից հետո 1716թ. Աղվանից Եսայի կաթողիկոսի կոնդակով հաստատվել էր Առաջաձոր գյուղի ավագերեցի պաշտոնում, իսկ Խաչենի Մելիք Գրիգորի 1727թ. հրամանով՝ նշանակվել նաև այդ գյուղի «առաջնորդ ու տանուտեր»¹⁹:

Նաղիր շահի հիշյալ հրովարտակի խնդրագրի մասում նկարագրվում է լեզգիների գործի կողմից Խաչենի շրջանին հասցված ծանր վնասը, երբ նրա բնակիչներից «շուրջ 4000 հոգի» մեծ ու փոքր, թե՛ այր, թե՛ կին, գերի է տարվում, նրանց տներն ու ունեցվածքը, հացահատիկի ողջ բերքը ոչնչացվում», որի պատճառով խնդրանք է հայտնվում նաև, որպեսզի Դավթիին ենթակա կիսավեր շրջանը հարկերից ազատվի և նշվում բեռնակիր կենդանիների պակասի պատճառով հավաքված հարկերը իրանական բանակ տեղափոխելու հարցում ծագած դժվարությունների մասին: Սակայն հրամանագրի հատվածում ոչ մի խոսք չկա այդ շրջանի հարկերը թեթևացնելու մասին, թեև հանձնարարվում է Դավթին ջանք թափել այդ շրջանը վերականգնելու ուղղությամբ: Ավելին, Նաղիր շահը Մելիք Դավթիին ուղղված իր մյուս երկու հրամանագրերում անգիջում դիրք է բռնում նրան ենթակա շրջանից առյուրսաթ (սուրսաթ) կոչված հարկը կրկնակի չափով, ինչպես նաև մյուս հարկերը վճարելու հարցում: Այս վավերագրերում ակնառու է այն իրողությունը, որ Նաղիր շահի ռազմական հաջողությունները ձեռք էին բերվում ժողովրդի համար խիստ ծանր գնով²⁰: Առաջաձորի Մելիք Դավթին ուղղված ստորև ներկայացվող Նաղիր շահի հրովարտակում (վավերագիր 4) հիշատակվում է Ջրաբերդի Մելիք Իսրայելի անունը, որը Ջրաբերդի Մելիք Հաթամի որդին էր և Մելիք Մեջլումի եղբայրը: Ըստ նրա տապանաքա-

րի արձանագրության, որը XIX դարում հրատարակել է Մ. Բարխուդարյանցը, մահացել է 1776թ.²¹։

Հիշյալ վավերագրերից մեկի խնդրագրի մասում նկարագրելով իրեն ենթակա շրջանի աղետալի դրությունը՝ մեկիք Դավիթը նշում է, որ. «այնտեղ ընդամենը չորս գյուղ կա, յուրաքանչյուրում՝ 10-15 ընտանիք... և այդ գյուղերից մեկի՝ Խնձիրստանի տանուտեր Պողոսը գիշերով ամբողջ գյուղի հետ փախել է...»²²։ Այդ շրջանը իհարկե չէր ընդգրկում ողջ Խաչենի մելիքությունը, հետևաբար Մելիք Դավիթը չի կարող դիտվել որպես այդ մելիքության միանձնյա ղեկավարը։ Մեզ հայտնի չէ նաև որևէ վկայություն Մելիք Դավիթի և Խաչենի Հասան-Ջալալյանների միջև ազգակցական կապի գոյության մասին։ Արդեն երկու տարի անց 1736թ. նրա անունը չի հիշատակվում Նաղիր շահի կողմից Մելիք Գրիգորին տրված վերը նշված հրովարտական²³, որտեղ Դռչանլու գյուղը նշվում է Խաչենի Մելիք Գրիգորին ենթակա շրջանի գյուղերի թվում։ Իսկ 1746 թվականին կազմված պարսկերեն կալվածագիրը ստորագրած անձանց թվում նշվում է Առաջածորի Մելիք Դավթի որդի Կիրակոսի ավագերեցի անունը²⁴, որը վկայում է այն մասին, որ հիշյալ Դավիթը արդեն մահացել էր։

Խաչենի Ներքին Քուլատակ գյուղին վերաբերող վավերագրերում Առաջածորցի ավագերեց ու մելիք Դավթի ժամանակակիցների թվում հիշատակվում է նաև «Խաչենի Մելիք» Ուլուխանի մասին²⁵։ Առաջածոր ու Ներքին Քուլատակ գյուղերի միջև առկա հարկային խնդիրների մասին են խոսում այդ վավերագրերից երկուսը²⁶, որոնցից մեկը իրենից ներկայացնում է համաձայնագիր այդ երկու գյուղերից հավասար չափով զանձվող որոշ պետական հարկերի մասին։ Վերջինս արժեքավոր է նրանով, որ այնտեղ առկա են Խամսայի բոլոր մելիքների ստորագրություններն ու կնիքները. մասնավորապես, Ջրաբերդի Մելիք Ալլահոլուլիինը, որը օսմանյան զորքի դեմ Նաղիր շահի մղած պատերազմում մեծ արիություն էր ցուցաբերել և շահի կողմից ստացել *սուլթան* տիտղոսը²⁷, նաև Մելիք Ալլահոլուլիի եղբայր Հաթանինը, որ մանուկ հասակից պատանդ է եղել Դադաստանի Խոսրով սուլթանի մոտ և ազատվել Նաղիր շահի շնորհիվ²⁸։ Նույն վավերագրում առկա է նաև Թալիշի Մելիք Թամրազի ստորագրությունն ու կնիքը, որի անունը աղբյուրներում հիշվում է դեռևս XVIII դարի 20-ական թվականների սկզբից։

Պարսկերեն վավերագրերի տվյալները հաստատում և լրացնում են Ե. Լալայանի հավաքած նյութերը Գետաշենի (Չայքենդի) Մելիք Մնացականյանների մասին, որոնց մելիքական ապարանքը Գետաշենում կանգուն էր 1980-ական թվականներին²⁹։ Ե. Լալայանը նշում է, որ «մելիքական այս տոհմը իշխել է Գետաշեն ու նրա շրջակա գյուղերում»³⁰։ Վրաստանի Կ. Կեկելիձեի անվան ինստիտուտի արխիվում պահպանվել են Նաղիր շահի երեք հրովարտականեր՝ հրապարակված Գանձակի Կուրակ (Քյուրակ) գետի միջին և վերին ավազանում իշխող Մելիք Մնացականի անունով։ Դրանցից առաջինը, որը հրապարակվել է 1744թ., նշանակում է Մելիք Մնացականին 100 մադիրի³¹ տարեկան ռոճիկ, որ նա պետք է ստանար ի-

րեն ենթակա շրջանից³²: Երկրորդ և երրորդ հրովարտակներով 1745թ. Նադիր շահը հաստատում է Մելիք Մնացականի կողմից Մուհամմադ Դուլի համա Ջիյադողլիից Գետաշենի մոտակայքում գտնվող հողատարածքի գնման կալվածագիրը և արգելում Գանձակի կառավարչի ոտնձգությունները մելիքին պատկանող երեք գյուղերի նկատմամբ³³: Մ. Բարխուդարյանցը հիմնվելով այն փաստի վրա, որ Մելիք Մնացականի որդի Կորգիի տապանաբարի վրա (1781) նրա անվան հետ չի նշվում մելիք տիտղոսը, պնդում է, որ Մելիք Մնացականի մելիքությունը շարունակություն չի ունեցել և ավարտվել է նրա մահվամբ³⁴: Մակայն ավելի ճիշտ ենք համարում Ե. Լալայանի գրառումը Մելիք-Մնացականյանների տոհմի հետագա ճակատագրի մասին, ըստ որի այն գոյատևել էր մինչև XIX դարի առաջին կեսը և այդ տոհմի վերջին մելիք Սարգիս Բ-ն XIX դարի սկզբին մասնակցել է լեզգիների ու ռուսների դեմ Գանձակի Ջավադ խանի մղած կռիվներին: Մեր այս կարծիքը հաստատում է «Չալքենդի Մելիք Սարգսի» անվան հայտնաբերումը 1795թ. Դարաբադ ներխուժած Աղա Մուհամմադ խանին ներկայացվելու նպատակով կազմված մի պարսկերեն համախոսական գրության մեջ Ջրաբերդի Մելիք Մեջլումի, Գանձակի Մելիք Մատուրի և այլ անձանց անունների կողքին, որոնք իրենց համաձայնությունն են տալիս Գանձասարի կաթողիկոսությունը Սարգիս Հասան-Ջալալյանին հանձնելուն³⁵:

Թարգմանություն

Վավերագիր 1

Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 2թ, վավերագիր 177, քնագիր (վնասված),

մեծ. 24 x 30,2 սմ, գիր՝ շիքասքե-նասթապիղ

... Խաչեն մահալի³⁶ քյադխուդաների³⁷ ու ռայաքների³⁷ ...

...Որովհետև քչերս ենք մնացել և թույլերիս մեջ տիրակալի հրամանով [հաստատված] մի կարող առաջնորդ չկա, այժմ խնդրում ենք Նորին Մեծությանը հրամանագիր շնորհել Դովշանլու գյուղի Դավիթ վանականի անունով, որպեսզի նա արքայական սրբազնագույն և ազնվագույն հրամանագրի հիման վրա լինի այս խեղճերիս մելիքն ու առաջնորդը.

Դազանչի գյուղի Բաղումի որդի քյադխուդա Ավանիս, Չորման գյուղի Շահդինարի որդի քյադխուդա Գասպար, Բազարքենդ գյուղի Աշեղի որդի քյադխուդա Ամիրյար, Ներքին Զուլատակ գյուղի Հարությունի որդի քյադխուդա Մելիք Բեկ քահանա (ավագներն)՝,

Համզա գյուղի Գյոքչայի որդի քյադխուդա Իսա, Դզլդայա գյուղի ... որդի քյադխուդա Աթաջան, Ղոզլու գյուղի Գասպարի որդի քյադխուդա Ջանի, Բալլուդայա գյուղի Դարախանի որդի Բաթաջան, ... Գյուլի Գրիգորի որդի քյադխուդա Սարգիս, ... Ամիրի որդի քյադխուդա Մանկասար, Խնձիրստանի Սարուխանի որդի քյադխուդա Ավանես, Սարուքենչի գյուղի Ավանիսի որդի քյադխուդա Մանկասար,

Տամկալեի Պողոսի որդի քյաղխուդա Մովսես քահանա (ավագերեօց);
Վանք գյուղի քյաղխուդա Առաքել,
Շավա գյուղի ... որդի քյաղխուդա Գովնազար,
Խրամորք գյուղի Սոհրաբի որդի քյաղխուդա Բեզլար,
Հիշյալ ... համաձայն ենք և խնդրում ենք խնդրագրի բովանդակությանը
համապատասխան [Նորին Մեծությունը նրան] հաստատեն մելիք ու ա-
ռաջնորդ: Մնացյալն [ըստ] Չերդ Մեծության հրամանի:

[Կից]

Ստորև նշված անձանց ներկայությամբ, իմացությամբ ու համաձայնությամբ ... որպեսզի հրամանագիր տրվի.

[Կնիք]. քյաղխուդա ... 1140,

Վկա են, որ ճիշտ է, Մուրթուզա Ղուլի Բեկ Իզիրմիդորտից, [կնիք]. ... Մուրթուզա Ղուլի,

Վկա են, որ ճիշտ է, Աբրահամ յուզբաշի, [կնիք]. *Քրիստոսի ծառա Ապրահամ,*

Վկա են, որ ճիշտ է, Ալի Ռեզա Աղա Իզիրմիդորտից, [կնիք]. ...

Վկա են, որ ճիշտ է, քյաղխուդա Մուլլա Մուհամմադ Իզիրմիդորտից, [կնիք]...

Վկա են, Ղազար Գյուլիստանից, [կնիք]. Աստծո ծառա Ղազար, *Քրիստոսի ծառա Ղազար,*

Վկա են, որ հետևյալը ճիշտ է, Սիրզախան Գյուլիստանից, [կնիք]. *Քրիստոսի ծառա Սիրզախան,*

Վկա են, որ ճիշտ է, Եղիա Գյուլիստանից, [կնիք]. *Քրիստոսի ծառա Եղիա,*

Վկա են, որ ճիշտ է, Սկրտիչ Գյուլիստանից, [կնիք]. *Քրիստոսի ծառա Սկրտիչ,*

Վկա են, որ ճիշտ է, Հակոբ Գյուլիստանից, [կնիք]. *Քրիստոսի ծառա Յակոբ,*

Վկա են, որ ճիշտ է, Նավասարդ Գյուլիստանից, [կնիք]. *Քրիստոսի ծառա Նավասարդ,*

Ինչպես, որ ներկայացված ձեռագրի բովանդակությամբ շարադրված է, ճիշտ է. Դիզակի մահալի Մելիք Եզան:

Վավերագիր 2

Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթապամակ 2բ, վավերագիր 182, բնագիր³⁹,
մեծ. 23 x 33,2 սմ, գիր՝ շիքասքե-մասթաւիղ

Հանուն գթառատ և ողորմած Ալլահի

Բարձրյալին են ապավինում

Գերագույն հրաման եղավ, որպեսզի խնդրարկուն ծանոթանալով բարձրագույն ռադամի⁴⁰ բովանդակությանը, ձեռնամուխ լինի հիշյալ մահալի ավագի գործերին, հավաքի այդ մահալի ռայաթներին և նրանք զբաղվեն իրենց գործերով, որովհետև ոչ ոք չի նեղելու նրանց: Ամեն առումով թող հանգիստ ու սրտապնդված լինեն, որովհետև հաղթական մարտիկները կարգադրությանը համապատասխան այդ մահալների ռայաթներին չեն

անհանգստացնի: Կարգադրությանը չպետք է հակառակվեն և այն ընդունելով որպես խիստ կարգադրություն՝ ջանք չխնայեն [մրա կատարման հարցում] ու այն իրենց պարտականությունը համարեն:

Գրվեց 1147 թվականի ջումադի առաջին ամսի 16-ին (1734թ. հոկտեմբերի 15):

[Կնիք]. Զկա [ավելի] արժանավորը քան Ալին է, չկա այլ տուր, բացի Ջուլֆիկարը⁴¹: Ալլահի կամքով եզակի⁴² եմ և ութնյակի ու քառյակի⁴³ ծառան⁴⁴:

Ամենավաստ օրհնաբանող ծառաներ Դոշանլու գյուղի Դավիթ հոգևորականի ու Խաչենի մահալի մյուս խեղճ ռայաթների խնդրագիրը

Արքայական երկնային բարեբախտ Մեծության հիմքը վերագտնողների բարձրությանը զեկուցում է [հետևյալը]. «Իշխանագուրկ Սուրխայի չարաբաստիկ լեզգիները Դադստանի գորքերը հավաքագրած այս տարի թշվառներիս մահալը լցվեցին, շուրջ 4600 հոգու՝ մեծ ու փոքր, թե՛ այր, թե՛ կին, գերի տարան, տներն ու նրանցում եղած չեղածը ամբողջովին այրեցին, հացահատիկի ողջ բերքը հորերից հանելով, կերան, ցանքսերում արածեցրին [իրենց չորքոտանիներին], ոտնատակ տվեցին ու ոչնչացրեցին դրանք: Այսպիսի բռնություն ու աղետ տեղի ունեցավ թշվառներիս հետ: Մի մասն էլ, որ չէր գերվել ու մահալում էր մնացել, ուտելիքի կարոտ ու կարիքավոր մարդիկ են: Որոշ անձիք թշվառներիս հանդեպ չարաշահումներ են անում, միջամտում ու մեղում: Այս պատճառով [ռայաթները] փախուստի են դիմում դեպի այլ վիլայեթ⁴⁵ ու ցրվում: Խնդրում ենք որպես արքայական գերագույն սրբազնագույն ու ազնվագույն առանձնահատուկ ողորմություն գրավոր [հրամանագրով] մի քանի տարվա մուաֆություն⁴⁶ շնորհ անել խեղճերիս, որպեսզի միգուցե հիշյալ մահալը վերականգնվի, մաս կիշյալ հոգևորականին շնորհել ավագի ու մելիքի պաշտոնը, որպեսզի նա մշտապես պատերազմելով չարամիտ ռումիների (թուրքերի) գորքերի դեմ՝ անձնագոհ արարքներ գործի հանուն հավատի ու հաղթական պետության, քանզի համաձայն է ամեն հարցում հոգ տանել խեղճերի մասին: [Պահանջվում է] Զեղդ Մեծության բարձրագույն հրամանը»:

Վավերագիր 3

Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթապամակ 2թ, վավերագիր 162, բնագիր, մեծ. 16 x 22 սմ, գիր՝ շիքասթե - մասթապիլդ

Ամուններից լավագույն Ալլահի անունով

Բարձրյալին եմ ապավինում:

Գերագույն հրաման եղավ, որպեսզի խնդրարկուն իմանա, որ բարձրագույն միտքը վերահասու եղավ զեկուցվածի բովանդակությանը: Ամեն առումով պետք է վարվեն այնպես, ինչպես կարգադրվել է մուհասիխն⁴⁷. 1500 խարվար⁴⁸ հացահատիկից, որ ռայաթները պարտավորվել են, այն, ինչ, որ մնացել է, թող կրեն ու տեղափոխեն բարձրագույն բանակատեղին, մյուս մասն էլ ամբողջովին թող նախապատրաստեն հավալեի զինվորականներին փոխանցելու համար: Եվ թող այս իրենց պարտականությունը

համարեն:

Գրվեց 1147 թվականի պաշտելի ռաջար ամսին 1734թ. (նոյեմբերի 27 - դեկտեմբերի 27):
[Կնիք]⁴⁹

Ամենամվաստ ծառա Խաչենի մահալի ներկայիս մելիք Դավթի խնդրագիրը
Խոնարհաբար զեկուցում է գերագույնին [հետևյալը]. «Մուսասիլ Իս-
ֆանդիար Բեկին ու Ջավադ Բեկին տրված անվերապահորեն գործադրութ-
յան ենթակա բարձրագույն հրամանով Խաչեն մահալի սուրսաթը, որ 1500
խարվար է, հավաքել ու նախապատրաստել ենք: Սակայն այս մահալը
ավերված է, ռայաթները բեռնակիր ավանակներ չունեն, որպեսզի կարողա-
նան այն տեղափոխել բարձրագույն բանակատեղին: Խնդրում ենք գերա-
գույն հրաման շնորհել, որպեսզի հավատի մարտիկների բեռնակիր կենդա-
նիներից բերեն, որպեսզի պարենը, որ հավաքվել է, տեղափոխեն հաղթա-
կան բանակատեղին: Մնացյալն [ըստ] Նորին [Մեծության] բարձրագույն
հրամանի»:

Վավերագիր 4

Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթապամակ 2թ, վավերագիր 181, քնագիր,
մեծ. 14 x 22,2 սմ, գիր՝ շիրասթե-մասթապիլի

Ամուններից լավագույն Ալլահի անունով

Բարձրյալ Ալլահին եմ ապավինում:

Բարձրագույն հրաման եղավ հետևյալի մասին, որպեսզի խնդրաբ-
կուն իմանա, որ նրա խնդրագիրը ուշադրության արժանացավ և նրա բո-
վանդակությունը զեկուցվեց [Նորին] Մեծությանը: Սոյուրսաթի⁵⁰ կապակ-
ցությամբ ներկայացված այս կարգի պատճառաբանությունները ընդունելի
չեն: Ծանուցումը ստանալուն պես պետք է մուսասիլների հետ շտապ առա-
ջին և երկրորդ սոյուրսաթները հավաքի ու հանձնի առանց հապաղելու, ո-
րովհետև պարենը հաղթական զորքերին անհրաժեշտ է: Ինչ վերաբերում է
սուրհանդակի ձիերին, թող առանց բարձր հրամանի մի քանի լավ, վարժեց-
րած ձի ձեռք բերի ու տրամադրի, որպեսզի սուրհանդակը չխեղճանա ու
չուշանա: Սուրհանդակի ձին թող որպես իխրաջաթ չտան, այլ տան նրան,
ով հոքը կունենա: Թող այս իրենց պարտականությունը համարեն:

Գրվեց 1147 թվականի շա'րան ամսին (1734թ. դեկտեմբերի 27 -
1735թ. հունվարի 25):

[Կնիք]⁵¹

Ամենամվաստ ծառա Մելիք Դավթի խնդրագիրը

Ալեքսանդրի փառքը վերագտած իմ հովանավորի բարձրությանը
հասցնում է [հետևյալը]. «Ալեքսանդրի փառքն ունեցող իմ հովանավոր Նո-
րին Մեծությանը զեկուցել են, որ այս մահալը ավերված մուրներից է, և
նախկին սոյուրսաթը դեռ ամբողջովին չավարտված, [Նորին Մեծության]

շնորհված երկրորդ ռադամը ստացվեց: Իմ ապավեն, այս մահալում ընդամենը չորս գյուղ կա, յուրաքանչյուրում՝ 10-15 ընտանիք, մախկին և երկրորդ տոյուրսաթներից ամեն գյուղին բաժին է ընկնում 928 խարվար: Իմ ապավեն, ռայաթների կյանքը, ունեցվածքն ու պատիվը ամբողջովին Ալեքսանդրի փառքն ունեցող իմ հովանավորինն են: Այն ամենը, ինչ ի վիճակի ենք Ալեքսանդրի փառքին արժանի իմ հովանավորի հաղթական զորքերի համար մախապատրաստում ենք: Նվաստս իմ գյուղում սարքարի⁵² տոյուրսաթյիններին էի [հարկը] փոխանցում, որ լուր հասավ, թե խնձիրատանի քյադխոդա Պողոսը գիշերով ամբողջ գյուղն առած փախուստի է դիմել: Մի քիչ հացահատիկ էր հավաքել, մնացածը մնացել է: Եվ այժմ այս մահալներում մնացել է երեք գյուղ: Այն ամենը, ինչ կա, շնչավոր և անշունչ ունեցվածքից, բոլորը Նորին Մեծության Ալեքսանդրի փառքին արժանի իմ հովանավորի սպասավորներինն է: Որովհետև անհրաժեշտ էր իմ բարեդարին գեկուցվեց: [Սպասում ենք] իմ ապավենի սպասավորների հրամանին: Մնացյալն [ըստ] Նորին [Մեծության] բարձրագույն հրամանի»:

Նա է:

Խնդրագրից հետո Ալեքսանդրի փառքին արժանի իմ հովանավորին է հասցնում [հետևյալը]. «Որովհետև Խաչենի մահալի վրա հինգ սուրհանդակի ձիու հարկ էր դրվել և հինգն էլ Մելիք Իսրայելինն էին, որը Խաչենի մահալի Ղազանչի գյուղում էր: Մակայն Խաչենի հինգ ձիերից երկու-երեքը շարքից դուրս են եկել, երկուսն էլ վնասված են: Մելիք Իսրայելի հինգ ձիերն էլ տարան մրա մոտ, այն վայրը, որ գտնվում է Չեկերերդից ու Վարանդայից մեկական մանգիլ⁵³ հեռավորությամբ [տեղակայված մի վայրում]: Մելիք Իսրայելը նվաստիս հակառակորդն է: Երբ մրա գյուղը սուրհանդակ է գալիս, մեկի հետ ուղարկում է Խաչենի մահալը: Խաչենի [այս մահալում] ընդամենը չորս գյուղ կար, որոնցից մեկը փախուստի դիմեց: Մնացել է երեք գյուղ, որոնք ի վիճակի չեն տոյուրսաթ վճարել: Ողորմած տեք, խնդրում ենք օրհնյալ ռադամ շնորհել, որպեսզի սուրհանդակը ռայաթներին նեղություն չպատճառի, թույլ տան մեր տոյուրսաթով զբաղվենք: Եվ այս Ալլահն ու Ալլահի մարգարեն անտես չեն առնի: [Պահանջվում է] Նորին [Մեծության] բարձրագույն հրամանը»:

Վավերագիր 5

Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 2թ. վավերագիր 198, քնագիր, մեծ. 12,4 x 20,5 սմ, գիր՝ շիրասթի

Հիմնվելով Խաչեն մահալի մելիք Մելիք Ուլուխանի ու այլ քյադխոդաների կատարած մոտավոր հաշվարկի վրա, դիվանի⁵⁴ կանխիկ ու քնամթերային պարտավորություններից բացի օրինական հրամանով օլքայից⁵⁵ զանձվող սադերաթն⁵⁶ ու ավարիզաթը⁵⁷ Դովշանլու ու Ներքին Զուլատակ գյուղերը հավասարապես պետք է տան, որպեսզի տարբերություն սադերաթի հարցում չլինի: Երկու կողմերը, մելիքն ու քյադխոդաները համաձայնության են եկել, որ եթե այսուհետև այս կապակցությամբ նորից վիճեն, մեղավոր [ճանաչվեն] ու բարձրագույն դիվան տարվեն: Այս մի քանի խոսքը ի նշան

համաձայնության ու կողմերի համար առաջնային լինելու գրի առնվեցին:
Գրվեց 1158 թվականի ջումադի երկրորդ ամսի 26-ին (1745թ. հուլի-
սի 27):

[Կնիք]. Հիսուս Աստծո ծառա Ուլուխան,
Վկա Դիզակի մելիք Մելիք Եզան,
Ամենամիտ ծառաների գլխությամբ. [կնիք]. ... Սեֆի,
[Կնիք]. Աստծո ծառա Մելիք Գրիգոր,
Վկա Թալիշի մելիք Մելիք Թահմուրաս, [կնիք]. Աստվածային բարեհա-
ճության մարմնացում Թահմուրաս,
Վկա Մուհամմադ Նադի ("),
Վարանդայի Մելիք Հուսեյն, [կնիք]...,
Մելիք Հաթան, [կնիք]. Աստծո ծառա Հաթան,
Մարգիս Յուզբաշի, [կնիք]. Աստծո ծառա Մարգիս,
Մելիք Բեկ, [կնիք]. Աստծո ծառա Մելիք Բեկ
Կողմնակի ապացույց հանդիսացող վկա Պետրոս վանական, [կնիք]. Պետ-
րոս վարդապետ,
Կողմնակի ապացույց հանդիսացող վկա Գրիգոր վանական, [կնիք]. Գրի-
գոր վարդապետ,
Ջրաբերդի Մելիք Ալլահդուլի ,
Եղիազար քյոխվա, [կնիք]. Քրիստոսի ծառա Եղիազար:

Վավերագիր 1

...کدخدایان و رعایا من محال خاجین
...آنکه چون از بعضی کماسی مانده ایم حسب الامر حاکم یکی پیشوای در
میان عجزان معمور نیست و درینوقت خواهش بدرگاه چنان داریم که عنایت
و مرحمت فرموده سایبه دستی باسم داود نام کشیش قریه دوشانلو مقرر
فرمایند ... بدینموجب حکم اشرف اقدس همیون ملک و پیشوای این فقرا
بوده باشد:

کدخدا آوانیس ولد باقوم قریه قزانچی
و کدخدا گسبر ولد شاه دینار قریه چورمان ،
و کدخدا امیریار ولد عاشق قریه بازارکندی
و کدخدا ملک بیک کشیش ولد اریتون قریه کله دک سفلا
و کدخدا عیسی ولد گوکجه قریه حمزه ،
و کدخدا اتاجان ولد ... قریه قزلقایه
کدخدا جانی ولد گسبر قریه قزلو
کدخدا باباجان ولد قراخان قریه باللوقایه
کدخدا سرکس ولد گریکور قریه حاجتگاه
کدخدا متکسر ولد امیر ...
کدخدا آوانیس ولد ساروخان قریه خضرستان
کدخدا متکسر ولد آوانیس قریه ساروکشیش

کدخدای موسیس کشیش ولد بوقوس تمغاله

کدخدای ارکیل قریه وانک

کدخدای گلنظر ولد ... قریه شلوه

کدخدای بیگلر ولد صهراب قریه خورامورت

... مزبور قبول و رضا داریم استدعا، آنکه حسب المضامین عریضه ملک و

پیشوای مقرر دارند. باقی امره کم مطاع

بحضور جماعت ذیل اقرار و اعتراف نموده ... که حکم شده

[مهر]: کدخدا... ۱۱۴۰،

شاهدم خلاقی ندارد، مرتضی قلی بیگ ایگرمی درت [مهر]: ... مرتضی قلی،

شاهدم خلاقی ندارد، ابراهیم یوزباشی [مهر]: Զրիստոսի ծառա Ապրահամ

شاهدم خلاقی ندارد، علیرضا آقای ایگرمی درت [مهر]:

شاهدم خلاقی ندارد، ملا محمد کدخدای ایگرمی درت [مهر]:

شاهدم قذر گلستان [مهر]: Զրիստոսի ծառա Ղազար

درینباب شاهدم خلاقی ندارد، میرزخان گلستانی [مهر]: Զրիստոսի ծառա Միրզախան

شاهدم خلاقی ندارد، یغیای گلستانی [مهر]: Զրիստոսի ծառա Եղիա

شاهدم خلاقی ندارد، مکرج گلستانی [مهر]: Զրիստոսի ծառա Մկրտիչ

شاهدم خلاقی ندارد، اکوب گلستانی [مهر]: Զրիստոսի ծառա Զակար

شاهدم خلاقی ندارد، نواصارد گلستانی [مهر]: Զրիստոսի ծառա Նավասարդ

بشرحی که در متن معروضه قلمی شد خلاقی ندارد ملک یگن محال دیزاق

Վավերագիր 2

بسم الله الرحمن الرحيم

اعوذ بالله تعالی فرمان عالی شد آنکه عارض بحصول اطلاع بر مضمون

رقم عالی بامر ریش سفیدی محال مزبوره قیام و اقدام و رعایای محال مزبوره

را جمع نموده بامر رعیتی قیام نمایند که احدی مزاحم احوال ایشان نخواهد

گردید و بهمه ابواب خاطر جمع و امیدوار بوده باشند غازیان نصرت نشان

حسب المقرر متعرض رعایای محال مزبوره نگردیده از فرموده تخلف نورزند

و درینباب قدغن و اهتمام لازم دانسته در عهده شناسند.

تحریر ۱۶ شهر جمادی الاول سنه ۱۱۴۷.

[مهر]: لاقتی الاعلی لاسیف الاذوالفقار، نادر حقیرم ز لطف حق غلام هشت و

چهار

عرضه داشت کمترین بنده دعاگویان داود کشیش قریه دوشانلو و سایر

رعایای عجزان محال خاجین

بموقف عرض بازیافتگان پایه نواب کامیاب سپهر رکاب همایون میرساند

که لزگی شومیه سرخای سرنگون بمعد عساکر داغستان درین سال بمحال

فقران ریخته مرد و زن و بزرگ و کوچک بموازی چهارهزار و شش صد

نفر اسیر برده و خانهای مخلقات بالجمله سوخته و تمام محصولات غله از چاه‌ها در کرده خورانیده و زراعت‌های چرانیده پامال نموده ضایع و نابود گردانیده اینچنین ظلم و ستم بحال فقیران واقع شده است و بعضی لم اسیر در محال مزبور مانده است آنهم چاشت شام محتاج و مستمند کسند و بعضی کسان هم در حق فقیران زیادتی نموده دخل و متعرض حال فقیران میشوند و درین سبب قرار بر فرار و بولایت دیگر تفرقه میشوند استدعا آنکه بصدقه فرق اشرف اقدس ارفع همایون سایه دستی چند ساله معافی در باره عجزان عنایت و مقرر فرمایند که شاید محال‌مزبور را آبادی حاصل گردد و هم باسم کشیش مزبور سایه دستی بامور ریش‌سفیدی و ملکی مقرر فرمایند که همیشه بعساکر رومیه شومیه جنگ و جدل کرده در راه دین و دولت قاهره جانفشانی نموده و سعی او را دایم الاوقات در حق بیچارگان در همه باب رسیده گنجایشی و قبولی دارد. باقی امرکم مطاع

Վավերագիր 3

بسم الله خير الاسماء

اعوذ بالله تعالی فرمان عالی شد آنکه عارض بدانند که مضامین معروضه مفهوم رای عالی گردید در هر باب بنهجی که بمحصل مقرر گردیده از انقراض معمول داشته مقدار یکهزار پانصد خروار غله که رعایا تعهد نموده اند آنچه باقی مانده حمل و نقل اردوی معلی نمایند تنعمه دیگر را میسر نمایند که بغازیان حواله حواله خواهد شد و در عهده شناسند.
تحریراً فی شهر رجب المرجب سنة ۱۱۴۷.

عرضه داشت کمترین بنده‌گان داود ملک حال محال خاجین بذروه عرض می‌رساند که حسب‌الفرمان قضاجریان عالی بمحصل اسفندیار بیک و جواد بیک سوارسات محال خاجین را یکهزار پانصد خروار ذخیره جمع و میسر نموده‌ایم اما این محال خرابست رعیت اولاغ یاریردار ندارند که حمل و نقل اردوی معلی بتوانند نمود استدعا آنکه فرمان عالی صادر گردد که از دواب غازیان آمده آنچه که ذخیره جمع شده است حمل و نقل معسکر فیروزی اثر نمایند. باقی امره العالی.

Վավերագիր 4

بسم الله خير الاسماء

اعوذ بالله تعالی فرمان عالی شد آنکه صاحب‌عریضه بدانند که عریضه او بنظر رسیده مضامین آن معروض رای والا گردید در باب سیورسات که عرض نموده است این نحو معاذیر مسموع نیست باید بحصول اطلاع باتفاق محصلان سیورسات اول و ثانی را با محصلان بزودی وصول و منتقل نموده تکامل نورزد که انوقه جهة عساکر منصوره ضرور است و در

خصوص اسب چاپار بدون فرمان عالی چند راس اسب خوب تحصیل و به دهند که چاپار سرگردانی و معطلی نکشند که اسب چاپار به اخراجات نداده احدی که حکم در دست داشته باشد بدهند و در عهده شناسند. تحریراً فی شهر شعبان سنه ۱۱۴۷ .

[مهر]: لاقتی الاعلی لاسیف الانوالفقار، نادر حقیرم ز لطف حق غلام هشت و چهار

عرضه داشت بنده کمترین ملک داود بموقف عرض دریافتگان سکندرشان قبله گاهی ام میرساند که چون این محال از ملک آن غیرآباد بخدمت نواب سکندر شأن قبله گاهی ام عرض کرده اند و سیورسات سابق باتمام نرسیده بود که رقم ثانی که شفقت فرموده بودند رسید و قبله گاهی ام این محال همه چهار قریه است هر قریه ده پانزده خانه وار هستند از سیورسات سابق و از سیورسات ثانی مقدار نهصد بیست و هشت خروار بهر قریه رسد رسیده و قبله گاهم سر رعیت و مال رعیت و سیرت رعیت همه گی از نواب سکندر شأن قبله گاهی ام است نهایت اینکه آنچه بلقوة دارند از جهت عساکر نصرت مآثر نواب سکندرشان قبله گاهی ام در تدارک اند و کمترین در قریه خود بوده بسیورسات چیان سرکار تحویل میدادیم که خبر رسید کدخدا بوقوز خنزرستانی شب همگی ده را برداشته گریخته قدری غله جمع کرده بود و تنمه مانده و حال این محال سه قریه مانده است آنچه که هست برجان و مال همگی از ملازمان نواب سکندر شان قبله گاهی ام است چون واجب بود بخاکهای قبله گاهی ام عرض شد. امر از ملازمان قبله گاهی ام است. باقی امر الاعلی

هو

بعد از عرض بخاک پای نواب سکندر شأن قبله گاهی ام میرساند که چون محال خاچین پنج راس اسب چاپار بسته بودند و پنج راس هم اسبهای ملک اسرائیل بوده که قریه قازانچی که محال خاچین است بسته بودند معهذا آن پنج راس اسب خاچین دوسه راس برطرف شده دو راس دیگر از پا افتاده و پنج راس اسب ملک اسرائیل را بردند پیش خود بستند یک منزل چله برد است یک منزل ورنده چون ملک اسرائیل با کمترین مدعی است هر وقت که چاپار بقریه او میاید آدم همراه او میکند بمحال خاچین میارد و همه خاچین چهار قریه بوده یک که گریخته است و سه قریه مانده و قوت سیورسات را هم ندارند که بدهند صاحب مروت اند استدعا آنکه رقم مبارک شفقت فرمایند که چاپار مزاحمت باحوال رعایا نرساند گذارند که بامر سورسات خود مشغول باشند که عند الله و عند الرسول الله ضایع نخواهد شد. باقی امر اعلی

Վավերագիր 5

مشروط بر آنکه ملک اولخان ملک محال خاجین و سایر کدخدایان خاجین
 برآورد نموده اند که سقوای متوجهات نقد و جنس مال دیوانی آنچه
 صادرات و عواریضات در میان الکای حکم حسابی صادر شود قریه
 دوشانلو و قریه کلاک سفلی بهم برابر بدهند که تفاوت در باب صادرات
 ندارد هر دو طرفین و ملک و کدخدایان راضی اینمعنی شده اند هر گاه من بعد
 اینمعنی را تجدید دعوی نمایند مجرم و مخاطب دیوان اعلی باشد این دو
 کلمه جهة مقرر و مقدم بهم قلمی شد .
 تحریر فی ۲۶ جمادی الاخر سنة ۱۱۵۸
 [مهر]: بنده خدای عیسی الوخان
 شاهد سماعی ملک عیسی ملک دیزاق
 مشروط باطلاع کمترین بندکان، [مهر]: ... صفی
 [مهر]: عبده ملک گریکور
 شاهد سماعی ملک طهمورث ملک طالیش [مهر]: مظهر لطف الهی طهمورث
 شاهد سماعی محمد نقی
 ملک حسین ورنده [مهر]:
 ملک حاتم [مهر]: عبده حاتم
 سرکیس یوزباشی [مهر]: بنده خدا سرکس
 ملک بیک [مهر]: عبده ملک بیک
 شاهد سماعی بدروس مهراسیه، [مهر]: Պետրոս վարդապետ
 شاهد سماعی گریکور مهراسیه، [مهر]: Գրիգոր վարդապետ
 ملک الله قلی چاله بردلو
 یغیازار کوخا

KRISTINE KOSTIKYAN

THE ARMENIAN MELIKS OF KARABAGH DURING THE REIGN OF NADIR SHAH

Nadir Shah received the assistance of the Armenians Maliks and their subjects during his campaigns against Ottoman Turkey and the Lezghis of Daghestan. He granted decrees to the Armenian Maliks and to Abraham Catholicos of Etchmiadzin to encourage their faithful services. The information of these decrees, survived in the Archives of Yerevan Matenadaran, Georgia and Azerbaijan, and other historial sources help to restore the names of the maliks of Karabagh, and some aspects of their relations with Nadir Shah.

Immediately after Nadir's coronation as shah of Iran in the Mughan Plain in 1736 the five Armenian Malikdoms of Karabagh were separated from the Beglarbegi of Ganja and united in the administrative unit of "Mahall-i Khamsa". Malik Egan, the malik of Dizak was appointed as the governor (the Zabit) of this administrative unit and stayed

at this post until his death in 1744. He was succeeded by his son Aram, who died in 1745, and then his younger son Esayi, whose rights as the malik of Dizak were confirmed by the decree of Nadir Shah, dated 1736.

Malik Mirzabeg Malik Shahnazarian was the malik of Varanda region of Khamsa in 1736-1744. He was put to death by Nadir shah's order for his refusal to pay taxes in 1744. Malik Hovsep scion of the Malik-Shahnazaryans was his successor at the post of the malik of Varanda Region.

Several maliks are witnessed by the historical documents as the maliks of Khachen Mahal: Malik Grigor and Malik Allahverdi Hasan-Jalalyans, Malik Davit of Dovshanlu (Arajadzor) and Malik Ulukhan. Most likely the region of Khachen was divided between these Maliks.

Malik Allahquli, Malik Hatam and Malik Israyel were the scions of Malik Israyelyans who governed the region of Jraberd during Nadir shah's rule. Nadir Shah appreciated the feats of arms of Malik Allahquli in his fights against the Turks and granted him the title of "Sultan".

Malik Tamraz Malik Beglaryan was the malik of Talish and Gyulistan from early 20-s of XVIII century until his death in 1750.


The Persian historical documents and especially three decrees of Nadir shahs, dated 1744-1745, are the unique written evidences on the Malik Mnatsakan of Getashen, who was the landowner of four villages in the middle and upper basin of the river Kurak in Karabagh.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 2թ, վավ. 140, 175, 177, 178, 184թ:
2. Мухаммед Казим, Наме-йи алам-ара-йи Надири, (перс.), т. 1, Москва, 1960, с. 99.
3. Армяно-русские отношения в XVIII веке, Ереван, 1967, т. II, ч. II, с. 69, 91, 92, 111, 248, 250, 251.
4. Мухаммед Казим, Наме-йи алам-ара-йи Надири, (перс.), т. 1, с. 632 — 634.
5. Արքահան Կրետացի, Պատմութիւն, Սրբան, 1973, էջ 80:
6. Ֆ. Պողոսյան, Խամսայի մելիքների իրավունքներն ու պարտականությունները,- «Բան-բեր Հայաստանի արխիվների», 1966, № 1, էջ 203:
7. Ա. Մաղալյան, Արցախի մելիքական տների տոհմաժառանգը. Վարանդա գավառի տիրակալ Մելիք-Շահնազարյանների տոհմաժառանգը, -Բազմավեպ, 2005, թիվ 1-4, էջ 163:
8. Ա. Մաղալյան, Վարանդայի Մելիք-Միրզաբեկի մահապատժի պատճառը,- Հայոց պատմության հարցեր, Սրբան, 2006, թիվ 7, էջ 33-34:
9. Ա. Մաղալյան, Արցախի մելիքական տների տոհմաժառանգը. Վարանդա գավառի տիրակալ Մելիք-Շահնազարյանների տոհմաժառանգը, էջ 165:
10. Բաֆֆի, Խամսայի մելիքությունները, - Երկերի ժողովածու, հ. X, Սրբան, 1964, էջ 197:
11. ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 2թ, վավ. 198:
12. Ա. Մաղալյան, Արցախի մելիքական տների տոհմաժառանգը. Խաչեն գավառի տիրակալ Հասան-Ջալալյանների տոհմը ԺԷ-ԺԹ դարերում, 2006, Բազմավեպ, թիվ 1-4, էջ 270, հղում՝ ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 9, ք. 18:
13. ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 2թ, վավ. 188:
14. Պատմական փաստաթղթերում Մելիք Գրիգորը հաճախ հանդես գալիս որպես Խաչեն մահալի վեքիլ (տե՛ս ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 2թ, վավ. 167, 198):
15. ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 2թ, վավ. 198, 199:
16. Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 2թ, վավ. 182:
17. ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 2թ, վավ. 177, նրա պատճեն տե՛ս վավ. 376:

18. ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 240, վավ. 10:
19. ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 240, վավ. 108:
20. Ann K. S. Lambton, Landlord and Peasant in Persia, London-NewYork-Toronto, 1953, p. 132.
21. Աղուանից երկիր և դրացիք: Արցախ, Երևան, 1999, էջ 178:
22. ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 2թ, վավ. 181:
23. ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 2թ, վավ. 188:
24. ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 2թ, վավ. 199:
25. ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 240, վավ. 110: թղթ. 2թ, վավ. 198, 199:
26. ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 240, վավ. 110: թղթ. 2թ, վավ. 198:
27. Միրզա Յուսուֆ Ներսեսով, Եղմարտացի պատմություն, Երևան, 2000, էջ 43:
28. Ա. Մաղալյան, Արցախի Գյուլիստան, Ջրաբերդ և Դիզակ գավառների մեկիջրական տների տոհմաժառանգը, Բազմավեպ, թիվ 1-4, 2004, էջ 107:
29. Ս. Կարապետյան, Հյուսիսային Արցախ, Երևան, 2004, էջ 344:
30. Ե. Լալայան, Երկեր, հ. 2, Երևան, 1988, էջ 259:
31. Նաղիրի, դրամական միավոր, որ կապվում է Նաղիր շառի անվան հետ: 1742թ. 20 մաղիրին կազմում էր մեկ բուժման:
32. Тбилисская коллекция персидских фирманов, т. 2, Тбилиси, 1989, док. 37, с. 67.
33. Там же, док. 39, с. 68; док. 41, с. 71.
34. Մ. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք: Արցախ, Երևան, 1999, էջ 179:
35. ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 2թ, վավ. 241ա:
36. Մահալ - محل - Շրջան, գավառ, XVII-XIX դարերում Ամդրկովկասի վարչական բաժանման միավորներից է:
37. Այադիտուրա - كده - Այսպես էին կոչվում գյուղական ավագները: Սակայն չպետք է հասկանալ միայն գյուղի «գեղջավագ»-ի, «տամուտների» կամ «ռնախ» իմաստով. մի գյուղում կարող էին լինել մի քանի քյադիտուրաներ, դրանք փաստորեն գյուղի ավագների կամ «աղախակալների» (պարսկ. - «ռիշահներ») խորհրդի անդամներն էին, որոնք այդ անունը ստացել էին երբեմն գյուղի տանուտեր եղած ժամանակ: Այդ պաշտոնից ազատվելուց հետո էլ նրանք շարունակում էին կոչվել քյադիտուրաներ ու մասնակցում էին ավագների խորհրդին:
38. Ռայաթ, ճիշտը՝ ուսխայթ - رعيت - Սկզբնաղբյուրներում գործ է ածվում հպատակ և հարկատու ժողովրդի, հատկապես մատակյաց, հողագործ գյուղացիության իմաստով: Իսկ խաշնաթած քոչվորությունը կոչվում էր «խլաթ - خلعت» և ավելի արտոնյալ վիճակում էր գտնվում:
39. Այս վավերագրի պատճենը ևս պահպանվել է նույն արխիվում (ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 2թ, վավ. 186):
40. Ռադամ - رادم - Պաշտոնական գրություն, թագավորական հրովարտակ:
41. Ալլիի սրի անունն է:
42. Բառախաղ Նաղիր անվան և նրա նշանակությամբ:
43. Խոսքը 12 շիա իմամների մասին է:
44. Այս կմիջը դրոշմված է հրամանագրի տեքստից հետո այն հրովարտակներում, որոնք հրապարակվել են մինչև 1736թ. մարտը Նաղիրի թագադրությունը Մուղանի դաշտում: Հետագա շրջանի Նաղիրի հրովարտակներում դրոշմած են երկու այլ կմիջներ հրամանագրի վերին մասում:
45. Վիլայեթ - ولایت - Երկիր, երկրամաս, մահամգ: Աղբյուրներում և վավերագրերում գործածվում է փովոխլակի իմաստով: Երբեմն «վիլայեթ» անվան տակ հասկացվում էր մի ամբողջ երկիր, երբեմն ընդարձակ մահամգ, իսկ երբեմն մուլիթակ մեծ գավառ:
46. Մուլաֆուրթուն - معافی - Հարկային իմունիտետ, ազատում քոլոր տեսակի պետական հարկերից, երբեմն մահ միայն որոշ հարկերից և պարտավորություններից: Համամիշ՝ «մուսալլամ», «թարխան»:
47. Մուհասիլ - محصل - հարկահավաք, սովորաբար ցածրաստիճան պաշտոնյա:
48. Խարվար - خوار - Կշռի խոշոր միավոր, որ հավասար էր 300 կիլոգրամի:
49. Տե՛ս վավերագիր 2-ի կմիջը:


50. Մոյուրսաթ կամ սուրսաթ – سهرسات – Ռայաթների կողմից տվյալ վայրում գտնվող զորքի ապահովումը մթերքով, մսն ընդհանրապես քանակի գլխավոր ուժերի համար պարենի ու մթերքի մատակարարումը, որը հաստատված էր հատուկ մատյաններով:
51. Տե'ս վավերագիր 2-ի կնիքը:
52. Սարքար – سرکار – Գործերի լիազոր-կառավարիչ, տնօրեն: Գործ է ածվում հատկապես տնտեսական գործերը տնօրինող հաստատության կամ վարչության իմաստով, ուստի որոշ դեպքերում թարգմանված է «սարքարություն»:
53. Մանզիլ – منزل – կայան, իջևան- այդպես էր կոչվում մի կայանից մինչև մյուսն ընկած հեռավորությունը:
54. Դիվան – دیوان – Պետական գործերի առյան կամ գրասենյակ: Հասկացվում էր հատկապես պետության կամ նրա բարձրագույն օրգանի իմաստով: Երբ ասում էին «դիվանական պարտավորություններ» («թաքալիֆ-ն դիվանի», «ձեկուկ-ն դիվանի» կամ «ավարիզ-ն դիվանի») հասկացվում էր ռայաթների հարկային պարտավորությունները պետության հանդեպ:
55. Օլլա – اولا – Հողային այնպիսի տիրույթներ, որոնք որպես ավատ տրվում էին քուլոր ցեղերի պարագլուխներին և բարձրաստիճան զինվորականությանը՝ ամիրներին: Օլլա ստացող ամիրները պարտավոր էին պահանջված դեպքում որոշյալ քանակությամբ զորք տրամադրել կենտրոնական իշխանությանը: Օլլայի ամիրները իրավունք ունեին առանձին դրոշակ ունենալ և համդիսավոր երթերի ու զորաշարժերի ժամանակ հատուկ թմբուկներով թմբկահարել:
56. Սահերաթ – صادرات – արտակարգ հարկեր:
57. Ավարիզաթ – عوارضات – Այս տերմինի տակ հասկացվում էր ռայաթների պարտադիր աշխատանքը զանազան արտակարգ պատահարների ժամանակ: Այս պարտավորությունը ևս շատ հաճախ փոխարինվում էր դրամական տուրքով:





Վավերագիր 1



ՀԱՅԿԵՐԱՊԵՐ 2







Վավերագիր 5

**ԼԵՈՆԱՐՈՏ ԳՅՈՒԴԻ (ԱՐԱԳԱՇՈՏՆԻ ՄԱՐԶ)
ՄՈՏԱԿԱ ՋՐԱՆՅԶԻ ՊԱՐՄԿԵՐԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հնագիտական արշավախումբը դեռևս 80-ական թվականներին Արագածոտն մարզի Լեռնարոտ գյուղի մերձակա բարձրադիր գոտում, մի հին ջրանցքի մոտ հայտնաբերել էր արաբատառ արձանագրություն¹:

Վերջերս մենք ուղևորվեցինք Լեռնարոտ՝ արձանագրությունը գտնելու և ուսումնասիրելու նպատակով:

Երկարատև որոնումներից հետո, գյուղի բնակիչների օգնությամբ, մեզ հաջողվեց գտնել արձանագրությունը՝ Չամբլու կոչվող մի տեղանքում, Լեռնարոտից մոտավորապես չորս կիլոմետր հեռավորության վրա՝ ձորի ափին:

Արձանագրությունը պարսկերեն է, փորագրված գետնին տապալված մի քարե բեկորի վրա և բաղկացած է երեք տողից.

1. ۱۲۷۴
2. سنه سالم ؟
3. نهري

Թարգմանությունը՝

1. 1274 հիջրի թվական 1858 թ.
2. տարի (.....)
3. ջրանցք /ջրատար/



Ըստ լեռնարդուցիների, հոսող ջուրը մոտակա ցածրադիր բնակավայրեր հասցնելու նպատակով, 1953 թ.-ին նոր խողովակաշար տեղադրելիս պայթեցվել է մի ծավալուն ժայռաքեկոր, որի մի մասն էլ կազմել է հավանաբար պարսկերեն արձանագրությամբ այդ քարը:

Հայտնաբերված բեկորից ոչ հեռու կառուցված մի քանի տասնյակ մետր ծավոդ ջրատարի մնացորդներում տեսանելի են արձանագիր քարի կտորները: Հնում ջրատարը հավանաբար ունեցել է մի քանի կիլոմետր երկարություն՝ ջուր մատակարարելով մոտակա բնակավայրին կամ բնակավայրերին:

Ինչպես տեսանք, արձանագրությունը փորագրվել է պարսկերեն լեզվով այն դեպքում, երբ Արևելյան Հայաստանը շուրջ երեք տասնամյակ գտնվում էր Ռուսաստանի կազմում:

Սա կարող է հանդիսանալ մի ապացույց ևս, որ անգամ Արևելյան Հայաստանում ռուսական տիրապետության հաստատումից հետո տեղացի մահմեդական բնակչությունը և տեղական իշխանությունները մահմեդաբնակ բնակավայրերում գործածում էին պարսկերենը իբրև պաշտոնական գրագրության լեզու: Պարսից լեզվով պաշտոնական փաստաթղթեր էին թողարկվում ընդհուպ մինչև 19-րդ դարի վերջը²:

Այսպես, օրինակ, 1830թ.-ին (1245թ.-ին ըստ հիջրայի թվագրության) ըստ մի կալվածագրի, Դարաքենդի ոմն Ախունդ մուլլա Մոհամմադ Հասանը վաճառում էր Նորագյուղում գտնվող իր մեկ կտոր այգին նույն գյուղի բնակիչ Սկրտումի որդի Խաչատուրին 86 թուման գումարով³:



Մեկ այլ գրությամբ, ոմն Անդրեաս Օրբելիանովի 1872թ. հուլիսի 1-ին հաստատված շար՝ի դատարանով խոսում է Փայիզի Աղչեչայի Յոնջալիի հողի մասին, որ կազմում է 20 ման յոնջայի ցանքատեղի Ալ Ջաֆարի հետ կիսովի ցանելու և բերքը կիսելու վերաբերյալ: Հակառակ կողմում դրված է Նախիջևանի նահանգի Ջահուկի գավառի ռուսական տեղական իշխանության կնիքը⁴:

Լեռնարոտ դժվարամատչելի գյուղը գտնվում է Կոշից 12 կմ հեռավորության վրա՝ Արագած լեռան լանջերին: Գյուղի ներկայիս բնակիչների նախնիները այստեղ են տեղափոխվել Արևմտյան Հայաստանի Մուշի և Սասունի Գեղիեգուզան, Հեթինք, Սպղանք և այլ գյուղերից 1915-18 թթ.⁵: Ըստ Լեռնարոտցի տարեց բնակիչների՝ գյուղում մինչև իրենց տեղափոխվելը ապրել են «պարսիկներ կամ քրդեր», որոնք մինչ այդ արդեն լքել էին գյուղը: Այսուհանդերձ, ավելի իրատեսական է ենթադրել, որ դրանք հավանաբար քյուրքալեզու են եղել:

Մինչև 1949 թիվը գյուղի անվանումը եղել է Մադդա, տակայն նրա և շրջակա վայրերի բնակիչները մինչ այժմ գյուղի բնակիչներին կոչում են «մադդեցիք»:

**A PERSIAN INSCRIPTION RELATING TO A CHANNEL NEAR LERNAROT
VILLAGE,
ARAGATSOTNS MARZ OF ARMENIA**

During 1980s the Expedition of the Institute of Archaeology and Ethnology of Armenia discovered an inscription in Arabic characters near an old channel not far from village of Lernarot, Aragatsotn marz of Armenia. We have travelled there to find the inscription and to study it.

As appeared it was a Persian inscription, probably mentioning the year of construction of a channel type construction – 1858 (1274 Hijri year). The formidable fact is that almost three decades after the incorporation of the Eastern Armenia into the Russian Empire the Persian language was used in epigraphic inscription. However, as appears, the Persian language still was used by Muslims living in Armenia as documentary language.

ՇԱՆՈՅԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Այս տեղեկությունը մեզ է հաղորդել այդ արշավախմբի անդամ հնագետ Հուսիկ Մեյրոնյանը:
2. Պարսկագետ Զրիստինե Կոստիկյանի բանավոր հաղորդմամբ:
3. Կաթողիկոսական դիվան, թղթապամակ 1 Ե, վավերագիր 771՝ նյութը տրամադրել է Զրիստինե Կոստիկյանը:
4. Կաթողիկոսական դիվան, թղթ. 1Ե, վավ. 815, քնագիր (հայերեն և պարսկերեն՝ շիքասքե օրինակներով, 2 էջ), նյութը տրամադրել է Զրիստինե Կոստիկյանը: Տրամադրված նյութերի համար Զրիստինե Կոստիկյանին շնորհակալություն ենք հայտնում:
5. «Լեռնարոտ», - Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Երևան, 1988:

ՊԵՂՐՈՒ ԷՍՏԱԼԱՆ ԵՎ «ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՃԱՄԺՈՐԴԸ»-Ի
ՆՐԱ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Իսպանացի աբբահայր Պեդրո Էստալան (Pedro Estala) 1795-1805թթ. ժամանա- կահատվածում հրատարակել է ճամփորդական ուղեգրությունների մի հավաքածու «Համաշխարհային ճամփորդը կամ Ծանոթություն՝ հին ու նոր աշխարհին»:

Հավաքածուն ունեցել է մեծ հաջողություն, ինչը հավաստում են պահպանված վկայությունները և նա վերահրատարակելու փաստը:

Ամբողջ գործը հրատարակվել է մաս առ մաս՝ շուրջ հարյուր էջանոց գրքույկներով, որոնք վաճառվել են մատչելի գնով: Յուրաքանչյուր երեք գրքույկ կազմել են մեկ հատոր: Ըստ պրոֆեսոր Դոուլինգի՝ յոթ տարուց պակաս ժամկետում Պեդրո Էստալան կատարել է թարգմանչական տպավորիչ աշխատանք՝ երկու կամ երեք շաբաթը մեկ հրատարակելով մեկ գրքույկ, իսկ էջերի ընդհանուր քանակը կազմել է 16325 (J. Dowling, "Don Pedro Estala, peripatetico". տե՛ս "Studies in honor of Gilberto Paolini", Juan de la Cuesta Press, Newark, DE, 1996, էջ 132):

Պեդրո Էստալան եղել է հունարենի դասախոս և տիրապետել բազմաթիվ լեզուների: Նրա թարգմանությունը սկզբից ընկալվել է որպես ֆրանսիացի աբբահայր Ժոզեֆ դը Լապորտի (Joseph De Laporte) (1713-1779) «Le Voyageur français o Connaissance de l'ancien et du nouveau monde» («Ֆրանսիացի ճամփորդը կամ Ծանոթություն՝ հին ու նոր աշխարհին») բազմահատորանոց հավաքածուի պարզ թարգմանություն (առաջին 4 հատորները), սակայն, այնուհետ այդ կարծիքը մերժվել է, քանզի Պեդրո Էստալան, նա համարելով շատ մակերեսային, շարունակել է մյուս հեղինակների գործերի թարգմանումը (լավագույն ճանապարհորդների, ինչպես ինքն է ասում)՝ սեփական ուղղումներով և փոփոխություններով՝ հրատարակելով այսպիսով 43 հատոր:

Հիշյալ հրատարակության երկրորդ հատորը պարունակում է նյութեր՝ Հայաստանի և հարևան երկրների մասին, որից թարգմանաբար ներկայացնում ենք Հայաստանին նվիրված գլուխը, որը պարունակում է հետաքրքրական և արժեքավոր տեղեկություններ պատմական Հայաստանի վերաբերյալ: Հեղինակն ամաչառորեն ներկայացնում է երկիրը և ժողովրդին՝ բացահայտելով թե՛ դրական և թե՛ բացասական կողմերը, ինչը ավելի է արժեքավորում տվյալ նյութը որպես ևս մեկ սկզբնաղբյուր՝ հայոց պատմության ուսումնասիրության համար:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՃԱՄԳՈՐԴԸ

Հինգերորդ գրքույկ

Նամակ 19

Հայաստան

Հայաստան անունը, տիրուհի՛, ձեզ չպետք է անծանոթ լինի, որովհետև թե՛ սրբազան և թե՛ անվայել պատմություններում բազմիցս հիշատակվում է նա: Համարվում է, որ համաշխարհային ջրհեղեղից հետո սա առաջին երկիրն է, որ բնակեցվել է, որտեղ առաջին անգամ հանգրվանել են մարդիկ՝ տապանից դուրս գալուն պես: Որոշ հեղինակների վկայությունների համաձայն՝ նրա բնակչությունը մոլորակ ավելի հին է, որովհետև հավաստվում է, որ այստեղ է եղել երկրային դրախտը¹: Ու թեև շատ են այդ դրախտային վայրերը, որոշակի բան ասել այդ մասին դժվար է:

Ոմանք հաստատում են, որ Արամը՝ Նոյի թոռը, զավթել է Հայաստանը և նա՝ կոչել իր անունով, մյուսները Հայաստան անվանը տալիս են այլ ստուգաբանություն: Ամեն դեպքում Հայաստանն ինքնին շատ արժանի է լինելու հանրահայտ, որովհետև նա եղել է մեծ իրադարձությունների և արյունալի մարտերի թատերաբեմ, տարբեր դարաշրջաններում ունեցել է իր թագավորները, սակայն նրանք ի գորտ չեն եղել պաշտպանելու իրենց պետությունը: Հազիվ թե այս տարածաշրջանում գտնվեր մի նվաճող, որ Հայաստանին տիրած չլիներ: Հայկն առաջինն էր, որ հայերին բերեց կառավարման կանոնավոր ձևի և իր իշխանությունը ընդլայնեց հաջորդների օրոք՝ մինչև Արեոյի (Արա - Հ.Մ.)՝ կոչված Գեղեցիկ, թագավորությունը, որին պարտության մատնեց Շամիրամը: Այդ թագուհին, որը դավադրությամբ նոր էր գրավել Ասորեստանի գահը, լսելով Արեոյի գեղեցկության մասին, նրա մոտ է ուղարկել հարուստ նվերներով դեսպանների՝ աղաչելով նրան, որ անցնի իր արքունիքը: Հայաստանի միապետը, որ քնքռորեն սիրել է իր կնոջը, արհամարհել է Շամիրամի առաջարկները, որն իրեն խոստանում էր իր ձեռքը և Ասորեստանի գահը, քանի որ իր ժողովուրդի և իր կնոջ սերը Արեոյի պատվախնդրության միակ առարկան են եղել: Այդ արհամարհանքից վրդովված՝ Շամիրամը հզոր զորք է հավաքել և նվաճել Հայոց արքայի հողերը: Միևնույն ժամանակ խստագույնս հրամայել է, որ պահպանեն Արեոյի կյանքը: Իշխանի՝ նման կեցվածքը խախտել է այն ծրագիրը, որ Շամիրամը նախապատրաստել էր, քանզի նա գոհվել է՝ իր լավագույն զորքերին ուս ուսի տված: Հիասթափված թագուհին օգտագործել է բոլոր հնարքները, որպեսզի նրան ետ բերի: Մակայն համարելով դրանք անօգուտ՝ նրան հիասթափ մի հուշարձան է կանգնեցրել՝ դրվագազարդված արձանագրություններով, որոնք արտահայտել էին թագուհու կրքերը²:

Հայաստանը՝ հանձին ասորեստանցիների իշխանությամբ, երկար ժամանակ այդ հսկա կայսրության մի նահանգն է եղել: Հետո նա կառա-

վարվել է առանձին թագավորների կողմից, մինչև Ալեքսանդր Մեծը կգրավեր նա: Երբ Անտիոք Մեծը անչափահաս է եղել, բազմաթիվ հրամանատարներ ապստամբել են իրենց վստահված նահանգներում: Հայաստանը բաժանվել է երկու թագավորությունների՝ Մեծ Հայքի և Փոքր Հայքի^{*}:

Տիգրանի^{*} թագավորության սկիզբը եղել է հայերի հզորության դարաշրջան, իսկ գահակալության վերջում սկսվել է հայոց անմախաղեպ անկումը: Հայերը՝ ենթարկված հռոմեացիներին կամ պարթևներին, երբեմն էլ՝ երկու տիրություններին միաժամանակ, կրել են բազում դժբախտություններ և իրենց երկրի շուրջ տեղի ունեցած պատերազմների ամբողջ լուծը: Այդ խռովությունները շարունակվել են մինչև Տրայանոսի կողմից Հայաստանի՝ հռոմեական նահանգի վերածումը: Ներկայումս նա գտնվում է պարսիկների և թուրքերի կայսրությունների կազմում. այս երկու տիրությունները երկար կռիվներ են մղել միմյանց դեմ՝ լիովին տիրանալու այս երկրին, և ի վերջո այն բաժանել իրար միջև: Այդ բաժանումից պարզվել է, որ Բարձր Հայքը՝ կամ Մեծ Հայքը Պարսկաստանի մի նահանգն է, իսկ Փոքր Հայքը՝ Թուրքիայի:

Սա առաջինն է, որ ես կնկարագրեմ այս նամակում: Արաքս (Երասխ – Հ.Ս.) գետը նա բաժանում է Մարաստանից, որն անցանք հին Ջուղայի մոտով, որը հնագույն ժամանակներում նշանակալից քաղաք է եղել, ներկայումս, սակայն, ոչ ավելի, քան մի գյուղ՝ 30-40 տներով կամ խրճիթներով: Չկա ավելի ահավոր բան, քան այս երկիրը, քանգի այնտեղ չի հանդիպում ո՛չ ծառ, ո՛չ էլ բուսականության: Սարի լանջին փռված հնագույն քաղաքը ձգվում է մինչև Արաքսի ափը՝ կազմելով մի երկար ամֆիթատրոն: Նա ավերվել էր պարսից Աբաս Մեծ շահի կողմից, որը նպատակ է ունեցել խոչընդոտելու թուրքերի ամրապնդումը:

Ջուղայից 7 մղոն հեռու գտնվում է Նաչիվանը (Նախճավան, Նախիջևան – Հ.Ս.). այս երկրորդ քաղաքն ավելի քիչ է ավերված, քան առաջինը, չնայած մախիկի մոտերն անգամ չի հանդիսանում: Որոշ հեղինակներ պնդում են, որ Նաչիվանն ունեցել է մինչև 400 տուն, այսօր նա հագիվ թե ունենա 20-ը^{*}: Քաղաքի կենտրոնը ամենալավ կառուցապատվածն է. ունի մեծ հրապարակներ, բաղնիքներ և հասարակական շենքեր, բայց ոչ՝ այնքան բարետես, որքան օգտակար:

Եթե հավատանք որոշ հայ հեղինակներին, Նոյը եղել է Նաչիվանի հիմնադիրը և ջրհեղեղից հետո այնտեղ է հաստատել իր բնակությունը: Սակայն դա պարզապես ենթադրություն է: Դա ինձ դղում է կարծելու, որ Նաչիվանը մախիկի Արտաշատն^{*} է, ինչը հիմնվում է հավանականության և մի պատմության վրա, որի մասին վավերագիրը պահ պահվում է ամբողջ Հայաստանի ամենահայտնի վանքում: Աբաս Մեծն է, որ ավիրել է թուրքերի կողմից նվաճված Նաչիվանը, քանի որ հույս չի ունեցել, որ կկարողանար նա պահել: Այս քաղաքից, որը համարվում է Բարձր Հայքի մի մասի

^{*} Մույն Տիգրանը պատերազմ է վարել հռոմեացիների դեմ՝ հայտնի Միհրդատի հետ համատեղ. Պոմպեյ Մեծը այն բարենաջող ավարտել է:

մայրաքաղաքը, 25 մղոն ես անցնում մինչև Իրիվան (Երևան – Հ.Ս.)՝ ավելի նշանակալի մայրաքաղաք, քան առաջինը: Երկիրը, որով ճամփորդում ես, հարուստ է գյուղերով, հողը շատ բերրի է և լավ մշակված: Դա միակ բանն է, որի մասին կարող եմ խոսել, բացառությամբ այն բանի, որ այնտեղ կան բազմաթիվ մենաստաններ՝ տղամարդկանց և կանանց՝ համար, որոնց մասին դեռ կպատմեմ. այժմ գնանք Իրիվան:

Քաղաքը մեծ է, բայց կեղտոտ և ավելի քիչ բնակեցված՝ չնայած իր համեմատաբար մեծ տարածությանը: Այգիները զբաղեցնում են տարածքի մեծ մասը: Քաղաքի գլխավոր կառույցներն են եպիսկոպոսի տունը և եկեղեցին, որը կոչվում է Կաթողիկե, երկուսն էլ կառուցված Հայաստանի վերջին թագավորների ժամանակաշրջանում, Դեվ-Սուլթան մզկիթը, որը կրում է իր հիմնադրի անունը, և մի քանի իջևանատներ, սակայն այդ բոլոր կառույցներն անշուք են: Քաղաքը գտնվում է երկու գետերի միջև. մեկը կոչվում է Ջենգիս (Ջանգու – Հ.Ս.), իսկ մյուսն ունի հայկական անուն, որը նշանակում է 40 աղբյուր¹⁰, որովհետև, ասում են, սկիզբ է առնում մույնքան աղբյուրներից, սակայն հոսանքի երկարությունը մեծ չէ: Իրիվանի գլխավոր հրապարակը քառակուսի է ու շատ ընդարձակ՝ շրջապատված ծառերով: Նա ծառայում է ժողովրդի վարժանքներին և զվարճանքներին, ինչպիսիք են ձիարշավը և վագրը, ըմբշամարտը, սուսերամարտը և այլն: Ամրոցը բաժանված է քաղաքից և կազմում է, այսպես ասած, ուրիշ քաղաք. այնտեղ կա մոտ 800 տուն՝ բոլորը բնակեցված բնիկ պարսիկներով: Հայերն այդտեղ ունեն միայն մի քանի կրպակ և դեռ չեն կարող մնալ այդտեղ գիշերը: Այս ամրոցը մի կողմից պաշտպանված է աղյուսե երեք պատերով և անկամոն աշտարակներով: Հակառակ կողմից մա պաշտպանված է անկարագրելի մի անդունդով, որի ներքևում հոսում է Ջենգիս գետը: Նահանգապետի պալատը գտնվում է Միջմաբերդում՝ անդունդի եզրին, որ այդ պաշտոնյային կարծես թե հիշեցնում է այն վտանգները, որ շրջապատում են միշտ բարձրաստիճան իշխանավորներին ամենուր, հատկապես՝ Ասիայում:

Ջենգիս գետը, որի մասին հենց մոր խոսք եղավ, հատում է Հայաստանի մի մասը և ծնվում է մի լճում, որը գտնվում է Իրիվանից 3 օրվա ճանապարհի վրա. այս լիճը շատ խորն է և ունի 25 մղոն¹¹ շրջագիծ: Պարսկերենով մա կոչում են Քաղցր լիճ¹², որովհետև նրա ջուրը շատ քաղցր է. նրանում հանդիպում են մինչև 9 տեսակի ձկներ: Այս լճի կենտրոնում¹³ կա մի կղզյակ՝ վրան մի վանք, որն ունի ավելի քան 600 տարվա հնություն: Վանահայրն ունի արքեպիսկոպոսի կարգ և դեռ ավելին՝ յուրացնում է կաթողիկոսի կոչումը, բայց այդ հարցում նրա հետ վիճարկում է Հայոց կաթողիկոսը, և մույնիսկ ինքը որպես վերադաս է ճանաչում այդ մեծ կաթողիկոսին:

Ճիշտ կգուշակեք, որ Հայաստանի մայրաքաղաքը պետք է լինի շատ հին, հատկապես՝ հայերի կարծիքով: Ասում են, որ Նոյն այնտեղ ապրել է ջրհեղեղից առաջ՝ ավելացնելով, որ մա երկրային դրախտ է եղել: Սակայն այս հավակնությունները կարելի է համեմատել հնագույն ժամանակների քիմեոների հետ, որոնց որոշ ինքնիշխան տներ կեղծում են: Այս քա-

դաքում մենք չնկատեցինք հնամենի որևէ տուն, տներն մույնիսկ պակաս հնագույն են ինձ թվում, քան որոշ վանքեր՝ ցրված Հայաստանի այս մասում: Եղած 28-ից 5-ը կուսանոց¹⁴ են: Ամենամշամակալիցներն են Խոր Վիրապը՝ հայկական անուն, որը նշանակում է եկեղեցի՝ փոսերի վրա, և Ուշ Բլիսի (Ուշ Բելեսա - Էջմիածին - Հ.Ս.), ինչը նշանակում է երեք եկեղեցի: Առաջինի անվան առաջացումը հավաստում է, որ եկեղեցին կառուցվել է մի փոսի վրա, ուր նետել էին Սուրբ Գրիգորին, ինչպես այլ ժամանակ Դանիելին նետել էին առյուծների լիճը, և որը սնվում էր հրաշքով, ինչպես այդ սուրբ մարգարեն: Երկրորդ վանքը շատ հարգված է հայերի կողմից. նա կոչում են Էջմիածին, ինչը բառացի նշանակում է իջավ միածինը: Ասում են, որ Հիսուս Քրիստոսը այնտեղ հայտնվել է Սուրբ Գրիգորին¹⁵, որը դարձել է այդ եկեղեցու հիմնադիրը և Հայոց առաջին կաթողիկոսը: Ավելացնում են, որ Աստծո զավակը լույսի մի ճառագայթով կազմել է այս եկեղեցու հատակագիծը: Եկեղեցին ոչ մի հրաշալի քան չունի ո՛չ իր հատակագծում, ո՛չ իր կառուցվածքում. դա մի շինություն է՝ շատ ծանր և քիչ լույսով, ամեն ինչ քարից է մինչև աշտարակը, որը վերջանում է մետաղյա սրածողով: Շենքի ներսում չկան գեղանկարչական և քանդակագործական զարդարանքներ: Այնտեղ մենք տեսանք միայն մեկ խորան և երեք ժամատուն. խորանը քարից է, ինչպես և մնացածը, բայց նրա զարդերը ինձ թվացին շատ քանկարծեք: Այս եկեղեցու զանձը ամենահարուստներից է, այնտեղ երևում են ոսկու թասեր, լամպեր, արծաթե բավականին մեծ աշտանակներ, զարդամաններ և այլն: Այնտեղ պաշտվում են շատ մատուցներ, այդ թվում՝ Սուրբ Հակոբի՝ Երուսաղեմի եպիսկոպոսի մի կողոսկրը, Սուրբ Պետրոսի մի մատը, Սուրբ Հովհաննես Սկրտչի երկու մատը և Սուրբ Գրիգորի աջը, որը դարձել է հայոց եկեղեցու հիմնադիրը, քրիստոնեության տարածողը ամբողջ Հայաստանում, ինչի համար նրան կոչում են Լուսավորիչ:

Եկեղեցու մեջտեղում մենք տեսանք քառակուսի մի քար, որի մասին հայերը մեզ պատմեցին բազմաթիվ հրաշապատումներ: Ասում էին, որ քարը դրված էր մույն տեղում, ուր Քրիստոսը հայտնվել է իր առաքյալ Սուրբ Գրիգորին: Պատմում էին նաև, որ նա գտնվում էր մի բարձունքի վրա, որտեղից Աստծո զավակը եկեղեցու հատակագիծը գծելուց հետո տապալել է դևերին, որոնք իրենց մտրգարեություններն էին քարոզում հարևան տաճարներում: Դեռ ավելին. պնդում են, որ խորանը, որտեղ Նոյը կատարել է իր առաջին զոհաբերությունը՝ տապանից դուրս գալուց հետո, վեր է խոյացել մույն այն տեղում, որը զբաղեցնում է այդ հրաշագործ քարը:

Այն, ինչը տվեց այս վանքին «Երեք եկեղեցի» անվանումը, երկու ժամատների հարևանությունն է, որոնք գտնվում են նրանից ոչ հեռու, մեկը՝ աջ, մյուսը՝ ձախ կողմում: Առաջինը նվիրված է Սուրբ Գայանեին, իսկ երկրորդը՝ Սուրբ Հռիփսիմեին: Նրանք հռոմեացի երկու կույսեր են, ովքեր, ինչպես պատմում են, փախել էին Հայաստան¹⁶ ինձերորդ հետապնդման ժամանակ և տանջամահ արվել մույն տեղում, որտեղ հետագայում կառուցվել են այս ժամատները: Երկար ժամանակ է, սակայն, որ դրանք լքված են, և միայն սրանց փլատակներից կարելի է եզրակացնել, որ գո-

յություն են ունեցել: Ինչ վերաբերում է այս վանքին, դա Հայաստանի կաթողիկոսի սովորական նստավայրն է: Նրան թույլատրվում է քացակայել այնտեղից միայն իր պաշտոնի հետ կապված առիթներով, սակայն միշտ չէ, որ այս օրերը պահպանվում է ամբողջ խստությամբ:

Հայոց կաթողիկոսն իր ենթակայության տակ ունի մոտ քսան եպիսկոպոսներ, որոնք մեծամասնությամբ վանահայրեր են: Վանական միաբանության եպիսկոպոսները քարոզում են նստած՝ օգտագործելով հովվական գավազան, որով տարբերվում են մյուսներից: Հայերի համար նրանք համարվում են ամենակրթվածները, ինչը չի ենթադրում մեծ գիտելիքներ, քանզի նրանք կրթված չափ տղան՝ համեմատած մեր եկեղեցականներից սակավ կրթվածների հետ¹⁷: Բացի դրանից՝ հայերի միջավայրում վաճառվում են եկեղեցական բոլոր աստիճանները. եպիսկոպոսները կաթողիկոսից գնում են իրենց պաշտոնը, մույն կաթողիկոսը գնում է իր պաշտոնը մահմեդականներից, ինչի մասին արդեն ասել են այլ տեղում¹⁸: Այս երկրի բոլոր աշխարհիկ քահանաները ամուսնացած են կամ կարող են ամուսնանալ՝ ինչպես աշխարհիկ ժողովուրդը: Նրանց արգելված է պատարագ ամել իրենց ամուսնության միայն առաջին յոթ օրերին և տեսնել իրենց կնոջը՝ ամուսնությունից յոթ օր շուտ: Այդ արգելքը, սակայն, միայն մեկ անգամ է գործում:

Ինչ վերաբերում է վանահայրերին, ապա նրանք պահպանում են իրենց կուսակրոնությունը, ինչպես մեզ մոտ, և ավելի շատ են սահմանափակված եկեղեցական ծիսակատարությունների կատարման մեջ, քանի որ դրանք կապված են միայն պատարագ ամելու հետ, և մնացած ամեն ինչ նրանց արգելված է: Նրանց ապաշխարության տևողությունը ավելի երկար է, քան Եվրոպայում, և ունանք ձեռնադրվում են մինչև ութ կամ ինը տարի փորձությունից հետո, ինչը նրանց ազատում է առանց կոշումի մարդկանց ընդունելու վտանգից: Երբ այդ կրոնավորներից մեկը դառնում է քահանա, նրան 40 օրով պահում են վանքի խուցում¹⁹, որտեղ նա չի առնչվում ոչ մեկի հետ, մույնիսկ գերծ է մնում խստակեցությամբ օրվա լույսից և ստիպված է անցկացնել այդ ժամանակը պահքով և աղոթքներով: Քառասնօրյա այդ ընթացքին ետևում է երկու տարվա ինքնազսպում²⁰, որից հետո կարող է ուտել միս և ամեն ինչում հետևել իր հոգևոր եղբայրներին: Մոռացա ասել, որ երբ նրանք դառնում են դպիր, նրանց մագերը կտրում են խաչաձև, երբ դրանք աճում են, նորից են կտրվում, բայց թագի ձևով, որը պետք է պահպանեն միշտ, ինչպես ընդունված է մեզանում: Յուրահատուկ է, որ այդ թագը ընդհանուր է բոլոր հայերի համար: Բոլորը՝ ինչպես եկեղեցու սպասավորները, այնպես էլ աշխարհականները, այն օգտագործում են ներկայացնելու համար փշոտ թագը, որը դրել են Տիրոջ գլխին՝ համոզված լինելով, որ այդ արտաքին նշանը ամենակականներից է քրիստոնեության մեջ:

Մնացած բաներում այս ժողովուրդների²¹ կրոնը կայանում է միայն առօրյա գործողություններում. երեխա հասակից նրանց սովորեցնում են խաչակնքել, Քրիստոսի անունը տալ և պահք պահել: Դրանով է սահմանափակվում ամեն ինչ, և իրենք հավատում են, որ դա բավական է: Հայեցա-

կարգի բոլոր գլխավոր դրույթները և իսկական բարեպաշտության արարողակարգը նրանց անձանոք են՝ բացառությամբ եկեղեցի այցելելուց²², երբ հասնում են համապատասխան տարիքի: Նրանց պահքերը շատ երկար են և հաճախակի՝ ընդգրկելով տարվա երեք քառորդից ավելին: Բացի դրանից՝ այնքան խիստ են, որ չեն հասկանում՝ ինչպես կարելի է դիմանալ դրանց: Հայաստանում վանքերում պահքի մեջ լինել նշանակում է չուտել ամբողջ օրը մինչև արևամուտը, զսպել մսեղեն, ձկնեղեն, կաթնեղեն ուտելուց և գինի խմելուց: Այս վերջինը ոչ միշտ է պահպանվում ամբողջ խստությամբ, բայց մյուս ուտեստների գործածման կարգը երբեք չի խախտվում: Դեռ ավելին. հազվագյուտ է պատահում, որ հայը հրաժարվի իր կրոնից: Այս ազգը, մույնիսկ մահմեդականների ստրուկ լինելով և այդ իշխանագոր միապետերի կողմից վատ վերաբերմունքի արժանանալով, երբեք չի կրոնափոխվել՝ նրանց կրոնը պահպանվել է 12 դարերի ընթացքում: Նրանք մատուցում են պատարագը ժողովրդական լեզվով (գրաբարով – Հ.Ս.), ու երբ տրվում է հաղորդությունը, բոլորն մա ստանում են հավասարապես՝ եկեղեցականները, աշխարհականները և դեռ երեխաները, բոլորն օրհնված մաս (հաց – Հ.Ս.) են ուտում և խմում են մույն սքիհից:

Հայերի և մեր պաշտամունքների միջև առկա տարբերություններից է հացի տեսակը և ջրի և գինու խառնուրդը՝ սքիհի օրհնությունում²³: Օրհնության համար հայերն օգտագործում են բաղադր հացը և օրհնում են մաքուր գինին, սակայն էապես ավելի շատ են տարբերվում մեզանից այլ սկզբունքներով, որոնք բաժանում են հունական եկեղեցին լատինականից: Այդ հոգվածների առնչությամբ շատ քիչ են այն հոգևորականները, որոնք կարող են իմաստավորել այն ամենը, ինչին հավատում են կամ դադարում են հավատալուց: Նրանք ներկայակամ շարունակում են իրենց նախորդների վարդապետությունը և ավելի քիչ են պատրաստ հեռանալու դրանից՝ որքան քիչ գիտեն, և ոչ էլ մա ուսումնասիրում են: Նրանց շատ դժվար է ապացուցել մի կարծիքի անարժանահավատությունը, քանզի թույլ չեն տալիս, որ դա իրենց բացատրեն, ոչ էլ առարկեն:

Ինչ վերաբերում է հայ հոգևորականության եկամուտներին, դրանք շատ են աճել՝ հիմնականում առաջանալով սուրբ մեռոնի վաճառքից: Այդ երկրում մեռոնը օգտագործվում է հոգու ամեն տեսակի հիվանդություններն ապաքինելու համար, որովհետև կարծում են, որ դա բուժման ամենաարդյունավետ միջոցն է: Առաջնորդվելով հաստատված և այդ վաճառքների կողմից մշտապես տարածված տվյալ կարծիքով՝ շատ մեծ է օրհնված մեռոնի վաճառքը: Պատրիարքն այն վաճառում է եպիսկոպոսներին, նրանք՝ քահանաներին, իսկ վերջիններս էլ վերավաճառում են ժողովրդին:

Արդեն ասացի, որ Հայաստանում կան բազմաթիվ մենաստաններ, որոնք ետևում են Սուրբ Բարսեղի կարգուկանոնին²⁴, որն ավելի տարածված է Արևելքում, քան Սուրբ Բենիդիկտինը՝ Արևմուտքում: Այդ մենաստանները իրենց հարստությամբ շատ բանով չեն նմանվում Եվրոպայի մենաստաններին, բայց մնացած ամեն ինչում մահմեդականները նրանց ազատ են թողնում՝ իրենց գործելակերպի կատարման և մույնիսկ իրենց գույքի

ազատ տնօրինման հարցում:

Նույնամանակ ազատություն ունեն այս երկրի քրիստոնյաները իրենց կրոնը դավանելու մեջ: Մահմեդականները, զբաղված իրենց կրոնով և իրենց գործերով, չեն մտահոգվում մնացածների պաշտամունքով²⁵: Հայ վանականները վարում են ավելի դաժան կյանք. նրանց պահքը և ապաշխարանքը շատ խիստ են և բացառությամբ Տրապի (շատ խիստ կրոնական հաստատություն, որը պատկանում է Սիստերականների միաբանությանը՝ հիմնված Ֆրանսիայում 1140թ. – Հ.Ս.) կրոնավորներից ոչ ոք այլևս չի կարող մրցակցել այս վանականների հետ մարմնի մեռնելու հարցում: Այս ազգի գլխավոր ուխտավայրերից մեկը մի վանք է, որը կոչվում է Առաքելոց: Նա գտնվում է մի լեռան լանջին, որտեղ, ասում են, հանգրվանել է Նոյի տապանը: Հայերը հավատում են, որ նույն այդ տեղում նախահայրը հաստատել է իր առաջին կացարանը և կատարել իր առաջին գոհաբերությունը ջրհեղեղից հետո: Այնպես որ Հայաստանում կան երեք-չորս վայրեր, որոնք վիճարկում են այս պատիվը: Ավելացնում են, որ այդ վայրում գտնվում են Սուրբ Անդրեաս և Սուրբ Մատթեոս առաքյալների մարմինները, և որ այդ սուրբ ավետարանիչի գանգը գտնվում է վանքի եկեղեցում²⁶: Ես չկարողացա ստուգել այդ պնդումներից ոչ մեկը: Բայց ստույգը նա է, որ այս ժողովուրդների բարեպաշտությունը՝ այդ սրբավայրի հանդեպ չափազանցված է և նրանց համար դա Սուրբ հողի պես բան է:

